



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Էդ. Բ. ԱՂԱՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Քր ա թ ա Վ՝ բանասիրական գիտ. դոկտ., պրոֆ. Ն. Ա. Չառնապետ

ԵՐԿՈՒ ԽՈՍԷ

Այս աշխատությունը նեղիմակի երկար տարիների բա-
նագիտական հետազոտությունների արդյունքների ամփո-
փումն է: Աշխատության մեջ արժարժվում են ընդհանուր
բանագիտության տեսական կարևորագույն հարցերը (բառի
բնութագրությունը և սահմանումը, բառային իմաստի սահ-
մանագատումը լեզվաբանական այլ կարգի միավորների
իմաստներից և այլն): Քննարկվող բոլոր հարցերի մասին
նեղիմակը ընդհանրապես շարադրում է իր տեսակետները՝
առանց վիճարկելու այդ բնագավառում գոյություն ունեցող
տարբեր տեսությունները: Գրքում ընդհանուր լեզվաբանա-
կան տեսական դրույթների հիման վրա էնկուրյան են առ-
նրվում հայերենի բանագիտական տարբեր հարցերը հիմնակա-
նում աշխարհաբար երկու գրական լեզուների նյութի հիման
վրա: Այս տեսակետից սույն աշխատությունը որոշակիորեն
տարբերվում է բանագիտությանը նվիրված բոլոր նախորդ ու-
սումնասիրություններից, քան որում դրանք, գեթե առանց
բացառության, ընդհանրապես հայերենի բանագիտություն
են: Հեղինակի նպատակն է եղել ստեղծել ժամանակակից
գրական հայերենի բանագիտության ուսումնիր: Գրքի «Բա-
նակազմություն» գլխի համար հեղինակը հիմնականում
հիմնվել է Մ. Արեղյանի «Հայոց լեզվի տեսություն» հետա-
զոտության մեջ հայոց լեզվի բանագիտության նվիրված ու-
սումնասիրության վրա, թեև շատ հարցերում սկզբունքորեն
հրաժարվել է նրա դրույթներից և ցուցաբերել միանգամայն
իմենուրյուն և նոր մտածելով:

Աշխատության «Իմաստաբանություն» և «Իմաստաբա-
նություն» գլուխները հիմնականում նեղիմակի «Լեզվաբա-

Աղայան, Էդ. Բ. *
Ա 442 Ընդհանուր և հայկական բանագիտություն.— Եր. Ե
Երևանի համալս. հրատ., 1984.— 372 էջ.

Վերնախորհրդի՝ Երևանի պետ. համալս.

Մենագրության մեջ բնարկվում են բառի պրոբլեմը, բանա-
գաղարի զարգացման և բառի իմաստային փոփոխությունների ընդ-
հանուր օրինաչափությունները: Ուսումնասիրվում են ժամանակա-
կից հայոց լեզվի բառային կազմը, իմաստաբանությունը և բառա-
կազմությունը: Հատուկ վերլուծության առարկա են տերմինաբա-
նությունն ընդհանրապես և ժամանակակից հայոց լեզվի տերմի-
նաբանությունը մասնավորապես, նրա մշակման և կատարելագործ-
ման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները:

4802010000—09
Ա 704 (02)—84 46—84

ԳՄԴ 81.2+81.22

АГАЯН ЭДУАРД БАГРАТОВИЧ
ОБЩАЯ И АРМЯНСКАЯ ЛЕКСИКОЛОГИЯ
(на армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван — 1984

նօթյան ներածություն» գրում շարադրված սկզբունքների վերածայումն ու զարգացումն են ներկայացնում՝ ժամանակակից հայերենի հարուստ էյարթի նիւան վրա: Բոլորովին ճուր ընդհանրապես լեզվի քառագիտության ուսումնասիրության բնագավառում ժամանակակից գրական հայերենի «Բառապաշարի դասակարգությունը», «Տեքմինագիտությունը» և քառապաշարի ներքին զարգացման, մշակման և կառավարման նկիրված գլուխները: Հեղինակը գիտակցաբար գրի մեջ չի մտնել դարձվածաբանության վերաբերող հատված, նկատի ունենալով, որ կան առանձին մեկնադրական ուսումնասիրություններ, որոնց մեջ բավականաչափ հանգամանորեն բնության է առնվում հայերենի դարձվածաբանությունը, և եթե այստեղ անդրադառնալով դարձվածաբանությանը, ապա շարադրանքը հիմնականում պետք է լինե՛ր եղած ուսումնասիրությունների համառոտ ամփոփումը: Հասկանալի է, որ այս մեկնադրական աշխատության մեջ այդ բնույթի գլուխը չէ՛ր ներդաշնակի ամբողջությունը:

Այս ուսումնասիրության համառոտությունը, անհրաժեշտ պարզեցումով, ապագրվել է «Հայոց լեզու» բանական դասագրքի 1-ին մասի Ա պրակում (էջ 187—472 և 512—524):

Է՛. Բ. ԱՂԱՅԱՆ

Գ Լ Օ Ր Ի Ե Ա Ռ Ա Ջ Ի Ե

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ա. Բառագիտության առարկան

Բառագիտությունը լեզվի ուսումնասիրության մի բաժինն է: Նրա առարկան են բառը և բառերի հավաքական ամբողջությունը՝ քառապաշարը: Վերանալով բառի քերականական ձևափոխություններից ու խոսքից, բառագիտությունն ուսումնասիրում է բառը որպես ձևի և բովանդակության միասնություն կազմող այնպիսի միավոր, որ անկախորեն, ինքնակա կերպով գոյություն ունի խոսողների գիտակցության մեջ: Իբրև այդպիսին բառը կարելի է քննության առնել իր իմաստով ու կազմությամբ, դրանց փոփոխությունների ու զարգացման օրինաչափություններով, բառի անվանողական դերով ու առարկայական վերաբերությամբ և այլն: Բառապաշարն էլ, իր հերթին, իբրև բառերի հավաքական ամբողջություն, կարող է հետազոտվել տարբեր մոտեցումներով: Այստեղ, ամենից առաջ, կարևոր է լուսաբանել քառապաշարի կատարելագործման ու հարստացման օրինաչափությունները, դասակարգել դրանց մեջ մտնող բառերը գործառական, պատմական ու սոցիալական մոտեցումներով, երևան բերել լեզվի գոյության տարբերակային ձևվերին պատկանող բառերի փոխադարձ ներթափանցումները մեկի բառապաշարից մյուսին կամ մյուսներին և այլն: Այսպիսով, բառագիտությունը տվյալ լեզվի բառերի ու քառապաշարի ընդհանուր ուսմունքն է, որի բաղկացուցիչ մասերն են՝ քառապաշարի ընդհանուր տեսությունը, նրա դասակարգությունը տարբեր մոտեցումներով, տեղի ունեցող տեղաշարժերի քննությունը, բառերի տարբեր դասակարգումները ձևական, իմաստային ու գործառական հատկանիշներով,

բառակազմութիւնը, իմաստաբանութիւնը, ինչպես և՛ բա-
նարանագրութիւնը:

ք. Բառի սահմանումը

Յուրաքանչյուր բառ ունի իր հնչույթային կազմը (իր
նյութական ձևը) և իր բառային իմաստը (իր բովանդակու-
թիւնը): Իբրև այդպիսին նա ձևի ու բովանդակութեան
միասնութիւն կազմող միավոր է, բայց այնպիսի միավոր,
որն ունի ինքնուրույն գործածութիւն: Մինչդեռ լեզվի մեջ
ունենք ձևի ու բովանդակութեան միասնութիւն կազմող
այնպիսի միավորներ էլ, որոնք բառ համարվել չեն կարող:
Օրինակ՝ այն բազմաթիվ մասնիկները (ածանցները), որոնք
այս կամ այն կոնկրետացումն են տալիս բառին, նույնպես
ունեն ձև ու բովանդակութիւն, ինչպես՝ -ակ, -իկ, -ութիւն
և այլն: Գրանցից յուրաքանչյուրն ունի իր բովանդակութիւ-
նը, և մենք գիտենք, թե ո՞րք ի՞նչ կոնկրետացում կարող է
տալ բառիմաստին, բայց դրանցից ոչ մեկն էլ խոսքի մեջ չի
կարող հանդես գալ իբրև ինքնուրույն միավոր, այսինքն՝
չի կարող գործածվել անկախ կերպով՝ առանց բառ դառնա-
լու: Գրանց հակառակ, ԲՈՐ, ԱՅՄ, ԾԱՌ և նման բազմաթիվ
հնչույթախմբերը դարձյալ բովանդակութեան ու ձևի միաս-
նութիւն կազմելով՝ կարող են ազատորեն գործածվել որպես
ինքնուրույն միավորներ: Նույնպիսի միասնութիւն կազմող
ճեռ- (հեռանալ), մոռ- (մոռանալ), զեռ- (զիտենալ) և նման
բազմաթիվ հնչույթախմբերը չեն կարող ինքնուրույնաբար
գործածվել: Ինչո՞վ բացատրել, ուրեմն, այդ երևույթը: Ին-
չո՞վ է պայմանավորված այս կամ այն հնչույթախմբի ինք-
նուրույն գործածութիւնը: Այդ բանը մեզ համար պարզ
կլինի, եթե մի փոքր ավելի հանգամանորեն քննենք հիշյալ
հնչույթախմբերից յուրաքանչյուրի բովանդակութիւնը: Վերը
հիշված մասնիկներից յուրաքանչյուրն, իհարկե, ունի իր
հայտնի բովանդակութիւնը. օրինակ՝ մենք գիտենք, որ
-ութիւն մասնիկը կազմում է վերացական, հավաքական
կամ բայանվանական գոյականներ (քաղութիւն, ուսանողու-
թիւն, խոսակցութիւն), բայց մենք գիտենք նաև, որ -ութիւն
ածանցը ինքնին չի արտահայտում որևէ կոնկրետացած

բառային իմաստ. քանի դեռ նա միացած չէ որևէ բառի,
մենք չենք կարող իմանալ, թե նա կոնկրետ ինչ իմաստ
ունի: Այդպես և՛ ճեռ-, մոռ-, զեռ- արմատները թեև ունեն
բովանդակութիւն և արտահայտում են ճեռանալ, մոռանալ,
զիտենալ, ճեռացում, մոռացում, զիտութիւն բառերի հիմ-
քում ընկած ընդհանուր գաղափարը, բայց դեռևս իմաստի
կոնկրետացում չունեն, որովհետև բառայնորեն տարբերակ-
ված չեն: Նրանց արտահայտած իմաստը որոշ գործողութեան
կամ երևույթի ընդհանուր, շտարբերակված գաղափարն է
միայն: Մյուս կողմից, հիշյալ մասնիկներից և բերված ար-
մատներից ոչ մեկն էլ չունի ոչ միայն ինքնուրույն գործածու-
թիւն, այլև՝ անկախ գոյութիւն: Իսկապես, -իկ, -ութիւն և
այլ մասնիկների կամ ճեռ-, մոռ-, զեռ- և նման արմատների
մասին մենք խոսում ենք հայտնի վերացում կատարելով.
լեզվի մեջ դրանցից և ոչ մեկն էլ անկախ գոյութիւն չունի
և հանդես է գալիս միայն այլևայլ բառերի մեջ: Ուրեմն,
որպեսզի այս կամ այն հնչույթախմբն ինքնուրույն գոր-
ծածութիւն ունենա, անհրաժեշտ է, որ նա, առաջին հերթին,
ունենա բառային իմաստ, այսինքն՝ արտահայտի առարկայի
կամ երևույթի, հատկանիշի և այլնի տարբերակված իմաստ
և, մյուս կողմից՝ հենց դրա շնորհիվ, ունենա անկախ գոյու-
թիւն: Հետևաբար, վերը թված ԲՈՐ, ԱՅՄ, ԾԱՌ բառերը
կարող են ունենալ անկախ գործածութիւն այն բանի շնոր-
հիվ, որ նրանցից յուրաքանչյուրն ունի բառային իմաստ և
անկախ, ինքնուրույն գոյութիւն մեր գիտակցութեան մեջ՝
իբրև առարկայի, հատկանիշի և այլնի հասկացութեան կամ
պատկերացման անվանում: Այդ բանը հեշտ է ապացուցել
հետևյալ կերպով. -ութիւն մասնիկն, իբրև վերացական,
հավաքական կամ բայանվանական գոյականներ կազմող
ածանց, առանձին, անկախ, առանց որևէ բառի միանալու
խոսքի մեջ հանդես գալ չի կարող. այս դեպքում նա իր բո-
վանդակութեամբ չի արտահայտում որևէ առարկայի (երե-
վույթի, հատկանիշի և այլն) տարբերակված հասկացութիւն,
այլ տալիս է միայն ընդհանուր գաղափար (վերացականու-
թեան, հավաքականութեան, գործողութեան): Մինչդեռ երբ
ասում ենք՝ ընկերս շատ է սիրում «-ութիւն» գործածել,
ապա այս դեպքում մենք տալիս ենք նրան և՛ կոնկրետ, բա-

ուսյնորեն տարբերակված իմաստ, և՛ անկախ գործածու-
թյուն, որովհետև այստեղ -ուրյուն-ը չի արտահայտում ինչ-
որ ընդհանուր գաղափար, այլ պարզապես նշանակում է
սուրբյուն մասնիկը», այսինքն՝ արտահայտում է -ուրյուն-ի,
որպես մասնիկի, հասկացությունը, այլ կերպ ասած, փոխա-
նուկարար գործածվում է բառի նշանակությամբ ու դերով:
Այսպես էլ շարժ՝ արմատն արտահայտում է շարժել, շար-
ժում բառերի ընդհանուր գաղափարը և անկախ, առանձին
գոյություն չունի. մինչդեռ երբ լսում ենք բարբառային
«Շարժը (=կրկնաշարժը) շառ քույլ է» նախադասությունը,
այսպես մենք այստեղ ունենք իմաստի տարբերակում և այդ ար-
մատի բառացում, առանց որևէ կոնկրետացնող մասնիկի
(-ել, -ում), որ և հնարավոր է գործնում նրա ինքնուրույն
գործածությունը:

Ամփոփելով վերը ասվածները, կարելի է ընդունել բառի
բնութագրման ու սահմանման համար կարևոր հետևյալ կար-
գի հատկանիշները:

1. Բառը նյութականորեն ձևավորված իմաստակիր միա-
վոր է. ամեն մի բառ ներկայացնում է հնչույթների կայուն
խումբ՝ միասնություն, որը նույնպես կայուն կապի մեջ է
ավելյալ բառային իմաստի հետ, ինչպես՝ առու, մատ, լույս,
գիր, գեղձ, դալար, գեղեցիկ, երեխա և այլն: Առանձին
դեպքերում բառը կարող է բաղկացած լինել բառային իմաստ
կրող միայն մեկ հնչույթից, ինչպես՝ է, էակ, էություն, օ
(շաղկապը) և այլն:

2. Իմաստաբանական տեսակետից բառը, որպես իմաս-
տի և ձևի միասնություն ներկայացնող միավոր, կարող է
բնութագրվել իրեն բառային իմաստի կրող, ի տարբերու-
թյուն բոլոր մյուս իմաստակիր միավորների, որոնք կրում են
ոչ տարբերակված իմաստներ, ընդհանուր գաղափարներ,
ինչպես ձևույթները: Ըստ այսմ բացարձակ և իդեալական
մոտեցման դեպքում բառեր են միայն ձևի ու բովանդակու-
թյան միասնություն ներկայացնող այն միավորները, որոնց

¹ Զգուշ է շփոթել շարժ բառը բառակազմության համանունի հետ, որ հրե-
սերենից փոխառված բառ է և առանձին, առանձին է՝ հայերենին:

իմաստը բառայնորեն կոնկրետացած է առարկայնությամ-
բառակազմության հատկանիշով: Այս կարգի բառերը լեզվի
բառապաշարի վիթխարի զանգվածն են կազմում (հարյուրա-
վոր հազարների հասնող): Այս բնութագրությունից դուրս են
մնում քերականական իմաստ արտահայտող բառերը, որոնք
կոչվում են «ձևական բառեր» անվանումով, թերևս նաև բնա-
ձայնությունները (օր. շրջիկ, թրջիկ, նրոն և այլն): Այս
կարգի բառերը, սակայն, այնքան սահմանափակ թիվ են
կազմում նախորդների համեմատությամբ, որ կարող են ան-
տեսվել հիմնական զանգվածի բնութագրության ժամանակ:

3. Տրամաբանական մոտեցումով բառը կարելի է բնու-
թագրել որպես հասկացության նյութական անվանում, կամ՝
ավելի ստույգ, նյութականացած հասկացություն: Հասկացու-
թյունն ինքնին իդեալական, աննյութական կատեգորիա է, որ
նյութականանում, նյութական թաղանթ է ստանում լեզվի
հնչույթներով և ամբակայվելով մեր ուղեղում՝ դառնում մեր
գիտակցության տարրը: Այս բնութագրությունը, ինչպես հեշտ
է նկատել, գրեթե նույնանում է նախորդի հետ, եթե նկատի
ունենանք, որ բառային իմաստն իր մեջ ներառում է հասկա-
ցությունը որպես բառի բովանդակության հիմք, կորիզ կամ
միջուկ: Այդ նկատի ունենալով էլ այս բնութագրությունը
կմիացնենք նախորդին՝ հասկացության և բառային իմաստի
ընդհանրության ու տարբերության մասին խոսելը թողնելով
հետագային:

4. Լեզվի կառուցվածքի մեջ բառը ինքնակա միավոր է
իրեն յուրահատուկ մակարդակի՝ բառային մակարդակի
միավոր: Ո՛ր ձևույթները և ո՛ր էլ նախադասությունները ինք-
նակա, ինքնագո միավորներ չեն. ձևույթն այլ կերպ հանդես
գալ չի կարող, քան որպես բառ կամ բառի բաղադրիչ, իրա-
կան նախադասությունն այլ կերպ գոյություն չունի, քան մի-
այն խոսքի մեջ: Մինչդեռ բառը գոյություն ունի հենց ինք-
նին, խոսքից դուրս և նրանից անկախ:

5. Գործառական տեսակետից բառը բնութագրում են որ-
պես մի միավոր, որը կարող է խոսքի մեջ հանդես գալ իրեն
նախադասության անդամ: Թեև բառը, ինչպես տեսանք,
ինքնակա միավոր է, բայց լեզվի մեջ նա ծառայում է նախա-
դասության կառուցմանը, ըստ որում նախադասությունն

այլ բան չէ, քան եթե բառերի ստորոգական կապակցությունն, ըստ այսմ, ամեն մի բառ պոտենցիալ կերպով նախադասության անդամ է: Այս դեպքում էլ, սակայն, բնութագրությունից դուրս են մնում դարձյալ կապերը, շաղկապները, ձայնարկություններն ու բացականչությունները, հարաբերականները (եղանակավորող բառերը), քանի որ նախադասության քերականական-շարճյուսական վերլուծության մեջ դրանք նախադասության անդամներ չեն դիտվում: Կարելի էր, իհարկե, այստեղ էլ նույն վերապահությունն անել, ինչպես որ 2-րդ կետում ենք արել, սակայն ավելի նպատակահարմար ենք գտնում դիմել այնպիսի բնութագրության, որը կարող է այդ սահմանափակումը վերացնել: Դեռևս 1947 թ. հրատարակված «Ընդհանուր լեզվաբանության դասընթացում» մենք բառի գործառական հատկանիշը համարել ենք խոսքի մեջ ինքնուրույն գործածությունը և այժմ էլ գտնում ենք, որ այդպիսի բնութագրությունն ավելի հարմար է: Քերականական տեսակետից նախադասության մեջ բառը կարող է որպես նախադասության անդամ հանդես գալ կամ ոչ, սակայն դա չի փոխում նրա բառային բնույթը և գործառական բնութագիրը. կարևորն այն է, որ ամեն մի բառ ազատորեն կարող է գործածվել խոսքի մեջ որպես ինքնուրույն միավոր՝ առանց մի այլ բառի կցորդը դառնալու, ինչպես, օրինակ, կապերն են (նախդիրներն ու նախադրությունները): Այն բոլոր բառերը, որոնք խոսքի մեջ գործածվում են իրրե ինքնուրույն միավորներ, բայց նախադասության անդամներ չեն, ինչպես կոչական բառերը, միջարկությունները, շաղկապները և այլն, շարճյուսական միավորներ են, ուստի և կարող են բնութագրվել ինքնուրույն գործածությամբ խոսքի մեջ կամ այլ կերպ՝ շարճյուսական մակարդակում: Այս դեպքում բնութագրությունից դուրս են մնում միայն կապերը, որոնք ո՛չ ինքնուրույն գործածություն ունեն, ո՛չ նախադասության անդամ են, ո՛չ էլ, առահասարակ, շարճյուսական միավոր:

6. Որպես հնչույթ կամ հնչույթախումբ բառը արտասանական իրացմամբ բնութագրվում է արտասանական միասնությամբ. ամբողջ բառը, անկախ նրա հնչույթների ու վանկերի քանակությունից, այլ կերպ՝ անկախ նրա կարճությունից և երկարությունից, արտասանվում է որպես արտասա-

նական շղթայի առանձին, ինքնուրույն հատված: Արտասանական տեսակետից բառի այդ առանձնացումը տարբեր լեզուներում իրականացվում է տարբեր միջոցներով, որոնք կոչվում են բառերի սահմանազատիչ (դելիմիտատիվ) միջոցներ կամ հնչույթաբանական անվանումով՝ բառի սահմանազատիչ հատկանիշներ: Հայերենի համար այդպիսի հատկանիշ է շեշտը. դրվելով բառի վերջին վանկի ձայնավորի վրա (օր. բարձրաբե՛րձ, լուսանա՛լ, երեխա՛, արևածա՛ղ և այլն) շեշտն ինքնին աղդեն ազդանշում է բառի վերջը և դրանով իսկ հանդես գալիս իրրե բառերի սահմանազատման, բառանշատման միջոց, իհարկե, այստեղ էլ կան բացառություններ, ինչպես, օրինակ, ք-ով վերջավորվող բառերը (իննը, խառը), ք հոդով բառաձևերը (արևածաղբ, պատուհանը, փողոցը) և այլն, բայց դրանք չեն խախտում ընդհանուր իրողությունը: Բառային շեշտը նաև բառի արտասանական միասնությունն ու առողանական ամբողջությունն ապահովող միջոց է. ամեն մի բառ անպայմանորեն պետք է ունենա մի հիմնական բառային շեշտ: Նույնիսկ այն լեզուներում, որոնց մեջ բառը բառի բաղադրիչները պահպանում են իրենց շեշտը և ամբողջ բարդությունն ունենում է մի քանի շեշտ, այնուամենայնիվ այդ շեշտերից մեկն է հիմնական, իսկ մյուսները՝ երկրորդական, որով և պայմանավորվում է այդ բարդությունների, իրրե շեշտավոր հատվածների, արտասանական միասնությունն ու ամբողջությունը: Բառային շեշտի անպայման առկայությունը բառի մեջ չի նշանակում, թե արտասանական շղթայի մեջ այդ շեշտի կորուստը հնարավոր չէ. շատ դեպքերում բառերը կարող են արտասանվել այնքան միահար, որ միավանկ բառերը զրկվեն իրենց շեշտից, սակայն սա խոսքային իրողություն է և չի կարող տարածվել բառի վրա, եթե մենք բառը դիտում ենք իրրե անկախ միավոր, խոսքից դուրս:

7. Որոշ լեզուների մեջ բառի կարևորագույն հատկանիշներից մեկն է նրա քերականական ձևավորվածությունը. այդպիսի լեզուներում բառը խոսքից դուրս էլ, իր ելակետային կամ բառարանային ձևով քերականորեն ձևավորված է որոշակի վերջավորություններով: Այսպես, օրինակ, ռուսերենում СТЕНА «պատ», ОКНО «պատուհան», СТОЛ «եղան»

բառերը ունեն համապատասխանորեն քերականական իմաստ-
ներ (սեռ, թիվ, հոլով) արտահայտող վերջավորություններ,
եռլայն և՛ красный «կարմիր», большой «մեծ» և այլն, և այլն: Հայերենի համար, սակայն, այս հատկանիշը բնորոշ
չէ: բառերը որպես բառարանային միավոր, իրենց բացար-
ձակ կամ ելակետային ձևով քերականական ցուցիչներ (քե-
րականական վերջավորություններ, դասանիշներ և այլն)
ընդհանուր առմամբ չունեն: Սակայն, ինչպես ստորև կտես-
նենք, բառի բացարձակ կամ բառարանային ձևը, առանց քե-
րականական վերջավորությունների և ցուցիչների էլ կարող է
արտահայտել քերականական իմաստ: Այսպես, թեև հայերե-
նում սեղան, ծառ, կառվի, հինգ, հարյուր և նման բազմա-
թիվ բառեր չունեն իրենց խոսքամասային պատկանելույթու-
նը ցույց տվող, ինչպես և հոլովական, թվային և այլ կարգի
քերականական իմաստներ արտահայտող որևէ վերջավորու-
թյուն, բայց և այնպես դրանք լիովին ձևավորված են իբրև
բառեր, և ներկայացնում են համապատասխան հարացույց-
ների ելակետային, այսպես ասած ընդհանրական ձևը, որից
սերում կամ կազմվում են բոլոր մյուս հարացույցային ձե-
վերը, իսկ դա նշանակում է, թե հիշյալ բառաձևերը հենց
առանց վերջավորությունների էլ արտահայտում են քերա-
կանական այն իմաստները, որոնք հատուկ են նրանց ձևա-
փոխությունների (հոլովման, խոնարհման և այլն) հարա-
ցույցի ելակետային կամ ուղիղ ձևին (օր. սեղան բառաձևը
հոլովման հարացույցի ուղիղ ձևն է, որ արտահայտում է
ուղղական հոլովի և եզակի թվի քերականական իմաստ-
ները):

Այս բոլոր հատկանիշներն ի մի բերելով՝ կարելի է բառը
սահմանել հետևյալ ձևով. բառ է այն ճեշույթը կամ ճեշույ-
թախոսը, որն ունի բառային իմաստ, անկախ, ինֆեռուայն
գոչություն ու գործածություն՝ շարանյութական միավորի դե-
տով, և բառային շեշտ:

Այս սահմանումը, սակայն, ընդգրկում է այնպիսի բառե-
րը, ինչպիսիք են ծառ, փառ, առեղ, գեալ, կանաչ, գեղեցիկ
և այլն, Միևնույն լեզվի մեջ կան նաև բառեր, որոնք թեև ինք-
նուրույն բառային ձև ունեն, բայց զուրկ են ինչպես բառային
իմաստից, այնպես էլ անկախ, ինքնուրույն գործածությու-

նից, օրինակ՝ դեպի, մասին, և, ու, բայց և այլն: Այս կարգի
բառերը, ձևական ինքնուրույնության տեսակետից նույնա-
նալով բառերի հետ, իմաստի և դերի տեսակետից համընկ-
նում են մասնիկների հետ: Հենց այստեղից ելնելով էլ բա-
ռերը սովորաբար բաժանում են երկու կարգի՝ լիիմաստ բա-
ռեր և թերիմաստ բառեր: Լիիմաստ են կոչվում այն բառերը,
որոնք ունեն ինքնուրույն բառային իմաստ և բառային ձև,
ինչպես, օրինակ՝ երկիր, կարգալ, ծառ, առեղ և այլն. թե-
րիմաստ են կոչվում այն բառերը, որոնք բառային ինք-
նուրույն ձև ունենալով, զուրկ են բառային իմաստից. ինչ-
պես՝ բայց, համար, դեպի, որպեսզի և այլն: Իհարկե այս
անվանումները՝ լիիմաստ և թերիմաստ, պայմանական են,
որովհետև այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե իսկապես
լիարժեք և թերի իմաստներին, այլ բառային և քերականա-
կան իմաստներին. լիիմաստ կոչվող բառերն ունեն բառային
իմաստ, թերիմաստ կոչվող բառերը՝ քերականական իմաստ:
Արդ, նկատի առնելով բառերի այս երկու կարգերը, տեսնում
ենք, որ բառի մասին տրված վերի սահմանումը համապա-
տասխանում է միայն առաջին կարգին՝ լիիմաստ բառերին,
իսկ երկրորդ կարգին՝ թերիմաստ բառերին, չի համապա-
տասխանում: Իսկ ի՞նչ է բխում սրանից. իրոք, երկրորդ
կարգի բառերը պե՞տք է բառեր համարել, թե՛ ոչ: Լեզվա-
բանության մեջ երկրորդ կարգի բառերը դիտվում են որպես
բառերի ու մասնիկների միջև գտնվող միավորներ ըստ
այն բանի, որ դրանք մի կողմով (ձևով) համընկնում են
բառերին, իսկ մյուս կողմով (իմաստով)՝ մասնիկներին:
Սրանից ելնելով էլ, ոմանք այդ կարգի բառերն անվանում
են բառ-մասնիկներ, ոմանք՝ ձևական բառեր, օժանդակ
բառեր, սպասարկու բառեր և այլն: Ինչ էլ որ անվանելու
չինենք, սակայն, մի բան պարզ է, որ այդ կարգի բառերը
որակապես տարբերվում են լիիմաստ կոչվող բառերից,
նրանք թե՛ իրենց իմաստով և թե՛ իրենց քերականական
դերով նույնանում են մասնիկների հետ և կարող են դասվել
երկրորդական ձևույթների կարգին՝ ըստ իրենց իմաստի:
Այդ պատճառով էլ նրանց տրվող անվանումները (բառ,
բառ-մասնիկ, ձևական բառեր և այլն) որոշ պայմանակա-
նությամբ պետք է ընդունել, այսինքն՝ պետք է նկատի ունե-

նալ, որ բառ անվանումը նրանց տրվում է միայն իրենց ձևական հատկանիշի հիման վրա, բառային ինքնությունն ձև ունենալու հիման վրա: Այլ կերպ ասած, նրանք միջին տեղն են գրավում բառերի և երկրորդական ձևույթների միջև: Իսկ լեզվի մեջ այդպիսի «միջակա», «երկդիմի» միավորները քիչ չեն նաև այլ մակարդակներում: Այսպես, օրինակ. Գիշեր: Մուր: Անձանոթ ճանապարհ: Առջևում, թեկուզ և հեռավոր, ոչ մի լույս չի երևում, որպեսզի կողմնորոշվենք: Այս ասույթի մեջ «Գիշեր: Մուր:»-ը դիտվում են իբրև նախադասություններ, բայց էթե նկատի ունենանք նախադասության ընդհանուր և ամենասովորական սահմանումը, ապա կտեսնենք, որ դրանք դուրս են մնում նախադասության սահմանումից: Ըվ այնուամենայնիվ, դրանք համարվում են նախադասություններ և բնութագրվում են որպես նախադասության յուրահատուկ տեսակ: Այսպես են նաև մեջ, մառիկ, և, ու և նման բառերը, որոնք ձևական հատկանիշներով են բառ, ըստ որում՝ այդ հատկանիշն էլ հաճախ պայմանական է: Այսպես՝ գրաբարում բաղաձայն նախդիրները դրվում են բառի հետ, այսինքն՝ գրվում են բառային ինքնություններից (օր. գեղ, գեա, յամէ), իսկ ձայնավոր նախդիրները՝ առանձին (օր. ի ֆազաէէ). ուստի նույն Վ, Կ, Ը, Օ նախդիրները (предлог) գրվում են առանձին. կարելի՞ է ասել, թե գրաբարյան Գ, Կ, Ը (որ ի նախդրի տարբերակն է) բառեր չեն, իսկ ի, ուստի են Ե, Կ, Ը, Օ նախդիրները բառ են: Կամ՝ լատիներենում ունենք et և que շաղկապները «և» նշանակությունը. առաջինը դրվում է շաղկապվող բառերի միջև և գրվում է առանձին (pater et mater «հայր և մայր»), երկրորդը դրվում է շաղկապվող բառերից երկրորդի վրա և միասին է գրվում (pater materque «հայր և մայր»). կարելի՞ է մեկը բառ համարել, մյուսը՝ մասնիկ: Ընդունված է բոլոր շաղկապները և կապերը բառեր համարել, անկախ այն բանից, նրանք առանձին են գրվում, թե լիմաստ բառերի հետ միացած: Ըվ թեև ձևական հատկանիշը՝ այսինքն բառային ինքնություններն էլ երբեմն կարող է վերանալ, այնուամենայնիվ, երբ մենք ցանկանում ենք բնութագրել ու սահմանել դրանք (օր. շաղկապներն ու կապերը) որպես բառ կամ հանել բառերի շարքից և հատկացնել երկրորդական ձևույթների կարգին, պետք է

հենվենք ոչ թե առանձին դեպքերի, այլ դրանց ամբողջական համակարգի վրա: Այս դեպքում, իհարկե, հարկադրված կլինենք ընդունել, որ կապերն ու շաղկապները իսկապես բառային ինքնությունություն ունեն, իսկ մի զգալի մասը՝ նաև բառային շեշտ: Նշանակում է, ձևական հատկանիշներով նրանք հավասարվում են բառերին, թեև արտահայտում են քերականական իմաստ: Ահա, ելնելով հենց այս երկակի բնույթից և նկատի ունենալով, որ նրանք միայն ձևական հատկանիշով են նույնանում բառերի հետ, մենք ավելի ընդունելի ենք համարում այդ կարգի բառերն անվանել ձևական բառեր:

Նշույթախմբին բառային իմաստ տալն ու նրա անկախ գոյություն ունենալը, այսինքն՝ նրա բառացումը, պայմանավորված է լեզվի զարգացման տվյալ աստիճանում նրա ունեցած գործածությունները. այսպես՝ վեհօրեն, ուժգնօրեն և նման բառերի -որեն մասնիկն այժմ չունի բառային տարբերակված իմաստ ու անկախ գործածություն, ուստի և բառ չէ, մինչդեռ գրաբարում նա ունի տարբերակված բառային իմաստ ու անկախ գործածություն, հետևաբար և՛ բառ էր: Հնոց բառի արմատն է հուն, որ ամբողջ հին մատենագրության մեջ առանձին գործածություն չի ունեցել և, իհարկե, իրրե բառ էլ չի եղել, սակայն մեր նոր պոեզիայում այն գործածվել է Ծ. Զարենցի մի բանաստեղծության մեջ առանց -ոց մասնիկի և դարձել է բառ, թեև, իհարկե, հազվադեպ գործածությամբ: Այդպես և, ինչպես արդեն ասել ենք, շատ արմատը մեր գրական լեզվում չունի բառային իմաստ ու անկախ գործածություն, մինչդեռ ժողովրդախոսակցական լեզվում ունի, ուստի և այդ դեպքում (ժողովրդախոսակցական լեզվի համար) բառ է:

Իր այն կողմերով, որոնց մասին խոսեցինք և որոնք բառի սահմանման հիմքը համարեցինք, բառը հանդիսանում է լեզվի ատաղձը: Առանց բառերի լեզու չկա: Ավելին. լեզուն, իր իրական վիճակում, հաղորդման պրոցեսում, ինչպիսին էլ որ նա լինի, քերականական ինչպիսի կառուցվածք, ինչպիսի քերականական միջոցներ ու ձևեր էլ ունենա, ոչ այլ ինչ է, եթե ոչ բառերի քերականական հարադրություն, բառերի համակցությունը նախադասությունների մեջ: Թեև ինքնին, առանց քերականության, բառերը լեզու չեն կազմում, բայց

բառը լեզվական այն միակ միավորն է, լեզվական միակ կառուցվածքն է, որը մեր գիտակցության մեջ գոյություն ունի ինքնին, անկախ նախադասությունից և նախադասությունից դուրս, գոյություն ունի ոչ թե իբրև վերացություն՝ իրական նախադասություններից, այլ իբրև իրական ու կոնկրետ միավոր, իբրև առարկայի, հատկանիշի և այլնի անկախ հասկացություն ու դրա նյութականացած ձև: Լեզվական բոլոր միավորները ծառայում են այդ ինքնուրույն միավորին, հանդես են գալիս նրա հետ և առանց նրա չեն կարող գոյություն ստանալ իրական խոսքի մեջ:

զ. Բառի ձև և բառաձևեր

Բառի ձևը, ինչպես ասվել է բառի սահմանումի մեջ, նրա հնչույթային կազմն է և բառային շեշտը: Արտասանական տեսակետից ամեն մի բառ հնչյունների որոշ համակցություն է, որ սովորաբար արտասանական միասնություն է կազմում, և ստանում շեշտ՝ որևէ վանկի ձայնավորի վրա: Հայերենում, իբրև կանոն, շեշտվում է վերջավանկի ձայնավորը, եթե դա թ ձայնավորը չէ. եթե վերջավանկի ձայնավորն է ը (զաղտնավանկ կամ գրվող), շեշտն ընկնում է նախորդ վանկի վրա: Ունենալով իրենց ձևը, բառերը, միևնույն ժամանակ, որոշակի ձևափոխությունների են ենթարկվում՝ քերականական զանազան իմաստներ արտահայտելու համար. գոյականները և դերանունների մի մասը հոլովվում են, բայերը՝ խոնարհվում, ածականները՝ համեմատության աստիճաններ կազմում և այլն: Հայերենում այս բոլորը մեծ մասամբ կատարվում է բառերի զանազան ձևափոխություններով. օրինակ՝ ունենք երապարակ, եայր, գրել բառերը. դրանցից յուրաքանչյուրի ձևն է համապատասխանորեն՝ հ, ր, ա, պ, ա, ր, ա, կ, — հ, ա, յ, ր, — գ, ը, ր, ն, լ հնչյունների համակցությունը և բառային շեշտը. սակայն դրանցից յուրաքանչյուրը, քերականական իմաստներ արտահայտելու համար, պետք է ենթարկվի որոշակի ձևափոխությունների, ասենք, երապարակի, երապարակից, հոր, եայրերի, գրեցի, գրեցիր և այլն: Այս ձևափոխություններից յուրաքանչյուրը մեկ քերականական ձև է, բայց միևնույն ժամանակ, ամեն մի բառի

տարրեր քերականական ձևերը ոչ այլ ինչ են, եթե ոչ դարձյալ ալյալ բառի ձևը: Մրանից ինքնին բխում է այն, որ բառը իրականում ունի ոչ թե մեկ, այլ բազմաթիվ ձևեր: Հետևաբար, կլեկով այն փաստից, որ ամեն մի լեզվում գոյականներն ու դերանուններն ունեն որոշակի թվով հոլովներ՝ եզակի և հոգնակի (որոշ լեզուներում՝ եզակի, հոգնակի, երկակի և այլն) թվերով, բայերը՝ որոշակի թվով ժամանակներ, եղանակներ, սեռեր և դրանց դիմային ու թվային ձևերը, ածականները՝ որոշակի թվով համեմատության աստիճաններ ու դրանց ձևերը և այլն, կարելի է ասել, թե յուրաքանչյուր բառ ունի այնքան ձև, որքան հարացուցային ձևեր ունի համապատասխան խոսքի մասը. օրինակ՝ գոյականները և դերանունները ժամանակակից հայերենում ունեն վեց (հինգ կամ յոթ) հոլով և երկու թիվ (եզակի և հոգնակի), ուստի և ամեն մի բառ, որ գոյական է, ունի վեց (հինգ կամ յոթ) եզակիի և նույնքան էլ հոգնակիի ձև՝ ընդամենը 12 (10 կամ 14): Այս մտտեցումը ճիշտ է, ըստ որում բառը լեզվի մեջ և խոսքի մեջ այլ կերպ գոյություն չունի, քան իր բոլոր ձևափոխությունների միասնությամբ. յուրաքանչյուր քերականական ձև բառի իրական դրսևորումներից մեկն է: Սակայն, մյուս կողմից, այդպիսի բնութագրությունը, ըստ էության ճիշտ լինելով հանդերձ, անխուսափելի շփոթ առաջ կբերի. ստիպված կլինենք ասել, թե, օրինակ, գրել բառն ունի 87 կամ (ժրխտական էլ հետը) 167 ձև: Բացի դրանից, թեև իրոք ամեն մի բառ խոսքի մեջ դրսևորվում է որոշակի քերականական ձևով, բայց դա կապակցության մեջ, մինչդեռ կապակցությունից դուրս այդ ձևերը լոկ վերացարկված ձևեր են, և եթե մենք ընդունենք, թե բառն իբրև լեզվական միավոր գոյություն ունի լոկ իրական կապակցություններում, ստիպված կլինենք բացասել բառի սահմանման հիմունքներից մեկը՝ բառի անկախ գոյությունը կապակցությունից դուրս, մեր գիտակցության մեջ: Քանի որ մենք ընդունել ենք, որ բառն ունի անկախ գոյություն խոսքից դուրս, ապա մենք նրա ձևի սահմանումն էլ պետք է համապատասխանեցնենք դրան, այսինքն՝ բառի ձևն էլ սահմանենք կապակցությունից անկախ ու նրանից դուրս: Այս դեպքում առերևույթ հակասություն է ստեղծվում հետևյալ երկու դրույթների միջև. ա) բա-

ոք ձեր նրա նյութական (հնչյունական) կազմն է անկախ
 խոսքից և խոսքի մեջ դրսևորվող քերականական ձևերից, և
 բ) բառի այն բոլոր ձևափոխությունները, որոնցով նա հան-
 դես է գալիս խոսքի մեջ, նրա իրական դրսևորումներն են և,
 հետևաբար, նրա իրական ձևերը: Այս դրույթների միջև սա-
 կայն, ոչ թե հակասություն կա, այլ հակադրությունների
 դիալեկտիկական միասնություն: Ճիշտ է, որ բառն անկախ
 գոյություն ունի խոսողների գիտակցության մեջ, և դրանից
 ինքնին բխում է այն հետևությունը, որ բառն ունի նաև իր
 անկախ ձևը, քանի որ իմաստի և նյութական ձևի անխզելի
 միասնություն է ներկայացնում: Ճիշտ է և այն, որ բառերն
 ունեն ինքնուրույն գործածություն, այլ կերպ ասած, յուրա-
 քանչյուր բառ, իբրև ընդհանուր կանոն, կարող է գործառնել
 որպես նախադասության անդամ², իսկ այդպիսին կարող է
 դառնալ միայն իր քերականական ձևերով: Հետևաբար, բառի
 անկախ ձևը և քերականական ձևերը դիալեկտիկական միաս-
 նություն են կազմում, ըստ որում առաջինը նրա անկախ գո-
 յության նյութական ձևն է, երկրորդները՝ այդ ձևի կապակ-
 ցական փոփոխությունները: Լեզվաբանության մեջ բառի ան-
 կախ ձևը ընդունված է կոչել բառի բացարձակ ձև կամ բառի
 բառարանային ձև, որովհետև, իբրև կանոն, բառարաննե-
 րում բառերը բերվում են իրենց անկախ գոյության ձևերով³,
 իսկ դրանց քերականական ձևափոխությունները՝ փերկանա-
 կան ձևեր կամ բառաձևեր: Հայր, հրապարակ, գրել բառերից
 յուրաքանչյուրի այդ ձևը բացարձակ կամ բառարանային ձև
 է, իսկ հոր, հորով, հայրեր, հայրերից..., հրապարակի, հրա-
 պարակով, հրապարակներ..., գրում եմ, գրեմ, գրեցի,
 գրիր... և այլն՝ քերականական ձևեր կամ բառաձևեր: Իբրև
 ընդհանուր երևույթ, գոյականների և հոլովվող դերանունների
 ու թվականների բացարձակ ձևն է ուղիղ ձևը (ուղղական հո-

լովը), ածականների, ածականական դերանունների և ու-
 թվականների (նաև մակբայների)՝ դրական աստիճանի
 ձևը, բայերին՝ անորոշի ձևը⁴, Չայնարկությունները, կապե-
 րը, շաղկապները լիքավոր բառեր են, չունեն քերականական
 ձևեր, հետևաբար և դրանց միակ ձևն էլ հենց բացարձակ
 ձևն է: Ժամանակակից հայերենում բոլոր թեքվող խոսքի
 մասերին պատկանող բառերն ունեն իրենց բացարձակ ձևը.
 առանձին բառեր միայն զուրկ են բացարձակ ձևից և գոյու-
 թյուն ունեն միայն բառաձևերով. օրինակ՝ հագի, հագից
 բառաձևերը չունեն բացարձակ ձևը (բառարաններում քեր-
 վում է արմատական ձևը՝ հագ, բայց նշվում է, որ գործած-
 վում են միայն սեռական-տրական, բացառական հոլովածե-
 վերը և միայն եզակի թվով). -կերա, կեր, կերել, կերած...,
 եկա, եկ, եկել, եկած, եկող բայական ձևերը՝ չունեն անորոշ
 դերբայ և այլն:

Բառի բացարձակ ձևը ժամանակակից հայերենում, ինչ-
 պես և շատ ուրիշ լեզուներում, միաժամանակ նաև բառաձե-
 վերի հարացուցային շարքի առաջին կամ ելակետային ձևն
 է. օրինակ՝ հայր բացարձակ ձևն է, բայց նաև հովույան հա-
 րացույցի առաջին՝ ելակետային ձևն է, այսինքն՝ ուղղական
 հոլովի ձևը: Այս դեպքում բառը լեզվաբանության մեջ կո-
 շում են բառույթ: Դրանով տարբերակվում են բառի բացար-
 ձակ ձևը, որպես բառի անկախ ձև, և այդ նույն ձևը, որպես
 հարացուցային շարքի անդամ, որ արդեն հանդես է գալիս
 իբրև բառաձև:

Բառերի բացարձակ ձևի տարբերություններ էլ կարող են
 լինել. այսպես, օրինակ, երեսապատել-երեսպատել նույն
 բառն են, բայց ձևով տարբեր են. առաջինն ունի ա հոդակա-
 պը, երկրորդը՝ ոչ: Այսպիսի դեպքերում ունենք բառի ձևա-
 կան տարբերակներ, որոնց մասին կխոսվի ստորև:

Ծվ այսպես, բառը անկախ լեզվաբանական միավոր է և

² Այս դեպքում նկատի ունենք լիովաստ բառերը:

³ Հին լեզուների (օր. գրաբարի, հունարենի, լատիներենի և այլն) բառարաններում բայերը բերվում են սովորաբար սահմանական եզանակի հղակի թվի առաջին դեմքի ձևով, որ գործնական նպատակներ ունի. գրա-
 բարյան նախնի ձևից կարելի է իմանալ բացարձակ ձևը, այն է՝ նախել, իսկ նախել ձևից հետևաբար չէ իմանալ, թե նա ի խոսնարձան է ենթարկ-
 վում:

⁴ Կան լեզուներ (օր. արաբերենը), որոնց մեջ բայերը զուրկ են ան-
 որոշ դերբայից. այս դեպքում իբրև բացարձակ ձև է ընդունվում կամ
 բայարմատը, կամ պայմանականորեն՝ հղանակային ձևերից մեկը (սովո-
 րաբար այն, որից կարելի է կազմել խոսնարձան բոլոր հարացուցային ձե-
 վերը կամ հիմքերը):

ներկայացնում է իմաստի ու ձևի միասնությունը. բառի անկախ ձևը նրա բացարձակ կամ բառարանային ձևն է, իսկ քերականական ձևերը՝ դրա բառաձևերը: Այն դեպքերում, երբ տվյալ լեզվի մեջ բառի բացարձակ ձևը միաժամանակ նաև հարացուցային շարքի անդամ է, այսինքն՝ հարացույցի մեջ դառնում է հարացուցային շարքի անդամ առանց որևէ ձևափոխության և, համապատասխանորեն, հանդես է գալիս խոսքի մեջ որպես նախադասության անդամ, բացարձակ ձևով դառնում է բառույթ և բառի քերականական ձև, այսինքն՝ բառաձև:

ՊԼՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Բառիմաստի բնորոշումը

Բառի սահմանումը ցույց տվեց, որ բառերն ունեն իրենց արտաքին կամ նյութական կողմը, այսինքն՝ ձևը, և ներքին, բովանդակային կողմը, այսինքն՝ իմաստը: Բառիմաստը այն հասկացությունն է, որ պատմականորեն ու հասարակայնորեն ամրացել է տվյալ բառային ձևին. օրինակ աչք բառի իմաստն է «մարդու և կենդանիների տեսողության գործարանը» հասկացությունը, լույս բառինը՝ «որևէ մարմնի արձակած ճառագայթային էներգիան, որ ընկալվում է աչքով և տեսանելի դարձնում շրջապատող աշխարհը» և այլն: Այս սահմանումի համաձայն, ամեն մի բառ իրեն հասկացություն բովանդակող միավոր, ենթադրում է առարկաների ու երևույթների ընդհանուր, էական հատկանիշների վերացարկված արտացոլումը մեր մտածողության մեջ. օրինակ՝ աչք բառը չի նշանակում որևէ առանձին մարդու կամ կենդանու տեսողության գործարանը, այլ առհասարակ՝ տեսողության գործարան, լույս բառը ցույց է տալիս ո՛չ թե առանձնապես արեգակի կամ լուսնի (որևէ մոլորակի, աստղի և այլնի) ճառագայթային էներգիան, այլ ճառագայթային էներգիա առհասարակ և այլն: Վերանալույժ առանձին, եզակի առարկաներից (երևույթներից, գործընթացներից, հատկանիշներից և այլնից)՝ մարդկային գիտակցությունը դրանց ընդհանուր և էական հատկանիշներն արտացոլում է հասկացություններով, որոնք և բառերի իմաստն են կազմում: Այսպիսով, բառի ձևը իր նյութականությամբ դառնում է հասկացությունների նյութական ձևը կամ հասկացությունների անվանումը: Մակայն բառի սահմանման ժամանակ մենք ասացինք նաև, որ կան բառեր, որոնք զուրկ են բառային իմաստից և արտա-

հայտում են քերականական զանազան հարաբերություններ. հասկանալի է, որ այդպիսի բառերի իմաստը չենք կարող համարել առարկաների, երևույթների, հատկանիշների, գործընթացների և այլնի հասկացություններ: Այդ բառերն ունեն իմաստ, բայց ոչ թե բառային, այլ քերականական իմաստ: Այնուհետև. լեզվի բառապաշարի մեջ են մտնում նաև եղանակավորող բառերը, բացականչությունները, ինչպես և նմանաձայնություններն ու հատուկ անունները: Ծրբ այս կարգի բառերի իմաստներն ենք վերլուծում, ապա տեսնում ենք, որ դրանցից բացականչություններն ու եղանակավորող բառերն արտահայտում են ո՛չ թե առարկաների, գործընթացների և այլնի հասկացություններ, այլ հասկացություններին հարաբերակցվող վերաբերմունք, զգացմունք, սուբյեկտիվ գնահատություն և այլն. նմանաձայնությունները սուսկ վերարտադրում են առարկաների, երևույթների, գործընթացների և այլնի հանած ձայները լեզվի հնչյուններով, իսկ հատուկ անուններն առհասարակ որևէ բառային իմաստ չունեն. նրանք սուսկ առարկաների, երևույթների և այլնի անվանումներ են: Վերջապես, դերանուններն էլ թեև բառային իմաստ ունեն, սակայն նրանց իմաստը ոչ թե այս կամ այն առարկայի, հատկանիշի, գործընթացի և այլնի հասկացությունն է, այլ ընդհանրապես առարկայի, ընդհանրապես հատկանիշի և այլնի վերացարկված հասկացություն: Այսպես՝ նա դերանունը արտահայտում է ոչ թե որևէ առարկայի, ասենք՝

1 Այն դեպքում, նույնիսկ, երբ իբրև հատուկ անուն է գործածվում հասարակ անունը. նա զրկվում է իր բառային իմաստից. ցլիկ հասարակ անուն է, որ նշանակում է փոքրիկ ցուլ, բայց իբրև հատուկ անուն (օր. Յլիկ Ամբամ) նա արդեն կորցնում է այդ իմաստը. այդպես է՝ Աստղիկ, Նազելի, Գառնիկ, Վարդ, Վերջալույս և այլն: Նույնիսկ այնպիսի հատուկ անունները, որոնք ինչ-որ լափով «համապատասխանում են» իրենց կրօններին՝ իբրև նրա որևէ հատկանիշը ցույց տվող բառեր, դարձյալ որպես հատուկ անուն զրկվում են իրենց բառային իմաստից, ինչպես Մաղկաձոր, Մառնաբլուր, Զրառատ, Այգեջատ և այլն: Գրանք քննակալների անուններ են, որոնք չեն կարող «բացատրվել» իրենց բառային իմաստներով, այսինքն՝ լինք կարող ասել, թե Մաղկաձորը «ծաղիկների ձոր» է, Մառնաբլուրը՝ «սառնաբլուր աղբյուր» և այլն. դրանք բացառելու համար պետք է ասենք՝ «Մաղկաձոր անունով բնակավայր», «Մառնաբլուր անունով բնակավայր» և այլն:

ծառի, քարի, ջրի, մարդու և այլնի հասկացություն, այլ ընդհանրապես առարկայի հասկացություն՝ դիմային հարաբերությամբ կամ առանց դրան (ինչպես՝ ով, որ, ինչ, այլ, և այլն): Ուրեմն, դերանուններն էլ ունեն առարկաների, հատկանիշների, գործընթացների և այլնի ընդհանրական հասկացություն, անկախ դրանց դասերից, տեսակներից և այլն՝ դիմային հարաբերությամբ կամ առանց այդպիսի հարաբերության: Այս կարգի իմաստները լեզվաբանության մեջ կոչվում են խոսքամասային իմաստ: Հետևաբար, դերանուններն ունեն խոսքամասային իմաստ:

2 Լ. Խ. Բարսեղյանն իր «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը մեկազրույթյան մեջ առարկելով մեր «Լեզվաբանության ներածություն» (1949) գրքագրքում տրված՝ դերանունների բառային իմաստի բնութագրությանը, գրել է. «Խոսքիմասային իմաստ ունեցող բառերի տակ էլ, Ազալանը նկատի ունի միայն դերանունները, մինչդեռ ամեն մի խոսքի մաս էլ ունի խոսքիմասային իմաստ» (էջ 288): Առարկությունը միշտ չէ: Անշուշտ, տարբեր խոսքի մասերի պատկանող բառերը (և ո՛չ թե՛ «ամեն մի խոսքի մաս») արտահայտում են նաև խոսքամասային իմաստ, բայց բառային իմաստի հիմքի վրա. սեզան բառի բառային իմաստի հիմքն է բոլոր սեզանների հակած հատկանիշների վերացարկումով ու ընդհանրացումով կազմված հասկացությունը, որպես որոշակի առարկայի հասկացություն, այդպես էլ՝ պատ, ջուր, մարդ, երազարակ և բազմաթիվ այլ բառերի հասկացությունները որոշակի առարկաների հասկացություններ են: Քանի որ այդ բառերից յուրաքանչյուրի բառային իմաստը որևէ առարկայի հասկացություն է, ապա հատկանիշներն դրանցից ամեն մեկը արտահայտում է առարկայունություն խոսքամասային իմաստ, այլ կերպ ասած՝ այս կամ այն առարկայի հասկացություն արտահայտելով իսկ ստանում է նաև գոյականի խոսքամասային իմաստ, որը ով՛յալ գոյականի բառային իմաստի մեջ մտնող քերականական իմաստ է: Ինչ վերաբերում է դերանուններին, ապա զբառք զուրկ են որոշակի առարկայի (հատկանիշի և այլնի) հասկացությունից և ունեն ընդհանրապես առարկայի, ընթանաբար հատկանիշի և այլնի կարգային (կատեգորիալ) իմաստ: Այսպիսով, գոյական, ածական և այլ խոսքի մասերին պատկանող բառերն ունեն որոշակի առարկայի (առարկաների) կամ գրանց սեռի, դասի և այլնի հասկացություն + խոսքամասային իմաստ, որոշակի հատկանիշի հասկացություն + խոսքամասային իմաստ և այլն, մինչդեռ դերանուն խոսքի մասին պատկանող բառերն ունեն որևէ խոսքամասային (գոյականների, ածականների և այլն) իմաստ: Ըստ որում, ինչպես գոյականները, ածականները և այլն, այնպես էլ դերանունները, այդ իմաստի հետ միասին կարող են ունենալ և ունեն նաև զանազան քերականական իմաստներ, օրինակ դուր դերանունը, բացի գոյականի խոսքամասային իմաստից, ունի նաև անձի, զենքի, հոլովի և թվի քերականական իմաստներ, ինչպես որ, օրինակ, սեզան բառն էլ բա-

Այս բնութագրումներից ելնելով՝ բառերի արտահայտած իմաստները կարող ենք խմբավորել հետևյալ կարգերով.
1) հասկացություններ, 2) հասկացություններին հարաբերակցվող արտահայտչական (զգացական) իմաստներ, 3) քերականական իմաստներ, 4) խոսքամասային իմաստներ:

Հիմնվելով իմաստների այս դասակարգման վրա, բառերն էլ, ըստ իրենց արտահայտած իմաստների, կարող ենք դասակարգել հետևյալ ձևով.

1. Արիմասա բառեր, որոնց իմաստն է հասկացությունը կամ հասկացություններին հարաբերակցվող արտահայտչական իմաստը: Այդպիսիք են գոյականները, ածականները, թվականները, բայերը, մակբայները, ձայնարկությունները, եզանակավորող բառերը: Այդպիսիք են նաև դերանունները, որոնք արտահայտում են խոսքամասային իմաստ:

2. Ձևական բառեր, որոնք ունեն քերականական իմաստներ. այդպիսիք են կապերը և շաղկապները:

3. Բառիմաստից զուրկ բառեր, ինչպիսիք են հատուկ անունները և նմանաձայնությունները:

Քննության առնելով լեզվի բառապաշարն այս դասակարգման համաձայն, տեսնում ենք, որ բառապաշարի ամենաէական մասը, պարզապես նրա էությունն են կազմում լի-իմաստ բառերը: Այլ կերպ լինել էլ չի կարող, որովհետև հենց այդ բառերն են, որոնք հասկացություններով արտացոլում են օբյեկտիվ և սուբյեկտիվ աշխարհների երևույթները, առարկաները, հատկանիշները, գործընթացները և այլն: Սրանով էլ պայմանավորվում է այն, որ բառի և բառիմաստների սահմանման համար լեզվաբանությունն առաջին հերթին նկատի է ունենում հենց այդ բառերը, ըստ որում առանց այդ կարգի բառերի լեզու չի կարող լինել: Բառերի իմաստների դասակարգման վրա հենվելով, մենք այժմ կարող ենք տարբերակել նաև բառիմասա և բառային իմաստ տերմիններն ու սահմանել դրանց հասկացությունները: Բառիմաստը բառի իմաստն է, անկախ այն բանից, թե այդ իմաստը հասկացություն է, հասկացություններին հարաբերակցվող վերաբեր-

մունք, զգացմունք, թե միայն օրևէ ֆեռակաճական իմաստ: Ըստ այսմ, անխտիր բոլոր բառերն ունեն բառիմաստ: Բառային իմաստը այն բառիմաստն է կամ բառի այնպիսի իմաստը, օրի հիմքը առարկայի, հատկանիշի և այլնի հասկացությունն է: Իրրև այդպիսին բառային իմաստը տարբերակված իմաստ է և իր մեջ կրում է նաև առարկայի, հատկանիշի, գործընթացայնության (процесуальность), հատկանիշի հատկանիշի և այլնի, այլ կերպ՝ գոյականի, ածականի, թվականի, մակբայի, բայի խոսքամասային իմաստը: Դերանունների բառային իմաստը ինչպես տեսանք խոսքամասային կարգային (կատեգորիալ) իմաստ է, այլ կերպ ասած՝ դերանունները ունեն ընդհանրապես գոյականի կամ ընդհանրապես ածականի (թվականի, մակբայի և այլնի) խոսքամասային իմաստ, որ, ըստ էության, նույնանում է գոյական, ածական և այլ անվանումների հասկացություններին: Իրոք, ևս դերանվան իմաստը կարող ենք ներկայացնել գոյական + (դեմք, անձ, եզակի, ուղղական ճուղով) բանաձևով, որի մեջ առաջինը ևս դերանվան հասկացական հիմքն է, փակագծի մեջ անվանումները՝ քերականական իմաստներ:

բ. Բառի անվանողական դեր և առարկայական վերաբերություն

Բառերը, ինչպես ասացինք, իրենց նյութական ձևով հանդես են գալիս իրրև հասկացությունների անվանումներ: Այս կամ այն բառը ինքնին, խոսքից դուրս, չի նշում այս կամ այն առանձին առարկան, երևույթը, գործընթացը և այլն, այլ միևնույն հասկացությամբ միավորված, միևնույն հասկացության ծավալն ու բովանդակությունը կազմող բոլոր առարկաները, երևույթները, գործընթացները և այլն՝ վերացարկված ձևով: Հասկացությունների անվանումը բառի անվանողական դերն է: Ամեն մի բառ, որ արտահայտում է հասկացություն, ունի նաև անվանողական դեր: Անվանողական դերը պայմանավորված է այն բանով, որ բառային տվյալ ձևը, ամբանալով այս կամ այն հասկացությանը, անվանում է այդ հասկացությամբ միավորված բազմաթիվ միատեսակ առարկաների կամ դրանց տեսակների, սեռերի և այլնի ամ-

թի տեղան առարկայի հասկացությունից և խոսքամասային իմաստից, ունի նաև հոլովի, թվի և իրի (ու անձի) քերականական իմաստ:

բողջ դասեր, և ոչ թե ամեն մի առարկա առանձին: Այսպես, օրինակ, ծառ բառն իր հասկացութեան մեջ միավորում է բոլոր կարգի ծառերն անխտիր, մառդ բառը՝ բոլոր մարդկանց, որոնք եղել են, կան ու լինելու են և այլն: Քանի որ բառի անվանողական դերը հասկացությունների անվանումն է և ոչ թե առանձին առարկաների, քերականական իմաստների և այլն, ապա պարզ է, որ ոչ բոլոր բառերը կարող են ունենալ այդ դերը: Այսպես, կապերն ու շաղկապները, որոնք ոչ թե առարկաների, հատկանիշների և այլնի հասկացություններ են արտահայտում, այլ քերականական իմաստներ, զուրկ են անվանողական դերից: Այդ դերից զուրկ են նաև նմանաձայնությունները: Դերանունները, որոնք ոչ թե որոշակի առարկաների, հատկանիշների և այլնի հասկացություններ են արտահայտում, այլ ընդհանրապես առարկայի, հատկանիշի, և այլնի հասկացություն, նույնպես անվանողական դեր ունեն: Առանձին են մնում հատուկ անունները, ձայնարկությունները և եղանակավորող բառերը: Հատուկ անուններին կարծես թե պետք է վերագրել անվանողական դեր, բանի որ նրանց դերը հենց միայն անվանումն է: Սակայն իրականում այդպես չէ. հատուկ անունները անվանում են ոչ թե միատեսակ առարկաների հասկացություններ, այլ միատեսակ առարկաներից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Դրանք առարկաների անուններ են, ուստի և ոչ թե հասկացությունների անվանողական դեր ունեն, այլ առարկաների անվանման, Հետևաբար, հատուկ անունները ևս զուրկ են բառի անվանողական դերից: Ինչ վերաբերում է ձայնարկություններին ու եղանակավորող բառերին, ապա լեզվաբանության մեջ դրանց դերի մասին տարբեր տեսակետներ կան: Ոմանք գտնում են, որ այդ կարգի բառերը զուրկ են անվանողական դերից, որովհետև դրանք անմիջականորեն արտահայտում են զգացմունքներ և ոչ թե առարկաների, հատկանիշների, զգացմունքների և այլնի հասկացություն: Դրան հակառակ, ոմանք էլ գտնում են, որ ձայնարկությունները և եղանակավորող բառերը նույնպես հասկացություններ են արտահայտում, այսինքն դրանք բառեր են, որոնց իմաստը զգացմունքների, վերաբերմունքների և այլնի ընդհանուր հասկացությունն է, ուստի և դրանք նույնպես ունեն անվանողական դեր:

Բառի անվանողական դերին հակադրվում է նրա առարկայական վերաբերությունը: Անվանողական դերով բառը, իբրև իմաստի և նյութական ձևի միասնություն, հանդես է գալիս որպես հասկացության անվանում, և դրանով իսկ խզվում է բառի (հասկացության) անմիջական, ուղղակի կապը իրական առարկաների հետ: Սա մարդկային մտածողության ու լեզվի վիթխարի նվաճումն է, մարդկային մտքի հրաշքը: Սակայն, դրա հետ միաժամանակ, լեզուն ունի իր հասարակական դերը. նա ծառայում է հասարակական հաղորդակցմանը, որի ժամանակ հաղորդակցվողները, միմյանց հետ խոսակցողները սովորաբար իրական, այս կամ այն դեպքի, իրադարձության, երևույթի, գործընթացի, հատկանիշի մասին են խոսում և ոչ թե առհասարակ իրադարձությունների, առարկաների դասերի մասին: Եթե հասկացությունների ու դրանց անվանումների, այլ կերպ ասած՝ եթե բառերի օգնությամբ մեր գիտակցության մեջ արտացոլում ենք ոչ թե առանձին առարկաներ, հատկանիշներ, գործընթացներ և այլն, այլ դրանց ընդհանուր և էական հատկանիշները՝ իրերի աշխարհը փոխարինելով մեր գիտակցության մեջ վերացաբար գոյություն ունեցող բառերի աշխարհով, ապա հաղորդակցման ժամանակ այդ «ինքնադո» և ինքնաբավ» բառերից պետք է վերադառնանք առանձին, իրական առարկաներին (հատկանիշներին), դրանց որոշակի խմբերին, իրական դեպքերին, իրադարձություններին: Այսպես, օրինակ, մայրաճառագի բառը ներառում է բոլոր մայրաքաղաքների ընդհանուր և վերացարկված հատկանիշները՝ իբրև հասկացություն, հետևաբար նա վերաբերում է բոլոր մայրաքաղաքներին ընդհանրապես, բայց ոչ դրանցից որևէ մեկին՝ առանձին վերջրած, մինչդեռ Հայաստանի մայրաճառագի է Երևանը նախադասության մեջ այդ նույն բառը հատկացվել է միայն մեկ առանձին մայրաքաղաքի, որ է՝ Երևանը: Մտացվում է այնպես, որ բառերի օգնությամբ մենք կարվում, վերանում ենք առանձին առարկաներից, հատկանիշներից, իսկ մյուս կողմից էլ, հենց նույն բառերի օգնությամբ, նրանց գործածությամբ կատարում ենք հակառակը՝ ընդհանուր հասկացությունը վերաբերելով առանձին առարկաների (հատկանիշների և այլն), դրանց որոշակի խմբերի, որոշակի քանակության:

Քառերն այս դեպքում ստանում են առարկայական կոնկրետություն, վերագրվում, հարաբերակցվում, հատկացվում են տվյալ հասկացության ծագալի մեջ մտնող առարկաներից մեկին, առարկաների այս կամ այն մասնավոր խմբին: Մտքառը ներառում է բոլոր ծառերն անխտիր, բայց չի նշում դրանցից որևէ մեկը կամ մի քանիսը, մինչդեռ «Մեր տնկած ծառերը կանաչի են» նախադասության մեջ այդ նույն բառը վերագրվել, հարաբերակցվել, հատկացվել է ծառերի միայն մի խմբի, այն է՝ մեր տնկած ծառերին:

Քառերի վերագրումը կամ հարաբերակցումը իրենց ցույց տված առարկաներից (հատկանիշներից և այլնից) մեկին կամ մի որոշակի խմբի՝ կոչվում է առարկայական վերաբերություն: Այն բոլոր բառերը, որոնք ունեն անվանողական դեր, ունեն նաև առարկայական վերաբերություն: Դերանունները, որոնք խոսքի մեջ նույնպես հարաբերակցվում, հատկացվում են որոշակի առարկաների, հատկանիշների, ըստ որում այդ հարաբերությունը պայմանավորված է իրադրությամբ, ունեն իրադրական առարկայական վերաբերություն, մինչդեռ հատուկ անունները, որոնք իրենց դերով արդեն առարկաների անվանումներ են, բնականաբար ունեն միայն առարկայական վերաբերություն, առանց անվանողական դերի:

Գ. Բնիմաստ և բառի ներքին ձև

Քառերի իմաստների, անվանողական դերի և առարկայական վերաբերության մասին սովածները բավականաչափ լույս են սփռում բառի բովանդակության ու գործառական կողմի վրա: Սակայն դրանցով չի սպառվում բառի էությունը: Մասնավորապես, խոսելով բառի բովանդակության մասին, կարելի է ասել, որ նա, բացի հասկացություններից, որոնք, անշուշտ, բառի բովանդակության հիմքն են կազմում, ներառում է իմաստային նաև այլ տարրեր: Իմաստային այլ տարրերի մասին գաղափար կազմելու համար մեզ անհրաժեշտ է ծանոթանալ բառի ստուգաբանությանը, Ընդհանուր առումով ստուգաբանություն (էտիմոլոգիա) կոչվում է լեզվի ուսումնասիրության այն բաժինը, որն զբաղվում է լեզվական

միավորների ծագման, նախնական իմաստի, ձևի ու գործառույթի լուսարանություն: Մասնավորապես բառերի վերաբերյալ կիրառվելով, որպես բառագիտական հետազոտության մի բնագավառ, ստուգաբանությունը ձգտում է պարզել բառի ծագումը, նրա նախնական իմաստն ու ձևը, դրանց պատմական փոփոխություններն ու զարգացումը մինչև տվյալ պահը. օրինակ, զբաղվելով դուրեք բառի այդպիսի հետազոտությամբ, մենք կպարզենք, որ նա ծագել է հին հայերենի ընդ ունը «բեղերի՝ թթի տակի մասը» նշանակությամբ կապակցությունից. պատմական զարգացման ընթացքում կապակցության անդամների միավորումով ստացվել է ընդ ունը բաղադրյալ բառը, որից էլ, ըն հնչյունների անկումով՝ մեր այժմյան դուրեք բառային ձևը. որոշ փոփոխության է ենթարկվել նաև իմաստը, ըստ որում դուրեք այժմ նշանակում է ոչ թե «թթի տակի մասը», այլ՝ «կենդանիների գլխի առջևի ստորին մասը՝ ծնոտը, բերանը և քիթը միասին»: Նույն ձևով մենք կարող ենք պարզել, որ հայերենի կրունկ, կուռն, կոնակ, կարք բառերը ծագել են մինևույն կուր արմատից, որ նշանակել է «ծուռ, շեղ, կեռ» և այլն: Այսպիսով, բառագիտական ստուգաբանությունը բառի ծագման ու զարգացման պատմությունն է: Մեզ համար տվյալ դեպքում ստուգաբանությունը կարևոր է այն քանի համար, որ նա հնարավորություն է տալիս գտնելու բառերի նախնական իմաստները և դրանով իսկ բացահայտելու այն սկզբնական հասկացությունը և պատկերացումը, որից առաջացել են նորանոր հասկացություններ և, համապատասխանաբար, բառային իմաստներ: Այսպես, ստուգաբանությունը ցույց է տալիս, որ մարդ բառն առաջացել է մեռնել բայի նախահայկական շրջանի ենթակայական դերբայից և նշանակել է «մեռնող, մահկանացու»: Մրանից հեշտ է եզրակացնել, որ մարդ արարածի էական հատկանիշը հին ժամանակներում հայերի (նաև այլ ժողովուրդների) համար եղել է այն, որ նա մահկանացու է. ուրիշ ժողովուրդների համար այդպիսի հատկանիշ է եղել «հողեղենությունը» (օր. լատիներեն homo «մարդ» բառը ստուգաբանորեն կապվում է humus «հող» բառի հետ) և այլն: Բառի նախնական իմաստը լեզվաբանության մեջ կոչվում է բնիմաստ (էտիմոն):

Այժմ, ծանոթանալով ևս մի բանի բառերի բնիմաստներին, փորձենք պարզել դրանց ու նույն բառերի այժմյան իմաստների հարաբերությունը:

Այս, գրաբարյան այտուց «ուռչել» և ժամանակակից այտուցվել, այտուց բառերի բնիմաստն է սուռչել, ուսուցիկ ձև ստանալ, ուսուցք:

Յչի և գրաբարյան ակն տեսողության գործարան», ակ անիվ», ակ աղբյուրի ակունք», ակ «մատանու քար և առհասարակ՝ թանկագին քար», ակ «փեթակի այն անցքը, որով ելումուտ են անում մեղրանեղր» բառերի բնիմաստն է հզել «աչք, տեսողության գործարան»:

Նթն այս օրինակներին ավելացնենք նաև վերը հիշվածները (մարդ և մահ, մեռնել.— կոր, կեռ, կրունկ և կուռ, կոնակ, կարթ և այլն), ապա կհանգենք այն պարզ եզրակացության, որ միևնույն բնիմաստից առաջացել են տարբեր բառային իմաստներ և համապատասխանորեն՝ տարբեր բառեր:

Ժամանակակից հայերենի մեջ «մարմնի հտեի մասը՝ գոտկատեղից վերև, թիկունք» բառն առաջացել է հին հայերենի մէջ բառից, որի բնիմաստն է՝ «որևէ բանի միջին (ներսի) կողմը, ներքը» և «որևէ բանի միջին մասը», իսկ կոնակ «թիկունք» բառը՝ կուռն բառից, որ իր հերթին ստացվել է կուռ բառից, որի բնիմաստն է «ծուռ, շեղ»: Նույնպես և՛ լատիներեն angina «անգինա հիվանդությունը» և anguis «օձ» բառերն ստացվել են ang-արմատից, որի բնիմաստն է հզել «ենեղ, անձուկ» (հմմտ. հայերեն անձուկ և օձ, ռուսերեն՝ у з к и и և այլն, որոնք նույնպես միևնույն արմատից են ծագել), իսկ նույն լատիներենի serpens «օձ» բառի բնիմաստն է հզել սողացող, սողուն: Այս երկու օրինակներն էլ, ինչպես տեսնում ենք, ցույց են տալիս մի այլ իրողություն, այն է՝ տարբեր բնիմաստներից զարգացել են նույն բառային իմաստները (կոնակ և մեջք նույն բառային իմաստն ունեն, բայց ծագել են տարբեր բնիմաստներից, ինչպես և լատիներենի serpens և anguis բառերը, որոնք տարբեր բնիմաստներ ունեն, բայց երկուսն էլ նշանակում են օձ):

Ինչպես տեսնում ենք, բնիմաստների պատմական զարգացումը կարող է հանգեցնել երկու տարբեր հետևանքների.

մի կողմից՝ տարբեր բնիմաստներից կարող են զարգանալ նույնական բառիմաստներ, իսկ մյուս կողմից՝ միևնույն բնիմաստից կարող են առաջանալ տարբեր բառիմաստներ: Եվ, սակայն, շնայած այդ տարբեր հետևանքներին, երկու դեպքում էլ մենք գործ ունենք միևնույն ընդհանուր երևույթի հետ, այն է՝ բնիմաստների մթագնում: Նախնական իմաստից, այսինքն՝ բնիմաստից, նոր բառիմաստների առաջացումը անխուսափելիորեն հանգեցնում է բնիմաստի մթագնումին: Իրոք, հայերեն խոսողներից ո՞վ է այսօր մտածում, որ մառդ բառն ինչ-որ ժամանակ նշանակել է «մահացող», կուռ և կրունկ բառերը՝ «ծուռ, շեղ», այս բառը՝ «ուսուցիկ (ուսյուն), ուսած», օձ բառը՝ «սեղող» և այլն: Այս բոլորը լեզվի պատմության հետազոտությունն է պարզում միայն, մինչդեռ մեր լեզվի զարգացման այժմյան վիճակում ոչ մի կապ գոյություն չունի դրանց միջև:

Բնիմաստի հետ սերտորեն կապված է բառի ներքին ձևը, այսինքն՝ բաղադրյալ բառի իմաստային այն տարրերի ամբողջությունը, որոնցով բաղադրվում է նրա բառիմաստը: Այսպես, օրինակ, զանգրանե բառը նշանակում է «ղանգուր մազեր ունեցող». դա նրա բառիմաստն է. այդ բառը կազմվել է զանգուր և նե բառերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր իմաստը: Ամբողջ բարդության բաղադրիչների այդ իմաստներն էլ հենց այն իմաստային տարրերն են, որոնցից բաղադրվում է զանգրանե բառի իմաստը, ուստի և՛ զանգուր և նե բառերի իմաստները կազմում են զանգրանե բառի ներքին ձևը: Նույնպես և՛ ճաշարան, լուսամուտ, վերաբու, աշագնդ, հացքուխ, սեղանատուն բառերի իմաստային տարրերը, այսինքն՝ ներքին ձևն են ներկայացնում՝ ճաշ-արան («որևէ բանի տեղ ունենալու վայր, որևէ գործողության, գործունեության և այլնի տեղ» իմաստով ածանց), լույս-մուտ(ք), վեր (սվրան, վրայից, վերնից) -արկու («զցող, գցվող, գցելի»), աչ(ք)-գեղ (սգեղեցիկ), հաց-քուխ («թխելը, թխում»), սեղան-տուն բառային կամ ածանցական իմաստները: Բերված բաղադրյալ (զանգրահեր, ճաշարան, լուսամուտ, վերարկու, աշագեղ, հացթուխ, սեղանատուն) բառերի բաղադրիչների իմաստներն էլ, ահա, ներկայացնում են այդ բառերի ներքին ձևը, այլ կերպ ասած, բաղադրիչների իմաստներն էլ

հենց այն տարրերն են, որոնցից բաղադրվում է յուրաքանչյուրի բառային իմաստը: Ներքին ձևը բաղադրյալ բառի իմաստից տարրերվում է, առաջին հերթին, նրանով, որ բառի իմաստը բաղադրիչների իմաստների պարզ գումարը չէ. սեղանատուն բառի բաղադրիչներն են սեղան և տուն բառերը, բայց սեղանատուն բառի իմաստը հավասար չէ դրանց իմաստների գումարին. այդ բառերի իմաստները միայն այն տարրերն են, որոնցից բաղադրվում է սեղանատուն բառի իմաստը, այն է՝ «բնակարանի այն սենյակը (մասը, սրահը), որտեղ ճաշում է ընտանիքը»: Այդպես էլ՝ «անգրանեռ չի նշանակում զանգուր և մազ, այլ «գանգուր մազեր ունեցող, գանգուր մազերով», թեև «գանգուր» և «մազ» իմաստները նրա բաղադրիչ տարրերն են: Ունենալով իմաստային որոշակի տարրեր, բաղադրյալ բառի իմաստը բաղադրվում է ոչ այդ տարրերի պարզ գումարով, այլ նրանց որոշակի հարաբերությանը ստեղծվող միասնությանը: Ուրեմն, ներքին ձևը ներկայացնում է որոշակի իմաստային տարրեր, մինչդեռ բաղադրյալ բառի իմաստը՝ այդ տարրերի միջև ստեղծված ներքին հարաբերությանը միավորվող միասնական բառային իմաստ, որը, ինչպես ամեն մի բառային իմաստ, ներկայացնում է որոշակի հասկացություն:

Այնուհետև. թեև ներքին ձևը այն իմաստային տարրերն են, որոնցից բաղադրվում է բառային իմաստը, սակայն հաճախ այդ իմաստային տարրերը լոկ մոտավորապես, որոշակի մոտավորությամբ ու պայմանականությամբ են ներկայացնում բառի բովանդակած հասկացությունը: Այսպես, օրինակ, հեծանիվ բառի ներքին ձևն են կազմում հեծ («հեծնելը, նստելը») և անիվ իմաստային տարրերը, բայց հեծանիվ-ի իմաստն է «ոտքերով շարժման մեջ դրվող երկանիվ կամ եռանիվ փոխադրական միջոց»: Նույնպես և՛ «գործավարձ» բառի իմաստային տարրերն են գործ և վարձ, մինչդեռ բառի իմաստն է՝ «վարձատրություն ըստ աշխատանքի ծավալի կամ քանակի» և այլն: Եվ շնայած այդ ամենին, բառի ներքին ձևը բառային ամբողջական իմաստի հիմունքն է: Բանն այն է, որ բոլոր դեպքերում էլ բառի ներքին ձևը բացատրում, լուսաբանում է այն հատկանիշը կամ հատկանիշները, որոնց հիման վրա ստեղծվում է առարկայի (երևույթի և այլնի)

հասկացությունը՝ առարկայի ճանաչման գործընթացում: Բառերի իմաստները, ինչպես ասացինք, արտահայտում են հասկացություններ, որոնք արտացոլում են առարկայի, երևույթի, գործընթացի և այլնի էական հատկանիշները: Սակայն միևնույն ժամանակ, այդ արտացոլումը պայմանավորված է նախ՝ մեր ճանաչողության աստիճանով, այսինքն՝ այն բանով, թե մենք որչափով ճշգրիտ գաղափար ունենք առարկաների, երևույթների, գործընթացների մասին: Երկրորդ՝ նույնիսկ ճշգրիտ գաղափարներ ունենալու դեպքում էլ կարևոր է այն, թե տվյալ առարկայի, գործընթացի և այլնի համար մենք ո՞ր հատկանիշն ենք էական համարում մեր ճանաչողության զարգացման տվյալ աստիճանում: Հայերի համար խոր հնադարում մարդ արարածի առավել էական հատկանիշն է եղել մահկանացու լինելը, իսկ հին հռոմեացիների համար՝ հողեղեն լինելը, ուստի և հայերենում մարդ բառը ծագել է մեռնել բառից, իսկ լատիներենում՝ հող բառից: Հայերի համար պատուհանի էական հատկանիշ է համարվել պատի մեջ թողած բացվածքը, իսկ ռուսի համար՝ նույն պատուհանի նմանությունը աչքին (ռուս. օկնո պատուհան) բառը ծագել է օկո «աչք» բառից): Սա նշանակում է, թե բառի ներքին ձևը տալիս է տվյալ առարկայի, գործընթացի և այլնի այն էական, աչքի զարնող հատկանիշը, որ մենք դիտում ենք իրեն նրա առավել կարևոր բնութագիրը՝ ամբողջ առարկայի (գործընթացի և այլնի) համար:

Ավաճանից հեշտությամբ կարելի է եզրակացնել, որ ինչպես բնիմաստը, այնպես էլ բառի ներքին ձևը բառիմաստի այն տարրերն են, որոնք բացահայտում են բառիմաստը կազմող, ձևավորող պատկերացումները, ա՛յն աչքի զարնող հատկանիշը կամ հատկանիշները, որոնք ընկած են տվյալ բառի իմաստի հիմքում: Սրանով էլ բնիմաստն ու ներքին ձևը ներկայացնում են տվյալ բառի ձևի և իմաստի, այսինքն՝ տվյալ բառաձևի և նրա տվյալ բառիմաստի պատճառական կապը, ներկայացնում բառային ձևի ու բառիմաստի միասնության հիմնավորումը (մոտիվացիան): Կուռն բառի բառային ձևի և իմաստի միասնությունը հիմնավորված է (мотивирован) նրանով, որ հայերի համար մարդու մարմնի այդ մասի աչքի զարնող հատկանիշն է եղել նրա կորություն:

նը, ծոռութունը, ուստի և կոշիլ են կորուստն նշանակող բառով: Այդպես էլ՝ հեծանիվ-ի աչքի զարնող հատկանիշներն են համարվել մի կողմից՝ անվավոր լինելը, մյուս կողմից՝ հեծնելով վարելը, ուստի և առարկան կոշիլ են հեծ(ել) և անիվ բառերի միասնությամբ:

Այս տեսակետից բնիմաստն ու ներքին ձևը ըստ էության նույնանում են, և եթե դրանք, այնուամենայնիվ, տարբեր անվանումներով, տարբեր լեզվաբանական տերմիններով են կոչվում, ապա պատճառն այն է, որ նույնությամբ հանդերձ, ունեն նաև որոշակի տարբերություններ: Բնիմաստը ենթադրում է իմաստային փոխանցումներ, հետևաբար նա պայմանավորված է իմաստի (բառի ամենանախնական իմաստի) հետագա զարգացումով, մինչդեռ ներքին ձևը անկախ է այդ փոխանցումներից. կռուն, կռունկ, կարք, կռակ բառերը ծագել են «ծուռ, շեղ» իմաստից և հանգում են կտր, կեռ արմատին, հետևաբար և պայմանավորված են այդ արմատի իմաստի հետագա զարգացումով, մինչդեռ զանգրաներ, ճաշարան, սեղանատուն և նման բառերի ներքին ձևը դրանց բաղադրիչների իմաստներն են, անկախ պատմական զարգացումից: Սա չի նշանակում, իհարկե, թե բաղադրյալ բառերը չեն կարող իմաստի պատմական զարգացումով նոր իմաստներ ձեռք բերել. բառերը, անկախ բաղադրյալ կամ արմատական լինելուց, իմաստի պատմական զարգացման ենթակա են, բայց այս դեպքում կարևորը դա չէ, այլ այն, որ բաղադրյալ բառի ներքին ձևը միշտ էլ ինքնին հայտնի է. մենք գիտենք, թե որոնք են իմաստային այն տարրերը, որոնցից բաղադրվում է տվյալ բաղադրյալ բառի իմաստը, նույնիսկ եթե այդ իմաստը բոլորովին փոխվել է: Այսպես, օրինակ, հետախույզ բառը կազմված է հետ(ք) և խույզ (գրաբարյան՝ խույզ) օրոնելը, փնտրելը՝ բառերից, որոնց իմաստներն էլ կազմում են նրա ներքին ձևը, և անկախ այն բանից, որ այդ հետախույզ բառն այժմ իր նախկին իմաստը չի պահել, բայց և այնպես նրա ներքին ձևը նույնն է:

Այսպիսով, բնիմաստը բառի այն իմաստային հիմքն է կամ նախնական իմաստը, որ այժմ մեծ մասամբ ճայտնի չէ, մթազնվել, կտրել է և հայտնաբերվում է միայն ստուգա-

բանության միջոցով, մինչդեռ բառի ներքին ձևը ինքնին բացահայտվում է բառի բաղադրիչների իմաստներով:

դ. Բառի ստրյուկտիվ իմաստ

Բառերի իմաստները, լինելով հասկացությունների անվանումներ, միևնույն ժամանակ արտահայտում են օբյեկտիվ առարկաների, երևույթների և այլնի նկատմամբ մարդկանց ունեցած վերաբերմունքը, նրանց հասարակական գնահատությունը: Առարկաների, երևույթների, գործընթացների նկատմամբ մարդիկ ունեն որոշակի վերաբերմունք, գնահատություն. առարկաները, երևույթները, գործողությունները և այլն դրանք ճանաչող մարդու համար լավ են կամ վատ, դրական են կամ բացասական, գեղեցիկ են կամ տգեղ, հաճելի են կամ տհաճ, օգտակար կամ վնասակար և այլն: Մարդը, որ ակտիվորեն է ճանաչում այդ առարկաները, երևույթները և այլն, չի կարող շարտահայտել նաև իր վերաբերմունքը դրանց նկատմամբ: Սրա հետևանքն է լինում այն, որ բառը, բացի առարկայի համակացությունն արտահայտելուց, հաճախ արտահայտում է նաև որոշակի վերաբերմունք: Բացի դրանից, իրենք՝ օբյեկտիվ առարկաները, գործընթացները, հատկանիշները և այլն նույնպես իրենց դրսևորումների մեջ բացարձակապես նույնական չեն. միևնույն երևույթը կարող է ունենալ բուն կամ թույլ, դուրեկան կամ տհաճ դրսևորումներ և այլն, և այլն: Այս բոլորը, բնականաբար, արտացոլվում են բառի մեջ, առարկաների, երևույթների, հատկանիշների և այլնի հասկացություններն օժտելով զանազան երանգավորումներով, վերաբերմունքով, գնահատությամբ: Այսպես, օրինակ, ուսուցիչը որպես որոշակի զբաղմունքի տեր մարդ, օբյեկտիվորեն նույնն է բոլոր դեպքերում. բոլոր ուսուցիչներն էլ ուսուցիչ են: Սակայն բոլոր ուսուցիչների մեջ կան լավ ուսուցիչներ և վատ ուսուցիչներ, կան իրենց գասավանդած առարկային լավ տիրապետող և մանկավարժական-մեթոդական հմտություն ունեցող ուսուցիչներ, և կա իր գիտելիքներով խղճուկ, մանկավարժական-մեթոդական հմտությունից զուրկ ուսուցիչ: Հասկանալի է, որ այս իրական հատկանիշներն էլ կարող են արտացոլվել այն բառերի մեջ, որոնցով արտա-

հայտնում են այդ հասկացությունները: Երոք, մենք ունենք ուսուցիչ և վարժապետ բառերը, որոնցից առաջինը շեղոք իմաստ է արտահայտում կամ, ընդհանրապես, դրական հրանգ ունի, մինչդեռ վարժապետ բառը արտահայտում է արհամարհական, բացասական իմաստ: Նույնպես և՛ ունենք ծիծաղ, Բեհոց, Բեհոց բառերը, որոնցից առաջինը արտահայտում է հասկացությունը շեղոք բնութագրությամբ՝ առանց շեշտելու նրա սաստկությունը, հանելիությունը կամ տհաճությունը և այլն, մինչդեռ Բեհոց նշանակում է ծիծաղ, բայց բուն, սաստիկ դրսևորումով, Բեհոց և Բեհոց՝ բուն ծիծաղ, բայց անախորժ տպավորություն թողնող և այլն: Ատապղում է այնպես, որ միևնույն առարկայի, երևույթի և այլնի հասկացությունը տարբեր բառերով անվանելով՝ արտահայտում են տարբեր գնահատություններ: Վերջապես, առարկան, երևույթը, հատկանիշը ինքնին կարող է մարդկանց համար շարժք, անախորժություն, զոքախտություն կամ հակառակը լինել, և մարդը, ունենալով դրա հասկացությունը, կարող է օժտել այդ հասկացությունը նաև անախորժության, տհաճության երանգով կամ էլ՝ հակառակը. օժը ժողովրդի պատկերացմամբ վնասակար է, և օժ բառը իր արտահայտած իմաստի մեջ ունի նաև մարդու բացասական վերաբերմունքը, մինչդեռ մեղուն իր հասկացության հետ ունի նաև դրական վերաբերմունք: Այս բոլոր վերաբերմունքները, որոնք արտահայտվում են բառերի մեջ՝ նրանց իմաստի հիմքը կազմող հասկացության հետ միասին, սուբյեկտիվ տարրն են կազմում և կոչվում են բառի սուբյեկտիվ իմաստ: Սուբյեկտիվ իմաստը կարող է բազմազան լինել իր բնույթով. նա կարող է քաղաքական-գաղափարական վերաբերմունք լինել, կարող է գեղագիտական, սովորութային (ավանդական), կենցաղային գնահատություն լինել, կարող է բխել առարկայի (երևույթի, հատկանիշի և այլնի) էությունից (մարդու համար վնասակար կամ օգտակար), կարող է լուկ հասարակական ըմբռնումներից, նախապաշարումներից և այլնից բխել: Կարևորն այն է, որ բառերի իմաստների մեջ կան նաև մի սուբյեկտիվ տարր՝ հասարակական վերաբերմունքն ու գնահատությունը:

Բառիմաստի սուբյեկտիվ տարրը կարող է առաջանալ

բառի գործածության, իմաստի, գործառական հատկանիշների, պատմական զարգացման ու փոփոխությունների հետևանքով, բայց կարող է նաև հենց բառի ու նրա արտահայտած իմաստի գոյացման գործընթացում ծագել որպես ավյալ հասկացության հիմք: Այսպես, օրինակ, հաճախաբառ բառը սովորական գործածությամբ արտահայտում է դրական վերաբերմունք հենց իր հասկացությամբ, որն էլ իր հերթին արտահայտում է օբյեկտիվ իրականությունը. հաճախաբառ ու զիղ դժով արյունակիցն է, իսկ, որպես օբյեկտիվ ճշմարտություն, հարազատները՝ ուղղագիծ արյունակիցները, միմյանց նկատմամբ չեն վերաբերմունք ունեն: Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, հասկացությունն ինքնին արտահայտում է դրական վերաբերմունք՝ մարդկանց միջև օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն գոյություն ունեցող հարաբերությունների համապատասխան: Այդ հիմքի վրա նույն բառը մեր լեզվում ստացել է յուրահատուկ գործածություն՝ ստացական հոգով կամ անձնական դերանվան օժական հոլովով հատկացուցիչ հետ, որպես կոչական բառ (հարազատ, իմ հարազատ) և, կորցնելով իր ուղղակի իմաստը, արտահայտում է չիմ մտերմություն, հուզահարազատություն, սեր: Այս դեպքում էլ, ինչպես տեսնում ենք, բառի փոխարևրական գործածությամբ աստիճանաբար իմաստափոխություն է տեղի ունեցել և գործառական նոր դերին համապատասխան ստացել է զգացական իմաստ, արտահայտելով քնքշանք ու չերմորեն դրական վերաբերմունք: Նույն հաճախաբառից ունենք անհաճախաբառ անհասկացողորը, որի ուղղակի իմաստն է՝ սոչ հարազատ. այդ իմաստով բառը վերաբերմունքային տեսակետից շեղոք է, ըստ որում հարազատների թվին լրատականելը դեռևս ոչ համակրալից կամ բացասական վերաբերմունքի պատճառ չէ: Սակայն, երբ այդ բառը գործածվում է զույց տալու համար, որ տվյալ անձը օտար, խորթ է մարդկանց տվյալ խմբավորման, կոչելիտիվի, միջավայրի համար, ապա նա ստանում է նոր իմաստ՝ դրա հետ միաժամանակ արտահայտելով նաև բացասական վերաբերմունք (համտ. նա անհաճախաբառ էր մեր կոչելիտիվին, այդպես էլ մնում է մինչև այժմ): Նույն բառը 20-ական թվականներին արտահայտում էր քաղաքական գնահատություն ու վերաբերմունք,

ներ գործածվում էր աստվետական իշխանության ոչ համակիր կամ պարզապես թշնամի անձ՝ նշանակությամբ (համտ. անհարազատ տարբ. արտահայտությունը): ԽժՈՆԷՂ ԲԱՅՂ՝ ԳԱՊԱՆՈՐԻՆԻ ԿԱՄ ԱՆՏԱԳՈՐԵՆ ՈՒՄԵՂ՝ ԻՄԱՍՏՈՎ, ԲՆԱԿԱՆԱՐԱՐ, արտահայտում է բացասական-անարգական վերաբերմունք, և այս դեպքում բառի արտահայտած հասկացությունն իսկ իր մեջ կրում է բացասական վերաբերմունք, մինչդեռ ուտել բայն իր ուղղակի իմաստով սուբյեկտիվ վերաբերմունք, այսինքն՝ բացասական կամ դրական գնահատություն չի արտահայտում: Սակայն նույն ուտել բառը «յուրացնել, վատնել» փոխաբերական իմաստով (համտ. «Շինարարության գումարները կերել է») արտահայտում է բացասական վերաբերմունք: Վարժապետ բառն, ինչպես գիտնք, անցյալում վերաբերմունքային տեսակետից չեզոք էր, հաճախ էլ արտահայտում էր դրական, հարգական վերաբերմունք, մինչդեռ այժմ արտահայտում է բացասական, արհամարհական-անարգական բնութագրություն:

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, բառերի արտահայտած սուբյեկտիվ գնահատությունը, վերաբերմունքը կարող է թխել հենց հասկացությունից, ըստ որում հասկացությունն էլ արտացոլում է առարկաների, երևույթների և այլնի ոչ միայն օբյեկտիվորեն էական հատկանիշը (հատկանիշները), այլև մարդկանց վերաբերմունքը դրանց նկատմամբ: Հասկացությունների գոյացման և դրանց մեջ մարդկանց ակտիվ գնահատության ու վերաբերմունքի արտահայտումը հիանալիորեն բնութագրելու լուսարանն է Մարքսը «Դիտողություններ Ադուլֆ Վագների գրքի մասին» հոդվածում: «Մարքսը,— գրում է Մարքսը,— ճարտարության մեջ է գտնվում արտաֆին աշխարհի առարկաների, իբրև յուր պահանջների բավարարման միջոցների, հետ... Ինչպես և մեն մի կենդանի, նրանք սկսում են այն բանից, որ ուտեն, խմեն և այլն, այսինքն գտնվեն ոչ թե «ինչ-որ հարաբերության մեջ», այլ ակտիվորեն գործեն, գործունեության շնորհիվ տիրապետեն արտաքին աշխարհի որոշ առարկաների և այդպիսով բավարարեն իրենց պահանջները (նրանք, հետևաբար, սկսում են արտագրությունից): Այդ պրոցեսի կրկնության շնորհիվ այդ առարկաների՝ ամարդու պահանջները բա-

վարարելուս ունակությունը տպավորվում է նրանց ուղեղում, մարդիկ և գազանները սովորում են նաև «տեսականորեն» տարբերել իրենց պահանջները բավարարելուն ծառայող արտաքին առարկաները բոլոր մյուս առարկաներից: Հետագա զարգացման որոշ մակարդակի վրա, այն բանից հետո, երբ բազմապատկեցին և ապա միաժամանակ ավելի զարգացան մարդկանց պահանջներն ու գործունեության տեսակները, որոնց օգնությամբ նրանք բավարարվում են, մարդիկ տալիս են առանձին անվանումներ այդ առարկաների ամբողջ դասերին (целым классам), որ նրանք փորձով արդեն տարբերում են մնացյալ արտաքին աշխարհից: Այս անխուսափելիորեն վրա է հասնում, քանի որ նրանք գտնվում են արտագրության պրոցեսում, այսինքն՝ այդ առարկաների յուրացման պրոցեսում, մշտապես աշխատանքային կապի մեջ իրար հետ և այդ առարկաների հետ և շուտով սկսում են նույնպես կոնիվ մղել ուրիշ մարդկանց հետ՝ այդ առարկաների համար: Բայց այդ բառային անվանումը պատկերացման ձևով միայն արտահայտում է այն, ինչ որ կրկնվող գործունեությունը վեր է ածել փորձի, այսինքն՝ այն, որ որոշ արտաքին առարկաներ որոշ հասարակական կապի մեջ ապրող մարդկանց (սա խոսքի առկայությունից անհրաժեշտաբար բխող ենթադրություն է) ծառայում են՝ նրանց պահանջները բավարարելու համար: Մարդիկ տալիս են այդ առարկաներին առանձին (տեսակի) անուն, որովհետև նրանք արդեն գիտեն այդ առարկաների առանձին ունակությունը՝ ծառայել իրենց պահանջների բավարարմանը, որովհետև նրանք առավել կամ պակաս հաճախ կրկնվող գործունեության օգնությամբ աշխատում են տիրապետել նրանց և այդպիսով նաև պահել իրենց տիրապետության տակ: Նրանք, հնարավոր է, այդ առարկաներն անվանում են «բարիքներ» կամ դարձյալ ուրիշ որևէ կերպ, որը նշանակում է, որ նրանք պրակտիկ կերպով գործադրում են այդ առարկաները, որ վերջիններս նրանց օգտակար են... Մարդիկ փաստորեն սկսում են նրանից, որ իրենք են յուրացնում արտաքին աշխարհի առարկաները, որպես միջոցներ՝ իրենց սեփական պահանջները բավարարելու համար և այլն, և այլն. հետո նրանք հասնում են այն բանին, որ և բառային կերպով նշանակում են դրանք իբրև իրենց պա-

ճանչնիր բավարարելու միջոցներ, իբրև որպիսին դրանք արդեն ծառայում են նրանց համար պրակտիկ փորձում... Մարդիկ ոչ միայն պրակտիկայում վերաբերվում են այդպիսի նման առարկաներին, որպես իրենց պահանջների բավարարման միջոցների, այլ պատկերացումների մեջ և ապա բառային արտահայտության մեջ նշում են դրանք իբրև իրենց պահանջները «բավարարող» առարկաներ...»² Այս հատվածում Մարքսը միանգամայն պարզորեն լուսարանում է առարկաների հասկացության, այլ կերպ՝ բառիմաստի գոյացման ու բառային անվանման պրոցեսը: Մարքսը նախ և առաջ արտադրության պրոցեսում սրող հարաբերությունների մեջ է մտնում արտաքին աշխարհի առարկաների հետ, այդ հարաբերությունների շնորհիվ տարբերում է իր պահանջները բավարարելուն ծառայող առարկաները մնացած առարկաներից և ապա անվանում է այդ առարկաները: Սակայն, անվանելով առարկաները, նա այդ անվանումների մեջ դնում է հենց այն հատկանիշը, որով օբյեկտիվ առարկան պիտանի է դառնում իրեն և, դրա հետ միասին, այն հարաբերությունը, որ կա իր և այս կամ այն առարկայի միջև: Նույն տեղում Մարքսն ասում է. «Նրանք (մարդիկ—է. Ա.) վերապրում են առարկային օգտակարության բնույթը, որը իբրև թե հատուկ է իրեն իսկ՝ առարկային, թեև ոչխարին հազիվ թե իբրև յուր օգտակար» հատկություններից մեկը պատկերանար այն, որ նա պիտանի է մարդուն որպես կեր»³: Նշանակում է, տալով առարկաներին բառային անվանումներ, այսինքն՝ այս կամ այն հնչյունախումբը հատկացնելով այս կամ այն առարկայի հասկացությանը՝ մենք այդ անվանումների (հնչյունախումբի) մեջ դնում ենք այն հարաբերությունը, որ կա մեր և այդ առարկաների միջև: Հետևաբար, բառիմաստի կազմվելը հիմնված է մարդու պրակտիկ գործունեության վրա և արտահայտում է ինչպես օբյեկտիվ իրականության իրերը, առարկաներն ու երեվույթները, այնպես էլ մարդու ունեցած հարաբերությունները, մի կողմից՝ արտաքին աշխարհի հենց այդ իրերի, առարկաների ու երևույթների, մյուս կողմից՝ ուրիշ մարդկանց

հետ: Իհարկե, հասկացության գոյացման պրոցեսում ոչ ոչ օժանդակ դեր կարող են կատարել նաև առարկայի ձևը, գույներ և ուրիշ արտաքին հատկանիշներ, մասնավանդ այն դեպքերում, երբ բառային անվանում է սրվում չճանաչված, հետևաբար պրակտիկ գործունեության մեջ շփտակցված առարկային կամ երևույթին: Սակայն հասարակական գործունեության զարգացման հետ ու նրա շնորհիվ առարկաների արտաքին հատկանիշները, որպես նրանց ճանաչման աղբյուր, մտածողության ու լեզվի զարգացման ավելի բարձր աստիճաններում հոտին պլանն են մղվում: Ուստի և՛ իբր խոսվում է հասկացության սուբյեկտիվ բնույթի մասին, պետք է նկատի ունենալ առարկաների, երևույթների և այլն հասարակության կյանքում ունեցած դերը ու պիտանիությունը, մարդկանց հարաբերությունը դրանց հետ և դրան համապատասխան գնահատությունը:

Իրենց պրակտիկ գործունեության պրոցեսում, ակտիվորեն գործելու պրոցեսում, մարդիկ ճանաչում են արտաքին առարկաները նրանց հետ ունեցած կրկնվող հարաբերությունների շնորհիվ և հենց այդ ճանաչմամբ էլ կազմում այդ առարկաների հասկացությունները իրենց գիտակցության մեջ: Այս բանը հեշտ է ցույց տալ ամենահասարակ օրինակներով: Ղեռ նոր խոսել սովորող երեխան նախապես տարբերում է իրեն շրջապատողներին իբրև մայր, հայր, տատ և այլն: Բայց հենց այդ շրջապատողները շարունակ երեխայի մոտ կրկնում են այդ անունները և ցույց տալիս դրանց կրողներին: Աստիճանաբար այդ անընդհատ կրկնվող անվանումների ու ցուցադրումների շնորհիվ երեխան սովորում է այդ բառերը և հասկանում, այսինքն՝ ճանաչում այդ անունները կրողներին: Այդ իսկ ճանաչումը ոչ այլ ինչ է, եթե ոչ հասկացության գոյացումը գիտակցության մեջ: Մի ուրիշ օրինակ բերենք. ենթադրենք, թե երկու տարբեր ազգի ներկայացուցիչներ միմյանց չեն հասկանում. նրանցից մեկը՝ Ա, մյուսից՝ Ե-ից, խնդրում է ծխախոտ որոշ նշաններով արտահայտելով ծխախոտի զաղափարը (երկու մատները քերանի մոտ տարած՝ օդ ներծծել ու դուրս փչել և այլն): Դիմացիներ այդ նշաններից ստացած տեսողական տպավորությունների շնորհիվ հասկանում է մյուսին, թեև անմիջապես չի տեսնում

² К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. XV, стр. 461—462.
³ նույն տեղում, էլ 462.

ծխախոտ առարկան. այստեղ հաղորդված նշաններն ընկալու-
ղի գիտակցության մեջ պարթնեցնում են ծխախոտ առարկա-
յի հասկացությունն ու բառային ձևը, որի շնորհիվ էլ նա
հասկանում է: Երկրորդ դեպքում նույն մարդը մյուսին ցույց
է տալիս մի ինչ-որ իր, որ վերջինս երբեք չի տեսել և որի
մասին ոչ մի գաղափար չունի: Այս դեպքում, իհարկե, երկ-
րորդն անմիջապես ունենում է որոշ պատկերացում, բայց
դրան հակառակ, նա չի հասկանում, թե ինչ բան է այդ իրը,
որովհետև չի նանաչում այն և, հետևաբար, իր գիտակցու-
թյան մեջ չունի այդ իրի բառ-անվանումն ու բառիմաստ-
հասկացությունը: Այստեղից հետևում է, որ կոնկրետ առար-
կաների հետ ունեցած հարաբերությունների միջոցով և կըր-
կընվող պրակտիկ գործունեության ընթացքում մենք նանա-
չում ենք այդ առարկաները և դարձնում մեր գիտակցության
սեփականությունը՝ այդ առարկայի հասկացությունը պարու-
նակող անվանումներով՝ բառերով և ոչ թե առարկաների
պատկերացումներով: Իհարկե, նախքան առարկայի հասկա-
ցությունը կազմելը, մենք պրակտիկ գործունեության մեջ
ընկալում ենք այդ առարկաները՝ զգայության միջոցով, կազ-
մում ենք նրանց պատկերացումները, և այդ կոնկրետ ընկա-
լումների ու պատկերացումների հիման վրա կազմում ընդ-
հանուր ու վերացած հասկացություն: Այսպիսով, պատկերա-
ցումը նախորդում է հասկացության գոյացմանը, բայց հենց
այդ էլ նշանակում է, թե նա չի նույնանում հասկացության
հետ:

Այսպիսով, բառաձևի և բառիմաստի միջև հասարակական
պրակտիկայի շնորհիվ ստեղծվում է ձևի և բովանդակության
միասնություն հենց բառի ծագման պրոցեսում և այն ընդ-
հանուր հասկացությունը, որ մենք վերն անվանեցինք բառ-
իմաստի հիմք, արտացոլում է այդ հասարակական պրակտի-
կան: Հետևաբար, այդ ընդհանուր հասկացությունը, այսինքն՝
բառիմաստը ավյալ լեզվական հանրության կողմից հասա-
րակական գործունեություն շնորհիվ օբյեկտիվ իրականության
ստրյեկտիվ հանաչողությունն է, աբստրակտացված բառային
ձևով: Բայց չէ՞ որ մարդը հարաբերության մեջ է մտնում
իրեն շրջապատող բազմաթիվ ու բազմատեսակ առարկանե-
րի հետ, որոնցից յուրաքանչյուրը, շնայած նույն տեսակի

մյուս առարկաների հետ ունեցած նմանություններին, ունի
նաև իր առանձնահատուկ հատկանիշները, մինչդեռ լեզվի
մեջ այդ առանձին առարկաների յուրահատկությունները վե-
րացվում, անտես են առնվում: Այո՞, լեզվի մեջ մենք կատա-
րում ենք հասարակական փորձի դասդասում, ընդհանրա-
ցում ու վերացում: Մեզ շրջապատող բազմաթիվ ու բազմա-
տեսակ առարկաները վերածելով ալլեայլ դասերի (կարգերի)՝
մենք մի կողմ ենք թողնում ավյալ դասի մեջ մտնող առար-
կաների մասնակի հատկանիշները և միացնում այդ բոլորը
նրանց միջև եղած ընդհանուր հատկանիշների հիմամբ, աչ-
սինքն՝ իրականում եղած մասնավորներից հասարակական
փորձի շնորհիվ մենք մեր գիտակցության մեջ ստեղծում ենք
այդ մասնավորների ընդհանուր հասկացությունը: Իսկ ընդ-
հանուրն ու մասնավորն, ինչպես գիտենք, գիտելիպիկական
անխախտելի միասնություն են կազմում: Այսպիսով, բառ-
իմաստը լինելով ընդհանուրը, յուր մեջ է առնում առանձին
առարկաները, բազմաթիվ մասնավորները՝ նրանց միջև եղած
ընդհանուր հատկանիշների շնորհիվ և, իբրև այդպիսին էլ,
նա, այդ ընդհանուրը, գոյություն ունի միայն մեր գիտակ-
ցության մեջ: «Լեզվի մեջ կա միայն ընդհանուրը (ЭТО?
ամենից ընդհանուր բանն է)».— ասում է Լենինը⁵, «Единичное
նակին (единичное) կատարյալ կերպով չի կարող արտա-
հայտված լինել... ամեն մի բան (вещь) արդեն ընդհանրաց-
նում է ... Զգացումը ցույց է տալիս իրականը, միտքն ու բա-
ռը՝ ընդհանուրը»⁶: Ընդհանուրի ստեղծմամբ իսկ մարդը
կատարում է որոշ վերացում՝ կոնկրետ առարկաների մաս-
նավոր առանձնահատկություններն անտեսելով և նրանց փո-
խարեն իր գիտակցության մեջ վերցնելով նրանց միջև եղած
ընդհանուրը: Այս բանը ցայտուն կերպով նշել է Ֆոյերբախը,
որի խոսքերը իր «Փիլիսոփայական տեսություններում» մեջ բե-
րելով, Լենինը շատ է հավանում. «Զգայական ընկալումը
տալիս է առարկան, իսկ միտքը նրա անունը: Մտքի մեջ չկա
ոչինչ, որ չլինի զգայական ընկալման մեջ (NB), բայց այն,
ինչ որ զգայական ընկալման մեջ տրված է իրապես, մտքի

⁵ Ленинский сборник, т. XII, стр. 223.
⁶ Նույն տեղում, էջ 219:

մեջ գտնվում է միայն անվանապես, անունով: Միտքը բարձրագույն էակն է, աշխարհի կառավարողը, բայց միայն անունով, և ոչ՝ իրականում (լավ է ասված!): Բայց ի՞նչ է անունը: Տարբերակման համար ծառայող նշան, աչքի ընկնող ինչ-որ հատկանիշ, որ ես դարձնում եմ առարկայի ներկայացուցիչը, որ բնութագրում է առարկան, որպեսզի հիշեմ նրան իր ամբողջականության մեջ⁷: Այս խոսքերը արժանաթի էն ևնինի հավանությանը այն պատճառով, որ դրանց մեջ ճիշտ կերպով տրված է առարկաների և բառիմաստի փոխհարաբերությունը: Մեզ շրջապատող բազմաթիվ իրական, մասնավոր առարկաները հասարակական գործունեությանը կուտակված փորձի շնորհիվ մենք դաստասում ենք, մի գասի մեջ առնելով «աչքի ընկնող» միևնույն բնութագրական հատկանիշն ունեցող բազմաթիվ առարկաները, մի կողմ թողնելով նրանց մասնակի հատկանիշները: Այսպիսով, մենք առարկաների միջև եղած ընդհանուրն ենք վերցնում, որ հատուկ է այս կարգի առարկաներից բոլորին և այս կարգի առարկաները մյուս կարգի առարկաներից տարբերակող հատկանիշն է:

Վերանայով առանձիններից և կազմելով ընդհանուր հասկացությունը, մտքը դրա մեջ արտահայտում է նաև իր պրակտիկ գործունեությանը ստեղծված հարաբերությունները և համապատասխան վերաբերմունքը, որ կազմում է բառիմաստի սուբյեկտիվ տարր:

և. Բառի քերականական իմաստ

Առարկաների, գործողությունների, հատկանիշների և այլնի հասկացությունները բովանդակելով՝ բառերը միաժամանակ արտահայտում են նաև որոշակի քերականական իմաստներ: Այսպես՝ սեղան, փայտ, ծառ, երկինք, պատ, արքա բառերը գոյականներ են, այսինքն՝ դրանք բառեր են, որոնք արտահայտում են առարկաների հասկացություն, մինչդեռ գեղեցիկ, մեծ, վեհ, հոյակապ բառերը ածականներ են և արտահայտում են հատկանիշների հասկացություններ: Նույն

ածականներից կազմված գեղեցկություն, մեծություն, վեհություն, հոյակապություն բառերն արտահայտում են դարձյալ նույն հատկանիշների հասկացությունները առարկանույթյամբ, այսինքն՝ հատկանիշներն իբրև ինքնին գոյություն ունեցող առարկա կամ երևույթ, մինչդեռ գեղեցկուհեն, մեծապես, վեհուհեն, հոյակապուհեն մակբայներն այս հասկացությունները ներկայացնում են իբրև հատկանիշի հատկանիշներ: Առարկանույթյան, որակայնույթյան և նման իմաստները քերականական իմաստներ են, որոնք կոչվում են խոսքամասային իմաստներ: Բառերի մեծագույն մասը հասկացությունների հետ միասին, ավելի ճիշտ՝ հասկացություններով իսկ արտահայտում են նաև խոսքամասային իմաստ: Դա բնականորեն այդպես է, քանի որ հասկացությունները ոչ թե հասկացություններ, զուգափարներ են առհասարակ, այլ առարկայի հասկացություն, հատկանիշի հասկացություն և այլն: Բացի դրանից, բառերի որոշ խմբեր արտահայտում են նաև ավելի մասնավոր քերականական իմաստներ. օրինակ՝ ես դերանունն արտահայտում է դեմքի (առաջին դեմք) և թվի (եզակի թիվ) քերականական իմաստներ, սեղան, ծառ, փայտ գոյականները արտահայտում են եզակի թվի իմաստ, մերձեք, պալոմֆ, հերմեք բառերը՝ հավաքական հոգնակիության իմաստ և այլն: Քերականական իմաստները բառի բովանդակության անբաժան մասն են կազմում: Սակայն դրանից չի կարելի եզրակացնել, թե բոլոր բառերն անխտիր ունեն նաև քերականական իմաստ. կան նաև բառեր, որոնք զուրկ են դրանից (ձայնարկություններ, նմանաձայնություններ): Թամանակակից հայերենում բառի բովանդակության մեջ ներառված քերականական իմաստները հետևյալներն են:

1. Խոսքամասային իմաստ, որ հասկացությունները օժտում է առարկանույթյան, որակայնույթյան, գործընթացանույթյան կատեգորիաներով: Այս քերականական իմաստն ունեն գոյականները, ածականները, թվականները, մակբայները, բայերը: Դերանուններն ունեն միայն խոսքամասային իմաստ, առանց կոնկրետ առարկաների (հատկանիշների և այլն) հասկացության, մինչդեռ եղանակավորող բառերը, ձայնարկությունները, նմանաձայնությունները, կապերն ու շաղկապները զուրկ են խոսքամասային իմաստից:

⁷ Ленинский сборник, т. XII, стр. 141 (փակագծերի մեջ ևնինի նշաններն են):

2. Մասնավոր քերականական իմաստներ, այն է՝ թվի և դեմքի իմաստներ: Գոյականների զգալի մասն արտահայտում է եզակիության քերականական իմաստ (ծառ, մարդ, տուն, քաղաք, եղբայր և այլն), որոշ գոյականներ՝ հոգնակի-հավաքականության իմաստ (մերոնք, հերանք, Մարկոսենք և այլն)- հավաքական հոգնակի թվի իմաստ են արտահայտում նաև ժողովուրդների անվանումները (հայեր, ռուսներ, վրացիներ, հույներ և այլն), որոնք հակադրվում են որևէ ժողովրդի պատկանող անհատների եզակի-հոգնակի թվերին (հմմտ. հայ-հայեր, ռուս-ռուսներ, վրացի-վրացիներ և այլն): Թվի, հոլովի և դեմքի քերականական իմաստներ են արտահայտում անձնական, ցուցական, փոխադարձ դերանունները (ես, դու, մենք, իրար, սա, դա և այլն), ինչպես և ով հարցականը:

Միայն մասնավոր քերականական իմաստներ են արտահայտում կապերն ու շաղկապները. կապերն ունեն հոլովական վերջավորությունների քերականական իմաստներ, շաղկապները՝ կապակցության շարահյուսական քերականական իմաստներ (հակադրության, պայմանի, պատճառի և այլն):

գ. Բառի բազմիմաստություն

Բառերը լինում են մենիմաստ և բազմիմաստ: Մենիմաստ են այն բառերը, որոնք ունեն միայն մեկ իմաստ, ինչպես՝ գետակից «երկու կամ ավելի գետերի միախառնվելու տեղը», շոգեմալ, վարսաճո, երիկամ, առևտուր, աղուն, խեցեկիր «կրաքարի մի տեսակ», խեցեխար, կոցառ և այլն: Բազմիմաստ են այն բառերը, որոնք ունեն մեկից ավելի իմաստներ, ինչպես՝ թև (1. թռչունի, բզեզի թև, 2. մարդու թև, 3. գորգի մարտական դասավորության և զորասյան կամ շարքի աջակողմյան կամ ձախակողմյան մասը, 4. ինքնաթիռի բաշտո մակերեսներից մեկը, 5. անվի շտապփղ-տախտակը, 6. դռան փեղկերից յուրաքանչյուրը, 7. զգեստի թևք, 8. շինության կողմնային մաս կամ շենք և այլն), զլուխ (հմմտ. մարդու զլուխ, գրքի զլուխ, սոխի զլուխ, գորգի՝ կառավարության զլուխ և այլն), քերք (թղթի թերթ, պակակաթերթ, տերև, լրագիր և այլն), խազ (1. ժամանցի նպատակ ունեցող զբաղմունք, 2. երգ, 3. ոսկորների իրար միանալու տեղը, հող, 4.

դերակատարում, 5. լույսի՝ հրանգների և այլնի արագ հերթազալություն և այլն), ալեղ (1. կրակով սպառել՝ ոչնչացնել, 2. հրդեհել, 3. սաստիկ շերտությամբ կսկիծ պատճառել, 4. խիստ կծուությամբ փոթոթել՝ կսկիծ առաջացնել, 5. հոգեկան ցավ՝ տառապանք պատճառել և այլն), բաց (1. լիակված, 2. դռնաց, 3. շարքելված, ազատ, 4. պարզ, ոչ մուգ, 5. բորբոքուն վիճակում գտնվող, 6. պակասություն, թերություն, 7. ճարմանդը՝ կոճակը՝ հանգույցը արձակված և այլն):

Մանթանալով մեր լեզվի բառապաշարին՝ տեսնում ենք, որ բառերի մեծագույն մասը բազմիմաստ բառեր են, և մենիմաստ բառերը շատ փոքր քանակություն են կազմում: Դա բացատրվում է, մի կողմից, բառիմաստի զարգացման ընդհանուր օրինաչափություններով, մյուս կողմից՝ հայերենի պատմությամբ: Հայոց լեզուն դրավոր հուշարձաններով ավանդվել է 5-րդ դարից: Մեսրոպ Մաշտոցը, ստեղծելով հայերեն այբուբենը, հիմք դրեց հայալեզու գրականության, որով հին հայերենը բարձրացավ գրական լեզվի աստիճանին: Ավելի քան 1500 տարվա ընթացքում հայերենը իրրե գրական լեզու՝ իր պատմական զարգացման տարբեր փուլերով (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար) ենթարկվել է գրական մշակման, իսկ գրական մշակումը, ինչպես հայտնի է, բառապաշարի ոչ միայն հարստացման ու կատարելագործման, այլև բառիմաստների զարգացման հզորագույն գործոն է: Թեև բառիմաստի բազմացումը, որի հետևանքն է բազմիմաստությունը, հատուկ է ինչպես գրական, այնպես էլ խոսակցական լեզվին, բայց և այնպես գրական լեզվի մեջ բառերի բազմիմաստությունը ավելի մեծ չափերի է հասնում, քան խոսակցականում: Ընդ դա հասկանալի է. գրական լեզուն իր առաջնակարգ գործառնությամբ գեղարվեստական գրականության և գիտության լեզու է, իսկ այդ երկու գործառնությամբ էլ լեզվին հատուկ են ստեղծագործական ու գիտական ընդհանրացումներն ու մասնավորումները, տարբերակումները, փոխաբերությունները և այլն, և այլն: Բացի դրանից, գրականության մեջ բառերն իրենց տարբերիմաստներով ու գործածություններով ամրակալվում են, գրական ժառանգորդությամբ ավանդվում հաջորդ սերունդներին, և

շատ բառեր ու բառերի զանազան իմաստներ, որոնք խոսակցական լեզվում չեն պահպանվում, ժամանակի ընթացքում ամառանում», դուրս են գալիս զործածությունից, կենդանի են մնում ու կենսունակորեն զործածվում գրական լեզվում: Այսպես, օրինակ, սպառել, զոն, վատնել, վտարել, նեմել, սեղ, պանծալի և բազմաթիվ այլ բառեր չեն պահպանվել մեր բարբառներում ու ժողովրդա-խոսակցական լեզվում, բայց շատ կենսունակ են եղել մեր գրական լեզվում թե՛ հին ժամանակներում, թե՛ այժմ: Վերջապես, մեր լեզվի բառերի բազմիմաստությունը նաև երկար դարերի ընթացքում կենդանի խոսքի մեջ գործածվելու, ժողովրդական բառ ու բանին հատուկ պատկերավորությամբ, ժողովրդական մտածողությամբ իմաստների զարգացման, ժողովրդական բանահյուսության մեջ մշակվելու և յուրահատուկ զարգացում ապրելու հետևանք է: Մեր լեզվի բառապաշարի մի զգալի մասը գոյություն է ունեցել խոր հնադարում. այնպիսի բառեր, ինչպիսիք են առն, դրո, բույլ, խոսել, հանել, պանել, աանել, բեբել, գալ, տալ, առնել, աչք, ոտք, բան, գլուխ, անցնել և այլն, հազարամյակների պատմություն ունեն, իսկ որքան երկար է բառի «կյանքը», այսինքն՝ նրա գործածությունը լեզվի մեջ, այնքան հարուստ է նաև նրա բովանդակությունը և այնքան շատ են նրա իմաստները: Օրինակ, ըստ բացատրական բառարանների տվյալների, անցնել բառն ունի 31 նշանակություն, գալ—33, բույլ—33, խոսել—33, կտրել—35, հանել—40, ձգել—28, պանել—45, վերցնել—34, տալ—62 և այլն:

Բառերի բազմիմաստությունը լեզվի բառապաշարի պատմական զարգացման անխուսափելի հետևանքն է, նրա կատարելագործման ու մշակման ցուցանիշը, իբրև լեզվի վիթխարի հարստություն և, գրա հետ միաժամանակ, լեզվի խնայողության չափանիշը: Մեր բերած 10 բառերի իմաստների գումարը է 374. Եթե ամեն մի իմաստի համար լեզուն հարկադրված լիներ ստեղծել մեկ առանձին բառ, ապա մենք 10 բառի փոխարեն պետք է ունենայինք 374 բառ, իսկ եթե բոլոր բառերի բոլոր իմաստներն էլ մի գումարենք և յուրաքանչյուր իմաստի համար մեկ բառ ենթադրենք, ապա մեր լեզվի բառերի քանակը պետք է լիներ 6—7 հարյուր հազար: Բառերի

բազմիմաստությունն ազատում է լեզուն բառապաշարի ավելորդ ծանրաբեռնումից ու խնայողականության հիմք հանդիսանում:

Է. Բառերի ուղղակի և փոխաբերական իմաստներ

Ամեն բառ, անկախ իր իմաստների բազմությունից, ունի իր հիմնական, առաջնային իմաստը, աչք բառի առաջնային, հիմնական իմաստն է «տեսողության զործարան», ապրել բառինը՝ «կենդանի լինել», ձեռք բառինը՝ «մարդու վերին վերջույթներից յուրաքանչյուրը՝ ուսից մինչև մատների ծայրը», ետակ բառինը՝ «մարմնի արյունատար խողովակ, որով արյունը գնում է դեպի սիրտը», գետ բառինը՝ «ջրի մեծաքանակ, բնականից գոյացած հոսանք, որ ընթանում է իր բացած հունով» և այլն: Բառի երկրորդ, առաջնային իմաստը կոչվում է ուղղակի իմաստ: Ուղղակի իմաստը իբրև առաջնային կամ հիմնական իմաստ բնորոշելը կապ չունի նախնականության հետ. այժմյան հիմնական, առաջնային իմաստը կարող է բոլորովին էլ նախնական լինել. օրինակ՝ ապրել բառի համար մեր արդի լեզվում առաջնային իմաստ է «կենդանի լինել», զբաքարում այդ բառը նշանակել է «ազատվել, պրծնել մի բանից» (վտանգից, սպառնալիքից և այլն), ծախել բառի այժմյան առաջնային իմաստն է «վաճառել», իսկ գրաբարում այդ բառը նշանակել է «սպառել, ոչնչացնել» և այլն:

Ունենալով իրենց ուղղակի իմաստը և արտահայտելով այս կամ այն առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի հասկացությունը, բառերը խոսքի մեջ կարող են զործածվել նաև այնպիսի առարկաների, երևույթների, հատկանիշների համար, որոնք ինչ-որ կողմով առնչվում կամ նմանվում են ուղղակի իմաստի ցույց տված առարկային, երևույթին և այլն: Օրինակ՝ Վ. Տերյանի «Շիրակի դաշտերից» բանաստեղծության «Աստղերն են ծպտում լուսնդն նազով, խաղաղ դաշտերը մութն է համբուրում» տողերում ծպտալ և համբուրել բառերը զործածվել են աստղերն են ծպտում և մութ է համբուրում կապակցություններում, որոնցով աստղերին և մութին վերագրվել են մարդկանց հատուկ գործողություններ (ծպտալ և համբուրել կարող է մարդը): Դրանով էլ ծպտալ և

համբուրել բառերն այդ կապակցութիւններէ մեջ ստացել են իրենց ուղղակի իմաստից մի այլ իմաստ, այն է՝ ծպտալ «շողշողալ», համբուրել «փովել, տարածվել»: Այդպես էլ՝ հասկերը շշնջում են, առվակը երգում է, բնությունը ֆեւած է նախադասութիւնների մեջ շշնջալ, երգել, ֆեւել բառերը, որոնց ուղղակի իմաստով արտահայտվող գործողութիւնը հատուկ է մարդկանց, գործածվել են հասկերի, առվակի, բնության վերաբերությամբ և ստացել սվավալ (հասկերը սվավում են), անդուր լինել (բնությունն անդորր է), կարկաշել (առվակը կարկաշում է) բառերի իմաստները: Փոխաբերական գործածությամբ բառի ստացած նոր իմաստը կոչվում է փոխաբերական իմաստ:

ը. Փոխաբերություն և փոխաբերական իմաստ

Փոխաբերությունը ավյալ բառի գործածությունն է այնպիսի առարկաների (երևույթների, հատկանիշների և այլնի) վերաբերությամբ, որոնք շեն մտնում նրա ուղղակի իմաստի մեջ, կամ ավելի պարզ՝ փոխաբերությունը բառի գործածությունն է մի այլ բառի իմաստով: Օրինակ՝ Առվակը երգում է նախադասության մեջ երգել բայը գործածվել է կարկաշել բայի փոխարեն, այդ բայի նշանակությամբ, ուստի և այդ նախադասության մեջ ունենք բառի փոխաբերական գործածություն կամ պարզապես՝ փոխաբերություն: Փոխաբերությունը հիմնվում է առարկաների, երևույթների, հատկանիշների որոշ նմանութան վրա. օրինակ՝ վարս բառը նշանակում է «կանացի երկար, շշուռված մազեր և առհասարակ մազ»:

Գ. Վարուժանի «Նրդհհհն վարսերը շուրջ կրթութվե» նախադասության մեջ Նրդհհհն բոցերի հետ դեպի վեր խոյացող ու ցած թափվող ցայտերի, կրակի շիթերի ամբողջությունը նմանեցվել են գլխից դեպի ցած իջնող վարսերին, նույն վարս բառը մեր պոեզիայում շատ հաճախ գործածվում է լացող ուռնու վերաբերյալ, որի դեպի ցած հակված ճոխ ուստերը նմանեցվում են մազերին: Այն հատկանիշը, որով ավյալ բառի ցույց տված առարկան (երևույթը, գործողությունը և այլն) նմանեցվում է մի այլ առարկայի՝ փոխաբերական գործածությամբ, կոչվում է փոխաբերության երկր: Գ. Վարուժանից բերված օրինակում նրդհհն վարսերը կապակցության մեջ

վարսերի և Նրդհհհն ցայտերի համար փոխաբերության հիմքն է արտաքին նմանեցումը: Ավտոմեքենաների ապակեմաքրիչը վարորդները՝ ուսերենից պատճենելով, անվանում են դոնադան. փոխաբերության հիմքն է առարկայի դերը, գործառնությունը (մաքրելու գործողությունը):

Հստ իրենց տարածվածության և իմաստային զարգացման փոխաբերությունները լինում են հրեք կարգի. ա) անհատական ստեղծագործական կամ ճեղիմակային, բ) գործուն պատկերավոր կամ ընդհանրական պատկերավոր, գ) ավարտուն կամ մարած:

Անհատական ստեղծագործական կամ ճեղիմակային փոխաբերությունները դեռևս լայն տարածում չստացած, այս կամ այն հեղինակի ստեղծած փոխաբերություններն են: Գ. Վարուժանից բերված հատվածում վարսերի փոխաբերական գործածությունը հեղինակային փոխաբերություն է: «Ամեն պոետ գալիս իր հետ մի անտես նետ է բերում» (Ծ. Զարհնց).— նետ բառը գործածվել է «բանաստեղծական ձիրք, տաղանդ» նշանակությամբ.— վարդե շրթունքդ, աղջիկ աշագեղ, Համբույրի համար հասել են արդեն (Ավ. Իսահակյան).— վարդե բառը գործածվել է փոխաբերաբար՝ «կարմիր» նշանակությամբ.— Քուն թե արթուն, օրիս շատը երազ եղավ, անց կացավ (Հ. Քումանյան).— երազ եղավ փոխաբերություն է և կարելի է բացատրել «երազի նման անիրական և անցողիկ եղավ» նշանակությամբ և այլն: Այս բոլոր փոխաբերությունները անհատական ստեղծագործական փոխաբերություններ են. դրանք հեղինակների ստեղծագործությունն են, նրանց ստեղծագործական երևակայության ծնունդը, որ խոր բովանդակությամբ գեղեցիկ բանաստեղծական պատկերներ է ստեղծում և այդ պատճառով էլ հաճախ կոչվում է «ստեղծագործական գյուտ»:

Գործուն պատկերավոր կամ ընդհանրական պատկերավոր փոխաբերությունները նրանք են, որոնք թեև առաջացել են որպես ստեղծագործական փոխաբերություններ, բայց ժամանակի ընթացքում մեծ տարածում են գտել և ընդհանրացել՝ կորցնելով իրենց անհատական բնույթը. օրինակ՝ նոզու բևեր, նովի բևեր, երգը բևածում է, ուրախությունը՝ խիճը՝ ցնծությունը բևածում է, ոգևորությունը՝ խանդավառությունը

բեւձում է և նման կապակցութիւնները, որոնց մեջ թև և բեւձով բառերը գործածվում են փոխաբերաբար (թև բառը՝ «սլանալու՝ տարածվելու միջոց» նշանակութամբ, բեւձով բառը՝ «տարածվել» նշանակութամբ), ընդհանուր գործածութիւն ունեն այժմ մեր գեղարվեստական գրականութեան մեջ: Այս կարգի փոխաբերութիւններ են նաև՝ բնությունը բեւձ է, սև բախտ, սև օր, դառը վիշտ, դալար կյանք և այլն:

Ավարտում կամ մաւած են այն փոխաբերութիւնները, որոնք ժամանակի ընթացքում կորցրել են իրենց փոխաբերական բնույթը և վերածվել սովորական, ուղղակի գործածութեան. համապատասխանորեն փոխաբերական իմաստներն էլ ամրացել են բառին այնպես, որ այլևս չի գիտակցվում գրանց փոխաբերականութիւնը: Օրինակ՝ թև բառի ուղղակի իմաստն է հղել «թռչունների, միջատների և որոշ կաթնասունների թռչելու գործարանը». արտաքին նմանութեամբ (մարմնի աչ և ձախ կողմերից տարածվող) այդ բառը գործածվել է նաև մարդու ձեռքի համար՝ «կուռ, ձեռք» նշանակութամբ, ապա՝ առհասարակ որևէ տեղի աչ կամ ձախ կողմի (օր. այս թևն անցիր=այս կողմն անցիր), զորքի մարտական դասավորութեան և զորասլան կամ շարասլան աչ կամ ձախ հատվածներից յուրաքանչյուրի համար, այնուհետև՝ «ինքնաթիռի քաշող մակերեսներից մեկը» նշանակութամբ և այլն: Այս բոլոր գործածութիւնները, որոնցով թև բառը հատկացվել, վերաբերվել է ո՛չ թե իր ուղղակի իմաստով ցույց տրվող առարկաներին (թռչունի թև, միջատի թև, լզրիկի թև), այլ բոլորովին այլ առարկաների (մարդու ձեռք, կողմ, զորաթև, ինքնաթիռի թև), նախապես փոխաբերութիւններ են հղել, սակայն ժամանակի ընթացքում այդ իմաստները («կուռ, կողմ, ինքնաթիռի քաշող մակերես, զորաթև») դարձել են արդեն թև բառի սովորական նշանակութիւնները. առանձնապես «ինքնաթիռի քաշող մակերես» և «զորքի մարտական դասավորութեան և զորասլան կամ շարասլան աչ և ձախ մասերից յուրաքանչյուրը» նշանակութիւնները վերածվել են ինքնուրույն տերմինային իմաստների, այսինքն՝ ճշգրտորեն սահմանելի հատկացութիւնների: Այդպիսի մարած փոխաբերութիւններ են նաև՝ մատ «սան-

դուղքի յուրաքանչյուր աստիճանը», նշուղ «լեռան նշուղամբում», գլուխ «գրքի հատված՝ բաժին», զագար «կատար, ծայր», ժամ «եկեղեցի», խոցել «հոգեկան ցամ՝ կսկիծ պատճառով», թերթ «լրագիր, տերև. որևէ բանի բարակ շերտ (օր. մետաղի թերթ)», ծաղիկ «նույնանուն հիվանդութիւնը. դրա թողած հետքը՝ սպին», բարն «զանազան կառույցների, մեքենաների, սարածների հենարան կամ տակդիր. ուղեղի տեսաթմբի հետին հաստ մասը» և այլն:

Մարած փոխաբերութիւնները գրականագիտութեան մեջ կուլում են նաև չոր փոխաբերութիւններ, որովհետև, վերածված լինելով ուղղակի իմաստի, այլևս ինքնին պատկերավոր արտահայտութիւններ չեն ստեղծում:

Փոխաբերական գործածութիւնների այս երեք կարգերից և դրանցով բառերի ստացած փոխաբերական իմաստներից վերջինը իբրև բառին արդեն ամրացած իմաստ՝ անկախ փոխաբերութիւնից, բառարաններում տրվում է որպես բառի առանձին նշանակութիւն, երկրորդ կարգի՝ գործուն ընդհանուր փոխաբերութիւններով ստեղծվող իմաստները բերվում են իբրև փոխաբերական իմաստներ՝ փխր. (փոխաբերական) նշումով, իսկ անհատական կամ ստեղծագործական փոխաբերութիւնները, իբրև ընդհանուր կանոն, բառարաններում չեն արձանագրվում:

Տարբերելով փոխաբերութիւնների այս երեք կարգերը, պետք է, միաժամանակ, նկատի ունենալ, որ դրանք մեկընդմիջ տրված իրակութիւններ չեն, այլ մշտական զարգացման ու փոփոխութիւնների գործընթաց են ներկայացնում: Դա հանգեցնում է փոխաբերութիւնների մի կարգից մյուսին, անհատական-ստեղծագործականից՝ ընդհանրականին, սրանից էլ՝ մարած փոխաբերութիւններին վերածվելու: Քանի զեռ տվյալ փոխաբերութիւնը միայն տվյալ հեղինակի ստեղծագործութիւնն է և չի գործածվում ուրիշների կողմից, անհատական-ստեղծագործական է, իսկ երբ ուրիշների կողմից էլ նա յուրացվում է ու դառնում սովորական, տարածված փոխաբերութիւն, անցնում է ընդհանուր պատկերավոր փոխաբերութիւնների շարքը, և, վերջապես, երբ այդ փոխաբերութիւնն այնքան սովորական է դառնում, որ կորցնում է պատկերավոր արտահայտութիւն լինելու

հանգամանքը, այլ կերպ ասած՝ կորցնում է փոխաբերական բնույթը և փոխաբերական իմաստը վերածվում է բառին ամրացած սովորական իմաստի, արդեն նա դառնում է մաքուր փոխաբերություն: Համապատասխանորեն այդպիսի փոխաբերությամբ ստացված իմաստն էլ աստիճանաբար վերածվում է բառի ինքնուրույն, սովորական իմաստի ու զարգանում դեպի անկախ, ուղղակի իմաստը: Այս է պատճառը, որ զարգացման ընթացքի մեջ գտնվող շատ փոխաբերությունների մասին դժվար է ասել, թե դրանք որ կարգին են պատկանում: Այսպես, օրինակ, Հ. Քումանյանի «Անուշ»-ի մեջ հոգու թև, հովի թև փոխաբերություններն իր ժամանակի համար կարելի է համարել անհասական-ստեղծագործական, իսկ այժմ փոխաբերությունն այնքան է տարածվել, որ արդեն պետք է դիտել իրրև ընդհանուր պատկերավոր փոխաբերություն (հմմտ. երգի թև, խնդություն թևեր և այլն):

Եթե խոսքի պատկերավորության, արտահայտչականության տեսակետից առավել կարևոր են առաջին երկու կարգի փոխաբերությունները, ապա լեզվաբանական-իմաստարանական տեսակետից ավելի կարևորն է երրորդը, որը բառիմաստների զարգացման հիմնական գործընթացն է ներկայացնում: Այստեղ կարևորը ոչ միայն այն է, որ դրանք ինքնին արդեն լեզվի զարգացման տվյալ պահին հանդես են գալիս որպես բառի ինքնուրույն նշանակություններ, այլև առավել ևս այն, որ այդ նշանակությունները հիմք են հանդիսանում բառի հիմնական հասկացության ավելի բարձր աստիճանի ընդհանրացման ու վերացարկման համար: Այսպես, օրինակ, թև բառի վերը բերված նշանակությունները, որոնք ծագել են փոխաբերությունների հիմքի վրա և վերածվելով մարած փոխաբերությունների՝ դարձել են սովորական իմաստներ, հիմք են տալիս թև բառի այդ բոլոր նշանակությունները տալ մեկ ընդհանուր ու վերացարկված հասկացությամբ, այն է՝ «առարկայի կողմնային մասերից յուրաքանչյուրը»: այս ընդհանուր հասկացության մեջ կենդանի են մարդու թևերը, և՛ ձկան շուղակները, և՛ ինքնաթիռի քաշող մակերեսը, տարածության (վայրի) աչ և ձախ կողմերի հատվածները, շենքի աչ կամ ձախ կողմի հատվածը, զորքի դասավորության, զորասյան կամ շարասյան աչ կամ

ձախ կողմերի մասերը, խոփի երկու կողմից դուրս ցցված սուր ծայրերից յուրաքանչյուրը, երկփեղկանի դռան յուրաքանչյուր փեղկը, խալի հորիզոնական փայտի աչ և ձախ հատվածներից յուրաքանչյուրը և այլն, և այլն:

Մարած փոխաբերությունները առաջ են բերում նաև մի այլ իրողություն: Երբ այդ կարգի փոխաբերություններով ստեղծված բառային իմաստներն այնքան են հեռանում միմյանցից, որ նրանց միջև եղած կապն այլևս չի գիտակցվում, և նախկին մեկ բառի ստացած նշանակություններն այնպիսի տարբեր հասկացություններ են արտահայտում, որոնց միջև եղած փոխաբերությունների կապը բոլորովին մթազնվում է, նախնական մեկ բառը վերածվում է տարբեր բառերի: Այսպես, օրինակ, հինհայերենյան ակն բառը զանազան փոխաբերություններով ստացել է թթանկազին բար, անիվ, փեթակի անցք, աղբյուրի ակունք» իմաստները, որոնք, իրրև մարած փոխաբերություններ, աստիճանաբար այնքան են հեռացել միմյանցից, որ այժմ այլևս չի գիտակցվում այդ փոխաբերություններն իրար հետ միավորող կապը, և ժամանակակից հայերենում այդ բառը՝ ակ ձևով, հիշյալ իմաստներից յուրաքանչյուրի համար դիտվում է իրրև առանձին բառ: Նույնպես և՛ խոհեմող «սովետ» և խոհեմող «միտք, խրատ, խորհրդածություն» բառերն արդեն տարբեր բառեր են, թեև մեր բառարանները դեռևս դրանք ներկայացնում են որպես մեկ բառ: Նույնպիսի ճանապարհով առաջացած տարբեր բառեր են նաև՝ մատաղ սգեռատի, շափահասության շհասած» և մատաղ սգոհ», զեշ «գրիակ» և զեշ սվատ, հոտի», սուր «հատու» (ածական) և սուր «հարվածային հատող սառը զենք» և այլն:

Փոխաբերությունների մեջ բառի ստացած փոխաբերական իմաստը լինում է բառային կամ մակերեսային և խորքային կամ կապակցական:

Բառային կամ մակերեսային փոխաբերությունները հիմնվում են փոխաբերվող բառի ցույց տված առարկայի և փոխաբերյալ բառի ցույց տված առարկայի որևէ կողմի ակնառու նմանության վրա. օրինակ՝ օձ մարդ կապակցության մեջ փոխաբերվող բառն է օձ-ը. մարդկանց համար օձ սողունի բնույթն է նենգությունը, շարությունը, վնա-

սակարությունը, և երբ այդ բանը փոխաբերաբար վերագրվում է մարդուն, ապա այդ փոխաբերության հիմքն է դառնում նենգությունը, շարությունը, թունատությունը. սվյազ դեպքում նույնացվում են մարդու շարությունն ու նենգությունը օձի նույն հատկության հետ: Այսպիսի փոխաբերությունների մեջ փոխաբերվող բանը գործնականորեն կարող է փոխաբերվել մի այլ բանով, որի ուղղակի իմաստը արտահայտվում է սվյալ փոխաբերությամբ: Բերված օրինակի մեջ օձ բանը կարող է փոխաբերվել նենգ կամ շար բանով (նենգ մարդ, շար մարդ): Ստացվում է այնպես, որ մակերեսային կամ բառային փոխաբերությունների մեջ փոխաբերվող բանը պարզապես փոխաբերվում է մի ուրիշ բանի և իր փոխաբերական իմաստն էլ համընկնում է այդ բանի ուղղակի իմաստին. այսպես՝ օձ մարդ փոխաբերության մեջ օձ բանը գործածվել է շար, նենգ բաների փոխարեն և իր փոխաբերական իմաստով էլ համապատասխանում է այդ բաների ուղղակի իմաստին: Այդպես էլ՝ արծաթ մազեր, դառ փորձ, սևեր հագնել փոխաբերությունների մեջ արծաթ, դառ, սևեր բաները փոխաբերաբար գործածվել են սպիտակ, անախորձ, սպազգեստ բաների փոխարեն: Առաջին շարքի բաները (արծաթ և այլն) փոխաբերվող բաներ են, երկրորդները (սպիտակ և այլն)՝ փոխաբերյալներ: Վերացնելով փոխաբերական իմաստները՝ այդ փոխաբերությունները կարելի էր արտահայտել հետևյալ կապակցություններով. սպիտակ մազեր, անախորձ փորձ, սպազգեստ հագնել: Փոխաբերվող և փոխաբերյալ բաների հարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ սխեմայով.

անկախ բան → փոխաբերվող բան = փոխաբերյալ բան
 ↓
 ուղղակի իմաստ → փոխաբերական = ուղղակի իմաստ
 իմաստ

Այս սխեմայի համաձայն հիշյալ փոխաբերվող բաները կարող ենք ներկայացնել հետևյալ ձևով.
 օձ «սողունը» → օձ «նենգ, շար» = նենգ, շար
 արծաթ «մետաղը» → արծաթ «սպիտակավուն» = սպիտակավուն և այլն:

Այս կարգի փոխաբերությունների մեջ փոխաբերական իմաստը հիմնված է օբյեկտիվ հատկանիշի վրա. օրինակ՝ արծաթ բանի ցույց տված առարկան (արծաթ կոշիկ մետաղը) սպիտակավուն է, և այդ իրական հատկանիշը համընկնում է մազերի սպիտակ գույնի հետ. այդպես էլ՝ սև գույնն իբրև սզո խորհրդանշան և սպազգեստի սև գույնը համընկնում են և այլն:

Խորհային կամ կապակցական փոխաբերությունները պայմանավորված են սվյալ բառակապակցությամբ. փոխաբերվող բանի սվյալ փոխաբերական իմաստը ստեղծվում է հենց կապակցվող բանի միասնությամբ: Այս դեպքում փոխաբերվող բանի փոխաբերական իմաստը կախման մեջ է կապակցվող բանից կամ ամբողջ նախադասությունից և չի կարող բխեցվել փոխաբերվող բանից՝ առանձին վերջրած: Ծիծ արծաթ բանն ինքնին թելագրում է սպիտակություն փոխաբերական իմաստը, որովհետև արծաթ մետաղն սպիտակավուն է, ապա թե բանից չի կարող բխել «կարոտագին ձգտում, տենչանք» իմաստը, և երբ Հ. Քումանյանը գրում է՝ «Ու քևերն անա փռած տիրաբար Քոչում է հոգիս, թրաշում դեպի տուն», ապա թևեր են վերագրվում հոգուն, և թև բանը ամբողջ կապակցության մեջ է միայն ստանում սվյալ փոխաբերական իմաստը: Այսպիսի փոխաբերությունները մեծ մասամբ լինում են ծավալուն փոխաբերություններ, այսինքն՝ ոչ թե կապակցության մեջ մեկ բան է միայն գործածվում փոխաբերաբար, ինչպես, ասենք, կույս սափոր կապակցության մեջ է (կույս գործածվել է «անարատ, անաղարտ» նշանակությամբ), այլ փոխաբերաբար գործածված բաների մի ամբողջ շարք, մի ամբողջ նախադասություն: Քումանյանից բերված նախադասության մեջ փոխաբերաբար է գործածվել ոչ միայն թև բանը, այլև՝ փռել («տարածել, բացել» նշանակությամբ. թևերը փռած = թևերը տարածած՝ բացած), թռչել («ձգտել» նշանակությամբ): Մակախ սվելի կարևոր է այն, որ այդ ամբողջ հատվածի փոխաբերական իմաստը (թևերն անա փռած տիրաբար = անդամագրելի կարոտով կամ փափագով) միայն թև բանի փոխաբերությամբ չի ստեղծվում, այլ ամբողջ կապակցության: Նույնպես և Դ. Վարուժանի՝ վերջ բերված հատվածում փոխաբերաբար

է գործածվել ոչ միայն վարս բարը, այլև՝ բարվել (սթափել) նշանակութեամբ), և բանաստեղծական պատկերն ստեղծվում է ամբողջ կապակցութեան փոխաբերական իմաստով: Այսպիսով, խորքային կամ կապակցական փոխաբերությունները մեծ մասամբ վերածվում են ծավալուն, բազմանդամ ու բազմակի փոխաբերությունների ամբողջության, որով ստեղծվում է բանաստեղծական խորիմաստ, բովանդակալից ու գեղեցիկ պատկեր: Ծավալուն փոխաբերությունների մեջ փոխաբերվող բառերը պայմանավորվում են միմյանցով, մեկի փոխաբերական գործածությունը թելադրվում է մյուսով: Այսպես, օրինակ. «Տնայաբարենի բազմամարդ գետը կենտրոնական փոզոցով հորդում էր դեպի ճրապարակը, կից փոզոցներից այդ գետին էին միայնառնվում նորանոր վտակներ ու գոյացնում հորդանոս նեղեղ» նախադասության մեջ գետ բառի փոխաբերական գործածությունը պայմանավորում է նաև հորդել, վտակ, հորդանոս, նեղեղ բառերի փոխաբերությունը: Այդպես և՛ Հ. Սահյանի «Ռաբենին հյուսել է զմեռյալան ծամեր, Շոտլանդ, ժպտում է բալտիկ» հատվածի մեջ միմյանցով պայմանավորված՝ փոխաբերաբար են գործածվել ծամեր, զմեռյալան, հյուսել, շոտլանդ, ժպտալ բառերը:

բ. Փոխանունություն

Փոխանունություն է բառակապակցության մեկ անդամի գործածությունը նաև մյուս անդամի փոխարեն. այսպիսի գործածության ժամանակ բառակապակցությանը փոխարինող բառն արտահայտում է ն՝ իր, և՛ փոխարինված բառի իմաստը: Օրինակ՝ շի ամբողջ կաթը խմեց նախադասությունը կարող ենք դարձնել ամբողջ շիշը խմեց, որի մեջ շիշը բառը (պարունակողը) փոխարինել է նաև կաթ բառին (պարունակչաին). նույնպես և՛ մի աման ճաշ կերավ ասելու փոխարեն կարող ենք ասել՝ մի աման կերավ, երեք կիլոգրամ ծիրան գնեց-ի փոխարեն երեք կիլոգրամ գնեց և այլն, որոնցից առաջինների մի աման ճաշ, երեք կիլոգրամ ծիրան կապակցությունները երկրորդներում փոխարինվել են համապատասխանաբար՝ մի աման, երեք կիլոգրամ բառերով. աման բառն արտահայտում է նաև ճաշ բառի իմաստը, իսկ կիլոգրամ բառը՝ նաև ծիրան բառի իմաստը: Կապակցության

մեկ անդամի իմաստը մյուսով արտահայտելու միջոցով փոխանունությունները դրսևորում են կամ իրացնում առարկաների միջև եղած բազմապիսի հարաբերություններ: Այսպես՝ բերված օրինակների մեջ ամբողջ շիշը խմեց փոխանունությամբ շիշը բառով, որ պարունակողն է, արտահայտվել է նաև պարունակողը՝ կաթը, երեք կիլոգրամ գնեց փոխանունությամբ՝ քանակությունը կամ շափք ցույց տվող բառով արտահայտվել է նաև առարկան (ծիրան):

Փոխանունության միջոցով արտահայտվող՝ առարկաների կամ առարկայի ու հատկանիշի միջև եղած հարաբերությունների հիմնական տեսակները հետևյալներն են:

1) Պարունակողը՝ պարունակչալի փոխարեն, օր. երկու գավաթ խմեցի, փոխանակ՝ երկու գավաթ սուրճ խմեցի, երկու դույլ բերեցին, փոխանակ՝ երկու դույլ ջուր բերեցին, բազավորը նրան տվեց խոստացած երկու կտոր, փոխանակ՝ բազավորը նրան տվեց խոստացած երկու կտոր ոսկին և այլն:

2) Հեղինակը՝ ստեղծագործության փոխարեն, ինչպես՝ նստած Տերյան էր կարդում, փոխանակ՝ նստած Տերյանի ստեղծագործություններն էր կարդում:

3) Գործողությունը արդյունքի փոխարեն, ինչպես՝ արևնստանցում հիանալի աշխատանքներ են պատրաստում (աշխատանք գործածվել է աշխատանքի արդյունքի՝ պատրաստված առարկաների նշանակությամբ):

4) Նյութը՝ նրանից պատրաստված առարկայի փոխարեն, ինչպես՝ մետախ է ճագել, փոխանակ՝ մետախս (կամ մետախի) զգեստ է ճագել, պատկերաւորաբար հիանալի կտավներ են ցուցադրվում, որի մեջ կտավ գործածվել է նկար կամ պատկեր բառի փոխարեն և այլն:

5) Ժամանակը՝ տվյալ ժամանակամիջոցում ստեղծ ունեցող գործողության, երևույթի, իրադարձության փոխարեն, ինչպես՝ երեկոն շատ լավ անցավ, որի մեջ երեկո բառը գործածվել է երեկոյան ստեղծ ունեցած միջոցառման (զվարճալիք, համերգ և այլն) փոխարեն, այսօր չորս ժամ ունենք, որի մեջ ժամ նշանակում է դասախոսություն, պարապմունք և այլն:

6) Հատկանիշը՝ առարկայի փոխարեն, ինչպես՝ կուսակ-

ցական (կուսակցական ֆաղափացի կամ մաքր ասիու փոխարեն), անկուսակցական, այսինքն՝ անկուսակցական ֆաղափացի, կոլտնտեսական, փոխանակ՝ կոլտնտեսական գյուղացի, կարմիրներ, փոխանակ՝ կարմիր գվարդիականներ, կանաչ ծածկել է ողջ նովիտը, փոխանակ՝ կանաչ բուսականությունը ծածկել է ողջ նովիտը և այլն:

7) Պատկանելություն ցույց տվող առարկան՝ պատկանչալի փոխարեն, ինչպես՝ Իս գիրքը լաթակազմ է, իմը՝ կաշեկազմ, փոխանակ՝ իմ գիրքը՝ կաշեկազմ, մուր վերահսկում կապույտ էր, աղջկանը՝ կարմիր, փոխանակ՝ աղջկա վերահսկում՝ կարմիր և այլն:

8) Քանակական թվականները՝ շափի միավորների և դրանց հետ կապված առարկաների փոխարեն, ինչպես՝ 30 ճատ շարագուրջուն էր ստուգելու, Բաճն արդեն ստուգել էր, փոխանակ՝ Բաճն ճատ շարագուրջուն ստուգել էր արդեն, ճինգ կիլո առավ, փոխանակ՝ ճինգ կիլո ծիրան առավ և այլն:

9) Դասական թվականները հաջորդաբար կրկնվող առարկաների փոխարեն, ինչպես՝ մայրը նազել էր կապույտ վերահսկու, աղջիկը՝ կարմիր, առաջինը կարվել էր արտելում, երկրորդը՝ մասնավոր վարպետի մուտ, որոնց մեջ առաջինը և երկրորդը դասական թվականները փոխարինել են մուր վերահսկում, աղջկա վերահսկում բառերին և այլն:

Փոխանունությունը արտահայտվող՝ առարկաների միջև կամ առարկայի և հատկանիշի միջև եղած հարաբերությունները թվարկվածներով չեն սահմանափակվում. այդ հարաբերությունները չափազանց բազմապիսի են և անհնարին է սպառել կերպով թվարկել դրանք. սակայն հիմնական տեսակները վերը հիշվածներն են:

Փննության առնելով վերը թվարկված փոխանունության տեսակները, գալիս ենք այն եզրակացության, որ փոխանունության առաջին տրամաբանական և ընդհանրական սահմանումը պետք է համարել քերականական սահմանումը, այն է՝ փոխանունությունը լրացյալի արտահայտումն է լրացումով: Ավելի մասնավորելով այդ ընդհանուր սահմանումը, կարելի է ասել. փոխանունությունը որոշյալի արտահայտումն է որոշիչով կամ հատկացյալի արտահայտումը՝

հատկացուցիչով: Այն բոլոր օրինակները, որոնք բերեցինք, այս բնութագրության համաձայն կարող ենք վերածել որոշիչ-որոշյալ կամ հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունների, ինչպես՝ ճինգ կիլոգրամ-ճինգ կիլոգրամ ծիրան (հինգ կիլոգրամ-ը որոշիչ է), կարմիրներ-կարմիր գվարդիականներ (կարմիր-ը որոշիչ է), իմը-իմ գիրքը (իմ-ը հատկացուցիչ է), կրեմպլին-կրեմպլինն կամ կրեմպլինի զգեստ (կրեմպլինն որոշիչ է, կրեմպլինի՝ հատկացուցիչ), կուսակցական-կուսակցական ֆաղափացի (կուսակցական-ը որոշիչ է) և այլն:

Փոխանունությունները լինում են խոսքային-իրադրական և լեզվական:

Խոսքային-իրադրական են այն փոխանունությունները, որոնք կարող են իրացվել միայն տվյալ խոսքի մեջ կամ տվյալ խոսքային իրադրությունում: Այլ կերպ ասած, խոսքային-իրադրական փոխանունությունները հասկանալի են միայն տվյալ խոսքի մեջ կամ էլ տվյալ իրադրության մեջ (խոսակիցների նախապատրաստվածությունը, զրույցի առարկան, խոսակիցների դիտելիքները և այլն): Այսպես, օրինակ՝ ճինգ կիլոգրամ գնեց նախադասության մեջ ճինգ կիլոգրամ-ը գործածվել է փոխանվանաբար ինչ-որ բանի մասին (հաց, միրգ, մրգի առանձին տեսակ և այլն), սակայն մենք չենք կարող իմանալ, թե գնվածն ինչ է, եթե խոսքի մեջ արդեն նախապես դրա մասին չի հիշվել կամ եթե խոսողները նախապես չգիտեն, թե ինչի մասին է խոսքը: Աղջկանը՝ կարմիր կապակցության մեջ աղջկանը փոխանունությունը ոչինչ չէր ասի մեզ, եթե դրանից առաջ գործածված չլիներ մուր վերահսկում կապակցությունը. նույնպես և՛ Տերյան էր կարող փոխանունությունը չի կարող հասկանալի լինել այն մարդուն, որը չգիտե, որ Տերյանը բանաստեղծ է:

Խոսքային փոխանունությունները, որոնք գրեթե անսահմանափակ գործածություն ունեն ժամանակակից հայերենում, լեզվի խնայողականության կենսական միջոցներից մեկն են: Այդ կարգի փոխանունությունները հնարավորություն են տալիս խոսքի մեջ կրճատել կրկնվող բառերը, ինքնին հայտնի կամ հասկանալի բառերն ու նույնիսկ կապակցությունները և դրանով իսկ արե՞նաթափել նախադասություններն ինքնին հասկանալի շատ բառերի գործածու-

Քյունից: Օրինակ՝ Գնացել էր շուկա ջեմի համար 20 կիլոգրամ ծիրան առնելու: Առավ միայն 10-ը նախադասության մեջ 10 թվականը փոխանվանաբար արտահայտում է ամբողջ 10 կիլոգրամ ծիրան կապակցության իմաստը:

Անգլական են այն փոխանունությունները, որոնք, անկախ խոսքային իրադրությունից, խոսքի նախընթաց իրազեկումից և այլ հանգամանքներից, սովորական գործածություն ունեն և հասկանալի են ինքնին: Այդպիսի փոխանունություններն, իհարկե, նախապես հանդես են գալիս որպես խոսքային փոխանունություններ, սակայն առարկաների մշտական կապի հիման վրա դառնում են ինքնին հասկանալի, անմիջական խոսքային իրադրությունից վերացած փոխանունություն: Այսպես, օրինակ, արծաթ(յա) փող, ոսկի (կամ ոսկյա) դրամ կապակցությունները խոսքային փոխանունությամբ գործածվելով արծաթ (փոխանակ՝ արծաթ փող) և ոսկի (փոխանակ՝ ոսկի դրամ) փոխանունություններով, աստիճանաբար դարձել են սովորական, խոսքից դուրս էլ հասկանալի փոխանունություններ, որով և արծաթ, ոսկի բառերը ժամանակի ընթացքում ստացել են «արծաթադրամ, ոսկեդրամ» նշանակությունները, (այսֆան) կոա ոսկի փոխանունությունից հետո, որի մեջ կոա-ը գործածվել է որպես տարողության շափ, կոա բառը խոսքից դուրս էլ արդեն ստացել է շափի միավորի նշանակություն, այդպես և՛ դուշ բառը՝ որպես հեղուկների շափի միավոր, սո՛վ իբրև տարածության շափի միավոր (հմմտ. նաև անգլերեն ֆուտ «ոտք» և շափի միավոր) և այլն, և այլն: Եթե խոսքային փոխանունությունները կարևոր են խոսքի համառոտության, լեզվական խնայողականության տեսակետից, ապա լեզվական փոխանունությունները կարևոր են իմաստարանական տեսակետից, ըստ որում այդպիսի փոխանունություններով բառերն ստանում են նորանոր իմաստներ, որոնք նախապես խոսքային փոխանունությունների հետևանք լինելով, հետագայում վերածվում են ինքնուրույն բառային իմաստների, ամբանում բառին որպես նրա կայուն նշանակություն: Այդպես են առաջացել՝ «ուր ճատու» անուկանից՝ սուր սերկաչալի հատող ու խոցող զենք», խավար սմբին» անուկանից՝ խավար սմբություն» գոյականական իմաստը, կանաչ գունանունից՝ արուսականություն» իմաստը,

արք, արծաթ մետաղի անվանումից՝ արծաթ «արծաթադրամ», առհասարակ՝ «դրամ», ոսկի մետաղի անունից՝ «ոսկեդրամ», հարստություն, գանձ» իմաստները և այլն:

ժ. Համըմբոնում

Համըմբոնումը նույնպես մեկ բառի գործածությունն է մի այլ բառի փոխարեն, որի դեպքում՝ ա) մասը փոխարենում է ամբողջին, ինչպես՝ ընտանիքը բաղկացած է շատ շնչից, որի մեջ շունչ բառը գործածվել է անձ բառի փոխարեն, միջոցառումներ մասնակցեցին 250 հոգի (հոգի բառը՝ մառդ բառի փոխարեն), բոլորաբովանակման ֆերման ունի 60 հազար թև (թև բառը գործածվել է թռչուն բառի փոխարեն), կարտեսությունն այժմ արդեն ունի 400 անիվ (անիվ բառը գործածվել է մեխենա բառի փոխարեն) և այլն, բ) առանձինը (եզակին) կամ անհատը հավաքական ամբողջության կամ հոգնակիի փոխարեն, ինչպես՝ «օրենվի էն օրը, ուր ուտար ուտ դրեց մեք հողում» (ուտ բառը գործածվել է ուտենը հավաքականի փոխարեն), սղը երկիրը ցնծությամբ դիմալորեց Մետրալ Մաշտոցին (երկիր բառը գործածվել է ժողովուրդ բառի փոխարեն) և այլն, և այլն, գ) հատուկ անունը հասարակ անվան իմաստով և հակառակը՝ հասարակ անունը հատուկ անվան փոխարեն, ինչպես՝ այդ հուզանները շարիֆ էին հայ ժողովրդի համար (Հուզա հատուկ անունը գործածվել է ռմաստիչ, դավաճան» նշանակությամբ), նրան Ան օն էին անվանում (սև օն հասարակ անունը գործածվել է իբրև հատուկ անուն), Վալտ հատուկ անունից՝ վալտ «էլեկտրական հոսանքի լարվածության շափման միավոր» և այլն, և այլն:

Համըմբոնումը, ինչպես պարզ կերպով երևում է բերված օրինակներից, նույնպես բառի փոխարինումն է մի այլ բառով, համապատասխանաբար՝ մեկ բառի իմաստի արտահայտությունը մի այլ բառով, և այս տեսակետից նա կարծես թե նույնանում է փոխանունության հետ: Սակայն դա միայն արտաքին նմանություն է: Փոխանունության դեպքում փոխարինող բառը արտահայտում է և՛ իր, և՛ փոխարինված բառի իմաստը, այլ կերպ ասած՝ փոխանվանաբար գործածվող բառը, որպես բառակապակցության անդամ, ինքնին

արտահայտում է ամբողջ բառակապակցության իմաստը, մինչդեռ համըմբռնման դեպքում բառը պարզապես փոխաբինում է մի այլ բառի՝ արտահայտելով միայն նրա իմաստը: Այսպես, օրինակ, բոլոր աղբիկները պայմանավորվածությամբ համաձայն ներմակ էին հագել նախադասության մեջ ներմակ բառը գործածվել է ներմակ զգեստներ կապակցության փոխարեն՝ իր մեջ ներառելով կապակցության զեղչված անդամի իմաստը, մինչդեռ երբ ասում ենք քոչնարածական ֆերման ունի 80 հազար թև, ապա թև բառը ոչ թև է՝ իր, և՛ քոչուն բառի իմաստներն է արտահայտում, այլ միայն՝ քոչուն բառի. նա պարզապես գործածվում է քոչուն բառի փոխարենն է ստանում է նրա իմաստը. նույնպես է՝ 100 գլուխ ոչխար կապակցության մեջ գլուխ բառը, որպես մարմնի մաս, արտահայտում է ամբողջի (ոչխարի), իբրև հաշվելու միավորի, իմաստը (100 հատ ոչխար), այդ փոխարինումը ավելի ցայտուն է դառնում, երբ 100 գլուխ ոչխար ասելու փոխարեն պարզապես ասում ենք 100 գլուխ:

Այս բոլորով հանդերձ, կան դեպքեր, երբ դժվար է որոշել, թե տվյալ գործածությունը փոխանունություն է, թե համըմբռնում, ըստ որում որոշ տեսակետով մոտենալու դեպքում կարելի է համարել փոխանունություն, այլ տեսակետով մոտենալու դեպքում՝ համըմբռնում: Այսպես, օրինակ, Յրնձում է Հոսմն անեղաղորդ (Մ. Լեմոնտով, թրգմ. Ս. Զարինց) նախադասության մեջ Հոսմը կարելի է դիտել որպես եզակիի գործածություն հոգնակիի կամ հազվաբազանի փոխարեն (Հոսմն = Հոսմի ժողովուրդը), բայց կարելի է դիտել նաև որպես պարունակողը՝ պարունակչալի փոխարեն. նույնպես է՝ լսարանը բարացած լսում էր հոեռորին կարելի է դիտել է՝ որպես եզակին հազվաբազանի փոխարեն (լսարանը = ունկնդիրները), և՛ որպես պարունակողը՝ պարունակչալի փոխարեն (լսարանը = լսարանի ունկնդիրները): Մա, իհարկե, չի նշանակում, թե այդպիսի դեպքերում վերանում է փոխանունության ու համըմբռնման տարբերությունը. իբրև կանոն, այդ երկուսն իրարից որոշակիորեն տարբերվում են, և տարբերության հիմնական հատկանիշը հենց այն է, ինչ որ վերը բացատրեցինք: Դրա հետ միաժամանակ, չպետք է մոռանալ, որ, ինչպես շատ ուրիշ դեպքերում, այնպես էլ այս

դեպքում լեզվական տարբեր իրողությունները հանդես են բերում շփման եզրեր, նմանություններ ու ընդհանրություններ, որոնք կարելի է դիտել որպես «միջակա» կամ անցման երևույթներ:

Ժա. Համանուններ

Համանուններ են կոչվում ձևով նույնական, իմաստով տարբեր բառերը. օրինակ՝ մարտ «պատերազմ» և մարտ (ամսանունը), այլ «տղամարդ» և այլ «քարանձավ», սուր «հատու» և սուր «երկաշարի հատող և խոցող զենք», կետ (կետադրական նշանը) և կետ (կենդանին), փող «դրամ» և փող «խոզովակ», հոտ «բույր» և հոտ «ոչխարի նախիր», սեր «սիրո զգացմունքը» և սեր «կաթի սերուցք», ալ «անիվ», ալ «մատանու քար», ալ «սփեթակի անցք», ալ «աղբյուրի ակունք» բառազույգերն ու բառախմբերը ներկայացնում են նույնաձև բառեր, որոնցից յուրաքանչյուրը տարբեր իմաստ ունի, հետևաբար և դրանք համանուններ են: Համանուն բառերը կարող են կազմել զույգեր (ինչպես՝ մարտ-մարտ, փող-փող և այլն), եռյակ, քառյակ (հնգյակ և այլն) բառերի խումբ (ինչպես՝ հող «քերականական մասնիկ», հող «սուկորների խաղ», հող (արեմտահայերեն) «այրտեղ», ալ «անիվ», ալ «մատանու քար», ալ «սփեթակի անցք», ալ «աղբյուրի ակունք» և այլն). համանունների տվյալ խումբը (զույգը, եռյակը, քառյակը և այլն) կազմող բառերը, միասին վերցրած, կոչվում են համանունական փունջ:

Ըստ ձևական նույնության համանունները լինում են լիակատար և մասնակի:

Լիակատար համանուններ են այն բառերը, որոնց ձևերը նույնական են և՛ հնչյունաբանորեն (արտասանությամբ), և՛ գրությամբ, ինչպես՝ հոտ «բույր» և հոտ «ոչխարի նախիր», սեր «սիրո զգացմունքը» և սեր «սերուցք», մարտ «պատերազմ» և մարտ (ամսանունը), սուր «հատու» և սուր (զենքը) և այլն:

Մասնակի համանուններ են այն բառերը, որոնք նույնական են միայն գրությամբ (տարբեր են արտասանությամբ), կամ միայն արտասանությամբ (տարբեր են գրությամբ):

Արտասանությամբ նույնական, բայց գրությամբ տարբեր

համանունները կոչվում են համահունչ (համահնչուն) համանուններ կամ համահունչներ, ինչպես՝ անգարդ «զարդից զուրկ, առանց զարդի» — անգարք «անզարթնելի, չզարթնող», բացօթյա «բաց երկնքի տակ (գիշերող), բաց տեղում» — բացօդյա «բաց օդում, դուրսը», աղտ «կեղտ» — ախտ «հիվանդություն», ուղտ «կենդանի — ուլխտ «նվիրական խոստում», հող «վարար» — հորք «կովի ձագ», անօզ «անօզնական» — անոխ «ոչ ոք շունչող, մերձավորներից ու մտերիներից չուրկ», անօղ «օղաչուրկ» — անօր «աման» և այլն:

Գրությամբ նույնական, բայց արտասանությամբ տարբեր համանունները կոչվում են համագիր համահուններ կամ համագիրներ, ինչպես՝ մարդ (արտասանվում է մարթ) — մարդ «բարի, առատաձեռն» (արտասանվում է մարդ), բարդ «30 խուրձ խոտի զեղ, առհասարակ զեղ» (արտասանվում է բարդ) — բարդ «ոչ պարզ, խրթին» (արտասանվում է բարթ), ոգի (արտասանվում է ոքի. օր. շար ոգի) — ոգի (ոգել բայի ըղձակակի եզ. գ դեմք) և այլն:

Մասնակի համանունների մի տեսակն են ձևով իրար մոտ, իմաստով տարբեր բառերը, որոնք կոչվում են հարանուններ, ինչպես՝ թշնամանք «թշնամություն» — թշնամանք «վիրավորանք, լուտանք», անխնայել «խնայել, գթալ» — ժողովրդախոսակցական անխնայել «առանց խնայելու, անխնայ», զեղ «զեղչելը» — զեղ «զղչալը, զղչում» և այլն:

Ըստ ծագման համանունները լինում են համարմատ և տարբարմատ:

Համարմատ են այն համանունները, որոնք ծագել են միևնույն արմատից, ինչպես՝ ակ «մատանու բար» — ակ «փեթակի անցք» — ակ «աղբյուրի ակունք» — ակ «անիվ», սուր «հատու» — սուր (զենքը), հարկ «հարկավոր, անհրաժեշտ» — հարկ «ծածկ» — հարկ «աուրք», դարման «զեղ, ճար» — դարման «հարդ» և այլն:

Տարբարմատ են այն համանունները, որոնք ծագել են տարբեր արմատներից, ինչպես՝ մարտ «պատերազմ» — մարտ (ամասնուն), սեր «սերուցք» — սեր «սիրո զգացումներ», հոտ «բույր» — հոտ «նախիր», անել «կատարել» — անել «անելանելի», վեր «ցած, ներքև» — վեր «վերև» և այլն:

Համանունություն կարող է լինել ոչ միայն բառերի միջև,

այլև քերականական ձևերի, բառերի ու քերականական ձևերի միջև: Ըստ այսմ համանունները լինում են՝ բառային, բառաքերականական և քերականական:

Բառային են այն համանունները, որոնք անկախ բառեր են, ինչպես՝ հատ — հոտ, մարտ — մարտ, անել — անել, դարման — դարման և այլն:

Բառաքերականական են այն համանունները, որոնց մեջ մեկը (կամ մի քանիսը) անկախ բառեր են, մյուսը (մյուսները)՝ բառերի քերականական ձև (եր), ինչպես՝ արի «խիզախ», արի (հրամայական բայաձև), հացի (ծառը) — հացի (հաց բառի եզ. սեռական հոլովը), այգի «պարտեզ» — այգի (այգ բառի եզ. սեռ.), աղաց «աղորիք» — աղաց (աղալ բայի անց. կատ. եզ. գ դեմք) և այլն:

Քերականական են այն համանունները, որոնք հավասարապես բառերի քերականական ձևեր են, ինչպես կրի (կրել բայի ըղձակական եզ. գ դեմք) — կրի (կր բառի սեռ.), ծխում է (ծխել բայի եզ. գ դեմք), աղում է (աղալ բայի սահմ. եզ. գ դեմք) — աղում է (աղել բայի սահմ. եզ. գ դեմք), տար (տանել բայի հրամ.) — տար (տալ բայի՝ ըղձակական գ դեմք), ջրի (ջուր բառի սեռ.) — ջրի (ջրել բայի ըղձ. գ դեմք) և այլն:

Ժր. Հոմանիշներ

Հոմանիշ կոչվում են տարբեր ձևեր, բայց նույնական կամ մերձավոր իմաստ ունեցող բառերը, ինչպես՝ բույր — հոտ, մազ — հեր — վարս, գազաք — կատար, դառնալ — պարավել, մախուր — շինք — հստակ — պարզ — վնիտ, պայքար — կռիվ — մարտ — պատերազմ, վերջ — վախճան, սպիտակ — ներմակ և այլն: Հոմանիշ բառերի տվյալ խումբը կոչվում է հոմանիշային շարք:

Հոմանիշները լինում են երկու տեսակ՝ նույնանիշ և համանիշ:

Նույնանիշ են այն բառերը, որոնց իմաստները լիովին համընկնում են, ինչպես՝ բույր — հոտ, գազաք — կատար, մազ — հեր, այլ — թուշ, գիր — տառ, քերք — լրագիր և այլն: Տերմինային նույնանիշները, այսինքն՝ այնպիսի նույնանիշները, որոնք տերմիններ են և պատկանում են միևնույն

տերմինահամակարգին, կոչվում են բազմաճյուղներ, ինչպես՝ բիոլոգ—կենսաբան, կենսաֆիզիա—բիոֆիզիա, լուսիչ—կրակվառիչ—վառիչ—ինֆնավառիչ, փոշեծուծ—փոշեծծիչ—փոշեծավաֆ և այլն:

Համանիչ են այն բառերը, որոնց իմաստները շատ մոտ են իրար, բայց լիովին չեն համընկնում, ինչպես՝ վարս—հեր (վարս սկանացի երկար մազեր, հեր՝ առհասարակ մարդու գլխի մազ), Բաշ—արի—խիզախ—կորիճ—աներկյուղ—անվեհեր—սրտոտ—համարձակ, լավ—ընտիր—հոյապակապ և այլն:

Չնայած իրենց իմաստների նույնութան կամ մերձավորության, հոմանիչներն, այնուամենայնիվ, որոշակի տարբերություններ ունեն։ Այդ տարբերությունները լինում են՝ իմաստարանական, գործատական-ոճական, կապակցական:

1) Իմաստարանական տարբերություններն ի հայտ են գալիս հոմանիչների՝ իրար մերձավոր իմաստների զանազան տարբերակումներով. այդ տարբերակումները լինում են՝ ա) ծավալային, բ) տեսակային, գ) աստիճանական, դ) հասկացական, ե) արտահայտչական:

ա) Հ ո մ ա ն ի շ ն ն ե թ ի ժ ա վ ա լ ա յ ի ն տ ա ր բ ե թ ու թ յ ու ն ն ե ր ն արտահայտվում են նրանց իմաստների ամբողջական կամ մասնակի նույնությամբ (մերձավորություն)։ օրինակ՝ քն բառը հոմանիչ է կյուր բառին, բայց միայն մեկ նշանակությամբ, այն է՝ մարդու ձեռք, իսկ բոլոր մյուս նշանակություններով տարբեր է. այդպես է՝ քեթք բառը հոմանիչ է լրագիր բառին, բայց միայն մեկ նշանակությամբ, մինչդեռ բոլոր մյուս նշանակություններով տարբեր է: Այսպիսի բառերը մասնակի հոմանիչներ են: Դրանց հակառակ կատար—գազաք, զգեստ—հագուստ զույգերը նույնական են իրենց բոլոր նշանակություններով, ուստի և դրանք լիակատար հոմանիչներ են:

բ) Տ ն ս ա կ ա յ ի ն տ ա ր բ ե թ ու թ յ ու ն ն ե ր ք ց ու յ ց են տալիս հոմանիչների ընդհանրությունը՝ առարկայի (երեվոյթի, հատկանիշի և այլնի) վերաբերմամբ, այսինքն՝ համանիշային շարքի բոլոր անդամներն էլ ցույց են տալիս նույն առարկան, սակայն նրանցից յուրաքանչյուրը վերաբերում է նույն առարկայի (երևույթի, հատկանիշի և այլնի) մի տար-

բեր տեսակին: Օրինակ՝ մազ, հեր, վարս, զես, ծամ, բուրդ, զեղմ, ձար, սոն բառերը կազմում են հոմանիշային շարք և բոլորն էլ նշանակում են մազ, բայց դրա հետ միաժամանակ, դրանցից յուրաքանչյուրը ցույց է տալիս մազի մի տեսակայի շարքի մեջ ամենաընդհանուր բառն է մազ, որ վերաբերում է բոլոր տեսակներին անխտիր և կարող է գործածվել բոլոր տեսակների համար (ոչխարի մազ, ձիու մազ, ուղտի մազ, խոզի մազ, այծի մազ, մարդու մազ, գլխի՝ երեսի՝ կրծքի՝ թևատակի մազ և այլն), հեր վերաբերում է միայն մարդու գլխի մազերին, վարս կանացի երկար մազերն են (հյուսված կամ չհյուսված), ծամ՝ կանացի հյուսած մազը և հյուսքերից յուրաքանչյուրը, զես՝ առհասարակ մարդու գլխի մազ, բուրդ կաթնասունների, առավելապես ոչխարի մազ, առանձնապես՝ խուզած մազ, զեղմ՝ ոչխարի ընտիր բուրդ, իսկ տերմինային իմաստով՝ սերբարուրդ ոչխարների ենթաբրդի մազիկների իրար կպած ամբողջական շերտը», ձար՝ «ձիու բաշի ու պոչի մազ», սոն՝ «1. ուղտի կարճ ու բարակ մազը. 2. խոզի կոշտ ու փշանման մազը»: Ինչպես տեսնում ենք, համանիշային շարքի անդամները, ընդհանուր առմամբ մազ նշանակելով և հենց դրանով էլ հոմանիչներ լինելով, ցույց են տալիս մազի տարբեր տեսակները: Նույնպես է՝ բույս, ծառ, քուփ, կիսաքուփ, խոտ, բանջար համանիշային շարքի մեջ ամենաընդհանուր իմաստն ունի բույս բառը և բոլոր հաջորդ բառերի ցույց տված բուսատեսակները մտնում են այդ բառի իմաստի մեջ, մինչդեռ մյուսներից յուրաքանչյուրը ցույց է տալիս տեսակներից միայն մեկը:

գ) Ա ս տ ի ճ ա ն ա կ ա ն տ ա ր բ ե թ ու թ յ ու ն ն ե ր ք բնութագրվում են նրանով, որ հոմանիշային շարքի անդամներն ընդհանրապես նույն առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի իմաստն ունեն, բայց յուրաքանչյուրը ցույց է տալիս դրա մի տարբեր աստիճանը, ուժգնությունը և այլն: Օրինակ՝ զեփյուտ, քամի, հողմ, փոթորիկ, մրրիկ բառերը հավասարապես նշանակում են «օդի հոսանք», սակայն դրանցից յուրաքանչյուրը, բացի այդ ընդհանուր իմաստից, արտահայտում է նաև օդի հոսանքի ուժգնության ու արագության աստիճանը. ամենամեղմը և ամենաթույլն է զեփյուտը, առավել ուժգինն ու կատաղին՝ մրրիկը: Նույնպես է՝ զուտեկան,

սիրուն, գեղեցիկ, գրավիչ, հմայիչ, հրապուրիչ, հափշտակիչ հումանիշային շարքի անդամներից յուրաքանչյուրն արտահայտում է դուրեկանության ու գրավչության մի տարբեր աստիճան:

դ) Հասկացական տարբերությունները բնութագրում են միևնույն նշանակությունը, միևնույն բնդհանուր գաղափարն արտահայտող, միևնույն առարկան, երկվայթը, հատկանիշը ցույց տվող հումանիշների ներքին, հասկացական տարբեր հիմունքները կամ տարբեր տեսանկյունները. այսպես, օրինակ, լուս մտեցավ, անձայն մտեցավ, անլսելի մտեցավ, անշշուկ մտեցավ, անշշուկ բառերը հումանիշային շարք են կազմում և արտահայտում են միևնույն ընդհանուր գաղափարը, այն է՝ մտեցավ առանց օրիճ ձայն հանելու կամ օրիճ ձայն լսելի դարձնելու, սակայն նրանցից յուրաքանչյուրի հասկացական հիմքը տարբեր է. լուս նշանակում է առանց խոսելու, անձայն՝ առանց ձայն հանելու, քստ որում ձայնը կարող է խոսելու կամ քայլերի ձայնը լինել, անլսելի՝ չլսվող, առանց լսվելու (կարող էր ձայն լինել, բայց չլսվել), անշշուկը և անշշուկ՝ առանց շշուկ կամ շշուկ հանելու, առանց մեղմ, հազիվ լսելի ձայն հանելու և այլն: Այդպիսի հումանիշներ են նաև՝ մտածել, դատել, խորհել, կշռադատել, մտմտալ. — նայել, դիտել, դիտարկել, հայել. — փորձել, փորձառել, փորձարկել. — պատմել, ասել, հաղորդել, հայտնել և այլն:

ե) Արտահայտչական տարբերությունները ցույց են տալիս բառերի վերաբերմունքային, զգացական երանգները. հումանիշային շարքի անդամները շատ հաճախ իրարից տարբերվում են իրենց արտահայտած վերաբերմունքով, զգացմունքայնությամբ, գնահատությամբ: Այսպես, օրինակ, խժոճել, ուտել, լափել հումանիշները նույն իմաստն են արտահայտում, բայց՝ տարբեր գնահատություն ու վերաբերմունք. ուտել չեզոք գնահատություն ունի, խժոճել արտահայտում է բացասական գնահատություն՝ ագահության ու շատակեբրության երանգով, իսկ լափել արտահայտում է անարգական վերաբերմունք: նույնպես և՛ մեռնել — սատկել, ձի — յարու, խմել — կռնծել — լակել, ծիծաղել — հռնոսալ — բռ-

բռնալ — սեպեր բաց անել, փախչել — ծլկել — հղել, նստել — շնթոնել — շնթոնել և այլն:

զ) Գործառական — ոճական տարբերությունները ցույց են տալիս, թե հումանիշային շարքի անդամներից ո՞րը լեզվի ո՞ր տարբերակին է պատկանում կամ գործառական ո՞ր ոճին: Այսպես, օրինակ, բուշ — այա, պոռշ — շրթունք, ուճ — հոճ, շանգալ — կարք հումանիշային շարքերում ունենք մի կողմից խոսակցական լեզվի բուշ, պոռշ, ուճ, շանգալ բառերը, մյուս կողմից՝ գրանց գրական համապատասխանները (այա, շրթունք, հոնք, կարթ). առդիր — հետը հումանիշներից առաջինը պատկանում է գրասենյակային ոճին, երկրորդը՝ լեզոք ոճին. քև «ձկան լուղակ» նշանակությամբ պատկանում է խոսակցական լեզվի լեզոք շերտին, իսկ լուղակ՝ մասնագիտական տերմին է. պար գալ, շուռ գալ, ծափ տալ խոսակցական (առավելապես ժողովրդախոսակցական) լեզվի բառեր են, դրանց պարել, ծափահարել, շրջվել հումանիշները՝ գրական լեզվի բառեր, շրթունք — շուրք հումանիշներից առաջինը գրական լեզվի լեզոք շերտին է պատկանում, իսկ երկրորդը՝ բանաստեղծական լեզվին և այլն, և այլն:

է) Կապակցական տարբերությունները բնութագրում են հումանիշների կապակցելիությունը տարբեր բառերի հետ. օրինակ՝ խիզախ մարդ — խիզախ արար — խիզախ քաղցր, որը կարող է փոխարինել նրան առաջին կապակցության մեջ (կտրիճ մարդ), բայց չի կարող փոխարինել երկրորդ և երրորդ կապակցություններում (չի կարելի ասել՝ կտրիճ արար, կտրիճ քաղցր). կանաչ և դալար հումանիշներ են և հավասարապես կարող են գործածվել ծառ, բույս բառերի հետ (կանաչ ծառ, դալար ծառ, կանաչ բույս, դալար բույս), սակայն կարելի է ասել նաև կանաչ սառ, կանաչ լեռ, կանաչ պատ, իսկ դալար սառ, դալար լեռ, դալար պատ չի կարելի ասել: նույնպես և սպիտակ պատ կարելի է ասել, բայց ներմակ պատ՝ ոչ և այլն:

ժգ. Հակամիջներ

Այն բառերը, որոնք միմյանց հակադիր իմաստ ունեն, կոչվում են հակամիջներ. ինչպես՝ բարձր — ցածր, լավ — վատ,

մեծ-փոքր, գեղեցիկ-ազեղ, հանելի-տեան, ախորժելի-տե-
ախորժ, ներկ-վերե, բարեկամ-քշեամի, կարե-երկար և
այլն:

Հականիշները լինում են երկու տեսակ՝ հակադրական և
ժխտական:

Հակադրական են այն հականիշները, որոնք արտահայ-
տում են միմյանց հակադիր, իրար հակառակ իմաստ, ինչ-
պես՝ մեծ-փոքր, լավ-վատ, բարձր-ցածր, վերև-ներքև, բա-
րեկամ-քշեամի և այլն:

Ժխտական են այն հականիշները, որոնցից մեկը ժխտում,
բացասում է մյուսի ցույց տված հատկանիշի առկայություն-
նք, բայց ցույց չի տալիս ուղղակի հակադրությունը, բենուայ-
նարեն հակառակը, ինչպես՝ գիտակցական-անգիտակցական,
գիտուն-անգետ, ուշադիր-անուշադիր, խրախուսելի-ան-
խրախուսելի, դուրեկան-անդուրեկան և այլն: Այս զույգերի
մեջ առաջինները դրական բեռն են ներկայացնում, այսինքն՝
ցույց են տալիս տվյալ հատկանիշով օժտված լինելը (գի-
տակցական, գիտուն, ուշադիր, խրախուսելի, դուրեկան),
իսկ երկրորդները՝ այդ հատկանիշի բացակայությունը և ոչ թե
առաջիններին բեռնապես հակադիր հատկանիշ. անխրախու-
սելին հակադրվում է խրախուսելի-ին, ցույց տալով, որ
տվյալ արարքը, գործողությունը և այլն խրախուսման ար-
ժանի չէ, բայց չի նշանակում, թե պախարակելի է, անգետ-ը
նշանակում է ոչ գիտուն, ոչ գիտակ, և ոչ թե տգետ և այլն:
Ժխտական հականիշները կարող են փոխարինվել ոչ ժխտա-
կանով կամ զուրկ, չունեցող, անարժան և նման բառերի հետ
դրական հատկանիշը ցույց տվող բառի կապակցությամբ,
ինչպես՝ անխրախուսելի- ոչ խրախուսելի, անուշադիր- ոչ
ուշադիր, անգետ-գիտելիներեից զուրկ և այլն:

Հականիշային շարքեր կազմելու համար լեզուն ստեղծում
է բազմապիսի բառակազմական ու բերականական միջոցներ,
որոնք հնարավորություն են տալիս արտահայտելու ինչպես
հակադրական, այնպես էլ ժխտական հականիշությունները
(համառ. օրինակ՝ թևավոր-անթև-թևազուրկ, ախորժելի-ան-
ախորժ, հանելի-տեան, գեղեցիկ-ոչ գեղեցիկ և այլն):

Գ Լ Ո Ւ Ե Ե Ր Ր Ո Ր Դ

ԻՄԱՍՏԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ա. Ժամանակակից հայերենի իմաստափոխությունները

Բառի փոխաբերական և փոխանվանական գործածություն-
ները, ինչպես տեսանք, առաջ են բերում բառիմաստի գա-
նազան փոփոխություններ, որոնք ժամանակի ընթացքում
ամրանում են բառին խոսքից դուրս, դառնում բառի «սեփա-
կան» իմաստները: Սրանից ինքնին բխում է, որ բառի իմաս-
տը գտնվում է պատմականորեն տեղի ունեցող փոփոխու-
թյունների գործընթացում, նա ունի իր պատմական զարգա-
ցումը և դրա օրինաչափությունները:

Բառիմաստի պատմական զարգացման ընդհանուր օրինա-
չափությունների և տվյալ լեզվի բառերի իմաստների կրած
բոլոր կարգի փոփոխությունների ուսումնասիրությամբ
զբաղվում է պատմական իմաստաբանությունը: Բառիմաստի
զարգացման ընդհանուր օրինաչափությունների ուսումնասի-
րությունը բացահայտում է այն ընդհանրական օրենքները,
որոնց համաձայն տեղի են ունենում բառերի իմաստների
բազմատեսակ փոփոխությունները և այն հետևանքները,
որոնց հանգեցնում են դրանք: Սա նշանակում է, թե հետա-
զոտելով առանձին լեզուների մեջ տեղի ունեցող իմաստափո-
խությունները՝ լեզվաբանությունը մասնավոր իրակությունե-
րի գիտական վերլուծությունների հիման վրա գտնում է
դրանք առաջ բերող պատճառները, լուսաբանում դրանց օրի-
նաչափությունները, որոնք հատուկ են ոչ թե առանձին լեզու-
ների կամ դրանց պատմության այս կամ այն փուլին, այլ
աշխարհի բոլոր լեզուներին և նրանց զարգացման բոլոր փու-
լերին: Այսպես, օրինակ, բառերի փոխաբերական գործածու-
թյունները և դրանց այն տեսակները, որոնց ծանոթացանք,
հատուկ են ոչ թե մեկ առանձին լեզվի կամ որևէ լեզվի

պատմության մեկ առանձին փուլի, այլ բոլոր լեզուներին ու դրանց զարգացման բոլոր փուլերին:

Հենվելով լեզվաբանության կողմից մշակված իմաստափոխական ընդհանուր տեսության և իմաստափոխությունների ընդհանուր օրինաչափությունների վրա, յուրաքանչյուր լեզվի ու նրա զարգացման ամեն մի առանձին փուլի ուսումնասիրությունը ձգտում է լուսարանել այդ լեզվում ու դրա զարգացման տվյալ փուլում տեղի ունեցած իմաստային փոփոխությունները, բացահայտել դրանց պատճառներն ու հետևանքները, բնութագրել իմաստափոխությունների տեսակները և այլն, և այլն:

Ժամանակակից հայերենի ուսումնասիրության մեջ, դրան համապատասխան, իմաստափոխությունների քննությունն ու նկարագրությունը սահմանափակվում է հենց ժամանակակից հայերենի շրջանակներով: Այսպիսի սահմանափակումը, բնականաբար, պահանջում է որոշակիորեն սահմանազատված պատկերացում աշխարհաբարյան իմաստափոխությունների մասին, գրական աշխարհաբարի ու ժամանակակից հայերենի բառապաշարի ու դրա զարգացման մասին:

Ժամանակակից հայերենի իմաստափոխությունները 18—20-րդ դարերում աշխարհաբար գրական լեզվի բառերի կրած իմաստափոխություններն են: Օրինակ՝ բերք բառը «լրագիր» նշանակությամբ սկսել է գործածվել 20-րդ դարի առաջին քառորդից, հետևաբար ժամանակակից լեզվի իմաստափոխություն է.— կուսակցություն բառը, որ աշխարհաբարյան բառ է, նախապես նշանակում էր «կողմնակցություն, կողմնակիցների խումբ՝ միավորում», 19-րդ դարի վերջում ստացավ «բաղաբանական կազմակերպություն» նշանակությունը. բանի որ բառը չի գործածվել մեր հին մատենագրության մեջ, ապա պարզ է, որ նրա կրած իմաստային փոփոխությունն էլ չի կարող վերագրվել գրաբարին.— քե բառը «ինքնաթիռի քաշող մակերես» նշանակությամբ գործածվել է միայն 20-րդ դարում, ուստի և այդ իմաստափոխությունը ժամանակակից հայերենի իմաստափոխություն է և այլն:

Ճշգրտելով ժամանակակից հայերենի իմաստափոխությունների ժամանակային սահմանները, մենք կարող ենք

նույնը կատարել նաև գրաբարի նկատմամբ. գրաբարյան պնտք է համարել այն բոլոր իմաստափոխությունները, որոնք տեղի են ունեցել 5—18-րդ դարերի գրաբարալեզու գրականության մեջ, բայց առանձնապես՝ 5—11-րդ դարերի մատենագրության մեջ: 10—16-րդ դարերում ունենք նաև միջինհայերենյան գրականության լեզվի (միջին հայերենի) իմաստափոխությունները, որոնք և միջինհայերենյան իմաստափոխություններ անունով կկոչենք: Այս բոլորից առանձնաբերում են.

1) Աշխարհաբարյան իմաստափոխությունները, որոնք տեղի են ունեցել՝ ա) աշխարհաբար ժողովրդախոսակցական լեզվում՝ նրա տարածքային բոլոր դրսևորումներում, բ) ժողովրդախոսակցական լեզվի տարածքային, հատկապես արևելյան և արևմտյան տարբերակներից մեկում կամ մյուսում՝ անկախորեն:

2) Բարբառային իմաստափոխությունները, որոնք հատուկ են որևէ բարբառի կամ բարբառների զանազան խմբերի:

3) Մասնավոր գրական իմաստափոխությունները, որոնք հատուկ են միայն արևելահայ կամ միայն արևմտահայ գրական լեզվին (օրինակ՝ արևմտահայերենում պատենը բառն ստացել է «բարիկազ» նշանակությունը, արևելահայերենում՝ ոչ, արևմտահայերենում գեշ բառն ստացել է «վատ» իմաստը, արևելահայերենում՝ ոչ և այլն):

4) Խոսակցական լեզվի իմաստափոխությունները, որոնց ենթարկվել են բառերը գրական լեզվի խոսակցական տարբերակում և դեռևս չեն անցել գրական լեզվին (օր. քո էդ համարները չեն անցնի. համար բառը գործածվել է «անսպասելի» տարօրինակ ու խորամանկ արարք» նշանակությամբ):

Իմաստափոխությունների այս տարբերակումներն անհրաժեշտ են որոշելու համար, թե բառերի կրած իմաստափոխություններից ո՞րն է տեղի ունեցել ժամանակակից գրական հայերենում, ո՞րը գրաբարում կամ միջին հայերենում, բարբառներում, խոսակցական լեզվում և այլն, և դրա հիման վրա էլ՝ ընդհանուր գաղափար կազմել ժամանակակից գրական հայերենի իմաստափոխությունների մասին՝ ամբողջությամբ վերցրած: Մյուս կողմից, այդ տարբերակումներն ան-

հրածեղա են նաև առհասարակ հայոց լեզվի պատմական իմաստարանության համար¹:

Այս բոլորով հանդերձ, ժամանակակից հայերենի պատմական իմաստարանության համար առաջնակարգ նշանակություն ունեն գրաբարյան իմաստափոխությունները, որովհետև մեր լեզվի բառապաշարի հիմնական զանգվածը կամ միջուկը գրական ժառանգորդության գրաբարից է գալիս և գրաբարյան իմաստափոխությունները, բնականաբար, ժառանգորդաբար անցել են ժամանակակից հայերենին: Գրաբարից գրական ժառանգորդությանը աշխարհաբարին անցած բառերի գրաբարյան և ժամանակակից իմաստների հարաբերակցությունները կարելի է ամփոփել հետևյալ կարգերի մեջ:

1. Բառի գրաբարյան բոլոր նշանակությունները պահպանվել են և կենսունակ են մեր գրական լեզվում. օրինակ՝ մարմին բառը գրաբարում ունի ամարդու կամ կենդանու նյութական կազմը իր ֆիզիկական արտաքին ձևերով ու գրսեվորումներով՝ հիմնական իմաստը և «1. մարմնի միսը և առհասարակ պինդ մասերը՝ արյան հակադրությամբ, 2. նյութական գոյացություն, 3. երկրաչափական՝ եռաչափ առարկա կամ գրա պատկերը» նշանակությունները, որոնք բոլորն էլ այժմ կենսունակ են. այդպես են նաև՝ ցակառ (զլխի առջևի վերին մասը, զորքի մարտական գասավորության առաջնային գիծը, շինքի առջևի կողմը) և այլն:

2. Բառի գրաբարյան իմաստների մեծագույն մասը պահպանվել է, բայց մեկ կամ մի քանի իմաստներ կամ շին պահպանվել, կամ էլ մասնակի փոփոխությունների են ենթարկվել:

վել. օրինակ՝ զլուխ բառի բազմաթիվ իմաստները պահպանվել են, բայց չի պահպանվել «գրամական գումար, դրամ» նշանակությունը (հմմտ. հատուց է ընդ յանցանացն զզուխն «հանցանքի դիմաց դրամ կվճարի»), իսկ «հաշվի՝ համբանքի միավոր» նշանակությունը նեղացել է. գրաբարում կարելի էր զլուխ բառը գործածել նաև առարկաների, իրերի վերաբերյալ՝ «հատ» նշանակությամբ, այժմ իրը քանակային միավոր կարելի է գործածել ընտանի կենդանիների վերաբերյալ կամ զլխածե կտորներով առարկաների համար (օր. 5 զլուխ պանիր).—բերան բառը իր հիմնական իմաստի հետ ունեցել է՝ «1. դուռ, մուտք, 2. անցք, 3. հատող գործիքի սուր մասը, սայր, 4. սկիզբ, 5. անգամ, 6. հրաման, պատգամ, առհասարակ՝ խոսք, ասված բան, 7. անձ, մարդը նշանակությունները, որոնցից 6-րդը (հրաման, պատգամ, խոսք) չի պահպանվել. բերել բայի բազմաթիվ նշանակությունները պահպանվել են, բացի «իբ մեջ կրել՝ ունենալ. համբերել, տոկալ, վարել, մղել» նշանակություններից և այլն:

3. Բառի բազմաթիվ իմաստները պահպանվել են, բայց ո՛րև առաջնային, նախնական ուղղակի իմաստը. օրինակ՝ ակն բառը, իր բազմաթիվ նշանակություններով հանդերձ, ունեցել է առաջնային «աչք» նշանակությունը. ժամանակակից հայերենում պահպանվել են բոլոր նշանակությունները, բացի հիմնականից. այդպես և անել (առաջնային իմաստն է եղել «բերել»), տեռես (առաջնային նշանակությունն է եղել «տնօրեն, տեսուչ»), սարսել (առաջնային նշանակությունն է եղել «շարժվել, տատանվել, գողալ») և այլն, որոնց առաջնային, ուղղակի իմաստները շին պահպանվել:

Այս կարգի բառերի հետ չպետք է շփոթել նոր ժամանակներում գրաբարից փոխառված այն բառերը, որոնք հենց փոխառության պահին գործածվել են նոր, գրաբարում չունեցած իմաստով (օր. պարետ, պարեկ, մարտկոց, կոպար, դետք, ռումբ և այլն):

Այս կարգի համաձայն գրաբար-աշխարհաբար իմաստների հարաբերակցության որոշումը կարևոր է նրանով, որ հնարավորություն է տալիս առանձնացնելու բառերի ոչ գրաբարյան նշանակությունները, իսկ դրանք էլ տարբերակելու քստ վերը թվարկված ոլորտների (գրական աշխարհաբար,

¹ Հայոց լեզվի պատմական իմաստարանության համար անհրաժեշտ էլիներ մեր կողմից «գրաբարյան» շտաբերակված անվանումը փոխարինել հինհայերենյան անվանումով, այս էլ բաժանելով երկու կարգի՝ նախադրային (5-րդ դարից առաջ) և գրաբարյան (5-րդ դարից հետո՝ գրաբարալեզու գրականության մեջ տեղի ունեցած իմաստափոխություններ). բացի դրանից, անհրաժեշտ էլիներ նաև նախահինհայերենյան անվանումով տարբերակել հին հայերենի կազմավորումից առաջ տեղի ունեցած իմաստափոխությունները: Ժամանակակից հայերենի պատմական իմաստարանության համար այդ տարբերակումներն անհրաժեշտ չեն:

խոսակցական (ժողովրդախոսակցական) աշխարհաբար, բարբառներ և այլն), որոնց օգնությամբ միայն կարելի է նշատրոշել գրական աշխարհաբարում տեղի ունեցած իմաստային փոփոխությունները և դրանով իսկ ճիշտ պատկերացում կազմել ժամանակակից հայերենի իմաստափոխությունների մասին:

բ. Գրական աշխարհաբարի իմաստափոխությունների տեսակներն ըստ իմաստափոխական հիմունքների

Քառերի իմաստային փոփոխությունները հիմնականում տեղի են ունենում խոսքի մեջ, բառագործածության գործընթացում և գերազանցապես փոխաբերական, փոխանվանական ու համըմբռնական գործածությունների հետևանք են: Այս երեք կարգի բառագործածությունների մասին խոսելիս մենք տեսանք, որ դրանք իրենց զանազան տեսակներն ունեն ու դրսևորումները, ըստ որում դրանցից յուրաքանչյուրն էլ ունի իր պատճառական հիմունքը: Առանձնապես փոխաբերությունների տեսակները ջննելիս ասացինք, որ բառի ուղղակի և փոխաբերական իմաստների կապը բացատրվում է փոխաբերության հիմքով, այսինքն՝ այն ընդհանուր կողմով (հատկանիշով, դերով և այլն), որ գոյություն ունի տվյալ բառի ցույց տված առարկայի (երևույթի, հատկանիշի և այլնի) և փոխաբերաբար այդ նույն բառով անվանվող առարկայի (երևույթի, հատկանիշի և այլնի) միջև: Երկնակ, առևի պլաններ մխրճվեցին հողի մեջ նախադասության մեջ պլաններ բառը գործածվել է փոխաբերաբար՝ արևի ճառագայթների համար. փոխաբերության հիմքն է արևի ճառագայթների պատկերացումը շեղակի սլաքաձև շերտերի՝ գծերի ձևով, որին տվյալ նախադասության մեջ զուգորդում է նաև սլաքի պես մխրճվելը՝ շղթայական փոխաբերությամբ. — զլուխ բառի ետևի գնդաձև (վերին կամ ստորին) ծայր» նշանակությունը (օր. սոխի գլուխ, կաղամբի գլուխ, մեխի գլուխ, գավազանի գլուխ և այլն), ինչպես և առհասարակ ետևի գնդաձև զանգված՝ կտոր» (պանրի գլուխ, շաքարի գլուխ և այլն) նշանակությունների համար փոխաբերության հիմքն է նմանությունը և այլն: Եթե այժմ վերանանք փոխաբերություններից և նկատի ունենանք զլուխ բառի ստացած նոր

իմաստները («գնդաձև առարկա», «առարկայի գնդաձև ծայր»), ապա կարող ենք հարց տալ. իսկ ինչու՞ (ի՞նչ պատճառով) է զլուխ բառն ստացել այդ նոր իմաստները. պատասխանը կլինի՝ ձևի նմանությունը: Ուրեմն, այն, ինչ որ փոխաբերությունների քննության ժամանակ մենք անվանեցինք փոխաբերության հիմք, իմաստափոխությունների պատճառական բացատրության համար դառնում է իմաստափոխության պատճառ կամ իմաստափոխական հիմունք: Ամեն մի իմաստային փոփոխություն, անկախ այն քանից, փոխաբերության, փոխանունության, համըմբռնման, թե այլ նախապարհով է առաջացել, ունի իր պատճառը կամ հիմունքը: Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ գրական աշխարհաբարի իմաստափոխությունների իմաստափոխական հիմունքները բազմաթիվ են ու բազմազան, բայց դրանցից հիմնականները հետևյալներն են:

1. **Իմաստափոխություն նմանության զուգորդությամբ.** — Առարկաների, երևույթների, հատկանիշների և այլնի միջև եղած որևէ կարգի նմանությունը առաջ է բերում տվյալ առարկայի հասկացության անվանման գործածություն՝ որևէ կողմով դրա նմանությունն ունեցող առարկայի համար. օրինակ՝ զլուխ բառի՝ «գնդաձև առարկա» և «առարկայի գնդաձև ծայր» նշանակությունները հիմնված են ձևի նմանության վրա: Այդպես են նաև՝ առում բառի «զանազան գործիքների՝ անիվների վրայի առամնաձև հլուստ» (օր. աղացի առամ, աղորիքի առամ, սղոցի առամ), «պարխապների՝ աշտարակների վրայի առամնաձև կամ քառանկյունի սյունիկ».— խոբանառդիկ խոբանարդաձև պատկեր (գծագրի, նախշի), խոբանարդաձև առարկա— և մանկական խաղալիք (կուրիկ)».— փոք (մարմնի մասը)— փոք «անոթների միջին՝ ուռուցիկ մասը» (սափորի՝ կծի փոր)— աղյուսիկ «փոքրիկ աղյուս» և աղյուսիկ «աղյուսանման առարկա, բրիկետ» (օր. թեյի աղյուսիկ) և այլն: Ընդհանրապես մարմնի մաս ցույց տվող բառերով զանազան առարկաների և առարկաների մասերի անվանումը նմանության հիմունքով շատ տարածված է բոլոր լեզուներում (հմմտ. աչխ «առարկայի բաժանմունք» (խորդիների աչք, սեղանի աչք, խանութի աչք) — աչխ «բողբոջ».— բեռան «անոթների բացվածքը, որով մի բան են լցնում մեջը»

(կօժի բերան, կաթսայի բերան), թաք «կշեռքի նծար», բազուկ «գեռի» շեռան կողմնային նյութավորում», երակ (մարմնի) և երակ «ապարի շերտ երկրի բնդերբում, հիմնական ապարի մեջ ընկած հանքային տեսակի բարակ շերտ» և այլն: Ենթանութային դուրսդուրվյալը կատարվող իմաստային փոխանցումների հիմունքը կարող է լինել ոչ միայն ձևի, արտաքին գծագրության և այլ կարգի՝ ֆիզիկապես դրսևորվող նմանությունը, այլև մտքով, երևակայությամբ ստեղծվող ինչ-որ հատկանիշ, կողմ, բնութագիր: Օրինակ, վերը բերված ալա՛ «ճառագայթ» փոխաբերությունը լուկ երևակայությամբ ստեղծված նմանություն է: Սակայն հենց այդպիսի «երևակայական» նմանություններով էլ նյութական առարկաների անվանումներն անցնում են հոգեկան աշխարհի կամ հասարակական կյանքի երևույթներին. ինչպես, օրինակ, ծիլ «քննություն» և «որևէ բանի սկզբնական դրսևորում, սկզբնավորվող երևույթ» (հիմար. հոգու ծիլեր, սիրո ծիլեր, ազատագրական շարժումների ծիլեր). — «նա՛կ «տարի դրոշմվածքը գետնի վրա» և «որևէ բանից մի առարկայի վրա մնացած նշան» (օր. վերքի՛ կտրվածքի հետք), «որևէ կարգի հետևանք» (օր. վշտի՛ տառապանքի հետք). — խոք «ոչ հարազատ» և «արտասովոր, օտարոտի». — կուշա «քաղցը հագեցրած» և առհասարակ՝ «որևէ բանից հագուրդ ստացած. հոգևած, զըզված». — ածուխ «քյումուր» և «ցորենի և զանազան բնդերգենների հիվանդություն, որից հատիկները սևադույն փոշի են դառնում». — ծուլիլ «մետաղը հալելով ամբողջական զանգված դարձնել և կաղապարով որոշակի ձև տալ», գրաբարում արդեն ստացել էր նաև «միացնել, միավորել» նշանակությունը, որից էլ ժամանակակից հայերենում զարգացել է «ասիմիլյացիայի ենթարկել». — աղեղ «նետը նետելու գործիք» և «1. աղեղնաձև առարկա (օր. հոնքերի աղեղ) 2. գզելու աղեղնաձև գործիք, 3. շրջագծի որևէ մաս, 4. շենքի՛ կառույցի աղեղնաձև կամար, 5. աղեղնաձև գիծ (երկաթուղու՛ ռազմաճակատի և այլն), 6. քյամանչայի կնտնոց և առհասարակ՝ կնտնոց, 7. մարմնի զանազան մասերի ու գործարանների աղեղնաձև հատված». — հիվանդ «որևէ հիվանդությունը տառապող» և «վնասվածք՝ որևէ կարգի փշա-

ցած տեղ՝ մաս ունեցող» (օր. հիվանդ ձեռագիր) և այլն, և այլն:

2. Իմաստափոխություն կցորդության հիմունքով. — Բառերի իմաստների փոփոխության հիմնական տեսակներից մեկն է առարկաների միջև եղած կապի և դրա հիման վրա՝ նրանց անվանումների մշտական կամ հաճախակի գործածվելու պատճառով մեկ առարկայի (հատկանիշի և այլնի) անվանումը մի այլ առարկայի վրա տարածելը. օրինակ՝ համար «առարկայի հաշորդական կարգը նմանների շարքում ցույց տվող թիվ» գործածվելով հյուրանոցի սենյակների վերաբերյալ (համար այսինչ սենյակ), ստացել է «հյուրանոցի առանձին սենյակ կամ բնակարան» նշանակությունը, նույն ձևով էլ՝ «բաղնիքի առանձին լողասենյակ. երկույթի՛ համերգի և այլնի յուրաքանչյուր առանձին մասը՝ ելույթը. հրետանային՝ զնդացրային՝ հրթիռային զենքերին սպասարկող անձնակազմի զինվոր». բանտերում և ուղղիչ-աշխատանքային գաղտնիքներում՝ «կալանավոր», սպորտային խմբական խաղերում՝ «մարզիկ» նշանակությունները. հեշտ է նկատել, որ այս բոլոր իմաստային փոխանցումների մեջ էլ համար բառը և համարակալված առարկան մշտական կապի մեջ են, որ և իմաստների փոփոխության հիմք է դառնում: Այդպես են նաև՝ սեղան (կահույքի առարկան) «ուտելիք, ուտելիքեն. հացկերույթ». — աքոռ (նստելու հարմարանքը) «պաշտոն». — կարիներ «առանձնասենյակ» և «կառավարական մարմին» և այլն: կցորդական իմաստափոխություններն ըստ էության բառերի փոխանվանական գործածությամբ բառակապակցության մեկ անգամի (լրացյալի) փոխարինումն են մյուսով (լրացումով), և որքան բազմազան են առարկաների միջև և հատկանիշների ու առարկաների միջև եղած կապերը, այնքան էլ բազմազան են կցորդական իմաստափոխության տեսակները:

3. Իմաստափոխություն գործառական (ֆունկցիոնալ) հիմունքով. — Այս իմաստափոխությամբ մի առարկայի անվանումն անցնում է նույն կամ նույնանման գործողությունը, դերը կատարող, նույն նպատակին ծառայող մի այլ առարկայի, ինչպես քե (թռչունի) և քե (ինքնաթիռի քաշող մակերես) (քաշող մակերեսը ծառայում է ինքնաթիռի թռիչքին,

ինչպես թեր՝ թուղանի). — Խոփ ճարտրի երկաթյա մասը, որ ազուցվում է կոտորակին (առատամին) և ծառայում հողը հեղքելուն՝ ակոսելուն»։ Երբ ստեղծվեց զուլթանը, նրա ակոսող մասը ևս կոչվեց խոփ, իսկ մեր օրերում այդպես կոչվեց նաև տրակտորի ակոսող, հողը պատող և շրջող մասը — (տրակտորն ունի բազմաթիվ խոփեր)։ — սայլակ «փողքրիկ սայլ», ապա՝ «ճեղքի կամ մեխանիկական հարմարանք՝ բեռներ տեղափոխելու համար. դեռևս շքայլող երեխաներին և հաշմանդամներին ման ածելու անվավոր հարմարանք. մոտոցիկլետին կցվող նստելու հարմարանք՝ մեկ ուղևորի համար. գանազան մեքենաների զամբյուղածև մաս՝ ծանրություններ տեղափոխելու և բարձրացնելու համար» (օր. ամբարձիչի սայլակ)։ — կարք «ձուկ որսալու մետաղյա կեռ» և «երկաթյա կեռ ու սրածայր հարմարանք՝ զանազան բաներ հանկելու՝ պահելու՝ կախելու համար»։ — կառվ «երկանիվ կամ քառանիվ հարմարավետ ծածկավոր սայլ» և «երկաթուղային վագոն. արևմտահայերենում՝ նաև ժամոմորի»։ — լամպ (նոր փոխառություն ուսերենից) «ճրագ», բայց դրան փոխարինած էլեկտրական լուսավորության հարմարանքի բոլոր տեսակներն ստացան այդ անվանումը, սրանից էլ՝ «հատուկ նպատակի ծառայող նույնպիսի սարք, որ օգտագործվում է արտադրության և տեխնիկայի մեջ՝ զանազան նպատակներով» (օր. զոգման լամպ, հեռուստացույցի, ռադիոընդունիչի լամպ և այլն)։ — լապտեր գրաբարում նշանակում էր «ճրագ, կանթեղ, շահ»։ աշխարհաբար գրականում ստացավ «լուսավորման ապակյա անոթ, որի մեջ դնում են լույսի աղբյուրը (մոմ, լամպ և այլն), ֆանար», իսկ այժմ նաև՝ «ավտոմեքենայի՝ շոգեքարչի և այլնի առջևի կամ ետևի լուսարձակ»։ — դեղ գրաբարում նշանակել է «խոտ», ապա մասնավորապես՝ «բուժական նպատակներով օգտագործվող բույս»։ այնուհետև, երբ աստիճանաբար բուսական բուժամիջոցները փոխարինվեցին քիմիական միջոցներով, սրանք էլ կոչվեցին դեղ, քանի որ նույն նպատակին էին ծառայում. կորցնելով իր նախկին՝ «խոտ» նշանակությունը, դեղ այժմ նշանակում է 1. բուժական նպատակով օգտագործվող ամեն կարգի նյութ (քիմիական, բուսական և այլն), 2. մարմնի մեջ այս կամ այն երևույթը առաջ բերելուն ծառայող բուժական նյութ»

(օր. քնաբեր դեղ, ախորժակի դեղ, ցավամոք տեղ և այլն). այս բնդհանրացած իմաստով էլ՝ փոխարեքարբար գործածվելով հոգեկան երևույթների համար, ստացել է «վշտի՝ տառապանքի ամոքման միջոց, սփոփանքի միջոց» և վերջապես՝ «առհասարակ անախորժ վիճակից (ձախորդությունից, անհաշոդությունից, դժվարին կացությունից) դուրս գալու միջոց՝ հնարք» վերացական իմաստը։

4. Իմաստափոխություն հումանիշների տարբերակման հիմունքով. — Հումանիշներն, ինչպես ասել ենք, սովորաբար ինչոր բնութագրով (իմաստային, ռճական, գործառական) տարբերվում են միմյանցից, այն դեպքերում, երբ երկու կամ ավելի հումանիշներ նույն իմաստն են ունենում, ժամանակի ընթացքում, բացի գործառական և ռճական տարբերակումներից, կարող են նաև իմաստային տարբերակման ենթարկվել՝ նույնանիշներից վերածվելով համանիշների Այսպես, օրինակ, կեր, ուտելիք, ուտեստ բառերը մի ժամանակ հավասարապես նույն իմաստն էին արտահայտում և իրարից տարբերվում էին միայն գործառուպես. այժմ կեր նշանակում է բնտանի կենդանիների և թռչունների ուտելիք, ուտեստ՝ «մարդկանց ուտելիք, մասնավորապես՝ ուտելիքի պաշար», իսկ ուտելիք բառը նշանակում է «բնդհանրապես ուտելու բան թե՛ մարդկանց և թե՛ կենդանիների»։ — կեռ-կար-ձուռ նախապես միևնույն նշանակությունն ունեին, բայց ժամանակի ընթացքում տարբերակվեցին և աշխարհաբարում գործածվեցին որոշակիորեն տարբեր իմաստներով. — Խմիչք և ըմպելիք հավասարապես նշանակում էին «խմելիք, խմելու բան», տարբերակվելով ստացան՝ ըմպելիք՝ «առհասարակ խմելիք», իսկ Խմիչք՝ «հոգելից խմելիքների բնդհանուր անվանում»։ — կտուր-ծածկ (շենքի) — հարկ-տանիք ունեին «տան վերին ծածկույթը» նշանակությունը, աշխարհաբար գրականում որոշակիորեն տարբերակվել են. — կարիք և կարոտ միևնույն նշանակությունն ունեին, այժմ տարբեր իմաստներ են ստացել և այլն, և այլն։

5. Իմաստափոխություն համանիշային պայմանավորվածությամբ հիմունքով. — Այսպես ենք կոչում այն իմաստափոխությունները, որոնք տեղի են ունենում գործառական կամ ռճական տարբեր բնութագրերով նույնանիշներից մեկի կրած

իմաստային փոփոխութիւնը մյուսի վրա տարածելով, ինչպես՝ բարբառների մի զգալի մասում և աշխարհաբարում (ժողովրդախոսակցական լեզվում) շատ գործածական ու կենսունակ բառեր են պոռնկ և պոռ, որոնց դիմաց գրական ունի շրքուն և շուրք (վերջինս առավելապես բանաստեղծական լեզվում)։ Բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում պոռ և պոռնկ բառերը որոշակիորեն իմաստային տարբերակման են ենթարկվել, ըստ որում առաջինը մեծ մասամբ գործածվում է «շրթունք, շուրթ» ուղղակի իմաստով, երկրորդը՝ «դունչ, մտք, առփի՝ գետի եզրք, ամանի՝ անոթի բերանի եզր. որն է բանի եզր՝ ծայր» նշանակութիւններով։ Փանի որ գրական լեզվում ընդունվել է շրքուն բառը, ապա սա էլ ստացել է «ամանի պոռնկ. գետի՝ առփի եզր. որն է բանի եզրային մաս՝ ծայր» նշանակութիւնները (հմմտ. կարասի՝ կաթասի շրթունք, ձորի շրթունք, առփի շրթունք)։ այս իմաստները շրքուն բառն ստացել է ոչ թէ իր ինքնուրույն իմաստային զարգացումով, այլ պոռ և պոռնկ նույնանիշների կրած իմաստափոխութիւնների «յուրացումով» (գրողները պոռ և պոռնկ բառերը փոխարինում են շրքուն բառով, դրա հետ միաժամանակ՝ նաև նրանց զանազան իմաստները)։ այդպես է առաջացել նաև փոշի բառի «շղարշ, շղարշ գլխաշոր» նշանակութիւնը։ Բարբառներում ունենք քոզ բառը (թուրքական փոխառութիւն) «փոշի» և «շղարշ» իմաստներով։ մեր գրողները, գործածելով փոշի բառը, նրան տվել են նաև քոզ բառի 2-րդ նշանակութիւնը։ Այդպես են նաև՝ քամի և հոզմ բառերի իմաստափոխութիւնները՝ քամի կուլ տալ և հոզմ կուլ տալ դարձվածներում (երկրորդը՝ արևմտահայերենում)։— ցոլ բառի «ճառագայթ» նշանակութիւնը՝ շոգի-ի պայմանավորվածութիւնով։— աշ բառն ստացել է «բողոք» և «փեթակի անցք» նշանակութիւնները՝ ակնհամանիշի պայմանավորվածութիւնով և այլն։

6. Իմաստափոխութիւնը ապաստուգաբանութիւնը կրողով։— Այս կարգի իմաստափոխութիւնները պայմանավորված են բառի ստուգաբանական իմաստի (քնիմաստի կամ ներքին ձևի) մթազնումով, նախնական իմաստի և հետագայում ստացված իմաստների միջև եղած կապի խզումով, Օրի-

նակ՝ ակ «անիվ», ակ «աղբյուր», ակ «թանկագին քար», ակ «փեթակի աչք», ակն «պայթուցիկ լիցքով արկ» բառերը հազասարապես ծագում են հինհայերենյան ակն «աչք» բառից և դրանց իմաստները նախապես փոխարեքական նշանակութիւններ են եղել՝ նմանութիւն հիմունքով, բայց հետագայում այդ նշանակութիւններն այնքան են հեռացել միմյանցից և նախնական «աչք» ուղղակի իմաստից, որ խզվել է կապը բառի այդ նախնական իմաստի հետ. այժմ խոսողները չեն էլ գիտակցում ակ «անիվ», ակ «թանկագին քար», ակ «ակունք», ակն «պայթուցիկ լիցք» բառերի կապը ակն «աչք» բառի հետ. նախնական իմաստի մթազնումը հանգեցրել է այդ նոր իմաստներից յուրաքանչյուրի ինքնուրույնացման, որ և հանգեցրել է, իր հերթին, դրանք առանձին բառերի վերածվելուն։ Հաւ նշանակել է «շեփած, անեփ, կիսեփ», փոխարեքաբար նաև՝ «տհաս. տմարդի, անզուժ, անագորույն»։ դրա հոգնակին էլ ունեցել է նույն նշանակութիւնները (հմմտ. ի գազանաբարոյութիւն նախանձեալք և ի համազգիսն հումք և մարդատեսացք)։ ժամանակակից հայերենում հումք նշանակում է «աշխատանքի այն առարկաները, որոնք նախապես ենթարկվել են մարդկային աշխատանքի ներգործութիւն» (օր. հանքաբարը՝ մետաղածուլական գործարանի, մանվածքը՝ մանածագործարանի համար և այլն)։— կծու բառը կազմվել է կծել քայի արմատից՝ ու ածանցով (կիծ + ու = կծու) և նախապես նշանակել է «ցալ պատճառող, ցալեցնող»։ հետագայում ստացել է «բարկ, փոթոթող» (առանձնապես համի վերաբերյալ) նշանակութիւնը, որից և՛ «անախորժ, ծանր, անպատիվ» (հմմտ. կծու խոսք)։ այս իմաստը կարող էր զարգանալ միայն նախնական, որոշակիորեն նյութական կծել իմաստի մթազնման հետեանքով։— մառդ նշանակել է «մեռնող, մահկանացու», այժմ այդ իմաստը չի պահպանվել և խոսողները շփտեն էլ դրա և մահ բառի ստուգաբանական կապը (կարելի է ասել և ասում են՝ մարդը մահկանացու է, որ ստուգաբանորեն պետք է նշանակէր «մահկանացուն մահկանացու է»)։ կուտ նշանակել է «կոր, ծուռ, շեղ», բայց այժմ այդ իմաստի հետ այլևս չի կապվում։— դեղձ նշանակել է «դեղին, դեղնադույն», բայց ժամանակակից իմաստն այլևս դրա հետ չի կապվում (կարելի է ասել՝ դեղին դեղձ, կարմիր

գեղծ, սպիտակ գեղծ և այլն); Ստուգարանական իմաստները մթազնման, այսինքն՝ ապաստուգարանության (գեղտիմուռ-գեղագրիայի) իմաստափոխական նշանակությունն այն է, որ բառը, կորցնելով իր իմաստի և ստուգարանական իմաստի կապը, ստանում է նորանոր այնպիսի իմաստներ, որոնք չեն կարող այլևս բացատրվել նախկին իմաստով: Այսպես, օրինակ, մառդ բառը, որ ստուգարանորեն նշանակել է «մահականացու», կորցնելով իր կապն այդ նախնական իմաստի հետ, ստացել է «ամուսին. տղամարդ» նշանակությունները, որոնք չեն կարող բացատրվել «մահականացու» իմաստի զարգացումով:

Իմաստների ստուգարանական խզման մի տեսակն է քերականական ձևերի քարացումն ու բառացումը, որի հետեւում ընկնում բառի որևէ քերականական ձևը, կորցնելով իր քերականական իմաստը, վերածվում է ինքնուրույն բառի և ստանում նոր իմաստ: Օրինակ՝ հաղվատամբ գրաբարում հալատալ բայի սահմանական եղանակի առաջին դեմքի հոգնակիի ձևն է. առնվելով իրեն անկախ բառ և զրկվելով քերականական (դիմային, ժամանակային, թվային) իմաստներից՝ նշանակել է «հավատի խորհրդանիշ», ժամանակակից հայերենում՝ նաև «հայացքների ամբողջություն, համոզմունք».— հասցե գրաբարյան հասանել բայի ապառնիի եզ. երրորդ դեմքի ձևն է, որ կորցրել է իր քերականական իմաստները և այժմ նշանակում է «1. նամակի՝ ծանրոցի և այլնի առաքման տեղն ու ստացողը ցույց տվող մակագրություն, 2. մեկի բնակության տեղը».— իրավ՝ իր բառի գրաբարյան գործիականի եզ. հոլովածն է, իրավ՝ հոգնակիի հոլովածն է. երկուսն էլ այժմ ինքնուրույն բառեր են «խսկապես, ճշմարտապես» նշանակությամբ.— մեղալ գրաբարյան մեղանշել բայի անց. կատարյալի եզ. առաջին դեմքի ձևն է, իսկ այժմ՝ ինքնուրույն բառ է (մեղքի համար թողություն խնդրելու, ինչպես և զարմանքի ու երկյուղածության բացականչություն)։— կեցցե գրաբարյան կեամ «ապրել» բառի ապառնիի եզ. երրորդ դեմքի ձևն է, որ անկախ բառ է դարձել (գոհունակության՝ խրախուսանքի՝ փառաբանության բացականչություն)։— մասին՝ մասն բառի գրաբարյան սեռ.— տր. հոլովածն է, որ դարձել է ինքնուրույն բառ և այլն, և այլն:

7. Իմաստափոխությունը զգացական-վերաբերմունքային հիմունքով.— Բառերն, ինչպես ասել ենք, բացի իրենց արտահայտած հասկացություններից, կարող են արտահայտել նաև սուբյեկտիվ իմաստներ (վերաբերմունք, զգացմունք, քաղաքական կամ արհամարհանք և այլն). այս սուբյեկտիվ իմաստները, այսպես թե այնպես, գնահատություն, բնութագրություն են բառերի ցույց տված առարկաների, երևույթների, գործողությունների նկատմամբ: Այդ գնահատությունը, բառի գործածության հետևանքով, կարող է ամբանալ բառին, դառնալ նրա մի նոր նշանակությունը կամ ավելի զարգանալով՝ պարզապես փոխարինել նրա հին իմաստին: Օրինակ՝ մինչսովետական շրջանի գրական լեզվում սովորական բառ էր վարժապետ-ը՝ «ուսուցիչ» նշանակությամբ. մեր դասական գեղարվեստական գրականության մեջ շատ վարժապետներ ներկայացվել են բացասական բնութագրությամբ, իրեն տգետ, ուսուցման մեթոդներին անտեղյակ կամ դրանք գիտակցաբար ոտնահարող հերոսներ, իրականության մեջ էլ՝ նախասովետական շրջանի վարժապետների մեջ եղել են շատ ու շատ այդպիսիները: Այս բոլորը հիմք դարձան վարժապետ բառը արհամարհական երանգով գործածելու համար, որը և հանգեցրեց այդ բառի «վատ, տղետ ուսուցիչ» իմաստին.— ռավիկ և գեղջուկ բառերը, որոնք նշանակում էին «գյուղացի», նախասովետական շրջանում, և էլ ավելի վաղ, ստացել էին արհամարհական երանգ. սովետական կարգերի հաստատումից հետո, երբ իշխանությունն անցավ բանվորներին ու գյուղացիներին, վերաբերմունքը փոխվեց, և գեղջուկ, գեղջուկների բառերն սկսեցին գործածվել դրական իմաստով.— լակել լիմել» (շան և կատվի) անարգական նշանակությամբ է գործածվում մարդկանց համար (համտ. շայդ լակի՛ր և մի՛ փնթփնթա), որից և՛ դարձյալ անարգական իմաստով՝ «խր-միչը խմել, հարբել».— թաթ բառը նշանակում էր «մարդու և կենդանիների ձեռքի կամ ոտքի ծայրային մասը (ձեռքիցը՝ դաստակից մինչև մատների ծայրը, ոտքիցը՝ կոճից մինչև մատների ծայրը)». այժմ ձեռքի համար գործածվում է «շատ մեծ՝ անձուկի՛ կոպիտ» անարգական նշանակությամբ (համտ. թաթի քեզ քաշի՛ր): Մեր այժմյան երիտասարդները գործածում են գեղա բառը (գյուղացի բառի կրճատված ձևը) «ան-

բարեկիրթ, հետամնաց, անզարգացած, անհաշակա իմաստով և այլն:

8. Իմաստափոխությունը քյուրըմբռնման հետևանքով.— Այս կարգի իմաստափոխությունները բառերի կամ դրանց բաղադրիչների սխալ հասկանալու, բառերի հիշտ նշանակությունն ու գործածությունը շիմանալու, հարանուններն իրար հետ կամ բառի բաղադրիչներից մեկն իր հարանվան հետ շփոթելու, բառի կազմությունը շիմանալու և նման երևույթների հետևանք են: Օրինակ՝ վարկարեկել ասվանարկելը բառը կազմված է վարկ «հեղինակություն» և րեկել «կոտորել» (հմմտ. անունը կոտորել) բաղադրիչներից. խոսակցական լեզվում վարկ բառը անգործածական է, ուստի և խոսողները վարկարեկել-ի առաջին բաղադրիչը կապում են վարե բառի հետ՝ գարձնելով վարեարեկել, որ երբեմն սխալ կերպով գործածում են նույնիսկ նաև գեղարվեստական գրականության մեջ.— բարբառներում գործածվում է փուշի «գլխին գցելու շղարշ, շղարշ գլխաշոր» բառը, որ փոխառված է պարսկերենից: Գրան հարանուն փուշի բառը շատ բարբառներում փոխարինվել է թուրքական թոզ բառով և որովհետև փուշի-ն սխալմամբ կապել են հայերեն փուշի բառի հետ, ապա այդ բառն էլ են «թարգմանել» ու դարձրել թոզ «գլխի շղարշ» նշանակությամբ, որով և թուրքերենից փոխառյալ թոզ «փուշի» բառը մի քուրըմբռնող նոր նշանակություն է ստացել. սակայն զրանով ամեն ինչ չի վերջացել: Մեր գրական լեզուն մերժել է թուրքական թոզ բառը՝ փոխարինելով փուշի-ով. և որովհետև թոզ բառն ունի նաև «գլխի շղարշ ծածկոց» իմաստը, ապա մեր գրողներից ոմանք իրենց գործերում այդ իմաստի համար էլ գործածում են փուշի բառը.— գրաբարյան այգող² բառը կազմվել է այգ «լուսարաց» բառից և նշանակել է «հանգուցյալի շիրմին թաղման հաշորդ օրը այցի գնալն ու սզալը». քանի որ այգ բառը բարբառներում չի պահպանվել, ապա այգող-ը կապվել է ինճը բառի հետ, իսկ ողբ բաղադրիչից մնացած մասն էլ՝ հող բառի հետ և ստացվել է ինճհա-հող, իբր թե «իր հողին այցելելը».— ծներեկ բառը բարբառներից մի քանիստմ դարձել է ծնեփուկ, որ «ստուգաբանել»

² Այգող կազմված է այց+ողբ բաղադրիչներից՝ ք-ի անկումով (հմմտ. այգալաց բառը՝ նույն նշանակությամբ):

են իբր ձյուն և եփուկ բառերից կազմված բառ և դարձրել ծնեփուկ.— մազապուր բառը կազմվել է մազ-ապուր (ապրել բառի արմատը) բաղադրիչներից. շիմանալով այդ, կապել են պրծնել բառի հետ և դարձրել մազապուրծ.— եղեգնաբար (քաղկեդոնի մի տեսակը) դարձրել են եղեգնաբար՝ կապելով եղեգ բառի հետ. — արջնդողը-ը «գողողանման գորտ, հրագորտ» դարձրել են արջադողը՝ արջն «սև, սևաթույր» բաղադրիչը փոխարինելով արջ բառով.— մուլկածաղիկ-ը (մուլկ «մաշիկ, կոշիկ») ոյ>ու հնչյունափոխությամբ դարձել է մուկածաղիկ, և որովհետև մուկ-ը չի հասկացվել, ապա դարձրել են մուկածաղիկ.— ճրագալույց ժողովրդական լեզվում դարձել է ճրագալույս, ճրագուս (ույց, լույցանել «մանել» բայի արմատը փոխարինվել է լույս բառով).— ակնակապին բառի կապին բաղադրիչը չի հասկացվել և կապվել է կապիչ բառի հետ՝ դառնալով ակնակապիչ (հմմտ. Ս. Այվազյան, Ճակատագիրն հայոց, 57).— պղպղաբար (հինհայերենյան պուղ «փայլ» արմատի կրկնականը) դարձել է պղպղաբար.— լուսատտիկ, լուսատտնիկ-ը (կազմված լույս և տուտ, արտուն + իկ ածանցից) դարձել է լուսատտիկ՝ իբր թե լույսի մեջ տիտիկ անող.— հայտնի հեքիաթի մոխրատիտիկ, մոխրատտնիկ (կազմվել է մոխր և տուտ, աուտիկ տտուն-իկ բաղադրիչներից) «մոխրոտ փեշերով՝ քղանցքով» բառը դարձրել են մոխրատիտիկ «մոխրի մեջ նստող» և մեր բառարաններն էլ ընդունել են այդ ձևը, որ միակ գործածականն է.— կոյաջուր կազմված է կոյ «աղբ»+ջուր բաղադրիչներից (հմմտ. կոյուղի), սակայն կոյ բառն այժմ գործածական չէ և չի գիտակցվում, ուստի և այդ բաղադրիչը փոխարինվել է կով բառով. բարդությունն ստացել է կովաջուր ձևը (ՄԳ, 1977, №4, էջ 25, երկու անգամ).— կատարելություն կազմված է կատարյալ բառից. շփոթելով կատարելություն «կատարելի լինելը» բառի հետ՝ փոխարինում են նրանով.— նույնպես և՛ պատկանելություն-ը փոխարինում են պատկանելիություն ձևով, որ սխալ է (պատկանելիություն կազմված է պատկանյալ բառից, պատկանելիություն-ը՝ պատկանելի բառից).— խուլածաղիկ (խուլ «պալար» + ծաղիկ) բառի առաջին բաղադրիչը կապել են խուլ «լսողությունից զուրկ» բառի հետ և

դարձրել խլածադիկ.— Բեռուդի (Բույր բառի գրաբարյան սե-
ռականի ձևը՝ Բեռ + որդի) նշանակում է քրոջ որդի, բայց կա-
պելով Բեռի բառի հետ՝ գործածում են «քեռու որդի» իմաստով
(Հմմտ. Քեռուորդիս ասաց.— Բզովան գյուղում մի լավ աղջիկ
կա...— Սիրտս չէր կպել. մեղավորը քեռուս տղան էր, ինձ
մոլորեցրեց.— ՍԸ, 18 (2, 1972).— Խառնուր «1. զարթխում,
հարթածությունից նոր սթափված, 2. սառած՝ պաղած հալաց-
քով, 3. փոքր-ինչ շիւ հալացքով» բառը (փոխառված է արա-
բերենից) կապելով խում «խմելուց զարկված», ինչպես՝
արևահար, սիրահար և այլն. Հմմտ. ՍԳ, 1977, № 3, էջ 54)
կամ խումառ (խում + առ)՝ իբր թե՛ «խմելուց առնված՝ բռ-
նեղված».— բարբառներում գործածվում է շիլ թուրքերեն բա-
ռը՝ «պիսակավոր, խալտարդետ» նշանակությամբ, որից էլ՝
շիլ պանիւր բառակապակցությունը՝ իբր՝ խալտարդետ գույ-
ներով պանիւր (կանաչեղենի պարունակության պատճառով).
չիմանալով բառի իմաստը, շիլ դարձրել են ճիւլ, իբր թե զլի
նման դժվար ծամվող, ջուտ» (Հմմտ. ճիւլ միս), իսկ սրա
ճիւլն էլ «գրականացնելով» համապատասխան բառով՝ գրում
են ջիլ պանիւր (Հմմտ. Հաց ու պանիւր կար. պանիւրը ջիլ էր.—
ՍԳ, 1977, № 4, էջ 78).— գրեմակ «խմորագունդը բացելու
զլանաձև փայտ» բառը մի շարք բարբառներում ունի վերա-
նակ ձևը. շիմանալով ծագումը, հալացնում են ու դարձնում
վարդանակ՝ կապելով հայերեն վարդ բառի հետ (Հմմտ. ՍԳ,
1977, № 4, էջ 20—Չյունիկ հարսը վարդանակով խմորի
գունդն էր ետ անում.—Ս. Խանզաղյան):

Ինչպես հեշտությամբ կարելի է նկատել, բերված օրինակ-
ների մի մասի ոչ թե իմաստն է փոխվել, այլ ներքին ձևը, որ,
սակայն, նույնպես իմաստափոխություն է։ Այնուհետև. բեր-
ված օրինակների մի զգալի մասը պարզապես ժողովրդական
ստուգաբանության հետևանք է, սակայն բոլոր դեպքերում չէ,
որ թյուրըմբռնումները կարելի է հանգեցնել ժողովրդական
ստուգաբանության, ինչպես, օրինակ, փուշի-թոզ-փոշի, մե-
ղանչել, անխայել և այլ բառերի իմաստափոխություններն
են։ Վերջապես, ինչպես ցույց են տալիս բերված օրինակները,
թյուրըմբռնման դեպքում մենք զործ ունենք սխալ բառա-
գործածությունների հետ, որոնք պետք է մերժվեն և վտարվեն

գրական լեզվից։ Սակայն լինում են դեպքեր, երբ այդ սխալ-
ներն ընդհանրանում են և դրանով իսկ «օրինականանում»՝
դառնալով կանոնական իրակություններ (Հմմտ. մոխրա-
տիտիկ, խլածադիկ, մազապուրծ և այլն)։

9. Հատկանունների հասարակացում.— Բոլոր լեզուներում
էլ սովորական է որևէ հատկությամբ, արարքով, հասարակա-
կան դերով, դիրքով, նշանավոր գործով և այլ հանգամանք-
ներով աչքի ընկած անձանց կամ որևէ բնութագրական հատ-
կանիչով հայտնի դարձած աշխարհագրական հատուկ անունը
գործածել որպես հասարակ անուն՝ տվյալ բնութագրի իմաս-
տով։ Օրինակ՝ Աստվածաշնչի եղբայրասպան Հուզայի անունը
հին ժամանակներից սկսած ողջ քրիստոնեական աշխարհում
դարձել է հասարակ անուն՝ «ղավաճան» իմաստով, իտա-
լացի ֆիզիկոս Ա. Վոլտայի անունը դարձավ հասարակ անուն՝
վալտ «էլեկտրահոսանքի լարվածության շափման միավոր»,
Հուլիոս Կեսարի անունը դարձավ հասարակ անուն տարբեր
լեզուներում (Հմմտ. հայերեն կայսր, ռուսերեն ԱՅՐԵ, գերմա-
ներեն Kaiser և այլն), անջրաթափանց ռետինապատված
գործվածքը և դրանից պատրաստված թիկնոցը կոչվում է
մակիեռոջ՝ շոտլանդացի քիմիկոս Մակիեռոջի անունով, ո-
րին պատկանում է այդ գործվածքի գյուտը, ռուսերենում
КОРОЛЬ «թագավոր» բառը գերմանական կայսր Կառլոսի
անունից է և այլն։ Հայերենում հատկանունների այդպիսի
հասարակացում են. ակոռի սավերված, կործանված», ակոռի
դարձնել՝ դառնալ «ավերել, ավերվել», ժողովրդախոսակցա-
կան և բարբառային ակուլել (ակոռել > ակուլել՝ անմասնու-
թյամբ) ծագել են երկրաշարժից ավերված Ակոռի բնակա-
վայրի անունից. — Ախուրան (ախուրան) «հորդ և կատաղի»
(գետի՝ հեղեղի մասին) ծագել է Ախուրյան գետանունից և
այլն, և այլն։

10. Իմաստափոխություն գիտակցական, գործուն միջա-
մրտության հետևանքով.— Շատ բառերի իմաստների փոփո-
խությունը, նրանց այս կամ այն կարգի գործածությունը պայ-
մանավորված է մարդկանց կամ պետական մարմինների գոր-
ծուն միջամտությամբ, գիտակցական հիմքի վրա՝ որոշ նպա-
տակադրումով։ Օրինակ՝ ռեկտոր բառը մինչև 1975 թ. գոր-
ծածվում էր միայն համալսարանների ղեկավար պաշտոնյա-

յի՝ գիրեկտորի համար, բայց կառավարական մարմինների սրճամար այժմ գործածվում է ամեն կարգի բուհերի գիրեկտորների համար (նախկին նշանակութունն էր՝ «համալսարանի ղեկավար պաշտոնյա՝ գիրեկտոր», այժմյան նշանակութունը՝ «ամեն կարգի բուհի ղեկավար պաշտոնյա՝ գիրեկտոր»)։ — դպրոցի ղեկավար պաշտոնյան կոչվում էր վարիչ-Համկոմկուսի Կենտկոմի 1932 թ. որոշմամբ բոլոր կարգի միջնակարգ դպրոցների ղեկավար պաշտոնյան վերանվանվեց ղիրեկտոր (դպրոցի գիրեկտոր, ուսումնարանի գիրեկտոր, տեխնիկումի գիրեկտոր և այլն), գիրեկտոր անվանումն, այդպիսով, տարածվեց նաև միջնակարգ ուսումնական հաստատությունների ղեկավարի վրա։ Այս կարգի ակտիվ միջնորդությամբ, գիտակցաբար տեղի ունեցող իմաստային փոփոխությունները, սակայն, ավելի բնորոշ են տերմինաբանությունների, Գիտություն, տեխնիկայի, արտագործյան տարրեր բնագավառների մասնագետներն իրենց բնագավառի տերմինահամակարգը համալրում են հիմնականում երեք ճանապարհով՝ ա) նոր բառեր կամ բառակապակցություններ կազմելով, բ) փոխառյալ բառերով, գ) լեզվում արդեն գոյություն ունեցող բառերին մասնագիտական տերմինային իմաստ տալով։ Այս երրորդ կարգի համալրման դեպքում է, ահա, որ բառերին գիտակցական կերպով այս կամ այն իմաստըն է տրվում։ Այսպես, օրինակ, խոռոչ գրաբարում ունեթ «ծակ, փոս» նշանակությունը. աշխարհաբարում՝ պահպանելով այդ իմաստը, ստացել է նաև «1. նեղք, բացվածք, 2. ծառի փշակ» նշանակությունները՝ իր պատմական զարգացումով. բայց դրանց հետ միաժամանակ նա մեթ օրերում ստացել է նաև տերմինային մի քանի նշանակություններ, «1. (կազմախոսական) դատարկ կամ լցված տարածություն կենդանի օրգանիզմի մեջ, որ սահմանազատվում է մարմնի պատերի ներքին մակերեսներով» (օր. կրծքի խոռոչ, քթի խոռոչ), 2. մարմնի որևէ մասի փոս ընկած տեղ, որի մեջ դրնվում է մի այլ գործարան (օր. աչքի խոռոչ), 3. (բժշկական, երկրաբանական, շինարարական և այլն) որևէ մարմնի մեջ զանազան պատճառներով տեղի ունեցող քայքայումից առաջացած դատարկություն (օր. թոքերի խոռոչներ (կավեռնաներ), լեռնապարի խոռոչ, բյուրեղի խոռոչ, ատամի խոռոչ, փայտանյութ

թի խոռոչ), 4. (Ֆիզիկական) անշարժ դրական իոն»։ Այս բոլոր իմաստներն էլ արվել են խոռոչ բառին համապատասխան մասնագիտությունների տերմինաշինարարների կողմից։ Իմաստների գիտակցական փոփոխությունը տերմինաբանության մեջ ավելի հաճախ է տեղի ունենում գրաբարից կամ բարբառներից փոխառվող բառերում։ Այսպես, ռազմական տերմինաբանության համար գրաբարից վերցվեցին պարեկ, պարետ, ռուսք և շատ այլ բառեր՝ անհրաժեշտ վերափոխատվորումներով. պարեկ նշանակում էր «պահակ», անվեց «պատրուկ» բառի նշանակությամբ («զինված շոկատ որևէ օբյեկտի պաշտպանության կամ հասարակական կարգի ու անվտանգության պահպանության համար»), պարետ՝ «վերակացու, տեսուչ, իշխան», անվեց կոմեդիանտի նշանակությամբ, ռուսք՝ «նետելու քար», մասնավորապես՝ բարանով նետելու քար. տեղ, նիզակ», անվեց ճՕՄՃԱ-ի նշանակությամբ, մարտկոց «աշտարակ, բուրգ» (կոմպոզիցիոն համար), անվեց բատարեա-ի նշանակությամբ և այլն։ Նույնպես և բարբառներից անվեցին շմուշկ, դանուկ և շատ ուրիշ բառեր՝ տերմինային վերափոխատվորումներով (շմուշկ՝ բարբառներում նշանակում էր «պայտած կրունկներով սրաքիթ կոշիկ», դահուկ՝ «մեծ սահնակ՝ ձմեռը սարից խոտ կամ վառելիքայտ կրելու համար») և այլն։

11. Իմաստափոխություն իմաստների բաղադրության նե-տևանելով. — Հաճախ է պատահում, որ երկու բառերի իմաստները շփոթվում են իրար հետ՝ նրանց ձևական որոշ նմանության կամ միանման կապակցությունների մեջ գործածվելու պատճառով, որով դրանցից մեկը փոխում է իր իմաստը՝ ստանալով մյուսինը. այս երևույթը կոչվում է բաղադրություն (կոնտամինացիա)։ Օրինակ, մեղանշել բառը նշանակում է «մեղք գործել», բայց խոսակցական լեզվում (որից թափանցում է նաև գրական լեզվի մեջ) այդ բառը գործածվում է նաև «խղճալ, գթալ, զղջալ» իմաստներով՝ մեղա բառի և մեղքը փոխել, մեղք գալ կապակցությունների բաղադրությամբ. — կատարելություն «կատարելի լինելը» գործածում են «կատարյալ՝ անթերի լինելը» և պատկանելություն «պատկանելի լինելը»՝ «պատկանելը» իմաստով՝ կատարելություն և պատկանելություն բառերի բաղադրությամբ. — գե-

բաղասելիութեն «գերադասելի կերպով, նախապատվութիւն տալով» գործածում են «գերազանցապես» նշանակութեամբ՝ գերազանցորեն բառի բաղարկութեամբ (Նմմտ. Հիշյալ հոդերի վրա կարող են տեղավորվել 20—30000 հոգի, որոնք գերազանցելիութեն պիտի լինեն նոր գաղթականներ.— Մ. Արզումանյան, Նանսհեր և Հայաստանը, էջ 191): Ավելի հաճախ է տեղի ունենում բառակապակցութիւնների բաղարկութիւնը, որով ստացվում են նոր կապակցութիւններ (դարձվածներ և այլն).— ունենք մի կողմից՝ կախ ընկնել, մյուս կողմից՝ լաց ընկնել և լաց լինել. վերջինիս բաղարկութեամբ ստեղծվել է նաև կախ լինել «կախվել, կախ ընկնել».— ունենք գեր խաղալ և դեր ունենալ, մյուս կողմից՝ արժեք ունենալ. դեր խաղալ-ի բաղարկութեամբ ստեղծվել է արժեք խաղալ.— ախ քաշել և հոգոց հաճել կապակցութիւնների բաղարկութեամբ ստեղծվել են հոգոց քաշել և ախ հաճել կապակցութիւնները.— դասել քվին կամ շարքին (շարժում) և համարել մի բան կապակցութիւնների բաղարկութեամբ ստեղծվել է համարել քվին (Նմմտ. Մենք ձեզ հետ նրանց համարում ենք այն մարդկանց քվին, որոնց անվանում են հայրենազգով.— Գ. Մալգարյան) և այլն:

12. Իմաստափոխութեան բառագործածութեան և իմաստների պատճենումով.— Լեզվական ազդեցութիւնների ամենաստուրբական և շոշափելի հետևանքը բառերի փոխառութիւնն է, բառապատճենումը և իմաստային պատճենումը, որ ազդվող լեզվի բառերի այս կամ այն իմաստն ստանալն է՝ ազդող լեզվի բառերի օրինակով: Այսպես՝ հայերենում երաշխավորել բառն ունի «վստահեցնել որևէ բանում, 2. հանձնարարել՝ իր վրա պատասխանատվութիւն վերցնելով հանձնարարութեան կատարման համար, 3. կրաշխավորութիւն տալ»։ ուսերենում рекомендовать նշանակում է «երաշխավորել, հանձնարարել», իսկ դրանից կազմված за-рекомендовать (себя)՝ «իրեն դրսևորել՝ ցուցաբերել»։ այս վերջինի պատճենումով էլ, ահա հայերենում իրեն երաշխավորել գործածում են «իրեն դրսևորել՝ ցուցաբերել» նշանակութեամբ (Նմմտ. Պամսը իրեն երաշխավորեց որպես ֆրանս-սովետական մերձեցման մեծ կողմնակից, Մ. Արզումանյան, նույն տեղում, 250).— ուսերենն впитать «1.

ներծծել, 2. տոգորել», пропитать «ծծեցնել, տոգորել, հագեցնել» բառերի ընդօրինակումով գործածում են ներծծվել, հագեցվել բառերը՝ «տոգորվել, համակվել» նշանակութեամբ.— ամբարձիչ մեքենան ուսերենում նմանութեան զուգորդութեամբ կոչեցին журавль, որի պատճենումով էլ՝ հայերեն կոունկ.— վարկ նշանակում էր «համարում, կարծիք, պատիվ, հեղինակութիւն», ստացավ «փոխառութիւն. մեկին տրամադրվող դրամական միջոցներ» նշանակութիւնը՝ ուսերենի кредит բառի իմաստային պատճենումով (ուսերեն բառն էլ փոխառված է եվրոպական լեզուներից՝ լատիներեն credit).— կաշ Եկանելը, կանչ՝ բառն ստացել է «ծողովրդական զանգվածներից ուղղված գրավոր կամ բանավոր դիմում» նշանակութիւնը՝ ուսերենի призыв բառի պատճենումով.— պատճենը բառն արևմտահայերենում ստացել է «բարիկազ» նշանակութիւնը՝ ֆրանսերենի պատճենումով.— ծողովրդախոսակցական լեզվում գործածվում է вот баян՝ «1. կույր, 2. բուք, ոչ հատու, ոչ սուր». դրական լեզվում էլ դրա պատճենումով գործ են ածում կույր «ոչ հատու, բուք» նշանակութեամբ (Նմմտ. դանակը կույր էր, չէր կտրում).— ուսերենն номер բառի պատճենումով գործածում են հայերեն համար «անսովոր՝ տարօրինակ արարք» իմաստով և այլն: Հատկանշական է, որ այս կարգի պատճենումներն ավելի շատ են տերմինաբանութեան մեջ, և դա հասկանալի է: Մասնագիտ-տերմինաշինարարները՝ հայացնելով օտարալեզվյան տերմինները, շատ հաճախ ուղղակիորեն պատճենում են տերմինների իմաստները՝ հայերեն բառերի համար՝ ստուգաբանական հիմունքով, այսինքն՝ օտար լեզվի այս կամ այն տերմինի դիմաց գործածում են ստուգաբանորեն նույնիմաստ հայերեն բառը՝ դրան տալով տերմինային իմաստը (Նմմտ. վարկ, կոունկ, խոտոչ և այլն):

13. Բառի կրած ձևափոխութեանումով պայմանավորված իմաստափոխութիւն.— Լեզվի զարգացման ընթացքում հաճախ նույն բառը տարբեր պատճեններով ենթարկվում է տարբեր ձևափոխութիւնների, այսինքն՝ կրում է տարբեր հնչյունական փոփոխութիւններ, որի հետևանքով նախնական մեկ բառը ձևապես վերածվում է երկու կամ ավելի տարբեր բառերի, ինչպես՝ համարել և համբել, հուզել և

ուզել, կտարել և կոտարել, հատնել և հատել և այլն: Այս-
պիսի բառազույգերի անդամները ժամանակի ընթացքում
կամ հոմանիշներ են դառնում՝ ստանալով իմաստային տար-
բերակում, կամ զործառական տարբերակման են են-
թարկվում, կամ մեկը մնում է իբր կենսունակ բառ,
մյուսը դուրս է գալիս և այլն, և այլն: Մակայն հաճախ է
տեղի ունենում նաև իմաստների այնպիսի զարգացում, որ
հանգեցնում է միևնույն բառից առաջացած տարածե բառերի
բուլբուլի տարբեր իմաստների: Այսպես, օրինակ, համբել
բառը համարել բառից է ստացվել՝ 2-րդ վանկի ա ձայնավորի
տեղումով, և ձևական տարբերությունը հանգեցրել է տարբեր
իմաստների. համարել ստացել է «մի բան կարծել, ընդունել
իրևե մի բան», իսկ համբել՝ պահպանել է նախնական
իմաստը, այն է՝ «հաշվել, հաշվարկել»: Այդպես և՛ կտրել,
կտարել և կոտարել, հուզել և ուզել, հատել և հատնել և
այլն: Հայերենում այս կարգի իմաստափոխությունները բա-
զականաչափ շատ են, և դա բացատրվում է այն բանով, որ
միևնույն բառը մեր գրական լեզվին է անցել և՛ գրական ժա-
ռանգորդությամբ, և՛ ժողովրդախոսակցական լեզվից՝ դրան
հատուկ ձևափոխություններով ու իմաստային զարգացումով,
և՛ բարբառներից կամ էլ գրաբարից (իրևե փոխառություն) ու
առնմատահայերենից (արևմտահայերենի համար՝ արևելահա-
յերենից) և այլն: Այս բոլոր ներթափանցումներով ստացվել
են հինհայերենյան բառերի ոչ միայն ձևական տարբերակ-
ներ ժամանակակից հայերենում, այլև իմաստային տարբեր
զարգացում ապրած բառեր. այսպես՝ գրաբարյան հառ-
արմատից ունենք հատել և հատնել, բայց նաև՝ էտ, էտել,
էտոց և այլ բառերը՝ ժողովրդախոսակցական լեզվին հա-
տուկ իմաստներով (էտ նշանակում է ծառի ամբերոզ ճյուղե-
րի, մասնավորապես խաղողի վազի ամբերոզ ոստերի կտրե-
լը). հույզ, հուզել գրաբարյան յույզ, յուզել բառերի պատմա-
կան զարգացումով առաջացած ձևերն են՝ իրենց իմաստնե-
րով, իսկ ուզել՝ ժողովրդախոսակցական լեզվի բառ՝ իր ձևով
և իմաստով և այլն, և այլն:

14. Բառակազմությունն իբրև իմաստափոխական գոր-
ծան.— Բառերի տարբեր իմաստային փոփոխություններն ու
փոխանցումները հաճախ պայմանավորված են լինում բառա-

կազմական իրողություններով. իբրև կանոն, բարդություննե-
րի և ածանցումների մեջ բաղադրիչները (արմատ, բառ)
պահպանում են իրենց անկախ իմաստները, բայց միմյանց
զուգորդությամբ ստանում են նոր բառային իմաստ՝ կազ-
մելով նոր բառեր: Մակայն լինում են դեպքեր, երբ նոր (ա-
ծանցավոր կամ բարդ) բառի իմաստը հնարավոր չէ բխեցնել
բաղադրիչների անկախ իմաստներից կամ նրանց կապակ-
ցությունից: Այսպես, եթե տուն բառից կազմված տնակ բա-
ռը հեշտությամբ կարող է բացատրվել բաղադրիչների
իմաստներով (տուն+ակ փոքրացուցիչ ածանց «փոքրիկ
տուն»), ապա կոնակ բառի իմաստը չի կարող բացատրվել
կուռն +ակ (փոքրացուցիչ ածանց) բաղադրիչների նշանա-
կություններով. կոնակ նշանակում է թիկունք, մեջք՝ և չի
կարելի բացատրել իբրև փոքրիկ կուռ: Դեղձան նշանակում
է «դեղին», բայց դրանից կազմված դեղձանիկ բառը չի կա-
րելի բացատրել դեղին+իկ (դեղին նշանակող բառի քնքշա-
կանը), որովհետև դեղձանիկ թռչնանուն է.— կոնակ կազմ-
ված է կուռ(և) բառից՝ ակ ածանցով, բայց չի կարելի բա-
ցատրել իբրև փոքրիկ նուռ.— Գլխաբառ կազմված է գլուխ և
բառ բառերից և նշանակում է գլխավոր (հիմնական) բառ (բա-
ռաբաններում բառահողմածի հիմնական բառաձևը). գլուխ
բառն ստացել է «գլխավոր, հիմնական» ածականական նշա-
նակությունը և այլն: Իհարկե, այդ բոլոր օրինակներում էլ
սովորաբար առկա է պատրաստի իմաստը (այլ լեզվի համա-
պատասխան բառի օրինակով), որով և այդ իմաստը հատ-
կացվում է նորակազմ բառին, ինչպես, օրինակ, ռուս. ԳՐՁ-
ԻՏԱՏԱ «նուռ» և «նոնակ» բառի օրինակով է կազմվել մեր
Երևանի բառը, ուստի և կարելի է դիտել իբրև իմաստային
պատճենում, բայց տվյալ դեպքում կարևորն այդ չէ, այլ այն,
որ այս բառակազմությունների մեջ բաղադրիչներից մեկը
(բառ կամ ածանց) հանդես է գալիս ոչ իրեն հատուկ նշանա-
կությամբ, այլ ինչ-որ մի նոր նշանակությամբ (համար. կրո-
նակ, դեղձանիկ, գլխաբառ և այլն): Իմաստափոխական տե-
սակետից սա կարևոր է նրանով, որ այսպիսի բառակազմու-
թյունները կարող են մեծ տարածում գտնել և ածանցին կամ
բարդության արմատական բաղադրիչին տալ մի բուլբուլի
նոր նշանակություն: Այսպես, օրինակ, զործ բառը հին բաղա-

դրութիւններէ մեջ նշանակում է «գործող, մշակող» (իրեն բաղադրութեան երկրորդ բաղադրիչ), ինչպէս՝ հողագործ «հողը գործող՝ մշակող», երկրագործ «երկիր գործող՝ մշակող» (գրաբարում երկիր գործել նշանակում է հողը մշակել), այդպէս և՛ ժամագործ, զինեզործ, այգեգործ և նման բազմաթիվ բարդութիւններէ մեջ: Մեր օրերում այդ բառն սկսեցին գործածել նորակազմ բառերի մեջ՝ «մի բանով գրադվող, արտադրութեան որևէ ճյուղում աշխատող» նշանակութեամբ, ինչպէս՝ էլեկտրալաւազործ «էլեկտրալաւազերի արտադրութեան աշխատող», կարելագործ «կարելի արտադրութեան մեջ աշխատող», ալյումինագործ «ալյումինի արտադրութեան աշխատող», կաուչուկագործ «կաուչուկի արտադրութեան աշխատող» և այլն: Այսպիսի բաղադրութիւններն այնքան տարածվել են այժմ, որ գործ բառն արդէն հանդէս է գալիս նաև ածանցի դերով. սակայն դա բոլորը չէ. այն բառերն էլ, որոնք հին կազմութիւններ են և որոնց մեջ գործ բառը նշանակում է մի գործով գրադվող, մի գործի մասնագետ-արհեստավոր, պահելով այդ նախկին իմաստը, ստացան նաև նոր՝ «տվյալ բնագավառի աշխատող» նշանակութիւնը. այսպէս՝ հացագործ նշանակում էր «հացթուխ», այժմ նշանակում է նաև «հացի արտադրութեան աշխատող», ժամագործ նշանակում էր «ժամացույցի մասնագետ-արհեստավոր, ժամացույցներ վերանորոգող արհեստավոր», այժմ նշանակում է նաև «ժամացույցի գործարանի աշխատող», զինեզործ նշանակում էր «զինի պատրաստող՝ արտադրող», այժմ նշանակում է և՛ «զինի պատրաստելու մասնագետ» (հին նշանակութիւնը), և՛ «զինու արտադրութեան աշխատող» (ասվում է՝ Արարատ տրեստի գլխավոր զինեզործ՝ «գլխավոր մասնագետ» նշանակութեամբ, և՛ «Արարատ» տրեստի զինեզործները կատարեցին տարեկան պլանը, որի մեջ զինեզործները նշանակում է զինու արտադրութեան աշխատողները): Այս տեսակետից դիտելով, բառակազմական իրողութիւնները նույնպէս կարելի է դիտել որպէս բառերի իմաստափոխութեան գործոն:

15. Քերականական իրողութիւններն իբրև իմաստափոխական գործոն.— Բառերի քերականական ձևերը խոսքի մեջ բազմազան գործածութիւններ ունեն, և այդ գործածութիւն-

ների ժամանակ նրանց ընդհանուր քերականական իմաստները մասնավորում, մասնավոր նշանակութիւնների են վերածվում, իսկ երբեմն էլ ստանում պարզապէս կապակցական իմաստ: Այսպէս, օրինակ հուլիսով, մտով, թանով ձեզերը հուլիս, միս, թան գոյականների եզ, գործիական հոլովածներն են, որոնք ունեն ժամանակակից հայերենի գործիական հոլովի ընդհանուր իմաստը, այն է՝ իրացման փերականակա իմաստը (այսինքն՝ այն միջոցը, գործիքը, հանգամանքը, պարագան և այլն, որի օգնութեամբ կամ որի առկայութեան լրացակայութեան պայմաններում իրացվում է գործողութիւնը): Այնպիսի նախադասութիւնների մեջ, ինչպիսիք են՝ նա միայն հուլիսով է ապրում.— Թանով փոր չի կըշտանա.— և այլն, հուլիսով, թանով հոլովածները գործածվել են իրենց հոլովական ընդհանուր իմաստի կոնկրետացումով (հուլիսով=հուլիսի օգնութեամբ, թանով=թանի օգնութեամբ, (թանն իբրև սնունդ օգտագործելու միջոցով), մինչդեռ թանով ապուր, մտով կարկանդակ, բրնձով փլավ և նման կապակցութիւնների մեջ թանով, մտով, բրնձով հոլովածների ընդհանուր հոլովական իմաստները ոչ միայն մասնավորվել, այլև իմաստային նոր երանգ են ստացել, ցույց տալով այն նյութը, որից պատրաստվել են ապուրը, կարկանդակը, փլավը: Եթէ այդ կապակցութիւնների հաճախական գործածութեան հետևանքով ժամանակի ընթացքում գործիականի ձևով այդ բառերը փոխանվանաբար օգտագործվեն և արտահայտեն ամբողջ բառակապակցութեան իմաստը, ապա կրտացվի գործիականի հոլովածի անկախ գործածութիւն, ինչնուրույն բառի իմաստով: Օրինակ, թանով բառածը մի շարք բարբառներում գործածվում է որպէս ինքնուրույն բառ՝ «թանապուր, թանից պատրաստված սպաս» բառային իմաստով. գործիականի հոլովածը վերածվել է գոյականի և կարող է հոլովվել, ինչպէս բոլոր գոյականները (թանովի, թանովից, թանովով և այլն): Ընդհանուր նույն ձևով էլ ունենք գրական լեզվի կարծով բառը (կաթով և բրնձով պատրաստվող կերակուր), որ կարճ բառի աշխարհաբարյան գործիականի հին հոլովածն է: Նույն եղանակով էլ կարծես, ասես, տեսես բայածները խոսքի մեջ գործածվելով իմաստային մասնավոր և բանկավորումով, ժամանակի ընթացքում ստացել են բառա-

յին անկախ գործածություն և բառային նոր իմաստ, կարծես նշանակում է «թվում է», տեսնես՝ «արդյոք», առես՝ «որպես թե»: նույն ձևով ինչ գերանվան ինչի և ինչու սեռական հոլովածները վերածվել են ինքնուրույն հարցական բառերի: Ժամանակակից հայերենում շատ են այսպիսի իմաստափոխությունների դեպքերը, հատկապես վիճակային դերբայների մեջ, այսպես, գրել բայի ենթակայական դերբայն է գրող (օր. դիմում գրող քաղաքացի), որ նաև ինքնուրույն բառ է դարձել և գործածվում է իբրև գոյական՝ «գեղարվեստական ստեղծագործություններ հորինող, писатель» նշանակությամբ, խոսվել բայի հարակատար դերբայն է խոսված (օր. խորոված կարտոֆիլ), բայց որպես ինքնուրույն բառ գոյական է՝ «միսը խորովելով պատրաստած ուտելիք, կերակրատեսակ»: Այդպես են նաև ուսանող, ուրացող, հերձվածող, հատված և այլ գոյականական նշանակություն ստացած բառերը, որոնք դրա հետ միաժամանակ ուսանել, ուրանալ, հերձվածել, հատվել բայերի դերբայական ձևերն են դերբայների համակարգում:

Այս կարգի իմաստափոխությունները շարք է շփոթել պարագրաֆ Ե-ում ներկայացված քերականական ձևերի բարացման հետևանքով տեղի ունեցած իմաստափոխությունների հետ: Երկուսի սարքերությունն այն է, որ մի դեպքում ինքնուրույն բառ դարձած բառը սովոր ձևով նաև քերականական ձև է համապատասխան հարացույցում (օր. տեսնես «արդյոք» և տեսնեմ, տեսնես, տեսնի... կարծես «թվում է» և կարծեմ, կարծես, կարծի..., խորոված (գոյական) և խոսվել, խորովող, խոսված, խորովում, խորովելու... թանով (ապուրը) և թան, թանի, թանից, թանով և այլն, մինչդեռ մյուս դեպքում որպես ինքնուրույն բառ գործածվող ձևը քերականական ձև է եղել լեզվի պատմության անցած փուլերում, ժամանակակից լեզվում համապատասխան հարացույցային համակարգը գոյություն չունի, և հենց դրա հետևանքով էլ նախկին քերականական ձևը չի գիտակցվում որպես այդպիսին (հմմտ. հասանեմ, հասի, հասից, հասցես, հասցե՛լ գրաբարյան բայաձևերը, որ մահացել են, և հասցե՛լ գոյականը, մասն, մասին,

մասամբ հոլովածները և այժմյան մասին, մասամբ բառերը և այլն, և այլն):

Գ. Իմաստափոխության տեսակներն ըստ իմաստային զարգացման արդյունքի

Թվարկված իմաստափոխական հիմունքները ցույց են տալիս, որ իմաստափոխությունն ըստ էության ոչ այլ ինչ է, եթե ոչ որևէ առարկայի (երևույթի, հատկանիշի, գործողության և այլնի) հասկացության անվանման փոխադրումը, տարածումը մի այլ առարկայի (երևույթի, հատկանիշի, գործողության և այլնի) հասկացության վրա, սովոր բառը մի այլ առարկայի (երևույթի և այլնի) հասկացմանը: Իրոք, երբ աչք «տեսնելու գործարանը» հասկացության անվանումը գործածում ենք «բողոքը» հասկացության համար, դարձնում դրա անվանումը, ապա մենք այլ բան չենք կատարում, և՛ թե ոչ «տեսողական գործարան» հասկացության անվանումը փոխադրում նաև բողոքը հասկացության վրա: Կռուկի թուշանունը գործածելով ամբարձիչ մեքենայի իմաստով՝ այդ անվանումը փոխադրում ենք այլ առարկայի հասկացության վրա. այդպես էլ՝ քև (թուլունի) և քև (ինքնաթիռի), զլուխ (մարմնի) և զլուխ (գրքի), մատ (ձեռքի) և մատ (խաղողի վաղի սոս), վարկ «հեղինակություն, պատիվ» և վարկ «փոխառություն, տրամադրված միջոցներ», ծաղիկ (բույսերի) և ծաղիկ (հիվանդությունը) և այլն, և այլն: Գործածվելով այլ առարկայի (երևույթի և այլնի) համար՝ բառը ձեռք է բերում դրա հասկացությունը, այսինքն՝ ստանում է մի նոր իմաստ, ըստ որում այդ նոր իմաստը կարող է բառի արդեն ունեցած հասկացության ընդարձակումը լինել, կարող է բուրգովին նոր հասկացություն լինել, կարող է բառի ունեցած իմաստին զուգորդել, նրա հետ միաժամանակ գոյություն ունենալ, կարող է փոխարինել նրան և այլն, և այլն: Եթե իմաստափոխական հիմունքները ցույց են տալիս բառի իմաստի կրած փոփոխությունների պատճառները, ապա բառի նախկին իմաստի և նոր իմաստի (կամ իմաստների) հարաբերությունները ցույց են տալիս բառիմաստի պատմական զարգացումը և դրա հետևանքները: Բառիմաստի պատմական զարգացումը,

իրբե հետևանք, առաջ է բերում բառիմաստի և բառի բովան-
գակութեան հետևյալ փոփոխութիւնները:

1. Բառիմաստի ընդլայնում. այսինքն՝ իմաստի այնպիսի
փոփոխութիւն(ներ) և զարգացում, որի հետևանքով որևէ
առարկայի (երևույթի, գործողութեան և այլնի) հասկացու-
թիւն արտահայտող բառն իր բովանգակութեան մեջ է առ-
նում նորանոր առարկաներ (հատկանիշներ, գործողութիւն-
ներ և այլն), որով և ընդարձակվում է հասկացութեան ծավա-
լը կամ նոր իմաստներ են առաջանում, օրինակ՝ տուն բառը
նախապես նշանակել է «շինութիւն»՝ կառույց բնակութեան
համար», ժամանակակից հայերենում՝ պահպանելով այդ
իմաստը, ստացել է նաև առհասարակ «շինութիւն», շինք»
իմաստը, և բոլոր կարգի շինքերն էլ կարելի է անվանել տուն
(համառ. բնակելի տուն, պիտներական տուն, գրողների տուն,
կառավարական տուն, սուկոտի տուն և այլն). իմաստային
այս փոփոխութեամբ ընդարձակվել, մեծացել է հասկացու-
թեան (բառիմաստի) ծավալը, որ ներառում է ոչ միայն բնա-
կութեան, այլև ուրիշ նպատակների համար կառուցված շի-
նութիւնները: Նույն տուն բառը դեռևս դրաբարում ստացել
է «չափական ստեղծագործութեան կառուցվածքային հատ-
ված» իմաստը.— սուր նախապես նշանակել է «հատու»,
ապա ստացել է նաև «կծու, բարկ» (օր. սուր հոտ), սրամիտ
(սուր խոտր), նուրբ, դգայուն (սուր միտք, սուր լսողութիւն),
զիւ «բարակ և բարձր» (սուր ձայն), իսկ մյուս կողմից՝ սուր
(զենքը) գոյականական նշանակութիւնը.— բնուան նշանակել
է «երկու շրթունքների բացվածքը և ծնոտների միջև եղած
խոռոչը», ապա ստացել է նաև «որևէ կարգի խոռոչի մուտք,
մուտքի տեղ» իմաստը (կժի բերան, կաթսայի բերան, քա-
րանձաձի բերան, ձորի բերան), այնուհետև՝ «զանազան գոր-
ծիքների կտրող մասը» (կացնի բերան, սղոցի բերան, դա-
նակի բերան) և այլն.— ջուր նշանակում է «թթվածնի ու
ջրածնի միացութիւնը ներկայացնող հեղուկ», ապա այդ հե-
ղուկի հոսող զանգված կամ կուտակութիւն որևէ տեղում
(զետ, լիճ, ծով և այլն), մրգերի հյութ, մարմնի զանազան
հյուսվածքներում կուտակված հեղուկ, բերանից կամ քթից
հոսող հեղուկ և այլն, և այլն.— քաշել (գրք. քարշել) նախա-
պես՝ «քաշ տալ, ձգել», ապա՝ կշռել, ծխել, տնել (գնալ-գալը

որքա՞ն քաշեց) և այլն.— կշիռ «քաշ», նաև՝ «կարեորու-
թիւն, նշանակութիւն».— կախել «կախ տալ», նաև՝ «կախա-
ղան հանել. խոնարհել» (զլուսը կախել) և այլն.— երես
աղեմք», նաև՝ «վերմակի վերևի կողմը և դրա կտորը. գգեստի
արտաքին կողմը». իրբե անական՝ առ խոր, ծանծաղ» և այլն:

Իմաստի ընդլայնում է ներկայացնում նաև հատկանուն-
ների հասարակացումը, ինչպես՝ Բուրդո (տեղանուն), այդտեղ
արտագրվող գինու մի տեսակ (կարմիր գույնի), ապա՝ ընդ-
հանրապես կարմիր գինու մի տեսակ, և վերջապես՝ «մուգ
կարմիր գույն», Մեկենաս հատուկ անունից՝ մեկենաս «հո-
վանավոր» և այլն:

2. Բառիմաստի նեղացում և մասնավորում. այսինքն՝
իմաստի այնպիսի զարգացում, որի հետևանքով աստիճանա-
բար սահմանափակվում է դասի կամ սեռի անվանումը՝
վերածվելով տեսակի կամ անհատի անվանման, ինչպես՝
Բաջ գրաբարում նշանակել է «լավ» բառիս ընդարձակ
իմաստով (առհասարակ դրական հատկանիշով բնութագր-
վող՝ կտրիճ, անվեհեր, գեղեցիկ, բարի, ճարտասան, ճար-
տար և այլն), ժամանակակից հայերենում այդ բառն ստա-
ցել է նեղ իմաստ և նշանակում է «կտրիճ, անվեհեր». այժմ
այլևս չի կարելի ասել, օրինակ, նա Բաջ մազեր ունի, մինչդեռ
գրաբարում կարելի էր (բառի հին իմաստը պահպանվել է Բաջ
գիտեր, Բաջ տեղյակ էր կապակցութիւններում): Հավ բառը
նշանակում էր «թուլուն», իսկ այժմյան իմաստը նեղացել է՝
դառնալով թուլունների ընտանի մի տեսակի և այն էլ դրա
էզի հասկացութեան անվանումը:

Իմաստի նեղացում ավելի շատ տեղի է ունենում հասկա-
ցութեան ծավալի փոքրացումով՝ բառի գործածութեան ուրու-
րի նեղացման և մասնավորման հետ: Այսպես, օրինակ,
խոռոչ բառի այն մասնագիտական նշանակութիւնները,
որոնք վերը թվարկեցինք, հետևանք են այն բանի, որ ընդ-
հանուր առ լ միջանցիկ բացվածք՝ փոսորակ» իմաստը
մասնավորվել է բժշկութեան, կազմախոսութեան և այլ մաս-
նագիտական տերմինահամակարգերում. օրինակ՝ բժշկու-
թեան մեջ նա նշանակում է ոչ թե առհասարակ փոս, բաց-
վածք, այլ քայքայման հետևանքով գոյացած դատարկու-
թիւն մարմնի որևէ գործարանի մեջ.— Այդպես են նաև՝ սնն

ընդհանուր իմաստով և լեզվաբանութեան մեջ՝ անունների քերականական սեռ և բայերի սեռ, ժամանակ ընդհանրապես, և լեզվաբանական՝ ժամանակ «բայերի ժամանակի քերականական կարգը», տող՝ ընդհանրապես և գրականագիտական՝ «չափական ստեղծագործության կառուցվածքային միավորը», ձագ «առհասարակ՝ կենդանիների ճուտ», իսկ մեղվագործության մեջ՝ «մեղվի ընտանիքից առանձնացած նոր՝ երիտասարդ ընտանիք», քիակ «փոքրիկ թի», իսկ կաղմախոտության մեջ՝ «սեռանկյունաձև լայն ու տափակ ոսկր մեջքի վերին մասում» և այլն, և այլն: Այս կարգի իմաստային մասնավորումները, ինչպես հեղտութեամբ կարելի է նկատել, բառի տերմինաբան հետևանք են: Իմաստի նեղացման մի տեսակն է ներկայացնում հասարակ անունների հատկանշանացումը, ինչպես՝ վանճ «կրոնական հաստատություն՝ միաբանություն» և վանճ (տեղանուն), կալեր (կալ բառի հոգնակին) և կալեր (տեղանուն), բերդ (ամրոց) և թերդ (տեղանուն), վարդերես «վարդագույն երեսով» և վարդերես (հատուկ անուն), նազելի «1. նագանք արտահայտող, 2. վայելուչ շարժումներով ու կեցվածքով» և նազելի (հատուկ անուն) և այլն: Բառերի հատկանշանացման դեպքում հասկացության անվանումը վերածվում է առարկայի անվանման, այսինքն՝ բառի անվանողական դիրք փոխարինվում է բառի առարկայական վերաբերությունը, բառը դառնում է առարկայի անուն: Այս երևույթը բառիմաստի նեղացում է այն շափով, որչափով՝ պահպանելով իր բառային իմաստը, բայն ստանում է մասնավորված գործածություն իրեն հատուկ անուն. սակայն դա կարող է հանդիպել նաև բառի իմաստազրկման: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ բառը աստիճանաբար դուրս է գալիս գործածությունից և պահպանվում է միայն որպես հատուկ անուն, կամ էլ տվյալ հատուկ անունը այլևս չի կապվում իրեն հասարակ անուն գործածվող նույն բառի հետ, այսինքն՝ հասարակ անունը և հատուկ անունը վերածվում են իմաստաբանորեն այլևս իրար հետ չկապվող համանունների: Իմաստազրկման համար իրեն օրինակ ունենք՝ նոր (նշանակել է «նորատունկ այգի»), էլմիածին, Փառանունը (նշանակել է «քարե կամուրջ»), Լեռիճնազ (նշանակել է «քավական է նազ անես»), Լրայր (հուր-այր ատղա-

մարդ») և այլն: Համանունների են վերածվել ապարան(հ)-Ապարան (տեղանուն), արտաբակ-Արտաբակ (տեղանուն), հրայր-Լրայր և այլն:

3. Իմաստների բեռացում. այսինքն՝ բառի նախնական իմաստին հակադիր իմաստների (հակադիր բեռների) առաջացում: Այսպես՝ դեղ բառը, ինչպես ասացինք, նշանակել է խոտ, ապա՝ բուժական խոտ, վերջապես՝ բուժական նյութ (թե՛ բուսական և թե՛ քիմիական), սակայն այդ բառը բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում ստացել է նաև թույն նշանակությունը, որից և՛ դեղի «թունավորել», բուժիչ նյութ իմաստից զարգացել է հակառակ իմաստը՝ «սպանող՝ մահացնող նյութ».— աղ բառից զարգարում ունենք աղբ «քաղցր, անուշ» (դրանից է արևմտահայերեն աղվար բառը). բարբառների մի մասում այդ բառն ստացել է «դառնահամ, թունավոր, թույն» իմաստները. աղ բառն էլ զարգարում արդեն ունի «աղի, աղահամ տվող. թթու, կծու, դառն» իմաստները, բայց նաև՝ «լավ, անուշ, քաղցր, գեղեցիկ» (հմմտ. ալախոսիկ «քաղցրախոս»):— մեղք նշանակել է հանցանք (որից՝ մեղավոր, մեղադրել բառերը)՝ աշխարհաբարում պահպանելով այդ իմաստները կրոնական առումով, ինչպես՝ «ժանխիղճ արարք, խղճի դեմ արարք» իմաստը, մյուս կողմից՝ ստացել է «զուժ, խիղճ, խղճմտանք, խղճալի» նշանակությունները (հմմտ. մեղք գալ, մեղք է, մեղքանալ և այլն):— անխայել նշանակում է «գթալ, ակոստալ, խնայել», բայց ժողովրդախոսակցական լեզվում ստացել է հակառակ իմաստը՝ «չխնայել, չակոստալ, չգթալ» և այս իմաստով երբեմն գործածվում է նաև գրականության մեջ, որ, իհարկե, սխալ է և անհանձնարարելի:— ախոյան զարգարում նշանակում էր «քաշ, առաջամարտիկ, նախահարձակ կտրիճ». այդ իմաստից զարգացավ «հանուն մի բանի մարտնչող՝ պայքարող» նշանակությունը, իսկ հետո՝ ժամանակակից հայերենում ստացավ հակադիր իմաստը՝ «թշնամի, սխերիմ հակառակորդ», մինչդեռ արևմտահայերենում՝ պահպանելով իր նախնական իմաստը, ստացավ նաև «1. մրցակից, մրցորդ, 2. շեմպիոն» նշանակությունները.— երեկ զարգարում նշանակում էր երեկո, համապատասխանաբար՝ գերեկ (ց նախդիր + երեկ) նշանակում էր մինչև երեկո. ժամանակի ընթացքում

երեկ ստացավ «նախընթաց օրը», իսկ ցերեկ՝ «օրվա մի մասը՝ առավոտից մինչև երեկո» նշանակությունը. երկու բաներն էլ «երեկոյին» հակադիր իմաստ են արտահայտում.— գրաբարյան այդ սրուսբաց, առավոտ» բառի այգուց տրական հոլովը նախապես նշանակում էր «առավոտյան», հետագայում էգուց (այլ է պատմական հնչյունափոխությամբ) ստացավ վաղը նշանակությունը, ինչպես որ բարբառներում էլ առավոտ նշանակում է և՛ «առավոտյան պահը», և՛ «վաղը».— վաղ բառը նշանակում է «շուտ, կանուխ» և «էգուց, հաջորդ օրը»:

4. Իմաստների փոխնաջօրում. այսինքն՝ բառի հին իմաստի կորուստ, «մահացում» և նոր իմաստի ձեռքբերում, այլ կերպ ասած՝ բառի նախկին իմաստի փոխարինումը նոր ուղղակի իմաստով. օրինակ՝ սեղան նշանակել է «զոհարան, բազին», այժմ այդ իմաստը չունի. ուղղակի իմաստն է «կահույքի մի տեսակ առարկա».— ծախել նշանակել է «սպանել, ոչնչացնել», այժմ՝ «վաճառել», խաղալ՝ «շարժվել, ընթանալ», այժմ՝ «խաղ անել», խնդրել՝ «օրոնել, փնտրել», այժմ՝ «դիմելով մի բան ուզել, խնդրք ներկայացնել», հույզ (գրք. յույզ)՝ «սրտնելք, փնտրուք», այժմ՝ «հուզմունք, հոգեկան խռովություն. զգացմունք», դեղ նշանակել է խոտ, այժմ այդ իմաստը չի պահպանել և այլն, և այլն:

Իմաստների փոխհաջորդումը կարող է զուգորդվել իմաստի ընդլայնման, նեղացման կամ քեռացման հետ, սակայն դրանք իմաստի զարգացման տարբեր գործընթացներ են. Այսպես, օրինակ, գրաբարյան ակն բառն ստանալով սթանկադին քար, անցք, խոռոչ, անիվ» և այլ նշանակությունները՝ ենթարկվել է իմաստի ընդլայնման, և սա իմաստի զարգացման մեկ գործընթաց է, իսկ այն, որ այդ բառը այլևս իր նախկին իմաստով չի պահպանվել, սա էլ մի այլ գործընթաց է.— գրաբարյան հավ «թռչուն» բառը իմաստի նեղացում է կրել և այժմ նշանակում է «քնտանի թռչունների մի տեսակի էգը». քանի որ իմաստի նեղացումը տվյալ դեպքում հանգեցրել է նախկին իմաստի կորուստին, ապա դա նաև իմաստների փոխհաջորդում է.— դեղ բառը նշանակել է «խոտ», այժմ չունի այդ իմաստը, ուրեմն տեղի է ունեցել իմաստների փոխհաջորդում, թեև դեղ բառն այժմ շատ ընդլայնված

իմաստներ ունի.— ունկ (գրաբարյան ունկն) նշանակել է «ականջ, կանթ» և այլն. այժմ չունի ականջ իմաստը.— ախոյան նշանակել է «քաջապես կովոզ, կտրիճ», այժմ նշանակում է «հակառակորդ, թշնամի». կորցրել է նախկին իմաստը, թեև այժմյան իմաստը զգալիորեն ընդլայնվել է (բացի «թշնամի» իմաստից ունի նաև «մրցակից, խաղընկեր» նշանակությունները) և այլն, և այլն: Ուրեմն, իմաստների փոխհաջորդումը նախկին իմաստի բացասումն է և փոխարինումը մի նոր իմաստով, անկախ այն բանից, թե այդ փոխհաջորդումը զուգորդվե՞լ է նաև իմաստի ընդլայնումով, նեղացումով կամ քեռացումով, թե ոչ: Ըստ այսմ, իմաստների փոխհաջորդումը կարելի է դիտել իբրև հետևանքի հետևանք, այսինքն՝ երեք կարգի իմաստափոխական իրակությունների (իմաստների ընդլայնման, նեղացման և քեռացման) հետևանք:

* * *

Իմաստային փոփոխությունների թվարկված շորս տեսակները, որպես իմաստի պատմական զարգացման հետևանքներ, միմյանցից մեկուսացված չեն: Ավելին. բառիմաստի զարգացման պատմական գործընթացում հաճախ միևնույն բառի բովանդակության զարգացման մեջ այդ տեսակները զուգորդում են միմյանց, հանդես գալիս միասնաբար: Այսպես, օրինակ, ակ (գրաբարյան ակն) բառի «անիվ, թանկագին քար, անցք» և այլ իմաստներ ստանալն իմաստի ընդարձակում է, բայց մյուս կողմից՝ նաև իմաստների փոխհաջորդում, քանի որ ակ բառի նախկին ուղղակի իմաստը չի պահպանվել.— հավ բառի այժմյան իմաստը գրաբարյան «թռչուն» իմաստի համեմատությամբ իմաստի նեղացում է, բայց մյուս կողմից դա նաև իմաստների փոխհաջորդում է, քանի որ այլևս «թռչուն» իմաստը չունի.— խոռոչ բառի հիշված մասնագիտական իմաստներից յուրաքանչյուրն, առանձին վերցրած, իմաստի նեղացում է, բայց քանի որ խոռոչ բառը, պահպանելով իր ուղղակի իմաստը, ստացել է նաև մի քանի մասնագիտական (տերմինային) իմաստներ, ապա նա ենթարկվել է իմաստի ընդարձակման և այլն, և այլն:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԵԱՐԸ

ա. Համառոտ պատմական ակնարկ

Ժամանակակից գրական հայերենը զարգացման, մշակման ու կատարելագործման արգեն պատկանելի պատմություն ունի: Անցնելով կազմավորման շրջանից, հաղթականորեն ելնելով նոր գրականության լեզվի իրավունքների նվաճման համար ծավալված գրապայքարի բովից՝ այն դարձավ մեր դասական ու ժամանակակից գեղարվեստական գրականության հարուստ, ճկուն ու գեղեցիկ լեզուն, մամուլի, հասարակական-քաղաքական կյանքի, գիտության ու տեխնիկայի պահանջները լիովին բավարարող հզոր լեզու: Հանդես գալով իրրև գրական լեզու այն ժամանակ, երբ գրաբարը լիիրավ կերպով գործառու՞ էր որպես գեղարվեստական գրականության, գիտության ու մամուլի լեզու՝ մեր նոր գրական լեզուն գրական ժառանգորդությամբ յուրացրեց գրարարի հարուստ ու կենսունակ բառազանձը և միավորեց նոր լեզվի՝ աշխարհարարի բառապաշարին: Մինևույն ժամանակ, մեր ժողովրդի սերտագույն մշակութային կապերը ռուս և եվրոպական ժողովուրդների, իսկ հեռագայում՝ Սովետական Միության եղբայրական ժողովուրդների հասարակական-քաղաքական կյանքի հետ՝ մեր լեզվի բառապաշարը հարստացրեցին տասնյակ հազարավոր նորակերտ բառերով ու նորագույն փոխառություններով: Այս բոլոր աղբյուրներից ածխաածխելիորեն քաղելով իր համար անհրաժեշտն ու կենսունակը, մեր ժամանակակից գրական լեզվի բառապաշարը ամբողջացավ ու ձևավորվեց իրրև ինքնուրույն համակարգ, իրրև հենց ժամանակակից հայերենի բառապաշար, որ ունենալով իր ընդհանրությունները և՛ գրաբարի, և՛ աշխարհարար ժողովրդախոսակցական լեզվի ու առավել մեծատարած ու

կենսունակ բարբառների բառապաշարի հետ, ո՛չ նույնանում է դրանցից որևէ մեկին, ո՛չ էլ այդ բոլորի սոսկական հանրագումարը դառնում:

Ինչպես ամեն մի համակարգ, որ պատմականորեն առաջանում ու ձևավորվում է գոյություն ունեցած մի ուրիշ համակարգի հիման վրա, աշխարհարարի բառապաշարն էլ, իրրև համակարգ, ներկայացնում է պատմական զարգացման երկարատև գործընթացի արդյունք: Մյուս կողմից՝ լինելով ոչ միայն գրական, այլև կենդանի հաղորդակցման ծառայող լեզվի բառապաշար, այն գտնվում է անընդհատ զարգացման, հարստացման ու կատարելագործման գործընթացում, ուստի և նրան, ինչպես և ամեն մի զարգացող երևույթի, հատուկ են զարգացման գործընթացի բոլոր իրողությունները՝ իրենց հակասականությամբ, շեղումներով, զուգահեռություններով, հնի և նորի, իր դարն ապրածի և զարգացողի տարրերի առկայությամբ ու դրանց ներքին պայքարով, մերժելի և ընդունելի իրականություններով և այլն: Մեր աշխարհարար լեզվի բառապաշարի համար այս բոլոր իրողությունների բազմազանությունն ու կենսունակությունը առավել մեծ շահիր են ընդունում պատմահասարակական պատճառներով: Բանն այն է, որ մեր գրական և խոսակցական լեզուները զարգացման, մշակման ու կատարելագործման տարրեր կարգի ներքին (ներլեզվական) և արտաքին (արտալեզվական) գործոնների ու դրանց տարբեր աստիճանի գործունեության ու կենսունակության տենդենցներ են ունեցել պատմական տարրեր ժամանակաշրջաններում: Այդ տեսակետից առաջին կարևորագույն խնդիրը մեր գրական լեզվի բառապաշարի, իրրև նոր, ինքնուրույն համակարգի, պատմական բնութագրությունն է:

Միջին հայերենից հետո մինչև աշխարհարարի, իրրև նոր գրական լեզվի, հաղթանակը մեր գրականությունը հիմնականում գրաբարալեզու գրականություն էր: Մեզ մոտ պատմականորեն ստեղծվել էր երկու լեզուների՝ գրաբարի և աշխարհարարի զուգահեռ գործառուության վիճակ, առաջինն իրրև գրականության, երկրորդը՝ որպես բանավոր հաղորդակցման կենդանի լեզու: Յուրատեսակ միջին դիրք էին գրավում մի կողմից՝ գերազանցապես աշխարհարարյան

համակարգը ներկայացնող և առավել կամ պակաս շահով բարբառային բնույթի աշուղական գրականությունն ու գործարարական գրագրությունները, որոնք ինչ-ինչ շահով միայն ունեին գրաբարարանություններ, մյուս կողմից՝ գրաբարարախոս միջավայրերի (կրոնական միաբանությունների, եկեղեցու) խոսակցական, գերազանցապես գրաբար լեզուն, որ իր հերթին այս կամ այն շահով աշխարհաբարյան տարրերով էր տոգորված՝ ըստ տեղի, խոսողների կարողության և այլ հանգամանքների: Սակայն ինքը՝ աշխարհաբար խոսակցական լեզուն նույնպես միատարր ու միասնական չէր: Ամենից առաջ, պատմական դեպքերի ու դրանց հետևանքով ստեղծված իրադրության մեջ աշխարհաբար խոսակցական լեզուն բաժանված էր երկու՝ արևելյան ու արևմտյան տարբերակների: Այս երկուսն էլ, սակայն, կարելի է դիտել լոկ իբրև վերացություն, ըստ որում դրանցից յուրաքանչյուրը իրականում դրսևորվում էր կամ բարբառների և կամ առավել կամ պակաս շահով մեծ տարածքներ ընդգրկող տարածքային (արևալային) ժողովրդախոսակցական լեզվատարբերակներով: Արևելյան հատվածի համար ժողովրդախոսակցական լեզուն կառելի է համարել արաբալայան բարբառի ու դրա խոսվածքների բնագավառայինը: Արևելյան խոսակցական լեզուն, որին հարում էր որոշ շահով նաև զարաբադյան տարածքի ժողովրդախոսակցական լեզուն՝ զարաբադյան և զանգեզուրյան բարբառների ընդհանրության հիման վրա: Գրանցից դուրս էին մնում մի քանի առանձնացած բարբառներ (Ագուլխի, Մեղրու, Կարճևանի, Կաթավաբերդի, Քրիլխիի և այլն), ըստ որում այս վայրերի բարբառախոս հայությունն էլ, ըստ էության, տարբեր վիճակներ էր ներկայացնում: Քրիլխիի բարբառը, արաբադյան բարբառի հետ ունեցած իր ընդհանրությունների հիմքով, այս կամ այն շահով հնարավոր էր դարձնում փոխադարձ հաղորդակցումը արաբադյան տարածքի ժողովրդախոսակցական լեզուն կրողների հետ, մինչդեռ Ագուլխի, Մեղրու և մի քանի այլ բարբառների կրողներն ավելի մեկուսանում էին դրանցից, և հաղորդակցման համար անհրաժեշտ էր լինում անցնել դարձյալ արաբադյան կամ զարաբադյան տարածքների ժողովրդախոսակցական տարբերակներին. ստեղծվել էր հա-

ղորդակցման յուրահատուկ վիճակ այս կարգի բարբառներով խոսող հայության համար, որ կարելի է կոչել միկրոերկրկենտրոնական վիճակ: Առօրյայում, իրենց միջավայրում այդ կարգի բարբառների կրողները խոսում էին իրենց բարբառով, իսկ այլ բարբառների կրողների հետ հաղորդակցվում էին ժողովրդախոսակցական լեզվով: Մեր ժողովրդի կյանքում պատմականորեն ստեղծված հասարակական-տնտեսական ու քաղաքական գործոնների (արաբատյան տարածքի իբրև տնտեսական, վարչական ու մշակութային կենտրոն) թիադրանքով և արաբատյան տարածքի ժողովրդախոսակցական լեզվի հարաբերական ընդհանրության հիման վրա պայմանավորվեց մեր ազգային լեզվի արևելյան տարբերակի զարգացումը և գրականացումը արաբատյան ժողովրդախոսակցական լեզվի հիմքի վրա: Քրիլխիի բարբառը, չնայած Քրիլխիի հոկայական դերին մեր ազգային մշակութի զարգացման գործում, իր համակարգի առանձնահատկություններով մնաց մի կողմ. նրա և մեր աշխարհաբար գրական լեզվի ընդհանրությունը պահպանվեց այն շահով, կամ գրեթե այն շահով, որչափով գոյություն ունեւ այդ բարբառի և արաբատյան տարածքային ժողովրդախոսակցական լեզվի միջև, և՛ ինչ-ինչ շահով լատենք գրական ազդեցությունների Քրիլխիի բարբառի վրա և ինչ-ինչ ներթափանցումներ Քրիլխիի բարբառից մեր գրական լեզվի մեջ:

Գրական և խոսակցական երկու լեզուների (գրաբար և աշխարհաբար) գոյակցության այս վիճակում ազգային կյանքի ու ազգային նոր գրականության պահանջների բավարարումը առաջ էր քաշում, բնականաբար, նոր գրական լեզվի հարցը. այդ պահանջի արտահայտությունն էր, ինչպես գիտենք, գրապայթարը: Եվ այստեղ, անկախ այն բանից, թե գրապայթարի մեջ ով ինչպես էր ուզում լուծել նոր գրականության լեզվի մշակման հարցը, մեկ խնդրում բոլորն էլ գործնականորեն միևնույն դիրքորոշումին էին հանվում օբյեկտիվորեն. դա բառապաշարի խնդիրն էր: Աշխարհաբարի բառապաշարը խճողված էր սաղավազումներով (ինչպես այն ժամանակ հայկաբաններն էին որակում), այսինքն՝ գրաբարյան բառերի զանազան ձևափոխություններով, օտա-

բարանություններով, մասնավորապես՝ թուրք-պարսկական բառերով:

Մեր գրողների, հայագետների և առհասարակ, բոլոր ուսուցիչների առջև էր գրաբարալեզու գրականութունը՝ հարուստ ու մշակված և, մասնավանդ, միասնական բառապաշարով, և այդ բառապաշարն էր, որ յուրացրեց գրական լեզուն, և նույնիսկ նրանք, սվքեր գտնում էին, թե մեր նոր գրական լեզվի մակարդակին պետք է բարձրանա «ժողովրդրդյան կենդանի լեզուն», գրանից չէին կարողանում խուսափել: Այսպես, օրինակ, Մ. Նալբանդյանը, որ այս գծի ներկայացուցիչն էր ու տեսարանը, իր ստեղծագործությունները գրում էր աշխարհաբարյան քերականությամբ, բայց գերազանցապես գրաբարյան բառապաշարով: Ո՞րն էր գաղտնիքը: Միայն գրական ժառանգորդությունը: Որ գրական ժառանգորդությունը իսկապես կարևոր գործոն էր, դա անուրանալի է և անհերքելի: Բայց կային նաև այլ հանգամանքներ: Գլխացից կարևորագույնն է այն, որ մեր աշխարհաբարի երկու առավել ընդհանրական ժողովրդախոսակցական տարածքային լեզուները (արևելյանը և արևմտյանը աշխարհաբարները), իսկ առավել ևս դրանցից ճշուղավորված բարբառները, հինհայերենյան բառերը պահպանել և գործածում էին պատմական հնչյունափոխություններով առաջացած տարբեր ձևերով (օր. հար-հի-իէր, հաց-խաց-հօց, փատ-փէտ-փէզ և այլն), մինչդեռ գրականության մեջ գործածվող գրաբարածն բառերը, եթե կարելի է այսպես ասել, միջին ընդհանուր ձևերն էին ներկայացնում: Սա ինքնին հնարավոր և նույնիսկ անխուսափելի էր դարձնում գրաբարյան բառաձևերն ընդունելը:

Երկրորդ կարևոր հանգամանքն այն էր, որ թեև շատ բառեր պատմական հնչյունափոխությամբ զանազան ձևեր էին ստացել, բայց շատ բառեր էլ պահպանվել էին բոլորովին անփոփոխ ձևով, ըստ որում դրանք այնպիսի բառեր էին, որոնք պատկանում էին բառային կազմի միջուկային շերտին (օր. սար, քար, պատ, խոսել, վազել, քոնդիլ, տեսել, նայել, շինել, կրել, տանել, մեկ (մի, միս), կանչել, քիթ, սակր (սակոր, սակոս), մազ, հավ, ձու, խոտ և այլն, և այլն): Այս կարգի բառերին էին միանում այն բազմաթիվ

բառերը, որոնք մասնակի փոփոխությունների էին ենթարկվել առանձին բարբառներում և խոսվածքներում, բայց դրանց ընդհանուրը ներկայացնող և գրաբարին մոտեցող ձևերը կենդանի էին և հասկանալի բոլորին. ինչպես՝ սուր (սօր), առու (առն), հարյուր (հարուր, հնրո՞ւր), աչ (աշկ արտասանությամբ), գլուխ (կ'ոխ) և այլն, և այլն: Վերջապես, սրանց էին միանում նաև այն բազմաթիվ բառերը, որոնք պատմական ընդհանուր հնչյունափոխությամբ էին տարբերվում գրաբարյան, ավելի ճիշտ՝ հինհայերենյան ձևերից, տարբերվում էին հնչյունաբանորեն (արտասանությամբ), ըստ որում այստեղ գրաբարյան ուղղագրությունն էր պահպանվում ըստ էության, և ոչ թե գրաբարյան բառաձևը՝ հնչյունաբանորեն (օր. մարթ, որթի, կեխտ, բարցր, քախցր, ախիկ և այլն): Այս բոլորը ժողովրդախոսակցական կենդանի լեզվի ձևեր էին, որոնք ընդհանուր կամ գրեթե ընդհանուր էին և ինքնին հնարավոր էին դարձնում պահպանել ու գործածել նոր գրական լեզվում՝ գրաբարյան ուղղագրությամբ, բայց ժամանակակից արտասանությամբ:

Կարևորագույն հանգամանքներից մեկն էր նաև այսպես կոչված գրաբարյան բառերի «աշխարհաբարացումը»: Հին հայերենը, որ գրաբարի խոսակցական հիմքն էր, գրաբարի ընթացքում փոփոխությունների ենթարկվեց և քերականական, հնչյունական ու բառային կազմի ծավալվող փոփոխությունների հետևանքով աստիճանաբար մասացավ՝ իր տեղը զիջելով միջինհայերենյան համակարգին, իսկ սա էլ՝ աշխարհաբարյան համակարգին: Հինհայերենյան բառերի հնչյունական ձևերի փոփոխությունները, որ տվյալ դեպքում մեր ըննության առարկային են վերաբերում, երկու կարգի են բաժանվում՝ ընդհանուր կամ համահայկական և մասնակի կամ բարբառային: Անկախ այն բանից, թե այս երկու կարգի հնչյունափոխություններից ո՞րն է առաջացել հին հայերենի ընդերքում, ո՞րը ավելի ուշ, դրանցից աշխարհաբարի համար կարևորագույնն են առաջին կարգին պատկանողները: Այսպես, օրինակ, հին հայերենում ունեինք լոյս, որի մեջ ոչ երկբարբառ էր, կազմված ու վանկարար ձայնավորից և ի ոչ վանկարար ձայնորդից (Օi). ժամանակի ընթացքում այդ երկբարբառը վերածվեց ույ երկբարբառի, այսինքն՝ առաջին բա-

դարձիւր դարձաւ ու ձայնավորը և ստացվեց միջինհայերեն-
յան և աշխարհաբարբայան ընդհանուր կամ համաժողովրդա-
կան լույս ձևը. այս ձևից է, որ առաջացել են մեր արդի բար-
բառների բազմաթիւ տարբերակները (լուս, լիս, լուիս,
և այլն), և այս ձևն է, որ պահպանվել էր ոչ միայն աշխար-
հաբարբայան երկու տարածքային ժողովրդախոսակցական լի-
զուններում, այլև նոր գարեբի գրաբարբայան արտասանութեան
մեջ մինչև մեր օրերը (այժմ էլ գրում ենք զրաբար լուս,
կարդում՝ լույս): Գրաբարբայան բառերի այս արտասանությու-
նը, ինչպես գիտենք, ունի նաև իր անվանումը՝ գրաբարի
ավանդական արտասանութիւնը, ըստ որում բոլոր հայերը
գրաբար կարդում են միայն ավանդական արտասանութեամբ:
Այլ կերպ ասած, համահայկական հնչյունափոխութիւննե-
րով առաջացած նոր ձևերը՝ աշխարհաբարբայան ձևերը, հան-
գեցրել էին գրաբարի արտասանութեան (ընթերցանութեան)
աշխարհաբարբայան և ամենուրեք սովորեցնում էին գրա-
բարը հենց այդ աշխարհաբարբայան արտասանութեամբ:
Գրութեան մեջ, ընդհանուր առմամբ, պահպանվում էր հին
ուղղագրութիւնը, բացառութեամբ գրաբարբայան աւ երկբար-
բառի օ գրով փոխարինումից և առանձին բառերի ուղղա-
գրական փոփոխութիւններից, որոնք որոշակի համակարգ
չեն ներկայացնում և սովոր զեպքում առանձնակի կարեւ-
րութիւն չունեն: Քե ի՛նչ նշանակութիւն ունեն գրաբարբայան
բառերի արտասանութեան աշխարհաբարբայանը, կարելի
է պատկերացնել համահայկական պատմական հնչյունափո-
խութիւններից միայն մի բանիսը թվարկելով: Գրաբարբայան
երկբարբառները վերացել էին՝ վերածվելով կամ պարզ ձայ-
նավորների (օր. աւ > օ), կամ ձայնավորի ու բաղաձայնի (և
հակառակը) կապակցութեան (օր. եա > յա, իւ > յու, ուա >
վա). բառակազմում ա և ե պարզ ձայնավորները դարձել էին
համապատասխանաբար վո և յե բաղաձայն + ձայնավոր կա-
պակցութիւն. ընկել էր բառակերպի ձայնավորահարգող յ կի-
սաձայնը (տղայ > տղա, գնայ > գնա և այլն), բառակազմի
յ կիսաձայնը վերածվել էր ճ հագագայինին (յիսուն > հի-
սուն, յարգ > հարգ, յեսան > հեսան և այլն), գրաբարբայան
երկու լ-երից մեկը վերածվել էր հտնալեզվային ձայնեղ
շփականի (ղ) և այլն, և այլն: Այս բոլոր փոփոխված ձևերը,

որոնք գրվում էին գրաբարբայան ուղղագրութեամբ, բայց կար-
դացվում էին հնչյունափոխված ձևով, այսինքն՝ աշխարհա-
բարբայան արտասանութեամբ, գրաբարբայան բառերի մի զգալի
մասին արդեն իսկ տալիս էին աշխարհաբարբայան կերպա-
բանք: Գրանց պետք է ավելացնել նաև ձայնեղ պայթական-
ների ու պայթաշփականների խլացում-շնչեղացումը որոշ
դիրքերում (օրինակ՝ ք-ից հետո), որ նույնպես ընդհանրա-
կան երևույթ էր աշխարհաբարբայան համար (հաշվի շենք առնում
առանձին բարբառները): Ինքնին հակառակ է, որ թվար-
կած հանգամանքները բավականաչափ հիմք էին տալիս ուղ-
ղակիրենն օգտագործելու գրաբարբայան հարուստ բառապա-
շարի հիմնական մասը հենց այն ձևով, որոնք ընդհանուր
էին գրաբարին ու աշխարհաբարին կամ աշխարհաբարին ու
աշխարհաբարացրած գրաբարին: Գրանք ժողովրդախո-
սակցական կենդանի լեզվի բառեր էին ու դրանց կենդանի
արտասանութիւնը՝ հին, ավանդական գրութեամբ:

Վերջապես, ժողովրդախոսակցական լեզվում գործածվող
բազմաթիւ բառեր նոր փոխառութիւններ էին, առավելա-
պես թուրք-պարսկական, որոշ դեպքերում միայն՝ ռուսա-
կան (ստաբան, ստուլ, ակուշկա (ակոշկա), բոշկա (պոժկա),
շաշկա, ստրածնիկ, շաշկա, կրուշկա, շայնիկ և այլն): Ժողո-
վուրդը, որ գիտեր աղբրեղաներեն, ինչ-որ չափով նաև ռու-
սերեն (արևելյան հատվածում) կամ թուրքերեն (արևմտյան
հատվածում), գիտեր նաև, որ դրանք հայերեն բառեր չեն,
իսկ մտալորականութիւնը՝ առավել ևս. ուստի և դրանց փո-
խարինումը հայերեն, թեկուզև ժողովրդախոսակցական
լեզվում չպահպանված բառերով, միանգամայն օրինաչափ
էր ազգային գրական լեզվի մշակման գործընթացում:

Այս բոլոր հանգամանքների շնորհիւ գրական ժառանգոր-
դութիւնը օրյեկտիվորեն դառնում էր աշխարհաբար գրա-
կան լեզվի բառապաշարի մշակման, հարստացման ու կա-
տարելագործման հիմնական գործոնը: Բայց բառապաշարը,
այսինքն՝ գրութիւնն ունեցող բառերի գրական ժառանգոր-
դութիւնը դեռևս բոլորը չէ: Կար, և այժմ էլ կա, մի ավելի
ժանրակշիռ իրողութիւն. դա բառակազմական միջոցների
գրաբարբայան համակարգի յուրացումն էր: Գրական ժառան-
գորդութեամբ ժողովրդախոսակցական բառերի հետ յուրաց-

նելով բառերը գրաբարյան կամ համահայկական ձևերով՝ մեր գրական լեզուն յուրացրեց բառակազմության ոչ միայն գրաբարյան կաղապարները, այլև նյութական միավորները, և նույնիսկ բաղադրությունների գրաբարյան հիմքերը, և մեր լեզվի նորակերտ բառերը կազմվեցին գրաբարյան «տարազով»։ Ավելին. սկզբից ժողովրդախոսակցական լեզվի բառապաշարի գրականացումը, որ արտահայտվեց ոչ միայն ոչ հայերեն (նաև թյուրիմացաբար այդպես համարվող) բառերի փոխարինումով գրաբարյան կամ նորակերտ հայացի բառերով, այլև ժողովրդախոսակցական լեզվում գործածվող, բայց կազմության մեջ գրաբարատիպ բառերի գրականացումով՝ վերածելով դրանք գրաբարատիպ կաղապարների։ Այսպես, ոչ միայն դամբել, ևայբանդ, շորան, բամբակի (բամբակ), սալբանդ, շուշա և նման բազմաթիվ բառեր փոխարինվեցին համապատասխանորեն երկաթագործ, պայտառ, հովիվ, ծխախոտ, սալահատակ, ապակի բառերով, այլև աչի բծիչ-ը՝ ակնարայծ-ով, պարտաւտեր-ը՝ սլարտաւտեր-ով, պատաշար-ը՝ սուրճար-ով, (ծխախոտ) քաշի-ը՝ ծխի-ով, ստատեղ-ը՝ ստնատեղ-ով, շարաչի-ը՝ շարակն-ով և այլն, և այլն։ Այս երևույթը սկիզբ է առել աշխարհաբարը գրական մակարդակին բարձրացնելու և գրական մշակման ենթարկելու հենց սկզբից և առաջ է բերել յուրօրինակ երկվություն մեր գեղարվեստական գրականության լեզվի մեջ։ Մի կողմից մեր գեղարվեստական գրականության լեզուն մշակվում է գրական լեզվի օրինաչափություններով, իր մեջ առնելով նաև ժողովրդախոսակցական լեզվի բառ ու բանը, դրանք գրականացնելով կամ անփոփոխ կերպով, մյուս կողմից ստեղծվում է ժողովրդախոսակցական լեզվով գրականությունը։ Այս ուղղության հիմնադիրն է Խ. Աբովյանը, որի «Լեռք շայաստանի» վեպի լեզուն արևելյան ժողովրդախոսակցական լեզուն է՝ ստեղծագործական բովով անցած և Քանաքեռի բարբառի զգալի ազդեցությամբ, իր հետագա զարգացումով այս ուղղությունը ստացավ յուրահատուկ գրական գործառնություն, հանդես գալով ոչ թե իրեն առանձին հեղինակների նախասիրության կամ մտայնության արտահայտություն, այլ որպես գեղարվեստական գրականության որոշակի ժանրերի ու թեմատիկայի և բուն իսկ ստեղծագոր-

ծության բնույթով պայմանավորված լեզու։ Այս է պատճառը, որ միևնույն հեղինակի միևնույն ժամանակաշրջանում գրած ստեղծագործությունների, նույնիսկ միևնույն ստեղծագործության մեջ մերթ հանդիպում ենք ժողովրդախոսակցական լեզվին, մերթ՝ «մաքուր» գրական լեզվին։ Լավագույն օրինակներից մեկն է. Հ. Քումանյանի «Անուշ» պոեմը, որ, ամբողջությամբ վերցրած, ժողովրդախոսակցական լեզվի ստեղծագործական մշակման ամենարևոտի նմուշներից մեկն է։ Այս ստեղծագործության մեջ ունենք, օրինակ.

1. Ու պարից հետո լին հրապարակ
 Բաց արին մեջտեղն արձակ զլիստան.
 Զուռնաչին փշեց կոխի եղանակ,
 Ահել ու զահել իրարով անցան։

2. Ա՛խ, ծաղիկներն էս աշխարհքում
 Տանջվում են միշտ էսպես զուր,
 Տըրտրվում են ու թառամում
 Միրտները սև ու տխուր։

3. Էս գիշեր, կեսը կըլնի գիշերով,
 Դեռ չէի կպցրել աշքըս տեղի մեջ.
 Քունս էլ է կորել, ջանս էլ էն
 վաղվա,
 Ամեն մի բանից մնացել եմ խեղճ։

4. Կանչում է կրկին, կանչում անդադար
 էն լծնազ երկրի կարոտը անքուն.
 Ու, թևերն ահա փռած տիրաբար,
 Քաշում է հոգիս, թռչում զեպի տուն։

Այս շորս հատվածներից առաջին երեքի լեզուն ժողովրդախոսակցական լեզուն է, իսկ շորորդը՝ գրական լեզվի վսեմ ոճը, որ թելագրվել է հատվածի բովանդակությամբ։ Կարևոր է այն, որ առաջինը և շորորդը հեղինակային խոսքն են ներկայացնում և, շնայած դրան, լեզուն որոշակիորեն տարբեր է՝ բովանդակության տարբերության համապատասխան։ Եթե ուղադրությամբ դիտարկենք այս հատված-

ների լեզուն, ապա կտեսնենք, որ լեզվական տարբերությունն ստեղծողը բառերն ու դարձվածներն են: Մի կողմ թողնելով ոճական տարբերությունները, որոնք ծառայում են հերոսների խոսքի տիպականացմանը, և քերականական միակ ժողովրդախոսակցական ձևը կանոնական գրականի փոխարեն (արհն փխ. արեցին), ապա առաջին երեք հատվածների ժողովրդախոսակցական լեզվի հատկանիշներն են հետևյալ բառերն ու դարձվածները. լեն, քաց անել, արձակ «ընդարձակ», գլխատուն, զուռնաչի, փշել «նվագել», կոխ, անել ու ջանել, իրարով անցնել (1), էս, աշխարհի, էսպես, զուր, սիրաները սև (2), էս, ըլնել «լինել», աչք կպցնել, տեղ «անկողին», էունը կորչել, ջան, էն, վազվա «նախկին», խեղճ մնալ (3):

Ստեղծագործական երկու լեզվական համակարգերի առկայությունը բնորոշ է մեր բոլոր գրողներին, թե՛ արձակագիրներին, թե՛ մանավանդ, բանաստեղծներին, մինչև մեր օրերը: Իհարկե, գրողներից յուրաքանչյուրն ունի առանձնահատկություններ (առավել չափով գրականացրած ժողովրդախոսակցական լեզու, դեպի բարբառայնություն միտող ժողովրդախոսակցական լեզու և այլն), ինչպես և անհատական ստեղծագործական մշակման ու թեմատիկայի թեմատիկայից առանձնահատկությունները, սակայն այս դեպքում մեզ համար կարևորը դա չէ, այլ սոսկական փաստը: Բառապաշարի համար այս իրողությունը կարևոր է նրանով, որ մեր գրական լեզվի բառապաշարի մի զգալի մասը գալիս է հենց այս՝ ժողովրդախոսակցական լեզվից, դրա բառակազմական միջոցներով ու կաղապարներով: Ուստի և այն ամենին, որ մենք անվանեցինք ժողովրդախոսակցական լեզվի կամ աշխարհաբարի ու գրաբարի համար ընդհանուր բառապաշար, պետք է ավելացնել բուն ժողովրդախոսակցական լեզվից գրական աշխարհաբարին անցած բառերը, և մանավանդ, դարձվածաբանությունը, ըստ որում մեր գրական լեզվի դարձվածաբանության բացարձակապես գերիշխող մասը աշխարհաբարյան է: Վերջապես, աշխարհաբար գրական լեզվին գրական ծառանգորդությամբ անցած գրաբարյան բառերի վիթխարի զանգվածին զուգընթաց մեր գրական լեզվի բառապաշարի մեջ են մտել գրաբարյան փոխառություն-

ները, որոնք հարստացրել ու հարստացնում են մեր գրական լեզվի բառապաշարը բազմաթիվ բառերով:

Այս համառոտ պատմական ակնարկը ցույց է տալիս, թե ինչպիսի ճանապարհ է անցել աշխարհաբարի բառապաշարն իր զարգացման ընթացքում, ինչ աղբյուրներից և ինչպես է օգտվել այդ աղբյուրներից յուրաքանչյուրից ինչպես մինչև գրական լեզվի մակարդակին բարձրանալը, այնպես էլ գրական լեզու դառնալուց հետո, այլ կերպ ասած, ինչպես է գոյացել աշխարհաբար գրական լեզվի բառապաշարը պատմականորեն:

բ. Բառապաշարի ծագումնաբանական դասակարգությունը

Բառապաշարի ծագումնաբանական դասակարգությունը բառերի խմբավորումն է ըստ այն աղբյուրների, որոնց նրանք պատկանել կամ պատկանում են և որոնցից մուտք են գործել աշխարհաբար գրական լեզվի բառային կազմի մեջ: Այս դեպքում, վերանայով բառապաշարի զարգացման պատմական ընթացքից, բառապաշարը դիտում ենք որպես մի կայուն ամբողջություն, որ իր մեջ է առնում այն բոլոր բառերը, որոնք գործածվել են և կամ գործածվում են աշխարհաբարով գրված ողջ գրականության և մամուլի մեջ, անկախ նրանց գործածականության աստիճանից, գործառական ոլորտից, տարբերակային բնույթից և այլն: Այսպես, օրինակ, հոգնաբեզուն (գրաբար՝ յոզնաբեզուն) բառը գործածվել է աշխարհաբար գրականության մեջ, մասնավորապես պոեզիայում, թեև ոչ մեծ հաճախականությամբ: Իր գործածականության աստիճանով նա կարող է բնութագրվել իբրև սակավ գործածական բառ, գործառական ոլորտով՝ որպես բանաստեղծական լեզվի բառ, իսկ ծագումնաբանական տեսակետից՝ որպես գրաբարյան փոխառություն: Զ. Թուրմանյանի վերը բերված հատվածներում վազվա բառը, որ նշանակում է «վազուցվա, անցյալի, նախկին», ժողովրդախոսակցական լեզվի բառ է, ինչպես և աշխարհի-ը, գլխատունը-ը, ուստի և ծագումնաբանական մոտեցումով դրանք ժողովրդախոսակցական լեզվից գրական աշխարհաբարին

անշած բառեր են: Այս մոտեցումով աշխարհաբար գրական լեզվի բառապաշարը կարելի է դասակարգել հետևյալ ձևով.

1. Համահայկական բառեր.— Այն բոլոր բառերը, որոնք եղել են հին հայերենում, գործածվել են զրաբարում, միջին հայերենում և պահպանվել են ոչ միայն մեր գրական լեզվում, այլև ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում (բոլորում կամ, գոնե, մեծադույն մասում), ինչպես՝ ջուր, հաց, մարդ, եղբայր, տուն, վագել, գործ, բան, աչք, գլուխ, ձեռք և այլն: Այս դեպքում կարևորություն չունեն բառերի տարբեր, հնչյունափոխված ձևերը ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում, ըստ որում զրանք ներկայացնում են համահայկական բառի պատմական ձևափոխությունները: Այս կարգին են պատկանում նաև միևնույն բառի այն փոխառությունները, որոնք կենսունակ են և՛ գրաբարում, և՛ մեր գրական լեզվում, և՛ բարբառներում (օր. մանուշակ, հրաման, ձյուր, ոչխար և այլն), ինչպես և այն փոխառությունները, որոնք կատարվել են զրաբարյան դարաշրջանում՝ իբրև կենդանի լեզվի բառ և դարձել ինչպես բարբառների ու աշխարհաբար ժողովրդախոսակցական լեզուների, այնպես էլ մեր երկու գրական լեզուների սեփականությունը (օր. քառուճ, զմուռս, եպիսկոպոս, կիրակի, մեռն և այլն):

Այս կարգին պատկանող բառերը, որոնք հսկայական թիվ են ներկայացնում, մեր աշխարհաբար գրական լեզվի բառապաշարի հիմքն են կազմում: Գրանք հայոց լեզվի բառապաշարի այն միջուկն են, որ դարերի ընթացքում ամրացել, հաստատուն կերպով պահպանվել է և հայերենի բոլոր գրականությունների բառապաշարի հիմքը դարձել: Բացի իրենց թանկացյալն մեծությունից, այդ կարգի մեջ մտնող բառերը բնութագրվում են մեծ կենսունակությամբ և, մանավանդ, բառակազմական հսկայական դերով, ըստ որում զրանց զգալի մասն են կազմում պարզ (արմատական) բառերը և որևէ կարգի ածանցով պահպանված արմատները (օր. ուտել, ձեռք, հանել և այլն): Բավական է ասել, որ միայն գլուխ բառից (գլուխ-որպես առաջին բաղադրիչ) ունենք ափելի քան 150 բաղադրյալ բառ, զործ բառից՝ 176, երկինք

բառից՝ 138, երկու (երկ-, երկա-, երկվա-) բառից՝ ափելի քան 550 և այլն¹:

2. Համագրական բառեր.— Այն բոլոր բառերը, որոնք զրաբար մատենագրության մեջ գործածվել են որպես գրական բառեր և կամ մուտք չեն գործել ժողովրդախոսակցական լեզվի մեջ, կամ էլ անցել են զրան և բարբառների իրեն գրական փոխառություններ, իսկ նոր գրական լեզվի մեջ (երկու տարբերակներում էլ) գործածվել ու գործածվում են գրական ժառանգորդությամբ, ինչպես՝ ծաղկավառ, զարնաճագեղ, աշունհարթ, շաղկերատել, վարդասեռ, շոշափել, ֆերական, փիլիսոփա, հյույժ, բազմաբեղուն, բյուրագգի, բյուրապատիկ, փառանեղ, սփանջելագեղ, գանգրաներ և այլն: Այս բառերը, ինչպես տեսնում ենք, մեծ մասամբ բաղադրյալ բառեր են կամ էլ գրական փոխառություններ զրաբարում՝ 5-րդ դարից մինչև 10-րդ դարը (հյույժ, փիլիսոփա, զեմյուր և այլն): Իհարկե, դա չի նշանակում, թե այս կարգին պատկանող բառերը բոլորն էլ բաղադրյալ բառեր են. ճիշտ է այն, որ իբրև գրական բառեր, զրանց մեծագույն մասը բաղադրյալ բառերն են կազմում, և դա կարելի է համարել այս կարգի մեջ մտնող բառերի առաջնակարգ հատկանիշներից մեկը, ըստ որում դիտենք, որ բերված բառերը (զարնաճագեղ, հիագմայլ, սփանջելագեղ, ճանաչելափայլ և այլն) իրոք գրական բառեր են: Սակայն զրանց կողքին ունենք նաև բազմաթիվ պարզ բառեր, որոնք մեր գրական լեզվին են անցել միայն գրական ժառանգորդությամբ և աշխարհաբար ժողովրդախոսակցական լեզվում ու բարբառներում ոչ միայն չեն գործածվել, այլև այժմ ևս չեն գործածվում. այդպիսի բառերից են՝ իղն, անուրջ, սյուր, աննչ, զիրգ, հրունգ, դաստակ, զինջ, լուրք, բոսոռ, աշխետ, կիրք, ավարտ, զարշ, զես, զեղմ և այլն: Այս պարզ բառերը, սակայն, որոշակիորեն տարբերվում են վերը բերված բաղադրյալ բառերից: Բանն այն է, որ էթե այս վերջինների մասին դիտենք, որ գրական լեզվի բառեր են, ուստի և չեն գործածվել ժողովրդախոսակցական լեզվում նույնիսկ հինհայերենյան շրջա-

¹ Տվյալները վերցնում ենք մեր «Արդի հայերենի բացատրական բառարանից»:

նում կամ գործածվել են որպէս գրական փոխառութիւններ, ապա պարզ բառերի մասին այդ բանը ասել չենք կարող. ընդհակառակն, բերված պարզ բառերի մեծագույն մասը հին հայերեն խոսակցական լեզվում գործածական են եղել և գրանից էլ անցել են գրաբարին. գրա ապացույցն է այն, որ բերված բառերի արմատական ձևերը թեև չկան բարբառներում (կամ կան միայն առանձին բարբառներում), ապա նրանցից կազմված ածականներ ու բայեր ունենք և՛ աշխարհաբար ժողովրդախոսակցական լեզվում, և՛ բարբառների մի զգալի մասում (օր. գառչ արմատից՝ գառչել, գառչելի, գչուտ արմատից՝ գոնել և այլն): Այս պատճառով էլ սրանք համագրական բառերի կարգին հատկացնելը որոշ գեպքերում կարող է պայմանական լինել. թեև շատ բառերի մասին, իհարկե, կարող ենք որոշակիորեն այդ բանն ասել (գեղով, գես, լուրթ, իղձ, քսոտ և այլն):

Այս կարգին պատկանող բառերը մեր գեղարվեստական ու գիտական գրականութեան հարստութիւնն են կազմում, և նկատի ունենալով դրանց հսկայական քանակութիւնը, կարելի է ասել, թե գրանք նույնպէս մեծ կշիռ ունեն ժամանակակից հայերենի բառապաշարի մեջ:

3. Միջինհայերենյան բառեր.— Այս կարգին են պատկանում այն բառերը, որոնք ավանդիկ են միջին հայերենով գրված գրականութեամբ, որից էլ անցել են աշխարհաբար գրականութեանը՝ առավել կամ պակաս գործածականութեամբ: Այդ կարգի բառերից են, մանչ, մանչուկ, աղեկ, ելակ, աթաբեկ, ակոս, բեղ, խաթուն, տղեկ, այսն, բեկ, մաւաջախտ, ճուտ, կտրիճ և այլն: Այս կարգին պատկանող բառերը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբն են կազմում այն բառերը, որոնք իսկապէս միջին հայերենի բառեր կարելի է համարել: Գրանք այն բառերն են, որոնք կազմվել են միջինհայերենյան շրջանում (միջինհայերենյան գրական բառեր), ինչպէս՝ մանրուսում, աղվեսագիր, դատաստանագիր, կամ էլ փոխառվել են այլ լեզուներից միջինհայերենյան շրջանում, ինչպէս՝ բեղ, աթաբեկ, մաւաջախտ, ելակ, խաթուն և այլն: Մյուս խումբն են կազմում այն բառերը, որոնք ավանդիկ են միայն 10—11-րդ դարերից և ավելի հետո, սակայն ո՛չ միջինհայերենյան բառակազմութիւն-

ներ են, ո՛չ էլ այդ շրջանի փոխառութիւններ. դրանք հայա-նապես եղել են նաև հին հայերենում (ժողովրդախոսակցական լեզվում), բայց մուտք չեն գործել գրական լեզվի (գրաբարի) մեջ: Այդպիսիներից են, օրինակ, բուշ, կեռ, կռանալ, կտրիճ և այլն: Որ գրանք իսկապէս պետք է եղած լինեին հին հայերենում, հաստատվում է գրանց ծագմամբ կամ կազմութեամբ: Այսպէս. բուշ և կեռ հնդկփրոպական ծագումով բառեր են (օրնիկ հայերեն բառեր), որոնք մինչև այսօր էլ գործածական են ոչ միայն բոլոր բարբառներում ու ժողովրդախոսակցական լեզվում, այլև գրական լեզվում. կտրիճ հին հայերենի բառ է իր կազմութեամբ, բայց որում ինձանցը հին հայերենում էլ (գրաբարյան շրջանում) արդեն կենսունակ չէր, իսկ հետագայում բոլորովին վերացավ. հասկանալի է, որ այդ ածանցով կազմված բառերը պատկանում են հին հայերենին: Թուն միջինհայերենյան բառերը, այսինքն՝ այն բառերը, որոնք կազմվել են միջին հայերեն գրական լեզվում, դեռևս լիովին ուսումնասիրված չեն, բարաններում դրանք բերվում են հաճախ իբրև գրաբարյան բառեր, այդ պատճառով էլ դժվարանում է միջին հայերենից ժամանակակից գրական լեզվին անցած բառերի որոշումը: Համենայն դեպս, հայտնի բան է, որ այդ բառերի թիվը մեծ չէ, և կարելի է ասել, որ դրանք առանձնապէս մեծ դեր չեն խաղում աշխարհաբար գրական լեզվի բառապաշարում:

4. Նոր գրական բառեր.— Այս կարգին են պատկանում բոլոր նորակերտ հայերեն բառերը, որոնք ընդհանուր են թե՛ արևելյան, թե՛ արևմտյան գրական լեզուներին, ինչպէս՝ մանրադիտակ, մանրէ, սավառնակ, հաճանակ, օգանակ, հազրահանգես, կորզանալ, բարեխիզ, բարեփոխել, ախտահանել, բուրմամակեա, ծաղկաբույր, գանգատավոր, դաշնամուր, դաշնակահար, դաշնադրություն և այլն, և այլն: Այս կարգին են պատկանում նաև երկու գրական լեզուների համար ընդհանուր նոր և նորագույն փոխառութիւնները, ինչպէս՝ միլիոն, մաշար, սիմվոլ-սիմբոլ, սովետ (արևմտ. սովիետ), ակադեմիա և այլն:

Այս կարգի մեջ մտնող բառերն իրենց քանակով ամենից ավելի շատ են, և դա զարմանալի չէ. մեր գրական լեզուն զարգացող կենդանի լեզու է, և նրա բառապաշարի հարստա-

ցումը, ինչպես ստորև կտեսնենք, տեղի է ունենում առավել-
լապես նորակազմությունների ու փոխառությունների միջո-
ցով:

5. Մասնավոր գրական բառեր.— Այս կարգին պատկա-
նում են այն բառերը, որոնք հատուկ են միա՛յն արևելյան
կամ միա՛յն արևմտյան գրական հայերենին, այլ կերպ
ասած, սրանք նոր գրական բառերի այն մասն են, որ կազմ-
վել ու գործածվում են երկու գրական լեզուներից միայն մե-
կում: Գրանցից են. հաղթաթուղթ—հաղթաֆարտ, ծուգիր
(հանդեսի, երկկույթի)—հայտագիր, հեռախոս—հեռաձայն, հե-
ռուսացույց—հեռացու (հեռապատկեր, հեռատեսիլ), հեծա-
նիվ—հեծելաճիլ, պաղպաղակ—սառնաեռույշ և այլն: Այս կար-
գին են պատկանում նաև այն նոր փոխառությունները, որոնք
տարբեր աղբյուրներից փոխառված լինելով՝ տարբեր էլ ձև
ունեն յուրաքանչյուրում, ինչպես և նրանք, որոնք մեկում
գործածվելով, մյուսում փոխարինվել են հայակազմ բառով,
ինչպես՝ բուֆետ—պլուֆե, սպորտսմեն—սպորսմեն, սինդի-
կատ—անտիֆա, տանկ—հրասայլ, կալիտալիզմ—դեմամաթի-
րություն, մինիստր—հախարար, անսամբլ—համույթ և այլն:

6. Աշխարհաբարյան բառեր.— Այն բոլոր բառերը, որոնք
չեն գործածվել գրաբարում (հին շրջանում), բայց գործածա-
կան են ժողովրդախոսակցական լեզվում և դրանցից էլ ան-
ցել են գրական լեզվին, ինչպես՝ մատղաշ, հզմել, կկզել,
թոնքորայ, բոթել, լո՛(տալ), կուլ(տալ), մկրկալ, մուգ,
շիվ, պլպլալ, փիփերթ և այլն: Այս բառերի կարգին պետք է
հատկացնել նաև 3-րդ կետի այն բառերը, որոնք համարե-
ցինք հին հայերենում գոյություն ունեցած բառեր, ինչպես՝
թուշ, կեռ, կառնալ, կուրի՛ն և այլն: Այդպիսին են նաև այն
նոր փոխառությունները, որոնք կենդանի հաղորդակցման
ճանապարհով անցել են բարբառների ու ժողովրդախոսակ-
ցական լեզվին, իսկ սրանցից էլ՝ գրական աշխարհաբարին,
ինչպես՝ բուն, գոզալ, փողոսք, վառգ, շայ, լիմոն, շարուփ և
այլն:

Այն հանգամանքը, որ աշխարհաբարյան բառերը, մանա-
վանդ դրանց արմատական ձևերից շատերը, ունեն պատկա-
ռելի հնություն, թույլ կտա հետագայում, դրանց ցանկն ամ-
բողջացնելուց հետո, առանձնացնել դրանք և դիտել որպես

համահայկական բառերի ենթախումբ, որ վերը բերվածնե-
րից կտարբերվի միայն նրանով, որ գրաբարում (հին շրջա-
նում) չի գործածվել:

Այս շերտին պատկանող բառերը զգալի թիվ են կազմում
մեր գրական լեզվում, բայց, ցավոք, մինչև այժմ էլ առանձին
ուսումնասիրության առարկա չեն դարձել, և դեռևս դժվար է
դրանց ամբողջական ցանկը կազմել:

7. Հին կամ գրաբարյան բառեր.— Այս կարգին են պատ-
կանում այն բառերը, որոնք գործածական են եղել գրաբար-
ում կամ հայտնապես գրաբարյան բարդություններ ու
ածանցավորներ են, ժառանգորդաբար չեն անցել մեր գրա-
կան լեզվին, այլ գրողների կամ գիտնականների կողմից վեր-
ցրվել են ուղղակի գրաբարից և գործածվել առավել կամ
պակաս հաճախականությամբ: Այսպես են, օրինակ, կոբու-
սիչ, կույրգիւրայն, հոգևորեզուն, ձիադարմա՛ն, ծիծաղա-
խիտ, կոռովամուրջուն, կառչենդ, դաշխուրան, կո՛ւնչական,
հակակալել, հակակայություն, պատվասիրել, ֆաղաֆամայր
և այլն: Այս բառերը տարբերվում են համագրական բառե-
րից նրանով, որ վերջիններս աշխարհաբար գրական լեզվին
են անցել պատմականորեն, գրական ժառանգորդությամբ,
մինչդեռ հին կամ գրաբարյան բառերը ժառանգորդաբար չեն
անցել, այլ՝ պարզ փոխառությամբ: Այսպիսով, այս կարգին
պատկանող բառերը, նույնանալով համագրական բառերին
իրենց ծագումով ու նախնական գործածությամբ (գրաբար-
յան ծագում ունեն և գործածվել են գրաբարում), տարբեր-
վում են նրանցից այն բանով, որ ժառանգորդաբար չեն ան-
ցել աշխարհաբար գրական լեզվին. սա, բնականաբար, են-
թադրում է որոշ ընդհատում դրանց գործածության մեջ:
Այսպես, օրինակ, դաշխուրան բառը թեև գործածվել է գրա-
բար տեքստերում մի քանի անգամ, բայց այնուհետև դա-
դարել է գործածվելուց, իսկ վարուժանը, ինչպես ասում են,
«պեղելով» գրաբարը, վերջինի ու գործածել է իր ստեղծա-
գործության մեջ և, իհարկե, շատ հաջող կերպով: Կուպար
բառը գործածվել է գրաբար գրականության մեջ, ըստ նոր
հայկազյան բառարանի և Արմատական բառարանի սովյալ-
ների միայն երկու անգամ (Գրիգոր Մագիստրոսի մոտ, 11-րդ
դ., և վարդանի պատմության մեջ, 13-րդ դ.), բայց այդ բա-

որ, աննվիրով գրաբարից, գործածվել է թե՛ պոեզիայում (անկոպար.— Վ. Տերյան, անկոպար.— Ծ. Զարեհ), թե՛ մանավանդ, իբրև ֆինանսական տերմին, որից կազմվել են նաև՝ կոպարային, կոպարավառելի և այլն: Պարեկ գրաբարյան բառ է, շատ սահմիվ գործածություններ, որ սակայն վերջվեց իբրև ռազմական տերմին և այժմ շատ գործածական է դարձել և այլն: Մենք դիտավորյալ կերպով բերեցինք մի քանի այնպիսի բառեր միայն, որոնք գրաբարում էլ սովորական բառեր չեն և կարող են դիտվել իբրև հազվագեղ գործածություններ բառեր: Դրանց կարելի է ավելացնել բազմաթիվ այնպիսի բառեր, ինչպիսիք են հոգնաթախիժ, հոգնախոնջ, վայրավատին և այլն, և այլն: Այսպիսով, այս կարգին պատկանող բառերի համար կարևորը այն չէ, թե նրանք գրաբարյան բառեր են՝ իրենց բառակազմական, հնչյունական և այլ հատկանիշներով, այլ այն, որ նրանք պատմականորեն դուրս են եկել գործածությունից, եթե կարելի է ասել, նրանց կյանքը դադարել է հենց գրաբարով գրված գրականության մեջ, և այն ժամանակ, երբ մեր նոր գրական լեզուն բարձրանում էր գրականության մակարդակին ու մշակվում, այդ բառերը չէին կարող անմիջականորեն մտնել նրա բառապաշարի մեջ՝ իբրև զուգահեռաբար դործածվող գրաբարի կենսունակ բառեր, ինչպիսիք են այն բազմաթիվ բառերը, որոնք թեև հայտնապես գրաբար, նույնիսկ հունարանների կերտած, բայց գրաբարից անմիջականորեն անցան աշխարհաբարին իբրև դրական ժառանգություն, ինչպես, օրինակ, ֆերական, ֆերականություն, մակերևույթ, հաբարել, ներհակ, վերծանել, տարբերել, բացատրել (գրք. բացադրել), պարունակություն, բաղդատություն, դերանուն, ներգործել, տրամադրություն, ենթադրել և այլն, և այլն, որոնք բոլորն էլ հունարանների կերտած բառերն են, բայց նոր գրականին են անցել պատմական հաջորդականություններ, իբրև 18—19-րդ դարերի գրաբարի կենսունակ բառեր:

Այն հանգամանքը, որ այս կարգին (գրաբարյան բառերի շերտ) պատկանող բառերը բնութագրվում են ոչ թե իրենց ձևական, բառակազմական և այլ հատկանիշներով, այլ միայն գործածականությամբ (ավելի ճիշտ՝ ոչ գործածականություններ՝ նոր շրջանի գրաբարալեզու գրականության մեջ և

աշխարհաբարյան գրականության սկզբնական շրջանում) դժվարացնում է նրանց որոշումը. դրա համար անհրաժեշտ էր, մի կողմից՝ աշխարհաբարյան գրականության մեջ գործածված բառերի լիակատար ցանկը՝ ժամանակագրական տվյալներով հանդերձ, մյուս կողմից՝ նոր շրջանի գրաբարյան գրականության (ներառյալ նաև 19-րդ դարի գրականությունը) բառարանը. այդպիսի բառարաններ այժմ չունենք, ուստի և այս կարգին պատկանող բառերի ցանկն էլ, թեկուզ և մոտավոր ճշգրտությամբ, հնարավոր չէ տալ: Այնուամենայնիվ, կան որոշ կարգի բաղադրություններ, որոնց մասին փաստնք արդեն, թե ուշ շրջանի գրաբարում, ինչպես և 19-րդ դարի աշխարհաբար գրականության մեջ, կենսունակ չեն եղել, ուստի և պետք է դասվեն այս կարգի բառերի շարքում. դրանցից կարելի էր հիշել՝ հոգն-բաղադրիչով բաղադրությունների մեծագույն մասը (հոգնաբերուն, հոգնախոնջ, հոգնազեղուն, հոգնածիժազ և այլն), հոլով— (գրք. յուղվ շատա) բաղադրիչով կազմված բառերի մի զգալի մասը (հոլովաբան, հոլովամարդ, հոլովատեսակ և այլն), երկրորդ (վերջին) եզրում—տեսակ բաղադրիչն ունեցող բառերի մեծագույն մասը, որոնց մեջ տեսակ նշանակում է «կերպ, պես, նման» և կարող է փոխարինվել այդ բաղադրիչներով (ինչպես՝ զազանատեսակ «զազանակերպ», օղատեսակ «օղակերպ», լուսատեսակ «լուսակերպ», բոցատեսակ «բոցակերպ, բոցատեսիլ» և այլն), ճարակ բառով կազմված բառերի զգալի մասը (խոզաճարակ, խոտաճարակ, բոցաճարակ) և այլն:

Հասկանալի է, որ այս կարգին պատկանող բառերը կարող են հաճախական գործածություն ստանալ մեր լեզվում և դառնալ կենսունակ՝ մտնելով նույնիսկ չեզոք բառերի շարքը, բայց դա չի փոխում ծագումնաբանական բնութագիրը. դրանք գրաբարյան փոխառություններ են:

Վերջապես, այս կարգի բառերի որոշման համար նկատի պետք է առնել ևս մի հանգամանք. կան շատ բառեր, որոնք ձևով նույնական են գրաբարյան որևէ բառի հետ, սակայն նույն գրաբարյան բառը չեն, այլ բոլորովին նոր բառ (նորակերտություն). ինչպես՝ հոգնծին (գրք.) «սուրբ հոգով ծնող՝ ծնված»—հոգնծին (աշխ.) «հոգնական ծագում ունեցող», համակցել (գրք.) «հազորակցել»—համակցել (աշխ.)

«կուրբինացնել», նախարարառ (գրք.) «առաջինը՝ սկզբից խոսող՝ խոսած»— նախարարառ (աշխ.) «բարբառի կամ բարբառախմբի նախնական համակարգը ներկայացնող բարբառ» (հմմտ. նախալիզու), մարզավան (գրք.) «մարզպան»— մարզավան (աշխ.) «մարզական ավան», հորդելակ (գրք.) «սուր, բարձր, շեշտված» (ձայնի մասին)— հորդելակ (աշխ.) «1. հորդաուստ, շատ առատ, փարթամ, 2. պերճ, վսեմ» և այլն: Կարևոր չէ այն, թե աշխարհաբարբայան կամ գրաբարբայան բերված բառերը որքանով զործածական են. կարևորը այն է, որ այդ գույզերից մեկը՝ առաջինը, գրաբարբայան բառ է, որ չի պահպանվել, մյուսը՝ նոր գրական բառ, ուստի և գրանք չպետք է շփոթել այնպիսի բառերի հետ, որոնք պատմականորեն իմաստափոխվելով բողոքովին նոր իմաստ են ստացել աշխարհաբար գրական լեզվում (նաև ժողովրդախոսակցականում և բարբառներում) և առաջին հայացքից թվում է, թե նրանք ոչ մի կապ չունեն իրար հետ, ինչպես, օրինակ, ծախել (գրք.) «սպանել»— (աշխ.) «վաճառել», դեղ (գրք.) «բույս»— (աշխ.) «ձար» և այլն: Հարկ է նշել, որ բերված գրաբարբայան-աշխարհաբարբայան համանուններից առաջինները չեն պատկանում ժամանակակից հայերենի բառապաշարին:

8. Բարբառային բառեր.— Այն բոլոր բառերը, որոնք չեն գործածվել գրաբարում, միջին հայերենում, վաղ աշխարհաբարում, հետևաբար և չեն կարող դիտվել նաև որպես ժողովրդախոսակցական բառ և հատկացվել աշխարհաբարբայան շերտին: Այս բնութագրությունը ենթադրում է աշխարհաբար գրական լեզվի մեջ թափանցած բառերի գործածության սահմանափակություն, այսինքն՝ այդ բառերի պատկանելությունը մեկ կամ մի քանի բարբառների: Այդպիսի բառեր են՝ շմուշկ, գեւեւանուշ, սելլակ, դահուկ, սիկ, սզնի և այլն: Քանի որ խոսքը վերաբերում է ոչ թե հայերեն բառերի բարբառային տարբերակներին (հէր, լիս, օխտը, արին և այլն) և ոչ էլ այն կարգի բառերին, որոնք ընդհանուր են բարբառների մեծագույն մասին կամ բոլորին, հետևաբար նաև ժողովրդախոսակցական լեզվին (ճգմել, ճղել, էտ, էտել, պոռշ, ճամփա, յար, շորան և այլն), ապա այս կարգին պատկանող բառերի թիվը զգալիորեն փոքրանում է, և գրանց որոշումն

էլ՝ դժվարանում: Սակայն սա չի նսեմացնում բարբառային բառերի արժեքը և, մանավանդ, բարբառների բառազանձի գերը մեր գրական լեզվի հարստացման գործում: Պետք է նկատի ունենալ, որ բարբառների մեջ էլ ավելի կենսունակ և կարևոր մասն են կազմում հայերեն բառերը՝ բարբառին հատուկ հնչյունափոխություններով, և ընդհանուր բառերը, որ կոչեցինք աշխարհաբարբայան անվանումով: Ստորև, մեր լեզվի բառապաշարի ներքին դասակարգման մեջ էլ կտեսնենք, որ բարբառային բառաձևերը իր առանձնահատուկ դերն ունի գրական լեզվում: Այստեղ մեր խոսքը վերաբերում է այն բառերին միայն, որ որևէ բարբառից կամ մի խումբ բարբառներից թափանցել են մեր գրական լեզվի մեջ՝ դառնալով նրա սեփականությունը: Այս տեսակետից ճիշտ չի կարելի համարել այն մտածողները, որի համաձայն բարբառային բառերի շարքն են դասվում այնպիսի բառեր, ինչպիսիք են ջան, զուրբան, դաշաղ, մարալ, գոգալ, շորան և այլն: Մեր բառարաններում այս բառերի դիմաց սովորաբար «բարբառային» նշում է տրվում հասկանալի պատճառով ու նպատակով, ուստի և այդ նշումը չի կարելի հիմք ընդունել մեր լեզվի բառապաշարի պատմական դասակարգումով գրանք բարբառային բառերի շարքը դասելու համար: Դրանք իրականում ժողովրդականորեն պատկանում են աշխարհաբարբայան բառերի կարգին:

Ավարտելով բառապաշարի ծագումնաբանական դասակարգությունը, հարկ ենք համարում ավելացնել հետևյալը: Աշխարհաբար գրական լեզվի այսպիսի դասակարգությունը կատարվում է առաջին անգամ և, ինչպես ասացինք, ցույց է տալիս աշխարհաբար գրական լեզվի բառապաշարի պատմական աղբյուրները և գրանցից յուրաքանչյուրի տեղը մեր լեզվի բառապաշարի գոյացման կամ կազմավորման մեջ՝ անկախ բառապաշարի մեջ տեղի ունեցող տեղաշարժերից և անկախ ժամանակային սահմաններից: Այդ դասակարգումը միաժամանակ ցույց է տալիս, թե այդ աղբյուրներից ո՞րը ինչ դեր և կշիռ ունի աշխարհաբար գրական լեզվի բառապաշարի մեջ ընդհանրապես. հասկանալի կերպով այս տեսակետից առաջնակարգ տեղը պատկանում է համահայկական, համադրական, նոր գրական բառաշերտերին, ըստ

որում այս վերջինի տեսակարար կշիռն ազնի ու ավելի է մեծանում բառապաշարի հարստացման գործընթացի մեջ, որի մասին կհոսովի ստորև: Բուն դասակարգման մասին անհրաժեշտ է ասել հետևյալը: Քեկ դասակարգությունը ցույց է տալիս մեր արդի գրական լեզվի բառապաշարի բաղադրիչ շերտերը, բայց այդ շերտերից մեր լեզվին անցած բառերի սպառելի քանակային բնութագրությունը տալ դեռևս հնարավոր չէ: Այս տեսակետից առավել շարժվել է մնում միջինհայերենյան և բարբառային շերտերը: Բանն այն է, որ առայժմ չունենք ո՛չ միջինհայերենյան բառերի սպառելի ուսումնասիրությունն ու բառարանը, ո՛չ էլ՝ բարբառային: Այն, ինչ որ հայագիտության մեջ մինչև այժմ դիտվել է որպես բարբառային, իրականում մեծ մասամբ նույնանում է ժողովրդախոսակցական լեզվի բառերի հետ: Այսպես՝ Հ. Աճառյանի «Գավառական բառարանում» բերված են կծիկ, կծկել, նղել, եզմել, խելվամաղ, բացգլուփ և նման հազարավոր բառեր: Հ. Աճառյանը ճիշտ է վարվել դրանք բառարանի մեջ մուծելով, ըստ որում նրա բառարանի նպատակն է ներկայացնել հայերեն բարբառներում գործածվող այն բոլոր բառերը, որոնք չեն գործածվել հայ հին մատենագրության մեջ: Սակայն վերը արված դասակարգության համար այդ սկզբունքը չի կարելի ընդունել, ըստ որում այդ բառերը կարելի է բաժանել առնվազն չորս կարգի. ա) Բառեր, որոնք բնդհանուր են տարածքային ժողովրդախոսակցական լեզուներին և բոլոր բարբառներին կամ, զոնե, դրանց մեծագույն մասին, ինչպես՝ կծիկ, նղել, եզմել, գլխաբաց և այլն. այդ բառերի ստացած տարբեր ձևերը բարբառներից չուրաքանչյուրում (պատմական հնչյունափոխությունների հետևանքով) այս դեպքում ոչ մի կարևորություն չունեն, քանի որ դրանք մեր գրական լեզվի մեջ են մտել աշխարհաբարին ընդհանուր ձևով կամ էլ տարածքային ժողովրդախոսակցական լեզուներից յուրաքանչյուրի ընդհանուր ձևով: բ) Բառեր, որոնք ընդհանուր են եղել հին հայերեն ժողովրդախոսակցական լեզվին, բայց հետագայում տեղայնորեն սահմանափակվել են՝ պահպանվելով մեկ կամ մի քանի բարբառներում. օրինակ՝ ախ «ոտք» բառը գործածական է եղել հին հայերեն ժողովրդախոսակցական լեզվում. գործածվել է նաև գրաբարում,

թեև սակավադեպ, բայց ախցի, ախցել բառերի հաճախական գործածությունը գրաբարում և դրանց առկայությունը բարբառների մեծագույն մասում ցույց են տալիս, որ այդ բառը կենսունակ է եղել ամբողջ հայության համար. և չնայած դրան, այդ բառը արմատական ձևով (ախ կամ հախ) պահպանվել է միայն մի քանի բարբառներում (Մեղրիում, ըստ «Արմատականի» նաև՝ Ախալցխայում, Ակնում, Հավարիկում): Այդպես է նաև կոտ «ծուռ, կոր» բառը, որ կոր բառի տարբերակն է: գ) Բառեր, որոնք հատուկ են եղել մեկ կամ մի քանի բարբառների, բայց նոր ժամանակներում, գրական լեզվի միջոցով կամ բարբառախոս զանգվածների տեղափոխության հետևանքով տարածվել և գործածական են դարձել նաև այլ բարբառներում և վերածվել ընդհանուր բառի. օրինակ՝ կոդը, որ գործածվել է գրաբարում շատ սակավադեպ, ըստ «Արմատականի» հատուկ է եղել արևմտյան բարբառների մի խմբի, տարածվել ու ընդհանրացել է նաև արևելյան բարբառներում, ինչպես և՛ մտել է գրական լեզվի բառապաշարի մեջ իբրև տեղմինային տարբերակ խոսյան բառի: դ) Բառեր, որոնք կազմվել են կամ փոխառվել այլ լեզուներից միայն մեկ կամ տարածականորեն միասնություն կազմող մի քանի բարբառներում և, հետևաբար, հատուկ են եղել միայն այդ բարբառներին. օրինակ՝ սեզնը «սզնիկ պտուղը» (Ղարաբաղ—Չանգեզուր—Մեղրի), որից էլ՝ սզնի, տհալ «ղատում» (Ղարաբաղ—Մեղրի—Չանգեզուր), գետնանուշ «արախիս բույսը և նրա պտուղը» (միայն Մեղրի), տկողին (միայն Մեղրի) և այլն, և այլն:

Այս չորս կարգերից աշխարհաբար գրական լեզվին անցած բառերը պատկանում են մեր առաջարկած դասակարգության տարբեր շերտերին. առաջինը՝ աշխարհաբարյան (6-րդ) շերտին, երկրորդը, երրորդը և չորրորդը՝ բարբառային (8-րդ) բառերի շերտին, թեև երրորդ շերտից որոշ բառեր կարող են հատկացվել աշխարհաբարյան շերտին, եթե հետագա հետազոտությունները ցույց տան, որ դրանք թեև մեկ կամ մի քանի բարբառներում են գործածվում, բայց այդ բարբառները, տարածականորեն իրարից անջատված լինելով, վկայում են այդ բառերի նախնական ընդհանրության մասին:

Այս տարրեր կարգերին պատկանող բառերը որոշելու համար անհրաժեշտ է բարբառային բառերի պատմական համակողմանի ուսումնասիրություն, որ առայժմ չունենք, ուստի և դասակարգության մեջ տրվում է տվյալ շերտի միայն ընդհանուր բնութագրությունը:

Վերջապիս, դասակարգության մեջ ներկայացված կարգերը նույնպես վերջնական ու սպառիչ համարել չի կարելի. հնարավոր է այդ կարգերի բնութագրությունը փոխել և ավելացնել դրանց թիվը կամ պակասեցնել: Այսպես, օրինակ, միջինհայերենյան կարգը կարելի է վերացնել՝ բառերի մի խումբը հատկացնելով համազրական, մյուսը՝ աշխարհաբարյան բառաշերտին: Կարելի է, ընդհակառակը, երկու խմբերն առանձնացնել ու ներկայացնել որպես առանձին շերտեր (ըստ միջինհայերենյան գրական բառեր և միջինհայերենյան ժողովրդախոսակցական բառեր): Աշխարհաբարյան բառերը նույնպես կարելի է բաժանել երկու շերտի՝ համահայկական ժողովրդախոսակցական բառեր և բուն աշխարհաբարյան բառեր, առաջինին հատկացնելով այն բոլոր բառերը, որոնք եղել են նաև հին հայերեն խոսակցական լեզվում (թուշ, կեռ, բոթել, կռանալ, կծիկ, ճղել և այլն), երկրորդին՝ այն բառերը, որոնք չէին կարող լինել հին հայերենում (աշքաբաց, ծակաշք, քավոր, բացզուխ և այլն): Այս բոլորը ճշտելու և, համապատասխանորեն, առաջարկված դասակարգությունը ճշգրտելու համար անհրաժեշտ է ունենալ հետևյալ կարգի բառարանները՝ ա) գրաբարի լիակատար պատմական բառարան, բ) միջին հայերենի լիակատար բառարան, գ) աշխարհաբարի (խոսակցական և գրական) լիակատար բառարան, դ) բարբառային բառերի լիակատար բառարան: Այդ բառարանները և դրանց համակողմանի ուսումնասիրությունը միայն հնարավորություն կտան ներկայացնել աշխարհաբար գրական լեզվի բառապաշարի սպառիչ ծագումնաբանական դասակարգությունը:

գ. Բառապաշարի համաժամանակյա և ներքին դասակարգություն

Նախորդ դասակարգությունը նպատակ ունի բացահայտել հալ ազգային գրական լեզվի բառապաշարի բաղադրիչ

շերտերն ու դրանց աղբյուրները, և այդ նպատակին հասնելու համար մեր լեզվի բառապաշարը գիտական վերացություն համար ու պայմանականությունը դիտվում էր իբրև փակ և կայուն համակարգ: Իրականում, սակայն, այդպես չէ. փակ և կայուն համակարգ ներկայացնում է մեռած լեզուների բառապաշարը, և այդ այն պատճառով, որ նրանց բառապաշարն այլևս ենթակա չէ փոփոխությունների ու զարգացման: Այսպես, օրինակ, գրաբարի բառապաշարը կայուն ու փակ համակարգ է. ինչ որ աղանդվել է գրաբարալեզու մատենագրությունում, այդքանն էլ կազմում է գրաբարի բառապաշարը: Այդպես չէ կենդանի լեզուների բառապաշարը, որ գտնվում է անընդհատական զարգացման պրոցեսում և շարունակ հարստանում ու կատարելագործվում է: Ժամանակակից գրական հայերենը կենդանի, զարգացող լեզու է, և հասկանալի է, որ նրա բառապաշարն էլ հարստացման ու կատարելագործման բուռն պրոցես է ապրում:

Այնուհետև. եթե նույնիսկ պայմանականորեն մեր լեզվի բառապաշարը դիտելու լինենք իբրև ավարտուն, փակ բազմություն, ապա դարձյալ մենք գործ կունենանք մի այնպիսի բազմության հետ, որի բոլոր միավորները միևնույն դերն ու բնութագրությունը չունեն մեր լեզվի նորմայի մակարդակում: Իբրև ազգային գրական լեզու, ժամանակակից հայերենն ունի իր գոյության տարրերակային ձևերն ու լեզվական տարրեր ոճերը (գրական լեզու, գրական-խոսակցական լեզու, զրաղմունքային լեզուներ), գիտական լեզու, գրասենյակային լեզու և այլն): Հասկանալի է, որ լեզվի այս տարրերակային ձևերին պատկանող բառերը տարրեր էլ գործառական բնութագրություն կարող են ստանալ: Բացի դրանից, մեր

2 Մի կողմ ենք թողնում նորագույն բառերը, որոնք բառարաններում տեղ չեն գտել, ըստ սրում դրանց թիվը շատ սահմանափակ է. ուստի և գիտական բնութագրության ժամանակ կարելի է անտեսել:

3 Մեր «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» մեկագրության մեջ մենք լեզվի բառային մակարդակը բնութագրել ենք իբրև հարստերակառույց փակ համակարգ՝ բոլորովին այլ մտտեղծով, որ կապ չունի այս բնութագրության հետ: Այսանող փակ համակարգ ասելով նկատի ունենք բառապաշարի հաստատուն, անփոփոխ կազմը, որ ենթակա չէ հարստացման:

ազգային գրական լեզուն ավելի քան հարյուրամյա պատմութուն ունի, որի ընթացքում բառապաշարի մեջ հսկայական տեղաշարժեր են կատարվել: Լեզվից դուրս են ընկել զգալի քանակությամբ բառեր և մուտք են գործել ու բառապաշարի կենսունակ տարրը դարձել տասնյակ հազարավոր նոր բառեր: Սա նշանակում է, թե ժամանակակից հայերենի բառապաշարը, որ ներառում է ինչպես գործածությունից արդեն դուրս եկած, այնպես էլ նոր մուտք գործած բառերը, այս մոտեցումով կարող է այլ շերտերի բաժանվել: Վերջապես, ժամանակակից գրական հայերենի բառապաշարը, իրեն զարգացող, անընդհատական փոփոխությունների գործընթաց ապրող համակարգ, ունի զարգացման ներքին (ներ-լեզվական) և արտաքին (արտալեզվական) գործոնների առաջ՝ բերած բառատարբերակները (բառային զույգեր, բառերի ձևական տարբերակներ, բառակազմական տարբեր կաղապարների զուգահեռություններ և այլն), որոնք նույնպես տարբեր գեահատություն ու բնութագրություն են ստանում մեր լեզվական նորմայի տեսակետից: Այդ բոլորը, ահա, թելադրում են լեզվի բառապաշարի դասակարգության այլ սկզբունքներ և այլ եղանակներ, որոնք սկզբունքորեն տարբեր են նախորդ՝ ծագումնաբանական դասակարգության սկզբունքներից: Այս դասակարգությունները կարելի է կոչել բառապաշարի համաժամանակյա դասակարգություն ընդհանուր անվանումով, քանի որ, ի տարբերություն նախորդի, այս դասակարգությունները հիմնվում են լեզվի զարգացման տվյալ փուլում բառերի ունեցած այս կամ այն բնութագրի վրա: Այնուհետև, այս դասակարգումների համար որպես ելակետ ու շարժանիչ է ընդունվում մեր լեզվի զարգացման արդի փուլի նորման ու կառուցվածքը, այսինքն՝ բառերը գեահատվում են ըստ այն բանի, թե ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում նրանք մեր լեզվի բառակազմական միջոցների ու կաղապարների, հնչյունական-հնչյունափոխական կանոնների, ձևաբանական կառուցվածքի հետ, գործառական ի՞նչ բնութագրի, գործածականության ի՞նչ վիճակ ունեն և այլն: Իսկ սա նշանակում է, թե այս դասակարգումները բառապաշարի ներքին դասակարգություն են, ըստ սրում բառապաշարը դիտվում է ինքն իր մեջ, և բա-

ները խմբավորվում են հենց բառային կազմի մեջ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությամբ՝ մեր գրական լեզվի այժմյան փուլի նորմայի շարժանիչներով:

Առաջնորդվելով բառագործածության արդի նորմայի տվյալներով և հիմք ընդունելով բառերի բնութագրության տարբեր շարժանիչները (գործածականություն, գործառական ոլորտ, բառակազմական հատկանիշներ և այլն), աշխարհաբար գրական լեզվի բառապաշարը կարելի է դասակարգել ըստ գործածականության, ըստ սոցիալական տարբերակումների, ըստ գործառության ոլորտների և ըստ ներլեզվական հարաբերությունների:

1. **Բառապաշարի դասակարգությունը ըստ գործածականության.**— Բառապաշարի այս դասակարգությունը հենվում է մեր գրական լեզվի բառապաշարի պատմական զարգացման ընթացքի և դրա հետևանքը հանդիսացող՝ բառագործածության այժմյան վիճակի վրա: Այս դասակարգության հիմունքը և շարժանիչը համաժամանակյա մոտեցումն է, քանի որ բառերը բնութագրվում են գործածականության այժմյան գրական նորմայով, բառերի գործածական կամ անգործածական լինելու այժմյան վիճակով: Մեր ազգային գրական լեզվի բառամթերքի քանակը հասնում է մոտ երկու հարյուր հազարի, որից, սակայն, բացառական բառարանների մեջ ընդգրկվել է մոտ 150 հազար բառ: Ինքնին հասկանալի է, որ այս բոլոր բառերը, թեև գործածված աշխարհաբար գրականության մեջ, չեն կարող միևնույն բնութագրի ստանալ կենսունակության ու գործածականության տեսակետից: Այդ բառերի մի զգալի մասը մեկ կամ մի քանի անգամ գործածվել ու մոտացության է մատնվել, մի մասը գործածվել է և կարող է գործածվել ըստ պահանջի, իսկ մեծագույն մասը կենսունակ ու գործածական է եղել և է՝ այժմ էլ: Ահա գործածականության այս տվյալների հաշվառումով մեր գրական լեզվի մաքուր բառապաշարը կարելի է բաժանել երկու շերտի՝ գործուն բառերի շերտ և ոչ գործուն (պասսիվ) բառերի շերտ:

Գործուն շերտին են պատկանում այն բոլոր բառերը, որոնք սովորական խոսքային իրադրության մեջ գործածական են մեր լեզվի զարգացման արդի փուլում, ինչպես՝ սե-

ղան, Լար, առնել, առն, կտրել, վերցնել, գնալ, գիտություն,
փողոց, մեծապես, տեխնիկա, դպրոց, մայր, ճապարակ,
արի, զեղեցիկ, դեղին, կամբայն, առկառո, ըմպան, ուս-
դիտ, անցանառնել, բունելախորշ, վեհօրեն, փառանեղ, ժա-
նանիվ, ալգորիթմ, լոգարիթմ, մեհենա, կամունիզմ, ակադե-
միա, հեռուստատեսություն, հեռուստացույց, մաքրել, խմել,
խնամել, կամենալ, իմանալ, կտրել, գերան և այլն: Ինչպես
կարելի է նկատել, քերված բառերի մեջ կան ամենասովորա-
կառն, առօրյա գործածության և առտնին հաղորդակցման
համար ամենամանրամեջ բառեր (սեղան, քար, տուն, առ-
նել, վերջնել և այլն), գիտության ու տեխնիկայի տարրեր
քննադատական պատկանող բառեր (լոգարիթմ, ըմպան,
անցահատել, ժանանիվ), ինչպես և թե՛ հայակազմ և թե՛
փոխառյալ բառեր (գնալ, գիտություն, զեղեցիկ, ըմպան,
անցահատել, կամունիզմ, կոմբայն, ուղիտ, ակադեմիա, լո-
գարիթմ և այլն): Եվ դա հասկանալի է, որովհետև այս կամ
այն բառը գործուն շերտին հատկացնելու համար դրանք
կարևորություն չունեն: Կարևոր է միայն այն, որ դրանք գոր-
ծածական են սովորական խոսքային իրադրության մեջ, այ-
սինքն՝ դրանք անհրաժեշտորեն գործածվում են համապա-
տասխան քննադատի առօրյա գործունեության և դրա հետ
կապված հաղորդակցման գործընթացում, և, հետևաբար,
դրանք այսպես կոչված կենդանի բառեր են: Ոչ գործուն
շերտին են պատկանում այն բառերը, որոնք դուրս են եկել
գործածությունից, կամ էլ նորակազմ ու նորամուտ բառեր
են, որոնք չեն գործածվում սովորական խոսքային իրադրու-
թյան մեջ: Այդ բառերը կարող են գործուն շերտին պատկա-
նած լինել մեր լեզվի զարգացման անցած փուլերում, ինչ-
պես, օրինակ, նէպլան, էյոխվա, գգիր, սեպուն, դամբար,
լուսաբար և այլն, բայց դա նշանակություն չունի, որով-
հետև, ինչպես ասացինք, չափանիշը բառագործածության
արդի նորման է: Ժամանակի ընթացքում դուրս գալով գործա-
ծությունից, այդ բառերը, սակայն, պահպանվում են բառա-
պաշարի ընդհանուր զանգարանում և կարող են գործածվել
համապատասխան խոսքային իրադրության մեջ: Այսպես,
պատմաբանը՝ խոսելով (կամ գրելով) 5-րդ դարի պատմա-
կան իրադարձությունների մասին, պետք է գործածի սպա-

րապետ, մարզպան, առյան, սեպուն և նման բազմաթիվ
բառեր, կամ եթե դրողը պատմավեպ է գրում 19-րդ դարի
իրադարձությունների մասին, պետք է գործածի այդ դարա-
շրջանի զգեստների անվանումներ, կենցաղին, հասարակա-
կան կյանքին, վարչական պաշտոններին վերաբերող բազ-
մաթիվ բառեր: Այս բոլոր զեպերում մենք ունենք ոչ թե սո-
վորական, այլ յուրահատուկ խոսքային իրադրություն, որ
պայմանավորում է ոչ գործուն շերտին պատկանող բառերի
գործածությունը: Այս շերտին պետք է հատկացնել նաև հազ-
վադեպ գործածությամբ և դիպվածական բառերը, այսինքն՝
այն բառերը, որոնք ստեղծվում ու գործածվում են այս կամ
այն անհատի կողմից, բայց չեն գործածվում ուրիշների
կողմից և, հետևաբար, չեն ընդունվում և ընդհանրանում,
կամ ստեղծվում են հեղինակների կողմից՝ որոշակի նպա-
տակադրումով և չեն ընդհանրանում հենց այն պարզ պատ-
ճառով, որ պայմանավորված են տվյալ խոսքային իրադրու-
թյամբ ու ստեղծագործական նպատակադրումով: Այսպես,
օրինակ, իր «Ծրկիր նաիրի» վեպի մեջ Ծ. Զարենցը կազմել
է ու գործածել ուղեգասարդ, կենտրոնատեղադասարդ, թելի-
կատատանում, գլխավորաբեղ և ուրիշ շատ բառեր, որոնք
անմիջականորեն պայմանավորված են ստեղծագործական
նպատակադրումով: Հասկանալի է, որ այս բառերը չեն գոր-
ծածվել ուրիշների կողմից և չեն էլ գործածվի, բացի այն
դեպքերից, երբ գրականագետը վերլուծում է այդ ստեղծա-
գործությունը, կամ երբ որևէ գրող իր ստեղծագործության
մեջ կատեղծի նույնպիսի իրադրություն և անհրաժեշտու-
թյուն: Ոչ գործուն շերտի բառերն, իրենց հերթին, բաժան-
վում են հետևյալ մասնաշերտերին կամ ենթաշերտերին:

Ա) Հն ա ց ա ծ բ ա ռ ե ռ.— Այն բոլոր բառերը, որոնք
գործածական են եղել մեր գրական լեզվում նրա պատմու-
թյան անցած էտապներում և այժմ կամ բոլորովին չեն գոր-
ծածվում, կամ էլ գործածվում են ըստ անհրաժեշտության,
ինչպես՝ բաղապետ, բեմ, տանտեր, գգիր, վերատեսուչ,
նահանգապետ, դիվանատուն, գիմնազիա, աստվածուհաց,
անբարի, կապա, սիին, դպրանոց, սեմինարիա, դրագուն,
նէպլան, կամբեջ, կամսնապարծություն, բառակ, բառակ-
կոմ, ենթակուլակ, ասպակուլակացում և այլն: Այս մասնաշեր-

տին է պատկանում նաև հազվադեպ և դիպվածական բառերի
այն մասը, որ գործածվել է գրական աշխարհարարի անցած
փուլերում, ինչպես, օրինակ, Ե. Չարենցի ստեղծագործու-
թյունից բերված բառերը:

Բ) Ն ո Ր Բ ա ո Ւ Ե ր կ ա մ ն ո Ր ա ք ա ն ու թ յ ու ն-
ն և ր.— Այն բոլոր նորակազմ ու նորամուտ բառերը և բառա-
յին ձևերը, որոնք ունեն միայն առանձնակի գործածություն-
ներ ու դեռևս լայն գործածություն չեն ստացել, ինչպես՝ փո-
շեծուծ, լուցիչ, սորատել (перфорировать), կարգաբերել
(упорядочить), մահատիպ, էսկալացիա, էսկալատոր և այլն:
Այս կարգի բառերը ժամանակի ընթացքում կարող են անցնել
գործուն շերտին կամ էլ՝ մոռացության մատնվել. բերվածնե-
րից վերջին երեքն արդեն ընդունված տերմիններ են, թևն սա-
կամ գործածությունք. կարգաբերել ստանում է լայն գործա-
ծություն, մինչդեռ լուցիչ, փոշեծուծ (փոշեծծիչ) բառերը
դժվար են արմատանում և առայժմ դժվար է որոշել դրանց
հետագա բախտը:

Գ) Հ ի ն Բ ա ո Ւ Ե ր.— Այն բոլոր բառերը և բառային ձե-
վերը, որոնք փոխառվում են գրաբարից ու միջին հայերենից՝
ստեղծագործական խոսքի պահանջներով և չեն անցնում գոր-
ծուն շերտին, ինչպես՝ դաշխուրան, աշտե, ապարօշ, ցարյան,
լյառն, խույր և այլն, ինչպես և այն բազմաթիվ գրաբարյան
բառերը, որոնք պատմագիտական տերմինային նշանակու-
թյուն ունեն և ըստ հարկի գործածվում են բանասիրական,
պատմական և այլ կարգի գրականության մեջ (օր. ասենա-
դպիր, բքեշի, կուսակալ, մարզպան, զրաճիկ, մարդպետ,
սենեկապան, գունդատար և այլն):

2. Բառապաշարի գործառական դասակարգություն.—
Այս դասակարգությունը հենվում է այն բանի վրա, թե մեր
լեզվի ընդհանուր բառապաշարի մեջ մտնող այս կամ այն
բառը գործածական է գործառական որևէ ոլորտի՝ համար,
թե գործածվում է բոլոր ոլորտներում, առանց որևէ սահմա-
նափակող կամ մասնավորեցնող բնութագրի: Թնություն
առնելով մեր լեզվի բառապաշարը, մենք հեշտությամբ կա-
րող ենք տեսնել, որ կան բազմաթիվ բառեր, որոնք գործած-
վում են լեզվի գործառության բոլոր ոլորտներում առանց
որևէ սահմանափակման: Այսպես, օրինակ, ասել, գնալ,

ուսել, խմել, տեսնել, տուն, գրոյս, բերան, ականջ, ձեռք,
ոտք, ծառ, բեռել, կարմիր, մեծ, լավ, ուրախ, խոտ, ճիշտ,
շատ, քիչ, կտրել, առնել, առու, զալ, բուրբ, մեքենա և նման
բազմաթիվ բառեր ընդհանուր են բոլոր նրանց համար, ով-
քեր խոսում են ժամանակակից հայերենով՝ անկախ նրանց
զբաղմունքից, կրթությունից, հասարակության մեջ ունե-
ցած դիրքից, տարիքից, սեռից և այլ հանգամանքներից, ըստ
որում գործածվում են բոլոր կարգի խոսքերում՝ գրավոր թե
բանավոր, գիտական աշխատություն թե գրական ստեղծա-
գործություն, առտնին խոսակցություն թե գրասենյակային-
պաշտոնական գրագրություն և այլն, և այլն: Դրանք և այդ
կարգի բազմաթիվ բառեր լեզվի բառապաշարի այն մասն են
կազմում, առանց որի հնարավոր չէ հայերեն խոսել. ըստ
որում դրանք կենսականորեն անհրաժեշտ են առօրյա հա-
ղորդակցման համար: Այդ կարգի բառերը կազմում են լեզվի
ողջ բառապաշարի միջուկային շերտը, որ կոչվում է շեզոֆ
կամ համագործածական բառերի շերտ: Բառապաշարի չե-
զոք շերտի բառերը ամեն մի լեզվի բառազանձի հիմքն են
կազմում: Լինելով լեզվի գործառության բոլոր ոլորտների
ու տվյալ լեզուն կրող հասարակության բոլոր անդամների
համար ընդհանուր և ամենօրյա հաղորդակցման մեջ օգտա-
գործվող առավել կենսունակ բառեր, դրանք, միևնույն ժամա-
նակ հիմք են ծառայում նորանոր բառեր կազմելուն, բառա-
պաշարն անընդհատորեն հարստացնելուն և համալրե-
լուն: Բացի դրանից, շեզոք շերտի բառերը, հենց այն
պատճառով, որ ոչ միայն ընդհանուր են բոլոր խոսողների
համար, այլև մշտական գործածության մեջ են, բառապա-
շարի համեմատաբար կայուն ու մնայուն մասն են ներկա-
յացնում: Կայունության, մնայունության ու կենսունակության
հատկությունն է, որ շեզոք շերտի բառերը դարձնում է լեզվի
բառապաշարի հիմքը: Իհարկե, սրանից չի կարելի բխեցնել
այն թյուր ենթադրությունը, թե շեզոք շերտը կայուն և մնա-
յուն լինելով՝ նաև անփոփոխ է: Իրականում ե՛րշտ հակա-
ռակն է. շեզոք շերտը շարունակ համալրվում ու հարստանում
է նորանոր բառերով: և դա օրինալափ է: Կյանքի զարգա-
ցումը իր հետ բերում է նորանոր առարկաների, գործիքների,
մեքենաների ստեղծում, գիտության նորանոր հայտնագործու-

Քյուններ, որոնք ավելի ու ավելի լայն գործածություն ու
ճանաչում են ստանում և, ինչպես ասվում է, մտնում են
կենցաղի մեջ: Հասկանալի է, որ դրանց անվանումներն էլ,
ստանալով առօրյա և ընդհանուր գործածություն, անցնում
են լեզու շերտի բառերի շարքը: Այսպես, օրինակ, թեև հե-
ռուստացույց, հեռուստատեսություն, հեռուստադիստոզ, տիե-
զերագնաց, տիեզերագնացություն, տիեզերանավ, արբան-
յականավ և նման բաղմաթիվ բառեր հրկու-երեք տասնամ-
յակների պատմություն ունեն հայերենում, բայց դրանք ար-
դեն չեզոք շերտի բառեր են դարձել: Այնպես որ, բառապա-
շարի չեզոք շերտը՝ իր կայունությամբ ու մնայունությամբ
հանդերձ, անընդհատ հարստանում է նորանոր բառերով:
Իհարկե, տեղի է ունենում նաև հակառակը, այսինքն՝ որոշ
բառեր էլ ժամանակի ընթացքում դուրս են գալիս չեզոք շեր-
տից և անցնում բառապաշարի այլ շերտերի (հմմտ. գրա-
բարյան աշտե, սեպուհ, ապարոշ, ատյան, զեղարդ, մարզ-
պան և նման բառերը գրաբարում և արդի հայերենում),
բայց դրանց տեսակարար կշիռը շատ ավելի փոքր է, քան
ավելացող բառերինը, ուստի և չեզոք շերտի համար առավել
բնորոշը հարստացումն է:

Չեզոք շերտին հակադրվում է բառապաշարի գործառու-
պես տարբերակված շերտը, որի մեջ մտնում են գործառու-
թյան ոլորտի որևէ կարգի սահմանափակում ունեցող բա-
ռերը, որոնք ընդհանուր անունով կոչում ենք գործառական
մասնաշերտերի բառեր: Գործառական սահմանափակումները
ընտրողում են բառերի որոշակի խմբեր, որոնք ստանում են
իրենց հատուկ բնութագրերը և կազմում այս կամ այն գոր-
ծառական մասնաշերտի բառապաշարը: Գործառական մաս-
նաշերտի բառերը կարող են կենսունակ լինել և շատ գործա-
ծական, կարող են հազվագեպ գործածություն ունենալ,
կարող են լեզվի զարգացման տվյալ փուլի նորմային հա-
մապատասխան լինել կամ շեղվել դրանից, բայց այդ հան-
գամանքները որևէ կարևորություն չունեն բառերը գործառու-
կան այս կամ այն մասնաշերտին հատկացնելու համար:
Կարևորն այս դեպքում այն է, որ գործառական մասնաշերտի
տվյալ բառերը չեն մտնում չեզոք շերտի մեջ և պատկանում
են բառապաշարի գործառության որևէ առանձին ոլորտի:

Այսպես, օրինակ, առդիր, սույն, կոպար, լոգարիթմ, կական,
լյառն, ցորյան, գանգրագիսակ, շֆեղապանձ և բաղմաթիվ
այլ բառեր գործածվել և գործածվում են մեր գրականության
մեջ: Դրանք չեզոք շերտին չեն պատկանում, որովհետև սո-
վորական խոսքային իրադրության մեջ չեն գործածվում: Եվ
սակայն, դրանք գործածվում են մեր պրակտիկ լեզվի որոշակի
գործառական ոլորտներում՝ համապատասխան յուրահատուկ
խոսքային իրադրության մեջ: Այսպես, առդիր «հետը դըր-
ված՝ կից», սույն (հմմտ. սույնին կից ուզարկում ենք... սույ-
նով հայտնում ենք...) գրասենյակային-գործարարական
գրությունների համար սովորական բառեր են, կոպար ֆի-
նանսական տերմին է, լոգարիթմ՝ մաթեմատիկական, կա-
կան (գրաբարյան բառ), լյառն, ցորյան (լեռ, ցորեն բառերի
գրաբարածն տարբերակները կամ, ավելի ճիշտ, նախածե-
րը), գանգրագիսակ, շֆեղապանձ՝ բանաստեղծական բառեր
և այլն: Դրանցից յուրաքանչյուրն իր ոլորտում անհրաժեշտ
է և գործածական, ըստ որում լյառն, ցորյան, կական թեև
մեր գրական լեզվին չեն պատկանում, բայց ազատորեն կա-
րող են գործածվել ու գործածվում են գեղարվեստական գրա-
կանության մեջ՝ ստեղծագործական նպատակներով: Այն
հանգամանքը, որ դրանք չեն գործածվում սովորական խոս-
քային իրադրության մեջ, ինքնին նշանակում է, թե չեն էլ
պատկանում չեզոք շերտին: Սակայն դա չի կարող նշանա-
կել, թե դրանք գործածելի էլ չեն, ըստ որում դրանց մի դաս-
ի մասը՝ տերմինները և բանաստեղծական բառերը իրենց
ոլորտների համար այնպիսի անհրաժեշտություն են ներկա-
յացնում, հետևաբար և իրենց ոլորտի համար այնպիսի բա-
ռեր են, առանց որոնց չեն կարող գոյություն ունենալ ու
զարգանալ այդ ոլորտները: Բայց դրա հետ միաժամանակ,
պարզ է նաև, որ դրանց գործածությունը որոշակի սահմա-
նափակություն ունի, ուստի և դրանք պետք է բնութագրվեն
այլ շարժանիշներով, քան չեզոք շերտի բառերը: Դա նշանա-
կում է, թե բերված բոլոր բառերը չեն կարող միևնույն գնա-
հատությունն ու բնութագրությունն ստանալ, ըստ որում
դրանց գործածության սահմանափակումներն էլ տարբեր են:
առդիր, սույն, կոպար, լոգարիթմ բառերն ունեն տերմինային
գործառության սահմանափակում, լյառն, ցորյան, կական,

ներառել բառերը՝ լեզվական նորմայի սահմանափակում, խոսքի գանգրափասակ, շեղապանձ բառերը՝ ոճական, բայց բոլորն էլ պատկանում են բառապաշարի գործառական մասնաշերտերից որևէ մեկին, հետևաբար և բոլորն էլ զարժանապես տարբերակված շերտի բառեր են: Հետևաբար, գործառական դասակարգությունը հիմնվում է գրական լեզվի բառերի գործածության ոլորտի վրա, այսինքն՝ այն բանի վրա, թե տվյալ բառը գրական լեզվի որ քննազամակում է գործածվում՝ ընդհանրական բնույթի գրավոր խոսքում, գիտությունն ու տեխնիկայի որևէ ճյուղում, գրասենյակային-պաշտոնական գրագրությունների ու փաստաթղթերի մեջ, հրատարակախոսական, թե գեղարվեստական գրականության մեջ: Այս մտնեցումով բառապաշարի գործառական շերտը, որ հսկայական քանակությամբ բառեր է ընդգրկում (ավելի շատ, քան լեզու բառաշերտը), կարելի է բաժանել հետևյալ երկու կարգերին:

Ա) Տեքստային բառապաշար, որ ներառում է գիտության, տեխնիկայի, փողովրդական տնտեսության, կենցաղի, հասարակական-քաղաքական, արհեստների, արվեստների, գրասենյակային-պաշտոնական գործառնությունների բոլոր տերմիններն ու տերմինային արժեք ունեցող բառերը: Գիտության, տեխնիկայի, հասարակական-քաղաքական կյանքի, արտագրության քննազամակ տերմինները հատուկ կարգ կազմելով բառապաշարի մեջ, միաժամանակ գիտության ու տեխնիկայի նվաճումների՝ կենցաղի մեջ մտնելուն զուգահեռ, դառնում են մասսայական գործածության բառեր, վերածվելով լեզու շերտի սովորական բառերի: Այս տեսակետից տերմինաբանության, որպես գործառական յուրահատուկ մասնաշերտի առանձնացումը արդարանում է միայն գիտական մտնեցումով ու տերմինաբանության մշակման ու տերմինաբանական համակարգերի յուրահատկությունների բազմակողմանի հետազոտության տեսանկյունով:

Բ) Բանաստեղծական մասնաշերտ.— Բոլոր այն բառերը, որոնք գործածվում են միայն գեղարվեստական գրականության մեջ կամ հեղուկական խոսքում ու հրատարակախոսական գրվածքներում՝ խոսքին արտահայտչականություն, հուզականություն, վսեմություն, ազդուություն, նպա-

տակազարգացում, պատկերավորություն ու գեղեցկություն տալու և նման նպատակներով: Այլ կերպ ասած, բանաստեղծական ընդհանուր անվանումով ենք կոչում դեռևս լեզու շերտին շանցած այն բոլոր գրական բառերը, որոնք հատուկ են ստեղծագործական բանավոր կամ գրավոր խոսքին, ինչպես՝ գեղաներշ, բարձրակարգ, հորդելակ, ներմակալանջ, զանգրագիսակ, բիլ, հիւր, լուրք, արյունեռանց, ողբանվագ, սուսալիքխար, մերկապարանոց, պերճապանույն, ճանաչազեղ, զարնաճաղար, ծիծաղախիտ և այլն, և այլն: Այս բոլոր բառերը, ինչպես տեսնում ենք, սովորական հայերեն բառեր են հայերենի բառակազմության նորմաներին լիովին համապատասխան, և դրանք, այնուամենայնիվ, լեզու շերտին չեն պատկանում, որովհետև սովորական խոսքային իրադրություններում չեն գործածվում կամ գործածվում են շատ սակավ դեպքերում, երբ խոսողը հատկապես ձգտում է գեղեցիկ, բարձր գրական ոճին հատուկ բառեր օգտագործել:

Այս մասնաշերտի լեզվաբանական ընդհանուր բնութագիրն այն է, որ դրա մեջ մտնող բառերը հատուկ են ստեղծագործական ոճերին. բանաստեղծ թե վիպասան, գիտնական թե հրատարակախոս, գիտնական թե կուսաշխատող, բանավոր թե կոլտնտեսական, մի խոսքով՝ յուրաքանչյուր մարդ խոսելիս կամ գրելիս ձգտում է ոչ միայն տվյալ լեզվի նորմային համապատասխանեցնել իր խոսքը, այլև հնարավորին շուտ գեղեցիկ, պատկերավոր, արտահայտիչ ու ներազդող խոսքով արտահայտվել: Այս ձգտումը մղում է լեզվի ստեղծագործական օգտագործման, որ զգալի շարժում պայմանավորում է բառերի ընտրությունը, նոր բառերի կազմությունը, հնարանությունների օգտագործումը և այլն, և այլն: Այս տեսակետից մտնելով, բառերի այս մասնաշերտը կարելի էր անվանել բառապաշարի ստեղծագործական մասնաշերտ, բայց որովհետև ինքը՝ ստեղծագործական մասնաշերտ, այնպիսի ցայտուն ու անսահմանափակ դրսևորումն ունի բանաստեղծական լեզվաոճում, ուստի և ավելի հարմար ենք դնում բանաստեղծական անվանումը:

Յ. Բառապաշարի հասարակական (սոցիալական) դասակարգությունը.— Այս դասակարգությունը հիմնվում է բառերի գործածության հասարակական բնութագրերի վրա, այ-

օրինքն՝ այն բանի վրա, թե տվյալ բարը հասարակության բո-
լոր անդամների համար գործածական ու գործածելի՞ է, թե՞
նրա գործածությունը սահմանափակվում է որևէ կարգի հա-
սարակական հանգամանքով, ևեզվի բառապաշարը, ամբող-
ջությամբ վերցրած, ընդգրկում է բոլոր բառերը, անկախ
նրանց գործածության զանազան սահմանափակումներից ու
տարբերակումներից, բայց դա չի նշանակում, թե բոլոր բա-
ռերն էլ հավասարապես և անխտիր գործածվում են տվյալ
լեզուն կրող հասարակության բոլոր անդամների կողմից:
Քառապաշարի հիմնական մասը ներկայացնում են, անշուշտ,
այն բառերը, որոնք առանց որևէ սահմանափակման ընդհա-
նուր են հասարակության բոլոր անդամների համար, անկախ
նրանց դիրքից, զբաղմունքից, դասային ու դասակարգային
պատկանելությունից, կրթությունից, սեռից, հասակից: Այդ
կարգի բառերը կազմում են բառապաշարի՝ հասարակայնո-
րեն ընդհանրական շերտը, որին հակադրվում է ևսաստ-
կայնորեն տարբերակված շերտը: Առաջին կարգին են
պատկանում, օրինակ, գնալ, ասել, տեսել, շինել, տուն, քառ-
ուս, խղնայ, խնուղի, անցանատել, զուգանետ, վարսագեղ,
շեղապանձ, փառոց, մեկնա, սեղան և բազմաթիվ այդպիսի
բառեր, որոնց գործածությունը որևէ հասարակական սահ-
մանափակում չունի: Դրանց հակադրվում են այն բառերը,
որոնք հատուկ են հասարակության, տվյալ դեպքում հայ
ժողովրդի որևէ կարգի հասարակական հատկանիշով բնու-
թագրվող հատվածի կամ խմբավորման: Այսպես, օրինակ,
մեր բարբառները ներկայացնում են հայերենի տարածական
տարբերակները, որոնցով խոսում են մեր սոցիալիստական
ազգի՝ տարածքային հատկանիշով միավորվող խմբերը, իսկ,
օրինակ, մանկական «լեզվով»՝ երեխաները միմյանց ու
ծնողների և ծնողները երեխաների հետ: Երկու դեպքում էլ
ունենք հասարակության անդամների միավորում կամ խրմ-
բավորում, ըստ որում առաջինը տարածքային միավորում է,
իսկ երկրորդը՝ հասակային: Այս սկզբունքով առաջնորդվելով՝
ժամանակակից գրական հայերենի քառակազմում կարելի
է առանձնացնել հասարակայնորեն տարբերակված շերտի
հետևյալ մասնաշերտերը:

Ա) Գրական լեզվի խոսակցական տարբե-

րակին պատկանող բառեր և բառային ձևեր,
որոնք հակադրվում են գրական բառերին ու բառային ձևերին
իրենց իմաստային, կիրառական, ոճական կամ ձևական
հատկանիշներով ու որոշակի երանգավորումով, ինչպես՝
էզուց, իրիկուն, վեր «վայր, ցած», սրձ, խուճուճ, գեղոզիա,
քիլոզգիա, զոճափակ, տկար, յոթը, տասերկու, տասերեք,
ուրևամյա, օշերկիստ, ժուճալ և այլն: Բերված բառերն ու-
նեն իրենց գրական համապատասխանները և գրավոր խոսքի
նորմավորված տեսակներում (գիտական, գիտահանրամատ-
չելի գրականություն, դասագրքեր, գեղարվեստական գրա-
կանության մեջ՝ ճեղհնակային խոսք և այլն), ինչպես և նոր-
մավորում պահանջող բանավոր խոսքում (դասախոսություն,
զեկուցում, հանդիսավոր խոսք, պաշտոնական հաղորդակ-
ցում և այլն) փոխարինվում են գրանցով (վազը, երեկո,
վայր, արու, գանգուր, երկրաբան, կենսաբանություն, դոքս-
փակ, մերկ, յոթ, տասներկու, տասներեք, ութամյա, ալ-
նարկագիր, հանգես):

Բ) Ժողովրդախոսակցական լեզվի բառեր,
ինչպես՝ նղել, շոբասագ, բոճավոր «բանտարկյալ», բերդ
«բանտ», բնձոտս «բոսոտս», գլլաս «կեռաս», բուշ, օտ, ձեռ,
պոռշ, դրսեկ, վեր առեկ «վերցնել», քիբար «տաքոեղ»,
ծակաչ «աշքածակ», ալբատուն, առաջուց «նախապես»,
բարալիկ, քեֆ «խնջույք. տրամադրություն», զանավես(կա)
«վարազույք», ևեր «հայր», էսոր, էս, էսֆան, էսպես, էն, էն-
ֆան, էղյես և այլն, և այլն: Այս բառերի մի մասն արդեն
մերժված է գրական լեզվից, մյուս մասը գրական լեզվում
գործածվում է խոսքին որոշակի երանգ հաղորդելու համար,
բայց բոլորն էլ, ընդհանուր առմամբ, ժողովրդախոսակցա-
կան լեզվի բառեր են, որոնք գրական լեզվի խոսակցական
տարբերակում էլ արդեն սովորական չեն, իսկ մի քանիսը,
ընդհակառակն, աստիճանաբար ավելի ու ավելի գործածա-
կան են դառնում և հավանական է, որ ժամանակի ընթաց-
քում լեզուը շերտին անցնեն: Դրանցից են, օրինակ, նղել,
շոբասագ և այլն:

Գ) Արևմտահայերեն բառեր.— Այն բոլոր բա-
ռերը, որոնք գործածվում են արևմտահայերենում և նրանից
երբեմն անցնում են մեր գրական լեզվին ու գործածվում

ասեղծագործական նպատակներով կամ, պարզապես, կույր բնօրինակումով, ինչպես՝ հեռաձայն, հեռաձայնել, հայտագիր «ծրագիր», անույշ «մուրաբա», նախաբար «մինիստր», հավույթ «անսամբլ», ինքնաշարժ «ավտոմոբիլ», շարժակար կամ շարժապատկեր «կինո, կինոնկար», գրատուն «1. գրախանութ, 2. գրադարան», ակոս «ատամ» և այլն: Համապատասխանաբար արևելահայերենի բառերն էլ, եթե չեզոք շերտին չեն պատկանում և սովորական գործածություն չունեն արևմտահայերենում, սակայն գործածվում են երբեմն-երբեմն, նույնպիսի տարբերակային բառեր են արևմտահայերենի համար:

Գ) Բ ա ռ բ ա յ ի ն բ ա ռ ե թ ա յ ի ն ձ ե ե թ. ինչպես՝ էֆի «այգի», էթալ «գնալ», խելոնել «խենթանալ», թովհանկել «թառամել, թուլանալ, ուժասպառ լինել», աշել (եղել) «նայել», շիւի(շուի) «շիւք», խեր «հայր», խաց «հաց» և այլն:

Ե) Մ ա ն կ ա կ ա ն լ ե զ վ ի բ ա ռ ե թ. ինչպես՝ նաշի(կ), տիտիկ անել «նստել», շոփ-շոփ կամ շոմփ-շոմփ անել «չողանալ», կտկա «պտուղ, միրգ, քաղցրավենիք», պապար «պար» և այլն:

Զ) Ծ ա ծ կ ա լ ե զ վ ա յ ի ն-ժ ա ռ զ ո ն ա չ ի ն բ ա ռ ե թ. ինչպես՝ արանդա «զգույշ», արանդա կանգնել «հեկել, պահ կանգնել» (զոգություն կամ որևէ իջարուն բան անելու ժամանակ), ծայրածաղիկ «ճրագ», փայավար «ոստիկան», հինգո «սիրած», ծրնկել «զումար խաղալ» և այլն:

Ը) Հ ա ս ա թ ա կ ա թ ա ն ա կ ա ն և գ ո ճ հ կ ա թ ա ն ա կ ա ն (ա ն ա թ ա կ ա ն, ա թ ա մ ա թ ա կ ա ն, հ ա յ-հ ո յ ա կ ա ն) բ ա ռ ե թ, ինչպես՝ ռեխ (փխ. բերան), էրո-էրուլ, սեպեր բացել (բաց անել) «ծիծաղել» (անարգական երանգով), աղալ «ազահաբար ու շարունակ ուտել», փորը լցնել, խոնել, ոնդել «ազահաբար ուտելով սպառել՝ մաքրել ուտելիքը» և այլն:

4. Բառապաշարի ներլեզվական դասակարգություն.— Այս դասակարգությունը հիմնվում է բառապաշարի մեջ բառային տարբերակների դոյակցության ու զուգահեռ գործածության վրա: Լեզվի զարգացման ամեն մի փուլում էլ իրար կողքի գործառում են բառային զույգեր կամ նույնիսկ խում-

բեր, որոնք տվյալ փուլի բառապաշարի սեփականություն են կազմում, շատերը՝ նույնիսկ նրա գործուն ու շեղոք շերտին պատկանում: Այդ կարգի բառերի զույգերը կամ բառախմբերը նույնական լինելով իրենց իմաստով, հաճախ նաև գործառությամբ, տարբերվում են միմյանցից իրենց բառակազմական հատկանիշներով, հնչյունակազմով (ձևով) և այլն: Կազմված կամ առաջացած լինելով լեզվի մեջ գործող օրինաչափությունների համաձայն, դրանք, ընդհանուր առմամբ, կարող են դիտվել որպես օրինական բառազույգեր կամ բառախմբեր, որոնց մեջ, սակայն, սովորաբար մեկն է առավել գործածականն ու կանոնականը, իսկ մյուսները՝ դրա տարբերակները, գոնե որոշ ժամանակաշրջանի ընթացքում: Այսպես, օրինակ, մեր գրական լեզվում ունենք հարձան-արձանհարց, սիրագեղ-սիրագեղուն, հաշագեղ-գեղահարշ, սխալմունք-սխալանք, նույնահունչ-նույնահնչուն, երկխոսություն-երկխոսություն, դասակարգում-դասակարգություն և նման բազմաթիվ բառազույգեր: Այդ բոլոր զույգերն էլ ճիշտ կազմություններ են, միաձգամայն համապատասխանում են մեր լեզվի նորմայի պահանջներին, և ամեն ոք կարող է կամքնորաբար գործածել դրանցից մեկը կամ մյուսը, կամ մերթ՝ մեկը, մերթ՝ մյուսը, ըստ որում այդ զույգերի անդամները միևնույն իմաստի արտահայտության ազատ տարբերակներն են արտահայտության պլանում: Այդ կարգի զույգերի կողքին, սակայն, ունենք այնպիսիները, ինչպիսիք են՝ լսնակուն-լուսնակուն, հատապտղաբան-հատապտղանոց, ջրափոս-ջրփոս, աստղավառ-աստեղավառ, բարակառ-բարեկառ և այլն, որոնց մեջ մեկը կանոնական է, մյուսը՝ ոչ կանոնական, ըստ որում ոչ կանոնականներն էլ տարբեր բնույթի են. լուսնակուն սխալ ձև է, հատապտղանոց թեև ճիշտ ձև է, բայց ընդունվել է նույնքան ճիշտ հատապտղաբան-ը, ջրփոս նույնքան ճիշտ կազմություն է, որքան և ջրափոս-ը, բայց սա բառակազմական գրական կաղապարին է համապատասխանում ու հարապատ է գրական լեզվին, մինչդեռ ջրփոս-ը՝ ժողովրդախոսակցական լեզվին հատուկ հրանգ ունի, աստղավառ նոր ձև է և, համապատասխան լինելով աշխարհաբարյան բառակազմության ընդհանուր կաղապարին (բառի անփոփոխ ձևը որպես բազադրու-

թյան մաս), այժմ արդեն առավել կենտրոնակ ու կանոնական է, մինչդեռ աստեղավառ-ը՝ ժառանգորդական-գրաբարատիպ բառակազմական կաղապարով (բարդության առաջին բաղադրիչը սեռական հոլովով) այժմ արդեն հնացած ձև է, և վերջապես, Բաբելոն րացահայտորեն սխալ ձև է և պետք է մերժվի, թեև այդ ձևը (ա հողակապի փոխարեն և հողակապ) մեր լեզվի արդի փուլում սկսել է տարածվել՝ լեզվի մեջ գործող որոշ գործընթացների ազդեցությամբ:

Այդ հանգամանքները նկատի ունենալով, կարելի է ասել, որ ներլեզվական դասակարգությունը նպատակ ունի վեր հանել լեզվի զարգացման տվյալ փուլում զուգահեռաբար գործածվող բառային տարբերակները, դասակարգել գրանք որոշակի հատկանիշների հիման վրա և գրանով իսկ ցույց տալ բառատարբերակների տեղն ու գեղը մեր լեզվի բառային կազմում: Այս նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է հասկոթին բնութագրել ու սահմանել բառային տարբերակներ կամ բառատարբերակներ հասկացությունը: Բառային տարբերակներ կամ բառատարբերակներ առելով հասկանում ենք միևնույն բառի ենչյունական (ձևական), բառակազմական կամ ձևաբանական այն բոլոր տարբեր ձևերը կամ զուգահեռները, որոնք լեզվի մեջ գործող գործընթացների հետևանքով և որոշակի ներլեզվական օրինաչափությունների թելադրանքով հանդես են գալիս տվյալ փուլում, անկախ նրանց գործածականությունից, կանոնականությունից, գործառական ու սոցիալական բնութագրերից: Օրինակ՝ հատապարտան-ի զուգահեռ տարբերակն է հատապարտանց-ը՝ կազմված առաջինի — արան ածանցին համանիշ-անց ածանցով. երկու բառերը միասին վերցրած՝ բառատարբերակներ են, որոնցից մեկը ընդունվածը, սովորականը, կանոնականն է, մյուսը՝ ոչ կանոնականը, մերժվածը: Այս մտայնումով լեզվի ամբողջ բառապաշարը կարելի է բաժանել երկու շերտի՝ արժույթային բառերի շերտ և բառատարբերակների շերտ: Արժույթային ենք կոչում այն բոլոր բառերը, որոնք շունչ են իրենց զույգերը (ներլեզվական տարբերակները), ինչպես՝ ծառ, չուր, գրասեղան, անտառ, հարկըրայր, մուրաբայր, ծառուղի, պատուհան, համալսարան, ինտի-տուտ, շինարար, լեռնաշղթա և այլն: Այս բառերից մի բա-

նիսի տարբեր բարբառային ձևերը (օր. հորթպեր, հորար, հերրար, հորթպեր, մորթուր, մորուր, մորթի և այլն) ներլեզվական ձևեր չեն, այլ հասարակայնորեն տարբերակված շերտի բառեր (բարբառային բառեր):

Բառատարբերակների մեծագույն մասն են կազմում բաղադրյալ բառերը (բարդ, ածանցավոր, բարդածանցավոր), շատ փոքր թիվ են կազմում պարզ բառերը, ուստի և բառատարբերակների զանազան տեսակների թվարկումը կսկըսենք բաղադրյալ տարբերակներից:

Ա) Փոխատեղական բաղադրյալ տարբերակներ. — Ժամանակակից հայերենի բառակազմական կաղապարները հնարավորություն են տալիս միևնույն բաղադրիչներով ու բաղադրական նույն հիմքերով բարդ բառեր կազմել բաղադրիչների փոխատեղությամբ, այսինքն՝ առաջին և երկրորդ բաղադրիչների տեղերը փոխելով: Այս կարգի բաղադրությունները լինում են նույնիմաստ և տարիմաստ. նույնիմաստ են, օրինակ, շլապիեղ-պնդաթիլ, հերարձակ-արձակահեր, իրանագեղ-գեղիրան, դառնածալիտ-ծալտադառն, զանգրահեր-հերազանգուր, վիթխարանսկա-հսկայավիթխար, գեղահերաշ-հերաշգեղ, մայրաբաղաբ-բաղաբամայր և այլն, իսկ տարիմաստ են, օրինակ, խաղատախտակ-տախտակախաղ, սյունաշառ-շարասյուն, դրվազագարդ-գարդադրվազ, ցիտաբան-բանագետ և այլն: Հասկանալի է, որ տարիմաստ բառերը կապ չունեն բառային տարբերակների հետ, հետևաբար և չեն պատկանում փոխատեղական բաղադրյալ տարբերակների կարգին: Պետք է նկատել, որ բաղադրիչների հիմքային ձայնավորի ավանդական հնչյունափոխությունն այս տեսակետից որևէ կարևորություն չունի, ուստի և հնչյունափոխված թե անհնչյունափոխ բաղադրիչներով կազմությունները հավասարապես կարող են հատկացվել այս կարգի տարբերակներին, ի՞նչ նրանք նույնիմաստ են, ինչպես՝ զանգրամազ-մազազանգուր, մայրաբաղաբ-բաղաբամայր և այլն:

Բ) Տարբաղադրիչ համանիշներ. — Այն բաղադրությունները, որոնց բաղադրիչներից մեկը փոխարինվել է իր համանիշով՝ կազմելով նույնիմաստ բառ, ինչպես՝ արևախաշ-արևախանձ, քաղցրամուշ-քաղցրազու, հեփաթական-հեփաթային, որոնց երկրորդ բաղադրիչն է փոխարինվել իր

համանիշով, և արտասովախեղդ-արցունքախեղդ, հերագան-
զուր-մազազանզուր, բարեաես-զեղաես, ֆապարկ-ննչա-
պարկ, որոնց առաջին բաղադրիչն է փոխարինվել իր համա-
նիշով:

Այս կարգի տարբերակային զույգերից մեկը սովորա-
բար պատկանում է շեղոթ շերտին, մյուսը (կամ մյուսները)
բանաստեղծական լեզվին, ջիշ դեպքերում՝ բոլորն էլ շեղոթ
շերտին կամ, ընդհակառակն, բոլորն էլ բանաստեղծական
լեզվին, իսկ մի մասն էլ իմաստների տարբերակումով ժա-
մանակի ընթացքում վերածվում է զույգ տարիմաստ, ան-
կախ բառերի, ինչպես՝ ֆաղաֆային-ֆաղաֆական, ծաղկաս-
տան-ծաղկանոց, տնկարան-տնկանոց և այլն: Այս վերջին-
ները, բնականաբար, զուրս են գալիս բառային տարբերակ-
ների շարքից, զազարելով համանիշային զույգեր կազմե-
լուց, և զույգ անդամները վերածվում են անկախ արժույթա-
յին բառերի:

Գ) Հ ո ղ ա կ ա պ ա չ ի ն տ ա ր բ Ե ր ա կ ն Ե ր. — Ժամա-
նակակից հայերենի բառակազմական տեխնիկան հարուստ է
հոդակապավոր ու անհոդակապ բարդությունների ու ածան-
ցումների և զրանց հետ կապված զանազան հնչյունափոխա-
կան իրողությունների տարբեր տեսակներով: Հոդակապի և
զրա հետ կապված հնչյունափոխական բազմազան իրողու-
թյուններով պայմանավորվում են բաղադրյալ բառերի տար-
բերակային զույգերի զանազան տեսակներ, ինչպիսիք են՝ շա-
րալեզու-շարլեզու, շատախոսիկ-շատխոսիկ, գողեգող-գողա-
գող, գյուղեգյուղ-գյուղագյուղ, ֆառակուտ-ֆառեկուտ, փոխնի-
փոխ-փոխնեփոխ, արփիածին-արփեծին, պատաներար-պա-
տանիարար, վերալաց-վերսլաց, ավիաչոկատ-ավիոչոկատ,
սեյսմակալիվ-սեյսմակալիվ, մածնասպաս-մածնեսպաս և
այլն:

Այս բոլոր ձևերի մեջ, որոնք հոդակապային զույգեր են
կազմում, մեկը կանոնական է, մյուսը նորաբանական ձև
կամ պարզապես՝ սխալակազմություն:

Դ) Հ ն շ յ ու ն ա փ ո խ ա կ ա ն տ ա ր բ Ե ր ա կ ն Ե ր. —
Ժամանակակից հայերենում ավանդական հնչյունափոխու-
թյան կանոնների աստիճանական վերացման ուժեղ միտում
է նկատվում, որ հանգեցնում է բաղադրական (հաճախ նաև

քերականական) հիմքերի անհնչյունափոխ ձևերի կենսունա-
կոթյան ու տարածման: Դրա հետևանքով, ինչպես և այլ կար-
գի հնչյունափոխական իրողությունների ազդեցությամբ, ա-
ռաջանում են հնչյունափոխված և անհնչյունափոխ բառազույ-
գեր, ինչպես՝ գսեունաբեր-գարնաբեր, պարտիզագործություն-
պարտեզագործություն, լուսային-լույսային, մշակութային-
մշակույթային, բուրգգիշ-բրդգգիշ, արյունխում-արնախում,
ցորենագույն-ցորնագույն, ձյունաբուր-ձնաբուր, սառուցա-
պատ-սառույցապատ, ալյուրազաց-ալրազաց, գերություն-
գերիություն, ժանյակահյուս-ժանկանյուս, հոսանելի-նաս-
նելի և այլն:

Ե) Տ ա ր ա հ ի մ ք տ ա ր բ Ե ր ա կ ն Ե ր. — Այն բառազույ-
գերը, որոնց մեջ բաղադրության բաղադրիչի մեկ հիմքային
ձևը փոխարինվում է մի այլ հիմքային ձևով, ինչպես՝ աստ-
ղալից—աստեղալից, ֆրոշկան-ֆույրական, ոտնատեղ-ոտա-
տեղ, սեաչ-սեաչի, ելումուտ-ելումուտաֆ, լուծաբել-լուծաբել,
սյունաշար-սյունաշարֆ, ոտնակապ-ոտակապ, հողմահարել-
հողմանարել, հիմնամաս-հիմնամասս, հիմնային-հիմնային,
ձեռնաբաց-ձեռնաբացց, փոխառել-փոխառնել, նախատեսել-
նախատեսնել, վերառնել-վերառել, գործնական-գործական և
այլն:

Զ) Հ ա ր ա զ ր ու թ յ ու ն ն Ե ր ի վ Ե ր ա ծ ու մ կ ց ա-
կ ա ն բ ա ր դ ու թ յ ու ն ն Ե ր ի, ինչպես՝ գարծ ածել-գար-
ծածել, անց կացնել-անցկացնել, առաջ ֆաշել-առաջֆաշել,
մեջ բերել-մեջբերել և այլն:

Է) Հ ա վ Ե լ ա դ ր ա կ ա ն բ ա ր դ ու թ յ ու ն ն Ե ր. — Այն
բոլոր բարդությունները, որոնց իմաստը նույնանում է երկ-
րորդ բաղադրիչի իմաստին՝ առանձին վերցրած, ինչպես՝
հեղեղ-ջրհեղեղ, երամ-թոչներամ, կիրք-լեռնակիրք և այլն:

Ը) Կ Ե ղ ծ գ ր ա կ ա ն բ ա ռ Ե ր. — Այն բոլոր բառերը,
որոնք լեզվի գործուն օրինաչափությունների տեսակետից
սխալ կազմություններ են կամ վերածվել են սխալ կազմու-
թյունների, թեև գործառու են առանց այդ սխալների գի-
տակցման: Այդպիսիք են ժողովրդական օտուզաբանությամբ
առաջացած տարբերակները (օր. լսնուկի-լուսնուկի «պլա-
տին», լսնակուն-լուսնակուն «ալաբաստր», լսնաօրի-լուսնաօ-
րի «մի բույսի անուն»), որոնք կազմված են լուսն «աչքի

փառ, սպիտակօ բառից, որ չի դիտակցվել և փոխարինվել է լուսին բառով՝ իբր թե լուսին-ա-կուն > լուսնակուն, լուսին-սոսկի > լուսնասկի, լուսին-տօրի > լուսնտօրի. — պղպղափառ-պղպեղափառ (առաջին բաղադրիչն է պղպղ — (պուղ-սփալս) բառի կրկնավորը), որ չի գիտակցվել և բացատրվել է իբրև պղպեղ, հոգաբարձու-հոգեբարձու (կապել են հոգի բառի հետ, չիմանալով, որ հոգ(ս) բառն է), վառկաբեկել-վառփառեկել (վառի բաղադրիչը փոխարինվել է վառ-ով, իբր թե՛ վառք կտառել), անհարկի կամ սխալ նորաբանություններ՝ գոյություն ունեցող համապատասխան բառը կամ բառի ճիշտ ձևը չիմանալու հետևանքով (օր. հապալա սհապալա-սիի կամ հավամբղիի սխալը: չիմանալով՝ կազմել են հավա-վիրգ. — գետաղաբ, գետակից տերմինները չիմանալով՝ կազ-մել են գետախառնուրդ, գետաղյուսան. — հավատամ օթարգ-մանել են՝ աշխարհաբար և դարձրել հավատանք և այլն), կեղծ արմատները (օր. գրկել բայից՝ զիրկ և զուրկ, որ այժմ կանոնականն է, հեղել բայից՝ հուել և հիել, թնդալ բայից՝ բունդ և թինդ, շող և շավղ (գրաբարյան շավղ գրությունը մե-խանիկորեն վերածել են նոր ուղղագրության և այլն), կեղծ գրականացումը (օր. տատմեռ, ծաղկամեռ, շախափան, չոր-բանգող, կրկնամեռ ժողովրդախոսակցական լեզվի բառերը, որոնք անցել են նաև գրականին և հենց այդպես էլ պետք է գործածվեն, սգրականացվել են ու ստացել տատմայր, ծաղ-կամայր, շախափան, չորբանգող, կրկնամեռ տարբերակ-ները), կեղծ հնարանությունները, ինչպես՝ աստեղնաբիր, որի առաջին բաղադրիչի աստեղն ձևը իբրև թե գրաբարատիպ է, բայց գրաբարում այդպիսի ձև գոյություն չունի, վեշտաս-նամյա և վեցտասնամյա իբրև թե «տասնվեց տարեկան», բայց սխալ է, որովհետև առաջինի ճիշտ գրաբարյան ձևն է վեշտասանամյա, իսկ երկրորդը չի կարող նշանակել տասն-վեցամյա. վառլեմմատ գործածվել է իբրև թե որպես գրաբար ձև, բայց սխալ է. գրաբարյան ձևն է վառղամատն, կարապ-նավիզ իբր թե կարապն հին ձևից, բայց գրաբարյան ձևն է կարապ և այլն):

Ք) Ձ և բ ա ն ա կ ա ն տ ա ր բ ե ր ա կ ն ե ր. — Աշխարհա-բար գրական լեզվի ոչ հնավոր անցյալում գործածական էին գրական ժառանգորդությամբ գրաբարածն բազմաթիվ բայեր.

դերանվանական ձևեր, հոգնակիի քարացած ձևեր և այլն, որոնք թեև արդեն դուրս են եկել սովորական գործածությու-նից, բայց երբեմն-երբեմն գործածվում են հնատիպություն ստեղծելու և այլ նպատակներով, ինչպես և ավագագույն սե-րբնդի որոշ ներկայացուցիչների կողմից. դրանցից են՝ սոփա, դոփա, նոփա, ծաղկիլ, օծանել, մատուցանել, ծանուցանել, տրտնջել և այլն, կանոնական սրանք, դրանք, նրանք, ծաղկել, օծել, մատուցել, ծանուցել, տրտնջալ և նման ձևերի փոխա-րեն: Դրանք, բնականաբար, հնացած ձևեր են, որոնց գործա-ծությունը պարզ հնաբանություն է:

Այս կարգի մեջ պետք է մտցնել նաև շեզոք սևոի բայերի ներգործածե կանոնական ձևին զուգահեռ կրավորաձևի (վ ածանցով) ոչ կանոնական կազմությունը, որ վերջին տա-րիներում զգալիորեն տարածվող երևույթ է դարձել, ինչպես, օրինակ՝ աւմատակալել-աւմատակալվել, սահել-սահվել, ապրել-ապրվել և այլն:

Ժ) Ն ո ր ա բ ա ն ա կ ա ն բ ա զ մ ա ղ ա ն ու թ յ ու չ ն. — Ինչպես թարգմանական (երկբեզվյան) ու տերմինաբանական քառարաններում, այնպես էլ առօրյա լեզվագործածության ժամանակ, մասնավորապես գրավոր խոսքում, հարկ է լինում այլ լեզուների բառերի ու տերմինների դիմաց կիրառել հայա-կազմ համապատասխանները կամ էլ պարզապես նոր հաս-կացությունների, գործիքների և այլնի համար նոր բառեր ստեղծել: Բառարաններում այդպիսի դեպքերում գերադասում են հանձնարարել մեկից ավելի բառեր, որպեսզի գրանցից մեկն ու մեկը ընտրեն ու գործածեն: Այդ նույն բանը տեղի է ունենում նաև մամուլում, երբ անհրաժեշտորեն ստիպված են լինում շտապ կարգով թարգմանել որևէ նոր բառ, կամ էլ՝ ստեղծագործողների գործերում, որոնք անհրաժեշտաբար կազմում են նորանոր բառեր: Այսպիսով, ստացվում են միաժամանակ ստեղծված ու առավել կամ նվազ գործածա-կան համանիշներ, որոնցից ժամանակի ընթացքում դիտակ-ցորեն կամ տարերայնորեն ընդհանրանում է մեկը. այդպես են՝ լուցիլ-հրահան-հրահար-հրատուփ-իմեմնավաղիլ-վառիլ-կրակվառիլ-իմեմնալույց-կայծաճան-կայծավառ ուսերեն ՅՁ-жонгалка-ի դիմաց, սրտաբանութուն-սրտազիտութուն՝ կար-դիոլոգիա-ի դիմաց և այլն:

Ժա) Ուղղադրական-ուղղախոսական տար-
բերականեր.— Մեր լեզուն, իբրև կենդանի, զարգացող լե-
զու, անընդհատական շարժման մեջ է. նրա մեջ տեղի են ու-
նենում ոչ միայն բառակազմական նոր իրողությունների ա-
ռաջացում ու տարածում, ոչ միայն նոր բառերի կազմություն
ու մուտք՝ այլ լեզուներից կամ մեր լեզվի տարբերակային
ձևերից, այլև ունենում հնչյունաբանական, ձևաբանական,
շարահյուսական բազմազան իրար խաչաձևող գործընթաց-
ներ, որոնք իրենց հերթին անխուսափելիորեն անդրադառ-
նում են բառերի վրա, առաջ բերում բառային տարբերակ-
ներ: Այսպիսի իրողություններից է նաև արտասանական-
ուղղագրական երկվությունը, որ հետևանք է խոսակցական
լեզվի մեջ հնչյունների արտասանության գնանզան կարգի
փոփոխությունների, ուղղագրության մեջ բարբառային ար-
տասանության ներթափանցման կամ սովորական (կանոնա-
կան) գրական արտասանությունը գրայինով փոխարինելու:
Այս կարգի իրողությունները բնականաբար առաջ են բերում
նաև ուղղագրական-ուղղախոսական տեսակետից տարբեր
բառային զույգեր, որոնք ըստ էության նույն բառն են, բայց
տարբեր ուղղագրությամբ և, համապատասխանորեն, տարբեր
էլ արտասանությամբ: Այսպես, օրինակ, գեռ հնուց ունենք
մանիշակ-մանուշակ տարբերակային ձևերը, որոնցից այսօր
կանոնական է մանուշակ-ը, իսկ մանիշակ-ը կարող է ըստ
հարկի գործածվել գեղարվեստական գրականության լեզ-
վում, երբեմն նաև բաղադրությունների մեջ (հմմտ. ովտրա-
մանիշակագույն ձևը): Այդպես են նաև՝ օգել-ֆցել, որոնք
արդեն բառային տարբեր արժեք են ստացել, սյուզ-սյուզ,
հեզ-հեբ, դարպաս-գարբաս, տեգերակիև-տեբերակիև, ոսկր-
ոսկոր, ջրալույծ-ջրալուծ (թիմիական դրականության մեջ
միայն այս երկրորդ ձևն է գործածվում, որ սխալ է) և այլն:

Քննության աննելով բառատարբերակների թվարկված տե-
սակները, կարելի է հանգել հետևյալ ընդհանուր եզրակացու-
թյանը: Անկախ այն բանից, թե ինչ հարաբերության մեջ են
այդ տարբերակների գեռնա անհանձնարարելի կամ նույնիսկ
բացահայտորեն սխալ ձևերը մեր լեզվի այժմյան նորմայի
հետ, բոլորն էլ բնութագրվում են մեկ ընդհանուր հատկանի-
շով. այն է՝ բոլորն էլ լեզվի մեջ գործող ներքին գործընթաց-

ների հետևանք են: Այս տեսակետից բառազույգերի նույնիսկ
այն տարբերակները, որոնք թվարկման ժամանակ համարել
ենք սխալ, մերժելի, անգիտություն հետևանք և այլն, լեզվի
մեջ գործող որոշակի գործընթացի դրսևորումն են, որոշ մի-
տումի արտահայտությունը: Այսպես, օրինակ, հաշվեհաշ-
հաշվանկատ զույգի մեջ ճիշտը, կանոնական է հաշվեհաշ-
ուրովհետև հաշիվ բառը բաղադրությունների մեջ սովորաբար
մտնում է ավանդական հաշվե- ձևով (հաշվեհարդար, հաշ-
վեկշիռ, հաշվետու, հաշվետար, հաշվեմատյան և այլն).
սակայն, մյուս կողմից էլ, այդ ձևը չի բացատրվում ոչ մի-
այն աշխարհաբարի, այլև նույնիսկ գրաբարի օրինաչափու-
թյուններով (պետք է ենթադրել նախահինհայերենյան հա-
շուի ձևը, որի ի-ն ա հոգակապի հետ կտար Ե), ուստի և
միանգամայն օրինաչափ կերպով այդ բաղադրական հիմքը
փոխարինվում է հաշիվ բառի հնչյունափոխված ձևով
(հաշվ-), որից էլ կազմվում է հոգակապավոր ձևը, և եթե,
օրինակ, հաշվանկատ, հաշվատար ձևերը առայժմ սխալ են
ու մերժելի, ապա հաշվապան, հաշվակալ, հաշվագետ, հաշ-
վագիր, հաշվակցել, հաշվասեղան, հաշվամեքենա և շատ
ուրիշ բառերի ա՛յս ձևերն են ճիշտ, իսկ Ե-ով ձևը կամ չկա.
կամ էլ հանձնարարելի չէ: Քերենք ուրիշ օրինակներ, մեր
արդի լեզվում չեզոք շերտի բառ է շֆերք-ը, բայց Ֆիրդուսու
Շահնամե-ի թարգմանության մեջ, գրա հետ միասին, մի
քանի անգամ գործածվել է շֆաերք ձևը. բառակազմական
ընդհանուր կաղապարների գործուն օրինաչափությունների
տեսակետից դա միանգամայն օրինական ձև է, ինչպիսիք են
նաև կարմաերիզ, բարակառո (բարակառ կնշանակելը ռա-
բակավուն), ուստի և անհոգակապը պետք է լինի միայն բա-
րակառն ձևը), ամբառ (չկա ամբառն ձևը) և այլն: Այս կա-
ղապարներին հետևելով թարգմանիչը կազմել է շֆաերք
ձևը և գործածել տաղաչափական նկատումով (վանկա-
ձևը և գործածել չափը պահպանելու համար): Այդպես
բանակի ավելացում՝ չափը պահպանելու համար): Այդպես
են նաև քինդ, հինչ և նման կեղծ բառերը, որոնց գործածու-
թյունը նույնպես բանաստեղծական խոսքի պահանջներով է
բացատրվում, բայց ինչ էլ որ լինի, գրանց հնարավորությու-
նը պայմանավորված է ներլեզվական հանգամանքներով:
Նույնպես և՛ պաշտամունք բառի պաշտամունք ձևը, թեև

միանգամայն օրինական կազմութիւն է, բայց կանոնական չէ, գործածվել է միայն բանաստեղծութիւնների մէջ, ուստի և բանաստեղծական բառ է, թեև կազմութիւնը միանգամայն թույլատրելի է (համա. վարմունք, ասմունք և այլն): Վերջապես պետք է նկատի ունենալ, որ ընդհանուր առմամբ քերված բոլոր կարգի տարբերակային ձևերն էլ համասարաստութանում են մեր լեզվի բառակազմական ընդհանուր օրինաչափութիւններին, և եթէ տվյալ զույգի մէջ մեկ տարբերակը հանձնարարելի չէ, որովհետև նորմայի մակարդակում ամբողջ է մյուսը, ապա ուրիշ նմանօրինակ դեպքում նույն կաղապարով կազմված կարող է կանոնական լինել, օրինակ՝ լուսային-լուսային զույգի մէջ կանոնականն է լուսային, բայց հնչուրային-հնչուրային զույգի մէջ հակառակն է, կանոնական է հնչուրային, ոչ կանոնական՝ հնչուրային. նույնպես և՛ եթէ կայսերական-կայսրական զույգի մէջ կանոնականն է կայսերական, ապա կայսերություն-կայսրություն զույգի մէջ կանոնականն է կայսրություն և այլն: Այս էլ, ահա, պատճառ է դառնում տարբերակային զուգաձևերի առաջացման և հնարավոր դարձնում նաև նրանց կամընտրական գործածութիւնը հատկապես ստեղծագործական խոսքում, իսկ որոշ զույգերի համար էլ՝ լեզվի բոլոր տարբերակային ձևերում ու լեզվատճեբրում: Եվ դա միանգամայն հասկանալի է. խոսողի (և գրողի) համար հասկանալի չէ և շատ էլ հետաքրքիր չէ, թե ինչու հաշվեկատ, հաշվեհարդար բառերում ունենք և «հողակապ», իսկ հաշվապահ, հաշվասեղան բառերում՝ ա. նրա համար կարևոր է այն, որ դրանք կան, և եթէ հաշիվ բառից նոր բարդութիւն պետք է կազմի, ապա ազատ է ընտրելու երկու հնարավոր ձևերից մեկը, ուստի և կարող է կազմել հաշվագետ կամ հաշվեգետ, հաշվամեհեհա կամ հաշվեմեհեհա և այլն: Նույնպես և՛ ոչ մի տրամաբանական և խոսողներին հասկանալի պատճառ չկա այն բանի համար, որ ունենք հիվանդանոց, դպրոց, դարբնոց և ոչ հիվանդարան, դպրարան, դարբնարան, իսկ մյուս կողմից՝ անողջարան, ուսումնարան, ճաշարան, և ոչ՝ անողջանոց, ուսումնանոց, ճաշանոց, կամ ունենք՝ լուսնային և լուսնական, իսկ արեգակնային-ի հետ շունենք նաև արեգակնական, ունենք արփիանման-արփեման և արփիագեղ-

արփագեղ, առաջին դեպքում չկա արփանման զուգահեռը, երկրորդ դեպքում արփեգեղ-ը, ունենք որդիական (և ոչ՝ որդեկան) և դրան հակառակ՝ պատանեկան (և ոչ՝ պատանեկական) և այլն, և այլն: Այս օրինակներից մի քանիսը կարող են բացատրվել որոշակի կանոններով, բայց մեծ մասն ունեն միայն լեզվաբանական ընդհանուր բացատրութիւն, և դա այն է, որ հնարավոր ձևերից լեզվագործածութիւն մէջ պատմականորեն մեկը ամրանում է և բարձրանում նորմայի մակարդակին, իսկ մյուսը կամ մյուսները՝ մերժվում: Եվ որովհետև լեզվի մէջ բառակազմութիւն ավարտ չկա, շարունակաբար նորանոր բառեր են կազմվում, ապա հասկանալի է, որ ներլեզվական տարբերակների գոյութիւնն էլ անխուսափելի է լեզվի պատմութիւնի բոլոր փուլերում:

Այնուհետև. լեզվի զարգացման ընթացքում վերանում են որոշ օրինաչափութիւններ, առաջանում նորերը, և հասկանալի է, որ եթէ կան հին օրինաչափութիւններին համապատասխանող իրողութիւններ, տվյալ դեպքում բառակազմական իրողութիւններ, ապա լեզուն ձգտում է փոխարինել զրանք նոր օրինաչափութիւններին համապատասխանողներով: Դրա հետևանքով տեղի է ունենում հին, ավանդական իրակաւթիւնների նորացում, այսինքն՝ նոր և հին իրակաւթիւնների զուգահեռութիւն, մինչև որ մեկն ու մեկը (սովորաբար հինը) դուրս է գալիս գործածութիւնից: Այսպես, օրինակ, Բեռնդի «քրոջ որդի» հին է, որովհետև կազմված է Բույր բառի գրաբարյան սեռականի Բեռ հոլովածից, որը մեր լեզվից վաղուց արդեն դուրս է եկել ու փոխարինվել Բռոջ ձևով, ուստի և Բեռնդի-ն էլ համապատասխանաբար դարձնում են Բռոջ-որդի, բայց որովհետև աշխարհաբարի համար ամենաընդհանուր ու կենսունակ բառակազմական կաղապարով բարդութիւնների մէջ գոյական բաղադրիչը մտնում է ուղղական հոլովածեով, ապա Բռոջորդի ձևին էլ զուգահեռ կազմում են Բուր-որդի: Նույնպես և՛ շփանք հնարավոր ու թույլատրելի նոր ձև է, որովհետև երբ բառի սկզբի Ե-ն արտասանվում է յե, որով բառը դառնում է բաղաձայնով սկսվող, և ինչպես որ կազմվել է շփանաւթ, այդպես էլ կազմվում է շփանք: Այսպես են նաև բոլոր մյուս զուգահե-

նությունները, բացառութեամբ առանձին պատահական սխալները:

Շարադրված հանգամանքները հաշվի առնելով և բառատարբերակների բոլոր տեսակներն ընդհանուր մտնեցումով գնահատելով՝ մենք կարող ենք դասակարգել զրանք արժուքայնության ու տարբերակայնության հարաբերակցութեամբ: Ինչպես արդեն ասել ենք, այն բոլոր բառերը, որոնք չունեն տարբերակներ, արժութային բառեր են և, միաժամանակ, սահմանել ենք նաև տարբերակային բառերի կամ բառատարբերակների հասկացությունը: Մի կողմ թողնելով առաջին կարգի բառերը (օր. քար, տուն, հղբայր, հյուրանոց, այգեզործ, բաղամթիվ և այլն), բնութային առնելք բառատարբերակների ներքին հարաբերությունը: Այս դեպքում, փմենից առաջ, մենք կարող ենք տարբերակային բառազույգերի կամ բառախմբերի մեջ տեսնել կանոնական-ոչ կանոնական ձևերի հարաբերություն կամ հավասարապես կանոնական ձևերի հարաբերություն, և դրա հիման վրա տարբերակային բառազույգերը բաժանել հրկու հիմնական կարգերի:

1. Տարբերակային բառազույգեր կամ բառախմբեր, որոնց մեջ միայն մեկն է կանոնական, ըստ որում կանոնականությունն այս դեպքում որոշվում է ոչ այնքան «ճիշտ» — «ոչ ճիշտ», «հին» — «նոր» բնութագրերով, որքան բառազործածության նորմայի չափանիշով, այսինքն՝ տվյալ տարբերակն ընդունված է, սովորական գործածություն ունի, հետևաբար և համապատասխանում է լեզվական այժմյան նորմային, իսկ մյուսը կամ մյուսները՝ սակավ կամ բացառիկ գործածություն ունեն, սովորական չեն կամ, նույնիսկ, հանձնարարելի էլ չեն: Այսպես, օրինակ, հաշվենկատ-հաշվանկատ, հատապղարան-հատապղարանոց, սաբեսար-սաբասար, սառգապատ-սառուցապատ-սառույցապատ, փոխնի-փոխ-փոխնիփոխ բառատարբերակների մեջ սովորականները, առավել գործածականներն են առաջինները, հետևաբար և դրանք են կանոնականները, իսկ երկրորդները՝ ոչ կանոնականները: Մրանից ինքնին բխում է այն, որ կանոնական ձևերը կարող ենք դիտել որպես առժութային բառեր, իսկ ոչ կանոնականները՝ որպես դրանց տարբերակներ. բերված զույգերի մեջ հաշվենկատ, հատապղարան, սաբեսար,

փոխնիփոխ, սառգապատ արժութային են, իսկ հաշվանկատ, հատապղարանոց, սաբասար, փոխնիփոխ, սառուցապատ-սառույցապատ՝ տարբերակային բառեր: Այս երկու կարգերից առաջինները կկոչենք անփոփոխակներ, իսկ երկրորդները՝ փոփոխակներ, ըստ որում երկու կարգերի միջև գոյություն ունի գերադասության — ստորադասության հարաբերություն. անփոփոխակներին ստորադասվում են փոփոխակները:

2. Տարբերակային բառազույգեր կամ բառախմբեր, որոնց բոլոր անդամներն էլ հավասարապես գործածվում են կամ հավասարապես քիչ են գործածվում և դեռևս ոչ մեկը չի բարձրացել անփոփոխակի աստիճանին, ինչպես՝ երկխոսություն-երկխոսություն, երեսպատել-երեսպատել, երեկ-թեկ-երեկյան-եռաթեկ, երկթերթ-երկթերթանի, պարտեզագործություն-պարտիզագործություն և այլն: Այս կարգի հավասարազոր բառատարբերակների միջև առայժմ չկա գերադասության — ստորադասության հարաբերություն. դրանցից մեկին կամ մյուսին առավելություն տալը հիմնվում է միայն սուբյեկտիվ նկատառումների վրա, իսկ որոշ դեպքերում էլ նույնիսկ միևնույն հեղինակի մոտ և նույն գրվածքում գտնում ենք գործածված մերթ մեկը, մերթ՝ մյուսը: Այդ նկատի ունենալով էլ այս կարգի բառատարբերակները կոչում ենք՝ կամընտրական փոփոխակներ. բերված զույգերը կամընտրական փոփոխակներ են, քանի որ նույն բառային իմաստի արտահայտման տարբեր ձևերն են արտահայտության պլանում: Մրանից հետևում է այն, որ իրեն անփոփոխակ այս դեպքում պետք է դիտել բառային իմաստը. այսպես, օրինակ, երկթերթ-երկթերթանի զույգերի համար կասեինք՝ «երկու թերթից բաղկացած կամ երկու թերթ ունեցող» իմաստի համար ունենք երկու բառ-փոփոխակ՝ երկթերթ և երկթերթանի, իսկ, օրինակ, ուտերեն ЗАЖИГАЛКА-ի համար՝ 11 բառ-փոփոխակ: Սակայն այսպիսի բնութագրությունը, թեև գիտականորեն միանգամայն ճիշտ, գործնականորեն նպատակահարմար չէ, ուստի և գիտականորեն այդ դրույթն ընդունելով և գիտական հետազոտությունների համար այդպիսի բնութագրությունը հանձնարարելով, կարելի է դիմել գործնականորեն ավելի դյուրին, բայց պայմանական բնութագրության, կամընտրաբար մեկը

համարելով պայմանական անփոփոխակ, մյուսը կամ մյուսները՝ պայմանական փոփոխակ(ներ): Այսպես, օրինակ, երկրբեր-երկրբերանի բառատարբերակներ են, որոնցից պայմանական անփոփոխակ է երկրբեր-ը, իսկ պայմանական փոփոխակ՝ երկրբերանի-ն, Հասկանալի է, որ այս եպայմանականները, եթե չունի ինչ-ինչ լեզվաբանական հիմնավորում, բացառապես սուբյեկտիվ է. заживалка-ի համար մենք պայմանական անփոփոխակ կհամարենք վառիչ-ը, իսկ մի ուրիշը՝ գուցե ինճնավառիչը կամ լուցիչ-ը:

Անփոփոխելով արժույթայնության—տարբերակայնության և անփոփոխակայնության—փոփոխակայնության հարաբերությունների մասին ասվածները, կարելի է հանգել հետևյալին: Լեզվի ամբողջ բառապաշարը ներլեզվական բնութագրություններով բաժանվում է երկու շերտի՝ արժույթային բառերի շերտ և տարբերակային բառերի կամ բառատարբերակների շերտ: Բառատարբերակների շերտն էլ, իր հերթին, անփոփոխակայնություն-փոփոխակայնություն հարաբերությամբ ստորաբաժանվում է երկու կարգի՝ անփոփոխակներ-փոփոխակներ և պայմանական անփոփոխակներ-պայմանական փոփոխակներ:

Վերը թվարկեցինք բառատարբերակների բազմաթիվ տեսակներ ու ենթատեսակներ, ըստ որում բառատարբերակների դասակարգումն ըստ տեսակների բացահայտում է դրանց ներլեզվական պատճառները: Միևնույն ժամանակ, անկախ այն բանից, թե ինչ պատճառներով են առաջացել բառատարբերակները, դրանք կան մեր գրական լեզվում, առավել կամ նվազ հաճախականությամբ գործածվել են կամ գործածվում են, ուստի և դրանք որոշակի հարաբերության մեջ են մեր լեզվի այժմյան բառագործածության նորմայի հետ. այդ հարաբերությունն իրեն ելակետ ընդունելով և դրա հիման վրա բառատարբերակների զույգերի կամ խմբերի անդամների միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունները որոշելով, դասակարգեցինք բառապաշարն ըստ արժույթայնություն-տարբերակայնություն, իսկ բառատարբերակների շերտն էլ՝ անփոփոխակայնություն-փոփոխակայնություն հակադրությունների: Այժմ, իբրև ելակետ ընդունելով ոչ թե տարբերակային բառապաշարի բառազույգերի կամ բառախմբերի

ներքին հարաբերությունը միմյանց հետ, այլ բառատարբերակների հարաբերությունը բառագործածության արդի նորմայի հետ, կարող ենք այլ կարգի դասակարգություն կատարել: Ինչպես արդեն բառատարբերակների զանազան տեսակների թվարկման ժամանակ հաճախ ասել ենք, բառատարբերակների զույգերի ու խմբերի անդամներից մեկը կամ մյուսը սովորական է, մյուսը հազվագեղ գործածություն ունի, մեկը ճիշտ է, մյուսը՝ սխալ, երկուսն էլ հավասարապես գործածական են կամ ոչ մեկն էլ դեռևս սովորական գործածություն չի ստացել և այլն: Վերանալով բառատարբերակների զանազան տեսակներից և բոլորը դիտելով մեկ ընդհանուր շափանիշով՝ բառագործածության արդի նորմայի շափանիշով, բոլոր բառատարբերակները կարելի է բաժանել երկու տիպի՝ ա) ազատ տարբերակներ և բ) սառեակազային տարբերակներ:

Ազատ տարբերակներ են այն բոլոր տարբերակային զույգերն ու խմբերը, որոնց անդամները հավասարապես գործածական են, կամ դեռևս հավասարապես թիչ գործածական և հենց այն պատճառով, որ դրանցից դեռևս ոչ մեկը չի բարձրացել անփոփոխակի աստիճանին և բոլորն էլ գործածվում են կամ ընտրաբար, դրանք չեն կարող բնութագրվել գերադասություն-ստորադասություն հարաբերակցությամբ: Բացի դրանից, այդ տարբերակները մեր լեզվի բառակազմական, հնչյունարանական, քերականական նորմայի տեսակետից էլ հավասարապես ճիշտ են, և նրանցից մեկի անփոփոխակ դառնալը, մյուսի կամ մյուսների փոփոխակային բառերի վերածվելը պայմանավորված է միայն բառագործածության հետագա ընթացքով: Այսպես, օրինակ, երեսապատել-երեսապատել, ետադարձ-հետադարձ, երկխոսություն-երկխոսություն, լուսնային-լուսնական, երկրբեր-երկրբերանի և այդպիսի զույգերը ազատ տարբերակներ են, որովհետև նրանք հավասարապես գործածական են ու հանձնարարելի: մենք առայժմ չենք կարող ասել, թե, օրինակ, երեսապատել-ը մենք առայժմ չենք կարող ասել, թե, օրինակ, երեսապատել-ը՝ սխալ կամ անճիշտ է կամ ընդունելի, իսկ երեսապատել-ը՝ սխալ կամ անհանձնարարելի: այդպես էլ՝ մյուսները: Ազատ տարբերակներ են նաև վառիչ-կրակվառիչ-կայծաճան-հրահան և դրանց մյուս զուգահեռ փոփոխակները, փռելծուծ-փռելծծիչ և մյուս

զուգահեռները և այլն, որովհետև դեռևս դրանցից ոչ մեկն էլ ընդհանուրի կողմից ընդունված անփոփոխակ չի դարձել, ընդ որում յուրաքանչյուրն իր կազմությամբ միանգամայն ճիշտ է և ընդունելի Ըստ այսմ, ազատ տարբերակների կարգին ե՞ն պատկանում ճախօրդ զաստկարգումով պայմանական անփոփոխակների և պայմանական փոփոխակների այն բոլոր զույգերը, որոնք խեղց կազմությամբ, հեշյունական ու փերականական ճատկանիշներով չեն նախատվում մեր լեզվի օրինաչափություններին:

Ստորակարգային տարբերակներ են այն բոլոր բառատարբերակները, որոնց զույգերից (խմբերից) որևէ մեկը անփոփոխակ է, մյուս(ներ)ը՝ փոփոխակ, օրինակ, սառցապատ-սառուցապատ-սառույցապատ, բրնձաձուլլ-բրնձեզձուլլ, աստղաբիր-աստեղաբիր-աստեղնաբիր, շներ-շխներ և այլն ստորակարգային տարբերակների զույգեր կամ խմբեր են, որովհետև դրանց մեջ անփոփոխակներ են մեկական բառ (սառցապատ, բրնձաձուլլ, աստղաբիր, շներ), իսկ մյուսները՝ փոփոխակներ:

Ստորակարգային տարբերակներն իրենց հերթին ստորաբաժանվում են երկու հակադրական խմբերի՝ ա) կանոնական տարբերակներ-պարականոն տարբերակներ և բ) աննշույթ տարբերակներ-նշույթավոր տարբերակներ:

Կանոնական-պարականոն հակադրության մեջ կանոնականին են պատկանում ստորակարգային բառատարբերակների այն անդամը կամ անդամները, որոնք իրենց ձևական բնութագրերով համապատասխանում են ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափություններին, ինչպես՝ աստղաբիր և աստեղաբիր, ֆառակուտ, ֆառեզրիշ, այգեփօր, էլեկտրակայան, էներգամատակարարում, լսնաօրի, վառկաբեկել, այծենական և այլն կանոնական տարբերակներ են, իսկ դրանց աստեղաբիր, ֆառեկուտ, ֆառագրիշ, այգափոր, էլեկտրոկայան, էներգամատակարարում, լսնաօրի, վառքաբեկել պարականոն տարբերակներ: Այս մտացումով բառատարբերակները խմբավորելիս հնարավոր է, որ պարականոն համարվեն նախորդ դասակարգումով անփոփոխակների խմբին հատկացված բառատարբերակները, իսկ կանոնականին՝ փոփոխակները. սա բոլորովին էլ տարօրինակ չէ, որովհետև

այստեղ որոշիչը բառակազմության մեջ դրսևորվող օրինաչափություններն են. եթե սովորյալ տարբերակն իր բառակազմական, հնչյունական, քերականական հատկանիշներով համապատասխանում է ժամանակակից հայերենի գործուն կամ ավանդական օրինաչափություններին, ապա բնութագրվում է որպես կանոնական, իսկ եթե այդպիսին չէ, ապա պարականոն է: Այսպես, օրինակ, արևայտում, ձնարում, այրազաց թեև ավելի տարածված են և, հետևաբար անփոփոխակներ են, բայց պարականոն են, որովհետև ժամանակակից գրական հայերենի հնչյունափոխական կանոններին չեն համապատասխանում, ըստ որում ոչ բառակազմության, ոչ էլ թերման ժամանակ չու երկհնչյունը սղման չի ենթարկվում: Ստույց, ձյուն, արյուն, այլու բառերի բաղադրական սառց-, ձն-, արև-, այր- հիմքերը ժողովրդագիտական լեզվին են պատկանում, ուստի և թեև դրանցից կազմված սառցապատ, այրազաց ու բազմաթիվ այլ բառեր հաստատուպես մտել են մեր գրական լեզվի բառապաշարի մեջ և անփոփոխակներ են սառուցապատ, այլուրազաց և նման տարբերակների հարաբերությամբ, բայց իրենց բառակազմական-ձևավական հատկանիշներով առաջմ պարականոն են:

Աննշույթ-նշույթավոր հակադրության մեջ բառատարբերակները բնորոշվում են այլ մտացումով. այստեղ կարևոր են ոչ թե բառատարբերակների բառակազմական-ձևական հատկանիշները, այլ նրանց հասարակական, գործառական, պատմական բնութագրերը: Այսպես, օրինակ, աստղային-աստեղային բառատարբերակային զույգի մեջ առաջինը կազմված է մեր լեզվի արդի բառակազմական կազապարների համաձայն, երկրորդը՝ ավանդական. քանի որ երկուսն էլ համապատասխանում են աշխարհագրորդական լեզվի բառակազմական օրինաչափություններին, ապա երկուսն էլ կանոնական են՝ ըստ կանոնական-պարականոն հակադրության. այստեղ երկուսն էլ նույն բնութագրերն ունեն: Սակայն բառագործածության արդի նորմայի տեսակետից նրանք նույնական չեն իրենց բնութագրերով. աստղային չեզոք, գործուն, ընդհանրական բառ է և, հետևաբար, չի կարող հասարակայնորեն, պատմականորեն կամ գործառուպես տարբերակված շերտերին պատկանել: Դրան հակառակ, աստեղա-

յիւն մեր գրական լեզվի համար արդեն հնացած բառային ձև է և պետք է ստանա պատմականորեն տարբերակված շերտերից որևէ մեկի բնութագիրը, ավյալ դեպքում՝ չգործուն շերտի հնացած բառ: Չնայած դրան, այդ բառը դեռևս գործածվում է և կարող է գործածվել պեղարվեստական գրականութեան, առավելագույն չափածոյի, մեջ, ուստի և գործառական դասակարգութեամբ էլ կպատկանի բանաստեղծական շերտի բառերին: Այսպիսով, երկու բառատարբերակներից աստղայինը պատմական, գործառական կամ հասարակական տեսակետից տարբերակված մասնաշերտերից որևէ մեկին չի պատկանում, մինչդեռ աստղայինը պատմական տեսակետից հնացած, իսկ գործառական տեսակետից բանաստեղծական մասնաշերտին է պատկանում: Այս հնացած և բանաստեղծական հատկանիշներն էլ, ահա, այն նշույթներն են, որոնցով տարբերակներից մեկը մասնավորվում է պատմական, հասարակական կամ գործառական տարբերակման այս կամ այն բնութագրով: Նշանակում է, այն բոլոր բառատարբերակները, որոնք պատմական, հասարակական կամ գործառական տեսակետից առևէ մասնավորող, տարբերակիչ բնութագիր ունեն, նշույթավոր տարբերակներ են: Գրանց հակադրվում են աննշույթ բառերը, որոնք այդպիսի տարբերակիչ բնութագիր չունեն, կամ այլ կերպ՝ պատմական տեսաբանից պատկանում են գործուն շերտին, հասարակական տեսակետից՝ ընդհանրական շերտին, գործառական տեսակետից՝ շեղոք շերտին: Բերված զույգի մեջ աստղային բառը պատկանում է գործուն, ընդհանրական, շեղոք շերտերին և չի կարող ստանալ որևէ տարբերակող նշույթ, ուստի և աննշույթ է, մինչդեռ աստղային և՛ հնացած, և՛ բանաստեղծական նշույթներն է ստանում, ուրեմն նշույթավոր է: Այդպես են նաև ջերթ-շփերթ, հունչ-ճիւղ, որոնց մեջ երկրորդներն ունեն բանաստեղծական նշույթը, իսկ առաջինները՝ շեղոք, ընդհանրական, գործուն շերտերին պատկանելով՝ աննշույթ են: Զի կարելի կարծել, թե բոլոր բառատարբերակային զույգերը կամ խմբերը պետք է անպայմանորեն ստանան հակադրական բնութագիր, այսինքն՝ մեկը լինի աննշույթ, մյուսը՝ նշույթավոր: Հնարավոր է, որ զույգերի (կամ խմբերի) բոլոր անդամներն էլ հավասարապես լինեն աննշույթ, կամ

բոլորն էլ միևնույն նշույթը կամ նշույթներն ստանան: Այսպես, օրինակ, երեսպատեղ-երեսպատել, էլեկտրակայան-էլեկտրոկայան, երկխոսություն-երկխոսություն բառատարբերակները հավասարապես գրական ու խոսակցական լեզվի բառեր են, պատմականորեն գործուն, հասարակայնորեն ընդհանրական, գործառապես շեղոք շերտին են պատկանում, մինչդեռ, օրինակ, աստղաբիբ-աստղանաբիբ, զարեարեբ-զարեարեբ-զարեանաբեբ, աշնագեղ-աշնանագեղ բառատարբերակները հավասարապես բանաստեղծական շերտի բառեր են, այլ կերպ ասած, առաջին խմբի բառատարբերակները աննշույթ են, երկրորդ խմբինը՝ նշույթավոր: Այսպիսի դեպքերում աննշույթ-նշույթավոր հակադրությունը բնականաբար վերանում է կամ, ավելի ճիշտ, շեղոքանում:

* * *

Ամփոփելով բառապաշարի տարբեր դասակարգությունները՝ հանգում ենք հետևյալ ընդհանուր եզրակացություններին: Յուրաքանչյուր լեզվի, հետևաբար նաև ժամանակակից գրական հայերենի, բառապաշարը այդ լեզվում գործածված ու գործածվող բառերի հավաքական ամբողջությունը ներկայացնող բազմություն է, որ բաղկացած է բազմաթիվ ու բազմաբնույթ շերտերից: Իրեն բազմություն, լեզվի բառապաշարը հարաբերականորեն փակ բազմություն է: Հարաբերականորեն ենք ասում, որովհետև տեսականորեն կարելի է բառապաշարը հարստացնել անվերջորեն, ուստի և հնարավոր չէ ասել, թե այսինչ լեզուն արդեն ունի այսքան բառ, և դրանով ավարտվում է նրա բառապաշարի հարստացումն ու համալրումը նորանոր բառերով: Սակայն, իրականում ամեն մի լեզվի բառապաշար սահմանափակվում է որոշակի քանակով, և կարելի է կազմել բոլոր բառերի ցանկը (ներառյալ հին և հնացած, նեղ մասնագիտական տերմինները, բոլոր բառատարբերակային ճիշտ ու սխալ բառերը) և ներկայացնել վերջավոր թվով: Եվ, այնուամենայնիվ, ամեն մի զարգացած լեզվի բառապաշար, իրականում փակ բազմություն կազմելով, հսկայական քանակ է ներկայացնում (200—300 հազար բառ), ըստ որում այդ հավաքական ամբողջությունը ներա-

ուում է տարբեր կարգի այլևայլ բնութագրեր ունեցող բա-
ռերի խմբեր, որ մենք շերտեր ու մասնաշերտեր անվանե-
ցինք: Քանի որ այդ շերտերն ու մասնաշերտերը տարբեր
բնույթ ունեն, այլ կերպ տասած՝ բազմաբնույթ են, ապա բա-
ռապաշարի դասակարգություններն էլ անխուսափելիորեն
բազմաբնույթ պետք է լինեն, ըստ որում դասակարգություն-
ներից յուրաքանչյուրն ունի ոչ միայն դասակարգման իր
սկզբունքները, այլև իր նպատակներն ու գործնական-կիրա-
ռական նշանակությունը: Այսպես, օրինակ, ծագումնաբա-
նական դասակարգությունը՝ ցույց տալով, թե ինչ ազդրու-
ներից է գոյացել մեր լեզվի բառապաշարը, ինչպիսի տեսա-
կարար կշիռ ունեն յուրաքանչյուր աղբյուրից ստացված բա-
ռերը ամբողջ բառապաշարի մեջ, միաժամանակ թելադրում
է, թե նորակազմ բառերով բառային կազմի հարստացման
համար առավել լավ է կենսունակ են ու հանձնարարելի
համահայկական, համագրական և աշխարհաբարյան (նոր
գրական) բառերը, որ փոխառությունների համար շատ ավելի
մեծ է ուսերենի դերը՝ այսպես կոչված միջազգային բառե-
րով ըստ անհրաժեշտության մեր լեզվի բառապաշարը հա-
մալրելու տեսակետից և այլն, և այլն: Պատմական, հասա-
րակական, գործառական դասակարգությունները գործնակա-
նորեն բնութագրում են յուրաքանչյուր շերտի կամ մասնա-
շերտի բառագործածության ոլորտները, իսկ ներլեզվական
դասակարգությունը՝ բառերի բառակազմական-ձևական
առանձնահատկությունները և դրանով իսկ գիտական հիմք
հանդիսանում բառապաշարի մշակման, կատարելագործման
ու նորամոլորման համար:

Ունենալով տարբեր կարգի դասակարգությունների հի-
մունքներն ու դրանց համապատասխան՝ բառապաշարի զա-
նազան շերտերի ու մասնաշերտերի հատկանիշները, մենք
կարող ենք գրական աշխարհաբարում գործածված բոլոր
բառերը բնութագրել ըստ տարբեր դասակարգությունների և
լիակատար գաղափար կազմել նրանցից յուրաքանչյուրի
ազդրուրի, գործածականության, գործառական ոլորտի և այլ
կողմերի մասին:

Գ Լ Ո Ւ Ե Լ Ի Ե Գ Ե Ր Ո Ր Գ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ա. Ընդհանուր գիտելիք

Բառապաշարը լեզվի ամենահարստագիտի մասն է. նրա
մեջ տեղի ունեցող փոփոխություններն անմիջականորեն ար-
տացոլում են հասարակական կյանքում կատարվող փոփո-
խությունները՝ սկսած տնտեսական գործունեությունից,
առօրեական հարաբերություններից ու կենցաղից մինչև հո-
գեական ու մտավոր գործունեության երևույթները: Կյանքում
տեղի ունեցող ամեն մի փոփոխություն, հասարակության
մեջ երևան եկող ամեն մի նորույթ իր անմիջական անդրա-
դարձումն է զսնում լեզվի մեջ՝ համապատասխան բառերի
առաջացումով կամ գոյություն ունեցող բառերի իմաստային
զարգացումով: Մրա հետևանքն է այն, որ մինչդեռ լեզվի
մյուս բաղադրիչները (հնչյունական համակարգ, ձևաբանա-
կան և շարահյուսական կառուցվածք) փոփոխվում են շատ
երկար ժամանակամիջոցում և աննկատելի կերպով, բառա-
պաշարի զարգացումն ու նրանում կատարվող փոփոխու-
թյունները տեղի են ունենում շատ ավելի արագ և նկատելի
են լինում համեմատաբար շատ կարճ ժամանակամիջո-
ցում էլ:

Բառապաշարի զարգացումը ամբողջությունն է լեզվի
բառային կազմում տեղի ունեցող այն բոլոր փոփոխություն-
ների, որոնք ուղղված են բառային կազմի մակարդակի
արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը մի կող-
մից հասարակական կենցաղից ու գիտակցության առավել
զարգացած աստիճանին, մյուս կողմից՝ լեզվի տվյալ փուլի
կառուցվածքին ու համակարգին: Զարգացման այս ընդհա-
նուր գործընթացն իրացվում է բառապաշարի նախապատ-

մով, բառապաշարի իմաստարանական զարգացումով և բառապաշարի կատարելագործումով:

բ. Փամանակակից հայերենի բառապաշարի հարստացումը

1. Նոր բառեր և նորաբանություններ

Բառապաշարի հարստացումը լեզվի բառային կազմի համալրումն է նոր բառերով: Այդ պրոցեսը տեղի է ունենում երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին:

Բառապաշարի հարստացման ներքին ճանապարհը տրվյալ լեզվի հնարավորություններով նորանոր բառեր կազմելն է: Ամեն մի լեզու ունի բառակազմական իր միջոցները, բառակազմական օրինաչափություններն ու հնարավորությունները, որոնք թույլ են տալիս ըստ անհրաժեշտության կազմել նորանոր բառեր և դրանցով համալրել ու հարստացնել բառապաշարը:

Բառապաշարի հարստացման արտաքին ճանապարհը լեզվի բառային կազմի համալրումն է ուրիշ լեզուներից կատարվող փոխառություններով: Ժողովուրդների փոխազարծ շփումները, նրանց քաղաքական, տնտեսական ու մշակութային հարաբերությունները առաջ են բերում լեզվական ազդեցություններ ու փոխազդեցություններ, որոնք առաջին հերթին և առավել շոշափելիորեն արտահայտվում են բառերի փոխառությամբ:

Փոխառությունները լինում են երկու տեսակ՝ անմիջական և միջնորդական: Անմիջական են այն փոխառությունները, որոնք կատարվում են տվյալ բառի սկզբնաղբյուրը հանդիսացող լեզվից, օրինակ՝ սովետ, սովխոզ, բոլշևիկ ուսերեն բառեր են, և հայերենը դրանք ուղղակիորեն վերցրել, փոխառել է ուսերենից, ուստի և դրանք անմիջական փոխառություններ են:

Միջնորդական են այն փոխառությունները, որոնք կատարվում են ոչ թե տվյալ բառի սկզբնաղբյուրը հանդիսացող լեզվից, այլ մի ուրիշ՝ «միջնորդ» լեզվից, օրինակ՝ կարպուս (գորբի միավոր), կապիտալ, կոդեֆու, պլենում բառերը լատինական ծագում ունեն, բայց հայերենը դրանք փոխառել է ոչ թե ուղղակիորեն լատիներենից, այլ ուսերենից:

Երկ, ուստի և դրանք միջնորդական փոխառություններ են (միջնորդ լեզուն է ուսերենը):

Փոխառյալ բառերի մեջ յուրահատուկ տեղ են գրավում այսպես կոչված հատկական փոխառությունները: Այդպես են կոչվում այն փոխառյալ բառերը, որոնք ցույց են տալիս այս կամ այն երկրին հատուկ երևույթներ, այս կամ այն ժողովրդին հատուկ սովորույթներ, կենցաղային սովորույթներ, իրեր, արտագրանքներ և այլն, և այլն: Օրինակ՝ ուսերենից վերցված ստեպ, խուտոր, միջինասիական լեզուներից՝ Ղըշլաղ, իսլանդերենից՝ ճեյգեր, ամերիկյան հնդկացիական լեզուներից՝ մոկապին, ավստրիալիական լեզուներից՝ բումբուրանգ, ճապոներենից՝ կիմոնո, գեյշա, ուկրաիներենից՝ հոպակ, վրացերենից՝ պուրի, հայերենից այլ լեզուների՝ լավաշ, մաժուն, հնդկերենից (անգլերենի միջնորդությամբ) ջունգլի և այլն, և այլն: Հատկական փոխառությունների առանձնահատկությունն այն է, որ նրանք մեծ մասամբ գործածվում են այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է տվյալ երկրին կամ ժողովրդին, իսկ ավելի հաճախ՝ թարգմանությունների մեջ, օրինակ՝ գեյշա (պանդուկների պրոֆեսիոնալ պարուհի և երգչուհի ճապոնիայում) գործածվում է միայն ճապոնիային վերաբերող գրվածքներում և ճապոներենից կատարվող թարգմանություններում, մոկապին՝ երբ խոսքը վերաբերում է հնդկացիներին և այլն: Այս կարգի հատկական փոխառություններ շատ կան մեր թարգմանական գրականության մեջ, որոնք հենց միայն թարգմանությունների մեջ են հանդիպում, առանց մեր լեզվի բառապաշարի գործունե սեփականությունը դառնալու: Սակայն հնարավոր է նաև, որ հատկական փոխառությունը, գիտական տերմին դառնալով, կամ նրա ցույց տված առարկայի, նյութի և այլնի տարածումով ստանա սովորական գործածություն. վերը բերված բառերից այդպիսիք են ստեպ, խուտոր, պուրի, բումբուրանգ, կիմոնո, ջունգլի, ճեյգեր և այլն:

Ամեն մի նոր բառ, սեփական թե փոխառյալ, նախապես հանդես է գալիս որպես նորաբանություն: Լայն առումով նորաբանություն է կոչվում լեզվական ամեն մի նոր իրակություն կամ իրողություն: Նեղ առումով, բառագիտական տեսակետից, նորաբանություն է ամեն մի նոր բառ, կայուն

բառակապակցութիւն, դարձված, առանձնահատուկ արտահայտութիւն (իզիում), բառի նոր իմաստ, բառագործածութիւն նոր իրողութիւն:

1 Բառապաշարի մեջ ունեցած իրենց զերով նորաբանութիւնները բաժանվում են երկու կարգի՝ ընդհանրացող և մեկուսացած: Ընդհանրացող նորաբանութիւններ են այն բոլոր նոր բառերը, որոնք կարճատե թե երկար ժամանակամիջոցում, անընդհատ կրկնվող գործածութիւնների հետևանքով անցնում են բառապաշարի գործուն շերտին և հենց դրանով էլ դադարում նորաբանութիւն լինելուց. օրինակ՝ հեռուստացույց, տիեզերանավ, տիեզերագնաց, լուսնանավ, մոտարկել, շրջանոսել, շրջատաշել, ներդնել, երեսապատել, երեսակել, փայլարդել, ապահովագրաբույժ, ապահովագրաբեր, անվաղող, երեսակ, տնկարկ, շարժաբեռ, շարժունակ, տեսագրել, որականիչ, խաղալար, սաբաշինաբայր, հատույթ, հանրախանութ, գեղասանհ և բազմաթիվ այլ բառեր իրենց գործածութիւն սկզբնական շրջանում նորաբանութիւններ էին, որոնք, սակայն, այժմ արդեն մեր գրական լեզվի ու նրա այս կամ այն տերմինահամակարգի գործուն շերտի բառեր են, ուստի և այլևս նորաբանութիւններ չեն:

Մեկուսացած նորաբանութիւններ են այն բոլոր բառերը, որոնք գործածվում են այս կամ այն դրվածքում, բայց կրկնվող գործածութիւններ չեն ունենում, հետևաբար և՛ չեն ընդհանրանում ու չեն անցնում բառապաշարի գործուն շերտին: Մեկուսացած նորաբանութիւններն են գիպվածական բառերը (օրինակ՝ ճոհարմոնիա, տերեւերեն, հորընկեր, հորնդրաշարքույր և այլն), բանաստեղծական նորակերտ բառերի որոշ մասը, այսպես կոչված՝ ստեղծագործական կամ հեղինակային նորաբանութիւնները (օր. գմբեթվել, երկնքվել, լուսեղաշ, մաքրաշուշան, հուզակայլակ, տերեւողեղին, գարոնքվել և այլն), անհարկի փոխառութիւնները (օր. վիլոսիպեդ, վերտոլյոտ, տելեվիզոր, շուբա, սպուտնիկ) և այլն, և այլն: Թեև մեկուսացած փոխառութիւնները գործուն շերտին չեն անցնում, բայց նրանց մի մասը, առանձնապես հեղինակային նորաբանութիւնները, մնում են, այնուամենայնիվ, բառապաշարի շերտում շերտում, որպես բառագանձի տարր, ու կարող են ազատորեն գործածվել ըստ

անհրաժեշտութիւն և ինչ-որ ժամանակ անցնել գործուն շերտին:

Ըստ իրենց անմիջական ազդուրների փոխառութիւնները լինում են ներքին և արտաքին: Արտաքին են այլ լեզուներից կատարվող փոխառութիւնները, ներքին՝ տվյալ լեզվի տարբերակային համակարգերից կամ պատմականորեն նախորդած գրական լեզուներից կատարվող փոխառութիւնները:

2. Ժամանակակից հայերենի նորակազմ բառերը

Ժամանակակից հայերենը պատկանում է այն լեզուների թվին, որոնք բառակազմական շատ մեծ հնարավորութիւններ ունեն: Բառաբարդման գրեթե անսպառ հնարավորութիւնները՝ բառակազմական կաղապարների ու բաղադրական հիմքերի բազմազանութիւնը, ածանցների հարստութիւնն ու ածանցական բառակազմութիւնների գրեթե անսահմանափակ հնարավորութիւնները թույլ են տալիս ազատորեն կազմել նորանոր բառեր ու դրանցով հարստացնել մեր լեզվի բառապաշարը: Ժամանակակից հայերենի բառակազմական հնարավորութիւններն է՛լ ավելի մեծանում են նրանով, որ նա, ըստ անհրաժեշտութիւն, օգտագործում է գրաբար և ժողովրդախոսակցական լեզուների բառակազմական կաղապարներն ու բաղադրական հիմքերը:

Բառակազմական այս լայն հնարավորութիւնների օգտագործումով մեր լեզուն հարստացրել ու հարստացնում է իր բառապաշարը ներքին ճանապարհով: Այնպիսի բառեր, ինչպիսիք են առեւտել, աշխատածամանակ, աշխատատար, արվեստաբան, արտադաստրանային, բեմարվեստ, բաժնացատկ, գործարկել, գրապահոց, գերակատարել, դահուկավագ, դահուկորդ, ենթադատ, երկրագիտություն, գրահագնաց, գաղաղվեստ, գորացրել, ընթացավարտ, բեռաբեռնել, ժանաճիվ, ժողովրդագրություն, իմացաբանություն, լուսնագնաց, լուսնախցիկ, խաղավար, ծանրորդ, կերահայրաբույր, հանրախանութ, հանրակիցութիւն, հեռուստացույց, հատույթ, ձայնադարան, ներշնչափ, մոտարկել, մարգարոց, ներտաշել, ներարկել, շարժունակ, շարժաբեռ, որականիչ, շմուշկասանհ, պանակակետ, ջրարկել, ջրաշինա-

բար, ուրապաստարան, սարճաշինութիւն, սահաղաշտ, վե-
 բակարդել, տնկարկել, տեսագրել, ցրտադիմացկուն, փորձաբ-
 կել, օւմեղաբար, փորձաղաշտ, փորձարդիշ, փնայարկ, օղա-
 նավ, օղաշու և այլն, և այլն, — մեր լեզվի հարազատ բա-
 ռակազմութիւններն են և բառապաշարի մեջ են մտել մեծ
 մասամբ վերջին 60 տարիներում, իսկ մի մասը՝ վերջին եր-
 կու տասնամյակներում: Մեր գրական լեզվի այժմյան բա-
 ռապաշարի ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ վերջին
 60 տարիների ընթացքում բառային կազմի մեջ մտած նոր
 բառերի մեծագույն մասը նոր բառակազմութիւններ են՝
 հայերենի բառակազմական հնարավորութիւնների օգտա-
 գործումով: Սա ցույց է տալիս, որ մեր բառապաշարի հա-
 րցատաքման երկու՝ ներքին և արտաքին ճանապարհներից
 հիմնականը և մշտապես գործունը ներքին ճանապարհն է:

8. Ժամանակակից հայերենի ներքին փոխառությունները

Բառապաշարի հարստացման ներքին ճանապարհին
 պետք է հատկացնել նաև ներքին փոխառությունները: Ժա-
 մանակակից հայերենի բառապաշարի հարստացման գործ-
 ընթացքում վիթխարի գեր են խաղացել և խաղում են հայե-
 բենի գոյութիւն տարբերակային համակարգերից կամ պատ-
 մական նախորդ շրջանի լեզուներից կատարվող փոխառու-
 թիւնները: Այս տեսակետից գրական աշխարհաբարը պատ-
 կանում է աշխարհի բացառիկ լեզուների թվին: Իրոք, մեր
 գրական աշխարհաբարի արդի երկու ճյուղերը՝ արևելահա-
 յերենը և արևմտահայերենը, ազատորեն կարող են ըստ ան-
 հրաժեշտութիւն փոխառութիւններ կատարել և կատարել
 են միմյանցից, գրաբարից, միջին հայերենից, ժողովրդախո-
 սակցական լեզվից ու բարբառներից: Հիշենք թեկուզ գրա-
 բարյան պարեա, պարեկ, ումբ, տկան, կիզ(ն) «բուրդ»,
 հնուտա, հետա «1. անհնազանդ, 2. մոլեգին, կատաղի»,
 հայրատ «1. վաճառ, 2. լիրք», հանձնանձն «խնամք»,
 արևմտահայ՝ ինձնաշարժ, հանրախառնութ, շարժանկար,
 գարծնբաց, աղջնակ, աղու «բաղցր», սառնաշաբար, ժողո-
 վրդախոսակցական՝ մրմուռ, մարմանդ, կզել, կռահալ,
 պոռշ, վոագ, բարբառային՝ գետնանուշ, տնալ, շմուշկ, դա-

նուկ, կոշուկ «բուֆթա», կոլոն «գաշի՝ ցեխի կուլա» և այլն,
 և այլն: Այս կարգի բառերը կարելի է կոչել նեբէին փոխա-
 ռություններ, ըստ որում ժամանակակից հայերենը դրանք
 պատրաստի կերպով վերցնում է գրաբարից, արևմտահայե-
 բենից և այլն: Մյուս կողմից՝ դրանք, անկախ իրենց ծագու-
 մից, այսինքն՝ անկախ հայակազմ կամ այլ լեզուներից
 փոխառյալ բառեր չինելուց, մեր գրական լեզվի մեջ մուտք
 են գործում հայերենի գոյութիւն տարբերակային ձևերից
 (արևմտահայերենից, ժողովրդախոսակցական լեզվից, բար-
 բառներից) կամ էլ հայերենի պատմական զարգացման
 տարբեր համակարգերից, որով և դրանք, անկախ իրենց
 տարբեր համակարգերից, որով և դրանք, անկախ իրենց
 ծագումից, արդեն կարող են որակվել իբրև հայերեն բառեր,
 որ տարբեր աղբյուրներից փոխառում է ժամանակակից հա-
 յերենը: Այս տեսակետից մտտենալով և իբրև փոխառու-
 թիւններ բնութագրելով, մենք ոչ մի տարբերութիւն չենք
 տեսնում, օրինակ, բարբառներից փոխառված էտ, էտել, է-
 տաց, տնալ, գետնանուշ և սագ, մանղալ, մաբալ, շեյրան,
 զուրբան, վոագ, արաբա, բազբաշ և այլն բառերի միջև, թեև
 առաջինները բուն հայերեն բառեր են, իսկ երկրորդները՝ այլ
 լեզուներից կատարված, մեծ մասամբ թուրք-պարսկական,
 փոխառութիւններ: Բանն այն է, որ ժամանակակից հայերե-
 նը այդ փոխառութիւնները անմիջականորեն վերցրել է բար-
 բառներից կամ ժողովրդախոսակցական լեզվից և ոչ թե
 պարսկերենից կամ թուրքերենից, ուստի և դրանց աղբյուրն
 են բարբառները կամ ժողովրդախոսակցական լեզուն՝ որպես
 միջնորդ լեզուներ: Բանի որ այդ բառերը մեր գրական լեզվի
 մեջ գործածվում են որպես բարբառներից կամ ժողովրդա-
 խոսակցական լեզվից, գրաբարից, միջին հայերենից կամ
 արևմտահայերենից կատարվող փոխառութիւններ, ապա
 դրանց փոխառութիւնը մեզ համար բառապաշարի հարցա-
 տացման ներքին միջոց է. դրանք հայերենի այս կամ այն
 համակարգից վերցված բառեր են:

Ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման
 գործընթացում ներքին փոխառութիւնների առաջնակարգ
 աղբյուրներ են գրաբարը և ժողովրդախոսակցական լեզուն:
 Այս երկու աղբյուրներից կատարվող փոխառութիւններով
 աշխարհաբար գրական լեզուն հարստացել ու հարստանում

է ազատորեն, ըստ որում այս հարստացումը տեղի է ունենում ոչ միայն առանձին բաների փոխառումով, այլև՝ կայուն բառակապակցությունների, դարձվածների, բաղադրական միավորների (արմատական բաղադրական հիմքերի, ածանցների), թևավոր խոսքերի, հարադրական բաղադրությունների և այլն:

Ժամանակակից հայերենի բառապաշարի մեջ եղած ներքին փոխառությունները մեծ մասամբ սկզբնապես հանդես են գալիս կամ իբրև տերմինաբանական, կամ իբրև բանաստեղծական բառաշերտերի բառեր, բայց ժամանակի ընթացքում կարող են անցնել և անցել են շեղոթ շերտին (հմմտ. դանուկ, բոգրաշ, ջան, կռանալ, մեմուռ, գործընթաց, հեռուստ (հեռուստատեսություն, հեռուստակառավարում և այլն), սկան, պարետ և այլն, և այլն: Պետք է նկատի ունենալ, որ ներքին փոխառություններով մեր գրական լեզուն հարստացնելու գործընթացում ժողովրդախոսակցական լեզվից ու բարբառներից փոխառվող պարսկա-թուրքական ծագումով բառերի գործածությունը զգալի չեզոք, պաշտոնական ու գիտական ճեղքում ընդհանուր առմամբ մերժվում է. դրանց գործածությունը, իբրև կանոն, սահմանափակվում է բանաստեղծական խոսքի ոլորտով՝ ստեղծագործական նպատակով:

4. Ժամանակակից Ուկրենի արտաքին փոխառությունները

Ժամանակակից գրական հայերենի արտաքին փոխառությունների հիմնական աղբյուրն է ուսերենը: Դա պայմանավորված է մի կողմից Սովետական Միության ժողովուրդների համերաշխ ընտանիքում ռուս ժողովրդի առաջատար, դիվանագիտական, մշտական կողմից՝ ուսերենի, որպես ազգամիջյան լեզվի դերով՝ սովետական բազմազգ պետության մեջ: Գիտության ու տեխնիկայի առաջընթացին, հասարակական-քաղաքական կյանքի իրադարձություններին, ժողովրդական տնտեսության նորանոր բնագավառներին և բոլոր այլ նորություններին Սովետական Միության ժողովուրդները հաղորդակից են լինում առաջին հերթին ուսերենի միջոցով, ուստի և զարմանալի չէ, որ այդ բոլորի հետ կապված

նոր բաներն էլ, եթե հարկ է լինում փոխառել, փոխառվում են ուսերենից:

Ռուսերենից ժամանակակից հայերենին անցած բառերի մեծագույն մասը միջնորդական փոխառություններ են, այսպես կոչված՝ միջազգային բառեր, որոնք ուսերենը վերցրել ու վերցնում է եվրոպական լեզուներից. այդպիսի բառերից են՝ կոմունա, կոմունիզմ, ինտերնացիոնալ, սոցիալիզմ, տրակտոր, կոմբայն, կիրենոնետիկա, Լադո, ավտոմոբիլ, ավտոբուս, տրոյեյուս, էլեկտրոն, էլեկտրոնիկա, տրամվայ, մոտոցիկլետ, կապիտան, կոմիսար, լեյտենանտ, Բեռլին, մարշալ, ֆուտբոլ, բասկետբոլ, մետր, գրամ, լիտր, գեներալ, մարշալ, ֆուտբոլ, բասկետբոլ, մետր, գրամ, լիտր, բլուզ, մատերիա, դիալեկտիկա, ասֆալտ, բետոն, ցեմենտ, անտենա, սպորտ, կլիմիկա, պոլիկլիմիկա, հասպիտալ, կամիտե, բյուրո, կոմիսարիատ, ատոմ, բվանտ, էներգիա, էգոիզմ, պոեմ, բալլադ, էլեգիա, ինֆորմացիա, արկտիկա, կինո, ֆիլմ, ինֆարկտ, պոմիդոր, կատաստոֆ (ա), կասկադ, բարիկադ, դինամիկա, մագնիտոֆոն և այլն, և այլն: Ռուսերենից կատարված անմիջական փոխառություններ են սովետ, բուլշևիկ, շիբեյ, գագու (բառ դարձած և իբրև այդպիսին փոխառված հապավում) և այլն: Ուրիշ լեզուներից, հատկապես սովետական ժողովուրդների լեզուներից փոխառվող բառերը մեծ մասամբ հատկական փոխառություններ են, որոնք մուտք են գործում թարգմանությունների հետ կամ զանազան առարկաների, արտադրանքների, ինչպես և եղբայրական հանրապետություններին նվիրված գեղարվեստական ստեղծագործությունների և գիտական գրականության միջոցով:

Վերջվելով ուսերենից, ինչպես և ուրիշ լեզուներից, փոխառալ բառերը հայերենում ենթարկվում են հայերենին հատուկ հնչյունական փոփոխություններին, հարմարեցվում հայերենի հնչյունական առանձնահատկություններին և, այսպես ասած, հայացվում են. հայերենն իր հնչյունական հարուստ համակարգով շատ հաճախ ավելի հարազատորեն է կարողանում արտահայտել փոխառալ բառը՝ սկզբնաղբյուրին համապատասխանեցնելու տեսակետից: Մյուս կողմից, թեև փոխառալ, բայց դրանք ամբողջապես ենթարկվում են հայերենի քերականության գործող օրինաչափու-

Քյուններին, մերվում հայոց լեզվի բառապաշարին, իսկ դրա հիման վրա էլ դառնում նորանոր բարդությունների ու ածանցումների բազազրիչները: Այսպես, օրինակ, փոխառյալ սովետ բառից ունենք սովետական, սովետականանալ, սովետականացնել, շրջսովետ, լազսովետ, գյուղսովետ, ավտոբառից՝ ավտոտնտեսություն, ավտովարձող, ավտոդող, ավտոտեսուչ, ավտոպանեխտամաս և այլն, և այլն: Այսպիսով, փոխառությունները, ամբանալով մեր լեզվի մեջ, ոչ միայն իրենք իրենց հարստացնում են մեր լեզվի բառապաշարը, համալրում այն նորանոր հասկացություններով, այլև նորանոր բառերի կազմության հիմք դառնում: Այս տեսակետից մեծ դեր են խաղում նաև բազազրությունների փոխառյալ բազազրիչները, ինչպես՝ միկրո-, մակրո-, միլի-, ավտո- (ավտոմոբիլային), ավտո- (ինքնա-) և այլն, որոնցով կազմվում են բազմաթիվ նոր բազազրություններ հայերեն բառերի ու ածանցների օգնությամբ (հմմտ. միկրոաշխարհ, միկրոշրջան, մակրոաշխարհ, ավտոամբարձիչ, ավտովարդող և այլն):

Փոխառությունների հետ սերտորեն կապված են պատճենումները: Եթե փոխառությունների դեպքում ուղղակիորեն վերցվում է սովյալ լեզվի (փոխառու լեզվի) պատրաստի բառը, ապա պատճենումների ժամանակ վերցվում են բառի արտահայտած հասկացությունն ու ներքին ձևը, այլ կերպ ասած՝ պատճենման դեպքում օտար բառը պարզապես թարգմանվում է փոխառու լեզվի բառերով կամ բազազրությունների բազազրիչներով. ինչպես՝ ռուս. железная дорога — հայ. երկաթուղի, пятилетка — հնգամյակ, вписать — ներգրել, самолет — ինքնաթիռ և այլն: Պատճենվում են ոչ միայն բառերը, այլև կայուն բառակապակցությունները, դարձվածները, առանձնահատուկ արտահայտությունները, ինչպես՝ пятилетний план — հնգամյա պլան, народное хозяйство — ժողովրդական տնտեսություն, великие постройки коммунизма — կոմունիզմի մեծ կառույցներ (կառույցումներ), найти общий язык — ընդհանուր լեզու գտնել և այլն, և այլն: Պատճենումները, առանձնապես բառերի պատճենումները (բառապատճենումները) մեծ դեր են խաղում լեզվի բառապաշարի, մանավանդ գիտության ու տեխնիկայի տարրեր

բնագավառների տերմինահամակարգերի համալրման գործում: Պատճենումների դեպքում օտար բառն իր բազազրությամբ ու ներքին ձևով իրեն օրինակ է առնվում համապատասխան հասկացությունն արտահայտող սեփական բառ կազմելու համար, որն զգալիորեն հեշտացնում է նոր բառեր կազմելը:

գ. Ժամանակակից հայերենի բառապաշարի կառարելագործումը

Բառապաշարի կառարելագործում ասելով հասկանում ենք լեզվի բառային կազմի մեջ տեղի ունեցող այնպիսի փոփոխությունների ամբողջությունը, որոնք կարող են բնութագրվել իրեն բառապաշարի որակական զարգացում: Այս բնութագրությունը նշանակում է, թե բառապաշարի կառարելագործումը ենթադրում է ոչ այնքան նոր բառերի մուտքը սովյալ լեզվի բառային կազմի մեջ, որքան արդեն գոյություն ունեցող բառերի և կայուն բառակապակցությունների գունազան կարգի փոփոխությունները, բառափոխարինումները և այլն, որոնք, ամբողջությամբ վերջրած, ուղղված են լեզվի համակարգայնության ու միօրինակության ծավալմանը, բառագործածությունների ու բառիմաստների ճշգրտմանը, բառակազմական կազապարների ու տիպերի միասնականացմանը, լեզվի մաքրության ապահովմանը, բառապաշարի որակական արդիականացմանը և այլն:

Այս ընդհանուր գրույթից բխում է, որ ժամանակակից հայերենի համար էլ բառերի ամեն մի փոփոխություն, լինի դա հնչյունական, ձևական-ձևաբանական, գործառական, իմաստային, թե բառակազմական իրողություն, բառապաշարի կառարելագործման ընդհանուր գործընթացի դրսևորում է, եթե դա որևէ տեսանկյունով կարելի է դիտել որպես ժամանակակից հայերենի զարգացման ընդհանուր տենդենցի իրացում:

Ժամանակակից հայերենի բառապաշարը, ինչպես տեսանք, ծագումնաբանական տեսակետից բազմաշերտ է. նրա մեջ համահայկական բառաշերտը միավորվել է գրաբարյան, ժողովրդախոսակցական, արևմտահայերեն, բարբառային

բառաշերտերի հետ Տարբեր աղբյուրներից մեր լեզվի մեջ մուտք գործած բառերը, բնականաբար, ձևական ու բառակազմական տարբեր հասկանիչներ ունեն։ Բառերի ձևական ու բառակազմական տարբերություններ կան նաև մեր գրական լեզվի պատմական որոշ իրողությունների հետևանքով։ Այս բոլորը մեր լեզվի բառապաշարի մեջ առաջ են բերել ներդրվածական տարբերակների բազմատեսակ խմբեր։ Բառապաշարի զարգացման ընդհանուր գործընթացում տեղի է ունենում բառային տարբերակների մրցակցություն կամ, այլ կերպ ասած, հակադրությունների ներքին պայքար, որ լուծվում է այս կամ այն կերպով։ Մի կողմ թողնելով առանձին իրակությունները, կարելի է իբրև օրինակ հիշատակել առավել կենսունակ հետևյալ տարբերակային խմբերի ներքին պայքարը՝ դրա անխուսափելի հետևանքներով։

Ինչպես հայտնի է, գրաբարյան բաղադրական հիմքերի մի զգալի մասը նույնանում է հօլովածների հետ, ինչպես՝ հօրեղբայր (հօր-բաղադրիչը հայր-ի սեռական հոլովն է), ֆեոզդի (ֆեո-հայր-ի սեռ. հոլովն է), ձերբակալել (ձերբ-ը ձեռն բառի հնատիպ գործիականն է), կենսալից (կենս-բաղադրիչը կենսե բառի հայցական կեանս-ի հնչյունափոխված ձևն է), աստեղատուն (աստեղ-ը աստղ-ի սեռականն է) և այլն։ Այս կարգի բազմաթիվ բաղադրություններ անցել են աշխարհաբար գրական լեզվին, որոնց շնորհիվ բաղադրական այդ կարգի հիմքերը կենսունակ են մնացել նաև գրական աշխարհաբարի բաղադրությունների համար։ Սակայն աշխարհաբարն ունի իր սեփական բառակազմական օրինաչափությունները, այդ թվում և՛ բաղադրական հիմքերի իր համակարգը։ Այդ համակարգի մեջ բաղադրական հիմքերը սովորաբար բառի ուղիղ ձևն են կամ արմատը։ Մեր գրական լեզվի այդ գործուն համակարգը թելադրում է բաղադրությունների կազմությունը գործուն օրինաչափությամբ, իսկ դրա հետևանքն է լինում այն, որ առաջ են գալիս նորատիպ կազմություններ՝ ավանդական կազմություններին զուգահեռ, այսինքն հնատիպ բաղադրական հիմքերով կազմված բաղադրությունների կողքին ունենում ենք նաև նորատիպ հիմքերով բաղադրություններ, ինչպես՝ հօրական—հայրական, հօրացու—հայրացու, աստեղային—աստ-

ղային, աստեղաբույլ—աստղաբույլ, աստեղագիտություն—աստղագիտություն, կենսական—կյանֆային, աղբերաբալս—աղբյուրաբալս, աղբերաբար—աղբյուրաբար, աղբերակ(ն)—աղբյուրակ(ն) և այլն։ Տարբերակային երկու կարգերի միջև տեղի ունեցող ներքին պայքարը ժամանակի ընթացքում լուծվում է մեկի կամ մյուսի օգտին, բայց իբրև ընդհանուր երևույթ՝ մեծ մասամբ նորի, կենսունակի օգտին։ Այսպես՝ աստեղ—հնատիպ և աստղ—նորատիպ բաղադրական հիմքերով տարբերակների պայքարը այժմ արդեն ավարտվող իրողություն է՝ նորատիպ հիմքի հաղթանակով, ըստ որում այժմ կենսունակ ձևեր են աստղային, աստղագիտություն, աստղալից, աստղաբաշխություն, աստղագնացություն և այլն, իսկ դրանց աստեղ—հիմքով ձևերը հնացած են։

Նույն ձևով էլ հօրական (հօրեկական)—հայրական, հօրացու—հայրացու, մորական—մայրական և այլ զույգերում հաղթել են հայրական, հայրացու, մայրական և այլն, ըստ որում նորակազմ բաղադրությունները կազմվում են միայն հայր-, մայր- ուղղականաձև հիմքերով (համար. հայրիշխանություն, մայրիշխանություն և այլն)։

Բաղադրական հիմքերի տարբերությամբ պայմանավորված բառատարբերակների բազմաթիվ խմբեր կան նաև գրաբարյան վերջահանգ և-ով և դրանից զուրկ զույգերով (օր. գազաթնային—գազաթային, աղեղնային—աղեղային, բաղեղնապատ—բաղեղապատ, բաղեղնազարդ—բաղեղազարդ), վերջահանգ ի ձայնավորի և ա հոգակապի հնչյունափոխությամբ ստացված և ձայնավորով ու անհնչյունափոխ զույգերով (օր. պատանեկան—պատանիական, պատանեկան—պատանիանալ, ոսկեփայլ—ոսկիափայլ), կամ էլ՝ առանց վերջահանգ ի ձայնավորի՝ ա հոգակապով տարբերակներով (օր. աղավնեփոստ—աղավնափոստ, աղավնեձագ—աղավնաձագ, կաղնեփայտ—կաղնափայտ) և այլն, հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերի տարբերակներով (օր. լուսային—լույսային, մշակութային—մշակույթային, թրքախոս—թուրքախոս, թրքասեր—թուրքասեր, պարտեզադրություն—պարտիզադրություն, պատենավոր—պատրանավոր) և այլն, և այլն։ Գրանց միջև ևս տեղի ունի ներքին պայքար, որ լուծվում է այս կամ այն ձևով։

Բաղադրական, բառակազմական և ձևական-ձևաբանական բառատարբերակները բազմազան են. դրանց միջև ծավալվող հակադրությունների ներքին պայքարը հնի, մահացողի և նորի, կենսունակի, զարգացողի պայքար է, կամ էլ՝ գրականի և քչ գրականի (ժողովրդախոսակցականի, բարբառայինի) պայքար: Փա տեական և անընդհատական պրոցես է, որը տանում է դեպի տարբերակներից մեկի կամ մյուսի հաղթանակը, իսկ դրա հիման վրա էլ, ամբողջությամբ փերցրած, դեպի տարբերակային համակարգերից մեկի կամ մյուսի հաղթանակը: Այդ պրոցեսը, սակայն, ինքն էլ ներքին հակասություններ ունի: Այսպես, աստղ բառից կազմված բաղադրությունների մեջ այժմ արդեն դուրս է մղվել աստեղ-բաղադրական հիմքը և փոխարինվել ուղղականի հիմքով, մինչդեռ կայսր բառից ունենք կայսերական և կայսրություն, հայր բառից՝ հորեղբայր, հորախույր և հայրական, հայրացու, հայրիշխանություն, հայրահալ և այլն. եթե աստղ բառի բաղադրությունների մեջ տարբերակային ձևերի պայքարը հանգեցրել է արդեն մեկ բաղադրական հիմքի (աստղ ուղղականաձև հիմքի) հաղթանակին, ապա կայսր, հայր, մայր և այլ բառերի բաղադրությունների տարբերակների պայքարը հանգեցրել է միայն առանձին բառատարբերակների հաղթանակին: Նույնպես և՛ աղավղի բառի բաղադրություններից դուրս է մղվել աղավղե-ձևը և քեղհանրացել աղավղե-բաղադրական հիմքը (հմմտ. աղավղե-ա-բույծ, աղավղե-ա-թև և այլն), որդի, այրի, արի բառերի բաղադրություններում ընդհանրացել է ուղղականաձև հիմքը (հմմտ. որդիական, որդիություն, որդիաբար, արիաբար, արիանալ, այրիություն, այրիանալ և այլն), ապա ոսկի, այգի և այլ բառերի բաղադրություններում առայժմ կանոնական և ընդհանրական են ոսկե-, այգե- ձևերը (հմմտ. ոսկե-զույն, ոսկե-փայլ, ոսկե-ցուլ, ոսկե-դրամ, այգե-գործ, այգեպան, այգե-փոր, այգե-էտ և այլն).— Բարձր բառի բաղադրություններում: Հնչյունափոխված հիմքը փոխարինվել է անհնչյունափոխ ձևով (օր. թուրքական, թուրքերեն, թուրքանալ և այլն), իսկ լուրջ բառի բաղադրություններում առայժմ կանոնական է հնչյունափոխված հիմքը (օր. քրդական, քրդերեն, քրդախոս և այլն): Այս օրինակները ցույց

են տալիս, որ բառատարբերակների զանազան խմբերի և նույնիսկ միևնույն բառից կազմված տարբերակների միջև գոյություն ունեցող պայքարը ավարտուն պրոցես չէ. ըստ որում ավարտն էլ կարող է բացարձակապես միօրինակ լինել: Այսպես, օրինակ, թեև, ինչպես տեսանք, աստղ բառի աստեղ-բաղադրական հիմքը փոխարինվել է ուղղականի ձևով, բայց նույն բառից ունենք համաստեղ, բազմաստղ, բառերը՝ հնատիպ հիմքով, ըստ որում դրանց համաստղ, բազմաստղ տարբերակային ձևերը գեոևս գոյություն էլ չունեն:

Տարբերակային բառաձևերի միջև եղած պայքարի հետևանքով այս կամ այն տարբերակի հաղթանակը բառապաշարի կատարելագործում է այն տեսակետից, որ դա հանդեցնում է ավելորդ բառազույգերի վերացմանը, երկու տարբեր, բայց զուգահեռաբար գործածվող ձևերից մեկի ընդհանրացմանը, մյուսի մերժմանը և, ընդհանուր առմամբ, բաղադրական հիմքերի, բառակազմության հետ կապված հնչյունափոխական իրողությունների միասնականացմանը և այլն: Այս պրոցեսի հիմնական օրինաչափությունը ժամանակակից հայերենի գործուն օրինաչափությունների ընդհանրացումն է, որից և բխում է հնատիպ ձևերի փոխարինումը նորով (օրինակ՝ աստեղային—աստղային, աղավղեձագ—աղավղաձագ, պատանենալ—պատանիանալ): Հենց այս տեսակետից էլ բառատարբերակների խմբերում նոր ձևերի հաղթանակը ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործում է: Բայց կա նաև հակառակ երևույթը. բառային հնատիպ տարբերակները սովորաբար զտարարյան կազմություններ են և գրական գործածության ավելի քան մեկուկես հազարամյակի պատմություն ունեն. գրական ժառանգորդությամբ հասնելով մինչև մեր օրերը, նրանցից շատերը դեռևս լիովին կենսունակ են մնացել, և հաճախ հենց այդ տարբերակներն են հաղթող դուրս գալիս: Այսպես, օրինակ, եթե փայրական, փայրաբար, փայրություն բաղադրությունների մեջ հաղթել է անհնչյունափոխ նոր ձևը (ույր լի դարձել ու), ապա լուսային-լուսային, բունավոր-բունավոր տարբերակներից առայժմ հաղթել են լուսային և բունավոր հնչյունափոխված ձևերը. հայրական, հայրաբար, հայ-

ուրջուն, ճայրանալ բառերի մեջ հաղթել է նոր բաղադրական հիմքը, նախաբայ, նախաբայ, նախաբայ բաղադրությունների մեջ՝ հնատիպ նախ- հիմքը և այլն: Այս բոլոր դեպքերում իրեն կատարելագործում պետք է դիտել հենց այդ հնատիպ ձևերի հաղթանակը ոչ կենսունակ, «սպորտիկ» նորատիպ տարրերակների նկատմամբ, ըստ որում դրանց կենսունակությունն ու կայունությունն ամրապնդվում է մեծ գրական լեզվի ավանդականություններով:

Այսպիսով, բառապաշարի ներլեզվական տարրերակների միջև գոյություն ունեցող ներքին պայթյալը բառապաշարի կատարելագործման անընդհատական պրոցես է, իսկ պայթյալի աչք կամ այն վախճանը, տարրերակներից մեկի կամ մյուսի հաղթանակը՝ այդ պրոցեսի շնորհիվ տեղի ունեցած կատարելագործման առանձնակի կամ ընդհանրական դրսեվորումը:

Բառապաշարի իմաստաբանական ու գործառական կատարելագործումը բառերի իմաստների ու գործածության նշագրումները, իմաստային անորոշությունների, շփոթությունների առաջ բերող բազմիմաստությունների վերացումը հոմանիշների գործառական, իմաստային ու ոճական տարրերակումներն են: Այսպես՝ 20—30-ական թվականներին ցուցում և ցուցմունք բառերը հավասարապես գործածվում էին «1. այսպես կամ այնպես վարվելու կամ գործելու պատվեր՝ առաջադրանք՝ խորհուրդ՝ հրահանգ (ռուս. указание), 2. վկաների և մեղադրյալ(ներ)ի՝ ըստ գործի էությունից ամփոփումը (ռուս. показание)» իմաստներով. այդ իմաստները որոշակիորեն տարբեր են, և երկու տարբեր բառերի գործածությունը հավասարապես երկու իմաստների համար շփոթ էր առաջացնում ինչպես դրանց գործածությունների, այնպես էլ, շատ հաճախ, խոսքի ճիշտ հասկացման մեջ: 40-ական թթ. այդ իմաստներն ու գործածությունները տարրերակվեցին. ցուցում բառն սկսեցին գործածել առաջին իմաստի համար, իսկ ցուցմունքը՝ երկրորդ իմաստի համար՝ որպես իրավաբանական տերմին. — ամբաստանելու և մեղադրյալ բառերը գործածվում էին որպես նույնանիշներ. 60-ական թվականներին իմաստային տարրե-

րակման ենթարկվեցին և այժմ ամբաստանելու գործածվում է «այն անձը, որի մասին դատի տալու որոշում է կայացվել» (ռուս. подсудимый), իսկ մեղադրյալը՝ «այն անձը, որին մեղադրանք է ներկայացվում որևէ հանցագործության համար» (ռուս. обвиняемый) իմաստով. — աստղաբանություն, (աստեղաբանություն), աստղագիտություն (աստղագիտություն), աստղաբաշխություն (աստեղաբաշխություն) բառերը հավասարապես գործածվում էին միևնույն նշանակություններով (1. երկնային մարմինների ու նրանց համակարգերի ծագման, կառուցվածքի, շարժման օրենքների ու քիմիական կազմի ուսումնասիրությանը զբաղվող գիտություն. 2. հնում զարգացած կեղծ գիտություն երկրային գործերի ու մարդկանց կյանքի վրա երկնային լուսատուների ազդեցության մասին). 50-ական թվականներին իմաստների ու գործածության սահմանազատում տեղի ունեցավ. աստղագիտություն հատկացվեց առաջին իմաստին, աստղաբաշխությունը՝ աստղագիտության այն ճյուղը, որ ուսումնասիրում է աստղերի ու աստղային համակարգերի բաշխումն ու շարժումները՝ իմաստին, աստղաբանությունը՝ վերը բերված երկրորդ իմաստին (հնում զարգացած կեղծ գիտություն...): — կազմակերպչական բառը գործածվում էր երկու տարբեր իմաստներով՝ «1. կազմակերպչին հատուկ. 2. կազմակերպչության հատուկ» (ռուսերեն организаторский և организационный բառերի դիմաց), իմաստների տարրերակման և անորոշության վերացման համար ստեղծվեց կազմակերպչական բառը ռուս. организационный-ի համար, իսկ կազմակերպչականը հատկացվեց միայն առաջին իմաստին (ռուս. организаторский). — լեզվաբանական տերմինաբանության մեջ կազմ և կերտ բաղադրիչներով կազմված բարդությունները հավասարապես գործածվում էին թե՛ «կազմված, բաղադրված» և թե՛ «կազմող, բաղադրող» իմաստներով (հմտ. բայակազմ և բայակերտ «1. բայ կազմող, 2. բայից կազմված»), վերջին տարիներում գծացվում է դրանք տարրերակելու միտում՝ —կազմ բաղադրիչը «կազմված, բաղադրված» (օր. բայակազմ գոյական «բայից կազմված գոյական»), իսկ —կերտը՝ «կազմող, բաղադրող» իմաստի համար գործածելով (օր. բայակերտ ածանց «բայ կազմող ածանց»): — նրատար-

կուրքուն բառը մի ժամանակ գործածվում էր և՛ հրատարակող մարմին, և՛ հրատարակված արտադրանք իմաստներով, իմաստների տարբերակում տեղի ունեցավ՝ առաջինի համար հրատարակչություն, իսկ երկրորդի համար՝ հրատարակչություն բառերի գործածությունը: Այդ կարգի ճշգրտումների ու տարբերակումների են ենթարկվել նաև՝ գրագետ-գրականագետ, գիտուն-գիտնական, պատմաբան-պատմագետ, լեզվաբան-լեզվագետ և բազմաթիվ այլ բառազույգեր, որոնց մեջ առաջինները գործածվում էին նաև երկրորդների նշանակությամբ (օր. գիտուն բառը, բացի «գիտնական» իմաստից, ունի նաև «գիտնական» իմաստը, գրագետ բացի «գրականագետ» իմաստը և այլն): Իմաստների ու գործածությունների այսպիսի ճշգրտումները բառապաշարի կատարելագործում են ախ տեսակետից, որ վերացնում են իմաստների ու գործածությունների շփոթը, անհարկի համանիշությունները՝ մանավանդ տեղիում համակարգերի մեջ, ու ճշգրտում բառերի գործածությունների սահմաններն ու դիրտները:

Բազմիմաստությունն ու դրա հետևանքով բառի որոշակիորեն տարբեր իմաստների շփոթությունը, ինչպես և բառերի իմաստային արտակարգ ծանրաբեռնվածությունը վերացնելու համար հաճախ դիմում են այսպես կոչված նոր բառերի սերման, այսինքն՝ բազմիմաստ բառի այս կամ այն իմաստն արտահայտող բառերի կերտման՝ խոսքի մեջ իմաստը կոնկրետացնող լրացական կապակցությունների հիման վրա. օրինակ՝ ճակատ բառը ռազմական տեղմանաբանության մեջ գործածվում էր երեք հիմնական իմաստներով՝ 1. ախ տարածությունը, որտեղ անմիջականորեն ծավալվում են ռազմական գործողությունները, 2. ռազմադաշտի որոշ հատված, որ ենթարկվում է մեկ միասնական հրամանատարության, 3. զորքերի մարտական դասավորության առաջնային գիծը, որ գտնվում է հակառակորդի զորքերի դիմացը: ստեղծվել էր տեղմանային համանունություն միևնույն տեղմանահամակարգի մեջ: Խոսքի մեջ այդ համանունությունը վերացվում էր լրացական կապակցություններով՝ համապատասխան որոշիչների օգնությամբ (օր. ռազմի ճա-

կատ, զորքի ճակատ կամ մարտական դասավորության ճակատ և այլն): Համանունությունը վերացվեց երկրորդ իմաստի համար ռազմական կապակցությամբ՝ ռազմի ճակատ կապակցության հիմքի վրա (հմմտ. կովկասյան ռազմաճակատ, Հյուսիսային ռազմաճակատ և այլն): Նույնպես և՛ թե բառը ռազմական տեղմանաբանության մեջ գործածվում էր երկու տարբեր իմաստներով՝ 1. զորքերի մարտական դասավորության կենտրոնական մասից աջ և ձախ ընկած հատվածներից յուրաքանչյուրը, 2. զորասյան (շարասյան) կենտրոնական մասի աջ և ձախ հատվածներից յուրաքանչյուրը: տեղմանային համանունությունը վերացվեց զորաքե բառի կազմությամբ՝ երկրորդ իմաստի համար: Տեղմանային համանունության և, առհասարակ, որոշակիորեն տարբեր հասկացությունները մեկ բազմիմաստ բառով արտահայտելու փոխարեն՝ զրանցից մեկի կամ մի քանիսի համար նոր բառեր կազմելը սովորական նորակազմություններից տարբերվում է նրանով, որ եթե նոր բառերը, որպես ընդհանուր կանոն, կազմվում են նոր առարկաների, երևույթների և այլնի հասկացությունների անվանման համար, ապա բառերի սերումը տեղի է ունենում լեզվի մեջ արդեն իրենց արտանայտությունն ստացած հասկացությունների համար: Այս դեպքում նոր բառը, ըստ էության, արդեն ունեցած բառի մասնավորումն է՝ լեզվի բառակազմական հնարավորությունների օգտագործումով կամ փոխառությունների օգնությամբ, ըստ որում, այս դեպքում էլ, իբրև կանոն, նոր բառը կազմվում է մասնավորեցնող, տարբերակող լրացական կապակցության հիմքի վրա. օրինակ՝ թե բառի վերջը քերած ռազմական տեղմանաբանության երկրորդ իմաստը խոսքի մեջ սովորաբար կոնկրետացվում, տարբերակվում էր զորքի թե, զորասյան թե, շարասյան թե կապակցությամբ, ուստի և դրա հիմքի վրա կազմվեց զորաքե բառը:

Բառապաշարի հարստացման ընթացքում հաճախ միևնույն հասկացությունն արտահայտելու համար ստեղծվում ու գործածության մեջ են դրվում մի քանի բառեր միաժամանակ. հանդես գալով իբրև բացարձակ նույնանիշներ կամ բազմանուններ, այսպիսի բառերը, որպես նորաբանություններ, «մրցակցություն» մեջ են մտնում, և ժամանակի ըն-

Քացքում մրցակցությունը լուծվում է այս կամ այն հետևանքով: Օրինակ՝ փոխառյալ ցեխ «արտադրամաս» բառը 60-ական թվականներին հայերեն բառով փոխարինելու նպատակով միաժամանակ կազմվեցին ու գործածվել սկսեցին երկու բառեր՝ արտադրամաս և գործամաս, որոնց մրցակցությունը շատ կարճ ժամանակամիջոցում լուծվեց հոգուտ արտադրամաս-ի. — գեղեցկագիտություն և գեղագիտություն բառերը մրցում էին իրեն համապատասխաններ. մրցակցությունը լուծվեց գեղագիտություն-ի օգտին. — լուցիչ, վառիչ, ինֆեռավառիչ, ինֆեռավառ, ճրանան բառերը մրցակցում են իրեն ուսուցիչն և ճառագողն համապատասխաններ. այժմ ավելի ու ավելի տարածվում և ընդհանրանում է վառիչ-ը: Այդ կարգի բազմաձևերի մրցակցությունը կարող է տարբեր հետևանքներ ունենալ. բերված օրինակների մեջ տվյալ տերմինի համար օգտագործվող բառերից մեկն ընդհանրացել է, «հաղթել», մյուսը (կամ մյուսները)՝ դուրս մղվել: Այլ դեպքերում մրցակցող բառերը կարող են իմաստային տարբերակումներ ստանալ, որով և վերանում է մրցակցությունը. օրինակ՝ սխտեմ և համակարգ բառերը գործածվում էին հավասարապես՝ միևնույն նշանակություններով. մրցակցությունը հանգեցրեց այն բանին, որ սխտեմ բառը պահպանվեց որոշակի նշանակությունների ու գործածությունների համար (ընտրական սխտեմ, ղեկավարման սխտեմ, կառավարման սխտեմ և այլն), իսկ մյուս իմաստների ու գործածությունների համար ընդհանրացավ համակարգ բառը (համար. լիզվական համակարգ, հոլովման համակարգ, հեռուստակառավարման համակարգ, շեռուցման համակարգ և այլն). — սպաս և սարբ բառերը հաճախ գործածվում էին մեկը մյուսի նշանակությամբ. այժմ մրցակցությունը հանդեցնում է դրանց որոշակի տարբերակման. սպաս-ը՝ «կենցաղային առարկաների համալիր», իսկ սարբ-ը՝ «տրեկ աշխատանքի համար անհրաժեշտ գործիք՝ հարմարանք» իմաստներով:

Ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործման ուղիներից մեկն էլ փոխառյալ բառերը հայերեն բառերով փոխարինելն է: Մեր լիզվի բառապաշարի մշակման ու հարստացման հիմնական սկզբունքներից մեկն այն

է, որ ըստ անհրաժեշտության պետք է դիմել փոխառությունների օգնության. փոխառությունը մեր լիզվի բառապաշարի հարստացման կենսական աղբյուրներից մեկն է: Դա չի նշանակում, սակայն, թե ամեն օտար բառի փոխառությունը խրախուսելի է. մեր լիզուն իր հարուստ բառապաշարով, նրա մշակվածությամբ, իր բառակազմական անսպառ հնարավորություններով թույլ է տալիս սեփական բառերով արտահայտել շատ ու շատ նոր հասկացություններ, կազմել նոր մեքենաների և այլնի հասկացությունների անվանումներ, ուստի և այսպես կոչված միջազգային բնույթի տերմինների փոխարեն հայերեն նոր բառեր կազմելը կամ արդեն ունեցած բառերը նոր իմաստներով գործածելը նույնպես սովորական երևույթ է և մեր լիզվի բառապաշարի հարստացման ու համարման առաջնակարգ միջոցը: Քանի որ բառապաշարի հարստացման այս երկու (ներքին և արտաքին) ճանապարհներն էլ կենսունակ են, արդա շատ հաճախ այս կամ այն հասկացությունն արտահայտելու համար գուրահեռաբար գործածվում են հայացի և փոխառյալ բառերը՝ նույն հասկացության արտահայտության համար, որոնց միջև, բնականաբար, տեղի է ունենում մրցակցություն, որ հանգեցնում է մեկի կամ մյուսի հաղթանակին: Հաճախ է պատահում նաև, որ որոշ ժամանակ գործածվում է միայն փոխառյալ բառը, մինչև կազմվում է հայերեն հարող համապատասխանը և դուրս մղում նրան: Այսպես, օրինակ, 20—30-ական թվականներին գործածվում էին սոլո, օրկեստր, կոնցերտ, աֆիշ (ա), կոմենդանտ, ստանոկ, բրակ և բազմաթիվ փոխառյալ բառեր, որոնց համապատասխան հայակազմ բառեր կամ դեռևս չէին կազմվել, կամ էլ, լեթե կային էլ, չէին գործածվում. ժամանակի ընթացքում սկսեցին գործածվել հայակազմ համապատասխանները (մենակատարում, նվագախումբ, համերգ, ազդ, պարեո, հաստոց, խոտան) և դուրս մղեցին օտար բառերը. — ցեխ «արտադրամաս» բառը գործածվում էր իրեն միակ կանոնական-գրական բառ, բայց 1965 թվականին փոխարինվեց արտադրամաս բառով. — 40-ական թվականներին գործածվում էին պարտիա «կուսակցություն», կոնստիտուցիա «սահմանադրություն», ռեպուլցիա «հեղափոխություն» և մի քանի այլ բառեր՝ Տերմինաբանական

կոմիտեի հատուկ որոշման համաձայն. միտում կար գործածելու նաև ռայոն բառը՝ հայերեն շրջան-ի փոխարեն՝ մասնավորապես քաղաքային շրջանների համար (օր. Երևան քաղաքի Սպանդարյան ռայոն), որով գործածության մեջ մտան նաև ռայոնով, ռայոնակետ, ռայոնական և այլ բառեր՝ հայերեն համապատասխանների փոխարեն. 50-ական թվականների երկրորդ կեսում այդ բառերը կրկին փոխարինվեցին հայերեն բառերով, և այժմ գործածվում են միայն հեղափոխություն, սանձաճարտարություն, շրջան, կուսակցություն և այլն.— մինչև 50-ական թվականների վերջերը թե՛ մամուլում և թե՛ գիտական-մասնագիտական գրականության մեջ գործածվում էր փոխառյալ առախո բառը, որ փոխարինվեց գետնաճուղ հայերեն բառով և այլն, և այլն: Փոխառությունների մերժման տեսակետից հատուկ վերաբերմունքի առարկա են այսպես կոչված ներքին փոխառությունների մեջ մտնող այն բոլոր բառերը, որոնք մեր բարբառները և ժողովրդախոսակցական լեզուն վերցրել են արևելյան լեզուներից (այսպես կոչված թուրք-պարսկական փոխառություններ). իբրև ընդհանուր կանոն, այդ բառերը դիտվում են որպես բարբառային բառեր և չեն հանձնարարվում գործածության՝ գրական լեզվի լեզուք լեզվաճանում:

Փոխառյալ բառերի փոխարինումը հայերեն համապատասխաններով մեր լեզվի բառապաշարի կատարելագործում է ոչ միայն նրանով, որ անհարկի փոխառությունները դուրս են մղվում մեր լեզվից, այլև նրանով, որ նպաստում են մեր լեզվի բառակազմական հնարավորությունների օգտագործմանը, այդ հնարավորությունների ծավալմանը, ինչպես և՛ զանազան անպատահությունների վերացմանը: Այսպես, օրինակ, ցեխ բառի գործածությունը հաճախ անհարմար արտահայտությունների պատճառ էր դառնում՝ շփոթվելով հայերեն ցեխ բառի հետ (հմմտ. օր. բանվորներն աշխատում են ցեխում.— արտադրամասում, թե ցեխի մեջ). արտադրամաս բառը, փոխարինելով օտար բառին, վերացրեց այս կարգի շփոթությունների ու անպատահությունների հնարավորությունը: Թուսերենում սալո բառը գործածվում է թե՛ երգի, թե՛ պարի, թե՛ նվագի համար. նույնպես և՛ սոլիստ-ը՝ երգչի, պարողի, նվագչի համար. դրան ավելանում էր նաև այն, որ

հայերենում այդ բառից հնարավոր չէր կազմել համապատասխան բայը: Հրաժարվելով դրանից, հայերենն ունեցավ մեծակատարում, մեծակատարել, մեծակատար ընդհանուր իմաստով բառերը և մեներգ, մեներգիչ, մեներգել, մեծանվագ, մեծանվագել, մեծանվագիչ, մեծանվագում, մեծանվագային, մեծապար, մեծապարել մասնավոր իմաստով բառերը.— նույնը կարելի է ասել նաև կոնցերտ, օրկեստր, աֆիշ(ա), կոնկերտո բառերին փոխարինած հավերգ, նվագախումբ, ազգ, պարետ բառերի մասին (համերգ, համերգել, համերգային, համերգասրահ, համերգավար, նվագախումբ, նվագախմբային, պարետ, պարետատուն, պարետախցիկ, ազգաթերթ, ազգային) և այլն, և այլն: Վերջապես, փոխառյալ բառի փոխարինումը հայերեն բառով կարող է թելադրվել նաև իմաստային կատարելագործման, այսինքն՝ տարբեր իմաստների տարբերակման ու ճշգրտման անհրաժեշտությամբ. այս դեպքում օտար բառը պահպանվում է որոշ իմաստի կամ իմաստների համար, իսկ մյուս իմաստների համար կազմվում կամ գործածության մեջ է դրվում հայերեն բառ. այդպես է տեղի ունեցել կուրս բառի պահպանումով դասընթաց բառի գործածությունը, սիտեմ բառի պահպանումով՝ համակարգ բառի գործածության մեջ դրվելը և այլն, և այլն: Այս երկրորդ կարգի բառերի զուգահեռ գործածությունը, ինչպես վերև ասվեց, իմաստարանական կատարելագործման պահանջով է տեղի ունենում:

Ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործման կարևոր իրողություններից է նաև բառակապակցությունների և հարադրական բաղադրությունների բառացումը, այսինքն՝ դրանց վերածումը համադրական կամ հատվածական բաղադրությունների. ինչպես, զօրական կամ զօրհեի միավորում—զօրամիավորում, անկյան ֆար (= գրք. վե՛մ անկեան)—անկյունաֆար, զլուխ գործոց—զլուխգործոց, կիւ առնել—կիրառել, վեր ածել—վերածել, անց կացնել—անցկացնել, նկատի առնել—նկատառել, միտը (միտքը) պանել—մտապանել, այգեգործական և բաւթուրարութական—այգեբաւթուրարութական, ռազմական հեղափոխական—ռազմահեղափոխական, պրոֆեսուրական և դասախոսական—պրոֆեսուրադասախոսական, առեւտրական և արդյու-

ձաքերական—անտրաառդյունաքերական և այլն: Բառակապակցութիւնների բառացումը կատարելագործում է այն տեսակետից, որ, իբրև ընդհանուր կանոն, բառակապակցութիւններն ավելի երկար են, քան նրանց հիմքի վրա կազմված բաղադրութիւնները, ուստի և դրանով իրացվում է լեզվի մեջ գործող խնայողութեան սկզբունքը: Հարադրութիւնների բառացումը, բացի դրանից, կատարելագործում է նաև բառակազմական իրողութիւնների միասնականացման տեսակետից. ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենում հարադրական բայերից բայանուններ ու ածականներ կազմվում են համադրական բաղադրութիւններով, ինչպես՝ անց կացե՛լ—անցկացում, նկատի առե՛լ—նկատում, գործ ածե՛լ—գործածում, գործածա՛կան, գործածութեան, առաջ քաշե՛լ—առաջաշում և այլն: Հարադրական բայերի բառացումը, այսինքն՝ նրանց վերածումը բարդութիւնների, վերացնում է անմիօրինակութիւնը և ստեղծում բայերի և դրանցից կազմվող բայանունների ու բայածականների կազմութեան միօրինակութիւն ու միասնականութիւն (հմմտ. վերածում—վերածել, գործածական—գործածել, անցկացում—անցկացնել և այլն):

Բառապաշարի կատարելագործման կարևորագույն իրողութիւններից են բառային կազմի մեջ տեղի ունեցող ներքին տեղաշարժերը, այսինքն՝ գործառական ու լեզվաճանկան տարբեր շերտերի պատկանող բառերի փոխանցումը մեկ շերտից մյուսին: Այդ փոխանցումներն ու ներթափանցումները տեղի են ունենում հիմնական հետևյալ ուղղութիւններով:

1. Բառերի տեղմինացում.— Գիտութեան, տեխնիկայի, արտագրութեան, մշակութի զարգացումը պահանջում է դրանց յուրաքանչյուր ճյուղի, ենթահյուղի, բնագավառի տերմինահամակարգի հարստացում ու կատարելագործում, որը իրականացվում է ինչպես նոր բառերի կազմութեամբ կամ փոխառութիւններով, այնպես էլ արդեն ունեցած բառերի իմաստաբանական զարգացումով, կատարելագործումով և գործառական վերաբաշխումով: Տերմինահամակարգերի համալրումը նորակազմ կամ փոխառյալ բառերով մտնում է բառապաշարի հարստացման ընդհանուր

գործընթացի մեջ և այստեղ դրան լինք անդրադառնալ: Բառերի տերմինացում ասելով հասկանում ենք լեզվի մեջ արդեն գոյութիւն ունեցող և բառապաշարի գործառական կամ պատմական տարբեր շերտերի պատկանող բառերի օգտագործումը որևէ տերմինահամակարգի մեջ՝ համապատասխան տերմինային իմաստով: Այսպես, օրինակ, քն բառը լեզու շերտի բառ էր, որ օգտագործվեց ռազմական, տեխնիկական ու սպորտային տերմինահամակարգերում, դարձավ տերմին՝ այդ քնագովաններից յուրաքանչյուրին հատուկ գիտական հասկացութիւնների համար.— խոռոչ լեզու շերտի բառն օգտագործվեց երկրաբանութեան, կազմախոսութեան (անատոմիայի), բժշկութեան մեջ որպես տերմին՝ յուրաքանչյուրին հատուկ տերմինային իմաստով.— նտրագոյացում լեզու շերտի բառ էր, որ օգտագործվեց որպես բժշկական և լեզվաբանական տերմին.— գիրք լեզու շերտի բառը դարձավ պոլիգրաֆիական ու գրադարանագիտական տերմինահամակարգերի բառ.— ննչյուն լեզու շերտի բառ էր՝ «ձայն» ընդհանուր նշանակութեամբ, որ դարձավ ֆիզիկայի և լեզվաբանութեան տերմին.— էտ, էտել, տեալ, շմուշկ, անլայիս, դահուկ, սելլալ բարբառային բառեր էին, որոնք դարձան գյուղատնտեսութեան, սպորտի, սննդարդյունաբերութեան և այլ ճյուղերի տերմիններ.— ական, մարսկոց, սաղավարտ, ռումբ և այլն գրաբարյան բառեր էին, որոնք դարձան տերմիններ և այլն, և այլն: Այս կարգի բառերի տերմինացումը հանգեցնում է՝ ա) լեզու շերտի բառերի հատկացման տերմինաբանական շերտին (թև, խոռոչ, հեշյուն և այլն), բ) բարբառային շերտին պատկանող բառերի հատկացման որևէ տերմինահամակարգի (սածիլ, էտ, դահուկ, անդալիս և այլն), գ) շարժուն շերտի բառերի անցում շերտին՝ որպես տերմինային բառեր (գեղմ, խրոց և այլն):

2. Տերմինների բառացում.— Սա նախորդին հակառակ հրևույթն է: Շատ բառեր նախապես գործածվում են միայն որպես տերմիններ, բայց ժամանակի ընթացքում հենց այդ տերմինների մասսայականացումը հանգեցնում է այն բանին, որ, պահպանելով իրենց տերմինային իմաստը կամ իմաստները, ստանում են նաև փոխաբերական, ոչ տերմինային իմաստներ և այդ իմաստներով մտնում լեզու կամ բանաստեղծության մեջ:

տեղծական բառաշերտերի մեջ: Օրինակ՝ պատվաստել գյուղա-
տնտեսական տերմին էր, որ դարձավ նաև բժշկական տերմին,
քակ հետո ստացավ նաև «1. ներշնչել, արտաքին միջոցներով
որևէ զգացում՝ հատկապես՝ հրեայի արաշացնել, 2. օտարա-
մուտ՝ խորթ մի բան յուրացնել» փոխաբերական իմաստները:
Այդպես են նաև՝ կերպար գրականագիտական տերմինը՝
«պատկեր», «կերպարանք» փոխաբերական իմաստով, շար-
բակ ասուցք բժշկական տերմինը՝ «վտանգավոր՝ վնասակար
երևույթ» փոխաբերական իմաստով, լիբերալ քաղաքական
տերմինը՝ «ընտանացարտելիորեն բարեհոգի, զիջողամիտ» փո-
խաբերական իմաստով, լաբալազաց սպորտային տերմինը՝
«1. շահագանց ճարպիկ, ամեն կարգի նեղ միճակից խորա-
մանկությամբ՝ աշխատակցությամբ զուրս պրծնող մարդ, 2.
ճարպիկ խաբեբա» իմաստներով, բազմապատկել մաթեմա-
տիկական տերմինը՝ «շատացնել, ավելացնել, բազմացնել,
մեծացնել» փոխաբերական իմաստներով, հրամանատար ռազ-
մական տերմինը՝ «ղեկավար, պարագլուխ» փոխաբերական
իմաստով և այլն, և այլն:

Այս կարգի բառերի տեղաշարժումն այն է, որ դրանք,
մնալով այս կամ այն տերմինահամակարգում իբրև տերմին-
աբանական շերտի բառեր, ոչ տերմինային իմաստներով
անցնում են շեղք կամ բանաստեղծական շերտերին, ըստ
տրոս որքան ավելի գիտություն ու տեխնիկայի գիտելիքների
լայն մասսաների սեփականությունն են դառնում, որքան
ավելի մեծ շահով է տեխնիկան թափանցում կենցաղի մեջ,
այնքան ավելի է ծավալվում այդ երևույթը:

3. Ժողովրդասակցական և բարբառային բառերի գրա-
կանացում. — Մեր գեղարվեստական գրականության մեջ՝
ստեղծագործական նպատակներով, մամուլում, հաճախ նաև
գիտահանրամատչելի գրականության մեջ գործածվել ու գոր-
ծածվում են ժողովրդասակցական լեզվի ու բարբառների
բազմաթիվ բառեր: Այդ բառերը, ընդհանուր առմամբ, պատ-
կանում են մեր գրական լեզվի բառապաշարի ժողովրդական
և բարբառային բառաշերտերին: Սակայն բառապաշարի
զարգացման ընթացքում այդ բառերից շատերը ստանում են
քայն գործածականություն և ժամանակի ընթացքում բարձ-
րանում գրական լեզվի բառերի շարքը՝ մտնելով նրա շեղք

կամ տերմինարանական շերտերի մեջ: Բառերի տերմինաց-
ման մասին խոսելիս մենք արդեն բերեցինք բարբառային և
ժողովրդասակցական մի խումբ բառեր, որոնք տերմին-
ներ են դարձել և դրանով իսկ՝ գրականացել: Ժողովրդաս-
ակցական ու բարբառային բառերի գրականացած ու շեղք
շերտին անցած բազմաթիվ բառերից կարելի է հիշել՝ առաջ-
վա, ալբաբաթախ, ալբամաղ, բաբայիկ, բոթ, բարուր, բաց-
բերան, տեալ, անդալիս, բանջարեհողիկ, ճնճալ, ֆոդակիկ,
շվալ, տկոզիկ, գայլախեղդ (գելխեղդ), լուսնանաշ, մարդա-
զուս, բուկից, բխիսեղդ, ֆաղճան, հնձվոր, ջրվոր, արջու,
շանչ (խաղողի), ծակաչ, ականջմուկ (ականջմախ), աչխա-
լույս, աչխալուսանք, աներանք, հերանք, խնամոնք և այլն,
և այլն: Այսպիսի բազմաթիվ բառեր մեր գրական լեզվի հա-
մար այժմ այնքան սովորական են դարձել, որ հաճախ դժ-
վար է լինում որոշել՝ իսկապե՞ս դրանք ժողովրդասակ-
ցական կամ բարբառային բառեր են, թե՞ գրական ժառան-
գորդությամբ գրաբարից մեր գրական լեզվին անցած բառեր,
և դրա ստույգ որոշումը պահանջում է պատմական-բառա-
գիտական հետազոտություն:

4. Բառերի հեացում. — Բառապաշարի զարգացման ըն-
թացքում, զանազան կարգի լեզվական և արտալեզվական
պատճառներով, որոշ քանակով բառեր դադարում են գոր-
ծածվելուց և գործուն շերտից անցնում են բառապաշարի
ոչ գործուն շերտին: Բառերի հնացման երկու գործոնները՝
լեզվական և արտալեզվական, համապատասխանորեն առաջ
են բերում բառերի հնացման տարբեր կարգեր, որոնց մասին
հանգամանորեն խոսվում է ստորև:

Քանի որ բառապաշարի զարգացման ընդհանուր ուղղա-
ծությունը բառապաշարի արդիականացումն է, այս բառի
ամենալայն իմաստով, ապա բառերի հնացումը դրա իրա-
կանացման հիմնական ուղիներից մեկն է: Ինչպես շեղք
շերտի բառերի անցումը ոչ գործուն շերտի պատմաբառերի
ֆոնդին, այնպես էլ բուն իմաստով հնացած բառերի գոր-
ծածությունից դուրս գալը բառապաշարի կատարելագործ-
ման գործընթացում իրացնում են բառերի «գտումը», ըստ

որում պատմաբաների համար այս զտումը հասարակական կյանքում տեղի ունեցող իրույթների, գաղափարների, սովորույթների և այլնի գտման արտահայտությունն է, մինչդեռ թուն հնացած բաների գտումը՝ լեզվի զարգացման ընդհանուր պրոցեսի արտահայտությունն ու իրացումը:

5. Ոչ գործուն շերտի բառերի գործունացում.— Ինչպես գեղարվեստական գրականության, այնպես էլ տեխնիկականության պահանջով հաճախ հնացած բաները վերստին սկսում են գործածվել և, վերականգնանալով, անցնում լեզվի զարգացման սովյալ փուլի գործուն շերտի այս կամ այն մասնաշերտին, ինչպես՝ բազրիք, կապար, հերառուկ, բիլ, զպլիսիչ, ծիծաղախիտ, զգետնել, ընդուլենել, դաստակերտ, առաքել, սաղավարտ և այլն: Ժամանակակից հայերենի համար այդ կարգի բաները մեծ մասամբ գրաբարյան բաներ են, որոնք մեր գրողներն ու գիտնականները ուղղակիորեն քաղում են բառարաններից կամ հին մատենագրություններից (օր. ծիծաղախիտ, գեղազանգուր, հիր, հերատուկ), մյուս մասը՝ աշխարհաբար գրական լեզվի նախորդ փուլերի բաներ (գրաբարյան-ժառանգորդական կամ աշխարհաբարյան), որոնք որոշ շրջանում դադարել են գործածվելուց, բայց այժմ կրկին գործածական են դառնում (օր. դաստակերտ, երիվար, բազրիք, բաղդատել, արգելարան և այլն): Ոչ գործուն շերտի գործածության մեջ մտած բաները սովորաբար պատկանում են կամ տեխնիկականության, կամ էլ քանաստեղծական շերտերին, թեև չի բացառվում նաև դրանց անցումը շեղք շերտին (օր. բազրիք, արգելարան, առաքել, սաղավարտ և այլն): Եթե բաների հնացումը և գործածությունից դուրս գալը գոյություն ունեցող ու գործածվող բաների մեջ կատարվող դառն է, ապա ոչ գործուն շերտի բաների վերըստին գործունացումը ընտրություն է հնացած բաների, նրանց գործածությունն նոր մոտեցումով, լեզվի մեջ նոր առաջացած պահանջով և այս տեսակետից էլ բառապաշարի կատարելագործման ընդհանուր պրոցեսի արտահայտություններից մեկն է, ինչպես և, իհարկե, բառապաշարի հարստացման ընդհանուր պրոցեսի իրականացման ուղիներից մեկը:

* * *

Ամփոփելով բառապաշարի կատարելագործման մասին վերը շարադրվածը, կարելի է հանգել հետևյալ ընդհանուր եզրակացություններին:

1. Բառապաշարի կատարելագործումը սովյալ լեզվի բառային կազմի ներքին զարգացումն է, որն ուղղված է լեզվի մեջ գոյություն ունեցող բաների իմաստաբանական, գործառական, ձևական-ձևաբանական և բառակազմական հատկանիշների արդիականացմանը՝ լեզվի մեջ գործող զարգացման ներքին (ներլեզվական) օրինաչափություններին համապատասխան և արտաքին (արտալեզվական) գործոնների թելադրանքով:

Այդ տեսանկյունից դիտելով ժամանակակից հայերենի բառային կազմում տեղի ունեցող գործընթացները, տեսնում ենք, որ դրանք, ամբողջությամբ վերցրած, իրացումն են մեր լեզվի մեջ գործող օրինաչափությունների ծավալման, դրանց իրականացման, բառակազմական, հնչյունաբանական, ձևաբանական և այլ իրողությունների համակարգայնացման և միասնականացման ընդհանուր արտահայտությունը:

2. Վերը բերված այն բոլոր փոփոխություններն ու դրանց տեսակները, որոնք վերաբերում են ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործմանը, չեն սպառում բառապաշարի կատարելագործման բոլոր դրսևորումներն ու իրողությունները: Դրանք առավել ընդհանուր և, այդ պատճառով էլ, առավել ակնհայտ իրողություններն են, որոնք ուրվագծում են միայն մեր լեզվի բառապաշարի կատարելագործման հիմնական դրսևորումները և միտումները:

3. Լեզվի զարգացման և ոչ մի փուլում էլ բառապաշարի կատարելագործումը, իր բոլոր դրսևորումներով և ամենամեծ մասշտաբներով հանդերձ, չի կարող դիտվել իբրև ավարտուն գործընթաց. այն, ինչ որ այսօր հանդես է գալիս որպես կատարելագործման իրացում, վաղը կարող է իր դարն ապրած լինել և փոխարինվել ավելի կատարյալով՝ լեզվի զարգացման վաղվա փուլին համապատասխան: Ժամանակակից հայերենի բառապաշարն այս տեսակետից առավել ևս հարաշարժ ու հարափոփոխ վիճակ է ներկայացնում, ըստ որում, բացի արտա-

լեզվական գործոնների հզոր ներգործությունից (գիտատեխնիկական հեղափոխություն, մշակույթի, արդյունաբերության, գյուղատնտեսության արտակարգ զարգացում, արտադրության, դիտության և առհասարակ հասարակական գործունեության նորանոր բնագավառների զարգացում և այլն), կարևորագույն հանգամանք է նաև այն, որ մեր դրական լեզվի բառապաշարի շեղոք շիրտի, ինչպես և առանձին ուղորտների գործառական բառաշերտերի ստանդարտացումը իր խակական կենսագործման հունի մեջ է մտել միայն սովետական իշխանության օրոք: Նախորդ շրջանում, շնայած այդ նպատակին ուղղված բոլոր ջանքերին, փնականաբար չէին կարող ցանկալի արդյունավետությամբ իրականացվել բառապաշարի ստանդարտացման խնդիրները՝ պատմահասարակական հայտնի պայմանների մեջ: Այս տեսակետից կարևոր է բացահայտել ոչ միայն բառապաշարի կատարելագործման վերջ թվարկված դրսևորումների գերն ու կշիռը, այլև դրանց ընդհանուր միտումը բառային կազմի զարգացման հեռանկարի տեսակետից՝ ներլեզվական ու արտալեզվական գործոնների արդի պայմաններում:

4. Հետազոտական նպատակով վերը բերված իրողությունները ներկայացվել են որպես միմյանցից առանձնացած երկվույթներ և քննության առնվել իրարից անկախ: Հասկանալի է, սակայն, որ լեզվի մեջ դրանք միասնաբար հանդես եկող, շատ հաճախ միմյանց հետ խաչավորվող կամ միենույն երկվույթի տարբեր կողմերը ներկայացնող իրողություններ են: Այսպես, օրինակ, հակադրությունների պայթարը ներլեզվական բառատարբերակների այնպիսի զույգերի միջև, ինչպիսիք են աստեղագիտություն—աստղագիտություն, աղբերաբալս—աղբյուրաբալս և այլն, պատկերվում է, ինչպես ասացիկը, մեկի հաղթանակով, քայց սա ինքնին արդեն նշանակում է, թե պայթարի մյուս հետևանքն էլ բառերի հնացումն է: Եթե բերված բառազույգերի մեջ հաղթանակել ու կանոնական են դարձել աստղագիտություն, աղբյուրաբալս և այլն, ապա դրանով իսկ աստեղագիտություն, աղբերաբալս բառերը հնացել են: Ստացվում է այնպես, որ հակադրությունների պայթարը նաև բառերի հնացման, գործածությունից դուրս մղվելու գործընթաց է: Դա, իսկապես, արդպես էլ է, թեև այդ էլ միակ ելքը չէ. հնա-

բավոր է, որ հակադրությունների պայթարը, սովյալ դեպքում բառատարբերակների մրցությունը, հանգեցնի այլ հետևանքների, ասինք, իմաստաբանորեն կամ գործառուպես տարբերակված բառերի առաջացման:

Այնուհետև. բերված զույգերի մեջ աստղ—, աղբյուր— բաղադրիչներով, որպես նորատիպ բաղադրական հիմքերով, կազմված բարդությունների հաղթանակն ու կանոնականացումը մենք դիտեցինք որպես աշխարհաբարի բառակազմական օրինաչափությունների դրսևորում. դա ճիշտ է, իհարկե: Սակայն, դրա հետ միաժամանակ, այդ բանում կարելի է դիտարկել նաև մի մասնավոր, հենց այդ բառերին հատուկ իրողություն, այն, որ աստղ, աղբյուր բառերի սեռական ասանդ, աղբեր ձևերը մահացած ձևեր են, որի հետևանքով ասանդ—, աղբեր— բաղադրական հիմքերն էլ հեշտությամբ են օղիջելս իրենց տեղը աստղ, աղբյուր հիմքերին: Այս հանգամանքն էլ, սակայն, իր հերթին կապվում է մեր լեզվի մեջ պատմականորեն գործած ու գործող ներքին օրինաչափության՝ հոլովների ու հոլովման համակարգի պատմական զարգացման ընդհանուր պրոցեսի հետ: Սա նշանակում է, թե քննության առնելով բառապաշարի կատարելագործման զանազան իրողություններն ու դրանց ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնակի բնույթ կրող դրսևորումները, անհրաժեշտ է դիտարկել դրանք իրենց փոխադարձ կապերի ու պայմանավորվածության մեջ, իսկ մյուս կողմից՝ դրանց և լեզվի տարբեր բաղադրիչների համակարգերում գործող զարգացման ընդհանուր օրինաչափությունների կապի ու պայմանավորվածություն մեջ:

դ. Ժամանակակից հայերենի բառապաշարի իմաստաբանական զարգացումը

Բառապաշարի իմաստաբանական զարգացումը բառերի իմաստափոխական այն իրողությունների ամբողջությունն է, որի մասին հանգամանորեն խոսեցինք իմաստաբանության մեջ: Եթե բառապաշարի հարստացումը նոր բառերի օգնությամբ համարում է լեզվի բառային կազմը նորանոր հաս-

կացութիւններին անվանումներով, դրանով իսկ ամբարշտելով լեզվի մեջ մարդկային մտքի առաջընթացը հասարակական գործունեության բոլոր բնագավառներում, ապա բառերի իմաստների փոփոխութիւնները հարստացնում, համարում են լեզվի բառապաշարը դարձյալ նորանոր հասկացութիւններով՝ արդեն ունեցած բառերի իմաստների հարստացումով: Այն փաստը, որ մեկ բառի օգնութեամբ մենք կարողանում ենք արտահայտել բազմաթիւ իմաստներ, այսինքն՝ մեկ բառն օգտագործել բազմաթիւ առարկաների, երևույթների և հատկանիշների հասկացութիւնների անվանման համար, ինքնին ոչ այլ ինչ է, եթե ոչ բառապաշարի հարստացում ու համարըրում, Ըստ էութեան ոչ մի տարրերութիւն չկա այն բանի մեջ, թե նոր հասկացութեան համար մենք նոր բա՞ռ ենք կազմում, թե՞ արդեն ունեցած բառն օգտագործում ենք նաև դրա արտահայտման համար: Ավելին. բառերի բազմիմաստութիւնը որոշակիորեն խնայողութիւն է բառերի քանակային սահմանափակման տեսակետից. ի՞նչ կլինէր մարդու վիճակը, եթե ամեն մի իմաստի համար լեզուն տրամադրեր միայն մեկ բառ, ալլ կերպ ասած, եթե լեզուն ունենար միայն մենիմաստ բառեր: Մենք ստիպված կլինեինք այդ դեպքում անսահմանափակ թվով բառեր կազմել և ստեղծել մարդու միտքը ծանրաքեռնող այնպիսի բառաքանակ, որ զգալիորեն կզժվարացներ լեզվին տիրապետելու փորձը և մարդկանց կողմից զոնե ամենօրյա հաղորդակցման համար անհրաժեշտ բառերի յուրացումը: Անշուշտ բառապաշարի իմաստաբանական զարգացումը ոչ միայն բառերի նորանոր իմաստներ ստանալն է, այլև որոշ իմաստների հնացումը, սակայն իմաստաբանական զարգացման համար առավել էականը և գերակշռողը նոր իմաստների առաջացումն է: Բառապաշարի իմաստաբանական զարգացման ընդհանուր օրինաչափութիւնը կարելի է համարել բառերի բազմիմաստացման պրոցեսը: Այդ պրոցեսը, ինչպես տեսնք, տեղի է ունենում հիմնականում խոսքի մեջ բառերի տարբեր փոխաբերական գործածութիւններով, որ հանգեցնում է փոխաբերական նշանակութիւնները բառիմաստի վերածելուն: Որքան ավելի զարգացած են հա-

սարակութիւնը, նրա տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքը, այնքան ավելի բազմակողմանի են ոչ միայն մարդկանց գիտելիքները, այլև դրանց միջև եղած կապերը, մերձավոր ու հեռավոր նմանութիւնները, համեմատելի եզրերը, որոնք հիմք են դառնում զանազան կարգի համեմատութիւնների ու փոխաբերութիւնների համար: Մյուս կողմից, որքան ավելի բուռն ընթացք է ունենում հասարակական կյանքը, որքան ավելի բուռն թափով են զարգանում գիտութիւնը, տեխնիկան, տնտեսութիւնը, մշակութիւնը, որքան դրանց նվաճումները ավելի մասսայական են դառնում և որքան ավելի բարձրանում է տվյալ լեզվով խոսող հասարակութեան կրթական մակարդակը՝ միջնակարգ ու բարձրագույն կրթութեան զարգացմամբ, այնքան ավելի բուռն, քազմակողմանիորեն և արդյունավետ կերպով է ընթանում բառապաշարի իմաստաբանական զարգացումը: Հենց այդպիսի պայմաններում է ընթացել ժամանակակից հայերենի բառապաշարի իմաստաբանական զարգացումը սովետական կարգերի օրոք և, մասնավոր, վերջին 30 տարիների ընթացքում: Գիտատեխնիկական հեղափոխութիւնը, պարտադիր լոթնամյա կրթութեան իրականացումը և անցումը տասնամյա պարտադիր կրթութեան իրականացմանը, բուհական լայն ցանցի ստեղծումը մեր լեզվի բառապաշարի ոչ միայն վիթխարի հարստացման, այլև իմաստաբանական բուռն զարգացման կայուն գործոնները դարձան: Ժամանակակից հայերենի բառապաշարի իմաստաբանական զարգացման մասին գաղափար կազմելու համար կարելի է քերել հետևյալ տվյալները: Ստ. Մալխասյանցի բառարանը լույս է տեսել 1944—1945 թվականներին և բառերի նշանակութիւնների ճշտագործումներով (բառերի բազմիմաստութեամբ) ներկայացնում է մինչև այդ թվականների վիճակը. ժամանակակից հայերենի երկու նոր բացատրական բառարանները լույս են տեսել վերջին տասնամյակում և արտացոլում են բառապաշարի իմաստաբանական զարգացման այժմյան վիճակը: Մի բանի բառերի իմաստների համեմատութիւնը հետևյալ պատկերն է ներկայացնում:

Բառեր	Նշանակություններ	
	Ստ. Մալխասյանցի բառարանում	Նոր բառարաններում
տնցնել	18	31
թև	18	37
թույլ	5	39
խոսել	13	33
կարել	25	35
հանել	41	40
մնալ	11	20
նստել	15	31
պահել	22	45
պատմություն	9	18
պատրաստել	9	24
շախմատում	3	13
վերցնել	10	34
տալ	31	62
օգակ	5	29

Թերված 15 բառերի համար Ստ. Մալխասյանցի բառարանում տրված է ընդամենը 224 նշանակություն, իսկ նոր բառարաններում՝ 491, որ նշանակում է, թե վերջին երեսնամյակում բառերի իմաստարանական զարգացումը հանդեցրել է նշանակությունների ավելի քան կրկնապատկմանը: Ընդհանուր առմամբ նոր բառարանների մեջ բառերի նշանակությունների ճյուղափոխումները արտակարգորեն հարուստ են, որ ոչ այլ ինչի հետևանք է, քան բառերի բազմիմաստացման:

Բառապաշարի իմաստարանական զարգացման պրոցեսը, ինչպես ասացինք, ենթադրում է ոչ միայն բառերի բազմիմաստացում, այլևինքն՝ նորանոր իմաստների առաջացում, այլև որոշ քանակով բառերի արդեն ունեցած իմաստների հնացում, դրանց մոռացում: Փրա հետևանքն է լինում որոշ քանակով բառերի՝ անցյալում ունեցած որոշակի գործածությունների ու իմաստարանական ճյուղավորումների նվազում, որը, սակայն, փոխհատուցվում է հենց նույն բառերի նորանոր իմաստների ձևափոխումով:

Վերջապես, իմաստարանական զարգացման դրսևորումներից մեկն էլ բառերի փոխաբերական գործածությունների, դրանց պայմանավորող զուգորգությունների փոփոխություններն են, որոնք հաճախ հանդեցնում են փոխաբերությունների օղջ համակարգի առաջացման: Այս տեսակետից առանձնապես

կարևոր են քաղաքական-գաղափարական պատկերացումներով պայմանավորված փոխաբերությունները: Փաղափարական-քաղաքական, ինչպես և գիտական բմբունումների հիմքի վրա տեղի ունեցած պատկերացումների ողջ համակարգի վերափոխման համար ավելի ցայտուն է կրոնական պատկերացումների, հին հայկական և, մանավանդ, հին հունական դիցաբանությունների, որպես գեղարվեստական պատկերների և փոխաբերությունների հիմքերի, վերափոխումը նոր բմբունումներով, նոր պատկերացումներով: Մինչսովետական շրջանի մեր գեղարվեստական (որոշ շափով նաև գիտական) գրականության մեջ փոխաբերությունների համար շատ սովորական են Աստվածաշնչից քաղված դեպքերի ու դեմքերի հետ կատարվող համեմատությունները և կրոնական պատկերացումներով պայմանավորված փոխաբերությունները: Սովետական կարգերի օրոք այդ պատկերացումները փոխարինվեցին նոր բմբունումներով, իսկ դրա հետևանքով՝ նաև փոխաբերությունների համար որպես հիմք հանդիսացող նոր երևույթներով և մարդկանց նոր պատկերացումներով:

Ե. Ժամանակակից հայերենի հնացած բառերը և հնարանությունները

1. Բառերի հնացումը և դրա պատճառները

Բառերի հնացումը տեղի է ունենում լեզվական և արտալեզվական գործոնների թելադրանքով:

Լեզվական են այն բոլոր գործոնները, որոնք զանազան կարգի փոփոխություններ են առաջացնում բառապաշարի մեջ՝ բառապաշարի կատարելագործման ու մշակման ներքին պահանջների թելադրանքով: Այսպես, օրինակ, ԲաՖՖու դարաշրջանում գործածական էր կախարդադպաս մակբայը, և ԲաՖՖին գործածել է այն. այժմ այդ բառը չի գործածվում, ըստ որում նա փոխարինվել է կախարդականունին բառով: Առաջին բառի հնացումը բացատրվում է մեր գրական լեզվի մեջ գործող մի ընդհանուր միտումով, այն է՝ ենթակայական դերբայից կազմվող մակբայների փոխարինում անկանոններից կազմվող մակբայներով (հմտ. գործողապես-գործունորեն, ստի-

պողապես-ստիպողականորեն, հարկադրողաբար-հարկադրաբար, հարկադրականորեն և այլն). — մարմարիոն բառը հնացել է՝ փոխարինվելով մարմար-ով, որովհետև քիմիական տարրերի, մետաղների, հանքանյութերի անվանումների —ն (—ոն) վերջնամասը փոխարինվել է —ում (—ում) վերջնամասով (հմտ. մագնեզիոն-մագնեզիում, ալյումինիոն-ալյումին, ալյումինիում և այլն). — կառուցանել հնացել է և փոխարինվել կառուցել-ով, որովհետև մեր լեզվում գործող օրինաչափությամբ պատճառական բայերի մեջ —ուցանել-ը փոխարինվել է ուցել-ով (հմտ. սնուցանել-սնուցել, ծանուցանել-ծանուցել, հարուցանել-հարուցել և այլն). — փերեզակ բառը հընացել է, որովհետև իբրև գրաբարյան ժառանգորդական-գրքային բառ չգիմացավ ժողովրդա-խոսակցական լեզվի շարչի բառի մրցակցությունը և այլն:

Արտալեզվական գործոններն են հասարակական կյանքում երևան եկող այն բոլոր հանգամանքները, որոնք առաջ են բերում իրույթների, գաղափարների, կենցաղի, սովորույթների, քաղաքական կյանքի փոփոխություններ: Արտալեզվական գործոնների թելադրանքով հնանում են ոչ թե բառերը, այլ նրանց ցույց տված առարկաները, երևույթները, գաղափարները, պիտական-վարչական մարմինները և այլն, և այլն: Այսպես, օրինակ, 20—30-ական թվականներին գործածական էին նեպ, նեպման, կուպակ, ենթակուպակ, լիկկայան, օտեացած տնտեսություն, ապակուպակացնել և այլն. մեր հասարակության զարգացումով վերացավ նեպը, հետևաբար և նեպմանը. անգրագիտության վերացումով վերացան նաև լիկկայանները, շահագործող դասակարգերի վերացումով մեր երկրում այլևս չկան կուպակներ, չկան և քատրակներ. ապակուպակացումը կուպակության, որպես դասակարգի վերացումն էր, որ ավարտվեց, և այժմ, երբ կուպակություն չկա, չի կարող լինել նաև ապակուպակացում և այլն, և այլն: Մինչև սովետական կարգերի հաստատումը գործածական էին էյոյսվա, զզիբ, տանուտեր, նանանգապեսա բառերը. սովետական իշխանությունը վերացրեց դրանց ցույց տված պաշտոնները, որի հետևանքով էլ այդ բառերը դուրս եկան բառապաշարի գործուն շերտից:

Քննության առնելով հիշյալ երկու գործոնների ազդեցու-

թյամբ բառապաշարի գործուն շերտից դուրս եկած բառերը՝ տեսնում ենք, որ իսկապես հնացած կարելի է համարել միայն առաջին կարգի բառերը (մարմարիոն, փերեզակ, կառուցանել և այլն), մինչդեռ երկրորդ կարգի բառերը միայն պայմանականորեն կարելի է համարել հնացած: Դրանք հնացած կարելի է համարել այն տեսակետից, որ մեր լեզվի այժմյան բառապաշարի գործուն շերտին չեն պատկանում և չեն գործածվում արդի հասարակական կյանքին վերաբերող խոսքում: Սակայն դրանք գործածվում են այն բոլոր դեպքերում, երբ խոսքը վերաբերում է համապատասխան ժամանակներին (20—30-ական թվականներին, նախասովետական շրջանին և այլն): Այլ կերպ ասած՝ առաջին դեպքում նկատում են բառերը, երկրորդ դեպքում՝ բառերի ցույց տված իրույթները, երևույթները և այլն. առաջին դեպքում բառը կամ նրա ներ նկատում է և փոխարինվում նորով, իրույթը մնում է և ստանում բառային նոր նկատում նոր անվանում (հմտ. մարմարիոն-մարմար, փերեզակ-շարի), երկրորդ դեպքում իրույթը (երևույթը և այլն) դուրս է գալիս գործածությունից, վերանում է կամ մահանում, մինչդեռ բառը պահպանվում է և գործածվում այն բոլոր դեպքերում, երբ զգացվում է դրա անհրաժեշտությունը: Առաջին դեպքում մենք ունենք ըստ էության իբրև հաջորդող նույնանիշներ, երկրորդ դեպքում միևնույն բառը՝ առանց դրա ցույց տված իրույթի (երևույթի և այլն) անկայության: Այս բոլորից ելնելով, հնացած բառեր են կոչում միայն առաջինները, իսկ երկրորդները անվանում են պատմաբաներ (խառնիզմներ):

2. Ժամանակակից հայերենի պատմաբաները

Ժամանակակից հայերենի պատմաբաներն են այն բոլոր բառերը, որոնք ցույց են տալիս անցած շրջաններին ու դարաշրջաններին հատուկ իրույթներ, սովորույթներ, գաղափարներ և այլն: Ժամանակագրական և լեզվապատմական տեսակետից ժամանակակից հայերենի պատմաբաները բաժանվում են երկու կարգի՝ նախաաշխարհաբարյան և աշխարհաբարյան:

Նախաաշխարհաբարյան են այն պատմաբաները, որոնք գոյություն են ունեցել աշխարհաբարի կազմավորումից առաջ:

Այդ բաներն էլ իրենց հերթին բաժանվում են զբարարյան և միջինհայերենյան շերտերի: Գրաբարյան են մինչև 11—12-րդ դարերի պատմաբանները, ինչպես՝ բղեշխ, մարգարան, սեպուհ, մառդպետ, զրանիկ, աշտե, գեղարդ(ն), վաշշամակ, մեհյան, բագին, Նոխագ, առեհագիր, առեհաղալի, գոնագվ, սպառապետ և այլն: Միջինհայերենյան են այն պատմաբանները, որոնք վերաբերում են 12—16-րդ դարերին, մասնավորապես՝ կիլիկյան թագավորության շրջանին, ինչպես՝ պալլ, գունդրուսաբլ, մարաշախտ, սենեշալ, պոռյգ «օծիա», ապուր (հարկի մի տեսակ) և այլն:

Աշխարհաբարյան են այն պատմաբանները, որոնք գործածվել են 16—17-րդ դարերից հետո ընկած ժամանակաշրջանում: Այս բաներն էլ ժամանակագրորեն բաժանվում են երկու շերտի՝ մինչևտոմարական շրջանի և նոր պատմական: Մինչևտոմարական շրջանի պատմաբաններն են սովետական իշխանության հաստատումից առաջ գոյություն ունեցած պատմական երևույթների, պետական-վարչական և այլ կարգի մարմինների, գործիքների, գաղափարների և այլնի անվանումները, ինչպես՝ մելիխ, էյոխվա, ստաշինա, ուրյադեիկ, սիճոդ, պալի, նակատանոց, հոգաբարձու և այլն: Նոր պատմական են այն պատմաբանները, որոնք ցույց են տալիս սովետական կարգերի հաստատումից հետո ծագած, բայց այժմ արդեն գոյություն չունեցող իրույթներ, հարաբերություններ, մարմիններ և այլն, ինչպես՝ նէպ, լիկկայան, կոմունա, կոմունարկա, աղակովակացում, գալիֆե, ժողկոմ, բատրակկոմ, ձայնագուրկ, շեկա և այլն, և այլն:

8. Ժամանակակից ճայերենի ճնարանությունները

Ինչպես վերը տեսանք, հնացած են այն բոլոր բաները, որոնք ինչ-որ ժամանակ գործածվել են աշխարհաբար արևելյան գրական լեզվում, ապա դուրս եկել գործածությունից՝ փոխարինվելով այլ բաներով կամ բառային այլ ձևերով:

Այդ բաների գործածությունը ժամանակակից հայերենով արտահայտված գրավոր կամ բանավոր խոսքում՝ հնարանություն է: Օրինակ, Ծ. Զարենցի «Օ», չի եղել մեր գալլը պրզընձյա, և ո՛չ մարմարոնյա, և ո՛չ անգամ քարե» հատվածի

մեջ մարմարոնյա բառի գործածությունը հնարանություն է, որովհետև ժամանակակից լեզվի համապատասխան բառն է մարմարյա:

Ժամանակակից հայերենի հնարանություններն ունեն հետևյալ տեսակները:

1. Անկան-ձևաբանական.— Այն հնարանությունները, որոնց մեջ փոխվել է բառի ձևը՝ հնչյունական զանազան փոփոխություններով, կամ բառի ձևաբանական կառուցվածքը, ինչպես՝ աղավենձագ—աղավնձագ, սերմնացու—սերմացու, ծանուցանել—ծանուցել, օծանել—օծել, թվիլ—թվալ, գիմնաղանգիմնաղա և այլն, որոնցից առաջինները հնացած բառային ձևերն են, երկրորդները՝ ժամանակակից:

2. Բաղադրական.— Այն հնարանությունները, որոնց մեջ փոխվել է բաղադրության տեսակը, ինչպես՝ կիր առնել—կիրառել, գործ դնել—գործադրել, ի միջի այլոց—իմիջիայլոց, վեր ածել—վերածել, ասել—կոսել—ասելուս, գլուխ գործոց—գլուխգործոց և այլն: Այս օրինակների մեջ վերլուծական բաղադրությունները վերածվել են համադրական բաղադրությունների ու փոխարինվել դրանցով:

3. Բառային.— Այն հնարանությունները, որոնք փոխարինվել են բոլորովին այլ բառով, ինչպես՝ գործավոր—բանվոր, արուր—գործողություն (ներկայացման), դրամատիքություն—կապիտալիզմ և այլն:

4. Խմաստաբանական.— Այն հնարանությունները, որոնց տվյալ իմաստն այժմ այլևս չի պահպանվել, ինչպես՝ ձևակերպել բայի «ձևավորել, պատկերել» իմաստը, տեսիլ բառի «տեսարան» նշանակությունը, զրադարան բառի «գրապահարան», զրագետ բառի «գրականագետ», դուրյուն բառի «համակարգ, սիստեմ», երևալ բառի «լույս տեսնել», ժողովուրդ բառի «եկեղեցական համայնք», կանգնել բառի «կանգնեցնել, կառուցել» նշանակությունը, բարձում բառը «վերացնել» նշանակությամբ և այլն: Բաների հնացած իմաստները կարող են նաև պատմական իրողություններ ցույց տալ, և այդ դեպքում տվյալ իմաստով տվյալ բառը պատմաբան է. օրինակ՝ ձայնավոր բառը «դրամայում ձայն ունեցող» իմաստով պատմաբան է կամ, որ նույնն է, այդ իմաստը պատմաբանային իմաստ է: Այդպես են նաև՝ բլիչ «Համկ(բ)» և Համկ(բ) բա-

կրգրեական կազմակերպությունների անվանումը մինչև 1934 թ., ձայնագրուկ՝ քրեական և քաղաքացիական այլ իրավունքներից զուրկ մարդ» և այլն:

4. Ժամանակակից հայերենի գրաբարաբանությունները

Գրաբարաբանություն է գրաբարյան բառերի, բառալին ձևերի, քերականական ձևերի, բառակապակցությունների ու դարձվածների գործածությունը ստեղծագործական նպատակներով: Օրինակ՝ «Գեպի լեռան Մասիս», «Աստ հանգչի», «Հանդիսական այրեր մեծարգո» (Ն. Չարենց), «Բյուր մարդոց մեջ, պաղ մարդոց մեջ» (Վ. Տերյան), «Նա այս զգացմունքն ու ոգին իր կաթի հետ շամբել ու ներշնչել է ինձ» (Հ. Թումանյան): այս օրինակների մեջ լեռան, այրեր, աստ հանգչի, մարդոց, շամբել գրաբարաբանություններ են:

Մեր գրականության, մասնավորապես չափածոյի մեջ սովորական դարձած գրաբարաբանություններ են՝ ջամբել, նոֆա, սոֆա, դոֆա, աստ, այր, ֆաղաֆամայր, աստան, ակն ընդ ակն (և) ատամն ընդ ատամն, հընքացս ժամանակի, դափր, խայտախաւիվ, խնդրո առաւկա և այլն:

Գրաբարաբանությունները գրաբարյան փոխառություններից տարբերվում են նրանով, որ այս վերջիններս, վերցված լինելով գրաբարից, մտնում են գործուն շերտի մեջ որպես տերմին կամ սովորական գործածության բառ և դրանով իսկ կորցնում իրենց ոճական արժեքը (հմտ. մարտկոց, պարոտ և այլն), մինչդեռ գրաբարաբանությունները գործածվում են հենց ոճաբանական նպատակներով՝ խոսքին վսեմություն, հրեմատիպություն հաղորդելու, հնույթյան և հին միջավայրի կամ պատմական իրադրության տպավորություն ստեղծելու և այլնի համար: Գրաբարաբանություններն էլ, սակայն, հաճախական գործածությամբ, կարող են կորցնել իրենց ոճական առանձնահատկությունները և դառնալ գործուն շերտի գրքային կամ բանաստեղծական բառեր: այդպիսի բառերից են՝ բիլ, բազում, ֆաղաֆամայր, ըստ այսմ, ընդ որում, ի քիվս այլոց, համենայն դեպս և այլն: Այս դեպքում գրաբարաբանություններն արդեն վերածվում են գրաբարյան փոխառությունների:

Գ Լ Ո Ւ Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Գ

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

ա. Բառակազմության առարկան

«Բառակազմություն» բառը, որպես լեզվաբանական տերմին, գործածվում է երկու իմաստով. 1. տվյալ լեզվի բառակազմական համակարգը, 2. բառագիտության մի բաժինը, որ ուսումնասիրում է տվյալ լեզվի բառակազմական համակարգը:

Բառակազմական համակարգը ներկայացնում է տվյալ լեզվի բառակազմական միջոցների ու եղանակների, բառակազմական միավորների, բառակազմական տիպերի ու դրանց կազմարարների և բառերի կազմության հետ կապված հնչյունաբանական ու քերականական իրողությունների ամբողջությունը: Ամեն մի լեզու իր պատմական զարգացման ընթացքում ստեղծում է բառեր կազմելու իր միջոցները, բառակազմական միավորների համակցություններում հանդես եկող ձևավորանական ու հնչյունաբանական զանազան կարգի օրինաչափությունները, բառերի կազմության հետ կապված քերականական իրողությունները և այլն: Դրա հետ միաժամանակ, բառապաշարի պատմականորեն ժառանգվող շերտի հետ, լեզվի զարգացման ամեն մի փուլում պահպանվում են նախորդ փուլերի բառակազմական համակարգերի իրողությունները՝ առաջել կամ պակաս կենսունակությամբ, կենսունակությունից զրկվում կամ իսպառ վերանում են բառակազմական միավորներ, երևան են գալիս նորերը և այլն: Այս բոլորի ուսումնասիրությամբ է զբաղվում բառակազմությունը՝ որպես տրվյալ լեզվի բառակազմական համակարգի ընդհանուր տեսություն:

Իրրև բառակազմական համակարգի ուսումնասիրություն, բառակազմությունը կարող է լինել պատմական և համաժա-

մանակյա: Պատմական բառակազմութիւնն ուսումնասիրում է տվյալ լեզվի բառակազմական համակարգը սկզբից մինչև տվյալ փուլը՝ իր պատմական զարգացման մեջ, Համաժամանակյա բառակազմութիւնն ուսումնասիրում է տվյալ լեզվի պատմութիւնն տվյալ փուլի բառակազմական համակարգը: Համապատասխանորեն հայերենի բառակազմութիւնն էլ, իբրև հայերենի բառակազմական համակարգի ուսումնասիրութիւն, կարող է հետազոտել հայերենի այդ համակարգն իր պատմական զարգացման մեջ՝ սկսելով հինհայերենյան շրջանից և հասցնելով մեր ժամանակին, կարող է ուսումնասիրել հայերենի առանձին շրջանների բառակազմական համակարգի պատմութիւնը, և, վերջապես, կարող է ուսումնասիրել միայն որևէ շրջանի (գրաբարի, միջին հայերենի, ժամանակակից հայերենի) բառակազմական համակարգը համաժամանակյա ժոտեցմամբ: Այս դեպքում բառակազմական համակարգը նրկարգովում ու քննութիւնն է առնվում ինքն իր մեջ, իբրև կայուն համակարգ, անկախ նրա մեջ տեղի ունեցած և տեղի ունեցող փոփոխութիւններից: Ժամանակակից հայերենի համաժամանակյա նկարագրութիւնը ներկայացնող այս աշխատութիւնն մեջ, քննականաբար, ուսումնասիրվում է ժամանակակից հայերենի բառակազմական համակարգը՝ համաժամանակյա մոտեցումով:

բ. Անույթներ

Բառերը կարելի է վերլուծել, բաղադրիչների բաժանել. օրինակ՝ հյուրասիրութիւններից բառը կարող ենք բաժանել հյուր-ա-սիր-ուրջուն-ներ-ից, բունստեղծութիւն-ը՝ բուն-ստեղծ-ութիւն, գրադարանավարական-ը՝ գր-ա-դարան-ա-վար-ական, վերադասավորում (է)-ն՝ վեր-ա-դաս-ա-վոր-ում- (է), հեռագրաստիւն-ը՝ հեռ-ա-գր-ա-ստիւն, արտասանել-ը՝ արտ-աս-ան-ել, հեռուսկանորեն-ը՝ հեռու-սկան-որեն բաղադրիչների: Բառերի վերլուծումը բաղադրիչների պարզում է բառերի կազմը, ցույց տալիս, թե ինչ միավորներից են կազմված բառերը և նրանց տվյալ ձևերը: Եթե այդ բաղադրիչները վերցնենք առանձին-առանձին, անկախ տվյալ բառերից, օրինակ՝ բան, ստեղծ, դարան, ավար, ուրջուն և

այլն, կտեսնենք, որ դրանք բոլորն էլ որոշ իմաստ ունեն, իսկ այդ բաղադրիչներից որևէ հնչյուն հեռացնելու դեպքում դրանք կամ բուրբոնի կզրկվեն իմաստից, կամ էլ մի ուրիշ իմաստ կտեսնան: Այսպես՝ ստեղծ բաղադրիչից ս հնչյունը հեռացնելու դեպքում կստանանք տեղծ, որ ոչ մի իմաստ չունի, դարան բաղադրիչից հեռացնելով ն-ն՝ կստանանք դարա, որ դարձյալ իմաստից զուրկ է, իսկ քան բառից ք հնչյունը հեռացնելով կստանանք ան, որ այլևս չի արտահայտում բան բաղադրիչի իմաստը, թեև այդ ձևով ունենք ան-ժխտական ածանցը: Նշանակում է, բառը բաղադրիչների բաժանելով մենք ոչ միայն պարզում ենք բառի կազմը, այլև ստանում ենք այնպիսի միավորներ, որոնք այլևս կազմութիւնով վերլուծելի, բաժանելի չեն և տվյալ հնչյունակազմով ու տվյալ իմաստով լեզվական անբաժանելի միավորներ են, ձևի և իմաստի անխախտելի միասնութիւն կազմող նվազագույն միավորներ: Այդ միավորները մեկական հնչյուններ են կամ մեկից ավելի հնչյունների կապակցութիւններ, որոնք արտահայտում են որոշ իմաստ. դրանք նվազագույն իմաստակիր միավորներ են և ավելի փոքր մասերի կամ բաղադրիչների չենք կարող բաժանել՝ առանց դրանց իմաստները խախտելու:

Այս և իմաստի միասնութիւն կազմող նվազագույն լեզվական միավորները կոչվում են ձևույթներ. վերը բերված գր (գիր), սիր (սեր), ուրջուն, ներ, ից, բան, վար, ստեղծ, սյուն, դաս, ում և այլ բաղադրիչները ձևույթներ են:

Ուշագրութիւնով այդ ձևույթները՝ հեշտութիւնով կարող ենք նկատել, որ դրանցից մի քանիսը ինքնուրույն բառեր են, ինչպես՝ բան, դաս, սյուն, մի քանիսը՝ նոր իմաստով բառեր կազմող միավորներ, ինչպես՝ վեր-, -ավար, -ական և այլն, իսկ մի քանիսն էլ՝ բառի այս կամ այն բերականական ձևը կազմող միավորներ, ինչպես՝ -ից, -ում, -իր և այլն: Համապատասխանորեն այդ ձևույթների դերն ու իմաստներն էլ տարբեր են. ստեղծ ձևույթն, օրինակ, արտահայտում է բառային շտաբերակված իմաստ, որ ընդհանուր և հիմնական գաղափարն է ստեղծել, ստեղծում, անստեղծ բառերի. արդպես էլ՝ դասավարել, դասային, դասել, ստուգադասել, գերադասել բառերի ընդհանուր և հիմնական գաղափարն է արտահայտում դաս ձևույթը, վազմ, վազել, վազող, վազային բառերինը՝

վագ և այլն: Այն ձևայթներ, որոնք արտահայտում են շտաբերակված բառային իմաստ, կաշվում են հիմնական կամ արմատական ձևայթներ (արմատներ): Փանի որ բառերի իմաստային հիմքն են կազմում շտաբերակված բառային իմաստները, իսկ այդպիսի իմաստներ արտահայտում են հիմնական ձևայթները, ապա ինքնին հասկանալի է, որ բառեր չեն կարող չինել առանց հիմնական ձևայթների: Մա նշանակում է, թե արմատը (արմատական կամ հիմնական ձևայթը) բառի անհրաժեշտ բաղադրիչն է կամ հենց ինքը՝ բառը: Բառերը կազմվում են արմատներից, կամ էլ արմատները (արմատական կամ հիմնական ձևայթները) ինքնին գործածվում են որպես բառ՝ տարբերակված բառային իմաստով: Այսպես՝ վագել, վագորդ, վագր, վագրային բառերը կազմված են վագ-արմատից, հեռակալ, հեռու, հեռվություն, հեռացում բառերը հեռ- արմատից և ալն, իսկ ծառ, պատ, լույս, մարդ բառերը հենց արմատներ են, այսինքն՝ հիմնական կամ արմատական ձևայթներ: Միայն հիմնական (արմատական) ձևայթներից բաղկացած բառեր կաշվում են արմատական բառեր:

Մյուս ձևայթները (օր. -ություն, -որդ, -ական, -ել և այլն), ի տարբերություն արմատների, չեն կարող բառերի հիմքը դառնալ, քանի որ շտաբերակված ընդհանուր բառային իմաստ չեն արտահայտում: Այսպես, օրինակ, -որդ (վար-որդ, վազ-որդ, հեծանվ-որդ և այլն) ձևայթից չենք կարող կազմել, ասենք, որդություն, որդական, -արար-ից (հրոսարար, ազնրվարար, քաչարար և այլն) չենք կարող կազմել, ասենք, արարություն, արարել և այլն: Այդ ձևայթները արտահայտում են ոչ թե բառային շտաբերակված իմաստներ, այլ քերականական իմաստներ, այսինքն՝ բառային շտաբերակված իմաստները վերածվում են տարբերակված իմաստների (ինչպես՝ վազ-թ, վազ-ել, վազ-որդ և այլն), բառերի արդեն տարբերակված իմաստներին այս կամ այն նոր տարբերակումն են տալիս (ինչպես՝ բույս—բուսական, լույս—լուսավոր, վազք—վազքային, հումք—հումքային և այլն) և կամ էլ, վերջապես, բառերի քերականական հարաբերություններն են ցույց տալիս, առանց նրանց բառային իմաստը փոխելու (ինչպես՝ բույս—բույս-ի, բույս-ով, գրել—գր-ում եմ, գր-ե-ց-ի, գր-իր և այլն): Այն բոլոր ձևայթները, որոնք արտահայտում են հե-

տականական իմաստներ, կաշվում են երկրորդական ձևայթներ կամ մասնիկներ: Բերված օրինակներում -ի, -ել, -որդ, -ական, -ավոր, -այլն, -ի, -ով, -ում, -ե, -ց, -ի, -իր ձևայթները երկրորդական ձևայթներ (մասնիկներ) են:

Երկրորդական ձևայթները իրենց հերթին բաժանվում են երկու կարգի, Կան երկրորդական ձևայթներ, որոնք տարբերակում են ու կոնկրետացնում հիմնական ձևայթների իմաստները՝ կազմելով բառ, կամ էլ արդեն ունեցած արմատական կամ ոչ արմատական բառից կազմում են մի նոր բառ՝ իմաստային նոր տարբերակումով: Այսպես՝ հեռ-ու, հեռ-ավոր, հեռ-ան-ալ բառերը կազմվել են հեռ- հիմնական ձևայթից (արմատից)՝ -ու, -ավոր, -ան-ալ երկրորդական ձևայթներով: հեռ- հիմնական ձևայթն իբրև արմատական բառ չի գործածվում, ուրմն և ունի ոչ թե բառային տարբերակված իմաստ, այլ՝ շտաբերակված ընդհանուր գաղափար. -ու, -ավոր, -ան-ալ մասնիկները տարբերակում են այդ ընդհանուր գաղափարը՝ վերածելով բառային տարբերակված իմաստի, և կազմում այս կամ այն իմաստն ունեցող բառերը (հեռու, հեռավոր, հեռակալ): Այդպես են նաև ընթերց-արան, վագ-ի, խոս-ի, ան-ստեղծ բառերի -արան, -ի, ան- երկրորդական ձևայթները, որոնք միանալով ընթերց-, խոս-, ստեղծ- ձևայթներին (արմատներին), տարբերակում են դրանց արտահայտած ընդհանուր գաղափարները, վերածում բառային տարբերակված իմաստների և դրանով իսկ կազմում բառեր: Այլ իրողություն են ներկայացնում հուլ-ի, երգ-իչ, ընկեր-ություն, բան-ավոր, ան-երես, դժ-գույն և նման բազմաթիվ բառերն իրենց -ի, -իչ, -ություն, -ավոր, ան-, դժ- երկրորդական ձևայթներով: Այդ բառերի հում, երգ, ընկեր, բան, երես, գույն բաղադրիչները հիմնական ձևայթներ են, որոնք գործածվում են որպես ինքնուրույն բառեր: դրանք արմատական բառեր են և ունեն իրենց բառային տարբերակված իմաստը, ուստի և նրանց ավելացած երկրորդական ձևայթները (-թ, -իչ, -ություն, -ավոր և այլն) ոչ թե տարբերակում են հիմնական ձևայթի ընդհանուր գաղափարը, այլ նոր տարբերակման են ենթարկում հում, երգ, ընկեր, բան, երես, գույն բառերի տարբերակված իմաստները՝ արդեն ունեցած բառերից նոր իմաստով բառեր կազմելով: Այսպիսով, հիշված բոլոր երկրորդական ձևայթներին կարելի

է վերագրել մեկ ընդհանուր դեր, այն է՝ բառեր կազմելը, անկախ այն բանից, թե նոր բառեր են կազմում արմատական բառերից, թե իբրև ինքնուրույն բառ շարժածովոյ արմատներից (Հիմնական ձևույթներից)։ Այն բոլոր երկրորդական ձևույթները, որոնք ծառայում են բառեր կազմելուն, կոչվում են բառակազմական երկրորդական ձևույթներ կամ ածանցներ։ Բառակազմական երկրորդական ձևույթների (ածանցների) արտահայտած քերականական իմաստը կոչվում է ածանցական իմաստ։

Երկրորդական ձևույթների մյուս մասը ոչ թե բառեր է կազմում, այլ՝ բառերի քերականական ձևեր. օրինակ՝ սեղան-ի, սեղան-ից, սեղան-ներ-ի ձևերի մեջ մենք ունենք մի կողմից սեղան բառը, մյուս կողմից՝ -ի, -ից, -ներ երկրորդական ձևույթները, որոնք նոր բառեր չեն կազմում, այլ՝ սեղան բառի հոլովական ձևերը՝ եզակի կամ հոգնակի թվով։ Այն բոլոր երկրորդական ձևույթները, որոնք կազմում են բառերի ֆեռաֆոնետիկ ձևեր, կոչվում են բառաֆորմերական ձևույթներ կամ թեֆույթներ։ Բառահարաբերական երկրորդական ձևույթների (թեֆույթների) իմաստը կոչվում է վերաբերական իմաստ, որովհետև այդ ձևույթները ոչ թե նոր իմաստային տարրեր կան են տալիս բառային իմաստին, այլ արտահայտում են բառերի քերականական հարաբերությունները՝ առանց բառի իմաստը փոխելու։ Այսպես, օրինակ, սեղան-ի, սեղան-ից, սեղան-ներ ձևերի մեջ -ի, -ից, -ներ ձևույթները չեն փոխում սեղան բառի իմաստը, այլ արտահայտում են սեռական-տրական, բացառական հոլովների և հոգնակի թվի վերաբերական իմաստները։

Չնայած ձևույթների այս բաժանումներին (հիմնական ձևույթներ և երկրորդական ձևույթներ, բառակազմական երկրորդական ձևույթներ և բառահարաբերական երկրորդական ձևույթներ), չեզոքների մեջ շատ ձևույթներ կան, որոնք երկակի բնույթ ունեն։ Այսպես, օրինակ, բայերի անորոշ դերբայը կազմող -ել ձևույթը կարելի է դիտել և՛ իբրև բառակազմական երկրորդական ձևույթ, և՛ իբրև բառահարաբերական երկրորդական ձևույթ, և դա տարրինակ չէ։ Այդ երկդիմությունը հետևանք է այն բանի, որ այդ երկրորդական ձևույթը, բառ կազմելու հետ միաժամանակ, կազմում է նաև բայի քերական-

նական ձև՝ անորոշ դերբայ, Եթե այդ ձևույթը քննութան առնենք բառակազմական համակարգի մեջ և դիտենք իբրև բառակազմական միավոր, ապա կրնորոշենք որպես բառակազմական երկրորդական ձևույթ, այսինքն՝ ածանց, իսկ եթե քննութան առնենք բայի խոնարհման համակարգում, դերբայների հարացույցի մեջ՝ ձևարանական մտացումով և դիտենք իբրև ձևարանական միավոր, ապա կրնութագրենք որպես բառահարաբերական երկրորդական ձևույթ, այսինքն՝ թեֆույթ, Նույնպիսի երկդիմություն կարող է լինել նաև ածանցների (բառակազմական երկրորդական ձևույթների) և արմատների (հիմնական ձևույթների) կամ նույնիսկ՝ ածանցների և բառերի միջև։ Այսպես, օրինակ, համարեն (հմմտ. Այգն համարեն կծփար, Մ. Մեծարենց), համայն, համույթ բառերի մեջ համ- ձևույթը արմատ է, իսկ համընդհանուր, համամիտքենական, համաճաղափացի և այլ բառերի մեջ նույն համ ձևույթը ածանց է. — նախ ինքնուրույն բառ է (հմմտ. նախ մտածի՛ր, հետո՛ խոսի՛ր), հետևաբար և՛ հիմնական ձևույթ (հմմտ. նաև նախապես, նախօր, նախել, նախավոր և այլն), բայց նախագուշակել, նախադասել, նախօրյակ և նման բառերի մեջ ածանց է. — գործ արմատական բառ է, բայց այլուվիճագործ, ավտոդողագործ, պահածոյագործ, էլեկտրականագործ և նման բառերի մեջ նա նշանակում է սովյալ գրադմունքով գրադվող, արտադրության սովյալ բնագավառի աշխատող, այսինքն՝ ստացել է ածանցական իմաստ և դրան համապատասխան էլ կարող է դիտվել որպես բառակազմական երկրորդական ձևույթ, այսինքն՝ ածանց. — ստոր արմատական բառ է, իբրև այդպիսին՝ հիմնական ձևույթ (հմմտ. նաև ստարին, ստուն և այլն), բայց ստորագրել, ստորադասել, ստորակարգել, ստորադրյալ և նման բառերի մեջ նա հանդես է գալիս որպես ածանց՝ ամի բանի տակ, մի բանից ցած ածանցական իմաստով և, հետևաբար, ածանց է. — մեջ ինքնուրույն բառ է՝ ամիջուկ, միջնամաս, ներքը, ներքին տարածությունն իմաստով (հմմտ. ընկույզի մեջ, ձմերուկի մեջ և այլն), բայց նա գործածվում է նաև որպես կապ և կազմում է գոյականների ներդրական հոլով (հմմտ. մարդու մեջ, Սուրենի մեջ, իմ մեջ և այլն) և իբրև այդպիսին նա արտահայտում է վերաբերական իմաստ՝ հանդես գալով իբրև բառահար-

յութերական երկրորդական ձևույթ: Այս բոլոր օրինակները ցույց են տալիս, որ ինչպես լեզվի բոլոր միավորներն, առհասարակ, այնպես էլ, մասնավորապես, ձևույթները բնութագրվում են բազմիմաստությամբ ու բազմարևույթ գործառություններով (ֆունկցիաներով): Տվյալ ձևույթը (արմատ, արմատական բառ, ածանց և այլն) կարող է խոսքի մեջ, ինչպես և բառակազմական ու ձևաբանական համակարգում, բացի իրեն հատուկ հիմնական գործածությունից, հանդես գալ նաև մի այլ, երկրորդային գործածությամբ և համապատասխանորեն ստանալ այդ երկրորդային գործածությանը հատուկ իմաստը, որով և նա կվերածվի այլ կարգի ձևույթի. հիշենք վերի օրինակներից սառը և զարծ բառերը, որոնք տարբերակված բառային իմաստով արմատական բառեր են, ուստի և՛ հիմնական ձևույթներ, բայց միևնույն ժամանակ գործածվում են նաև որպես բառակազմական երկրորդական ձևույթներ՝ ածանցական իմաստներով: Քանի դեռ այդ բառերի և նրանց բառային իմաստների ու ածանցական իմաստների միջև խզվում չի առաջացել, և հեշտությամբ բացահայտվում է գրանց միասնությունը, ապա այդպիսի ձևույթները կարելի է դիտել որպես բազմագործառույթ (բազմաֆունկցիոնալ) ու բազմիմաստ ձևույթներ՝ մեկ գործառութով ու իմաստով հատկացնելով ձևույթների մի կարգին (տվյալ դեպքում՝ հիմնական ձևույթների կարգին), մյուս գործառութային ու իմաստով՝ ձևույթների մի այլ կարգի (տվյալ դեպքում՝ բառակազմական երկրորդական ձևույթների կարգին): Այն դեպքերում, երբ զարգացման պատմական ընթացքում խախտվում է իմաստային միասնությունը և մթափնվում բառային իմաստի կամ քննահանուր գաղափարի և ածանցական իմաստի կապը, նախնական միևնույն բազմագործառույթ ու բազմիմաստ ձևույթը վերածվում է երկու կամ ավելի ինքնուրույն ձևույթների, մեկը՝ որպես հիմնական, մյուսը՝ որպես երկրորդական ձևույթ: Այդպիսիք են, օրինակ, տառ-տարբեր, այլ, ուրիշ բառակազմական երկրորդական ձևույթը (հմմտ. տար-ածել, տար-ամերժ, տար-ա-գիր, տար-ա-սեռ, տար-ա-տեսակ և այլն) և տառ-տանող հիմնական ձևույթը (հմմտ. բեռն-ա-տար, ապրանք-ա-տար, աշխատ-ա-տար, հոսան-ա-տար և այլն), որոնք թեև ծագումով նույնական են, բայց ժամանակակից

լեզվում միմյանցից անկախ ձևույթներ են: Այդպիսի դեպքերում ծագումնաբանորեն նույնական ձևույթները դառնում են համանուն ձևույթներ:

գ. Բառերի ձևաբանական, ձևաբանական և բառակազմական վերլուծություն

Վերակազմավորվեցին բառը կարելի է վերլուծել ըստ բաղադրիչների և ստանալ հետևյալ ձևույթները՝ վեր-ա-կազմավոր-վ-ե-ց-ի-ն. ստացված ձևույթներն էլ կարող ենք խմբավորել ըստ տեսակների (հիմնական, երկրորդական, բառակազմական երկրորդական, բառահարաբերական երկրորդական) և, վերջապես, բնութագրել դրանցից յուրաքանչյուրն ըստ իր իմաստի ու գործառութի (ֆունկցիայի): Այսպես, սկսելով առաջին բաղադրիչից՝ վեր-, կրնութագրենք այն իբրև բառակազմական երկրորդական ձևույթ՝ անորից, կրկին, վերստին ածանցական իմաստով, որի ճշտությանը կարող ենք համոզվել վեր-ստանալ, վեր-ա-միավորվել, վեր-ընթեցել և այլ բառերի նույնիմաստ վեր բաղադրիչի հետ համեմատելով.— կազմ- կրնութագրենք իբրև հիմնական ձևույթ, որ գործածվում է իբրև արմատական բառ (հմմտ. աշխատողների կազմ, հրամանատարական կազմ և այլն), -ավոր՝ որպես բառակազմական երկրորդական ձևույթ (հմմտ. թև-ավոր, անվ-ավոր, հրացան-ավոր և այլն), -վ-ն՝ իբրև բառակազմական և բառահարաբերական երկրորդական ձևույթ, -ե-, -ց-, -ին ձևույթները՝ որպես բառահարաբերական երկրորդական ձևույթներ, ըստ որում՝ -ե-ն՝ իբրև հիմքակազմիչ ձևույթ, -ց-ն՝ իբրև անցյալի հիմքի վերջավորություն, -ին-ը՝ իբրև դիմային (երրորդ դեմքի), թվային (հոգնակի թվի) և ժամանակային (անցյալ ժամանակի) վերջավորություն: Այս վերլուծությամբ մենք մի կողմից պարզեցինք վերակազմավորվեցին բառածեղի ձևույթաբանական կազմը, առանձնացնելով բոլոր ձևույթները, մյուս կողմից՝ բնութագրեցինք ձևույթներից յուրաքանչյուրն իր դերով ու իմաստով, ըստ որում մենք վերլուծությունը կատարեցինք անկախ քերականական ու բառակազմական համակարգերից, տվյալ բառածեղ վերցնելով ինքնին, անկախ կերպով: Իհարկե, մեք վերլուծությունը, այսպես թե այնպես,

կարելի է համարել և՛ ձևաբանական, և՛ բառակազմական համակարգերի հիմքի վրա կատարված վերլուծություն, բանի որ դա հիմնված է մեր արդեն ունեցած լեզվական գիտելիքների վրա: Սակայն այժմ դա էական նշանակություն չունի. մենք կարող ենք նույնպիսի վերլուծություն կատարել նաև այդպիսի գիտելիքներ չունենալու դեպքում էլ՝ համեմատության մեջ առնելով մեր լեզվի զանազան բառեր ու բառաձևեր: Այսպես, վերականգնավորվեցին բառաձևը կհամեմատենք մի կողմից վերականգնավորվեց (օր. զորամասը վերականգնավորվեց), մյուս կողմից՝ գրվեց և գրվեցին, զգույացվեց և զգույացվեցին և այլ բառերի համապատասխան ձևերի հետ, որով և կրթալրացնեք, որ առանձին ձևույթներ են վեր-ա-կազմ-ա-վոր-վե-ց-ին: Ինչպես տեսնում ենք, մենք կարող ենք տրված բառաձևի կամ, ավելի վերացական և ընդհանուր մտածեցածով՝ հնչյունների տվյալ հաջորդականության մեջ առանձնացնել բոլոր ձևույթները, առանց դիմելու ձևաբանական ու բառակազմական հարացույցներին, դրանցից անկախ, նույնիսկ մեր նախապես ունեցած գիտելիքներն էլ մի կողմ թողնելով, և համեմատելով մեզ տրված զանազան բառերի ու բառաձևերի հետ, զուգարկելով կամ հակադրելով նրանցից յուրաքանչյուրին: Տվյալ հնչյունական հաջորդականությունների (բառերի, բառաձևերի, բառակապակցությունների, բառաշարքի, նախադասության) վերլուծությունը՝ ձևույթների ուղղման, առանձնացման և գործառական ու իմաստային բնութագրության նրպատակով, կոչվում է ձևույթաբանական վերլուծություն: Այդ կարգի վերլուծության են դիմում այն բոլոր դեպքերում, երբ հետազոտողին անհրաժեշտ է լինում տվյալ հնչյունական հաջորդականության ձևույթային կազմի բացահայտումը: Այդպիսի անհրաժեշտություն ծագում է ինչպես լեզվի ձևույթաբանական մտկարգակի ուսումնասիրության, այնպես էլ շատ արիշ դեպքերում, երբ հարկ է լինում վերծանել անծանոթ լեզվով գրվածքներ կամ ուսումնասիրել մի օրև էլ լեզու, որ չգիտենք:

Նույն վերականգնավորվեցին բառաձևը կարելի է վերլուծել նաև այլ մտածեցածով: Մենք գիտենք, թե այդ բառաձևը ինչ է նշանակում, գիտենք նաև, որ դա բայի անցյալ կատարյալի երրորդ դեմքի հոգնակիի ձևն է, ուստի և մեզ հետա-

բերքում է միայն, թե տրված բայաձևի մեջ ինչ բառահարբերական երկրորդական ձևույթներ կան և դրանցից որը ինչ դեր և իմաստ ունի: Այս դեպքում մենք վերականգնավորվեցին բառաձևը կվերլուծենք վերականգնավոր-վե-ց-ին բաղադրիչներին, որոնցից -ին-ը՝ դիմային, թվային ու ժամանակային վերջավորությունն է, -ց-ն՝ անցյալի հիմքակազմիչ վերջավորությունը, -ե-ն՝ խոնարհման հիմքակազմիչը (խոնարհիչը), -վ-ն՝ կրավորական սեռի մասնիկը և ամբողջ վերականգնավոր-բաղադրիչը՝ բայահիմքը: Ինչպես տեսնում ենք, այս վերլուծությամբ մենք առանձնացնում ու որոշում ենք տրված բառաձևի միայն ձևաբանական միավորները (բայահիմք, խոնարհիչ, անցյալի հիմքակազմիչ և այլն), առանց ուշադրություն դարձնելու բառի կազմում եղած այլ կարգի ձևույթների վրա, ինչպես և՛ հաշվի չառնելով, թե վերականգնավոր-բաղադրիչը արմատական բա՞ն է, թե ոչ: Բառերի վերլուծությունը՝ ձևաբանական միավորների բացահայտման նպատակով, կոչվում է ձևաբանական վերլուծություն: Այդ կարգի վերլուծության են դիմում ձևաբանական համակարգի ուսումնասիրության մեջ, երբ անհրաժեշտ է լինում պարզել, թե տվյալ հնչյունական հաջորդականությունն ի՞նչ քերականական ձև է (բայի եղանակային ձև, դերբայ, գոյականի հոլովական ձև և այլն), և բացահայտել ու բնութագրել տվյալ բառաձևը բաղադրող բոլոր ձևաբանական միավորները:

Վերջապես, նույն վերականգնավորվեցին բառաձևը կարող ենք վերլուծել նաև երրորդ՝ բառակազմական տեսանկյունով: Որքան համար մենք մի կողմ կթողնենք բոլոր այն թեքությունները, որոնք առանձնացրել ենք ձևաբանական վերլուծության ժամանակ, հեշտության համար կվերցնենք բայաձևի անորոշ դերբայը՝ վերականգնավորվել, և կառանձնացնենք միայն այն ձևույթները, որոնք բառակազմական դեր ունեն: Այդպիսի վերլուծությամբ մենք կստանանք վեր-ա-կազմ-ա-վոր-վել ձևույթները և ապա՝ կբնութագրենք դրանցից յուրաքանչյուրն իր դերով ու իմաստով՝ կատարելով հիմնական և երկրորդական ձևույթների դասակարգում: Այս վերլուծությունը, ինչպես հեշտությամբ կարելի է տեսնել, նպատակ ունի պարզելու բառի կազմությունը և բացահայտելու տրված հնչյունական հաջորդականության բառակազմական միավորները: Մեր վերց-

րած վեր-ա-կազմ-ա-վոր-վ-ել քառուս ունենք կազմ հիմնական ձևույթը կամ արմատը, և վեր-, -վոր-, -վ-, -ել երկրորդական բառակազմական ձևույթները, ա հոդակապը: Հնչունական հաշտողականությունների վերլուծությունը՝ քառի կազմությունը որոշելու և բառակազմական միավորները բացահայտելու ու բնութագրելու նպատակով, կոչվում է բառակազմական վերլուծություն: Իբրև ընդհանուր կանոն, քառի բառակազմական վերլուծությունն սկսվում է այնտեղից, որտեղ ավարտվում է ձևաբանական վերլուծությունը. օրինակ՝ կազմակերպություններին բառաձևը ձևաբանական վերլուծությամբ բաժանվում է -ն (հոդ), -ի (արական հոլովի վերջավորություն), -ներ (հոգնակերտ վերջավորություն) և կազմակերպություն (հոլովական հիմք) բաղադրիչներին: Բառակազմական վերլուծության դեպքում, մի կողմ թողնելով քառահարաբերական ձևույթները, վերջնում ենք կազմակերպություն բաղադրիչը (հոլովական հիմքը), որ տվյալ դեպքում նույնանում է ուղղական հոլովի և քառի բառաբանային (եկակետային) ձևի հետ, և վերլուծում ըստ բառակազմական միավորների՝ կազմ-ա-կերպ-ություն: Կան դեպքեր էլ, սակայն, երբ ձևաբանական և բառակազմական վերլուծությունները խաչաձևվում են, այսինքն՝ միևնույն ձևույթը հանդես է գալիս որպես և՛ ձևաբանական, և՛ բառակազմական միավոր, ըստ որում, երբման ձևաբանական տարբեր միավորներ կարող են բառակազմական վերլուծության մեջ առնվել որպես մեկ բառակազմական միավոր, և հակառակը: Այսպես, օրինակ, վերակազմավորվել քառի ձևաբանական վերլուծությամբ ունենք վերակազմավոր-վ-ել միավորները, որոնցից վերակազմավոր-ը հիմքն է, -վ-ն՝ կրավորական սեռի ձևույթը, -ել-ն՝ հիմքակազմիչ ձևույթը (խոնարհիչը) և -լ-ն՝ անորոշ գերբայի ձևույթը (անորոշի վերջավորությունը), մինչդեռ բառակազմական վերլուծության ժամանակ կատանանք վեր-ա-կազմ-ա-վոր-վ-ել, որոնցից -վ-ն և -ել-ը կդիտվեն նույնպես իբրև ավանդներ. -ել-ը այս դեպքում չենք առանձնացնի և և լ առանձին ձևույթների, որովհետև դրանք առանձին-առանձին բառակազմական ինքնուրույն գեր և իմաստ չունեն: Ինչպես տեսնում ենք, ձևաբանական և բառակազմական վերլուծությունները տարբեր երկակետներ ու նպատակներ ունեն և դրան հա-

մապատասխան էլ՝ ձևույթների տարբերակման ու բնութագրության տարբեր շահանքներ:

Հիշյալ երեք կարգի վերլուծություններից առաջինը վերաբերում է ձևույթաբանությանը, որի մասին տարրական գիտելիքներ տրվեցին «ձևույթներ» հատվածում, երկրորդը՝ ձևաբանությանը, իսկ երրորդը՝ բառակազմական վերլուծությանը, վերաբերում է բառակազմությանը, որ այս գլխի ուսումնասիրության առարկան է:

դ. Բառերի տեսակներն ըստ կազմության

Նշելով քառերի բառակազմական վերլուծությունից՝ չեզոք թուր քառերը կարող ենք բաժանել երկու կարգի. ա) պարզ քառեր, որոնք բաղկացած են միայն մեկ ձևույթից և բառակազմական ու ձևույթաբանական տեսակետից վերլուծելի չեն, ինչպես՝ պատ, ծառ, տուն, սար, առու, մատ, հուման, պալատ և այլն, բ) բաղադրյալ քառեր, որոնք իրենց կազմում ունեն մեկից ավելի ձևույթներ և, հետևաբար, բառակազմական վերլուծությամբ կարող են վերածվել մեկից ավելի բաղադրիչների, ինչպես՝ կազմ-ա-կերպ-ություն, մանկ-ա-վարժ-ական, ռուս-աղ-ություն, հեռու-ական-որեն և այլն:

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, պարզ քառերը մենաձևույթ, արմատական բառեր են, իսկ բաղադրյալ քառերը՝ մեկից ավելի ձևույթների բաղադրություններ, ըստ որում բաղադրությունը կազմող ձևույթներից մեկը պարտադիր կերպով պետք է լինի հիմնական ձևույթ, քանի որ առանց հիմնական ձևույթի ոչ միայն բաղադրյալ, այլև առհասարակ քառ չի կարող լինել: Ինչ վերաբերում է բաղադրությունը կազմող մյուս ձևույթներին, ապա նրանք կարող են լինել և՛ հիմնական, և՛ երկրորդական ձևույթներ: Այսպես, օրինակ, գրասենյակն բաղադրությունը բաղկացած է երկու ձևույթից, երկուսն էլ՝ հիմնական, իսկ գրական բաղադրությունը՝ մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևույթից, գրադարանավար քառը՝ երեք հիմնական ձևույթից, իսկ արտադրողականություն՝ մեկ հիմնական և չորս երկրորդական ձևույթից, անբույլատեղիորեն քառը՝ երկու հիմնական և հինգ երկրորդական ձևույթից և այլն:

Մանրություն: Ժամանակակից հայերենի պարզ և բա-

զազրյալ բառերի տարրերակուսը հիմնվում է համաժամանակյա մոտեցման վրա. եթե տվյալ բառը ժամանակակից հայերենի ձևույթաբանական ու բառակազմական վերլուծությամբ կարող է բաղադրիչների բաժանվել, ապա բաղադրյալ բառ է, իսկ եթե ժամանակակից հայերենի ձևույթաբանական համակարգը հնարավորություն չի տալիս բաղադրիչների բաժանել, ապա՝ պարզ բառ է: Օրինակ՝ գիրք, փարային, անվակ բառերը ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների ու ձևույթային համակարգի տվյալների հիման վրա կարող ենք վերլուծել գիրք-է, փար-ային, անվ-(անկվ)-ակ բաղադրիչներին, որից և կեղզրակացնենք, որ դրանք բաղադրյալ բառեր են, մինչդեռ ընկեր, դուռ, զարմ, արմատ, զատ, արյուն, զարուն բառերը չենք կարող բաժանել բաղադրիչների, քանի որ ժամանակակից հայերենով չենք կարող բացատրել, ասենք, դուռ, զարուն բառերի կազմությունը ունի, զար արմատներից, տրովհետև այդպիսի վերլուծության դեպքում եթե կարող ենք ունի-ը բնութագրել իրյն արմատական բառ, -ուն բաղադրիչը որպես ածանց, ապա այդ բառերի մյուս բաղադրիչները՝ դ-, զար-, ժամանակակից հայերենի համար անբացատրելի կմնային: Իհարկե, լեզվական հարուստ գիտելիքներ ունեցող և մանավանդ, պատմական բառագիտությունը տեղյակ մարդը կարող է խմանալ, որ այդ բառերը կազմվել են ընդ-ունի, զար-ուն, ընդ-կեր, արմ-ատ, զ-արմ, զ-հատ բաղադրիչներից (արմատներից և ածանցներից կամ նախորդներից), թայց հենց այն հանգամանքը, որ այդ բաղադրիչների առանձնացումը և գիտակցումը պահանջում է պատմական տվյալների իմացում և, հետևաբար, պատմական մոտեցում, նշանակում է, թե համաժամանակյա մոտեցումով դրանք բաղադրյալ բառեր համարելու բավարար հիմքեր չկան: Ուստի և՛ ընկեր, դուռ, զարմ, արմատ, զարուն, արյուն, զատ և նրանց ման բազմաթիվ բառեր ժամանակակից հայերենի համար պարզ, միաձևույթ բառեր են, թեև հայոց լեզվի պատմության անցյալ փուլերում բաղադրյալ բառեր են եղել:

Ժամանակակից հայերենի բաղադրությունները բազմազան են թե՛ իրենց կազմության եղանակներով ու միջոցներով, թե՛ իրենց կառուցվածքով: Հիմնվելով ամենաընդհանուր բառակազմական հատկանիշների վրա՝ ժամանակակից հայերենի

բոլոր բաղադրությունները կարելի է քաժանել երեք տիպի՝ վերլուծական, համադրական և հասլավական:

Ե. վերլուծական բաղադրություններ

վերլուծական են այն բաղադրությունները, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց բառային ինքնուրույնությունը, այսինքն՝ արտասանվում ու գրվում են որպես առանձին բառեր և մեծ մասամբ ստանում են անկախ բառային շեշտ, թեև ամբողջությամբ արտահայտում են մեկ բառային իմաստ, ինչպես՝ բարև տալ, շուտ գալ, պար գալ, ցրվ տալ, մեջ բերել, առաջ փաշել, կարգին-սարքին, մեծ-մեծ, փուռ-փուռ, մեծ մասամբ (կամ մեծավ մասամբ), քե ու թիկունք, աուն առ աուն, մերք ընդ մերք և այլն: Այդ բաղադրությունների մեջ ունենք տարբեր եղանակներով կազմված բաղադրյալ բառեր, որոնք բազկացած են երկուական կամ երեքական բաղադրիչներից, ըստ որում այդ բաղադրիչներն իրար չեն միացել, պահպանել են իրենց բառային ինքնուրույնությունը: Այս կարգի բարդությունների ամենաէական հատկանիշն է այն, որ բաղադրության բոլոր բաղադրիչներն էլ բառեր են, անկախ այն բանից, թե այդ բառերը պարզ են, թե բաղադրյալ, բառային տարբերակված իմաստով բառեր են (լիմաստ բառեր), թե ձևական բառեր (կապ, շաղկապ և այլն): Այսպես, առաջ փաշել վերլուծական բաղադրությունը կազմված է երկու բառից՝ առաջ, փաշել, որոնցից երկրորդը բաղադրյալ բառ է, կարգին-սարքին բաղադրության երկու բաղադրիչներն էլ բաղադրյալ են (կարգ-ին, սար-ք-ին), քե ու թիկունք բաղադրությունն ունի երեք բաղադրիչ՝ քե, ու, թիկունք, որոնցից երկրորդը ու շաղկապն է, երրորդը՝ բաղադրյալ բառ (թիկունք) և այլն:

Ժամանակակից հայերենի վերլուծական բաղադրությունները շորտ տեսակ են՝ հարադրական, կրկնալուծ, կայուն բառակապակցություններ և հատվածական բաղադրություններ:

1. Հարադրական բաղադրություններ կամ հարադրություններ.— Հարադրական են այն վերլուծական բաղադրությունները, որոնք ներկայացնում են բառերի կապակցություն՝ մեկ բառային իմաստով, ինչպես՝ առաջ գալ, փրտ անել, բարև տալ, լաց լինել, սոճակոյա անել, մեկ առ մեկ, մերք ընդ մերք, աուն ու տեղ, ծեր ու մեռել, գիշեր-ցերեկ և այլն:

Հարադրությունները լինում են բայական և անվանական։
Ա) Բայական հարադրությունները.— Բայական են այն հարադրությունները, որոնք, ամբողջությամբ վերցրած, բախմաստ են արտահայտում, ինչպես՝ առաջ գալ, բարե տալ, լաց լինել, ոտնատակ տալ, պար գալ, մաք ածել, ասել-խոսել, հագնել-կապել, աղաչել-պաղատել և այլն։ Բայական հարադրություններն ըստ իրենց բառակազմական, իմաստարանական և քերականական հատկանիշների բաժանվում են երկու կարգի՝ նառադրավոր բայեր և զուգորդական բայեր։

Հառադրավոր բայեր են այն բայական հարադրությունները, որոնց մեկ բաղադրիչն է միայն բայ, իսկ մյուսը անուն է կամ մակբայ, ինչպես՝ առաջ գալ, դուրս գալ, բարե տալ, պար ածել, ոտնատակ տալ, քառ ու փուշ անել, վայր ընկնել, աճց կենալ, լաց լինել, թափ տալ, առյուծ կտրել, կրակ տալ, ձեռքից գնալ և այլն։ Այս կարգի հարադրությունները, անկախ բաղադրող բառերի քանակից, ունեն երկու անգամ՝ հարադիր և հարադրյալ։ Հարադիրը, որ կարող է լինել գոյական, ածական, դերանուն, մակբայ, կապական քառ, հարադրավոր բայերի մեծագույն մասում արտահայտում է հարադրության բառային իմաստը, իսկ հարադրյալը, որ բայական անգամն է, արտահայտում է բայի քերականական կարգերը (սեռ, դերբայական (կերպային կամ վիճակային) իմաստ, խոնարհված ձևերում՝ եղանակ, ժամանակ, դեմք, թիվ)։ Այսպես, օրինակ, պար գալ հարադրավոր բայում ունենք պար գոյականը, որ արտահայտում է ամբողջ հարադրության բառային իմաստը, և գալ հարադրյալը, որ արտահայտում է բայական քերականական կարգերը։ Ըստ այսմ, հարադրավոր բայերի մեջ հարադրյալ բայն իր դերով նույնանում է բայական վերջավորությունների հետ և արտահայտում է դրանց քերականական իմաստները (հմմտ. պար գալ=պարել, առաջ գալ=առաջանալ, կրակ տալ=կրակել, հրդեհել, առյուծ կտրել=առյուծանալ, լաց լինել=լացել, բաց անել=բացել և այլն), այլ կերպ ասած, այդ կարգի հարադրությունների մեջ հարադրյալը զրկվում է իր բառային իմաստից և պահպանում միայն քերականական իմաստները։

Հարադրավոր բայերի մյուս մասում հարադիրները մակ-

բայներ են, որոնց հարադրյալները պահպանում են իրենց բայական իմաստը, բայց այս դեպքում հարադիրը դառնում է հաճելագրություն։ Այսպես, օրինակ, ցած իջնել, ցած ընկնել, վայր ընկնել (վեր ընկնել), վայր գցել (վեր գցել) հարադրավոր բայերի մեջ հարադրյալները արդեն արտահայտում են հարադիրների իմաստը. իջնել, ընկնել, գցել բայերը ցույց են տալիս դեպի ներքև ուղղված գործողություն, և ցած, վայր/վեր, հարադիրները նոր իմաստ չեն տալիս հարադրյալ բայերին, այլ սուսկ զորացնում են դրանց իմաստները։ Այսպես են նաև՝ ես վերադառնալ, վեր (վերև) քառճառնալ, վեր էլնել, ես նահանջել, ես ընկրկել, ներս մտնել, ցած հակվել, ցած խոնարհվել և այլն։ Հարադրավոր բայերի առաջին իմաստը հարադրության բառային իմաստը հարադիրների իմաստն է, և ամբողջ հարադրությունը հավասար է հարադրից կազմված բային, ինչպես՝ առաջ գալ-առաջանալ, պար գալ-պարել, ծափ տալ-ծափահարել, կրակ տալ-կրակել և այլն, մինչդեռ երկրորդ խմբի հարադրություններում բառային իմաստը հարադրյալին է, այսինքն՝ բայինք. ամբողջ հարադրությունը հավասար է հարադրվող բային, ինչպես՝ ցած իջնել = իջնել, վայր (վեր) գցել = գցել, ես վերադառնալ = վերադառնալ, վեր քառճառնալ = քառճառնալ և այլն։ Ելնելով իմաստային այս տարբերությունից, առաջին խմբի հարադրությունները կարելի է կոչել բուն կամ իսկական նառադրավոր բայեր, իսկ երկրորդ խմբի հարադրավոր բայերը՝ հավելադրական նառադրավոր բայեր։

Հարադրավոր բայերն ունեն մեկ բառի արժեք և անխտիր մտնում են բառարանների մեջ։

Զուգորդական են երկու (սակավ դեպքերում երեք) բայերի կապակցություն ներկայացնող բայական հարադրությունները, ինչպես՝ առնել-փախչել, ասել-խոսել, մեռնել-պրծնել, հագնել-կապել, գալ-հասնել, գնալ-հեռանալ, գալ-մտնել, ոտնել-խմել, գալ-անցնել-գնալ, աղաչել-պաղատել, քոչնել-թառամել, պառկել-հենել, անել-զորանալ, քոչել-անցնել, էլել-տանել և այլն։ Զուգորդական բայական հարադրությունները կազմվում են հոմանիշ կամ մերձանիշ (մերձիմաստ) բայերի հարակցությամբ կամ էլ՝ սովորաբար միմյանց զուգորդող կամ հաջորդող գործողություններ ցույց տվող բայերից։ Այսպես,

աղաչել-պաղատել, բողոքել-թառամել հարադրությունները կազմված են հոմանիշ բայերից, ասել-խոսել, գալ-հասնել, գնալ-հեռանալ, անել-գորանալ հարադրությունները՝ մերժիմաստ բայերից, ստել-խմել, հագնել-կապել՝ միմյանց գույքորդ գործողությունների ցույց սովոր բայերից, էջել-տանել, պառկել-բնել, առնել-փախչել, վերցնել-զնալ՝ հաշորդական գործողություններ ցույց սովոր բայերից: Զուգորդական բայական հարադրությունների էական բնութագիրն այն է, որ դրանք ցույց են տալիս միմյանց հետ զուգորդվող գործողությունների միասնություն, այսինքն՝ երկու (երեք) գործողություններ գիտվում են իրրև մեկ միասնական պրոցես, Այսպես, օրինակ, Հեղեղը էջեց, տարավ (կամ էջեց և տարավ) արմատախիլ ծառերը նախադասության մեջ էջեց և տարավ բայերը անգամովել են միմյանցից, յուրաքանչյուրը ցույց է տալիս մյուսից անկախ գործողություն, թեև դրանք հաջորդել են իրար, մինչդեռ Հեղեղը էջեց-տարավ արմատախիլ ծառերը նախադասության մեջ երկու բայերը զուգորդվել, միավորվել են իրար հետ և ցույց են տալիս երկու գործողությունների միասնությունը, նրանց միաժամանակությունը: Սրանով է պայմանավորված այն, որ զուգորդական բայական հարադրությունների երկու անդամներն էլ հավասարապես խոնարհվելով՝ ունենում են ժամանակային համաձայնություն, ինչպես՝ տուավ-փախավ, պառկեց-բնեց, պառկել-բնել է, պառկում-բրնում է և այլն: Այնպիսի ձևերում, ինչպիսիք են առել-փախչում է, պառկել-բնում է, եկել-հասնում է, եկել-հասնելու է, գալիս-հասնում էր և այլն, կա կերպարյին տարբերություն, բայց ոչ ժամանակային, ըստ որում եկել-հասնում է, առել-փախչում է և այլ հարադրություններում ունենք բայաձևի ներկա ժամանակի ցուցիչ (է)՝ կատարյալ (վաղակատար) և շարունակական կերպերով: Սա նշանակում է, թե զուգորդական բայական հարադրությունների անդամները չեն կարող տարբեր ժամանակներով գործածվել, այն դեպքերում, երբ հարադրության անդամները տարբեր ժամանակներով են գործածվում, խախտվում է հարադրությունը, և ստացվում է տարբեր բայերի շարահյուսական կապակցություն (սովորաբար բազմակի ստորոգյալներով միավորյալ նախադասություն): Այսպես, օրինակ, առավ-փախչում է, բազեց-հեռանում է, եկավ-

հասնում է և նման ժամանակային անհամապատասխանությունները առնել-փախչել, բողոքել-հեռանալ, գալ-հասնել հարադրությունները լուծում, խախտում են, վերածելով անկախ բայերի շարահյուսական կապակցության. այդպիսի կապակցությունները չպետք է դիտել որպես զուգորդական հարադրություններ, ուստի և ճիշտ չէ գծիկով միավորվելը, դրանց միջև պետք է ստորակետ դնել: Զուգորդական բայական հարադրությունները՝ առնվելով իրրև բայանուններ, ստանում են հոդեր և հոլովվում, ինչպես բայերի անորոշ դերբայն առհասարակ. թե՛ հոդ ստանալու և թե՛ հոլովվելու դեպքում սովորաբար հոդն ստանում ու հոլովվում է միայն երկրորդ (երրորդ) անդամը, ինչպես՝ գնալ-գալը, ասել-խոսելը, գալ-հասնելու, պառկել-բնելը, բողոքել-հեռանալը, գնալ-գալով, ասել-խոսելուց, պառկել-բնելու և այլն: Զի բացառվում, սակայն, նաև երկու (երեք) անդամների միաժամանակ հոդ ստանալն ու հոլովվելը, ինչպես՝ գալուց-գնալուց, անցնելուց-դառնալուց, անցնելով-դառնալով, պառկելից-բնելից և այլն, թեև, այնուամենայնիվ, այդպիսի գործածությունները սովորական չեն:

Զուգորդական բայական հարադրությունների առաջին բազադրիչը կարելի է փոխարկել նույն բայի անորոշ դերբայի գործիական հոլովածևով և հարադրությունը վերածել լրացական կապակցության, ինչպես՝ առնելով փախչել, մեռնելով պրծնել, բողոքելով թառամել, գալով հասնել, գնալով հեռանալ և այլն: Այդպիսի փոխարկում, սակայն, հնարավոր չէ այն դեպքերում, երբ զուգորդական հարադրությունն ստացել է փոխարկերական իմաստ և ցույց է տալիս մեկ գործողություն, որի բազադրիչներից են զուգորդվող բայերի գործողությունները, ինչպես, օրինակ, եկիլ-բախիլ չի նշանակում ձեռնարկվել, եկիլ և թափել, այլ՝ ժողովին զանազան գործեր անելը, այդպես էլ՝ առել-խոսել նշանակում է «զրուցել», հագնել-կապել՝ «զգեստավորվել», ուտել-ուրանալ՝ «երախտամոռ լինել, կրախտիքը մոռանալ» և այլն: Առաջին կարգի զուգորդական բայական հարադրությունները ազատ հարակցություններ են և խոսքի մեջ ազատորեն կարող են կազմվել ըստ խոսողի (զրոյի) ցանկության կամ ըստ խոսքային իրադրության, եթե զուգորդվող բայերն ունեն վերջ նշված իմաստային հատկանիշները (հո-

մանիշ կամ մերձիմաստ բայեր, առնչակից կամ հաջորդական գործողություններ ցույց տվող բայեր), ինչպես՝ գալ-ծամանել, գալ-նստել, գալ-կանգնել, գալ-պառկել, գալ-վերցնել, քաշել-տանել, քաշել-հանել, քաշել-բերել, քաշել-մտնեցնել, վերցնել-տանել, վերցնել-գնալ, վերցնել-գալ և այլն: Գրանց հակառակ, երկրորդ կարգի զուգորդական բայական հարադրությունները, որոնք չեն կարող փոխարկվել լրացական կապակցությամբ, կայուն հարադրություններ են և ունեն բառային արժեք, այս կարգի հարադրությունները սովորաբար մուծվում են բառարանների մեջ, մինչդեռ փոխարկելի (աղատ) հարադրությունները չեն մուծվում:

Մ. Աքեղյանը, իսկ նրա հետևողությամբ և նրանից հետո՝ նաև ուրիշներ, բայական հարադրություններ են համարում նաև տալ բայով կազմվող վերլուծական պատճառական բայերը: Որպես կառույցներ դրանք, իհարկե, հարադրությամբ կազմված միավորներ են, սակայն պետք է նկատի ունենալ, որ ասել տալ, քերել տալ, խոսել տալ, խոսեցնել տալ, կտրել տալ և նման բաղադրությունները պատճառական բայերի վերլուծական կազմություններ են և ներկայացնում են բայակազմության որոշակի հարացույց: Իրենց թերականական բովանդակությամբ և գործառնությամբ նրանք հիմնականում նույնն են — ցն- պատճառականակերտ ձևությիւն (հմմտ. խոսել տալ = խոսեցնել, ուտել տալ = կերցնել, վազել տալ = վազեցնել և այլն): Անշուշտ տալ բայով կազմվող՝ պատճառականի վերլուծական ձևերը շատ ավելի հարուստ են և՛ բովանդակությամբ, և՛ գործառնությամբ, բայց սա չի կարող ասել տալ, գնալ տալ, քերել տալ և նման կազմությունները բառակազմական իրողություն համարելու հիմք դառնալ: Տալ-ով կազմվող պատճառականի վերլուծական ձևերը ձևաբանական կառույցներ են, ինչպես նաև՝ տեսած լինել, լսած լինել, գնալիս լինել, գնալու լինել քաղաքայու բայական ձևերը (բայի երկրորդական բաղադրյալ ձևերը), կապական կառույցները՝ կապ + կապի խնդիր (սովորելու համար, ուսման համար, հանուն գործի, աշխատանքի մասին) և այլն, և, հետևաբար, քննություն պետք է առնվին ձևաբանության մեջ: Այս տեսակետից միանգամայն ճիշտ են վարվում բառարանագիրները, որոնք բառային միավոր չեն համարում պատճառականի տալ:

ով կազմությունները և դրանք բառարանների մեջ չեն մուծում, թ) Անվանական հարադրություններ. — Անվանական հարադրությունները ներկայացնում են անունների (գոյականների, ածականների, թվականների) հարակցություններ, որոնք բաղադրիչների միասնությամբ արտահայտում են նաև իմաստների միասնություն, ինչպես՝ օր ու գիշեր, լուս ու մութ, ան ու դող, ծեր ու մանուկ, անց ու դարձ, խեղճ ու կրակ, շեմ ու շնորհ, կարգին-սարքին, կանաչ-կարմիր, հիւզվեց, քան-երեսուն, կուրծ-մոլորած, ձյուն-ձմեռ, աշակերտ-աշակերտունի, բանվոր-բանվորունի և այլն:

Նաև բաղադրիչների կապակցության եղանակի անվանական հարադրությունները լինում են շաղկապական, նառակցական և կապակցական:

Շաղկապական են այն անվանական հարադրությունները, որոնց բաղադրիչները կապակցվում են ու (սակավ դեպքերում՝ և) շաղկապով, ինչպես՝ թև ու թիկունք, հայր ու մայր, անց ու դարձ, սար ու ձոր, օր ու գիշեր, մեր և մանուկ (մեր ու մանուկ), տուր և առ, դաշտ և անտառ, աչք ու ունք (նաև՝ աչք-ունք) և այլն:

Նառակցական են այն հարադրությունները, որոնց բաղադրիչները կապակցվում են ուղղակի հարակցությամբ՝ միացման գծիկով, ինչպես՝ գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ, աչք-ունք (կան նաև՝ աչքունք, աչքուտնք), շահել-ջիվան, դուռ-գրկից, ընկեր-ընկերունի, բանվոր-բանվորունի, ընկեր-բարեկամ և այլն:

Հարակցական հարադրություններ պետք է համարել նաև խրճիթ-ընթերցարան, վագոն-նետառան, խաճուր-օրհարան, գրադարան-ընթերցարան, լսարան-կարիներտ կամ կարիներտ-լսարան, կաֆե-նետառան: Այս կարգի հարադրությունները նոր կազմություններ են, ցույց են տալիս տվյալ առարկայի (տեղի, հարմարանքի և այլնի) նշանակումը, օգտագործումը քաջի իր սովորական դիրքից, նաև մի այլ դերով և կարող են փոխարինվել կամ և շաղկապով համադասական կապակցությամբ (գրադարան-ընթերցարան՝ գրադարան և ընթերցարան, խանութ-սրճարան՝ խանութ և սրճարան և այլն), կամ նկա-

¹ Զգուշ եղ չփոթել աչկունք-ի հետ, որ այնպիսով գրաբարտիստի հոգնակին է (աչկի + ունք > աչկունք),

բազմազան եղանակով՝ խանութ, որ նաև սրճարան է, գրադարան, որ նաև բնօրհացարան է, քիվնոց, որ նաև վրան է, վագան, որ ռեստորան է և այլն:

Կապակցական են այն անվանական հարադրությունները, որոնք ներկայացնում են շարահյուսական բառակապակցություն՝ բաղադրիչների համապատասխան քերականական ձևափոխումով, ինչպես՝ ոտից գլուխ, տալից գլխից (դուրս տալ), ոտով-ձեռով (կորչել), բեռով-քարձով, ձեռով-ոտով (անել), շարժով-կարգով և այլն:

Անվանական հարադրությունների բաղադրիչներն իմաստաբանական հարաբերակցությամբ լինում են. առնչակից (սար ու ձոր, դաշտ ու անտառ, անց ու դարձ, թև ու թիկունք, տընով-տեղով, ոտով-ձեռով և այլն), հակառիշ (ծեր ու մանուկ, գիշեր-ցերեկ, շար ու բարձի, վեր ու վայր, տակ ու գլուխ, ամառ-ձմեռ և այլն), հոմանիշ (շահել-չիվան, հալ ու մաշ, ցիր ու ցան, լոխկ-մնջիկ, ախ ու վախ, գողում-գողում, աճ ու սարսափ և այլն): Առնչակից առարկաներ (երևույթներ, հատկանիշներ) ցույց տվող անուններից և հակառիշներից կազմված հարադրություններն արտահայտում են միասնության, ամբողջության, հավաքականության իմաստ (հմմտ. սար ու ձոր, գեղ ու գաղան, գիշեր-ցերեկ, քնկեր-քնկերուհիներ, հայր ու մայր և այլն), հոմանիշ բաղադրիչներից կազմված հարադրությունները՝ իմաստի սաստկացում (հմմտ. ցիր ու ցան, շահել-չիվան, հալ ու մաշ, հեղ ու հանդարտ, լոխկ-մնջիկ, զուգված-զարդարված, կորած-մոլորած և այլն): Իմաստաբանական տեսակետից առանձին խումբ են կազմում թվականների հարակցական հարադրությունները, որոնք արտահայտում են մոտափորության իմաստ, ինչպես՝ հինգ-վեց, տասը-սուն, հիսուն-վարսուն, հարյուր-երկուհարյուր և այլն: Այս կարգի հարադրությունների զուգահեռն են վաղմում թվականների կապակցական հարադրությունները, որոնց առաջին բաղադրիչը դժբախտ է բացառական հոլովով, ինչպես՝ հինգից-վեց, տասից-սուն, հիսուսից-հարյուր, հարյուրից-երկու հարյուր և այլն:

Անվանական հարադրությունները հոգ են ստանում, հոգնակի կազմում և հոլովովում միասնաբար, իբրև մեկ բառ, ինչպես՝ տեց ու դարձը, անց ու դարձից, անց ու դարձով, տուն ու տեղը, տուն ու տեղից, տուն ու տեղով, ծառ ու հյուզը, ծառ

ու հյուզերը, ծառ ու հյուզի, շենք ու շենքեր, շենք ու շենքե-հով, փան-եղեսուցի, դես ու դենը, դես ու դենից, բանվոր-բանվորներից, բանվոր-բանվորներից և այլն: Հաճախ հոգ են ստանում և հոլովովում երկու բաղադրիչներն էլ միաժամանակ, բայց այդ դեպքում շաղկապական հարադրությունները սովորաբար վերածվում են հարակցականի, ինչպես՝ դես ու դենից կամ դեսից-դենից, հայր ու մայր կամ հայր-մայրը, հորից-մորից, հորով-մորով, տուն ու տեղը կամ տուն-տեղը, տնից-տեղից, տնով-տեղով, սար ու ձորը, կամ սար-ձորը, սարից-ձորից, սարով-ձորով, սարեր-ձորեր և այլն: Ըստ այսմ այն բոլոր դեպքերում, երբ շաղկապական հարադրությունների երկու բաղադրիչներն էլ հոլովովում են կամ հոգ են ստանում՝ շաղկապի պահպանումով, հարադրությունը լուծվում է և վերածվում շարահյուսական բառակապակցության, ինչպես՝ հայրն ու մայրը, սարն ու ձորը, սարից ու ձորից, սարեր ու ձորեր, սարերն ու ձորերը և այլն: Հատկանշական է, որ այդ դեպքում ու շաղկապն էլ ազատորեն կարող է փոխարինվել և-ով, ինչպես՝ հորից և մորից, սարերը և ձորերը, սարերով և ձորերով և այլն:

Մ. Արեղյանն անվանական հարադրությունների այս երեք տիպերն ընդհանուր անունով կոչում է բազմաբանական հարադրություններ:

② Կրկնավոր բաղադրություններ կամ բառակրկնություններ.— Կրկնավոր վերլուծական բաղադրությունները ներկայացնում են նույն բառի փոփոխված կամ անփոփոխ, ամբողջական կամ հատվածական կրկնությունը, ինչպես՝ արագ-արագ, մեծ-մեծ, հատ-հատ, գունդ-գունդ, գույզ-գույզ, մաղդ-մաղդ, սխալ-սխալ, աման-շաման, շիվ-շիտակ, ալար-դալար և այլն:

Բառակրկնությունները բազմազան են թե՛ կրկնության եղանակով, թե՛ իմաստային առումով: Բառակազմական տեսակետից պետք է տարբերել բառային հարակրկնությունները կրկնավոր բաղադրություններից: Հարակրկնությունը խոսքի արտահայտչական միջոցներից մեկն է, որ ներկայացնում է բառի, բառակապակցության, շարահյուսական կառուցվածքի և, երկրորդ, ամբողջ նախադասության կրկնությունը խոսքի մեջ, ինչպես՝

Հիշում եմ դեմքը քո ծիր, մայր իմ անուշ ու անգին,
կույս խորշումներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:
(Ծ. Զարհնց)

Գեպի ռազմի դաշտ, դեպ հերոսացում,
Գեպի ռազմի դաշտ, սուրբ դրոշի տակ... (Ավ. Իսահակյան)

Բառային հարակրկնությունն, ուրեմն, հարակրկնության մի տեսակն է, որ ունի ռեական արժեք, բայց ոչ՝ բառակազմական: Այսպես, օրինակ, Լ. Սահյանի

Իմ հեռո՞ւ, հեռո՞ւ, հեռո՞ւ նաիրյան դալար բարդի
բանաստեղծական տողում երեք անգամ կրկնվել է հեռու բառը. դա հարակրկնություն է, բայց ոչ բաղադրական կրկնություն, որովհետև բառերի կրկնությամբ բաղադրյալ բառ չի կազմվում:

Գրան հակառակ, կրկնավոր բաղադրությունները, իրենց տարրեր տեսակներով, ներկայացնում են կրկնվող բառերի հարակցությունը որպես մեկ ամբողջական բաղադրություն, ինչպես՝ մեկ-մեկ, անսակ-տեսակ, փունջ-փունջ, ծուռ ու մուռ, տեղ-տեղ և այլն:

Կրկնավոր բաղադրություններով արտահայտվում են հետևյալ իմաստները.

ա) Բաղմակիրություն, ինչպես՝ գունդ-գունդ (գոբեր)՝ «շատ գնդերից բաղկացած (զորքեր)», տեսակ-տեսակ (ուսեստներ)՝ «բաղմատեսակ (ուսեստներ)», դեզ-դեզ (գերաններ)՝ «շատ դեզերով (գերաններ)», հագար-հագար՝ «բաղմահագար» և այլն:

բ) Բաշխականություն, ինչպես՝ հինգ-հինգ, տասը-տասը, գունդ առ գունդ, հարյուր-հարյուր, դասակ առ դասակ, խումբ առ խումբ և այլն:

գ) Անորոշություն—զանազանություն, ինչպես՝ տեղ-տեղ «որոշ տեղեր», տուն առ տուն «չորաբանչուր տուն», մեկ-մեկ «ծրքեմն», մերք ընդ մերք «երբեմնակի», ժամանակ առ ժամանակ և այլն:

դ) Սաստկություն—ամբողջականություն, ինչպես՝ սուր-սուր, մեծ-մեծ, խաղ-խաղ, կանաչ-կանաչ և այլն:

ե) Առանձնություն, ինչպես՝ ես ու ես, քեզ ու քեզ, մեկան-

մեկան, իրեն-իրեն, մեկ-մեկ (մեկ ու մեկ), մեզ ու մեզ և այլն:

զ) Հավաքականություն—միասնություն, ինչպես՝ աման-չաման, մարդ-մարդ, ծակ-ծուկ (ծակ ու ծուկ), դրամ-մրամ, հաց-մաց և այլն:

է) Փաղաքշանք—նվազականություն, ինչպես՝ սիրունիկ-միտունիկ, լավիկ-մավիկ, հեզ ու մեզ, հեզիկ-մեզիկ, հազուկ-մազուկ, աաֆուկ-մաֆուկ, բարալիկ-մարալիկ, հազիկ-մազիկ և այլն:

Ըստ կրկնվող եզրերի միացման եղանակի կրկնավոր բաղադրությունները լինում են՝ հարակցական (օր. տեսակ-տեսակ, գունդ-գունդ, հինգ-հինգ, ալար-դալար, սպառ-սպառ, կաս-կարմիր և այլն), շղկապական (օր. շուռ ու մուռ, ծակ ու ծուկ, ինձ ու ինձ, մենք ու մենք, ինչ և ինչ, ձեն ու ձուռ, սուտ ու մուտ և այլն), նախադրական (օր. գունդ առ գունդ, փոխ առ փոխ, տող առ տող, թուփ առ թուփ, մերթ ընդ մերթ, կազ ի կազ, շար ի շար, փոխ ի փոխ, թափ ընդ թափ, մեջ ընդ մեջ և այլն):

Մանրություն.— Վերջին մի քանի տանամյակներում մեծ տարածում է ստացել գրաբարյան բացառական հորովի ե (է) վերջավորությամբ կրկնավոր կապակցությունների գործածությունը, որ զարգանում է դեպի կրկնության մի առանձին ձև (հմմտ. տեղե տեղ, քաղաքե քաղաք, գյուղե գյուղ, տնե տուն, փողոցե փողոց, թփե թուփ, ծաղկե ծաղիկ և այլն): Այդ կապակցություններին համապատասխան են ժամանակակից հայերենի բացառականով կազմությունը (տեղից տեղ, թփից թուփ, փողոցից փողոց, գյուղից գյուղ և այլն), որ շարահյուսական կառույց է և չի կարող դիտվել որպես կրկնավոր հարադրություն: Գրաբարատիկ բացառականով կազմությունները, սակայն, ստանում են բառակազմական արժեք, ուստի և ճիշտ կլինի դրանք ևս համարել կրկնավոր հարադրություններ, ըստ որում դրանք շատ հաճախ գրվում են միասին, իրեն կրկնավոր բարդություն, ինչպես՝ անետուն, սաբեսար, գյուղեգյուղ, պատեպատ և այլն: Նկատելի է, որ գրաբարյան ի նախորդով կազմված կրկնավոր բարդությունների մի մասի մեջ էլ ինքն փոխվել է ե-ով, ինչպես՝ շաբեշար, փոխեփոխ, պատեպատ, կաղեկաղ և այլն:

Բաղադրական կրկնությունների մի առանձին տեսակ են ներկայացնում բայական կրկնավոր հարադրությունները, որոնց մեջ բայն առաջին եզրում գրվում է անորոշ դերբայի գործիական հարվում, ինչպես՝ սիրելով սիրել, մոռանալով մոռանալ, ուրանալով ուրանալ, անհիծելով անհիծել, ասելով ասել, ճեռանալով ճեռանալ և այլն (խոնարհված ձևերով՝ սիրելուով սիրեցի, անհիծելով անհիծեց, մոռանալով մոռացավ, ուրանալով ուրացավ և այլն); Այս եղանակով կազմվող բայական կրկնավոր հարադրություններն արտահայտում են իմաստի սուստկացում՝ «բողոքովին, խապառ» նշանակությամբ (մոռանալով մոռանալ բողոքովին մոռանալ, կոտորելով կոտորել ժխապառ կոտորել, քնաչնչել և այլն):

Բայական կրկնավոր բաղադրությունների մի այլ տեսակ պետք է համարել բայի կրկնությունը դրական և ժխտական ձևերի հարակցությամբ, ինչպես՝ եկավ-չեկավ, տեսավ-չտեսավ, եղավ-չեղավ, զենաց-չզենաց և այլն: Այսպեսի կրկնավորները արտահայտում են անմիջականության իմաստ, ինչպես՝ եկավ-չեկավ՝ բախվեցին վրան, Տեսավ-չտեսավ՝ հարձակվեց և այլն (կարելի է փոխարինել՝ հենց որ եկավ (կամ գալուն պես) թափվեցին վրան, հենց որ տեսավ (կամ տեսնելուն պես) հարձակվեց): Այսպեսի կրկնությունների հարակատար դերբայով կազմվում են անվանական հարադրություններ՝ ինչպես՝ եղած-չիղած, ունեցած-չունեցած, կերած-չկերած, տեսած-չտեսած, բերած-չբերած և այլն (հմմտ. Ունեցած-չունեցածը մի բան չի, Տեսած-չտեսածը գլխի չի ընկել, կերած-չկերածը մի կտոր չոր հաց է):

Կրկնավոր հարադրությունների մեջ կրկնվող բառը կարող է անփոփոխ մնալ, կարող է և զանազան փոփոխությունների ենթարկվել: Անփոփոխ կրկնություններ են՝ կամաց-կամաց, կանաչ-կանաչ, մեծ-մեծ, հինգ-հինգ, երբմե-երբմե, առանձին-առանձին և այլն:

Փոփոխված ձևերով կրկնություններն ունեն հետևյալ տեսակները.

1) Ա ձայնավորը երկրորդ եզրում դառնում է ու, ինչպես՝ վարդ-մարդ, աղբառ-ուղբառ կամ աղբառ-ուղբառ, ծակ-ծակ կամ ծակ ու ծակ, մանր-մուր, փալաս-փալաս, փասա-փասա, սպառ-սպառ, հայ-հայ, հարայ-հարայ, խաբս-խաբս

կամ խար-խար, սարհ-սարհ, տաշ-տաշ կամ տաշի-տաշի, ձայն-ձույն կամ ձեն-ձուն, շափ-շափ, հանգ-հունգ կամ հանգ ու հունգ և այլն:

2) Բառասկզբի բաղաձայնը երկրորդ եզրում փոխվում է մ-ի, սակավ դեպքերում՝ ուրիշ բաղաձայնի, ինչպես՝ բարակ-մարակ, փոքր-մոքր, հաց-մաց, սուտ-մուտ, ճանն-մանն, բանջար-մանջար, պտուղ-մտուղ, սեփկ-մեփկ, պարապ-աարապ, սուտիկ-փուտիկ, սուտ-փուտ և այլն:

3) Զայնավորով սկսվող բառը երկրորդ եզրում սկզբից ստանում է մ կամ, սակավ դեպքերում, ուրիշ բաղաձայն, ինչպես՝ աղ-մաղ, ալյուր-մալյուր, ակաս-մակաս, սուրագ-մուրագ, առու-մառու, ավել-մավել, բնկեր-մբնկեր, գո-մոգ, օրենք-մօրենք, աման-չաման, առակ-պառակ (նաև՝ առակ-չառակ) և այլն:

4) Առաջին եզրում ընկնում է բառասկզբի բաղաձայնը, ինչպես՝ այլար-դալար, այստ ու բախտ, արուն-գարուն, առտ-փառտ, առ-փառ (առ ու փառ), ալան-թալան, ալյուն-փալյուն, ավալ-թավալ, արալ-մարալ, արալ-ծարալ, արան-չարան, առակ-թառակ, ապաղ-ճապաղ (ապաղ-ճապաղի զալ «հանկարծամահ լինել»), ուն ու բուն, արմանք-գարմանք, արհ ու սարհ «կարգ ու կանոն, կարգ ու սարք», արոտ-կարոտ, արան-տարան, արար-վարար և այլն: Այս կարգի կրկնավորները սակավաթիվ են և գրեթե սպառվում են թերվածներով. նրկատելի է, որ մեծագույն մասի միջին բաղաձայնն է յ, ղ կամ ր: Միավանդ բառերի կրկնվող մասերը միանում են ու շաղկապով: Այս կարգի կրկնությունների մեջ երբեմն առաջին եզրը կարող է նույնանալ որևէ բառի հետ, որով և այն տպավորություն է ստացվում, թե տարբեր բառերի հարակցական հարադրություն է: Այսպես՝ ունենք արև-բարև, որ, իհարկե, բարև բառի կրկնությունն է՝ նախահունչ ր-ի անկումով, ըստ որում կրկնությունը նույնանիշ է բարև-բարի լույս (բարև-բարիլույս տալ՝ առնել) հարադրությանը և կապ չունի արև բառի հետ, թեև առաջին եզրը՝ ր-ի անկումով ձևապես նույնացել է դրան. այդպիսի կրկնավորներ են նաև արմանք-գարմանք, աղատ-պաղատ, արուն-գարուն (արունք-գարունք), առ-փառ (առ ու փառ), առակ-թառակ, ախտ ու բախտ, արար-վարար, որոնց առաջին եզրերը ձևապես համընկնում են

արմանք, աղատ, արան «արյուն», առ «առնելը, գնելը», առակ, ախտ, արար արտոր, ամբողջ» բառերին, թեև դրանց հետ կապ չունեն, բացի արմանք-գարմանք և աղատ-պաղատ կրկնավորներից, որոնք կարող են թերևս դիտվել իբրև արմանք և գարմանք, ալատ և պաղատ բառերի հարակցական հարադրություններ:

5) Առաջին եզրը ներկայացնում է մեկ վանկ, որի սկզբի բաղաձայնն ու հաջորդող ձայնավորը կրկնվող բառին են, իսկ երրորդ՝ բաղաձայն հնչյունն է փ կամ ս, ինչպես՝ նեփ-նեքմակ (նակ՝ ճիփ-ճեքմակ), սեփ-սե, սիփ-սիպտակ (նակ՝ սիպ-սիպտակ՝ փ>պ առնմանական հնչյունափոխությամբ. այժմ սիպտակ ժողովրդախոսակցական ձևը փոխարինվել է սպիտակ ձևով՝ սիփ-սպիտակ կամ սիպ-սպիտակ), շիփ-շիտակ, լեփ-լեցուն, լիփ-լիք, լիփ-լիվ, կափ-կանաչ, կափ-կապույտ, կափ-կարմիր, կաս-կարմիր, արեժտահայերենում՝ նրս-նման, մրս-մոայլ, պաս-պաբապ, միս-միճակ, կրս-կլոր, մուս-մուք, պաս-պաբապ, տիկ-տիլուր կամ տիփ-տիլուր և այլն: Այս կարգի կրկնությունները սահմանափակ են և կազմվում են առավելագույնս զուգահեռներից, շատ սակավ զեպթեթում՝ ուրիշ ածականներից (նման, մոայլ, մուք, կլոր, շիտակ, լեցուն, լիք, միակ, պարապ և այլն):

Ձանաղան փոփոխություններով կազմվող կրկնավոր հարադրությունների այդ հինգ տեսակներից առաջինը, երկրորդը և երրորդը արտահայտում են հավաքականության իմաստ՝ կրկնվող բառի ցույց տված առարկան (երևույթը և այլն) իր նմանների կամ հարակից իրերի հետ միասին առնված (օր. աման-չաման ժամաններ և նման պարագաներ», շոր-մոր «զանազան կարգի շորեր», աղքատ-ուղքատ աղքատներ և նրմաններ» և այլն): Երկրորդ տեսակի կրկնավորները հաճախ ունենում են նաև արհամարհական, նվաստական կամ փառաբանական իմաստ: Զորորդ և հինգերորդ կրկնավորները արտահայտում են սաստիկական իմաստ (օր. այլուն-փայլուն «շատ փայլուն», ալար-գալար «շատ գալար», շիփ-շիտակ «բոլորովին շիտակ», կաս-կարմիր «բոլորովին կարմիր»):

Նկատելի է, որ ինչպես անվանական հարադրությունների բաղադրիչները, այնպես էլ կրկնավոր հարադրությունների կրկնվող բառերը միավանկ և երկվանկ բառեր են, բացի հըն-

չյունափոխությամբ կրկնավորների երրորդ տեսակից, որի կրկնվող բառի վանկերի քանակը սահմանափակում չունի (հմմտ. արտասահման-մարտասահման, քաղաքացի-մաղաքացի և այլն):

Կրկնավոր հարադրությունների մի առանձին տեսակ պետք է համարել այն բաղադրական բառակապակցությունները, որոնց առաջին բաղադրիչն է որևէ գոյական, իսկ երկրորդը՝ այդ գոյականից կազմված՝ անձ ցույց տվող անանցավոր կամ բարդ բառ, ինչպես՝ դուռ-դրկից, գյուղ-գյուղացի, տուն-տնեցի, եզ-եզատեր, այծ-այծատեր, հանգ-հանդվոր, կալ-կալվոր և այլն: Այս կարգի կրկնավոր հարադրություններն արտահայտում են բազմադիտության, հավաքականության և միասնության իմաստ (գյուղ-գյուղացի «գյուղացիներն ամբողջությամբ», դուռ-դրկից «բոլոր հարևաններ», եզ-եզատեր «եզներն ու եզնատերերը»):

3. Կայուն բառակապակցություններ. — Բաղադրյալ բառերի յուրահաստի տիպ են ներկայացնում այն բառակապակցությունները, որոնք անբաժանելի, կայուն միասնություն են կազմում որպես մի բառային իմաստ արտահայտող բաղադրություն, այլ կերպ ասած՝ բառակապակցությունը ամբողջությամբ վերցրած ստացել է անվանողական դեր: Այսպես, օրինակ, Սուրենը ուր ուր է կգա նախադասության մեջ ուր ուր է բառակապակցությունը գործածվել է որպես նախադասության մեկ անդամ (պարագա), իբրև մեկ բառային միավոր՝ «շուտով, անմիջապես» նշանակությամբ, ուստի և նա կայուն բառակապակցություն է: Եթե իմաստային տեսակետից, որպես բաղադրյալ բառեր, կայուն բառակապակցությունները բնութագրվում են որպես մեկ բառային իմաստ (մեկ հասկացություն) արտահայտող միավոր, բառային գործառնությամբ՝ անվանողական դերով, ապա շարահյուսական տեսակետից բնութագրվում են նրանով, որ նախադասության մեջ նրանք, իրենց բոլոր բաղադրիչներով միասին, հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ: Այդ բանը ցայտուն կերպով կարելի է ցույց տալ հետևյալ օրինակով. բերված նախադասության մեջ ուր ուր է կայուն բառակապակցություն է՝ մեկ բառային իմաստով և ամբողջությամբ հանդես է գալիս որպես նախադասության մեկ անդամ: Սակայն նույն բառակապակ-

ցությունը կարող է հանգրայել նաև այսպիսի նախադասութեան մեջ. «Ուր որ է՝ ինձ չի հետաքրքրում»: Այս նախադասութեան մեջ «ուր որ է» երկրորդական նախադասութեան է և նշանակում է «որտեղ էլ լինի, որտեղ էլ գտնվելիս լինի», իբրև նախադասութեան «ուր որ է» կարող է շարահայտարեն վերլուծվել (ենթական՝ նա, որ գեղջվել է, ուր որ է՝ բաղադրյալ ստորոգյալ). այդ երկրորդական նախադասութեանը կարելի է կրթաբանել, որով կստանանք «Ուր լինելը (կամ՝ որտեղ գտնվելը) ինձ չի հետաքրքրում»: Նշանակում է՝ այս դեպքում «Ուր որ է»-ն կայուն բառակապակցութեան չէ: Այսպիսով՝ կայուն բառակապակցութեանը երկու և ավելի բառերի կապակցութեանը են, որոնք անդամների միասնությամբ արտահայտում են մեկ բառային իմաստ, ունեն անվանողական դեր-նախադասության մեջ հանդես են գալիս իբրև նախադասության մեկ անդամ: Որպես նախադասութեան անդամ կայուն բառակապակցութեանները տվյալ նախադասութեան կազմում իրենց անդամներով շարահայտարեն վերլուծելի չեն, անկախ այն բանից, թե նրանք խոսքից դուրս, իբրև բառակապակցութեան, ինչպիսի կառուցվածք ունեն: Կայուն բառակապակցութեաններն, որեմն, կարող են խոսքից դուրս վերլուծվել որպես բառերի կապակցութեաններ և զբաղեցնում ստեղծված որոշակի կառուցների: Այդպիսի կայուն բառակապակցութեաններ են. «ուր որ է շուտով, իսկույն», ինչ և է «որն է բան առանց խտրության», «որտեղ որ է շուտով», ամեն մեկը (ը) «յուրաքանչյուր», «զուր գործոց «Ուր լինելից երկ՝ ստեղծագործութեան», կարմիր անկյուն, պատի բերք, ոսկի ափաղաղ «հաղորդության խորհրդանիշ», անպաշ գրալ «անհարկի միջամտող մարդ», ամեն կերպ, ամեն ինչ, ուղիղ խնդիր, խոսքի մաս, Միավորված ազգերի կազմակերպություն, հավելյալ արժեք, աշխատանքի հասարակական բաժանում և այլն, զորքարից ժառանգված՝ այնուամենայն, ըստ այսմ, հրնթացս ժամանակի, ի միջ այլոց և այլն:

Ըստ իմաստային առանձնահատկությունների և ըստ իրենց առաջացման գործընթացի, կայուն կապակցութեանները, որպես վերլուծական բաղադրութեաններ, բաժանվում են երկու տեսակի՝ դարձվածային և բաղադրական:

Դարձվածային են այն կայուն բառակապակցութեանները, որոնք իրենց առաջացմամբ կապվում են խոսքի հետ, այսինքն՝ նախապես եղել են սովորական շարահայտական կապակցութեաններ և հետագայում, գործածվելով փոխաբերաբար՝ աստիճանաբար վերածվել են ինքնուրույն բառակապակցութեան ու ստացել բառային իմաստ հենց այդ փոխաբերական նշանակությամբ՝ ձեռք բերելով բառին հատուկ անվանողական դեր: Ըստ այսմ, դարձվածային կայուն բառակապակցութեանների բառային իմաստը նախապես եղել է փոխաբերական իմաստ, որ հետո դարձել է տվյալ կայուն բառակապակցութեան բառային իմաստը: Հատկանշական է, որ շարահայտական ազատ կապակցութեանը, դառնալով դարձվածային կայուն բառակապակցութեան՝ փոխաբերական նշանակությամբ, իր ուղղակի նշանակությամբ ազատորեն կարող է դարձյալ գործածվել որպես վերլուծելի շարահայտական կապակցութեան: Այսպես, օրինակ, կրակի կտոր «Ուր լինելից ետանդուն՝ աշխույժ, Չ. մոլեգին, կատաղի (մարդ)», անհետ ծաղիկ «հարազատների՝ մերձավորների նկատմամբ անտարբեր՝ ոչ սրտացավ ու օգտակար մարդ», անպաշ գրալ «անհարկի միջամտող, անտեղի մեջ ընկնող մարդ», առյուծի կաթ «օղի», որտեղ որ է «շուտով» դարձվածային կայուն բառակապակցութեաններ են՝ բերված փոխաբերական իմաստներով, բայց նույն բառակապակցութեանները կարող են գործածվել նաև իրենց ուղղակի իմաստներով, որպես ազատ շարահայտական կապակցութեաններ, և այդ դեպքում նրանք կդադարեն կայուն բառակապակցութեաններ լինելուց (հմտ. Սրբխանս պոկել էր մի շատ գեղեցիկ, բայց անհոտ ծաղիկ.— Մայրը պահում էր այդ անպաշ գրալը որպես իր տատի թանկագին ճիշատակներից մեկը— որոնց մեջ անհետ ծաղիկ գործածվել է «հոտ չունեցող ծաղիկ», իսկ անպաշ գրալ՝ «պաշ չունեցող (պոշ կտորված) գրալ» նշանակությամբ):

Բաղադրական են այն կայուն բառակապակցութեանները, որոնք կազմվում են խոսքից անկախ, որպես բաղադրյալ (բազմանդամ) տերմիններ և բաղադրյալ անուններ, ինչպես՝ ուղիղ խնդիր, հատուկ գոյական անուն, աշխատանքի հասարակական բաժանում, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, Սովետական Միության կոմունիստներ:

տական կուսակցություն, Երևանի պետական համալսարան և այլն: Բաղադրական կայուն բառակապակցությունների, որպես վերլուծական բաղադրությունների, իմաստը տվյալ կապակցության անդամների միասնությամբ ստեղծվող ուղղակի իմաստն է: Քեկ այս կարգի կայուն բառակապակցությունները ևս կարող են առանձին դեպքերում գործածվել փոխաբերաբար և համապատասխանորեն ստանալ փոխաբերական իմաստ, սակայն նրանց հիմնական իմաստը ուղղակի իմաստն է, մինչդեռ դարձվածային կայուն բառակապակցությունների իմաստային հիմքը փոխաբերական նշանակությունն է, որ կապակցությունների ինքնուրույնացմամբ դառնում է դարձվածային բառակապակցության հիմնական իմաստը: Բաղադրական կայուն բառակապակցությունները, ընդհանուր առմամբ, անվանական բառակապակցություններ են՝ լրացում լրացյալ հարաբերությամբ, մինչդեռ դարձվածային կայուն բառակապակցությունները կարող են լինել և՛ անվանական, և՛ բայական, և՛ ածականական, և՛ կապական կառույցներ, ինչպես և՛ նույնիսկ ամբողջ նախադասություն: Վերջապես, բաղադրական կայուն բառակապակցությունները, որպես բաղադրյալ տերմիններ և բաղադրյալ անուններ, ընդհանուր հասկացություններն ու անվանումները վերածում են մասնավոր (դասային, սեռային, տեսակային) հասկացությունների ու անվանումների՝ ստեղծելով տերմինային և անվանակարգային ստորակարգություն: Այսպես, օրինակ, խնդիր քերականական տերմինը մասնավորվում է օղիղ խնդիր և անօղիղային խնդիր բաղադրյալ տերմիններով, անուղղակի խնդիր-ը՝ հանգման անուղղակի խնդիր, անջատման անուղղակի խնդիր, մատուցման անուղղակի խնդիր և միջոցի անուղղակի խնդիր բաղադրություններով (կայուն բառակապակցություններով) և այլն: Այդպես էլ՝ ինտիմուս ընդհանուր անվանում է. մանկավարժական ինտիմուս, գյուղատնտեսական ինտիմուս, արվեստի ինտիմուս և նման բաղադրություններով այդ ընդհանուր անվանումը վերածվում է մասնավոր գյուղային անվանումների, իսկ, օրինակ, Երևանի և Արշակունյի անվան հայկական մանկավարժական ինտիմուս բաղադրությամբ էլ դառնում արդեն հատուկ անուն:

Բաղադրական կայուն բառակապակցություններ պետք է

համարել նաև գծիկով միավորվող երկանդամ (քիչ դեպքերում՝ եռանդամ) ածականական այնպիսի կապակցությունները, որոնք միասնաբար, որպես կապակցության համադր անդամներ են հանդես գալիս գոյականական բառակապակցություններում, ինչպես՝ հասարակական-բազմական (աշխատանքներ), դատական-դատախազական (մարմիններ), տնտեսական-արտադրական (բնութագիր), գիտական-հետազոտական (աշխատանք), դասագրքային-աւսուցողական (ձևակերպումներ) և այլն: Այսպիսի կայուն բառակապակցությունների մեծագույն մասն այժմ արդեն վերածվել է հատվածական բաղադրությունների, դրանցից էլ՝ հատվածական բաղադրությունների:

4. Հատվածական բաղադրություններ.— Քսաներորդ դարում հայերենում, ինչպես և այլ լեզուներում, մեծ զարգացում ստացավ վերլուծական բաղադրությունների յուրահատուկ մի տեսակ, որի բաղադրիչները նույնական կամ նույնիմաստ ածականակերտ ածանցյալներով կազմված և իրար հետ ստորադասության, համադասության կամ փոխադարձության հարաբերությամբ կապակցված բառեր են: Այդպիսի բառակապակցություններն ստորագաս հարաբերության դեպքում լինում են սովորաբար որոշիչ-որոշյալ կապակցություններ, իսկ համադասության դեպքում՝ երկուսը միասին (սովորաբար և կամ ու շաղկապով միավորված)՝ մեկ որոշյալի որոշիչները: Այսպես, օրինակ, ռազմական ծովային նավատորմ, պատմական հեղյուներաբանական ուսումնասիրություն, հարավային-արևելյան կղզի բառակապակցություններից առաջինում ռազմական բառը լրացումն է ծովային նավատորմ կայուն բառակապակցության (բաղադրյալ տերմինի), երկրորդում պատմական-ը լրացումն է հեղյուներաբանական-ի, իսկ օտ էլ՝ ուսումնասիրություն-ի, երրորդում՝ հարավային-ը՝ արևելյան-ի, արևելյան-ը՝ կղզի-ի: Դրանցից տարբեր են՝ պատմական և բանասիրական ուսումնասիրություններ, պտղաբուծական և բանջարաբուծական տնտեսություն, գինեգործական և այգեգործական ինտիմուս բառակապակցությունների մեջ և շաղկապով միավորված ածականները, որոնք միասին որոշիչներն են մեկ որոշյալի:

Այդ կարգի ածականական բառակապակցությունները մինչ-

չև մեր դարի 20—30-ական թվականները առնվում էին կամ իբրև շարահյուսական բառակապակցություններ և գրվում բազադրիչների պահպանումով, առանց որևէ կետադրական նշանի, ինչպես՝ ուղղական ծովային վարչություն, գիտական հետազոտական աշխատանք, պատմական հեյուրանարանական ուսումնասիրություն, կամ առնվում էին իբրև երկու ածականների միասնություն ու միավորվում գծիկով կամ շաղկապով, ինչպես՝ հարավային-արևելյան (կողմ), հյուսիսային-արևելյան (ֆամի), ուսերեն-հայերեն (բառարան), բառահենական և աղբյուրագիտական ֆննություն, և կամ, վերջապես, անընդմեջ իբրև միասնական բառակապակցություն՝ գրվում դարձյալ գծիկով, առաջին անգամի ածանցը կրճատելով, ինչպես՝ ռուս-թուրքական (պատերազմ), գերմանա-ֆրանսիական (գիտադպար), պարսկա-հայկական (հարաբերություններ), հայ-ուսերեն (բառարան), ֆրանս-հայերեն (զրուցաբերություն) և այլն: Այս կարգի բառակապակցությունները 19-րդ դարում և մեր դարի սկզբում շատ չէին, ուստի և նրանց կապակցության եղանակների ու գրության բազմազանությունը առանձնապես ուշադրություն չէր գրավում: Մեր դարի քսանականերանական թվականներից սկսած այդպիսի բառակապակցությունները մեծ տարածում ստացան. այդ գործընթացն է՛լ աճելի զարգացավ 50-ական թվականներից սկսած՝ առանձնապես գիտատեխնիկական և քաղաքական տերմինաբանության մեջ: Հետևանքն այն եղավ, որ ամենօրյա գործածության մեջ մտած հազարավոր այդպիսի բառակապակցություններն աստիճանաբար վերածվեցին կայուն բառակապակցությունների, մանավանդ՝ քաղաքային տերմինների ու անվանումների արժեք ունեցողները, Այս հանգամանքն էլ, իր հերթին, հզոր գործոն հանդիսացավ վերը բերված երեք տեսակներից վերջինի, որպես առավելագույն չափով խնայողական ու կարճառոտ տիպի, զարգացման ու ծավալման: Քանի որ լեզվի մեջ արդեն գործածական էին պարսկա-հայկական, գերմանա-ֆրանսիական, իտալա-ավստրիական և նման կապակցություններ, ապա դրանց համաբանությամբ էլ ստեղծվեցին նորանոր այդպիսի բառակապակցություններ: Քանակական թվականներին արդեն գործածության մեջ էին մտել այնպիսի նորակազմություններ, ինչպիսիք են՝ պատմա-տնտեսագիտական, բան-

վարա-գյուղացիական, ուղղա-հեղափոխական, ուղղա-հա-դափական, լեզվա-գրական, պատմա-լեզվա-գրական և այլն: Այսպիսով՝ լեզվի մեջ նախկինում եղած սակավաթիվ յուրատեսակ ածականական բառակապակցությունները, որոնք է՛լ ավելի սահմանափակ բնագավառներ վերաբերող բառեր էին ընդգրկում (հիմնականում՝ ժողովուրդների, երկրների, լեզուների անվանումներ), կապակցության իրենց կազապարով շատ կենսունակ գտնվեցին և նույնպիսի բազադրությունների հիմք դարձան: Հասկանալի է, որ այդ տեսակետից շատ մեծ է նաև աուսերենի դերը, որը նույնպիսի բառակապակցություններով վիթխարի չափով հարստացավ սովետական դարաշրջանում և մեր Միության ժողովուրդների լեզուներին մատակարարեց բազմաթիվ այդպիսի բառակապակցություններ (մեծ մասամբ պատճենումների կամ թարգմանությունների միջոցով), որոնք և խթանեցին ազգային լեզուներում, տվյալ դեպքում՝ հայերենում, այդ կարգի բազադրությունների տարածմանն ու կենսունակությունը: Այդ վերլուծական բազադրությունները, որոնք մենք կոչում ենք հատվածական բազադրություններ, ստացվում են նույնական կամ համանիշ ածանցներով կազմված ածականների համադասական կամ ստորադասական կապակցություններից՝ առաջին անգամի ածանցի կրճատումով և շաղկապի վերացումով, ինչպես՝ ուղղական և փաղափական կամ ուղղական-փաղափական > ուղղափաղափական, պատմական և բանասիրական > պատմաբանասիրական, լեզվական և գրական > լեզվագրական, ուղղական-ծովային > ուղղափաղափական և տեխնիկական > գիտատեխնիկական, տեխնիկական և տնտեսական > տեխնիկատնտեսական և այլն: Այդպիսի բազադրություններ կազմվում են նաև նույնական կամ համանիշ ածանցներով կազմված այնպիսի բարդածանց բառերից, որոնց հիմքը հանդիսացող բարդ բառերի վերջին բազադրիչը նույնպես նույնական է կամ հոմանիշ: Այս դեպքում կրճատվում է առաջին բազադրիչի ոչ միայն ածանցը, այլև բարդության վերջին բազադրիչը, ինչպես՝ պարաբանաբանարտածական (<պարաբանական և բանաբանարտածական>), այգեգինեզոծական (<այգեզոծական և գինեզոծական>), դաշտաայգեզոծական (<դաշտապարական և այգեզոծական>), այգեբանաբանարտածական (<այգեզոծական և

բանջարարածական), կենսամատենագիտական (< կենսագրական և մատենագիտական) և այլն: Կան նաև ծոանդամ կապակցություններից կազմված սակավաթիվ հատվածական բաղադրություններ, որոնք տարածվելու միտում ունեն (համախաղողա-պտղա-բանջարարածական, այգե-բանջարա-բուստանային, պատմա-լեզվա-գրական և այլն):

Հատվածական բաղադրություններն իրենց անդամների քերականական հարաբերությամբ լինում են երեք տեսակ՝ համադասական, ստորադասական և փոխադարձ: Համադասական են նրանք, որոնց բաղադրիչները միմյանց լրացում չեն, այլ համազոր, համադաս անդամների մի բառակապակցություն, որը նախադասության մեջ միասնաբար դառնում է գոյականական անդամի լրացում, ինչպես՝ պատմաբանասիրական, ռազմահայրենասիրական, այգեբանջարարածական, տիխնիկատնտեսական և այլն: Ստորադասական են նրանք, որոնց բաղադրիչներից մեկը՝ առաջինը, մյուսի լրացումն է, ինչպես՝ ռազմաօդային նավատորմ (= ռազմական նպատակների ծառայող օդային նավատորմ), պատմահնչյունաբանական հետազոտություն (= պատմական բնույթի հնչյունաբանական հետազոտություն), գերմանաֆաշիստական հորդաներ (= գերմանական ֆաշիստական հորդաներ), արևմտահվրոպական գրականություն (= արևմտյան եվրոպական գրականություն) և այլն: Փոխադարձ են նրանք, որոնց բաղադրիչները ցույց են տալիս երկու (երեման երեք) անդամների երկկողմանի (եռակողմ) հարաբերություն (փոխադարձություն, զուգադրություն և այլն), ինչպես՝ հայ-ուստերեն (բառարան), ռուս-թուրքական (պատերազմ), սովետա-ֆրանսիական (դաշնագիր), հայ-վրացական (քարեկամություն), լատին-ռուսայերեն (բառարան) և այլն:

Սովետական Միության ժողովուրդների լեզուների զարգացման առանձնահատկություններից մեկը ազգային լեզվի գրական և խոսակցական տարբերակների մերձեցման, խոսակցական տարբերակը գրականի մակարդակին բարձրացնելու գործընթացն է: Այս գործընթացի արտահայտություններից մեկն է այն, որ գրական լեզվի մեջ երևան եկող ամեն մի իրողություն համեմատաբար կարճ ժամանակում, իսկ շատ հաճախ էլ հենց անմիջապես, անցնում է խոսակցական տար-

բերակին ու դառնում տվյալ լեզուն կրող հանրության սեփականությունը, նրա կենդանի խոսքի գործուն տարրը: Անշուշտ այս իրողությունն էր հիմքում ունի հասարակական նախապայմաններ, որոնցից, տվյալ դեպքում, առաջել կարելոններն են երեքը. ա) համատարած, համընդհանուր գրագիտությունը, որ հետևանք է պարտադիր կրթության (նախապես՝ տարրական, ապա՝ ութամյա, այժմ՝ միջնակարգ պարտադիր ուսուցում), բ) իրագեղման (ինֆորմացիայի) աղբյուրների բազմազանությունն ու մասսայականությունը (մամուլ, զեղարվեստական բազմաբովանդակ ու բազմաբնույթ գրականություն, գիտահանրամատչելի գրականություն, ռադիո, հեռուստատեսություն և այլն), գ) գիտության ու տեխնիկայի նվաճումների մուտքը կենցաղի մեջ: Ինքնին հասկանալի է, որ այդ գործընթացը շատ ավելի ուժեղ է տեղի ունենում լեզվի առաջել շարժունակ մասի՝ բառապաշարի մեջ և նույնքան էլ հասկանալի, որ հատվածական բաղադրությունները ևս կարճ ժամանակամիջոցում, եթե ոչ անմիջապես, մուտք են գործում խոսակցական տարբերակի մեջ, դառնում ամենօրյա գործածության միավորներ: Այս էլ, ահա, առաջ է բերել հատվածական բաղադրությունների զարգացման նոր միտում. դրավոր խոսքի մեջ պտղաբուծական և բանջարաբուծական բառակապակցությունները պաղաբանջարաբուծական դարձնելը խնայողություն է գրելու (և տեղի) տեսակետից, ինչպես և բանավոր խոսքում՝ բառերը համառոտելու տեսակետից: Սակայն, դրա հետ միաժամանակ, բաղադրիչների առանձին-առանձին (բառանջատ դադարով) արտասանելու և շեշտելը, այնուամենայնիվ, լրացուցիչ արտասանական ճիգ են պահանջում, ուստի և բանավոր խոսքում այդ բաղադրությունները միավորելու և մեկ հիմնական շեշտով, իբրև մեկ բառ արտասանելու միտում է առաջանում: Այս միտումը, բնականաբար, իր իրացումն է գտնում առաջին հերթին համեմատաբար կարճ բաղադրությունների մեջ, ինչպիսիք են, օրինակ, պատմագրական, լեզվագրական, ռազմածովային, մանկապատանեկան, դատաբանական, վարչաօդափական և այլն: Թայց մի անգամ որ այդ միտումը երևան է գալիս լեզվում և իրացվում թեկուզ և սահմանափակ թվով բաղադրությունների մեջ, այնուհետև սկիզբ առած երևույթը հետզհետե տարածվում է ուրիշ բաղա-

դրույթունների վրա, ծավալվում և ձգտում իրեն ենթարկելու բոլորը: Եվ բուրգովին էլ պատահական չէ, որ 50—60-ական թվականներից, հատվածական բաղադրությունների բուռն զարգացման շրջանից սկսած, բանավոր խոսքի մեջ, հաճախ էլ դրավոր խոսքում, դրանց բառացումը մեծ թափ ստացավ: Հետևանքն այն եղավ, որ շփոթ ստեղծվեց դրանց գրության մեջ և անհամապատասխանություն՝ արտասանության ու գրության միջև: Գործածության համեմատաբար «երկար ճանապարհ» անցած և համախական գործածություն ունեցող հատվածական բաղադրությունները գրվում և արտասանվում էին որպես մեկ բառ (բարդություն), իսկ նորաբանություններն ու համեմատաբար քիչ գործածականները գրվում էին որպես վերլուծական բաղադրություններ՝ բաղադրիչների անջատումով գծիկի միջոցով: Այդպես ունեինք, մի կողմից, լեզվագրական, ռազմածովային, պատմագրական, գիտահետազոտական, վարչատնտեսական և այլն, մյուս կողմից՝ լեզվամտածողական, ռազմա-ստրատեգիական, պատմա-բանասիրական, գիտա-տեխնիկական, վարչա-գիվանագիտական, ինչպես և՛ լեզվա-գրական, ռազմա-ծովային, պատմա-գրական, գիտահետազոտական, վարչա-տնտեսական և այլն զուգահեռ գրությունները, ըստ որում, բանավոր խոսքում սովորական էր դառնում բաղադրիչների, որպես մեկ բարդ բառի, միասնական արտասանությունը՝ մեկ հիմնական բառային շեշտով (հաճախ առաջին բաղադրիչի երկրորդական շեշտով) նաև այն դեպքերում, երբ գրության մեջ դրանք անջատվում էին գծիկով, այսինքն՝ թեև գրվում էին լեզվա-գրական, պատմա-գրական, ռազմա-ստրատեգիական, դատա-վարչական և այլն, բայց արտասանվում էին լեզվագրական, պատմաբանասիրական, պատմագրական, ռազմաստրատեգիական, դատավարչական և այլն: Այսպիսով, բաղադրիչների ստորադասական և համադասական հարաբերությամբ հատվածական վերլուծական բաղադրությունները վերածվում են բարդությունների և որպես բուռն հատվածական վերլուծական բաղադրություններ առայժմ մնում են միայն փոխադարձ հարաբերություն արտահայտողները (հայ-ուսուական, իտալա-հունական, հայ-ուսուներեն, հայ-ուսու-անգլերեն և այլն):

գ. Համադրական բաղադրություններ

Համադրական են կոչվում այն բաղադրությունները, որոնց բաղադրիչները միմյանց միանալով մեկ բառ են կազմում և ստանում են մեկ հիմնական բառային շեշտ: Այսպես, օրինակ, գրադարանավար, գանգրաներ, տնային, այգեգործ բառերը մեկական բառ են. դրանց բաղադրիչները, անկախ իրենց քանակից ու բնույթից, գրվում են միասին և արտասանվում մեկ հիմնական բառային շեշտով, առանց բառանշատ դադարի: Համադրական բաղադրությունները լինում են երկու տեսակ՝ բարդություններ և ածանցումներ:

1. Բաղադրական հիմքեր

Համադրական բաղադրությունները, անկախ իրենց կազմում եղած ձևույթների քանակից ու բնույթից, բաղկացած են երկու բաղադրական միավորից: Այսպես, գրադարան բարդությունը բաղկացած է երկու հիմնական ձևույթից, գրադարանագետ՝ երեք հիմնական ձևույթից, գրադարանագիտություն՝ երեք հիմնական և մեկ երկրորդական ձևույթից, բայց, չնայած դրան, բոլոր այդ համադրական բաղադրություններն էլ, բարդություն թե ածանցում, բաղկացած են երկու բաղադրական միավորից. գր-ա-դարան, գրագարան-ա-գետ, գրագարանագիտ-ություն: Համադրական բաղադրությունների այսպիսի բնութագրությունը հենվում է այն բանի վրա, որ բարդ բառի կամ ածանցման կազմության դեպքում բաղադրությունը կազմող ամեն մի մասը մեկ միավոր է: Այսպես, գրագարան բառի մեջ ունենք գր- և դարան բաղադրական միավորները, գրագարանագետ բառի մեջ՝ գրագարան- և գետ միավորները, իսկ գրագարանագիտություն բառի մեջ՝ գրագարանագիտ-ություն միավորները: Բերված օրինակների մեջ, ինչպես հեշտ է նկատել, առաջինում ունենք երկու հիմնական ձևույթների միավորում, երկրորդում՝ դրանցից կազմված բառի միավորում մի այլ հիմնական ձևույթի հետ, երրորդում՝ երեք հիմնական ձևույթներից կազմված բառի միավորում երկրորդական ձևույթի հետ: Երկրորդական ձևույթը

միացել է սպառ բառին, անսպառություն բառում՝ -ուրյուն ձևությամբ՝ անսպառ բառին և այլն: Ինչպես տեսնում ենք, պարզապես, երկձևությամբ համադրական բաղադրություններից հաջորդականորեն կազմվում են նորանոր բաղադրություններ՝ հիմնական կամ երկրորդական ձևությամբի հավելումով. զրադարան բառը հիմք է հանդիսացել զրադարանագետ, իսկ այս էլ՝ զրադարանագիտություն բառի համար, սպառ բառը հիմք է հանդիսացել ան-սպառ, իսկ սա էլ՝ անսպառ-ուրյուն բառի համար և այլն: Ըստ բաղադրությունների կազմության հաջորդականության բարդություններն ու ածանցումները լինում են երկու կարգի՝ առաջնային և երկրորդային: Առաջնային են այն համադրական բաղադրությունները, որոնք կազմված են միայն երկու ձևությից, և որոնցից կազմվում են կամ կարող են կազմվել նորանոր բաղադրություններ. այդպիսի բաղադրություններ են՝ զրադարան, անսպառ, կյանք, հումք, առատաձեռն, ծառատունկ, անտառապատ և այլն: Երկրորդային են այն բաղադրությունները, որոնք կազմվում են առաջնայիններից, ինչպես՝ զրադարանագետ, անտառապատել, անսպառություն, հումքային, առատաձեռնություն, ծառատեղում և այլն: Առաջնային բաղադրությունները կոչվում են նաև սկզբնատիպ կամ նախատիպ բաղադրություններ:

Քանի որ համադրական բաղադրությունները բաժանում ենք երկու միավորի կամ մասերի, անկախ այդ մասերի ձևությամբից, ապա ինքնին ծագում է բաղադրական կամ բառակազմական հիմքերի գաղափարը: Բաղադրական հիմք է կոչվում համադրական բաղադրության երկու մասերից յուրաքանչյուրը. այսպես, օրինակ, զրադարան բարդության հիմքերն են զր- և դարան, զրադարանագետ բառի հիմքերը՝ զրադարանագիտ- և -ուրյուն, անսպառ բառինը՝ ան- և սպառ և այլն:

Օճանություն. — Քեև ածանցումների երկրորդական բառակազմական ձևությամբ տեսականորեն կարելի է նույնպես բաղադրական հիմք համարել, ինչպես բխում է նաև բաղադրական հիմքերի մեր բնորոշումից, սակայն դա գործնականորեն որևէ անհրաժեշտություն չի ներկայացնում ածանցական բաղադրությունների բառակազմական վերլուծություն-

ների համար, ուստի և կընդունենք, որ բարդ բառերի երկու մասերն էլ բաղադրական հիմքեր են, իսկ ածանցումների մեջ՝ միայն այն մասը, որին ավելանում է տվյալ ածանցը: Ըստ այսմ, զրադարանագիտական բառի բաղադրական հիմքը կը համարենք միայն զրադարանագիտ-, անսպառ բառինը՝ -սպառ, անսպառություն բառինը՝ անսպառ- և այլն: Այդպիսի մտանցումը արդարանում է նաև նրանով, որ ածանցումների մեջ հաջորդաբար ունենք մեկական ածանցի հավելում, ուստի և եթե այդ ածանցը կոչեինք բաղադրական հիմք, ըստ էության ածանցն ու բաղադրական հիմքը կնույնացնեինք, մինչդեռ այդպիսի նույնացում չի կարող լինել բարդությունների հիմքերի և բառի, արմատի կամ բառաձևի միջև, քանի որ իբրև բաղադրական հիմք կարող են հանդես գալ և՛ արմատը, և՛ բառը, և՛ ածանցումները, և՛ բառերի քերականական ձևերը և այլն: Այսպիսով, բարդություններն ունենում են երկուական բաղադրական հիմքեր, իսկ ածանցումները՝ մեկ բաղադրական հիմք և դրան ավելացող ածանց:

Բաղադրական հիմքերն իրենց կազմությամբ լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ են այն հիմքերը, որոնք բառակազմական վերլուծության չեն ենթարկվում. դրանք մենաձևությամբ հիմքեր են, ինչպես՝ սար-ա-հարթ, տն-ա-մերձ, գոյական, զր-ա-սեղան բառերի սար-, -հարթ, տն-, -մերձ, գոյ-, զր-, -սեղան հիմքերը: Բաղադրյալ են այն հիմքերը, որոնք բաղկացած են մեկից ավելի ձևությամբից, ինչպես՝ մարդկային, հեռախոսափող, լեզվաբանություն, մինչհեղափոխական, օրենսդրական, վարորդական, հերոսականորեն բառերի մարդկ-, հեռախոս-, լեզվաբան-, հեղափոխական-, օրենսդր-, հեռասական-, վարորդ- հիմքերը:

Ըստ իրենց բառակազմական դերի բաղադրական հիմքերը բաժանվում են երկու կարգի՝ սերող և բաղադրող: Սերող է այն բաղադրական հիմքը, որին ավելանում է որևէ այլ բաղադրական հիմք կամ ածանց՝ կազմելով նոր բառ. օրինակ՝ անամերձ բարդության սերող հիմքն է տն-, որին ավելացել է -մերձ հիմքը՝ կազմելով մի նոր բառ, հեռախոսապար բառինը՝ -մերձ հիմքը՝ կազմելով մի նոր բառ, հեռախոսապար բառինը՝ հեռախոս բաղադրյալ հիմքը, բուսական-ինը՝ բուս-, մարդկային-ինը՝ մարդկ- և այլն: Առաջնային բաղադրությունների

(բարդութիւնների ու ածանցումների) մեջ երկու ձևութիւններից առաջինը սերող հիմքն է: Բաղադրող հիմքը բառի այն մասն է (այն բաղադրական հիմքը), որ ավելանում է սերող հիմքին և կազմում նոր բաղադրութիւն (բարդութիւն), ինչպես՝ բուսաբան, տնամերձ, Հեռախոսալար բառերի -բան, -մերձ, -լար հիմքերը: Ըստ հաջորդականութեան բարդ բառերի վերջին բաղադրական հիմքը սովորաբար բաղադրող հիմքն է, իսկ դրան նախորդող հիմքը՝ սերող: Այսպես՝ լուսամփոփ, դարձվածաբան, հոգվածագիր, տնտեսագետ, հեռագրասլուծաչափ, գրադարանավար բառերի մեջ -ամփոփ, -բան, -գիր, -գետ, -չար, -վար բաղադրող հիմքեր են, իսկ դրանց նախորդող մասերը՝ լուս-, դարձված-, հոգված-, տնտես-, հեռագրասլուծ-, գրադարան- սերող հիմքեր: Այլ կերպ ասած, իբրև կանոն, բարդ բառերի աշակողմյան բաղադրիչը բաղադրող հիմք է, ձախակողմյան հիմքը՝ սերող. օրինակ՝ հեռակառավարում բառի հիմքերն են՝ հեռ- (սերող հիմք) և -կառավարում (բաղադրող հիմք), որովհետև կառավարում բառը գոյութիւն ունի իբրև անկախ բառ, որից և կազմվել է հեռակառավարում-ը, մինչդեռ հեռակառավար- բառ չունենք, որ իբրև առաջնային բաղադրութիւն դիտվեր և համարվեր սերող հիմք: Նույնպես և՛ մինչպատերազմական, տեսածայնագրութիւն բառերի սերող հիմքերն են մինչ-, տես-, իսկ բաղադրող հիմքերը՝ պատերազմական, ձայնագրութիւն, քանի որ չունենք մինչպատերազմ-, տեսածայն- առաջնային բաղադրութիւնները, որոնք դիտեինք իբրև սերող հիմքեր: Այդպես չէ, սակայն, ածանցումների մեջ. քանի որ ածանցները կարող են դրվել ինչպես սերող հիմքի վերջից (վերջածանցներ), այնպես էլ՝ սկզբից (նախածանցներ), ապա պարզ է, որ սերող հիմքն էլ կարող է լինել ինչպես ածանցին նախորդող, այնպես էլ հաջորդող մասը. օրինակ՝ համագումարային, մատչելիութիւն, սկներախիութիւն, կուսակցական ածանցումների մեջ -ային, -ութիւն, -ական ածանցներն ավելացել են համագումար-, ակներախ-, կուսակց- սերող հիմքերին (սերող հիմքը նախորդում է ածանցին), իսկ անմատչելիութիւն, անկուսակցական, նախահամագումարային, վերընտրութիւն բառերի մեջ սերող հիմքերն են -մատչելիութիւն, -կուսակցու-

կան, -համագումարային, -ընտրութիւն (սերող հիմքերը հաջորդում են ածանցին):

Մանրութիւն.— 1. Նախածանցվոր բաղադրութիւնների մեջ հաճախ դժվար է լինում որոշել, թե որն է սերող հիմքը՝ նախածանցով, թե՞ առանց նախածանցի մասը, ըստ որում շատ դեպքերում հնարավոր է թե՛ մեկը և թե՛ մյուսը: Այսպես, օրինակ, անկուսակցականութիւն, անմատչելիութիւն, տգիտութիւն, անհասկանալիութիւն բառերի համար կարելի է ընդունել անկուսակցական-, անմատչելի-, տգիտ-, անհասկանալի- սերող հիմքերը, որոնցից կազմվել են այդ բառերը ուրիշում ածանցով, կարելի է ընդունել նաև -կուսակցականութիւն, -մատչելիութիւն, -տգիտութիւն, -հասկանալիութիւն սերող հիմքերը, որոնց համապատասխանորեն ավելացել է ան- կամ տ- ածանցը: Իրանցից մեկի կամ մյուսի ճշգրիտ որոշումը հնարավոր է միայն պատմական այնպիսի տվյալներով, որոնք կպարզեն, թե, օրինակ, կուսակցականութիւն, մատչելիութիւն, տգիտութիւն, հասկանալիութիւն բառերն են ավելի շուտ գործածվել լեզվի մեջ, թե անկուսակցական, անմատչելի, տգետ, անհասկանալի բառերը: Այսպիսի տվյալներ կարող են լինել առանձին բառերի (օր. գիտենք, որ անկուսակցական ավելի շուտ է գործածվել, քան անկուսակցականութիւն և, նույնիսկ, կուսակցականութիւն), բայց ոչ այդ կարգի բոլոր բառերի համար, քանի դեռ չունենք լիակատար պատմական բառարան. առանձին դեպքերում կարելի է նաև իմաստային վերլուծութեամբ որոշել. օրինակ՝ տգիտութիւն բառի սերող հիմքն է տգիտ-, որովհետև այդ բառի իմաստը շինք կարող թիեցնել գիտութիւն բառից (տգիտութիւն նշանակում է «տգետ լինելը», ոչ թե «առանց գիտութեան»): Այդպիսի դեպքերն էլ, սակայն, քիչ են: Նկատի ունենալով թե՛ պատմական տվյալների բացակայութիւնը և թե՛ իմաստային վերլուծութեամբ սերող հիմքերը որոշելու հնարավորութեան սահմանափակութիւնը, կարելի է իբրև գործնական միջոց ընդունել հետևյալը. այն բոլոր դեպքերում, երբ մեր արգի լեզվում առկա է նախածանցով կազմված բառի առանց նախածանցի ձևը, սերող հիմքը պետք է համարել նախածանցին հաջորդող մասը, ինչպես՝ վերընտրու-

բյուն, նախաճամազումարային, համբնդհանրություն, հակա-
հեղափոխություն բառերի համար իբրև սերող հիմք պետք է
ընդունել -ընտրություն, -նամազումարային, -ընդհանրություն,
-հեղափոխություն բազադրիչները, որոնք մեր լեզվում կան
իրև անկախ բառեր: Դրան հակառակ՝ նախածանցավոր մա-
սք պետք է համարել սերող հիմք, կթև առանց նախածանցի
կազմությունը գոյություն չունի. օրինակ՝ դժկամություն, տգե-
ղություն, արտասանմանյան, անսկիզբություն, անառիկու-
թյուն բառերի սերող հիմքերը կլինեն դժկամ-, տգեղ-, ար-
տասանման-, անսկիզբ-, անառիկ-, քանի որ չունենք կամու-
թյուն, գեղություն, սանմանյան, սկիզբություն, առիկություն
բառերը, որոնցից կազմվեին դժկամություն, տգեղություն,
արտասանմանյան և այլն:

2. Նույնպիսի անորոշություն և երկվություն կարող է ծա-
գել նաև բարգաժանց բառերի հիմքերը որոշելիս. օրինակ՝
ակնբախտեմ, ակնհայտորեն, հետգություն, մինչպատմա-
կան բառերում սերող հիմքեր պետք է համարել ակն-, հետ-,
մինչ- ձևույթները, թե՛ ակնբախ-, ակնհայտ-, հետգ-, մինչ-
պատերազմ-: Այսպիսի դեպքերում էլ ելակետը նույնն է.
ակնբախություն, ակնհայտորեն բառերում սերող հիմքերն
են ակնհայտ-, ակնբախ-, որովհետև չկան -բախություն, -հայ-
տորեն բառերը, իսկ հետգություն, մինչպատմական բառերի
սերող հիմքերն են հետ-, մինչ-, որովհետև կան գություն,
պատմական բառերը, և չկան հետգ-, մինչպատմ- բառերը,
որոնցից հնարավոր լինե՞ր կազմել հետգություն, մինչպատ-
մական բառերը՝ ուրյուն ածանցի հավելումով:

Ժամանակակից հայերենի, ինչպես և առհասարակ հայե-
րենի համար սերող և բազադրող հիմքերի տարբերակումը
կարևոր է նրանով, որ սերող հիմքերն ունեն բազմատեսակ
տարբերակներ, մինչդեռ բազադրող հիմքերը միայն առանձին
դեպքերում են ունենում այդպիսիք. օրինակ՝ կյանք բառն
իրև սերող հիմք ունի կյան- (օր. կյանք-), կեն- (օր. կենա-
բար), կենս- (օր. կենսատու), կեց- (օր. կեցություն), մինչ-
դեռ որպես բազադրող հիմք ունի միայն կյանք (օր. անկյանք)
և կյաց (օր. մենակյաց) տարբերակները:

Ինչպես ասվել է բառապաշարի դասակարգության մեջ,

ժամանակակից հայերենի բառապաշարը ծագումնաբանական
տարբեր շերտեր է ընդգրկում: Ծարբեր աղբյուրներից մեր
արդի լեզվի բառապաշարին անցած բառերը ոչ միայն պարզ,
այլև բազադրյալ բառեր են, ըստ որում բազադրյալ բառերն
էլ իրենց բառակազմական առանձնահատկություններով հա-
մապատասխանում են բազադրությունների կազմության այն
կանոններին, որոնք գործել են կամ գործում են հայերենի
ովյալ պատմական շրջանում կամ ժամանակակից հայոց լեզ-
վի ովյալ տարբերակում: Այս հանգամանքն էլ, ահա, պատ-
ճառ է դարձել այն բանի, որ ժամանակակից հայերենի բա-
զադրությունների մեջ ստեղծվել է բազադրական հիմքերի
բազմազանություն: Մյուս կողմից, ինչպես ասել ենք, գրա-
կան ճանապարհով ժառանգելով գրաբարյան բազադրույուն-
ները, աշխարհաբար գրական լեզուն յուրացրեց նաև գրաբար-
յան բազադրությունների կաղապարներն ու բազադրական հիմ-
քերը, իսկ գրաբարյան բազադրական հիմքերը, ինչպես հայտ-
նի է, հենց գրաբարում (և առհասարակ հին հայերենում) բազ-
մազան էին բառակազմական ներքին օրինաչափությամբ: Այս
բոլորի հետևանքով էլ, ահա, ժամանակակից հայերենի բա-
զադրական հիմքերը բնորոշվում են տիպաբանական, հնչյու-
նաբանական և պատմական բնույթի տարբերակային ձևերի
բազմազանությամբ:

Բազադրական հիմքերի տարբերակներ են միևնույն ձև-
վույթի (արմատի) կամ բառի այն տարբեր ձևերը, որոնք
նույնական են իրենց իմաստով, ինչպես՝ կյան- բազադրական
հիմքի կեն-, կենս- կյաց-, կեց-, կյանք- տարբերակները,
օրեն հիմքի օրենս- և օրին- տարբերակները (հմտ. անօրեն,
օրենսգիրք, օրինագիծ), ձեռ- բազադրական հիմքի ձեռն-
(ձեռնտու, առատաձեռն), ձեռք- (ձեռքազատ, ձեռքակալել),
ձեռք- (ձեռքափակ), ձեռաց- (ձեռացագիր, ձեռացափոխ)
տարբերակները և այլն:

Ա) Տ ի պ ա բ ա ն ա կ ա ն տ ա ռ բ եր ա կ ն եր.— Տիպա-
բանական են կոչվում այն տարբերակները, որոնք հիմքի զա-
նազան քերականական ձևերն են կամ նրա բազադրյալ բա-
ռային ձևը: Օրինակ, ձեռ- բազադրական հիմքի ձեռաց- տար-
բերակը գրաբարյան հոգնակի սեռական և տրական հոլովներ-
քի ձևն է, ձեռն-ը՝ գրաբարյան եզակի ուղղականի ձևը, ձեռք-

տարբերակը՝ հինհայերենյան գործիականի ձևը, ձեռք-ը՝ ժամանակակից հայերենի ուղղական հոլովի ձևը (բաղադրյալ հիմք), մառդ բառի բաղադրական հիմքերն են մառդ- (մարդամտ, մարդասեր) և մառդիկ- (մարդկային, մարդկություն), որ հոգնակիի մառդիկ ձևն է. -կյտն- բաղադրական հիմքի կենս-ը՝ գրաբարյան հոգն. հայցականի ձևն է, կյաց-ը՝ գրաբարյան կենս բայի անցյալ կատարյալի հիմքը և այլն: Տալիս ենք բաղադրական հիմքերի այդ կարգի տարբերակների մի փոքրիկ ցանկ որպես գործնական ուղեցույց՝ տիպարանական տարբերակների սրողման համար:

Հայր- (հայրական, հայրապետ, հայրիշխանություն), հոր- (հորաքույր, հորեղբայր). առաջինը՝ ուղղական, երկրորդը՝ սեռական հոլովաձև:

Քույր- (քույրաբար, հորաքույր), քույր- (քեռորդի, քեռայր). առաջինը՝ ուղղականի, երկրորդը՝ ժամանակակից հայերենի սեռականի, երրորդը՝ գրաբարյան սեռականի հոլովաձևը:

Աստղ- (աստղասիրտ, աստղավառ), աստղ- (աստեղատուն, համաստեղ). առաջինը՝ այժմյան ուղղականի ձևը, երկրորդը՝ գրաբարյան սեռականի:

Կա- (առկա, հեռակա), կայ- (կայարան, կայուն), կաց- (կացարան, կացություն). առաջինը և երկրորդը՝ բայահիմք, երրորդը՝ անցյալի հիմք:

Մատ- (ցուցամատ, մատանեմատ, անմատ), մատն- (մատնանիշ, մատնացույց), մատան- (մատանի). առաջինը՝ պարզական արմատ², երկրորդը՝ գրաբարյան ուղղականի ձև, երրորդը՝ գրաբարյան սեռականի ձև:

Կին- (կնամեծար, քեռեկին), կանաց/կանանց- (կանացի, կանանցածին), կնոջ- (կնոջական, կնոջածին). պարզական արմատ, գրբ. հոգն. սեռ. -տր., արգի սեռ.:

Տալ- (տալացուկ), տու- (գրբ. անց. կտր. հիմք. խորհրդ-

դատու, ձեռնտու), տու- (գրբ. անվանական հիմք և հրամայականի ձև. պարզևատրել, պարենմասնատրում, թուլատրել), տաց- (գրբ. երկրորդ ապառնիի հիմք. տացք):

Կայսր- (կայսրություն, կայսրընտիր, կայսրանալ), կայսր- (սեռ. հոլով. կայսերական, կայսերազարդ):

Քերված բաղադրական հիմքերի տարբեր ձևերը տիպարանական տարբերակներ ենք կոչում այն պատճառով, որ գրանք, իբրև քերականական ձևեր կամ բաղադրյալ հիմքերու բաղադրյալ բառեր, տիպարանորին տարբեր կառուցվածքներ են ներկայացնում. այսպես, օրինակ՝ ձեռն, ձեռք և ձերք հիմքերը ձևակազմական տեսակետից մեկ տիպ են ներկայացնում, իսկ ձեռաց՝ մի այլ տիպ, նույնպես և՛ քույր և քեռ-, կնոջ և կանաց- և այլն:

Բ) Հ ն շ յ ու ն ա բ ա ն ա կ ա ն տ ա ր բ ր ա կ ն Ե Ր.—
Հնչյունաբանական են կոչվում բաղադրական հիմքերի այն տարբերակները, որոնց մեջ առկա է որևէ կարգի հնչյունափոխություն: Այսպես, օրինակ, ամենագետ, բնագետ բառերի մեջ -գետ հիմքն ունի արմատական Ե (գրաբարյան է) ձայնավորը, իսկ գիտություն, գիտենալ բառերի մեջ՝ ի ձայնավորը, մատնանիշ, մատնացույց բառերի մեջ ունենք մատն-, վորը, մատնանիշ, մատնացույց բառերի մեջ ունենք մատն-, իսկ ցուցամատ, անմատ բառերի մեջ՝ -մատ, կյանք, անկյանք բառերի մեջ ունենք կյան-, կենարար, կենակից բառերի մեջ՝ կեն-, մենակյաց բառում ունենք -կյաց, կեցություն, բառկեցիկ բառերում՝ կեց-, քեռեկին, տիկին բառերում ունենք -կին, կնամեծար, կնատյաց բառերի մեջ՝ կն-, կանացի, կանանցածին բառերում՝ կան-, դոնապան, դոնաբաց բառերում՝ դոն-, դրացի, դրկից բառերում՝ դր-, շխարտ, Երկաթադուր բառերում՝ դուր և այլն: Այս տարբերակների մի մասը ներկայացնում է հայերենի պատմության նախորդ շրջաններում որոշակի օրինաչափություններով տեղի ունեցած հնչյունական փոփոխություններ, որոնք, սակայն, ժամանակակից հայերենում այլևս չեն գործում և չեն կարող մեր լեզվի այժմեական իրողություններով բացատրվել. այդպիսիք են, օրինակ, դուր- հիմքի դր- տարբերակը (Ռ-ի փոխարեն Ե), քույր- հիմքի քեռ- տարբերակը (Ո-ի փոխարեն Ե, Ե-ի փոխարեն Ո), կին- հիմքի կանաց- տարբերակը (Ի-ի փոխարեն ա), աղ- (աղի, աղահանք) հիմքի ալ- (անալի) տարբերակը և այլն: Այս կարգի

² Գրաբարյան և ձայնորդահանգ բառերի ուղղականի ձևը համաժամանակյա մոտեցումով պետք է համարել բաղադրյալ ձև, իբրև եղակի ուղղականի հիմք, քանի որ այդ կարգի բառերի մի զգալի մասն ունի առանց Ե-ի պարզական արմատը ինչպես բաղադրությունների, այնպես էլ հոլովական ձևերի մեջ (հմտ. ոտն, հոգն. ոտք, ձեռն, ձեռք, մատն, երկմատնակի, հարսնմատ):

տարբերակները պայմանականորեն կկոչենք արմատական տարբերակներ և կընդունենք իբրև մեզ ավանդված հիմքեր (կենսունակ կամ ոչ կենսունակ)՝ առանց խորանալու դրանց տեսակների և առաջացման պատճառների մեջ: Գրանք այնքան էլ շատ չեն և կարող են ներկայացվել առանձին ցուցակներով:

Ինչ վերաբերում է մեր արդի լեզվում այս կամ այն շափով գործուն հնչյունափոխական իրողություններով պայմանավորված տարբերակներին, ապա դրանք կարելի է ներկայացնել հետևյալ հիմնական տեսակներով, որոնք ընդհանուր անվանումով կկոչենք բուն հնչյունափոխական տարբերակներ:

ա) Շեշտափոխական հերթազարթյուն տարբերակներ. — Հնչյունաբանությունից գիտենք, որ ու, ի, որոշ բառերում՝ և (գրաբարյան է) ձայնավորները և յա, ույ հնչյունակապակցությունները («երկհնչյունները») զրկվելով շեշտից և նախաշեշտ դիրք գրավելով, սղվում կամ ամփոփվում են (ու, ի > ք կամ զրո, և (է) > ի, յա > Ե, ույ > ու). դրա հետևանքով և (է), ի, ու ձայնավորներով և յա, ույ հնչյունակապակցություններով բաղադրական հիմքերն ունենում են երկուական դիրքային տարբերակ՝ անհնչյունափոխ և հնչյունափոխված, առաջինը՝ շեշտի տակ, երկրորդը՝ անշեշտ (նախաշեշտ դիրք), ինչպես՝ -գետ/գիտ- (քնագետ, գիտություն), -շեն/շին- (քարաշեն, շինարար), -սիրտ/սրտ- (բարեսիրտ, սրտոտ), -կից/կց- (ընկերակից, կցասայլակ), -ջուր/ջր- (առատաջուր, ջրկիր), -տուն/տն- (առանձնատուն, տնարար), -մատյան/մատեն- (դասամատյան, մատենագիր), -կյաց/կեց- (մենակյաց, կեցություն), -լույս/լուս- (վերջալույս, լուսատու), -գույն/գուն- (ոսկեգույն, գունագեղ) և այլն:

բ) Պատմահնչյունափոխական տարբերակներ. — Հայերենի պատմական հնչյունափոխությունների հետևանքով որոշ բաղադրական հիմքեր տարբեր դիրքերում տարբեր ձևեր են ստացել, որով և առաջացել են հիմքերի դիրքային տարբերակներ: Այդ կարգի տարբերակներից առավել կարևորագույնները հետևյալներն են:

1. Բառասկզբում հինհայերենյան և և օ պարզ ձայնավորները վերածվել են համապատասխանաբար յէ և վօ հնչյունակապակցությունների, իսկ բառամիջում պահպանվել են

անփոփոխ (հմմտ. երազ, օրդի, որոնց մեջ և և օ գրաբարում արտասանվում էին էրազ, օրդի, իսկ այժմ՝ յէրազ, վօրդի, և բերան, գործ, որոնց մեջ և և օ ձայնավորներն արտասանվում են որպես պարզ ձայնավորներ, ինչպես գրաբարում էր): Այս հնչյունափոխության հետևանքով առաջացել են և և օ հնչյունակապակցություններով սկսվող բաղադրական հիմքերի երկուական տարբերակներ. բաղադրությունների սկզբում և միջում՝ ձայնավորներից հետո հնչյունակապակցություններով ձև (հմմտ. երջանկաբեր (յէրջանկաբեր), ամենաերջանիկ (ամենայէրջանիկ), որականիշ (վօրականիշ), ամենաորակյալ (ամենայէրջանիկ), որոնց մեջ բաղադրական հիմքերն են -յէրջանիկ/յէրջանկ-, վօրակ-/վօրակյալ, և գերերջանիկ (գերէրջանիկ), բարձրորակ (բարձրօրակ), որոնց մեջ նույն բաղադրական հիմքերի ձևերն են էրջանիկ, օրակ:

2. Գրաբարում բազմաթիվ բառեր վերջավորվում էին բազմայն և հնչյունակապակցությամբ, ինչպես՝ բեռն, ձեռն, մատն, հարսն, նուռն, դուռն, ձուկն, աղեղն, զագաբն, մուկն, ասեղն, յոբն, տասն, ոտն և այլն: Պատմական հնչյունափոխությամբ վերջահանգ և ձայնորոն ընկել է և այդ բառերի այժմյան բառային ձևն է ձեռ(ֆ), մատ, հարս, նուռ, դուռ, զագաբ, աղեղ, մուկ, յոբ, տաս(ը), ոտ(ֆ), և այլն: Գրաբարից աղեղ, մուկ, յոբ, տաս(ը), ոտ(ֆ), և այլն: Գրաբարյան բաղադրություններում, եթե այդ բառերը բաղադրությունների մեջ էին մտնում ուղղականաձև հիմքով, ապա սովորաբար պահպանում էին և ձայնորդը, ինչպես՝ աղեղնանիզ, ձեռնուռ, մատնացույց, տասնապատիկ, վարդամատն, բարակոտն, առատածեռն և այլն: Ժամանակակից հայերենում այդ կանոնը դեռևս գործում է նման բառերի մեծ մասի բաղադրական հիմքերում՝ գլխավորապես բաղադրությունների առաջին եզրում, ինչպես՝ ձկնկիթ, ձկնաբուծատան, յոբնամյակ, նոնագույն, հարսնաֆույր, մկնդիղ, բեռնատար, ձեռնագեղակ և այլն: Գրան հակառակ, բաղադրությունների վերջում հիմքը լինում է առանց և-ի, և նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ բաղադրությունը ժառանգվել է գրաբարից՝ և ձայնորդով, այժմ մեծ մասամբ ընկել է, ինչպես՝ նուռնուռ, դառնամուկ, գետնամուկ, ծանրաբեռ (հմմտ. ծանրաբեռնել), տասական, յոթական, լեռնագագաբ և այլն: Ընդհանուր առմամբ այս տարբերակները նույնպես կարելի է դիտել որպես դիրքային

քային տարբերակներ՝ Ե-ով ձևը բառամիջում, առանց Ե-ի ձևը՝ բաղադրության վերջում (հմմտ. աղեղնավոր, աղեղնա-լար, մատնանիշ, մկնազույն, ձեռնաշղթա, դոնատեղ, ոտնա-տեղ, ձկնաբուծարան, հարսնաբույր, բեռնակիր, բայց՝ կիսա-ղեղ, քեթշամատ, անձեռ, դաշտամուկ, երկաթադուռ, շքա-դուռ, գետածուկ, նորահարս, ծանրաբեռ և այլն): Սակայն այս ընդհանուր բանաձևը շատ դեպքերում խախտվում է, ըստ որում խախտումներ կային արդեն նաև գրաբարում (հմմտ. ձեռագործ, ձեռագիր (առանց Ե-ի հիմք՝ առաջին եզրում) և առատաձեռն (Ե-ով հիմք՝ վերջին եզրում), նեխոս սպառ-կելատեղի ոտքերի կողմը, սնարի հակառակ կողմը և նե-տիտան, ստորոտ (առանց Ե-ի՝ վերջին եզրում) և բախտն (Ե-ով՝ վերջին եզրում) և այլն. աշխարհաբարում այսպիսի շե-ղումները շատ ավելի շատ են (հմմտ. գագաթային, ոտաբո-րիկ, ոտառեղ, սերմացու, եղյամաբեր, աղեղային և այլն), ռատի և տրված բանաձևումը պետք է ընդունել վերապահու-թյամբ:

3. Բազմաթիվ բաղադրությունների մեջ մի շարք բառերի բաղադրական հիմքերի տարբերակներ են ստեղծվում ժամա-նակակից հայերենի ուղղականաձև հիմքի և արմատական հիմքի տարբերությամբ, ըստ որում ուղղականաձև հիմքը ու-նենում է Ի (բաղադրյալ հիմք), իսկ արմատական հիմքը՝ ու, ինչպես՝ աչխարաց, աչխածակ և գեղաչյա, Լեղաչ և շեղաչ, գրհային, գրհաբե և գրադարակ, գրապանոց, Բեռհանչան և անձեռանակ, ձեռխարաց և անձեռ, ձեռագործ, վանհայատ-կան և վանհայր, մուտխագրել և Ելեմտական, վերհոտել, վերհայատվել և վիրարւյժ, վիրհատել (որոնց մեջ կա նաև շեշտափոխական հերթապայություն) և այլն, և այլն: Կան դեպքեր, երբ միևնույն բաղադրությունն ունի երկու տարբե-րակներով ձևերը (հմմտ. մտքամոլոր-մտամոլոր, ոտքատեղ-ոտատեղ և այլն): Սթի բառի ուղղականը գրաբարում ունեցել է վերջահանգ և, ապա հանդես է գալիս նաև երրորդ տար-բերակը՝ գրաբարյան ուղղականաձև (և ձայնորդով) տարբե-րակը, ինչպես՝ հիմքակազմ, բազմահիմք-հիմնավոր, անհիմն և հիմույթ.— ձեռքարաց-ձեռնազնգակ և ձեռագործ և այլն: Այս կարգի տարբերակների հետ չպետք է շփոթել այն բա-ղադրական հիմքերը, որոնք Ի ածանցով և առանց դրա տար-

բեր բառեր են, ինչպես հանածո, հանույր և հանհագործ, հան-հավայր, հուճակներ (նաև՝ հմակեր) և համհամատակարարում և այլն: Այսպիսի դեպքերում ունենք իրարից անկախ, ինք-նուրույն բաղադրական հիմքեր՝ տարբեր իմաստներով:

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, երկու կամ երեք հիմքային տարբերակներից (արմատական, ք-ով և ն-ով) Ի-ով տարբերակը ընդհանուր առմամբ հանդես է գալիս նորակազմությունների մեջ, մյուսները՝ ավանդական, ըստ որում նորակազմություններից շատերը ժողովրդախոսակցա-կան լեզվից են գալիս (մտքամոլոր, ոտքատեղ, ձեռքարաց, ծակաչք և այլն), այնպես որ այս դեպքում ունենք նաև գրա-կան-ավանդական բաղադրական հիմքեր և ժողովրդախոսակ-ցական լեզվի բաղադրական հիմքեր տարբերակները:

4. Համակցական (կոմբինացիոն) տարբերակներ.— Բա-ղադրական հիմքերի միացման սահմանագծում՝ առաջին (սե-րող) հիմքի վերջնահնչյունի և բաղադրող հիմքի սկզբնա-հնչյունի կամ հոգակապի հանդիպման դեպքում առաջ են գա-լիս միմյանց հանդիպող հնչյունների համակցված, երկուսի միավորումով պայմանավորված կամ դրանց փոխադրոցու-թյամբ տեղի ունեցող հնչյունափոխություններ, որոնցով ըս-տացվում են սերող հիմքի հնչյունաբանական տարբերակներ: Այդպիսի հնչյունափոխությունների ենթարկվում են սերող հիմքի վերջին ի և ու ձայնավորները՝ հետևյալ կանոնների համաձայն: Սերող հիմքի վերջահանգ ի ձայնավորը՝ ա) ա-ով սկսվող միավանկ բաղադրող հիմքերից և ածանցներից ա-ռաջ վերածվում է յ-ի, ինչպես՝ պատանի-ակ > պատանյակ, որդի-ակ > որդյակ, կղզի-ակ > կղզյակ, հոգի-ակ > հոգյակ, աղավնի-ակ > աղավնյակ, ամոթ-լի ժամոթով լցված՝ համակ-ված + ած > ամոթլյած (հմմտ. գրաբարյան երկի-ամ > եր-կեամ) և այլն: բ) Ա ձայնավորով սկսվող բազմավանկ բա-ռերի ա ձայնավորի հետ կամ ա հոգակապի հետ միանա-լով՝ տալիս է ե, ինչպես՝ ոսկի-արիչ > ոսկերիչ, բարի-արար > բարերար, որդի-ա-սեր > որդեսեր, այգի-ա-վետ > այգեվետ, պատանի-ական > պատանեկան և այլն: գ) Նույն հանգա-մանքներում ի ձայնավորը հաճախ պահպանվում է, ինչպես՝ որդի-ական > որդիական, այրի-անալ > այրիանալ, ոսկի-անալ > ոսկիանալ և այլն: դ) Ու ձայնավորով սկսվող ածանցներից

առաջ ի ձայնավորը, առանց որոշակի կանոնի, ընկնում կամ պահպանվում է անփոփոխ, ինչպես՝ տմարդի-ու-թյուն>տրմարդություն և տմարգիություն, սրգիություն, շանորդություն, պատանի-ություն>պատանություն և պատանիություն, բարի-ություն>բարություն, արի-ություն>արիություն և այլն: Այսպիսով, ի ձայնավորով վերջացող սերող հիմքերը կարող են ունենալ մինչև չորս տարբերակներ, ինչպես՝ որդի-, որդյ-, որդե-, պատանի-, պատանյ-, պատանե-, պատան- և այլն:

Ու ձայնավորահանգ սերող հիմքերից մի քանիսում այդ ու-ն հոգակապից և բաղադրող հիմքի սկզբի որևէ ձայնավորից առաջ դառնում է վ, ինչպես՝ թույլ-տու-ություն>թույլ-տվություն, տու-իլ>տվիլ, բու-եմ>բվեմ, լու-իմ>լվիմ, շու-ացուցակ>շվացուցակ, ձու-ա-ձև>ձվաձև, առու-ակ>առվակ, բերքատու-ություն>բերքատվություն, ուրու-ական>ուրվական, լեզու-արան>լեզվարան, թթու-ա-համ>թթվահամ, երկու-ություն>երկվություն, մեղու-ա-բույծ>մեղվբույծ, կծու-ա-համ>կծվահամ, արու-ա-մուլ>արվամուլ, չորսու-ակ>չորսվակ, կատու-ա-ձագ>կատվաձագ և այլն: Այս կանոնին ենթարկվում են միայն միավանկ և երկվանկ բաղադրական հիմքերը և այն էլ ոչ բոլորը (համտ. հուժկուություն, ազդու-ություն): Որպես կանոն, անփոփոխ են մնում -աձու-, արկու-ություն): Որպես կանոն, անփոփոխ են մնում -աձու-, արկու-բաղադրիչներով կազմված բաղադրյալ սերող հիմքերը (օր. թեկնածու-ական, կատարածու-ական, վերարկու-ացու, ահարկու-ություն և այլն): Առնել բայի արմատից ու ածանցով կազմված բաղադրյալ հիմքերում (-առու «առնող, ստացող, վերցնող») շատ բառերի մեջ ու ածանցն ընկնում է -ական, -ություն և այլ ածանցներից առաջ, ինչպես՝ խնդրառու>խնդրառություն, խնդրառու-ական>խնդրառական, հանձնառու-ություն>հանձնառություն, շրջանառու-ություն>շրջանառություն, վրիժառու-ություն>վրիժառություն և այլն: Այս ձևվերի մասին կարելի է մտածել նաև, թե բաղադրական հիմքի դերում հանդես է գալիս պարզապես առնել բայի արմատը, որի համար իբրև ապացույց կարելի էր բերել շրջանառել, վրիժառել, հանձնառել բայերը:

Բաղադրական տարբերակներ առաջ բերող և առաջժմ իբրև օրինաչափություն գործող այս չորս իրողություններից բացի կան նաև առանձին բառերի վերաբերող հնչյունափո-

խական դեպքեր, ինչպես՝ փայտահատ և փայտատ, անդամահատել և անդամատել, որոնց մեջ ունենք -հատ- բաղադրիչի -առ- տարբերակը, առաջադիմություն և հառաջադիմություն (առաջ- և հառաջ-), հետադարձ և ետադարձ (հետ- և ետ-), ձյունաբեր և ձնագեղի, ձնհալք (ձյուն- և ձն-) և այլն: Այսպիսի դեպքերի մի մասում այժմ արդեն օրինականացվել է միայն մեկը (օր. արևելահայերենում՝ առաջ-, արևմտահայերենում՝ հառաջ-), մյուսները վերաբերում են մասնակի դեպքերի, ուստի և դրանց չենք անդրադառնալ:

գ) Պատմական բնույթի տարբերակներ. — Մինչև այժմ թվարկեցինք բաղադրական հիմքերի տիպարանական ու հընչյունաբանական տարբերակները՝ առանց հաշվի առնելու, թե այդ տարբերակներից ո՞րը ի՞նչ դեր ունի ժամանակակից գրական հայերենում, ինչ չափով է կապվում ժամանակակից հայերենի հնչյունաբանական, բառակազմական ու ձևաբանական օրինաչափությունների հետ, մինչդեռ դրանցից շատերի մակերեսային դիտարկումն իսկ բավական է, որպեսզի պարզ լինի, որ դրանք մեր արդի լեզվի համար մեկուսացած ձևեր են, որոնք հանդես են գալիս միայն հին հայերենից ժառանգված մի քանի համադրական բաղադրությունների մեջ: Այսպես, օրինակ, ձևով բառի, որպես բաղադրական հիմքի, վերջ բերված ձևերը՝ տարբերակը ունենք արդի լեզվում գործածվող միայն երկու բառում՝ ձերբազատ (որից՝ ձերբազատել, ձերբազատում), ձերբակալ (որից՝ ձերբակալել, ձերբակալություն, ձերբակալում): Այդ բաղադրական հիմքը գրաբարում էլ, ըստ բառարանների տվյալների, ունեցել ենք, բացի վերջ բերված երկու բաղադրությունից, ևս երեք բաղադրությունների մեջ միայն (ձերբազուություն, ձերբասուն, ձերբացի): Սա ինքնին նշանակում է, թե այդ տարբերակը ոչ միայն ժամանակակից հայերենի, այլև գրաբարի դասական շրջանի համար կենսունակ չէր. ավելին. այդ ձևը արդեն չէր կարող բացատրվել գրաբարում գործող ձևակազմական օրինաչափություններով, ըստ որում և հանգող բառերի գործիական հոլովը, իբրև գործող կանոն, կազմվում էր սովորաբար -ամը վերջամասով (ձեռամբ, հարսամբ, մատամբ և այլն): Այդպես են նաև կին բառի կան,- Բայր բառի կե- , տալ բառի տաց-, կամ բայի կաց- հիմքերը, որոնք թեև գրաբարում

կենսունակ էին իբրև ձեարանական ու բաղադրական հիմքեր, սակայն կարող են բացատրվել միայն համեմատական քերականութեան օգնությամբ, բայց ոչ դրաբարի գործուն օրինաչափություններով: Հասկանալի է, որ եթե այդպես է գրաբարի համար, ապա բաղադրական հիմքերի այդ տարբերակները առավել ևս անբացատրելի են ժամանակակից հայերենի համար: Իրոք էլ, ժամանակակից հայերենի ձևակազմության, հնչյունաբանության ու բառակազմության ոչ մի կանոնով չենք կարող իմանալ, թե ինչու կին բառի ի ձայնափոքը դարձել է ա, թե ինչպես են կազմվել կաց-, տաց-, փո- բաղադրական հիմքերը և այլն: Ահա այս հանգամանքը նկատի ունենալով, բաղադրական հիմքերը և դրանց տարբերակները պատմական հայեցակետով կարող ենք բաժանել երկու կարգի՝ ավանդական և արդիական: Ավանդական են այն բաղադրական հիմքերն ու դրանց տարբերակները, որոնք, անկախ իրենց գործածակաւորումից, ժառանգված են գրաբարից և իրենց կազմությամբ չեն կարող բացատրվել ժամանակակից հայերենի օրինաչափություններով: Այդպիսի հիմքեր են, բացի վերջ հիշվածներից, նաև տու- և տուր-, կենս-, կենդ-, կյաց-, աստեղ-, կայսեր-, մատան-, և-ով հանգող բառերի գրաբարյան ուղականաձև հիմքերը (ձեռն-, մատն-, ոտն-, նոտն-, ձուկն- և այլն), ինչպես և՛ շեշտափոխական հերթագայություններ հնչյունափոխված հիմքերը, ըստ որում շեշտի հետ կապված հնչյունական հերթագայությունները ևս, ինչպես դիտենք, ավանդական հնչյունափոխություններ են: Արդիական են այն բաղադրական հիմքերը և դրանց տարբերակները, որոնք ձևավորվել են աշխարհաբարում և կարող են բացատրվել աշխարհաբարում գործող կամ գործած օրինաչափություններով, ինչպես՝ կնոջական, քրոջական, ձեռքաբաց, աշքածակ, ոտաբորիկ, գրքադետ բաղադրությունների կնոջ-, քոջ-, ձեռք-, աչք-, ոտ-, գրք- հիմքերը, հնչյունաբանական այնպիսի տարբերակները, ինչպիսիք են եզրագիծ և ծովեզր, օրոշարկել և քախտօրոշ և նման բառերի յեզր- և էզր-, վօրոշ և օրոշ հիմքերը և այլն, և այլն:

Բաղադրական հիմքերի թվարկված բոլոր կարգի տարբերակները կարելի է բնութագրել ու դասակարգել նաև համաժամանակյա մտածողությամբ՝ հիմք ընդունելով այդ տարբերակ-

ների գործածականությունը ժամանակակից հայերենի բառակազմության մեջ: Այդ հատկանիշով բաղադրական հիմքերը և դրանց տարբերակները բաժանվում են երկու խմբի՝ կենսունակ (կենդանի) և անկենսունակ (փառացած կամ մահացած): Կենսունակ են այն հիմքերը և դրանց տարբերակները, որոնցով նորանոր բաղադրություններ են կազմվում: Այսպես, օրինակ, բեռնավտո, բեռնունակություն, բեռնաշրջանառություն, բեռնատրոլություն և ծանրաբեռ, ուղտաբեռ.— ոտնառեղ, ոտնանեւթ, ոտնատակ և բազմոտանի, օտառեղ, ոտաբորիկ, ոտաշար.— տեղակայել, տեղակայանք, մեծափա.— կնարող, կնածին, կնաճան և էղբայրակն, տագրակն/տագրեկն.— հիմնակազմ, տարանիմք, հիմնային և հիմնատակ, հիմնային և նման բազմաթիվ բաղադրություններ, որոնց մեջ ունենք բեռ- և բեռն-, ոտ- և ոտն-, կայ- և կա-, կն- և կին-, հիմն- և հիմն- բաղադրական հիմքատարբերակները, բոլորն էլ գրեթե նորակազմություններ են (տվյալ դեպքում՝ գրաբարի համեմատությամբ). քանի որ դրանցով հավասարապես կարող են կազմվել նորանոր բաղադրություններ, ապա դրանք կենսունակ տարբերակներ են:

Անկենսունակ (քառացած, մահացած) են այն բաղադրական հիմքերն ու դրանց տարբերակները, որոնցով այլևս նոր բաղադրություններ չեն կազմվում, թեև դրանք առկա են մեր արդի լեզվում գործածվող բաղադրությունների մեջ, ինչպես՝ փո-, մատան-, կանաց-/կանանց-, ձեռաց-, ձեռք-, կենդ- և այլն: Այս հիմքերով կազմված բոլոր բաղադրությունները, բարդություններ թե անանցումներ, ժառանգվել են գրաբարից (առանձին բառեր՝ ժողովրդախոսակցական լեզվում պահպանված հինհայերենյան շերտից), նույնիսկ այնպիսի հիմքեր, ինչպիսիք են հուր-, մար-, աստեղ-, որոնցով կազմված բաղադրությունները (հորեղբայր, մորաբույր, աստեղավառ, բազմաստեղ և այլն) շատ գործածական են կամ եղել են այդպիսիք մոտիկ անցյալում, դարձյալ կենսունակ չեն, որովհետև դրանցով այլևս նոր բաղադրություններ չեն կազմվում: ավելին, ոչ միայն նոր բաղադրությունները կազմվում են դրանց հայր-, մայր-, աստղ- տարբերակներով, այլև գրաբարում կազմված և աշխարհաբար գրականության մեջ էլ գործածված շատ բառեր արդեն արդիականացվել են, այսինքն՝ հուր-,

մութ-, աստեղ- հիմքերով ձևերը փոխարինվել են հայր-, մայր-, աստղ- հիմքերով (օր. հայրաբարո, մայրենի փխ. գրաբար- յան հորաբարո, մորենական և այլ բառերի):

2. Հողակապ

Փորձավար, սանձառնապան, սեղանառան, նեոագրասյուն, նեոագրասյունաշար բարդութունները կազմված են երկու, երեք կամ չորս հիմնական ձևույթներից, որոնք իրար միացել են ա ձայնավորով: Բարդութունների բաղադրիչներն իրար կապող, միավորող ա ձայնավորը կոչվում է հողակապ: Հայերենի, ժանավանդ ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափութունները թույլ են տալիս բարդութունները կազմել բաղադրիչների՝ հողակապով միավորումով և առանց դրան՝ բաղադրիչների ուղղակի միավորումով: Այսպես, օրինակ, զօրծ-ա-վար, սամման-ա-պան, սյուն-ա-շար, կազմ-ա-ռան, ընկեր-ա-կից բարդութունների բաղադրիչները իրար հետ կապվել, միավորվել են հողակապով, իսկ դրկից, չրկիք, հացքուխ, քուչուս, խաղընկեր, կազմարար բառերը՝ բաղադրիչների ուղղակի միացումով, կցումով, առանց հողակապի: Հողակապ ունեցող բարդութունները կոչվում են հողակապով բարդութուններ, իսկ հողակապից զուրկ բարդութունները՝ անհողակապ բարդութուններ:

Հողակապը զուրկ է իմաստից և, որպես կանոն, իմաստաչին տարբերակում առաջ չի բերում միևնույն բաղադրիչներից կազմված բարդության հողակապով և անհողակապ տարբերակներում (հմմտ. հացատուն-հացտուն, զոնբաց-զոնարաց, բյուրահանձար-բյուրհանձար և այլն), այդ պատճառով էլ հողակապը, որպես ձևույթ, կոչվում է գործառական ձևույթ (Ֆունկցիոնալ ձևույթ): Առանձին դեպքերում, սակայն, պատմական զարգացման ընթացքում հողակապով և անհողակապ տարբերակները կարող են տարբերակվել նաև իմաստով՝ վերածվելով տարբեր բառերի, ինչպես՝ հացարուխ «հաց թխելը» — հացքուխ «հաց թխելով զբաղվող մարդ, հացագործ», բաճավոր «բերանացի» — բանվոր և այլն: Հայերենի բառակազմական կանոնների համաձայն, ձայնավորով սկսվող բաղադրող հիմքերը հող չեն ընդունում, ինչպես՝ դժվարընտել,

տասնամյա, արեգընդեմ, բազմիմաստ, պարուսույց, վայրէջք, հանրօգուտ և այլն: Հող չեն ստանում նաև ե, ո (=յէ, վօ) հնչյունակապակցութուններով սկսվող բաղադրող հիմքերը, ըստ որում այդպիսի բարդութունների մեջ դրանք արտասանվում են որպես է, օ պարզ ձայնավորներ, ինչպես՝ գետեգր, վերելք, բարձրորակ, բախտառչ և այլն: Վերջին տարիներում, սակայն, միտում է նկատվում այդ կարգի բաղադրական հիմքերով բարդութունները նույնպես կազմել հողակապով, ինչպես՝ խորաիմաստ, բազմաէջ, հանրօգուտ, հայրենաավանդ, ֆաղցրաբեազ, շխերք, եղնիկատա, բնառոչ (1), լավառակ և այլն: Եթե ե և ո տառերով (=յէ և վօ հնչյունակապակցութուններով) սկսվող բաղադրող հիմքերի համար ինչ-որ շափով արդարանում է հողակապի առկայությունը նրանով, որ դրանք իրենց արդի արտասանությամբ բաղաձայնով սկսվող հիմքեր են (երազ-յերազ, որոշ-վօրոշ և այլն), ապա ա, է, ք, ի, ու, օ ձայնավորներով սկսվող հիմքերի համար հողակապով կազմութունները բացարձակապես սխալ են. սխալ է նաև ե և ո սկզբնատառերով (=յէ և վօ հնչյունակապակցութուններով) բաղադրող հիմքերով հնուց ավանդված և մեր լեզվում վաղուց ի վեր գործածված ու արմատավորված անհողակապ բարդութունները փոխարինել հողակապով բարդութուններով և ստեղծել այնպիսի խժալուր բառեր, ինչպիսիք են բնառոչ, լավառակ, առվեգր, գետեգր բարձհունչ բառերի, եթե դա չի թելադրվում ստեղծագործական անհրաժեշտությամբ՝ գեղարվեստական ստեղծագործությունների մեջ:

Մանրություն.— 1. Հինհայերենյան շրջանից մինչև այժմ էլ հայերենի միակ կենսունակ հողակապն է ա ձայնավորը: Գրաբարում ունենք բարդութուններ, որոնց մեջ առերևույթ հողակապի դերով հանդես են գալիս ո, ե, ու, ի ձայնավորները (օր. երկտասան, հնգետասան), դրանք, սակայն, հողակապ չեն, այլ հնազույն շրջանից պահպանված ձայնավոր բնիք, որոնք վկայում են, որ ա հողակապն էլ նախապես եղել է բնի ձայնավոր: Պատմական զարգացման ընթացքում ձայնավորական բնիքն ընկել են և հին հայերենում առավել տարածված ա բնով բաղադրությունների մեջ այդ ա-ն գի-

տակցվել է որպես բառից անկախ, բաղադրութեան հիմքերն իրար կապող, միավորող ձայնավոր, այսինքն՝ Հողակապ: Այնուամենայնիվ, որոշ բարդութիւնների մեջ հանդես է գալիս նաև և ձայնավորը հողակապի դերով (հմմտ. ծաղկեփունջ, հաշվեմատյան, այցեստմս, քարետախտակ, խարեպատիր և այլն): Հողակապի դերում հանդես եկող այդ և ձայնավորը տարբեր բաղադրութիւններում տարբեր էլ ծագում ունի: Կ) Ամենից տարածվածն ու կանոնականն այն և ձայնավորն է, որ ստացվում է սերող հիմքի վերջահանգ ի ձայնավորի և հողակապի կամ բաղադրող հիմքի սկզբնահնչյունն ա-ի միավորումով (ի + ա > յա, գրաբարյան եա) և այդ հնչյունակապակցութեան (գրաբարի եա երկրարբարի) շեշտափոխական հերթագայութեամբ (գրաբարյան եա > ե), ինչպես՝ այգի-ա-գործ > այգեգործ, ոսկի-ա-ծուլ > ոսկեծուլ, բարի-աւար > բարեւար, ընտանի-ա-կան > ընտանեկան և այլն: Բ) Արդ բառերի մեջ այդ ե-ն և կամ յա (գրբ. եայ) ածանցն է, որով կազմված ածականը, որպես կայուն բառակապակցութեան բաղադրիչ, ուղղակի կերպով կցվել, միացել է գոյականին, ինչպես՝ ծաղկեփունջ > ծաղկեփունջ, փայլա (գրբ. փայլա) տախտակ > փայլատախտակ (գրբ. փայլատախտակ), փայլա գրիչ (գրբ. փայլագրիչ), կաշվե զնդակ > կաշվեզնդակ, բռնգե փայլ > բռնգեփայլ (գոյականական նըշանակութեամբ՝ «բրոնզե փայլ»), փայլ դար (նաև քարեդար)-փայլեդարյան, բռնգե դար-բրոնզեդարյան և այլն (այժմ քարե դար, բրոնզե դար կայուն բառակապակցութիւնները փոխարինվում են բրոնզի դար, քարի դար ձևերով, բայց քարեդարյան և բրոնզեդարյան դեռևս մնում են և կարող են մնալ՝ գիտակցվելով որպես բրոնզի-ա-դարյան, քարի-ա-դարյան հողակապով բաղադրութիւններ): Գ) Առանձին բառերում ե-ն հնագույն ձայնավորական բունն է, ինչպես՝ ճիւղե-բորդ (որի համարանութեամբ էլ՝ վեցերորդ, յոթերորդ և այլն), շանկեկան, խարե-պատիր և այլն: Դ) Ինչպես վերը նշվեց, և ձայնավորն առերևույթ հողակապի դերում է հանդես գալիս գրաբարյան բացառական հոլովով կրկնավորների մեջ, ինչպես՝ գյուղե-գյուղ, սարե-սար, քարե-քար և այլն: Ե) Վերջապես, շատ դեպքերում էլ և հողակապով բաղադրութիւններ առա-

ջացել են վերը բերված կանոնավոր կազմութիւնների, հատկապես ա և բ կետերում նշված և ձայնավորով բաղադրութիւնների համարանութեամբ, ինչպես՝ այցեստմս, ծաղկեպսակ, Երկաթեղուտ, փառեփրտ, բռնգեծուլ և այլն: Այս կարգի բաղադրութիւնները սխալակազմութիւններ են, որոնց գործածութիւնը հանձնարարելի չէ (պետք է գործածել այցեստմս, ծաղկապսակ, երկաթաղուտ, քարափրտ, բրոնզա-ծուլ և այլն), թեև դրանցից մի քանիսն արդեն կանոնական են դարձել (այցեստմս, հաշվետար (բայց՝ հաշվապահ), հաշվեհարդար և այլն):

2. Ածանցումների մեջ հողակապը ժամանակի ընթացքում միացել է ածանցին և շատ դեպքերում այլևս չի գիտակցվում որպես այդպիսին: Քանի որ «հողակապը», ինչպես ասացինք, երբեմնի ձայնավորական բունն է, իսկ այդպիսիք կարող էին լինել ա, ե, ու, ի, ո ձայնավորները, ապա ածանցներին միանալով՝ դրանք տվել են տարբեր ձայնավորներով ձևեր, ինչպես՝ -ցի (առանց «հողակապի»), -եցի (և «հողակապով») և -ացի (ա «հողակապով» հմմտ. լեռնցի, գաղաղցի, երևանցի.— էջմիածնեցի, վանեցի, կարնեցի, գառնեցի.— քաղաքացի, օտարերկրացի, տեղացի). —աւտ (օր. զգաստ, իմաստ), —եւտ (զովեստ, պահեստ), —իւտ (հանգիստ), —ուտ (հագուստ, գալուստ) և այլն:

3. Ե «հողակապով» բաղադրութիւնների առաջին կետում նշված և ձայնավորով բարդութիւնների այդ ե-ն պատկանում է սերող հիմքին, ինչպես՝ այգե-գործ, ոսկե-ծուլ, ընտանե-սեր, բարե-կամ և այլն: Անշուշտ, ճշգրիտ վերլուծութիւնը կպահանջի վերականգնել ի ձայնավորը և հիմքերը համարել այգի-, ոսկի-, ընտանի-, բարի- և այլն, սակայն գործնականորեն ավելի նպատակահարմար է ե-ով ձևն ընդունել որպես հիմք: Նույն մոտեցումը պետք է ունենալ նաև խարե-պատիր և նման բաղադրութիւնների նկատմամբ (Գ կետ), բայց ոչ ածանցումների դեպքում, քան որում ճիւղեբորդ, վեցերորդ և նման ածանցումների և ձայնավորը միացել է ածանցին, ինչպես՝ -եցի/-ացի, -եւտ/-ուտ և այլ ածանցներում:

Բարդություն է կոչվում այն համադրական բաղադրությունը, որ իր կազմում միավորում է երկու կամ ավելի հիմնական ձևություններ, ինչպես՝ գանգրահներ (= գանգր- և հեր), գրադաբանավար (գր-, դարան, -վար), այգեպան (այգե-, պան), դասառու (դաս, տու), հեռագրալուսանկար (հեռ-, -գր-, -սյուն, -շար), լացուկոծ (լաց, կոծ), գունդագունդ (գունդ, գունդ), մերթըմներ (մերթ, ընդ, մերթ) և այլն:

Ըստ կառուցվածքի, կազմության եղանակի, իմաստային առանձնահատկությունների և բաղադրիչների ներքին քերականական հարաբերությունների բարդությունները տարբեր տեսակներ ունեն: Այդ տեսակների բնութագրությունը տարբեր հատկանիշների ու շարժանիշների վրա է հիմնվում, ուստի և նպատակահարմար է ժամանակակից հայերենի բարդությունների տարբեր տեսակները քննության անել բնորոշման տարբեր հիմունքների համաձայն՝ առանձին-առանձին:

Ա. Բարդությունների տեսակներն ըստ կազմության.— Ուսումնասիրելով հայերենի բառակազմությունը՝ գրաբարի, աշխարհաբարի (գրական և ժողովրդախոսակցական), այլև բարբառների հարուստ նյութի հիման վրա, Մ. Աբեղյանը հայերենի բարդությունները բաժանում է երեք տեսակի՝ հարադրական, կցական և իսկական: Ըստ Մ. Աբեղյանի բնութագրությունների, առաջին կարգին պատկանում են բոլոր հարադրությունները, երկրորդ կարգին՝ հարադրությունների բաղադրիչների միավորումով, իրար կցվելով կազմված բարդությունները (գործածել, մեջբերում, առաջաշում, անցուդարձ, պեսպես և այլն), երրորդ կարգին՝ այն բարդ բառերը, որոնք միանգամից կազմվել են որպես բարդություն՝ հայերենի բառակազմական օրինաչափությունների համաձայն (զորագունդ, թանաքաման, երկրագունդ, թռչնորս և այլն), Հետագայում, յուրացնելով Մ. Աբեղյանի այս դասակարգումը, մեր լեզվաբանները, առանձնապես Գ. Սևակը, մասնակիորեն զարգացրին այս դասակարգումը՝ ավելացնելով նաև 4-րդ տեսակը, այն է՝ հապավական բաղադրությունները «նորագունդ հապավումներ» անվանումով: Մինևույն ժամանակ, Մ. Աբեղյանի հոյակ բաժանումը վերափոխեցին երկ-

յակ բաժանման՝ իսկական բարդություններ և անիսկական բարդություններ հակադրությամբ, անիսկական բարդությունների տեսակները համարելով բոլոր հարադրությունները, կրկնավորները և կցական բարդությունները: Բարդությունների այս դասակարգումը ժամանակի ընթացքում տարածվեց և մուտք գործեց նաև դպրոցական դասագրքերի մեջ: Վերջին տասնամյակում, սակայն, քննադատական մոտեցում է ցուցաբերվում ինչպես Մ. Աբեղյանի, այնպես էլ հաջորդների որոշ դրույթների նկատմամբ: Մ. Աբեղյանի բառակազմական ուսմունքի նկատմամբ քննադատական վերաքննումներն արտահայտվում է հիմնականում իսկական և կցական անվանումների նկատմամբ, ըստ որում ավելի սուր քննադատության առարկա են դառնում այդ անվանումների հետագա զարգացումը և ծայրահեղացումը ներկայացնող իսկական և անիսկական բարդություններ անվանումները: Մեր կարծիքով, սակայն, այնքան քննադատելի չեն իսկական, կցական անվանումները, որքան այն, որ բարդություն ընդհանուր անվանումով են կոչվում ինչպես հարադրությունները՝ իրենց բոլոր տեսակներով, այնպես էլ բուն բարդությունները: Այս մոտեցումով բարդություն տերմինը տարածվում է բոլոր կարգի բաղադրությունների վրա, որ և մթագնում է բաղադրյալ բառերի կառուցվածքային տարբերությունները: Մյուս կողմից, այդ ընդհանրացումը անկարելի է դարձնում իրրև բառակազմական իրողություններ դիտել այնպիսի բառակապակցությունները, ինչպիսիք են բռնգի դար, գլուխ գործոց բաղադրյալ անվանումներն ու տերմինները, մինչդեռ սկզբունքային ոչ մի տարբերություն չկա, օրինակ, դեմ դուրս գալ, առաջ ընկնել, ման գալ հարադրությունների, որպես կայուն կապակցությունների, և, ասենք, կառմի անկյուն, բել պանի, Կարի դար կայուն բառակապակցությունների միջև: Բառակազմական տեսակետից դրանք բաղադրություններ են, որոնք կազմված են մեկից ավելի բառերից, բայց արտահայտում են մեկ բառային իմաստ: Հենց այդպես էլ բնորոշում է Մ. Աբեղյանը հայերենի հարադրությունները: Մնում է ավելացնել, որ ինչպես Մ. Աբեղյանը, այնպես էլ Գ. Սևակը բարդությունների դասակարգման գլխավոր հիմունքն են համարում պատմական մոտեցումը. նրանց հիշյալ դասակարգում-

ները նպատակ ունեն ներկայացնելու բարդ բաների կազմութիւն տեխնիկայի զարգացման աստիճանները կամ աստիճանավորումները, ինչպես կոչում է Մ. Արեղյանը, ըստ որում, այդ աստիճանավորումներն էլ վերաբերում են ոչ թե միայն հայերենին, այլ ընդհանրապես՝ լեզուներին: Ժամանակակից հայերենի բառակազմութիւնն ուսումնասիրութիւնը, սակայն, հազիվ թե հնարավորութիւն առ լուսարանելու լեզուների մեջ բարդութիւնների առաջացման ու զարգացման ընդհանուր օրինաչափութիւնները և նույնիսկ՝ հայերենի հեռավոր անցյալի իրողութիւնները:

Ժամանակակից հայերենի բաղադրյալ բառերի քննութիւնը համաժամանակյա ուսումնասիրութիւնն առարկա է: Համաժամանակյա հայեցակետով և բաղադրյալ բառերի կառուցվածքային-բառակազմական հիմնական առանձնահատկութիւններով, բաղադրյալ բառերը բաժանվում են երկու տեսակի՝ վերլուծական և համադրական բաղադրութիւնների: Դրանով իսկ բարդութիւն տեղումնը ազդում է միայն այն բաներին, որոնք ներկայացնում են երկու կամ ավելի հիմնական ձևայինների միավորումը մեկ բառով: Բարդութիւնների այդ ընդհանուր բնութագրին միանում են նաև հենց դրանով պայմանավորված երկու այլ բնութագրեր՝ 1. ամեն մի բարդութիւն, իբրև մեկ բառ, արտասանվում է և գրվում բաղադրիչների միասնութիւնով՝ առանց բառանջատ դադարի, 2. ամեն մի բարդ բառ ունենում է մեկ հիմնական բառային շեշտ՝ վերջավանկի վրա, որի հետ միասին կարող է լինել նաև երկրորդական թույլ շեշտ առաջին բաղադրիչի վրա՝ մասնավորապես երկար բարդութիւնների մեջ (հմմտ. էլեկտրասարքավորում, բազմակցութեամբ, աշխարհաճանաչութիւն, օրինազանցութիւն և այլն): Այսպիսով, այն, ինչ որ նախորդների դասակարգումների մեջ գործածվում էր իբրև բաղադրութիւնների ընդհանուր անվանում, դառնում է դրանց մի տեսակի անվանումը միայն, ըստ որում այդ անվանման տակ են անվում ինչպես «իսկական», այնպես էլ «կցական» կոչված բարդութիւնները: Ինչ վերաբերում է բարդութիւնների տեսակներին՝ ըստ իրենց բառակազմական եղանակների ու կառուցվածքային առանձնահատկութիւնների, ապա բոլոր բարդութիւնները բաժանվում են չորս տեսակի՝ բուն կամ

իսկական, կցական կամ կապակցական, կրկնական և հասկանալի:

1. Բուն կամ իսկական բարդութիւններ.— Պահպանելով Մ. Արեղյանի տերմինը (իսկական), մենք, այնուամենայնիվ, գերադասում ենք բուն բարդութիւն անվանումը, որովհետև «իսկական» անվանումը ենթադրում է նաև ոչ իսկական (անիսկական) բարդութիւնների դուրսբերումը, որ և, ինչպես ցույց տվինք, պայմանավորել է բարդութիւնների բաժանումը իսկական և անիսկական տեսակների: Մինչդեռ մեր բնութագրութիւնների համաձայն, բոլոր կարգի բարդութիւններն էլ իսկական են հենց նրանով, որ համադրական բաղադրութիւններ են՝ կազմված երկու կամ ավելի ձևայինների միավորումով: Ամեն մի բարդ բառ մեկ բառ է, անկախ այն բանից, թե կցական է, կրկնական է թե հասկանալի: Անցնելով բուն բարդութիւններին, ապա պետք է նկատի ունենալ, որ այս դեպքում «բուն» կամ «իսկական» անվանումները նշանակում են միայն, թե այս կարգի բարդութիւնները լեզվի մեջ հենց սկզբից ևնթ հանգես են գալիս իբրև բարդ բառեր, կազմվում են իբրև այդպիսիք: Բնորոշելով իսկական բարդութիւնները, Մ. Արեղյանը գրում է. «իսկական բարդութիւնների երկու բաղադրիչ մասերը միշտ միացած իբրև մեկ բառ են գրվում, և երկուսը միասին մեկ նշանակութիւն ունեն»³. Եվ այնուհետև՝ «Իսկական բարդութիւնները կազմվում են այս ընդհանուր կանոնով. 1) Բարդութիւն երկու մասերի մեջ մտնում է մի ձայնավորը, որ կոչվում է հոգակապ... 2) Բարդութիւնն առաջին մասի համար առնվում է եզակի ուղղական հոլով... 3) Բարդութիւնն առաջին անգամի վերջի փակ վանկի ձայնավորները, մնալով անշեշտ՝ կրում են ձայնափոխութիւն»⁴. Այս հատկանիշներից ոչ մեկն էլ, սակայն, չի կարող դիտվել որպես բուն կամ իսկական բարդութիւնների էական հատկանիշ: Բարդութիւնն առաջին մասերի միացած, իբրև մեկ բառ գրվելը և երկուսը միասին մեկ նշանակութիւն ունենալը միմիայն «իսկական» բարդութիւնների բնութագրերը չէ. կցական բարդութիւնները նույնպես իբրև մեկ բառ են գրվում և

³ Մ. Արեղյան, Երկեր, 2, Եր., 1974, էջ 137:

⁴ Նույն տեղում, էջ 153—154:

մեկ բառային իմաստ ունեն։ Այլ կերպ ասած, դա բարդու-
թյունների բոլոր տեսակների ընդհանուր հատկանիշն է, որ
ընդունեցինք որպես հիմք՝ բարդության ընտրության համար։
Իսկական բարդությունների կազմության համար Մ. Արեղ-
յանի սահմանած երեք կանոնները նույնպես պետք է ընդու-
նել վերապահությամբ։ Այդ կանոններից ոչ մեկը չի կարող
բուն կամ իսկական բարդությունների էական հատկանիշ հա-
մարվել։ Հողակապի մասին արդեն խոսել ենք. բարդություն-
ները կարող են կազմվել նաև առանց հողակապի։ Ինքը՝ Մ.
Արեղյանն էլ իսկական բարդությունների մեջ իբրև օրինակ
բերում է քոչվորս բառը, որ նշանակում է, թե նա նույնպես
որոշ անհոգակապ բարդություններ ընդունում է որպես իս-
կական բարդություններ։ Իբրև ընդհանուր սկզբունք կարելի է
ընդունել, որ հողակապով բարդությունները, ինչ ճանապար-
հով էլ առաջացած լինեն, բուն կամ իսկական բարդություն-
ներ են, բայց հակառակը չի կարելի ասել (այսինքն՝ չի կա-
րելի ասել, թե առանց հողակապի բարդությունները բուն կամ
իսկական բարդություններ չեն)։ Երկրորդ՝ ձայնավորների
փոփոխությունները ժամանակակից հայերենի համար մա-
սամբ միայն կարելի է ընդունելի համարել. բարդությունների
մեջ, որպես ընդհանուր կանոն, բաղադրական հիմքերը հան-
դես են գալիս ուղղական հոլովի ձևով, եթե այդ հիմքերն իբ-
րև բառ գոյություն ունեն։ Բայց կան բազմաթիվ բաղադրա-
կան հիմքեր, որոնք արմատական ձևով չեն գործածվում իբրև
բառ, ինչպես, օրինակ, գիտակից, հասարակագետ, գիտա-
կարգ, հեռանաբ, հեռավարում, հեռուստատեսություն բառերի
գետ/գիտ և հեռ հիմքերը։ Հայտնի է նաև, որ բայերի բաղա-
դրական հիմքերի մի զգալի մասը այդպիսի հիմքերն են կազ-
մում, ինչպես՝ -խույս/խուս- (խուսանավել, կենտրոնախույս),
-սույզ/սուզ- (չրասույզ, սուզանավ), -թիս (ինքնաթիս), -առա
(զազատար) և այլն։ Վերջապես, ունենք բազմաթիվ բաղա-
դրական հիմքեր, որոնք հոլովաձևեր կամ բայահիմքեր են,
ինչպես՝ աշնանացան (աշնան- սեռ. հոլով), աշխարհագրա-
ցողություն (զգաց- բայահիմք), իմացարձություն (իմաց-
բայահիմք) և այլն։ Պետք է հիշել նաև կենս-, կյան-, աու-
և նման բազմաթիվ հիմքերը, որոնք թեև ալիանդական հիմ-
քեր են, բայց այս դեպքում դա որևէ կարևորություն չունի,

որովհետև դրանք կենսունակ են ժամանակակից հայերենում։
Ի վերջո, երրորդ հատկանիշը (կանոնը) նույնպես պարտադիր
հատկանիշ չէ, այլ ուղեկցող հնչյունափոխական իրողություն,
բայց որում այդ փոփոխություններին ենթարկվում են ոչ բո-
լոր հիմքերը։ Ավելին. նույնիսկ այն հիմքերում, որոնց մեջ
սովորաբար կատարվում են հերթազայական հնչյունափոխու-
թյունները, կարող են բարդությունների մեջ մտնել նաև ա-
ռանց հնչյունափոխության, մանավանդ նորակազմ բարդու-
թյուններում, ինչպես՝ հումակեր (նաև՝ հմակեր), դուլլաշափ,
հնչույթաբանություն և այլն։

Այսպիսով, բուն կամ իսկական բարդությունների ըն-
տրության հիմքը պետք է համարել այն, որ դրանք բնութա-
գրվում են երկու բաղադրական հիմքերի՝ սերող և բաղադրող
հիմքերի անպայման առկայությամբ։ Առանց այդ երկու հիմ-
քերի բուն կամ իսկական բարդություն չկա։ Ըստ այսմ՝ սե-
րող և բաղադրող հիմքերով կազմված ամեն մի բաղադրյուն
բուն բարդություն է, ինչպես՝ տնամեծ, այգեփուր, խաբիրա-
կից, դարձակետ, քոչվորս, հեռախոսալար, բանիմաց, հեռու-
սակառավարում, դրադարանագետ և այլն։ Հեշտ է նկատել,
որ բերված բոլոր բառերն էլ բարդ բառեր են և այն էլ՝ բուն
բարդություններ, բայց որում բոլորն էլ բաղադրած են երկու
հիմքերից՝ սերող և բաղադրող (օր. տն-մեծ, այգե-փուր, խոս-
հրդ-կից, դարձ-կետ, թռչն-որս, հեռախոս-լար, գրադարան-
գետ, բան-իմաց և այլն)։ Բաղադրիչների (բաղադրական հիմ-
քերի) ուղղական հոլովաձևով, թեք հոլովներով կամ բայա-
հիմքով լինելը բնութագրում է բաղադրության հիմքերն ու
դրանց զանազան տարբերակները և ոչ թե բարդությունները։
Այսպիսով, եթե բուն բարդությունների կառուցվածքային
հատկանիշն է այն, որ նրանք կազմվում են բաղադրական
հիմքերից, ապա կազմության եղանակի էական հատկանիշն
է բաղադրիչների համագրումը (սինթեզը) մեկ անբաժանելի
միասնության մեջ։ Այս նկատի ունենալով, բուն բարդություն-
ները կարելի է կոչել նաև համագրական բարդություններ։

Վերջապես, ունենալով իրենց բաղադրական հիմքերը, բուն
բարդությունները դառնում են այդ հիմքերի համակցության
կաղապարներ, որոնց հիման վրա կազմվում են նորանոր
բարդություններ. օրինակ գր- և դարան հիմքերից ա հողա-

կապով կազմվել է գրադարան բարգոյթունը, որի կաղապարով էլ կարելի է կազմել և կազմվել են գրադարակ, գրապահարան, գրապահոց և այլն, կամ բաղաբամերձ բարգոյթյան կաղապարով գյուղամերձ, տնամերձ, կայարանամերձ, հրապարակամերձ և այլն, և այլն:

2. Կցական բարգոյթյուններ.— Կցական են այն բարգոյթյունները, որոնք ստացվել կամ ստացվում են վերլուծական բաղադրություններից՝ նրանց բաղադրիչների միավորումով, կցումով: Ըստ այսմ, նրանք բարգոյթյուն են և նույնանում են բոլոր բարգոյթյուններին նրանով, որ մեկ բառ են կազմում, և տարբերվում են նրանով, որ այդ մեկ բառն ստացվում է բառերից կազմված կապակցություններից: Վերջին հաշվով, հարադրությունները, բայական թե անվանական, կայուն բառակապակցությունները և հատվածական բաղադրությունները, այլ կերպ ասած, բոլոր վերլուծական բաղադրությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ բառակապակցություններ: Երբ բառակապակցությունը բաղադրիչների միավորումով վերածվում է մեկ բառի, հանդես է գալիս արդեն որպես բարգոյթյուն: Այսպես, օրինակ, անց կենալ, առաջ փառում, զլուխ գործոց, շոտ հարկանի, ի միջի այլոց, կես օր, փառն գրիչ, բռնկի դառ, խոսքի մասային մեկ բառ չեն կազմում. դրանց բաղադրիչները պահպանում են իրենց բառային ինքնուրույնությունը, համապատասխանաբար՝ նաև բառանշատ դադարը և բառային անկախ շեշտը, հետևաբար և բառակապակցություններ են, կամ՝ բառակազմական տեսակետից՝ վերլուծական բաղադրություններ: Սակայն երբ այդ բաղադրիչների միավորումով ստացվում են անցկացնել, առաջաչառ, զլուխգործոց, շոտհարկանի, իմիջիայլոց, կեսօր, փառնգրիչ, բռնկիդառ, խոսքիմասային բառերը որպես մեկական բառ, այդ բառակապակցությունները վերածվում են բարգոյթյան մի տեսակի, այն է՝ կցական բարգոյթյան: Կցական և բուն բարգոյթյունների էական տարբերությունն է այն, որ բուն բարգոյթյունները կազմվում են բաղադրական (սերող և բաղադրող) հիմքերից, մինչդեռ կցական բարգոյթյունները զուրկ են բաղադրական հիմքերից. նրանք կազմվում են բառակապակցությունների անդամների միավորումով, որոնք չենք կարող դիտել որպես բաղադրական հիմքեր, թեև այդ անդամները

բն կարող են իրենց ձևով համընկնել բաղադրական հիմքերին (հմմտ. զնգացիր բուն բարգոյթյան —ցիր բաղադրող հիմքը և ցիրուցան կցական բարգոյթյան ցիր բաղադրիչը, որ ցիր բառն է): Այն հանգամանքը, որ կցական բարգոյթյունները ստացվում են բառակապակցություններից (հարադրություններ, կայուն բառակապակցություններ և այլն), հնարավոր է դարձնում դրանց՝ մերթ որպես հարադրություն կամ կայուն բառակապակցություն, մերթ իբրև կցական բարգոյթյուն գործածելը, ինչպես՝ ի միջի այլոց/իմիջիայլոց, այնու ամենայնիվ/այնուամենայնիվ, այսու հաեդե՛րձ/այսուհանդերձ, մեկ ընդ մեզ/մեկընդմեջ, մեջ բերում/մեջբերում, գործ ածել/գործածել, շոտ աչխանի/չառաչխանի, հինգ մետրանոց/հինգվետրանոց, այս տեղ/այստեղ, մին ու հառ/մինուհառ, թիլ պանի/թիլպանի, խոսքի մասային/խոսքիմասային և այլն: Այսպիսի զուգահեռ գործածություններով ժամանակի ընթացքում սովորական է դառնում բաղադրիչների, այսինքն՝ բառակապակցության անդամների, միահար, որպես մեկ բառ արտասանելը և գրելը, որով և աստիճանաբար հաղթանակում է մեկ բառի, այսինքն՝ կցական բարգոյթյան վերածված ձևը: Բերված օրինակների մի մասում արդեն հաղթանակել է միասին գրությունը (իմիջիայլոց, այնուամենայնիվ, մեկընդմեջ, մեջբերում, այստեղ, մինուհար), մի մասում առայժմ ավելի սովորական է բաղադրիչների առանձին-առանձին գրությունը:

Իբրև կցական բարգոյթյունների լրացուցիչ հատկանիշ պետք է ընդունել այն, որ դրանց բաղադրիչները սովորաբար շեշտափոխական հնչյունափոխությունների չեն ենթարկվում, ինչպես՝ ծուռումուռ, հիսունամյա, կեսօր, մեջտեղ և այլն: Ըստ այսմ, այն ղեպքերում, երբ բաղադրիչներից առաջինում առկա է ձայնավորի շեշտափոխական հնչյունափոխություն, ունենք բուն բարգոյթյուն, ինչպես՝ կիտաջ օկիսով շափ դեպի աջ», հիսնամյա, ծոֆիթ և այլն: Այսպիսի քննադրության հիմքն է շեշտափոխական հերթագայությունը հնչյունափոխությունը, որ ինքնին արդեն բառակապակցության անդամը փոխարինում է բաղադրական հիմքով (նախաշեշտ գիրքային տարբերակով): Հատկանշական է նաև, որ այդպիսի ղեպքերում հաճախ երևան է գալիս նաև ա հոդակապը, ինչպես՝ կեսբերան, բայց՝ կիսաբերան, ծուֆիթ, բայց՝ ծուֆիթ կամ ծոֆիթ, պինդզուլա, բայց՝ պնդազուլա և այլն:

կցական բարդությունների կառուցվածքային հիմնական հատկանիշն է այն, որ դրանք ստացվում են ոչ թե բաղադրական հիմքերի, այլ դանազան կարգի բառակապակցությունների անդամների միավորումով, ըստ որում կազմության (անդամների միավորման) եղանակն է կցումը (ազլյուտիանցիան):

Մանրություն.— Քանի որ բարդությունների տեսակների այս բնութագրությունները, ինչպես և ինքը՝ բարդությունների դասակարգումը հիմնված է համաժամանակյա մտեցման վրա, ապա կցական բարդությունները իսկականներից (բուն բարդություններից) տարբերելու համար պետք է ընդունել հետևյալ գործնական չափանիշը: Եթե տվյալ բարդությունը կարող է վերածվել հարադրության կամ այլ կարգի բառակապակցության՝ բաղադրիչների ուղղակի անջատումով, առանց որևէ ձևափոխության և առանց իմաստային միասնությունը խախտելու, ապա դա կցական բարդություն է, ինչպես՝ այստեղ—այս տեղ, գլուխգործոց—գլուխ գործոց, գործածել—գործածել, վերածել—վեր ածել: Ըստ այսմ, այն բարդությունները, որոնք չեն կարող վերածել կապակցության (հարադրությունների կամ լրացական բառակապակցությունների, հատկապես բաղադրությունների և այլն), այլևս չեն կարող դիտվել որպես կցական բարդություններ, ինչպես՝ հանձնարար, նուշարար, ակնկալել, օրհնողիք, կիրառել և այլն: Մ. Աբեղյանն էլ, խոսելով կցական բարդությունների մասին, գրում է. «Մի անգամ, որ կան առանց հոդակապի բազմաթիվ բառեր, ինչպիսի ծագում էլ դրանք ունենան, դրանց անալոգիայով են կազմվել, անշուշտ, վերևի բառերի մի մասը, և կազմվում են ուրիշ նոր բառեր: Այսպիսով իսկական բարդությունը նույնանում է կցական բարդության հետ»⁵: Այս նկատի ունենալով էլ, գործնականորեն նպատակահարմար է կցականները բուն բարդություններից տարբերելու համար առաջնորդվել վերջ տրված կանոնով: Այս դեպքում հնարավոր է ոչ միայն նախկին կցական բարդությունների բնութագրությունը իբրև բուն բարդություն, այլև հակառակը. օրինակ՝ հորհրալբ բառը հին հայերենում կարող է դիտվել որպես բուն բարդություն (և ծագումնաբանորեն այդպես է), բայց արդի հայե-

⁵ Նույն տեղում, էջ 188:

րենում նա կարող է դիտվել իբրև կցական, քանի որ կարող ենք ազատորեն վերածել նաև հորալբ բառակապակցության:

3. **Կրկնական բարդություններ.**— Կրկնական են այն բարդությունները, որոնք ներկայացնում են ամբողջական բառի կամ նրա մի մասի կրկնությունը մեկ բառի կազմում, ինչպես՝ կցկցել, կցցցել, կափկափել, վազվզել, փայլփլել, շարշարել, զունդազունդ, ծուռուծուռ (նան՝ ծուռուծուռ), բազմաբազում, կարմրակարմիր, մեծամեծ, շարաշար և այլն: Ինչպես կրկնավոր հարադրությունները, այնպես էլ կրկնական բարդությունները կարող են կազմվել բառի անփոփոխ կրկնությամբ, ինչպես՝ զունդազունդ, ծանրածանր, մեծամեծ, կափկափել, կամ էլ՝ փոփոխված ձևերով, ինչպես՝ փայլփլել, վազվզել, կցցցել, մարմրել, խելխել, կալկարմել և այլն: Իրենց փոփոխություններով կրկնական բարդությունները շատ ավելի բազմազան են, քան կրկնավոր հարադրությունները: Վերջապես, կրկնական բարդությունները կարող են ներկայացնել կրկնավոր հարադրությունների միավորումը մեկ բարդության մեջ՝ կցման եղանակով, կամ էլ կազմվել իբրև բուն բարդություն՝ կրկնության բաղադրիչների համադրումով, հաճախ նաև հոդակապ ստանալով: Այսպես՝ շարշարել, մոտմոտել, գլուխգլուխ, տենտուն, ծուռուծուռ, ծակուծուկ, կասկարմրել, մեկամեկ կցումով միավորված բարդ բառեր են, ըստացված շար-շար, մոտ-մոտ, գլուխ-գլուխ, տն-տուն, ծուռ ու մուռ, ծակ ու ծուկ, կաս-կարմիր, մեկ առ մեկ կրկնավոր հարադրություններից, իսկ շար-ա-շար, բազմ-ա-բազում, կարմր-ա-կարմիր, բողբոջ, շոշափ, խրխիռ կրկնական բարդությունները այդ կարգի հարադրությունների միավորումը չեն, այլ բառի կամ նրա մի մասի կրկնությունը՝ մեկ բարդ բառի կազմում: Ըստ այսմ, կրկնական բարդությունները իրենց կազմության եղանակով կարող են լինել թե՛ կցական և թե՛ համադրական: Երկու դեպքում էլ, սակայն, կրկնական բարդությունները որոշակիորեն տարբերվում են և՛ բուն բարդություններից, և՛ կցականներից: Բուն բարդություններից տարբերվում են նրանով, որ կրկնական բարդությունները, ինչ եղանակով էլ կազմված լինեն, լուրջնաբաղադրական հիմքեր. կրկնական բարդությունների բաղադրիչները պարզապես

կրկնվող բառն ինքն է՝ ամբողջությամբ կամ մի մասով մի-
այն: կցական բարդություններից տարբերվում են նրանով, որ
կրկնավոր հարադրությունները բառակապակցություններ չեն,
հետևաբար և չունեն կապակցության քերականորեն միմյանց
հետ կապված անդամներ. բառակրկնությունները, որպես վեր-
լուծական բաղադրություններ, ունեն կրկնության եզրեր կամ
մասեր, որոնց միավորումով էլ կազմվում են կցական բնույ-
թի կրկնական բարդությունները:

4. Հատվածական բաղադրյուններ.— Այս բարդություն-
ները, ինչպես ասվել է, հատվածական բաղադրությունների
բաղադրիչների միավորումով կազմվող բարդություններն են:
Իրենց կազմության եղանակով դրանք նույնանուն են կցա-
կան բարդությունների հետ, բայց տարբերվում են նրանցից,
ինչպես և բարդության մյուս տեսակներից, իրենց բաղադրա-
կան հիմքերի յուրահատկությամբ: Հատվածական բարդու-
թյունների բաղադրող հիմքը միշտ բաղադրյալ է, սովորաբար
—ական, —ային, —յան ածանցով կազմված ածական, սակավ
դեպքերում՝ —ություն ածանցով կազմված գոյական, այսպես՝
ուզմաօղային, պատմաառնադիտական, պատմահամեմա-
տական, անտառամարգագետնային, զաշտաայգեգործական,
պողարանջարաբուծություն բարդությունների բաղադրող հիմ-
քերն են օղային, անտեսագիտական, համեմատական, մար-
գագետնային, այգեգործական, բանջարաբուծություն բառերը:
Սերող հիմքը, դրան հակառակ, ածականի կամ գոյականի
հատված, կրճատված մասն է, որը և նկատի ունենալով էլ
կոչում ենք հատվածական հիմք, ըստ որում կրճատվել, հատ-
վել կարող է, ինչպես արդեն ասել ենք, ոչ միայն նույնական
կամ հոմանիչ ածանցը, այլև բարդության նույնական կամ
հոմանիչ հիմնական ձևույթը: Այսպես, օրինակ, բերված հատ-
վածական բարդությունների սերող հիմքերն են ռազմա—,
պատմա—, անտառա—, զաշտա—, պողա—, որոնք կրճատված
մասերն են ռազմական, պատմական, անտառային, զաշտա-
վարական, պողարաբուծություն բառերի: Որպես հատվածական
սերող հիմքերի ուրույն հատկանիշ պետք է ընդունել այն, որ
նրանք, իբրև ընդհանուր կանոն, հոգակապ են ունենում, ըստ
որում հոգակապը միշտ էլ սերող հիմքի տարրն է, ինչպես՝
պողա— (պողարանջարաբուծական), լեզվա— (լեզվագրական),

ռազմա— (ռազմաբաղադրական), պատմա— (պատմատեսա-
գիտական), անտառա— (անտառամարգագետնային), զաշտա—
(զաշտաայգեգործական), անտառա— (անտառաբարդությունաբերա-
կան) և այլն: Ստացված լինելով ածանցավոր և բարդածանց
բառերի կրճատումով, հատվածական սերող հիմքերը պահ-
պանում են նաև բարդության կամ ածանցման մեջ կրած հըն-
չունափոխությունները, ինչպես՝ անտառաբարդությունաբերական,
պողարանջարաբուծական, բժշկասանիտարական, լեզվագրա-
կան և այլն, որոնց մեջ անտառ—, պողա—, բժշկա—, լեզվա—
հատվածական սերող հիմքերը պահպանել են անտառական,
պողարածական, բժշկական, լեզվա(բանա)կան բառերի մեջ
պտուղ, անտառ, բժիշկ, լեզու բառերի կրած հնչյունափո-
խությունները: Այս երկու հատկանիշները թույլ են տալիս
տարբերելու հատվածական բարդությունները այնպիսի բա-
ռերից, ինչպիսիք են պտուղանջարառ, անտառառնաբուծյուն,
գյուղխորհուրդ, գյուղինստիտուտ, հարավսլավական, հյուսիս-
ամերիկյան, հարավլիեռնամական և այլն, որոնց պտուղ—,
բանջար—, անտառ—, գյուղ—, հարավ—, հյուսիս—
բաղադրիչնե-
րը պողեզեզի (կամ պտուղների), բանջարեղենի, անտառա-
յին, գյուղական, գյուղատնտեսական, հարավային, հյուսիսա-
յին բառերի կրճատումներն են: Այս կարգի բաղադրություն-
ները, հենց այն պատճառով, որ չունեն Կ հոգակապով հատ-
վածական հիմք, ինչպես և՛ չեն պահել կրճատված բառի
հնչյունական փոփոխությունը (օր. պտղեզեն, բայց՝ պտուղ-
բանջարառ), պետք է դիտվեն որպես յուրահատուկ հապա-
վական բաղադրություններ:

Բ. Բ արդու թ յ ու ն ն եր ի տ ե ս ա կ ն եր ն ր ս տ ր ա-
զ ա դ ը ի չ ն եր ի ք եր ա կ ա ն ա կ ա ն հ ա ր ա բ եր ու-
թ յ ա ն.— Բուն բարդությունների բաղադրիչները միմյանց
հետ որոշակի շարահյուսական հարաբերության մեջ են գտնը-
վում, որով և բաղադրվում է բարդության ներքին ձևը: Այս-
պես, օրինակ, գրադարան բառի ներքին ձևն է «գրքերի դա-
րան», որի առաջին անդամը լրացումն է երկրորդի. երկուսը
միասին ներկայացնում են հատկացուցիչ-հատկացյալ կա-
պակցություն, այդպես և՛ զանգրամազ զգանգուր մազերով,
զանգուր մազեր ունեցող» (զանգուր՝ որոշիչ), մատենագիր
ժամայան գրող» (մատյան՝ ուղիղ ինդիք), զբանապատ զգրա-

հով պատված» (զրահով՝ անուղղակի խնդիր), ջրակյաց «չբրում ապրող» (չբում՝ տեղի պարագա), մեծավիթխար «մեծ և վիթխարի» (համադասական կապակցություն) և այլն:

Բարդությունների բաղադրիչների շաբաճյուղական հարաբերությունները լինում են համադասական և ստորադասական:

Համադասական հարաբերություն են արտահայտում շաղկապական ու հարակցական հարադրություններից ստացված կցական բարդությունները և հատվածական բարդությունների մեծագույն մասը, ինչպես՝ անցուղարձ, կեռվում, տունուտեղ կամ տունտեղ, գիտանեազոտական, հողակլիմայական և այլն: Բաղադրիչների համադասական հարաբերությամբ բուն բարդությունները քիչ են, ըստ որում եղածներն էլ հոմանիշ կամ մերձիմաստ բաղադրական հիմքեր ունեն, ինչպես՝ ազգատոհմ (ազգ և տոհմ), մեծավիթխար (մեծ և վիթխարի), անագարգանդ (ահ և զարգանդ ազգոզ), բյուրարագում (բյուր և բաղում), գաղտնածածուկ (գաղտնի և ծածուկ) և այլն: Համադասական բարդությունները մեծ մասամբ արտահայտում են իմաստի զորացում՝ սաստկացում, հավաքականություն, միասնություն:

Ստորադասական հարաբերություն են արտահայտում բուն բարդությունների մեծագույն մասը, ինչպես և՛ կցական ու հատվածական բարդություններից նրանք, որոնք ստացվել են ստորադասությամբ կապված հարադրությունների ու հատվածական բաղադրությունների բաղադրիչների միավորումով, ինչպես՝ գետափ (= գետի ափ— հատկացուցիչ— հատկացյալ), երկարավիզ (= երկար վզով— որոշիչ— որոշյալ), հողագործ (= հողը գործող՝ մշակող (հողը՝ խնդիր), իբրանցում (= իբր անցնելը— հարադրություն), սուտաան (= սուտ առել), ֆիզիկաաշխարհագրական (= ֆիզիկական աշխարհագրական— ֆիզիկական աշխարհագրության վերաբերող), լեզվահնչաբանություն (= լեզվաբանական հնչաբանություն) և այլն:

Հայերենի բարդությունների մեջ, իբրև կանոն, լրացյալն է ստորադասություն արտահայտող բուն բարդությունների բաղադրող հիմքը, իսկ կցական և հատվածական բարդությունների մեջ՝ վերջին բաղադրիչը: Այսպես՝ բերված օրինակների մեջ լրացյալներն են՝ -ափ, -վիզ, -գործ, -անցում, -աան, -աշխարհագրական, -հնչաբանություն, իսկ սերող հիմ-

քերը (կցական ու հատվածական բարդությունների նախորդող բաղադրիչները)՝ լրացումներ են, ինչպես՝ գետ-, երկար-, հող-, իբր-, սուտ-, ֆիզիկա-, լեզվա- բաղադրիչները: Կան գրաբարից ժառանգված սակավաթիվ բուն բարդություններ, հունարենի պատճենումով կազմված, որոնց բաղադրիչներից առաջինն է լրացյալը, ինչպես՝ մայրաքաղաք, արժանապատիվ, արժանախալատ, սրանցից առաջինը գիտակցվում է իբրև «մայր քաղաք», այսինքն՝ մայր բաղադրիչն ընդունվում է որպես գոյական որոշիչ, ուստի և՛ լրացում, իսկ քաղաք-ը՝ լրացյալ: Մյուս երկուսը գիտվում են իբրև շրջուն կապակցություն՝ արժանի հավասի, արժանի սյամվի, ըստ որում արժանի բառը սովորական խոսքի մեջ էլ հաճախ ստանում է ետադաս լրացյալ (հմմտ. արժանի մի բանի, արժանի բարձր գնահատականի, արժանի է խրախուսանքի և այլն): Նույնպիսի շրջուն շարադասությամբ կարող են լինել նաև կայուն բառակապակցությունների բաղադրիչները, ինչպես՝ գլուխ գործոց, ի միջի այլոց, որոնք, սակայն, գրաբարատիպ կապակցություններ են: Այսպիսով, նույնիսկ այն բարդությունները, որոնք օտարաբան կազմություններ են եղել, այժմ արդեն հասկացվում են իբրև ճիշտ կազմություններ՝ բաղադրիչների կապակցության օրինաչափ հարաբերությամբ:

4. Անանցում, անանցավոր բառեր և անանցներ

Անանցումներն այն համադրական բաղադրություններն են, որոնք իրենց կազմում ունեն մեկ կամ ավելի ածանցներ (երկրորդական բառակազմական ձևույթներ), ինչպես՝ տնային (տուն + ային), գործարանային (գործ + արան + ային), հեռուսկանոն (հեռու + սկան + ուն), տնտեսավարական (տնտես + վար + սկան), անգործածականություն (ան-գործած + ալան + ուրյուն) և այլն: Իրենց կազմում ածանց կամ ածանցներ ունեցող համադրական բաղադրությունները կոչվում են անանցավոր բառեր: Ածանցների քանակային հատկանիշով ածանցավոր բառերը լինում են մեկաձանց, այսինքն՝ իրենց կազմում միայն մեկ ածանց ունեցող բառեր (տն-ային, գիրք, ան-չար, շարժ-ում, ուժ-գին և այլն), և բազմաձանց՝ իրենց կազմում մեկից ավելի ածանցներ ունեցող ածանցավոր բա-

ներ (հերոս-ական-որեն, գործ-արան-ային, դպր-ոց-ական, ան-գործած-ական-ուրյուն, մտ-ավոր-ական-ուրյուն և այլն):

Ամեն մի ածանցում, որպես բաղադրություն, ունի երկու բառակազմական միավոր՝ բաղադրական հիմք և ածանց: Հստալյամ՝ յուրաքանչյուր բաղմածանց բառ ներկայացնում է իր կազմում եղած ածանցների թվով հաջորդական ածանցումների շարք: Այսպես, անկղբունեայնուրյուն բաղմածանց բառը կարելի է ներկայացնել ածանցումների հետևյալ հաջորդական շարքով. սկիզբ+ունք>սկզբունք+ային>սկզբունքային+ություն>սկզբունքայնություն+ան->անսկզբունքայնություն. այդպես էլ՝ համա+կարգ>համակարգ+ային>համակարգային+ություն>համակարգայնություն+ան->անհամակարգայնություն. — գործ+արան>գործարան+ային>գործարանային+ներ->ներգործարանային և այլն:

Ինչպես բարդությունների, այնպես էլ ածանցումների բաղադրական հիմքերը կարող են լինել պարզ և բաղադրյալ-օրինակ՝ տնային, հուսկ, ձեռնոց, դասարան ածանցումների տն- (տուն), հուսկ-, ձեռն-, դաս- հիմքերը պարզ են, իսկ դասարանային, գրային, անկողնակալ, տնտեսվարություն ածանցումների դասարան-, գր- (գիր), -կողմնակալ, տնտեսվար- հիմքերը՝ բաղադրյալ: Ածանցումների բառակազմական բնութագրության համար, սակայն, գործնականորեն նպատակահարմար է բաղադրյալ հիմքերը ևս տարբերակել ըստ բաղադրության բնույթի, այն է՝ ածանցավոր ու բարդ, որի համաձայն ածանցումների հիմքերը կբաժանենք երեք կարգի՝ պարզ, ածանցավոր և բարդ, ինչպես՝ աշ-ք, դաս-արան, ձեռն-ոց (պարզ հիմքերով ածանցումներ), գասարան-ային, գր-ային, պատկերավոր-ուրյուն, ան-կյանք (ածանցավոր բաղադրյալ հիմքերով ածանցումներ), տնտեսվարական, կուսակց-ուրյուն, ան-կարգապահ, գրադարան-ային (բարդ բաղադրյալ հիմքերով ածանցումներ): Բաղադրական հիմքերի այդ տեսակների հիման վրա էլ կարելի է տարբերել ածանցումների երեք տեսակ. ա) պարզածանցավոր (պարզ հիմքերով բաղադրված ածանցավոր բառեր), ինչպես՝ աշք, դասարան, ձեռնոց, շարք, անտուն, դժգույն և այլն, բ) հարածանցավոր (ածանցավոր հիմքով ածանցումներ), ինչպես՝ դասարանային, պատկերավոր-ուրյուն, ան-կյանք և այլն, գ) բարդա-

ծանցավոր (բարդ հիմքերով ածանցումներ), ինչպես՝ արև-տեսվար-ական, կուսակց-ուրյուն, ան-կարգապահ, գրադարան-ային և այլն: Պարզածանցավոր բառերը մենածանց են, հարածանցավոր բառերը՝ բազմածանց, իսկ բարդածանցավոր բառերը կարող են լինել և՛ մենածանց, և՛ բազմածանց, ինչպես՝ տնտեսվար-ուրյուն, գրադարան-ային, ան-կարգապահ, երկրիմ-ուրյուն, քառեճոգ-ուրյուն (մենածանց բառեր) և անտնտեսվար-ուրյուն, ան-կարգապահ-ուրյուն, ներ-կուսակցական, առաջադիմ-ական-ուրյուն (բազմածանց բառեր): Բերված բարդածանցավոր բառերը այնպիսի հիմքեր ունեն, որոնք կազմված են միայն հիմնական ձևայիններից (բառերից կամ արմատներից), բայց հնարավոր է, որ բարդ բաղադրյալ հիմքի կազմում արդեն լինի ածանց, այսինքն՝ բարդության սերող հիմքը ածանցավոր հիմք լինի, ինչպես՝ շաբաթանային, հնչյունաբան-ական, հեռուստացույց-ային և այլն: Հասկանալի է, որ այդ բարդածանցավոր բառերի հիմքերը, այն է՝ շաբաթան, հնչյունաբան, հեռուստացույց- բարդածանցավոր բառեր են, ուստի և դրանցից նոր ածանցումներով կազմված բառերը արդեն բազմածանց բառեր են իբրև բարդածանցավորներ:

Ածանցները կարող են բաղադրական հիմքին միանալ սկզբից կամ վերջից, ինչպես՝ ան-չար, դժ-գոհ, եերա-դաս, հակա-գիր և կարգ-ին, ձեռն-ոց, քաշ-ուրյուն, դեղն-եմի և այլն: Հիմքի սկզբից դրվող ածանցները նախածանցներ են, վերջից միացող ածանցները՝ վերջածանցներ: Դրան համապատասխան էլ նախածանցով կազմված ածանցումները կոչվում են նախածանցավոր, վերջածանցներով կազմված ածանցումները՝ վերջածանցավոր, իսկ միաժամանակ և՛ նախածանց, և՛ վերջածանց ունեցողները՝ նախածանցավոր-վերջածանցավոր, ինչպես՝ ան-չար, դժ-գոհ, եերա-դաս, հակա-գիր (նախածանցավոր բառեր), կարգ-ին, ձեռն-ոց, քաշ-ուրյուն, դեղն-եմի (վերջածանցավոր բառեր), ան-սար-ք-ուրյուն, ասար-ընթերց-ում, ան-սկզբ-ունք-այն-ուրյուն, դժ-բախտ-արար (նախածանցավոր-վերջածանցավոր բառեր):

Ժամանակակից հայերենի վերջածանցների մեծագույն մասը ձայնավորով է սկսվում, որով և վերանում է հիմքը և ածանցն իրար միացնող հոդակապի անհրաժեշտությունը, ինչ-

պես՝ ծով-ակ, հարգ-անձ, թթ-ենի, հող-եղեն, բազմ-ոց, պան-արան և այլն: Համեմատաբար փոքր թիվ են կազմում բազմաշնով սկսվող վերջածանցները, որոնք հիմքին են միանում ա հոդակապով, քիչ դեպքերում՝ առանց հոդակապի, ինչպես՝ ՎՔ-աստան, Ռուս-աստան, բայց՝ Տաշիխտան, Ռուգբեկ-ստան, զեղիկավոր, թիկնոցավոր, գուրանավոր, բայց՝ հայցվոր, հնձվոր և այլն:

Ինչպես վերը ասվել է, բարդութունների հոդակապը գործնականորեն նպատակահարմար է հատկացնել սերող հիմքին, իսկ ածանցումների մեջ՝ ածանցներին: Ածանցների համար սա ունի նաև այն արդարացումը, որ շատ դեպքերում հոդակապը դարձել է արդեն ածանցի անբաժան տարրը, իսկ անհոդակապ ձևն այլևս չի գործածվում, ինչպես -ական, -ային ածանցները, որոնց անհոդակապ ձևերն այլևս գործածական չեն: Շատ ածանցների հոդակապավոր և անհոդակապ ձևերը, ինչպես և նախնական բնի տարբեր ձայնավորներով ձևերը հանդես են գալիս որպես միևնույն ածանցի տարբերակներ, ինչպես՝ -անոց/-նոց (գլխ-անոց, ճակատ-անոց, թև-նոց, թիկ-նոց), -աստան/-ստան (Հայ-աստան, Ռուս-աստան, Քրդը-ստան, Հարեշ-ստան), -ավոր/-վոր (գութան-ավոր, սալ-վոր), -ացի-եցի/-ցի (շիրակ-ացի, մեղր-եցի, լեռն-ցի), -ացում-ցում (մս-ացում, տուլմա-ցում, փեսա-ցում), -եստ/-իստ/-ուստ (գով-եստ, հանգ-իստ, փախ-ուստ) և այլն:

Ժամանակակից հայերենի նախածանցները, վերջածանցների համեմատությամբ, փոքրաթիվ են և կարող են ներկայացվել հետևյալ ցուցակով:

- Ան-. ան-կեղծ, ան-սովոր, ան-զեն, ան-տուն, ան-կայուն
- Անդր-/անդրա-. անդր-ժովյան, անդր-օվկիանոսյան, անդրա-դարձ, անդրա-ձիգ
- Ապ-/ապա-. ապ-երջանիկ, ապ-ուշ, ապա-բախտ, ապակենտրոնացնել
- Առ-/առա-. առ-լի, առ-կայծել, առ-ինքնել, առա-դրել, առատակել
- Արտ-/արտա-. արտ-ածել, արտ-ասանել, արտա-ժամ (յա), արտա-սանդուղք

Բաղ-/բաղա-. բաղ-դատել, բաղա-դրել, բաղ-արկել
Բաց-/բացա-. բաց-արձակ, բաց-օթևան, բացա-զատել, բացա-կա

Դեր-. դեր-անուն, դեր-բայ, դեր-կոմա
Դժ-. դժ-բախտ, դժ-գոհ, դժ-կամ

Ենթ-/ենթա-. ենթ-անրակային, ենթա-դրել, ենթա-դասել, ենթա-շրջան, ենթա-վարպետ

Ընդ-. ընդ-գծել, ընդ-հատել, ընդ-առաջ, ընդ-հանուր, ընդ-հատակյա, ընդ-դատյա

Հակ-/հակա-. հակ-ասություն, հակ-ազդել, հակա-դիր, հակա-հարված

Համ-/համա-. համ-ընդհանուր, համ-արժեք, համա-միտ, համա-տեղել

Հար-/հարա-. հար-ասություն, հար-ածանցավոր, հարա-կից, հարա-դրել

Մակ-/մակա-. մակ-դիր, մակ-երես, մակ-նիշ, մակա-զրել, մակա-կար

Նախ-/նախա-. նախ-օրյակ, նախ-ազուտ, նախ-աճաշ, նախ-ընտրական, նախա-զավիթ

Ներ-/ներա-. ներ-դիր, ներ-արկել, ներ-կուսակցական, ներա-կա, ներա-զննել

Շաղ-/շաղա-. շաղ-կապ, շաղա-շարել, շաղա-պատել
Չ-. շ-հաս, շ-գործուն, շ-խոսկան, շ-կամ, շ-զիտություն

Ստոր-/ստորա-. ստոր-երկրյա, ստոր-ջրյա, ստորա-կարգ, ստորա-բաժանում

Վեր-/վերա-. վեր-ստանալ, վեր-ընթերցել, վերա-գրել, վերա-դառնալ

Տ-. տ-գետ, տ-հաս, տ-հաճ, տ-կար, տ-ձև, տ-մարդի

Տար-/տարա-. տար-ընթանալ, տար-համոզել, տարա-տեսակ, տարա-փոխիկ

Տրամ-/տրամա-. տրամ-անցում, տրամա-բանել, տրամա-գիծ, տրամա-դիր, տրամա-խաշել

Փոխ-/փոխա-. փոխ-ըմբռնում, փոխ-հրաձգություն, փոխա-դրել, փոխա-տեղել

Ածանցների գործառական և ձևախմբատալից դասակարգությունը

Քառասպաշարը, ինչպես ասվել է, լեզվի առավել հարափոփոխ մասն է, բայց մյուս կողմից էլ նա լեզվի առավել ավանդապահ գանձարանն է: Փամանակակից լեզուների բառապաշարի միջուկային բառաֆոնդին պատկանող բաների մի զգալի մասը, մանավանդ արմատները և արմատական բաները, խոր հնագրից են գալիս: Դա, բնականաբար, վերաբերում է նաև հայերենին. անպիսի բաներ, ինչպիսիք են առֆ, ձեռֆ, աչֆ, գլուխ, օւ, ճաց, սիրտ, մարդ, ծնել, բերել, ածել, առնել, կիճ, հայր, մայր, եղբայր, ֆուր և այլն, գոյություն են ունեցել ոչ միայն հին հայերենում ու նախահայերենում, այլև այսպես կոչված հնդեվրոպական նախալեզվում (հնդեվրոպական միասնության շրջանում), այսինքն՝ մեզանից 7—8 հազարամյակ (եթե ոչ ավելի) առաջ, թեև, իհարկե, առավել կամ նվազ տարբեր ձևերով: Ժառանգված լինելով լեզվի պատմության հնագույն շրջաններից, բաները ենթարկվում են զանազան ձևափոխությունների, որի հետևանքով մթթազանցում է նաև նրանց կազմությունը: Մյուս կողմից, լեզվի պատմական զարգացման ընթացքում գործածությունից դուրս են գալիս որոշ ածանցներ և առաջանում են նորերը, որով և փոփոխվում է ածանցների համակարգը: Սրա անխուսափելի հետևանքներից մեկն է այն, որ նախկինում գործածված շատ ածանցներ հետագայում ոչ միայն չեն գործածվում նոր ածանցումներ կազմելու համար, այլև առհասարակ չեն գիտակցվում իրեն ածանց և դառնում են արմատի անբաժանելի տարրը: Այս հանգամանքը նկատի ունենալով, ածանցների գործառական դասակարգությունից առաջ պետք է տարբերել գիտակցվող և չգիտակցվող ածանցները: Փամանակակից հայերենի համար այդ տարբերակման իրեն հիմք է ծառայում ոչ թե լեզվաբանական վերլուծությունը, այլ խոսողների լեզվագիտակցությունն ու լեզվազգացողությունը, լեզվաբանական վերլուծությունը մեզ համար պարզ է դարձնում, որ, օրինակ, դալար բառը կազմվել է դալ- արմատից և -ար ածանցից, բնկեր բառը՝ բնդ-կեր, զգաստ-ը՝ գա- արմատից և գ-, -տ ածանցներից և այլն, բայց խոսող հանրության անդամները,

եթե հատկապես չեն ծանոթացել լեզվաբանական այդ վերլուծություններին, չեն էլ գիտակցում այդ բաների կազմությունը, հետևաբար և՛ ածանցների առկայությունը դրանց կազմում:

Չգիտակցվող և գիտակցվող ածանցները գործնականորեն տարբերելու համար կարելի է հիմնվել հետևյալ տվյալների վրա. ա) եթե տվյալ բառի մի հատվածը որոշակիորեն գիտակցվում է որպես կազմող բաղադրիչ և իբրև այդպիսին հանդես է գալիս նաև այլ դեպքերում, ապա մյուս բաղադրիչն էլ առանձնանում է, որով և գիտակցվում են բառի կազմում եղած հիմնական ու երկրորդական ձևույթները: Օրինակ՝ զգեառնել, զգլխել բաների գ- նախածանցը (գրաբարյան նախդիրը) կարելի է համարել գիտակցվող, որովհետև այդ բաների գեառն- (գետին), զլխ- (չլուխ) հատվածները որոշակիորեն նույնանում են գեառն և զլուխ բաների հետ, որոնք հանդես են գալիս նաև գեառնել, գեառնառուլ, գեառնառուկ, գեառնափոք, զլխել, առզլախ, զլխավոր և բազմաթիվ ուրիշ բաղադրությունների մեջ: Այդպես և՛ դժգոհ, դժգույն և այլ բաների կազմում մի կողմից առանձնանում են զոն, զույն բաները, մյուս կողմից՝ դժ- հատվածը, որ ունենք նաև դժբախտ, դժկամ, դժմիտ, դժպատեհ բաների մեջ: Նույնը չենք կարող ասել, սակայն, դալար, մատաղ, զարկ և նման բաների մասին, որոնց զալ- և -ար, մատ- և -աղ, գ- և առկ (հարկ-) հատվածներից ոչ մեկը չի գիտակցվում ու չի առանձնանում որպես բառը կազմող մաս: բ) Եթե բառը հատվածների բաժանելիս պարզվում է նրա ներքին ձևը և կամ առանց դրան էլ ներքին ձևը հայտնի է, ապա գիտակցվում է նրա կազմությունը, հետևաբար և՛ առանձնանում ու գիտակցվում են նրա բաղադրիչները. օրինակ՝ շաղկապ, շաղկապել բաների կապ, կապել հատվածներն առանձնանում են իբրև բաղադրիչ և ամբողջ բառի իմաստի հիման վրա բացահայտում ներքին ձևը՝ «միմյանց հետ կապող՝ միացնող», իսկ դրանով էլ՝ ածանցի իմաստը. -պարագիծ, պարագա բաղադրությունների մեջ զիծ, զա բաղադրիչների առանձնացումով բացահայտվում է այդ բաների ներքին ձևը («շուրջը քաշվող կամ քաշված գիծ», «շուրջը եկող՝ դարձող»), իսկ դրանով էլ՝ պար- բաղադրիչի ածանցական իմաստը: Դրանց հակառակ, սղոց բա-

որ երկու բաղադրիչներն էլ թեև կարող են առանձին-առանձին կապվել սուղ և -ոց բաղադրիչների հետ (հմմտ. սուղ, սղել, -ոց—կարոց, էտոց, խարոց), բայց քանի որ այդ կապը չի ամրապնդվում սղոց բառի այժմյան իմաստով և, հետևաբար, չի էլ բացահայտում ներքին ձևը, ուրեմն այդ ածանցը չի գիտակցվում: Ընկեր բառի ըն- և կեր հատվածները կարող են կապվել ընտանի, ընկալել և կերալ, մարդակեր, կերաբաժին բառերի ըն- և կեր բաղադրիչների հետ, բայց ընկեր բառի այժմյան իմաստը հնարավորություն չի տալիս այդ բաղադրիչների հիման վրա բացահայտել «հետը ուտող, միասին ուտող» ներքին ձևը, ուստի և այդ ածանցը այդ բառի մեջ չի գիտակցվում:

Մի կողմ թողնելով բոլոր շգիտակցվող ածանցները, ժամանակակից հայերենի ածանցները գործառական տեսակետից կարելի է բաժանել երկու կարգի՝ գործուն (կենսունակ) և շարժուն (անկենսունակ): Գործուն են այն ածանցները, որոնցով ազատորեն կազմվում են նորանոր ածանցումներ. այդպիսի ածանցներ են. ան-, համ-, -ական, -այլին, -ուրյուն, -եղեն, -ել, -յա, -ում, -անք, -աբար և այլն: Չգործուն են այն ածանցները, որոնք որոշ քանակով բառերի մեջ ժառանգված լինելով հնից, թեև լիովին գիտակցվում են որպես որոշակի ածանցական իմաստով երկրորդական ձևություններ, բայց զրկվել են բառակազմական գործառությունից, այսինքն՝ դերանցով այլևս նոր ածանցումներ չեն կազմվում: Այդպիսի ածանցներ են. դժ, տ, շ, պար(ա)-, դեր-, -եստ, -խատ, -ուստ, -արդ, -առի, -ունի և այլն: Քանի որ շարժուն ածանցները լիովին գիտակցվում են, ապա լեզվի մեջ ծագած անհրաժեշտության թելադրանքով նրանք կարող են համաբանական կազմություններով աստիճանաբար «վերականգնանալ» և անցնել գործուն ածանցների շարքը: Այդպիսի ածանցներից են. -ույր, ալ-/ալա-, բաց/բացա-, մակ-/մակա-, առ- և այլն, որոնք կենսունակ ածանցներ են դարձել վերջին հիսնամյակում և շատ արգասավոր են զանազան տերմինահամակարգերում. կենսունակ դառնալու միտում ունի նաև -արդ ածանցը, որով ունենք ձվարդ, սեղանարդ, կոնարդ, անկյունարդ, խաչարդ նորակազմ տերմինները:

Ածանցների ձևաիմաստային հարաբերությունները ունեն

հոմանշության, հակաշության, համանունության և բազմի-մաստության բնութագրեր: Քանի որ այդ բնութագրերը հատուկ են լեզվի բոլոր մակարդակների միավորներին, ապա ընդհանուր առմամբ ածանցների վրա էլ տարածվում են նույն շափանիչները, որոնք կիրառել ենք բառերի նկատմամբ: Մակայն այդ ընդհանուր շափանիչները ածանցների նկատմամբ կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ առանձնահատկությունները:

1. Ածանցների տարբեր մասնավոր իմաստները շատ հաճախ պայմանավորված են լինում բաղադրական հիմքով. այսպես՝ -իկ ածանցն արտահայտում է փոքրության իմաստ և հասկանալի է, որ պետք է ցույց տա բաղադրական հիմքով արտահայտվող գոյականի փոքր լինելը, ինչպես՝ բմբիկ սփոքր թումբ», բերքիկ սփոքր թերթ», սալիկ սփոքրիկ սալ», մազիկ «փոքր, այսինքն՝ բարակ, նուրբ մազ» և այլն: Մակայն փոքրությունը կարող է որակվել որպես դրական, հաճելի բայց նաև՝ արհամարհելի հատկություն: Այստեղից էլ, ահա նույն -իկ ածանցը կարող է արտահայտել քնքշանք, փաղաքշանք և արհամարհանք, ինչպես՝ ճալիկ, խուլիկ, բռնիկ, բալիկ, վզիկ, շնիկ (փաղաքշական) և ճոթիկ, կուզիկ և այլն, ըստ որում շատ հաճախ միևնույն ածանցումը խոսքի մեջ կարող է թե՛ քնքշական և թե՛ արհամարհական-նվաստական իմաստով գործածվել (հմմտ. Մի բարի կուզիկ էր նա.— Վիթխարի մարմինն՝ մի երկար ու բարակ, տանձի պոչ հիշեցնող վզիկ):

2. Բոլոր ածանցներն ունեն խոսքամասային քերականական իմաստ (կատեգորիալ իմաստ) և այդ տեսակետից հոմանիշներ են գոյականակերտ ածանցները միմյանց նկատմամբ, ածականակերտ ածանցները միմյանց նկատմամբ և այլն: Հասկանալի է, որ ածանցական իմաստների նույնությունը կամ միբաժնորությունը որոշելու համար խոսքամասային քերականական իմաստները լպետք է հաշվի առնել, մինչդեռ համանունության ու բազմիմաստության համար դա առաջնակարգ նշանակություն ունի:

3. Ածանցումները, իբրև բառեր, ենթակա են իմաստային զարգացման, իսկ դրա հետևանքները կարող են տարբեր լինել: Այսպես, հնարավոր է, որ պատմական փոփոխություն-

ներով միևնույն ածանցը երկու տարբեր ածանցումների մեջ՝ դրանց իմաստների պատմական փոփոխություններով բոլորովին տարբեր ածանցական իմաստներ արտահայտի և, ընդհակառակն, երկու տարբեր ածանցներ միևնույն ածանցական իմաստը ձեռք բերեն։ Օրինակ՝ -ական և -ային նույնանիշ ածանցներ են, բայց կուսակցական նշանակում է «կուսակցություն անդամ», իսկ կուսակցային «կուսակիցներին՝ կողմնակիցներին հատուկ»։ նույնպես և՛ բանավոր նշանակում է «բերանացի», և թվում է, թե կարող է համարվել մտացի, նշանացի, բառացի, բերանացի, նախնացի ածանցումների -ացի/-ցի ածանցներին հոմանիշ, մյուս կողմից՝ համանուն թեքված, հոգեվոր, կարեքված ածանցումների -ավոր ածանցի համար։ Իհարկե, այսպիսի մոտեցումը ճիշտ չի լինի, որովհետև ելակետը պատմականորեն կրած իմաստային զարգացման հետևանքն է և ոչ թե նախնական, բուն ածանցական իմաստը։ կուսակցական նշանակել է և այժմ էլ նշանակում է «կուսակցության անդամին և կուսակցությանը հատուկ» և հետո, երկրորդաբար՝ «կուսանդամ»։— բանավոր նշանակել է «բանով (խոսքով) օժտված» և հետո միայն՝ «բերանացի, ոչ գրավոր ձևով, այլ խոսելով» և այլն։ Հետևաբար, ածանցների իմաստային հարաբերակցությունները որոշելու համար պետք է հենվել բուն ածանցական իմաստի և ոչ թե առանձին բառերի իմաստափոխությամբ պայմանավորված իմաստների վրա։

Այս հիմնական առանձնահատկություններին կարող են ավելացվել նաև մասնավոր յուրահատկություններ, որոնք վերաբերում են ածանցների այս կամ այն խմբին կամ զույգին, սակայն դրանց այստեղ չենք անդրադառնալ։

Ա. Հ ա մ ա ն ու ն ու թ յ ու ն և բ ա զ մ ի մ ա ս տ ու թ յ ու ն.— Անոց/նոց ածանցն ունենք հիվանդանոց, արվեստանոց, դարբնոց, ճյուղանոց—զլխանոց, թիվանոց, թևանոց—աասանոց, մետրանոց, փթանոց, կոպեկանոց ածանցումների մեջ. առաջին շորս օրինակներում —անոց/նոց ածանցի իմաստըն է «որնէ բանով զբաղվելու, որնէ կարգի մարդկանց հատկացված, որնէ բանով բնութագրվող տեղ», երկրորդ խմբում՝ «մարմնի որնէ մասը ծածկելու շոր», երրորդ խմբում՝ «որնէ կարգի միավոր պարունակող (թվականի ցույց տված քանա-

կող կամ շափի միավորի շափով)»։ Առաջին երկու խմբում ածանցը գոյականներից կազմում է գոյականներ, երրորդում՝ գոյականներից՝ ածականներ և փոխանվանաբար՝ գոյականներ. խոսքամասային քերականական տարբերությունը բավական է, որ արվեստանոց և մետրանոց ածանցումների ածանցները համարենք տարբեր ձևույթներ, որոնք ձևապես նույնական են. նշանակում է՝ այդ երկու ածանցները համանուններ են։ Առաջին երկու խմբի ածանցումները հավասարապես գոյականներ են, ուստի և խոսքամասային իմաստի հակադրություն չկա, բայց դրանց միջև կա իմաստային բացահայտ հակադրություն. առաջին շարքի բառերը ցույց են տալիս որնէ բանի հատկացված տեղ, որնէ բանով բնորոշվող տեղ, երկրորդ շարքի բառերը՝ զգեստ կամ զգեստի մաս, որնէ բանի ծառայող շոր. իմաստներն այնքան տարբեր են, որ հնարավոր չէ նույն ածանցը համարել, ուստի և համանուններ են։ Դեղձենի, րզենի, նոնենի, քրենի, գառնենի, այծենի, ընձենի, հորթենի— ածանցումների առաջին խմբում —ենի ածանցը կազմում է բուսանուններ՝ պտուղների անուններից, երկրորդ խմբում՝ կենդանիների անուններից կազմում է դրանց մորթը կամ միսը նշանակող գոյականներ. առաջին շարքում ածանցը կերտում է գոյականներ, որոնցից ծաղում, ստացվում է ածանցման հիմքի ցույց տված գոյականը (պրտուղը), այսինքն՝ ածանցումով կազմվում է ստացվող՝ ծաղող արդյունքի (պտղի) աղբյուրը՝ ծնողը ցույց տվող գոյականը (բույսը), պտղի անվանումից՝ բույսի անվանումը, երկրորդ շարքում՝ գոյականներ, որոնք ստացվում են ածանցման հիմքի ցույց տված գոյականներից (կենդանուց), այլ կերպ սուսած՝ առաջին շարքի ածանցումները ցույց են տալիս աղբյուրը (բույսը), երկրորդները՝ արդյունքը, մթերքը (մորթը կամ միսը). իմաստները հակադիր են միմյանց, չեն կարող նույնացվել, ուստի և համանուններ են։ նույն —ենի ածանցն ունենք Բեհշենի, Նազենի, Լորենի, Կայրենի, մայրենի, Բաղբենի, լրբենի և այլ բառերում, որոնք ածականներ են. այդ բառերի մեջ —ենի ածանցը նշանակում է «մեկին, մի բանի հատուկ» (նազենի «նազին՝ նազանքին հատուկ, նազանք պարունակող», նրբենի «նուրբին հատուկ», մայրենի «մորը հատուկ՝ պատկանող» և այլն). եթե այս ածանցը համեմա-

տենք զառնենի, ընծենի և նման ածանցումների —ենի ածանցի հետ, ապա դժվար չի լինի համոզվել, որ գրանք նույն ածանցներն են, քանի որ գրանք էլ նշանակում են «բառան հատուկ՝ պատկանող», «ինձին հատուկ՝ պատկանող» (հմմտ. արժվենի հայացք, այժմենի պարանոց և այլն): նշանակում է՝ մայրենի, քննչենի և զառնենի, արժվենի ածանցումների մեջ ունենք նույն ածանցը, որ կենդանիների անուններից կազմում է ածականներ, իսկ երկրորդաբար (փոխանունություն)՝ գոյականներ: Աշակերտություն—գյուղացիություն, խիզախություն—գեղեցկություն, նմայություն—զննություն ածանցումներից առաջին զույգում —ուրյուն ածանցը ցույց է տալիս հավաքականություն, երկրորդում՝ առարկայացած հատկություն, երրորդում՝ գործողություն. տարբեր իմաստները պայմանավորված են բաղադրական հիմքով (առաջինները՝ գոյական, երկրորդները՝ ածական, երրորդները՝ բայահիմք). ուրեմն —ուրյուն ածանցը կարող ենք համարել բազմիմաստ ածանց, որ ունի հավաքականության, հատկության, գործողության ածանցական իմաստներ:

Այսպիսով, ածանցների համանունությունը և բազմիմաստությունը որոշելու համար պետք է ընդունել հետևյալ շափանիշները. ա) եթե ձևապես նույնական ածանցները կազմում են երկու տարբեր հարացույցներ, ինչպես՝ —անց/—նց ածանցները դարբնոց և թիկնոց ածանցումներում, կամ՝ բ) եթե միևնույն խոսքի մասին են պատկանում, բայց որոշակիորեն տարբեր և նույնիսկ հակադիր իմաստներ ունեն, ինչպես՝ —ենի ածանցը զառնենի և թզենի ածանցումներում, ապա գրանք համանուններ են, գ) եթե միևնույն հարացույցին պատկանող ձևապես նույնական ածանցները տարբեր հիմքերից կազմվող ածանցումներում տարբեր ածանցական իմաստներ են ստանում, ապա ունենք բազմիմաստ ածանց, ինչպես՝ —ուրյուն ածանցը բերված օրինակներում, —ուկ ածանցը ճարուկ, ձագուկ և մաղուկ, խղճուկ ածանցումներում և այլն:

Բ. Հ ա մ ա ն ի շ ու թ յ ու ն .— Համանիշ են այն ածանցները, որոնք՝ 1) նույնական են իրենց իմաստով, ինչպես՝ —ական, —ային ածանցները ջերմային, դարչնային և մետաղական, գյուղական ածանցումներում, —ուրյուն և —ում ածանցները որպես բայանուններ (հմայություն, զննություն—

հմայում, զննում), բուսանուններ կազմող —ի և —ենի ածանցները (թթենի, նոնենի—թթի, նոնի) և այլն: 2) Մտևում են զուգահեռ հարացույցների մեջ արտահայտության պլանում, միևնույն հարացույցի մեջ՝ բովանդակության պլանում, ինչպես՝ —արան և —անոց ածանցները առողջարան, գործարան և հիվանդանոց, դարբնոց ածանցումներում, —ակ, —իկ, —ուկ ածանցները տնակ, առվակ—ուլիկ, խցիկ—ձագուկ, զառնուկ ածանցումներում և այլն: 3) Կարող են փոխարինել միմյանց նույն հիմքից կազմվող ածանցումներում թեկուզ և մի քանի դեպքերում, առանց իմաստի փոփոխության, ինչպես՝ —արար և —որեն ածանցները հերոսարար—հերոսորեն, եղբայրարար—եղբայրորեն և նման ածանցումներում, —առան/ստան և —անոց ածանցները՝ վարդանոց—վարդաստան, մեծաստան—մեծանոց և նման ածանցումներում և այլն:

Գ. Հ ա կ ա ն ի շ ու թ յ ու ն .— Ածանցների հականիշությունն արտահայտվում է երկու կամ ավելի այնպիսի ածանցների զուգահեռությունով, որոնցից մեկը (կամ մի քանիսը) բացասում, ժխտում է մյուս(ներ)ի ածանցական իմաստը, ինչպես —ավոր/—վոր և ան— ածանցները (թևավոր—անթև, ողնաշարավոր—անողնաշար, զանգավորներ—անզանգներ), —ուն և ան— (գիտուն—անգետ, խոսուն—անխոս), —ակ և ան— (տեղյակ—անտեղյակ, գիտակ—անգետ), գեր—/թեր— (գերակատարել—թերակատարել) և այլն:

Է. Հապավական բաղադրություններ

Ընդհանուր գիտելիք

Հապավումը բաղադրյալ անվանումների ու տերմինների կրճատված մասերի միավորումով բաղադրություններ կազմելու եղանակն է, ինչպես և՛ այդ եղանակով կազմված բաղադրությունները, ինչպես՝ ՍՄԿԿ (Սովետական Միության կոմունիստական կուսակցություն), ՀՍՄԿԿ (Հայաստանի արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ), կենտկոմ (կենտրոնական կոմիտե), կենտվարչություն (կենտրոնական վարչություն) և այլն: Ինչպես ցույց են տալիս բեր-

ված օրինակները, ՍՄԿԿ, ՀԱՄԿԿ, կենտրոն, կենտրոնա-
թյուն բառակերպ բազադրությունները որոշակի բազադրյալ
անվանումների զանազան կարգի կրճատումներով են կազմը-
վել և ներկայացնում են այդ բազադրյալ անվանումները:

Հապավումները մեծ զարգացում ստացան 20-րդ դարում:
19-րդ դարում արդեն բավականաչափ տարածում ստացել
էին տառային հապավումները, և հայագիտության մեջ սովո-
րական գործածություն ունեին ու համընդհանուր ճանաչում
էին ստացել այնպիսի հապավումներ, ինչպիսիք են, օրինակ,
ՀԱ («Հանդէս ամսօրեայ»), ՀՀԲ (Հին հայկազյան բառարան),
ՆՀԲ (Նոր հայկազյան բառարան), ԱԲ (Առձեռն բառարան),
ԲԸ (քարեգործական ընկերություն) և այլն:

Ինչպես ուրիշ լեզուներում, այնպես էլ հայերենում հա-
պավումներն սկզբնապես առաջացել են համառոտագրություն-
ների հիմքի վրա. նախապես գրում էին, օրինակ, Հ. Ա. (Հան-
դէս ամսօրեայ), Բզմ. («Բազմավեպ»), Ն. Գ. («Նոր դար») և այլն: Այդ նույն համառոտագրությունները հետագայում
սկսեցին գրել առանց կետերի, որոնք կրճատման (համառո-
տագրության) նշանների կամ ցուցիչների դեր էին կատարում:
Կետերի բացթողումն էլ, ահա, հանգեցրեց համառոտագրու-
թյունների նոր եղանակի՝ համառոտագրված բառերի սկզբնա-
տառերի միասին գրելուն և դրանով իսկ առաջին քայլը կա-
տարվեց հապավումների, իբրև յուրատեսակ համառոտագրու-
թյան, զարգացման գործընթացում: Կապիտալիզմի զարգա-
ցումը, կապիտալիստական բազմաթիվ արդյունաբերական
միավորումների, ընկերությունների, հասարակական կազմա-
կերպությունների, իրազեկման աղբյուրների (թերթերի, հան-
դեսների, պարբերական ժողովածուների և այլնի) զարգացու-
մը և դրա հետ կապված՝ բազմաթիվ բազադրյալ անվանում-
ների երևան գալը հզոր խթան հանդիսացան հապավումների
ծավալման ու զարգացման համար: Եվ բոլորովին էլ զար-
մանալի չէ, որ ֆրանսերենում, անգլերենում, գերմաներենում
և շատ այլ լեզուներում այժմ էլ գերակշռում են թերթերի,
հանդեսների, արդյունաբերական ձեռնարկությունների, ընկե-
րությունների, զանազան կոնցեռնների և նման միավորում-
ների բազադրյալ անվանումների, ինչպես և՛ միջազգային
զանազան կազմակերպությունների և ընկերությունների բա-

զադրյալ անվանումների հապավումները (հմմտ. Յիֆա, Յի-
դի, Ունֆա, Յունեսկո և այլն): Սովետական Միության ժողո-
վուրդների լեզուներում, և առաջին հերթին ռուսերենում, հա-
պավումների բուռն զարգացումը որոշակիորեն տարբերվում
է ինչպես հասարակական-քաղաքական գործոնների, այնպես
էլ բուն իսկ հապավումների բնույթով: Սովետական իշխա-
նությունը կյանքի կոչեց պետական կառավարման նոր սիս-
տեմ, ստեղծեց հասարակական-քաղաքական ու տնտեսական
նոր հարաբերություններ: Ինքնին հասկանալի է, որ կառու-
վարման նոր մարմինները, տնտեսական քաղաքականության
մեջ երևան եկած նոր երևույթներն ստացան իրենց անվա-
նումները, որոնք մեծ մասամբ բազադրյալ անուններ էին:
Հասարակական տեսակետից այդ նոր մարմինների և կազ-
մակերպությունների առանձնահատկություններից մեկն էր
այն, որ դրանք իրենց ամենօրյա գործունեությամբ սերտ
շփման մեջ էին աշխատավորական հոծ զանգվածների
հետ, որ և պայմանավորում էր դրանց անվանումների ան-
միջական մասսայականացումը և այդ անվանումների ա-
մենօրյա գործածությունը ժողովրդական ամենալայն խա-
վերի առօրյա հաղորդակցման մեջ: Այս հանդամանքը հա-
սարակական հիմքը հանդիսացավ այն բանի, որ բազմա-
թիվ պետական ու կուսակցական մարմինների անվանումնե-
րը զանազան կարգի հապավված ձևերով գրվեցին: Սա նշանա-
կում է. թե ինչպես եվրոպական շատ լեզուներում, այնպես էլ
առաերենում և Սովետական Միության ժողովուրդների լեզու-
ներում թե՛ միևնույն սովետական կարգերի հաստատումը, թե՛
դրանից հետո հապավումները, իբրև համառոտագրություն-
ների նոր եղանակ, հանդես են եկել նախ և առաջ գրավոր ձե-
վով, գրական լեզուների մեջ: Մակայն հենց այն պատճառով,
որ նորաստեղծ սովետական իշխանության այդ մարմիններն
իրենց ամենօրյա գործունեությամբ սերտորեն կապված էին
ժողովրդի ամենալայն խավերի հետ, ավելին՝ իրենց ամեն-
օրյա գործունեության մեջ էին ներգրավում և ներգրավում
են աշխատավոր ժողովրդի հոծ զանգվածներին, գրավոր ձևով
առաջ եկած հապավումներն անմիջականորեն անցնում էին
և անցնում են բանավոր խոսքին, զառնում ժողովրդական
լայն զանգվածների առօրյա խոսքում գործածվող հապավված

բառեր: Այս տեսակետից բոլորովին էլ զարմանալի չէ, որ ինչպես ուսեօրենում, այնպես էլ հայերենում և ՍՍՀՄ մյուս ժողովուրդների ազգային լեզուներում սովետական իշխանության հաստատման հենց առաջին տարիներին և դեռ դրանից էլ առաջ, հեղափոխության ու քաղաքացիական պատերազմների տարիներին, խոսակցական լեզվի մեջ արդեն սովորական գործածություն ունեին բազմաթիվ հապավումներ (համար, զինկոմ, հեղկոմ, ռազմհեղկոմ, կադետ, էսէն և այլն): Քսահական թվականներին հայերենում, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում արդեն շատ սովորական գործածություն ունեին, բերված օրինակներից բացի, բաճկում, բառակիզմ, լիկկայան, գյուղկոռայ, բանկոռայ, ՓՕԳ, Բաղոզիում, ժողկոմ, ժողկոմառ (բոլոր ժողովումների ու ժողովատեղիների ճյուղային անվանումների հապավումներով հանդերձ, ինչպես՝ հողժողկոմ, լուսժողկոմ և այլն), կենտկոմ, կենտգործկոմ, ժողկոմխորհ, ռուսերենից փոխառյալ՝ չեկա, զագո, ճեպ, գէս և այլն, և այլն: Մեր կյանքի բուռն զարգացումը, սովետական ժողովուրդների սնտեսական, գիտատեխնիկական ու մշակութային աննախընթաց վերելքը հզոր գործոն հանդիսացան հապավումների ծավալման ու բազմացման համար: Երեսնական թվականներին հապավումներով կազմված բաղադրություններն արդեն այնպիսի շափերի էին հասել, որ հապավումների, որպես բաղադրությունների նոր, բայց լիովին կենսունակ ու արդյունավետ եղանակի վրա հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտություն զգացվեց: Այն, ինչ որ մինչև սովետական իշխանության հաստատումը դեռևս որակ չէր կազմում լեզվի մեջ և այդ պատճառով էլ կարող էր դիտվել իբրև սովորական համառոտագրությունների մի տեսակը, մանավանդ որ եղած փոքրաթիվ հապավումները սոսկ գրավոր խոսքում էին գործածվում ու զուրկ էին մասսայականությունից (ինչպես և առհասարակ գրականությունն ու մամուլը), սովետական իշխանության հաստատումից հետո զարգացման մեծ թափ ստացավ ու հանդես եկավ որպես նոր որակ, լեզվի մեջ իր հաստատուն տեղն ու դերը նվաճած երևույթ: Եվ բոլորովին պատահական չէ, որ արդեն 1934 թվականին, միջնակարգ դպրոցի հայոց լեզվի քերականության նոր դասագրքի հեղինակ Ա. Ղարիբյանը «Բառակազմու-

թյուն» բաժնում «Նորագույն հապավումներ» վերնագրի տակ անհրաժեշտ գիտելիքներ է տալիս հապավումների ու դրանց տեսակների մասին, իսկ հետագայում Գ. Սևակը հատուկ ուսումնասիրության առարկա է դարձնում ժամանակակից հայերենի հապավումները:

Հապավումների էլ ազգի բուռն զարգացման շրջանը կապվում է գիտատեխնիկական հեղափոխության հետ. գիտության ու տեխնիկայի վիթխարի առաջընթացը և որակական թռիչքը, տեխնիկայի, արտադրության և գիտության, նորանոր ճյուղերի ու միջճյուղերի առաջացումը նոր թափ հաղորդեցին բազմաթիվ բնագավառների տերմինահամակարգերի զարգացմանը, իսկ դա էլ, իր հերթին, հապավումների վիթխարի բազմացմանը: Այժմ ստեղծվել է արդեն այնպիսի վիճակ, որ ոչ միայն անհրաժեշտ է դարձել տարբեր լեզուների, այդ թվում և հայերենի, հապավական բաղադրությունների բնդհանուր բառարանների կազմությունն ու հրատարակությունը, այլև ճյուղային-մասնագիտական տերմինարաններում ու տերմինարանական բառարաններում զետեղելու ավելի բնագավառի հապավական բաղադրությունները, որոնց մեծ մասը չի կարող մուծվել բնդհանուր բառարանների մեջ:

Այսպիսով, հապավումը որպես յուրահատուկ տիպի բառային բաղադրությունների եղանակ, նոր երևույթ է և իբրև այդպիսին կապվում է 20-րդ դարի հետ, թեև 19-րդ դարում էլ նա, ինչպես ասացինք, արդեն սկզբնավորվել էր իբրև համառոտագրության մի նոր տեսակ: Հայերենում, ինչպես և ուսեօրենում ու Սովետական Միության մյուս ազգային լեզուներում, հապավումն իր իսկական զարգացումն է ստանում սովետական կարգերի հաստատումից հետո:

Համառոտագրություն և Ռապավում

Ինչպես ասվեց, հապավումը հանդես է եկել ու զարգացել համառոտագրությունների հիմքի վրա: Համառոտագրությունները հին դարերից են գալիս. հայերենում գործածվել են համառոտագրությունների տարբեր տեսակներ, Այդ տեսակներից հնում ամենատարածվածն է եղել պատվագրությունը,

մասամբ՝ սչուն և երկվորյակ նշաններով գրութունը⁶, որոնք 19-րդ դարի երկրորդ կեսում գուրս մղվեցին տպագիր խոսքից, իսկ 20-րդ դարում՝ նաև ձեռագիր գրվածքներից: Բուն համառոտագրութունն, այսպիսով, դարձավ բառերի (հատուկ և հասարակ անունների) կրճատ գրության ընդհանուր անվանում, ըստ որում, թեև բառերի կրճատման եղանակները տարբեր էին (սկզբնատառային, երկտառ, բազմատառ, ինչպես՝ Թ. = Թիվ, Թվական, պր. = պարոն, օր. = օրիորդ, Հովհ. = Հովհաննես), բայց բոլորն էլ ունեին մեկ ընդհանուր հատկանիշ. բոլոր կարգի կրճատումներն էլ գրավոր խոսքում գրվում էին կեսով, որը ծառայում էր որպես կրճատման նշան, իսկ կարգալիս արտասանվում էր համապատասխան բառն ամբողջությամբ, ինչպես որ այժմ է (հմմտ. ընկ. = ընկեր, Թ. = Թվական և այլն): Դարի վերջում սկիզբ առավ հապավական գրութունը որպես դարձյալ համառոտագրության տեսակ. դրա առանձնահատկությունն այն էր, որ համառոտագրվում էին բաղադրյալ անունների բաղադրիչները, ըստ որում այդ դեպքում այլևս կես չէր գրվում, որի հետևանքով հապավված բաղադրիչներն էլ չէին անջատվում միմյանցից, այլ գրվում էին միահար, ինչպես՝ ՀԱ, ՆՀԲ և այլն: Այդ հապավումները նույնպես սովորաբար կարդացվում էին լրիվ բառերով, բայց առանձին դեպքերում՝ նաև տառերի անվանումներով (ինչպես, ասենք, ՆՀԲ արտասանելին ՆՈՒ-ՀՈՒՅՆ): Այս կարգի համառոտագրություններն էին, որ հապավումների ու հապավական բաղադրությունների անմիջական հիմքը հանդիսացան: Եվ սա է, որ թույլ է տալիս ասելու, թե հապավումներն առհասարակ առաջացել են համառոտագրությունների հիմքի վրա: Ծագած լինելով համառոտագրություններից, հապավումները վերաճեցին առանձնահատուկ կրճատ գրության բաղադրյալ անվանումների և հանդես եկան ոչ մի-

⁶ Պատմագրութունը բառերի կրճատ գրութունն էր պատիվ կազմած նշանով, որ գրվում էր ստառ վրա (օր. ՏՐ = տէր, աս = աստուած, քաչուժ. = բաշտիֆին և այլն): Սչուն կազմում էր այժմյան շեշտի նման նշանը, որ գրվում էր բաց թողնվող ա ստառի փոխարեն (օր. խ՛ղ = խաղաղ, ժ՛ժ՛կ = ժամանակ և այլն): Երկվորյակ կամ կրկեսայան էր կազմում այժմյան լակերտի նման նշանը, որ գրվում էր բաց թողնվող ձայնավորի տեղը՝ նախորդ բաղաձայնակից ստառի աչ կողմը՝ վերեկից (օր. խ՛՛՛ր՛՛՛ Թիւ = խոնարհութիւն):

այն որպես համառոտագրության յուրահատուկ տիպ, այլև բառակազմական հատուկ եղանակ: Համառոտագրութունների և հապավական բաղադրությունների հիմնական տարբերությունները հետևյալներն են: 1) Համառոտագրվել կարող են ոչ միայն բառակապակցություններ, բաղադրյալ անուններ ու տերմիններ, հատուկ անուններ (հմմտ. նախկին՝ Կ. Բ. = Կարմիր բանակ, Հ. Ս. Խ. Հ. = Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, Ուղ. հ. (կամ հու., հլ.) = ուղղական հուլով, Հ. Թ. = Հովհաննես Թումանյան, հյց. հլ. = հայցական հուլով և այլն), այլև առանձին բառեր, ինչպես Թ. = Թվական, ժ. = ժամ, ընկ. = ընկեր, ուս. = ուսանող, քաղ. = քաղաքացի և այլն, մինչդեռ հապավումները, ինչպիսիք էլ լինեն, պետք է բաղկացած լինեն առնվազն երկու բաղադրիչից: 2) Համառոտագրվող բառերն, իրեն կանոն, կարդացվում են ամբողջությամբ, առանց կրճատման, մինչդեռ հապավումներից վանկային և վանկարառայինները, շատ հաճախ նաև ամենատարածված տառային հապավումները, թե՛ գրավոր խոսքը կարդալիս, թե՛ բանավոր խոսքում արտասանվում են հապավված ձևով: 3) Համառոտագրությունների մեջ բաղադրությունների համառոտագրվող մասերը գրվում են առանձին-առանձին՝ կրճատման նշան հանդիսացող կեսով, մինչդեռ հապավումների բաղադրիչները գրվում են միասին՝ առանց կետերի: Վերջապես, այդ բոլորից էլ առաջացել է ամենակարևոր տարբերությունը՝ համառոտագրություններով բառեր չեն ստեղծվում, մինչդեռ հապավումներով ստեղծվում են առանձնահատուկ տիպի բաղադրյալ բառեր:

Հապավական բաղադրությունների տեսակները

Հապավական բաղադրությունները տարբեր տեսակներ են ներկայացնում ինչպես իրենց բաղադրիչների բնույթով, այնպես էլ դրանցով բաղադրվող բառային միավորներով: ՀԱՄՀ և կուսկոմ հապավական բաղադրություններ են, որոնք կազմվել են Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն և կուսակցական կոմիտե բաղադրյալ անվանումների բաղադրիչների կրճատված մասերով, ըստ որում առաջինը կազմվել է բաղադրիչների սկզբնատառերով, իսկ երկ-

րորդը՝ բաղադրիչների բառամասերով: Քե՛ առաջինում, թե՛
երկրորդում հապավական բաղադրությունների բաղադրիչնե-
րը կրճատված, հապավված բառերի մասեր են: Բառերի ճա-
պավված մասերը, ռոնցոլ կազմվում են ճապավակուն բա-
ղադրություններ, կոչում ենք հապավույթներ: Քերված օրի-
նակների մեջ Ն, Ս, Ս, Ն, կուս, կոմ բաղադրիչները հապա-
վույթներ են: Հապավույթները լինում են՝ ա) սկզբնատառա-
յին (կամ պարզապես՝ տառային), բ) բառամասային կամ
վանկային, գ) հատվածական:

Տառային հապավույթները հապավվող բառերի սկզբնա-
տառերն են, ինչպես՝ Ս(ովետական) Մ(իուսյան) Կ(ոմունիս-
տական) Կ(ուսակցություն)— ՄՄԿԿ, է(լեկտրոնային) հ(աշ-
վիչ) մ(եքենա)— էհմ, բ(արձրագույն) ու(ստանական) հ(առ-
տատություն)— բուհ, Մ(իավորված) Ա(զգեթի) Կ(ազմակեր-
պություն)— ՄԱԿ և այլն:

Բառամասային կամ վանկային հապավույթները բառերի
սկզբնամասեր են, որոնք կազմում են մեկ, քիչ դեպքերում՝
երկու վանկ, ինչպես՝ գին(վորական) կոմ(իսար)— զինկոմ,
քաղ(աքական) ղեկ(ավար)— քաղղեկ, կոմ(ունիստական)
երիտ(ասարդական) միություն— կոմերիտմիություն, ժող(ո-
վրդական) կրթ(ություն) բաժ(նի) վար(իչ)— ժողկրթբաժնավար
և այլն: Վանկային հապավույթները անհատի փակ վանկեր են
կազմում, իսկ դա հանգեցնում է բառերի սկզբնավանկերի և
վանկային հապավույթների հետևյալ հարաբերակցություննե-
րին:

ա) Վանկային հապավույթները համընկնում են հապավ-
վող բառի առաջին վանկին, եթե փակ վանկ է, ինչպես՝ տեխ-
նիկական, հապավույթը՝ տեխ- (տեխնիկական), կենա-բու-
նական՝ կենա- (կենտկոմ), բան-վորական՝ բան- (բանավան),
արդ-յունաբերական—արդ- (տեղարդ), պատ-մական—պատ-
(պատմատ), զին-վորական—զին- (զինկոմ) և այլն:

բ) Այն դեպքերում, երբ հապավվող բառի փակ վանկը
հանգում է որևէ ձայնորոգ կամ շփական բաղաձայնով, հա-
պավույթը հավասար է լինում առաջին վանկին + անմիջա-
պես հաջորդող բաղաձայնը (հաջորդող վանկի առաջին բա-
ղաձայնը), ինչպես՝ աշ-խատանքային—աշխ- (աշխատանքի-
ներ), արն-տեսական—տես- (տեսմաս), կր-թության—կրթ-

(ժողկրթբաժին), վառ-չային—վառկ- (վարկընկերություն),
ար-հետազոտական—արհ- (արհկոմ), գոր-ծադիր—գործ-
(գործկոմ), խրմ-բագրական—խմբ- (խմբկոլ), ման-կավար-
ժական—մանկ- (մանկխորհուրդ), կազ-մակերպչական—
կազմ- (կազմկոմիտե), ռազ-մական—ռազմ- (ռազմհեղկոմ),
հաշ-մանդամներ—հաշմ- (հաշմկոտպ), շրբ-դանային—շրբ-
(շրբկոմ), ար-տաքին—արտ- (արտգործմիութություն) և
այլն:

Այս կանոնից շեղվում են բան- (բան-վորական) և զին-
(զին-վորական) հապավույթները, որոնք կազմվել են առա-
ջին կետի համաձայն, այն պարզ պատճառով, որ հայերենում
-նվ հնչյունակապակցությամբ ավարտվող վանկ չի կարող
լինել:

գ) Եթե հապավվող բառի սկզբնավանկը բաց վանկ է, ա-
պա վանկային հապավույթը հավասար է առաջին վանկին +
հաջորդող բաղաձայնը (երկրորդ վանկի առաջին բաղաձայ-
նը), ինչպես՝ կո-միտե—կոմ- (արհկոմ), Բա-ղաքային—Բաղ-
(քաղկոմ), ճա-նապարհային—ճան- (ճանչինվարչություն),
ժո-ղովրդական—ժող- (ժողդատարան), պե-տական—պեժ-
(պետհամալսարան), կու-սակցական—կուս- (կուսկոմ), կո-
մունիստական—կոմ- (կոմկուս) և այլն:

Երկու վանկ կազմող բառամասային (վանկային) հապա-
վույթները շատ քիչ են և դրանք էլ կազմվում են նույն կա-
նոնների համաձայն, ինչպես՝ սպա-ռողական—սպառ- (սպառ-
կոտպ), երի-տասարդական—երիտ- (կոմերիտ-ական), խը-
նա-յողական—խնայ- (խնայյրամարկդ), հը-րա-տարակչու-
թյուն—հրատ- (պետհրատ), երկ-րա-մասային—երկր- (ար-
տասանվում է երկրը-, երկրկոմ), ար-բանս- (կամ տրանս-)
պորտ—տրանս- (ճանտրանս) և այլն:

Վանկային հապավույթների գաղտնավանկ ը ձայնավորը
չի գրվում, ինչպես՝ խմբկոլ, երկրկոմ, ժողկրթբաժին, շրջմի-
թաժին և այլն:

Վերը բերված կանոնները ցույց են տալիս, որ հայերենի
վանկային հապավույթների կազմությունը ճշտորեն ճամբեկ-
նում է հայերենի վանկային կառուցվածքին, իսկ սա-
նշանակում է, թե հայերենի վանկային հապավույթների կազ-
մության համար իբրև հիմնական սկզբունք է ծառայում հա-

չերեմի վանկակազմութիւնը և ոչ թե համառոտագրութիւնը, թեև, իհարկէ, ինչպես ասվել է, անծխաելի է հապավումների հապը, ավելին՝ ծաղումն ու զարգացումը համառոտագրութիւնից: Սակայն, ծագելով համառոտագրութիւնների հիմքի վրա, հապավումը, մասնավորապես վանկային հապավումների կազմության մեջ, իբրև հենարան է ունեցել վանկակազմութիւնը: Բանն այն է, որ համառոտագրութիւնների մեջ վանկ կազմող գրութիւնները ազատորեն շեղվում են վանկակազմության կանոններից, ինչպես՝ Արդ. (Արդիւ), Պետր. (Պետրոս), Անյ. (Անյաղթ = Անհաղթ), Երր. (Երբայցեցի), Ծփր. (Ծփրեմ) և այլն:

Հատվածական հապավումները ածանցավոր կամ բարդ-ածանցավոր բառերի, ինչպես և գոյականի սեռականի հոլովածների այնպիսի հապավում մասեր են, որոնք նույնանում են իբրև անկախ բառ գործածվող բաղադրական հիմքի ուղիղ ձևի հետ, ինչպես՝ գյուղմինիստրութիւն (գյուղատնտեսութիւն), անտատնտեսութիւն (անտատային տընտեսութիւն), պտուղբանջարառ (պտուղների, կամ պտղեղենի և բանջարեղենի առևտրի վարչութիւն), գործարհկոմ (գործարանային արհեստակցական (միութեան) կոմիտե), Երհագուտառ (Երևանի հագուտեղենի առևտրի վարչութիւն), Երեվանչին (Երևանի շինարարական վարչութիւն) և այլն: Այս հապավական բաղադրութիւնների գյուղ-, պտուղ-, բանջարե-, հագուտառ-, անտառ-, գործ-, Երևան- բաղադրիչները գյուղատնտեսութիւն, անտատային, բանջարեղենի, պտուղների (կամ պտղեղենի), գործարանային, հագուտեղենի, Երևանի բառերի հապավումներն են, որոնք համընկնում են գյուղ, անտառ, պտուղ, բանջար, գործ, հագուտառ բառերին: Այդ կարգի հապավումների կազմութիւնը նույնանում է հատվածական բաղադրութիւնների հիմքերի (հատվածական հիմքերի) կազմությանը՝ այն տարբերությամբ, որ հատվածական հիմքերը պահպանում են հողակապը, իսկ հատվածական հապավումները՝ ոչ: Մյուս կողմից, դրանք բառակերպ հապավումներ են, որովհետև բաղադրութիւնների (ածանցումների, բարդութիւնների, բառածանրի) հիմքերը լինելով նույնանում են համապատասխան բառերին (համա. գյուղ, անտառ բառերը և գյուղ-

(գյուղական, գյուղատնտեսութիւն), անտառ- (անտատային) հապավումները):

Հապավական բաղադրութիւնները կազմվում են հապավումների զանազան համակցութիւններով: Այսպես. ՀՍՍՀ հապավական բաղադրութիւնը կազմվել է տատային հապավումներից. ՀԿԿ Կենտկոմ՝ տատային և վանկային հապավումներից, ժողկրթբաժին՝ վանկային հապավումներից ու ամբողջական բառից: Ըստ հապավումների տարբեր համակցութիւնների հապավական բաղադրութիւնները լինում են շքու տեսակ:

1. Տատային, ինչպես՝ ՍՄԿԿ, ՀՍՍՀ, ՄԱԿ, ԿԿՄ, հօպ, բուհ, պապ և այլն: Միայն բաղաձայններից կազմված տատային հապավումների բոլոր բաղադրիչներն արտասանվում են ը հենարանով, ինչպես՝ ՍըՄըԿըԿը, ՀըՄըՍըՀը և այլն: Զայնաժոր ունեցող տատային հապավումների մեջ բաղաձայնների համար հենարան է դառնում ձայնավոր հապավումը, ուստի և նրանք արտասանվում են առանց ը հենարանի. ինչպես՝ շէկ (չերմային էլեկտրակայան), հօպ (հակաօդային պաշտպանութիւն), պապ (պատրաստ աշխատանքի և պաշտպանության), բուհ (բարձրագույն ուսումնական հաստատութիւն) և այլն: Եթե տատային հապավումների սկզբում, ձայնավորից առաջ, կան մի քանի բաղաձայն հապավումներ, ապա նրանք ստանում են ը հենարանը, բացի ձայնավորին անմիջապես նախորդողից, ինչպես՝ լըկըյեմ. վերջապես, ը ձայնավոր հենարան է արտասանվում նաև այն դեպքում, երբ ձայնավորին հաջորդում են մեկից ավելի բաղաձայններ, ինչպես ՌԲՑ — որակի բարձրացման ֆակուլտետ (արտասանվում է վօբըֆը), ԱՌԿ — աշխատանքային ռեզերվների կոմիտե (արտասանվում է առըկը) և այլն: Ե և յ տառերով սկսվող բառերի տատային հապավումները տատային են գրային տեսակետից, վանկային՝ արտասանության, ինչպես՝ ԿԿՄ (արտասանվում է լըկըյեմ), ՌԲՑ (արտասանվում է վօբըֆը) և այլն:

2. Վանկատատային, ինչպես՝ ՀամԿԿՄ (առաջին հապավում է համ — համամիութենական), ՀայԳՏ (Հայաստանի «Գյուղտնիստիկա» միավորում), գործածութիւնից դուրս եկած պապը (պաշտպանության աշակցության ընկերութիւն — երկ-

որոգ հապավույթն է աչ- աչակցութուն), ջրէկ— ջրային է- լիկտրակայան (առաջին հապավույթն է ջր- ջրային) և այլն:

3. Վանկային, ինչպես՝ աշխղեկ (աշխատանքի դեկավար), գործկոմ (գործադիր կոմիտե), կուսկոմ (կուսակցական կո- միտե), պարտուս (պարտադիր ուսում՝ ուսուցում), հաշմկոտյ (հաշմանդամների կոտակերտիվ) և այլն:

4. Վանկաբառային, ինչպես՝ պետհամալսարան, ժողկրթ- բաժին, պետքանկ, քաղսովետ, շրջմիլբաժին, ժողդատարան և այլն:

Հապավույթների տարբեր տեսակների զանազան համակ- ցութուններով պայմանավորվում են նաև հապավական բա- ղադրութունների, որպես բառային միավորների, տարբեր տեսակները: Այսպես, ՊԲՀ (Պատմաբանասիրական հանդես), ՀՄԳՄ (Հայաստանի սովետական գրողների միութուն), ժող- կրթբաժին, Հայկական ՍՍՀ, ՍՍՀ Միութուն, ԳԱ (գիտու- թյունների ակադեմիա), բուհ հավասարապես հապավական բաղադրութուններ կամ պարզապես հապավումներ են, բայց որպես բաղադրութուն դրանք միմյանցից տարբեր են. ժող- կրթբաժին, գործկոմ, բուհ հապավումները բառեր են, Հայ- կական ՍՍՀ, ՍՍՀ Միութուն՝ բառի և հապավման կապակ- ցութուն, իսկ ՀՄԳՄ և ԳԱ՝ տառային հապավույթների միա- վորում: Այդ տարբերութունները հիմք ընդունելով՝ հապավա- կան բաղադրութունները կարելի է բաժանել երեք տեսակի՝

1) Սիմվոլիզմի հապավումներ.— Բոլոր բա- ղաձայնական տառային հապավույթներով կազմված, ինչպես և՛ մի քանի բաղաձայն հապավույթներից ու միայն մեկ ձայ- նավորից բաղկացած հապավական բաղադրութունները, ինչ- պես՝ ՊԲՀ, ՀՄԳՄ, ՍՄԿԿ, ԼԿԾՄ, ՌԲՑ, ԲԾԳ և այլն: Այս կար- գի հապավական բաղադրութունները կարելի է համեմատել քիմիական սիմվոլային բանաձևերի հետ. օրինակ՝ H₂O բա- նաձևը սիմվոլ է ծառայում ջուր բառի, թեև ներկայացնում է ջրի քիմիական բաղադրութունը: Այդպես են նաև բաղաձայ- նական տառային հապավույթներից կազմված հապավումնե- րը, որոնք հենց սիմվոլներով ներկայացնում են բաղադրյալ անվանումը, ըստ որում միևնույն տառային հապավույթը, այսինքն՝ միևնույն տառը, կարող է հանդես գալ որպես զա- նազան բառերի սիմվոլ (հմտ. ՍՄԿԿ, որի երկու Կ-երը տար-

բեր բառեր են ներկայացնում): Իբրև կանոն, սիմվոլային հա- պավումները կարգացվում են բաղադրիչների վերականգնու- մով՝ ամբողջական բառերով, բացի շատ գործածական և ղը- բանով իսկ սովորական դարձած փոքրաթիվ տառային (բա- ղաձայնական) հապավումներից, ինչպես՝ ՍՄԿԿ, ՀՍՍՀ, ՍՍՀԾ և այլն, թեև դրանց այդպիսի ընթերցումն էլ չի հանձնարար- վում:

2) Բ ա ո ա յ ի ն հ ա պ ա վ ա կ ա ն բ ա ղ ո ղ ո թ յ ո ն ն ե բ կ ա մ բ ա ո ա յ ի ն հ ա պ ա վ ու մ ն ե բ.— Այն բոլոր հա- պավական բաղադրութունները, որոնք գրվում և արտասանվում են որպես մեկ բառ, անկախ իրենց հապավույթների բնույ- թից, ինչպես՝ բուն, ջեկ, պապ, ՄԱԿ, զոժկոմ, ժողկրթբաժ- վար, կոլտեխնություն, պտուղբանջարառ, շինվարչություն, պետքանկ և այլն: Այս հապավումներից մի քանիսը տառա- յին հապավույթներ ունեն (ջեկ, պապ, ՄԱԿ, բուհ), մի քանի- սը՝ վանկային (գործկոմ, ժողկրթբաժնավար), մյուսները՝ վան- կային կամ հատվածական հապավումներ, որոնց միացել են ամբողջական (չհապավված) բառեր (կոլտեխնություն, շին- վարչություն, պետքանկ և այլն), բայց, շնայած դրան, բոլորն էլ բնութագրվում են մեկ ընդհանուր հատկանիշով՝ բոլորն էլ բառեր են: Կարելի է, այնուամենայնիվ, դրանք էլ ստորաբա- ժանել երկու տեսակի. բառակերպ հապավումներ (բուհ, ջեկ, ՄԱԿ, պապ) և հապավական բաղադրյալներ (գործկոմ, ժող- կրթբաժնավար, պտուղբանջարառ, կոլտեխնոլոգ, պետքանկ):

7 Կան փոքրաթիվ հապավական բաղադրութուններ, որոնք, ստալին հայացքից, թվում է, թե կարող են բնութագրվել որպես խառն հապավում- ներ՝ հատվածական+վանկային+բառ. կամ նույնանուն (վանկային)+ տառային+վանկային կամ ամբողջական բառ բանաձևերով, ինչպես Սևա- զեղին, Երևանի ազգաբնակիչ, Հայրենասերուհի և այլն: Իրականում, սա- կային հապավումներ և ամբողջական բառեր: Բանն այն է, որ այդ բա- ռային հապավումների մեջ բուն, զագ, զեա իբրև բաղադրիչներ, այնու- չպետք է դիտել որպես տառային հապավումներ, այլ ինքնուրույն բառեր. բուն, զեա, ջեկ, Նեպ, զագ և նման հապավումները, կազմված տառային հապավումներից, արդեն բառեր են դարձել և բաղադրյալ անունների մեջ մտնում են որպես ինքնուրույն բառային միավորներ (հմտ. Հայաստանի քուհերի խորհուրդ, Երևանի քաղաքային սովետի զագեր բաժին, Սևանի ղեկի շինարարություն), որոնցից էլ ստացվում են Սևան (=Սևանի), բուհ

3) Բ ա ա կ ա պ ա կ ց ա կ ա ն կ ա մ ք ա ղ ա դ ր յ ա լ
 Հ ա պ ա վ ու մ ն ե ր .— Այն բոլոր քաղաքայալ անվանումները,
 որոնք ներկայացնում են. ա) երկու տարբեր սիմվոլային
 հապավումների, որպես մեկ քաղաքայալ անվան, կապակցու-
 թյուն, ինչպես՝ ՀՄՍՀ ԳԱ, ԾՊՀ ՀԿ (Ծրեանի պետական հա-
 մալսարանի հաշվողական կենտրոն) և այլն: ք) Սիմվոլային
 և բառային հապավումների կապակցում, ինչպես՝ ՍՄԿԿ
 կենտրոն, ՀՄՍՀ պետրանկ, ՍՍՀՄ Պետպլան, ՀԿԿ Երթադիմ
 և այլն: գ) Սիմվոլային հապավում (հապավումների) կա-
 պակցություն չհապավված բառերի հետ, ինչպես՝ Հայիական
 ՍՍՀ, ՀՄՍՀ ԳԱ նախագահություն, ՍՍՀՄ Գերագույն Սովետ,
 ՀՍԳՄ վարչություն և այլն: դ) Բառային հապավումների կա-
 պակցություն չհապավված բառերի հետ, ինչպես՝ Երթադիմ-
 վետի գործադիր կոմիտե, շրջկոմի բյուրո, պետբանկի կա-
 ուավարչություն, բանակի հրամկազմ և այլն:

Բառակապակցական հապավումների ընդհանուր հատկա-
 նիշն այն է, որ դրանք բաղկացած են երկու (երեք, չորս և
 այլն) միմյանցից անջատված, առանձին-առանձին գրվող մա-
 սերից կամ քաղաղրիչներից, որոնք և, անկախ իրենց բնույ-
 թից (չհապավված բառ, սիմվոլային հապավում և այլն), միմ-
 յանց հետ կապակցվում են և ստեղծում քաղաղրայալ անուն-
 ներ: Այսպես, օրինակ, ՀԿԿՄ կԿ կազմված է երկու քա-
 ղաղրիչից (երկուսն էլ սիմվոլային հապավումներ), որոնք
 գրվում են իրարից անջատված, որովհետև գրանցից յուրա-
 քանչյուրը մի ինքնուրույն քաղաղրայալ անվան հապավումն է
 (Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական
 միություն և կենտրոնական կոմիտե) և ինչպես չհապավված
 քաղաղրայալ անունների, այնպես էլ գրանց հապավումների
 կապակցությամբ ստեղծվում է մի նոր քաղաղրայալ անվանում
 (Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական

(= բուհերի), զագս (= զագրի) և նման հատվածական հապավումները:
 Ուտի և այլ կարգի հապավումները քաղաղրայալությունները պետք է նույնացնել
 պտուղբանդառա, ժողկրթբաժին և նման քաղաղրայալությունների հետ: Այս-
 պիտի բնութագրությունը ապացուցվում է Սեանգվային, շրջագաքածվաթ և
 նման քաղաղրայալություններով, որոնց գեւ, զագս քաղաղրիչները ետյեռենի
 ետմաթ հապավումներ չեն, ալլ փոխառյալ լիւոժեթ բառեր, ինչպես, օրի-
 նակ, սովետ բառը, թեն ևուսերհնում ԲՅԸ, ՅՅԸ տառային հապավումներ են:

Վիտիլյան կենտրոնական կոմիտե): Ծիշտ այդպես էլ բառա-
 կապակցական հապավումների մյուս տեսակները ներկայաց-
 նում են քաղաղրայալ անուններ կազմող հապավական կապակ-
 ցություններ՝ առնվազն երկու ինքնուրույն քաղաղրայալ անվա-
 նումների միավորումով (հմմտ. Գերագույն Սովետ, բայց՝
 ՍՍՀՄ Գերագույն Սովետ, ՀՄՍՀ Գերագույն Սովետ):

Բառային և բառակապակցական հապավումների մեջ կա-
 ռոզ են բաց թողնվել քաղաղրայալ անվան մեկ կամ մի քանի
 քաղաղրիչներ՝ հապավումը որևե՛նաթափելու», համեմատա-
 բար կարճացնելու նպատակով: Այսպես՝ արհեստակցական
 միություն կոմիտե քաղաղրայալ անվան հապավումն է արհկոմ,
 որի մեջ զեղչվել է միություն բառը.— (ՀՄՍՀ Մինիստրների
 խորհրդի) հրատարակչությունների (պոլիգրաֆիայի և գրթի
 առևտրի գործերի) պետական կոմիտե— հրատպետկոմ (հա-
 պավումը կազմվել է միայն երեք բառից).— (ՀՄՍՀ Մինիս-
 տրների խորհրդի) պրոֆեսիոնալ-տեխնիկական (կրթության)
 պետական կոմիտե— պրոֆտեխպետկոմ, (ՀՄՍՀ Մինիստրնե-
 րի խորհրդի) պետական պլանային կոմիտե— պետպլան և
 այլն: Այսպիսի հապավումները, որոնք ալ. Գ. Սեակը ան-
 վանում է կրկնաճապավումներ կամ զեղչումով հապավում-
 ներ, հաճախ քաղաղրայալ անվանումների այնքան կրճատ հա-
 պավումն են ներկայացնում, որ դժվար է լինում հապավում-
 ները լրիվ բառերով փոխարինելիս ամբողջական քաղաղրայալ
 անվանումն իմանալ (հմմտ. պետպլան, հրատպետկոմ, գյուղ-
 տեխնիկա և այլն): Այս հապավումները վերացարկվելով ի-
 ռենց ամբողջական քաղաղրայալ անվանումից, ծամանակի ըն-
 թացքում կարող են վերածվել հատուկ անունների, ինչպես՝
 «Գյուղտեխնիկա» միավորում, «Աննդառի» խանութ, «Քիմ-
 արդ» և այլն:

Հապավական քաղաղրությունների կարևորագույն բնութա-
 գրերից մեկը նրանց գործածականությունն է: Ընդունված է
 ասել, թե հապավումները գրային ծագում ունեն, այսինքն՝
 ամեն մի հապավում նախապես երևան է գալիս գրավոր խոս-
 քի մեջ: Սա, իհարկե, իբրև ընդհանուր կանոն, ճշմարիտ է:
 Սակայն կարևոր հանգամանք է նաև այն, թե ինչպիսի գոր-
 ծածոթյուն ունեն հապավումները բանավոր-խոսքում, ինչ-
 պես և գրավոր խոսքի տարբեր ոլորտներում (տարբեր լեզ-

վառներում): Այդ տեսանկյունով բոլոր հապավական բաղա-
գրութիւնները կարելի է բաժանել երկու շերտի՝ ճամազոր-
ծածական հապավումներ և տերմինային-գրադմունքային հա-
պավումներ:

Համազործածական հապավումների շերտին են պատկա-
նում այն բոլոր հապավական բաղադրութիւնները, որոնք,
ինչպես շեղք շերտի բառերը, գործածվում են բոլորի կող-
մից՝ սովորական խոսքային իրադրութիւն մեջ, անօրինական
խոսքում (թե՛ գրավոր և թե՛ բանավոր), ինչպես՝ քաղսովետ,
չրջկոմ, կենտկոմ, ՀԱՄԿն, կոլտնտեսութիւն, աշխղեկ, տնտ-
հաշվարկ, բուհ, առքածին, ՍՍՀՄ, ՀԿԵՄ, սոցապ, պետապ,
սոցմրցում, քաղպարապմունք, զինկոմ, պետավտոտեսչու-
թիւն, կուսանգամ, տեղկոմ, արհկոմ, գործկոմ և այլն:

Տերմինային-դրադմունքային շերտին ևն պատկանում այն
հապավական բաղադրութիւնները, որոնք գործածվում են գի-
տութիւն, տեխնիկայի, արտադրութիւն, գրադմունքի տվյալ
բնագավառում և սովորաբար այդ բնագավառի հետ շփում
չունեցող մարդկանց համար ոչ միայն անգործածական, այլև
շատ հաճախ անհասկանալի են, ինչպես՝ ԳՀՄ (գիտահետա-
զոտական սեկտոր), ԽՀն (խմբագրական-հրատարակչական
խորհուրդ), ուսվարչութիւն (ուսումնական վարչութիւն), ՊՔՀ
(պետական քննական հանձնաժողով), ՇՆՄ (շարահյուսական
նվազագույն միավոր) և այլն: Այս կարգի հապավումները,
որոնք մեծ մասամբ սիմվոլային հապավումներ են, գործած-
վում են սվյալ ճյուղի գիտական ու գործարարական գրակա-
նութիւն, զեկուցումների, հաշվետվութիւնների և նման կար-
գի վավերագրերի մեջ:

Գործառական տեսակետից ավելի կարևոր է այն, թե ինչ
դեր ունեն հապավումները գեղարվեստական խոսքի մեջ: Թեև
այս խնդիրն առայժմ ուսումնասիրված չէ հանգամանորեն,
բայց և այնպես կարելի է հետևյալ ընդհանուր իրողութիւնն
արձանագրել: Գեղարվեստական գրականութիւն մեջ սովորա-
կան գործածութիւն ունեն բառային հապավումները (աշխ-
ղեկ, առքածին, արհկոմ, շրջկոմ, սոցմրցում և այլն) և խիստ
սահմանափակ գործածութիւն՝ սիմվոլային հապավումները՝
մանավանդ շփածոյի մեջ:

Փոխառվել կարող են ոչ միայն բառերը, այլև հապավա-
կան բաղադրութիւնները: Ժամանակակից հայերեկի համար
որպես հապավումների փոխառութիւն աղբյուր է ծառայում
ռուսերենը:

Փոխառյալ հապավումները կարելի է բաժանել երկու կար-
գի. ռուսերեն հապավումներ և օտարալեզու հապավումներ.
որոնք, ինչպես միջնորդական փոխառութիւնները, հայերե-
կին են անցնում սովորաբար ռուսերենի միջոցով: Ռուսերեն
փոխառութիւններ են, օրինակ, նէպ (ռուս. նэп— Новая
Экономическая Политика), զագս (загс— Запись Актов
Гражданского Состояния), լավսան (лавсан— Лаборато-
рия Высших Органических Соединений Академии Наук
СССР), չեկա (чэка— Чрезвычайная Комиссия), գէս (гэс—
Гидро-электрическая станция), սովխոզ (советское хо-
зяйство), ՏԱՍՍ (ТАСС— Телеграфное Агенство Совет-
ского Союза), ԴՕՍԱԱՖ (ДОСААФ— Добровольное Об-
щество Содействия Армии, Авиации и Флоту) և այլն:

Ռուսերենի միջոցով փոխառված օտարալեզու հապավումներ
են. լազեր (անգլ. light amplification stimulated emission
of radiation— լույսի ուժեղացում ազդակազդրված (ստիմու-
լավորված) ճառագայթման միջոցով):

ՅՈՒՆԵՍԿՈ (անգլ. United Nations Educational, Scian-
tific and Cultural Organisation— Միավորված Ազգերի՝
լուսավորութիւն, գիտութիւն և մշակույթի կազմակերպու-
թիւն):

ՆԱՏՕ (անգլ. North Atlantic Treaty Organisation—
Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպութիւն):

ՍԵՆՏՕ (անգլ. Sentral Treaty Organisation— կենտրո-
նական դաշինքի կազմակերպութիւն):

ՖԻՖԱ (ֆրանս. Fédération internationale de football as-
sociation— ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդե-
րացիա):

ՖԻԴԵ (Ֆրանս. Fédération international des échecs— շախմատի միջազգային ֆեդերացիա):

Հապավումներին նվիրված ուսումնասիրությունների մեջ խոսվում է նաև հապավումների պատճենումների մասին. ըստ որում իբրև պատճենումների օրինակներ են բերվում շրջվում (райком), պետբանկ (госбанк), ՍՍՀՄ— СССР և նման հապավական բաղադրությունները: Մակայն հազիվ թե այդ կարգի հապավումները կարելի լիներ պատճենումներ համարել, դրանք սովորական հապավումներ են և ոչնչով չեն պայմանավորվում ուսերենի համանման հապավումներով: Քերված օրինակներում պատճենում կարելի է համարել ոչ թե հապավումները, այլ դրանց համապատասխան չհապավված բաղադրյալ անունները, որոնք սովորաբար կազմվում են ուսերեն բաղադրյալ անվան թարգմանությամբ: Պատճենում կարելի է համարել այնպիսի հապավումները, որոնք բաղադրյալ անունների զեղչումներով ընդօրինակումն են ուսերենի, ինչպես՝ պետայլան պատճենումն է ուսերեն ГОСПЛАН հապավման, որովհետև հապավման մեջ զեղչված անգամները և հապավման համար պահպանվածները համընկնում են իրար, ըստ որում հայերենը հետևում է ուսերենին, ուսերենից անկախ լինելու դեպքում հայերենում կարող էր կազմվել, ասենք, պլանայեակում կամ պլանկում կամ պետպլանկում. այդպիսի պատճենումներ են՝ հրատպեակում, պետգրատ, գյուղանախնամատ, որոնք պատճենված են ուսերեն ГОСКОМНАЗДАТ, ГОСКНИГТОРГ, СЕЛЬХОЗИНСТИТУТ հապավումներից. հատկապես վերջին օրինակն այդ տեսակետից շատ ցայտուն է, որովհետև ունենք շատ սովորական և ոչ պատճենված գյուղինստիտուտ հայկական հապավումը:

Փոխառյալ հապավումները հայերենում հանդես են գալիս որպես պարզ բառեր, այլ կերպ ասած, զագս, լավսան, լագեր և այլն հայերենի համար այլևս հապավումներ չեն, այլ սովորական փոխառյալ բառեր, ինչպիսիք են, ասենք, սովետ, կամբայն, առակտոր և այլն: Այս կարգի փոխառյալ հապավական բաղադրությունները, որոնք իսկական փոխառություններ կարելի է համարել, պետք է տարբերել բանավոր խոսքում իբրև ուսաբանություն գործածվող Յեկա, Մովսիս, ռայկոմ, պոլիտրյուրո, գենսեկ, կապէէսէս և նման հապավումներ:

րից: Այդ հապավումների գործածությունը, որ հատուկ է միայն բանավոր խոսքին, նույնքան խոսելի ու մերժելի է, որքան ռեմեն, խալաղիլեիկ, պրիչոսկա, ռեմոնտ, մոստ և նման բառերի գործածությունը ժաղգոնատիպ հայերեն խոսքի մեջ: Ինչ վերաբերում է մեր լեզվի մեջ արմատավորված զագս, էկպ, լավսան, լագեր, ֆիդե, ֆիֆա և նման բառերին, ապա դրանք իրոք մեր լեզվի սեփականությունը դարձած, մեր բառապաշարը հարստացնող փոխառություններ են:

ՏԵՐՄԻՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ա. Տերմինաբանությունը և տերմինագիտությունը

Տերմինաբանության մշակման ու հարստացման խնդիրը լեզուների բառապաշարի հարստացման ու կատարելագործման կարևորագույն խնդիրներից մեկն է. առանց հարուստ ու մշակված տերմինաբանության չկա հարուստ ու զարգացած լեզու: Եթե սովորական, այսպես կոչված առօրեական գործածության բառերը ապահովում են ամենօրյա փոխադարձ հաղորդակցումը հասարակական կյանքի առօրեական հարաբերությունների մեջ, ապա տերմինաբանությունը ներկայացնում է հասարակության գիտական ու տեխնիկական առաջադիմության ողջ բովանդակությունը և ապահովում բարձր զարգացման հասած տեխնիկայի, արտադրության ու գիտության գաճազան ճյուղերի կազմակերպումն ու հետագա առաջընթացը: Այս է պատճառը, որ տերմինաբանության խնդիրը հուզող հարցերից մեկն է դարձել ոչ միայն առանձին լեզուների մշակման ու հարստացման ոլորտում, այլև առհասարակ՝ համաշխարհային գիտական մտքի բնագավառում: Տերմինաբանության հարցերն այսօր կենտրոնական տեղ են գրավում այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են իրադեկման տեսությունն ու պրակտիկան, կիրառական տեխնիկայի տարբեր ճյուղերը, իմացության տեսությունը և այլն, և այլն: Պատահական չէ նաև, որ շատ գիտությունների բնագավառներում պարբերաբար միջազգային տերմինաբանական գիտաժողովներն զբաղվում են սովյալ բնագավառի տերմինաբանության մշակման ու ճշգրտման հարցերով (օրինակ՝ կազմախոսական տերմինների, բուսաբանական տերմինների, կենսաբանական տերմինների և այլ գիտաճյուղերի տերմինների՝ վերջին տասնամ-

յակներում տեղի ունեցած և պարբերաբար տեղի ունեցող ճշգրտումները՝ միջազգային մասշտաբի գիտաժողովներում):

Գիտատեխնիկական հեղափոխության արդի զարաշրջանում գիտության, տեխնիկայի, արտադրության բոլոր ճյուղերի անհախընթաց զարգացումը խթանեց նաև լեզուների բառապաշարի, մասնավորապես տերմինաբանության վիթխարի հարստացումը, մշակումն ու կատարելագործումը: Այս իրադրությունը ժամանակակից լեզուների զարգացման գործընթացի կարևորագույն կողմերից է և, բնականաբար, ամեն մի լեզվի մշակման, հարստացման ու կատարելագործման գործնական խնդիրների լուծման մեջ իր առանձնահատուկ կարևորությունն ունի: Այս էլ, իր հերթին, հատուկ անհրաժեշտություն է ստեղծել գիտականորեն զբաղվելու ինչպիս տերմինաբանության ընդհանուր տեսության, այնպես էլ առանձին լեզուների տերմինաբանության և գիտության ու տեխնիկայի գաճազան ճյուղերի տերմինաբանական կարգերի գիտական ուսումնասիրության: Եթե մի 20—30 տարի առաջ տերմինաբանության հետազոտությունը կազմում էր ամեն մի լեզվի բառագիտական ուսումնասիրության մի բաժինը միայն, ապա, այժմ, լեզվի գործնական քերականությունների մեջ այդպիսին լինելով, բառապաշարի գիտական ուսումնասիրության մեջ առանձնանում է որպես ինքնուրույն բնագավառ: Լայն առումով տերմինաբանությունը, իբրև գիտություն տերմինների ու տերմինահամակարգերի մասին, իբրև տերմինագիտություն, այժմ արդեն դառնում է միջգիտական օժանդակ գիտություն, որով զբաղվում են ոչ միայն լեզվաբանները, այլև գիտության ամենատարբեր ճյուղերի ներկայացուցիչները: Եվ սա միանգամայն օրինաշարի է. ամեն մի գիտության, գիտաճյուղի և այլնի տերմինահամակարգ ներկայացնում է այդ բնագավառի գիտական-մասնագիտական հասկացությունների ամբողջությունը, իսկ այդ հասկացությունների սահմանումը, ճշգրտումը և համապատասխան տերմինների ընտրությունը առաջին հերթին մասնագետների գործն է: Այդ բոլորով հանդերձ, տերմինաբանությունը, որպես բառերի ու կայուն բառակապակցությունների ամբողջություն, կազմում է լեզվի բառապաշարի գործառական շերտերից մեկը, և դրա լեզվաբանական հետազոտությունը լեզվաբանության խնդիրն է: Այդ դեպ-

քում արգեն տերմինադիտությունը ոչ թե օժանդակ գիտու-
թյուն է, այլ սովյալ լեզվի բառապաշարի ուսումնասիրության
մի ինքնուրույն բնագավառը: Այս բնութագրությունն էլ, ահա,
որոշում է տերմինադիտության թե՛ առարկան և թե՛ խնդիր-
ները: Տերմինադիտության նպատակն է ստեղծել լեզվաբանա-
կան ընդհանուր տեսություն տերմինաբանության և տերմինա-
համակարգերի մասին, ուսումնասիրել առանձին լեզուների
տերմինների բառակազմական, իմաստաբանական ու գործա-
ռական յուրահատկությունները, տերմինաբանության հարըս-
տացման միջոցներն ու եզանակները, մի խոսքով՝ այն ամենը,
ինչ-որ կարող է դառնալ լեզվաբանական հետազոտության
առարկա: Այս կարգի տեսական-լեզվաբանական ուսումնա-
սիրության անհրաժեշտությունը թելադրվում է տերմինաբա-
նության զարգացման այժմյան մակարդակով: Մեր ժամանա-
կի լեզուների բառապաշարի մեջ տերմինները քանակային գե-
րակազմություն ունեն բառապաշարի շեղոք շերտի նկատմամբ,
և այդ գերակազմությունն աստիճանաբար ավելի ու ավելի մե-
ծանում է, ըստ որում դա ժամանակակից լեզուների բառա-
պաշարի զարգացման ամենաէական կողմերից մեկն է: Տեր-
մինաբանության հարստացման այդ բուն ընթացքին ուղեկ-
ցում են նորանոր տերմինահամակարգերի ձևավորումն ու
զարգացումը՝ գիտության, տեխնիկայի ու արտադրության նոր
ճյուղերի առաջացման համապատասխան, և միջհամակար-
գերի ձևավորումն ու զարգացումը՝ գիտության, տեխնիկայի
ու արտադրության տարբեր ճյուղերի միջև ավելի սերտ կա-
պերի ստեղծման, փոխադարձ ներթափանցումների ու միջգի-
տությունների ձևավորման համապատասխան: Այսպիսով, տե-
ղի է ունենում մի կողմից տերմինահամակարգերի տարան-
ջատում, մյուս կողմից՝ դրանց միավորում, համաբարդում:
Այս բոլորը առաջադրում են տերմինահամակարգերի լեզվա-
կան հորինվածության բազմակողմանի ուսումնասիրություն,
տերմինահամակարգերի անհրաժեշտ ու հնարավոր միասնա-
կանացման և, դրա հետ միասին, առանձին տերմինահամա-
կարգերի մշակման, ճշգրտման ու կատարելագործման գի-
տական սկզբունքների մշակում: Իսկ այս բոլորը պահանջում
են տերմինաբանության լեզվաբանական տեսության և տեր-

մինաբանության ու տերմինահամակարգերի լեզվաբանական
ուսումնասիրության մեթոդների մշակում:

բ. Տերմինաբանություն և տերմինահամակարգեր

Տերմինաբանությունը՝ սովյալ լեզվի տերմինների հավա-
քական ամբողջությունն է: Քանի որ տերմինները արտահայ-
տում են գիտության, արվեստի, տեխնիկայի, արտադրության
և այլնի որևէ բնագավառին հատուկ հասկացությունները,
այս սովյալ լեզվի ամբողջական տերմինաբանությունը բա-
ժանվում է ըստ բնագավառների, մասնավորվում որպես սովյա-
լ բնագավառի տերմինաբանություն: Այստեղից էլ առա-
ջանում է ընդհանուր տերմինաբանություն և մասնավոր տեր-
մինաբանություն տարբերակումը: Եթե սովյալ լեզվի բոլոր
տերմինների հավաքական ամբողջությունը այդ լեզվի քնդ-
հանուր տերմինաբանությունն է, ապա ամեն մի առանձին
բնագավառի մասնավոր տերմինների ամբողջությունն այդ
բնագավառի մասնավոր տերմինաբանությունն է: Այս մաս-
նավորումը կամ տարբերակումը կատարվում է տերմինաբա-
նության բառի հետ գիտության, արվեստի, տեխնիկայի և
այլնի բնագավառը ցույց տվող ածական-որոշիչի (նաև սե-
ռական-հատկացույցի) կապակցությամբ: Այսպես, օրինակ,
երբ ասում ենք ճայերենի տերմինաբանություն, հասկանում
ենք հայերենում գործածվող բոլոր տերմինների հավաքական
ամբողջությունը, իսկ երբ ասում ենք լեզվաբանական տերմի-
նաբանություն, բժշկական տերմինաբանություն, ռազմական
տերմինաբանություն և այլն, ապա տերմինաբանություն քնդ-
հանուր անվանումը մասնավորում ենք և սահմանափակում

¹ Տերմինաբանություն (ինչպես և ռուսերեն տերմինաբանություն) բառը գոր-
ծածվում է երեք նշանակությամբ. 1. սովյալ լեզվի տերմինների ամբողջու-
թյունը, 2. սովյալ բնագավառի տերմինների ամբողջությունը, 3. բառադի-
տության այն բաժինը, որ զբաղվում է տերմինային համակարգերի ու տեր-
մինների տեսությամբ ու պրակտիկայով: Առաջին նրկու նշանակությունները
նույնական են, և տարբերությունը միայն ծավալային է, որ արտահայտվում
է մասնավորող բառակապակցություններով: Երրորդ իմաստի համար մենք
գործածում ենք տերմինագիտություն բառը:

տվյալ բնագավառի տերմինների ամբողջութեամբ: Այսպիսի սահմանափակումը կամ մասնավորումը թելադրում է լեզվի ողջ տերմինաբանութեան դասակարգում ըստ բնագավառների, որով որոշվում է ոչ միայն տերմինի պատկանելութունը, այլև, որ ավելի կարևոր է, նրա փոխադարձ կապն այդ բնագավառի տերմինների հետ և պայմանավորվածությունը տվյալ տերմինաբանական համակարգով: Այսպես, ենթադրենք, թե մեզ տրված են երկու բառ՝ սիւրաբոբ և մաշկաբոբ. բառակազմական բոլոր հատկանիշներով էլ դրանք նույնական են (երկուսն էլ հոդակապավոր են, երկուսի առաջին բաղադրիչն էլ գոյական է, երկուսում էլ երկրորդ բաղադրիչն է նույն բառը), բայց առաջինը ածական է, երկրորդը՝ գոյական: Սակայն դիտենք, որ առաջինը բանաստեղծական բառ է, իսկ երկրորդը՝ բժշկական տերմին. դա մեզ կթելադրի մաշկաբոբ բառը համեմատել լեզվաբոբ, բոբաբոբ և նբման բազմաթիվ բժշկական տերմինների հետ, որից և կպարզվի, որ բժշկական տերմինաբանության մեջ մարմնի որևէ գործարանի կամ մասի անվան հետ բոբ բառով կազմվում են բաղադրյալ գոյականներ, որոնց մեջ բոբ-ը նշանակում է բորբոքում: Տերմինների պատկանելությունն այս կամ այն բնագավառին չի կարող որոշվել սոսկ այն բանով, որ նրանք գործածվում են տվյալ բնագավառում: Որևէ բնագավառի տերմինների գործածությունը ուրիշ բնագավառներում սովորական երևույթ է: Այսպես, օրինակ, փիլիսոփան իր հետազոտության մեջ կարող է գործածել կենսաբանական (ֆիզիկական, մաթեմատիկական և այլն) բազմաթիվ տերմիններ, իսկ կենսաբանն էլ իր հերթին՝ փիլիսոփայության տերմիններ, բայց դրանով ոչ կենսաբանության (ֆիզիկայի, մաթեմատիկայի և այլն) տերմինները կդառնան փիլիսոփայական տերմիններ, ոչ էլ փիլիսոփայության տերմինները՝ կենսաբանական (ֆիզիկական, մաթեմատիկական և այլն): Այս նկատառումները պահանջում են ճշգրտել տերմինի սահմանումը գործառական հատկանիշով այնպես, որ սոսկ այս կամ այն մասնագիտական խոսքում գործածվելը ինքնին հիմք չդառնա բառը որպես այս կամ այն մասնագիտության տերմին դիտելու համար: Այս տեսակետից տերմինի համար էական բնութագիրը դառնում է գիտության (արվեստի, տեխնիկայի,

արտադրության և այլնի) տվյալ բնագավառին հատուկ հասկացություն արտահայտելը. եթե տվյալ բառը այս բնագավառի տերմին է, ապա նա պետք է արտահայտի հենց այդ բնագավառի առարկայի (երևույթի, գործունեության, գործընթացի, հետազոտության առարկայի և այլնի) հասկացություն: Առաջնակարգ նշանակություն ունեցող այս բնութագրով տերմինը հանգես է գալիս որպես տվյալ բնագավառին հատուկ հասկացությունների ամբողջությունը ներկայացնող համակարգի տարր: Այստեղից էլ ծագում է տերմինային համակարգ ըմբռնումը: Գիտության, արվեստի, արտադրության և այլնի յուրաքանչյուր ճյուղ ունի իր տերմինների ամբողջությունը, որ կազմում է տվյալ բնագավառի տերմինաբանական համակարգը կամ տերմինաբանակարգը. լեզվաբանությունն ունի իր տերմինահամակարգը, փիլիսոփայությունը՝ իր, մաթեմատիկան՝ իր և այլն: Այլ կերպ ասած, ամեն մի մասնավոր տերմինաբանություն մի տերմինահամակարգ է:

Տերմինաբանական համակարգ ըմբռնման հետ սերտորեն կապված են տերմինաբանական միջնամակարգեր և տերմինաբանական ընդհանուր համակարգ ըմբռնումները: Գիտության, արվեստի, արտադրության և այլնի ճյուղերը միմյանցից մեկուսացած չեն. նրանք ոչ միայն գտնվում են փոխադարձ կապի մեջ, այլև շատ դեպքերում հետազոտում են միևնույն առարկան (երևույթը, իրողությունը, գործընթացը և այլն) տարբեր մոտեցումներով ու տարբեր հայեցակետերով: Հասկանալի է, որ բոլոր այսպիսի դեպքերում միևնույն առարկայի կամ նրա այս կամ այն հատկանիշի, մասի և այլնի հասկացությունը և բառային անվանումը նույնական են երկու կամ ավելի գիտությունների համար էլ, այլ կերպ ասած, տվյալ տերմինը հավասարապես պատկանում է թե՛ մեկ և թե՛ մյուս գիտության տերմինահամակարգին: Այսպես, օրինակ, և՛ բժշկությունը, և՛ մարդակազմությունը (մարդու անատոմիան), և՛ մարդու բնախոսությունը հավասարապես գործածում են բոբե, գլխուղեղ, կուրծք, կրծքավանդակ, լյարդ, սիրտ և բազմաթիվ այլ տերմիններ, ըստ որում այդ գիտություններից յուրաքանչյուրն զբաղվում է մարմնի նույն գործարանի կամ մասի ուսումնասիրությամբ, թեև տարբեր մոտեցումներով ու նպատակներով: Լեզվաբանությունը և գրա-

կանազիտութիւնը հաճախարայես զործածում են շեշտ, վանկ, հարակրկնութիւն և նման բազմաթիւ տերմիններ, տնտեսագիտութիւնը և պատմութիւնը՝ ֆեոդալիզմ, արտադրանքաճակ, արտադրանքաբերութիւններ և այլն, և այլն: Այս բոլոր դեպքերում ունենք միևնույն տերմինը, որպէս տարբեր տերմինաբանական համակարգերի միավոր, որը պայմանավորված է առարկայի (երևույթի, հատկանիշի և այլնի) նույնութիւնով: Քանի որ տարբեր գիտութիւններ դրադրում են միևնույն առարկայի (երևույթի, գործընթացի, գործունեութեան և այլնի) հետազոտութեամբ, ապա պարզ է, որ այդ առարկայի հասկացութիւնն էլ կարող է նույն բառով արտահայտվել, ուստի և տարբեր տերմինաբանական համակարգերի մեջ նույն տերմինը կարող է գործածուել իբրև գրանց համար ընդհանուր տերմինաբանական միավոր: Մյուս կողմից՝ գիտութիւնների զարգացման ընթացքում մեկի ձեռք բերած նպատակները օգտագործվում են նաև հարակից մի շարք գիտութիւնների կողմից, յուրացվում նաև նրանց կողմից: Այս դեպքում էլ նախապես տվյալ բնագավառին հատուկ տերմինը անցնում է մյուս գիտութիւններին՝ դառնալով մի քանի գիտութիւնների տերմինաբանական համակարգի ընդհանուր տարր: Այս պրոցեսը, սակայն, կարող է տեղի ունենալ նաև այլ եղանակով. տվյալ գիտութեան հատուկ տերմինը կարող է յուրացվել այլ գիտութիւնների կողմից՝ որոշ տեսակետից նույնական կամ համանման երևույթի (հատկանիշի և այլնի) արտահայտման համար, որով թեև տերմինն իբրև բառ ընդհանուր է դառնում, սակայն իմաստով տարբերակվում է՝ արտահայտելով բոլորովին տարբեր մասնագիտական հասկացութիւններ (համատօրինակ, սեռ որպէս կենսաբանական, տրամաբանական, շեղվաբանական, գրականագիտական ընդհանուր տերմին): Այսպիսի դեպքերում ստեղծվում է տերմինային բազմիմաստութիւն, որի մասին կիսովի ստորև:

Վերջապես, գիտութեան ու տեխնիկայի (արվեստների, արտադրութեան և այլնի) զարգացման ընթացքում մշակվել են հետազոտութիւնների, գործունեութեան, մեթոդների ու մեթոդիկայի ընդհանուր եղանակներ, գիտական հասկացութիւններ և այլն, որոնց համապատասխան տերմինները բոլոր գիտութիւններին են պատկանում, ինչպէս՝ մեթոդաբանութիւն.

մեթոդ, փորձառ (էֆպերիմենտ), վերլուծութիւն, համարութիւն, համակարգ և այլն: Այս կարգի տերմիններն էլ, նախապես ծագած լինելով մի առանձին բնագավառում, ընդհանրացել են և դարձել բոլոր բնագավառների սեփականութիւնը: Այս տարբեր իրողութիւններն ու հանգամանքներն էլ, ահա, առաջ են բերում տերմինահամակարգերի փոխադարձ ներթափանցումներ ու ընդհանրացումներ, որոնց հետևանքն է լինում տերմինային միջհամակարգերի և ընդհանրական տերմինահամակարգի առաջացումը: Իբրև ընդհանուր կանոն, որքան մերձավոր կապի մեջ են տարբեր գիտութիւններ, տեխնիկայի, արվեստի, տնտեսութեան և այլնի ճյուղեր, այնքան ավելի հարուստ են նրանց տերմինային միջհամակարգերը, այլ կերպ ասած՝ հարակից բնագավառները հարուստ են տերմինային միջհամակարգերով և հակառակը: Ընդհանրական համակարգը, գրանց հակառակ, ընդգրկում է միայն բոլոր ճյուղերին վերաբերող տերմինները և հասկանալիորեն շատ ավելի ազքատ է, քան որևէ առանձին տերմինահամակարգ: Այստեղ էլ, սակայն, պետք է նկատի ունենալ, որ գիտութեան, արվեստի, արտադրութեան և այլնի ճյուղերը իրենց մերձավորութեամբ խմբավորվում են ու կազմում գիտութիւնների (տեխնիկայի, արվեստների, արհեստների, տնտեսութեան) ամբողջ խմբեր ու դասեր, ինչպէս՝ հասարակական գիտութիւններ, բնական գիտութիւններ, արդյունաբերութիւն, գյուղատնտեսութիւն, կիրառական արվեստներ և այլն: Եթե բոլոր գիտութիւնների համար ընդհանրական տերմինները համեմատաբար քիչ են, ապա այս կարգի խմբավորումների համար բավականաչափ շատ են: Այս բանը հիմք ընդունելով՝ բոլոր բնագավառների համար ընդհանուր տերմինների ամբողջութիւնը կարելի է անվանել համընդհանուր տերմինահամակարգ, իսկ առանձին խմբավորումների ընդհանուր տերմինների ամբողջութիւնը գիտել որպէս ընդհանրական տերմինահամակարգ՝ գիտութեան, տեխնիկայի և այլնի տվյալ խմբի բոլոր ճյուղերի համար. այսպիսով կունենանք՝ համընդհանուր տերմինահամակարգ, հասարակական գիտութիւնների ընդհանրական տերմինահամակարգ, բնական գիտութիւնների ընդհանրական տերմինահամակարգ և այլն:

Շարադովածից ելնելով՝ տվյալ լեզվի տերմինաբանութիւն-

նը կարող ենք սահմանել իբրև տերմինահամակարգերի ամբողջություն, որի ստորաբաժանումներն են՝ համընդհանուր տերմինահամակարգը, ճյուղային ընդհանրական տերմինահամակարգերը, տերմինային միջհամակարգերը կամ միջտերմինահամակարգերը և բոլոր մասնավոր տերմինահամակարգերը:

գ. Բառ և տերմին

Բառապաշարի գործառական դասակարգության մեջ տերմինաբանությունը բնութագրվում է որպես տվյալ լեզվի բառապաշարի գործառական մի մասնաշերտ: Այս դեպքում նշանակետը բառերի գործառական բնութագիրն է. բառը գործածվում է գիտության, տեխնիկայի, արվեստի, արտագրության, գյուղատնտեսության, վարչա-դիվանագիտական հարաբերությունների, գործունեության ու գործառնությունների որևէ բնագավառում՝ արտահայտելով դրանց հատուկ հասկացություն, հետևաբար և տերմին է ու պատկանում է բառապաշարի տերմինաբանական մասնաշերտին: Այս նշանակետը բավարար հիմունք է բառապաշարի գործառական դասակարգության համար, բայց ըստ էության շատ քիչ բան է ասում տերմինի մասին և չի կարող հիմք հանդիսանալ տերմինի բնորոշման համար: Որպեսզի կարողանանք գտնել տերմինի էական հատկանիշները կամ բնութագրերը և դրանց օգնությամբ սահմանել այն, դիմենք մի քանի բառերի քննության:

Քն բառը շեղոք շերտի բառ է և նշանակում է՝ 1. թռչունների, միջատների, ինչպես և որոշ կաթնասունների (օր. չղջիկի) թռչելու գործարանը, 2. ինքնաթիռի քաշող մակերեսներից մեկը, 3. մարդու ձեռք, կուռ և այլն:

Պլուխ.— 1. մարդու մարմնի վերին, իսկ կենդանիների՝ վերին կամ առջևի մասը, որ պարունակում է ուղեղը, 2. գլխի սկավառակը, կառսփ, գանգա և այլն:

Խոռոչ.— 1. ոչ միջանցուկ բացվածք, դատարկություն, փոստրակ որևէ բանի մեջ, 2. դատարկ կամ լցված տարածություն կենդանի օրգանիզմում, որը սահմանազատվում է մարմնի պատերի ներքին մակերեսներով, 3. մարմնի որևէ մասի փոս ընկած տեղ, որի մեջ գտնվում է մի օրգան (օր. աչքի խոռոչ), 4. որևէ մարմնի մեջ զանազան պատճառներով

տեղի ունեցող քայքայումից առաջացած դատարկություն (օր. ատամի խոռոչ, լեռնապարի խոռոչ)» և այլն:

Այս բառերի նշանակություններից մի քանիսը, ինչպես հեշտությամբ կարելի է նկատել, այնքան ընդհանուր ու սովորական են, որ չի կարելի դիտել իբրև այս կամ այն գիտության, տեխնիկայի որևէ բնագավառի և այլնի յուրահատուկ հասկացություն. օրինակ, քն բառի 3-րդ նշանակությունը (մարդու ձեռք, կուռ), թեև շատ սովորական ու գործածական, բայց ավելի շուտ փոխաբերական նշանակություն է և ոչ թե որևէ գիտության, ասենք, կազմախոսության (անատոմիայի) գիտական հասկացություն. այդպես են նաև զլուխ բառի 2-րդ և խոռոչ բառի 1-ին նշանակությունները: Գրանց հակառակ, քն բառի 1-ին և 2-րդ, խոռոչ բառի 2-րդ, 3-րդ և 4-րդ նշանակությունները գիտության ու տեխնիկայի այս կամ այն բնագավառին հատուկ հասկացություններ են: Վերջապես, զլուխ բառի 1-ին նշանակությունը և՛ սովորական է բոլոր խոսողների համար անկախ նրանց կրթությունից, մասնագիտությունից ու զբաղմունքից, և՛ կազմախոսական հասկացություն: Ինչպես տեսնում ենք, այս երեք բառերն էլ իրենց մեկ կամ մի քանի նշանակություններով տերմիններ են, որոշ նշանակություններով և՛ տերմին, և՛ սովորական բառ, իսկ որոշ նշանակություններով էլ՝ սովորական բառ: Սրանից ինքնին բխում է, որ տերմինի համար կարևորագույնը բառի նշանակությունն է. եթե տվյալ բառի նշանակությունը գիտության, տեխնիկայի, արհեստների, տնտեսության և այլնի որևէ բնագավառի հասկացություն է, ապա նա տերմին է, եթե ոչ՝ տերմին չէ: Օրինակ՝ ենչալթ, խարահարդ, արտագրամիջոցներ և այդպիսի բազմաթիվ բառեր տերմիններ են, որովհետև արտահայտում են գիտության որևէ ճյուղի (լեզվաբանության, մաթեմատիկայի, տնտեսագիտության) յուրահատուկ հասկացություններ: Այս շարժանիշն ընդունելով՝ դարձյալ անդրադառնանք քն, զլուխ, խոռոչ բառերին: Քն բառը 2-րդ նշանակությամբ (ինքնաթիռի քաշող մակերես) տեխնիկական տերմին է, առաջին նշանակությամբ և՛ կազմախոսական տերմին, և՛ սովորական բառ, իսկ երրորդ նշանակությամբ (մարդու ձեռք)՝ սովորական, ոչ տերմինային բառ. զլուխ առաջին նշանակությամբ՝ և՛ տերմին է, և՛ սովորական բառ, երկրորդ նշա-

նակությամբ՝ ոչ տերմինային բառ, խոսող առաջին նշանակությամբ՝ սովորական, ոչ տերմինային բառ է, 2-րդ, 3-րդ նշանակություններով՝ կազմախոսական տերմին, 4-րդ նշանակությամբ՝ մի քանի գիտությունների (երկրաբանության, բժշկության և այլնի) և արտադրության ճյուղերի (բյուրեղագործության, ակնագործության և այլնի) ընդհանուր տերմին: Քննարկված բառերի մասին ասվածները իբրև ելակետ ընդունելով և դրանով առաջնորդվելով՝ լեզվի ամբողջ բառապաշարը տերմինագիտական տեսակետից կարող ենք բաժանել երեք կարգի.

1) Ոչ տերմինային բառեր, որոնք տերմինային նշանակություն և գործածություն չունեն, ինչպես՝ գեղեցիկ, լավ, արագ, գնալ, ուտել, բերել և այլն:

2) Տերմինային բառեր, որոնք սովորական կամ ընդհանուր գործածությամբ ու նշանակությամբ բառ են, բայց տերմինաբանորեն մասնավորված գործածությամբ ու նշանակությամբ՝ տերմին, ինչպես՝ գումարում, քեթք, բառ, պատուհան, պատ, ծառ և այլն, որոնցից յուրաքանչյուրն ունի սովորական գործածություն ու բոլոր մարդկանց համար ընդհանուր ոչ տերմինային նշանակություն, բայց միևնույն ժամանակ հենց այդ նշանակությամբ նա գործածվում է իբրև որևէ բնագավառի տերմին. այսպես. գումարում մաթեմատիկայի մեջ, քեթք՝ հրատարակչական գործի, գրադարանագիտության, ժուռնալիստիկայի և իրազեկագիտության (ինֆորմատիկայի) մեջ, բառ՝ լեզվաբանության, պատ, պատուման՝ ճարտարապետության ու շինարարության, ծառ՝ բուսաբանության մեջ:

3) Տերմիններ, որոնք միայն տերմինաբանական նշանակություն ունեն, անկախ այն բանից, թե նրանք գործառական տեսակետից մասսայական և աօրեական գործածություն ունեն, թե ոչ, ինչպես՝ հնչույթ, արտադրամիջոցներ, երեասկ, հարառանցք, հազորդակ, կապար, լոգարիթմ, բնափայտ և այլն:

Առաջին կարգի բառերը տերմինաբանության հետ կապ չունեն, քանի որ տերմիններ չեն: Երկրորդ և երրորդ կարգի բառերը տերմինաբանության միավորներ են, ըստ որում տերմինագիտության տեսակետից էական տարբերություն նրանց

միջև գոյություն չունի: Երկու կարգերը միմյանցից տարբերակող բնութագիրն այն է, որ տերմինային բառերը (2-րդ կարգի բառերը) համընդհանուր գործածություն ունեն և գործառապես չեզոք շերտին են անցել հենց իրենց տերմինային նշանակությամբ, մինչդեռ երրորդ կարգի բառերը չեզոք շերտին չեն անցել և սահմանափակվում են միայն տերմինային գործածությամբ՝ գործառության որոշակի ոլորտով: Ինչ վերաբերում է այդ երկու կարգի բառերի նշանակությանը, ապա երկուսի համար էլ ընդհանուր է այն, որ նրանք արտահայտում են գիտության, տեխնիկայի, արվեստի և այլնի որոշակի հասկացություն, որ ընդհանուր անվանումով կկոչենք տերմինային իմաստ:

Շարադրվածից ելնելով՝ այժմ փորձենք բնութագրել տերմինային իմաստը և տարբերել այն ոչ տերմինային իմաստից: Ինչպես արդեն ասացինք, տերմինի նշանակությունը գիտության, արվեստների, տեխնիկայի, արտադրության, արհեստների, հասարակական-կազմակերպական կյանքի և այլնի ուրև բնագավառի հասկացություն է, ուստի և հենց այդ էլ կհամարենք տերմինային իմաստի առաջին հիմնական բնութագիրը: Իբրև գիտական (տեխնիկական և այլն) հասկացություն, տերմինի իմաստը սահմանելի է. ամեն մի տերմինի իմաստ կարող է ներկայացվել որոշակի գիտական սահմանումով, և այս էլ տերմինային իմաստի երկրորդ բնութագիրն է: Վերջապես, տերմինային իմաստի երրորդ բնութագիրն է ճշգրտությունը. իբրև գիտական (տեխնիկական, քաղաքական և այլն) հասկացություն, տերմինի իմաստը ոչ միայն լոկ սահմանելի է, այլև նշգրտորեն սահմանելի: Ճշգրտությունը տերմինային իմաստի անհրաժեշտ պահանջն է. ոչ ճշգրիտ հասկացությունը և, հետևաբար, դրա ոչ ճշգրիտ սահմանումը գիտական արժեքից կզրկեր և՛ տերմինը, և՛ տերմինային իմաստը: Հասկանալի է, որ խոսելով ճշգրտության մասին, մենք չպետք է մոռանանք, որ դա կարող է հարաբերական ճշգրտություն լինել. այն, ինչ որ մեր ճանաչողության զարգացման արդի մակարդակի համար ճշգրիտ է այսօր, կարող է ճշգրիտ չլինել ճանաչողության զարգացման հաջորդ աստիճանում, բայց սա որևէ չափով չի խախտում տերմինային ճշգրտության սկզբունքը: Կարևոր է այն, որ ճշգրտությունն

արտացոլում է գիտութեան (տեխնիկայի և այլնի) և ընդհանրապես մարդկային ճանաչողութեան զարգացման այսօրվա մակարդակը: Այնուհետև, տերմինի սահմանումը, հետևաբար նաև նրա արտահայտած հասկացութիւնը, կարող է պայմանական լինել, այսպես, օրինակ, գոյական անվան սովորական, դասագրքային սահմանումը հետևյալն է. «առարկացույց տվող բաները կոչվում են գոյական անուն կամ գոյական»: Այս սահմանումը պայմանական է, որովհետև առարկա բառը գործածվել է պայմանական իմաստով, որ անխուսափելիորեն թելադրում է լրացուցիչ բացատրություն՝ «առարկա ասելով հասկանում ենք ոչ միայն նյութական իրերը, այլև անձեր, կենդանիներ, բնութեան երևութիւններ, զգացմունքներ, հարաբերութիւններ, եղելութիւններ, գաղափարներ»: Այս բացատրութեամբ ոչ տերմինային, սովորական առարկա բառը գործածվում է որպես տերմինային բառ՝ պայմանական իմաստով, որ վերագրվում է նրան որպես տերմինային իմաստ, և դա հնարավորություն է տալիս գոյականի սահմանումի մեջ ներառել այդ բառը: Գիտական ու տեխնիկական սահմանումների մեջ այդպիսի պայմանականութիւններն անխուսափելի են մատչելիութեան, համառոտութեան, պարզութեան, ուսուցողական և այլ կարգի պահանջներ բավարարելու համար: Բերված օրինակի՝ գոյականի սահմանման մեջ պայմանականութիւնը պայմանավորված է ուսուցողական նպատակով, գիտական սահմանման մեջ հնարավոր է խուսափել այդ պայմանականութիւնից և տալ, օրինակ, հետևյալ սահմանումը. «առարկայնութեան խոսքամասային իմաստ արտահայտող բաները կոչվում են գոյական անուն կամ գոյական»: Բոլոր այսպիսի դեպքերում պայմանականութիւնը վերաբերում է հասկացութեան սահմանումին, բայց ոչ իրեն իսկ՝ հասկացութեանը: Գոյական կամ գոյական անուն տերմինի արտահայտած հասկացութիւնը երկու սահմանումների մեջ էլ նույնն է և գիտականորեն ճիշտ ու ճշգրիտ, բայց սահմանումներից առաջինը պայմանական է, երկրորդը՝ գիտականորեն ստույգ: Սակայն սահմանումները կարող են պայմանական լինել նաև այլ պատճառներով. օրինակ, դեռևս չճանաչված, գիտական բացատրություն չստացած երևութիւններ, գործընթացներ և այլն կարող են պայմանական սահ-

մանումներ ստանալ. այսպիսի դեպքերում տերմինի հասկացութիւնն էլ պայմանականորեն է ճշգրիտ:

Վերջապես, հասկացութեան սահմանումի ճշգրտութիւնը ունի նաև սուբյեկտիվ և օբյեկտիվ մոմենտներ, որոնք պայմանավորված են քաղաքական համոզմունքներով, աշխարհայացքով, գիտական ուղղութեամբ և այլ հանգամանքներով, որոնք, սակայն, վերաբերում են ոչ թե տերմինի սահմանման ճշգրտութեան բնութագրին, այլ ճշգրտութեան շահանիշին, այսինքն՝ տվյալ սահմանումը ճշգրիտ է օբյեկտիվորեն, թե սուբյեկտիվորեն, մատերիալիստորեն, թե իդեալիստորեն և այլն:

Եվ այսպես, միավորելով տերմինային իմաստի երեք բնութագրերը՝ կարող ենք հետևյալ սահմանումը տալ. տերմինային իմաստը ճշգրտորեն սահմանելի հասկացութիւն է:

Այս սահմանումն ունենալով, անցնենք տերմինի մյուս բնութագրին: Բաները երեք կարգի բաժանելով՝ արդեն ունեցանք տերմին—ոչ տերմին հակադրութիւնը, ընդ որում տերմինային բաներն էլ, ինչպես ասացինք, ըստ էության տերմիններ են: Քանի որ այն բաները, որոնք տերմինների կարգին հակադրուինք, գործածվում են գիտութեան (տեխնիկայի և այլնի) որևէ բնագավառում՝ արտահայտելով այդ բնագավառին հատուկ ճշգրտորեն սահմանելի հասկացութիւն, ապա տերմինը որևէ տերմինահամակարգի բառ կամ բառակապակցութիւն է: Սրանից ելնելով էլ կարող ենք տերմինի հետևյալ ընդհանուր սահմանումը տալ. Տերմինը որևէ տերմինահամակարգի պատկանող և այդ համակարգին հատուկ՝ ճշգրտորեն սահմանելի հասկացութիւն արտահայտող բառ կամ բառակապակցութիւն է:

Այս սահմանումից ելնելով՝ դարձյալ անդրադառնանք վերը բերված քե, գլուխ, խոռոչ բաներին. ինչպես տեսանք, այդ բաները մեկ կամ մի քանի նշանակութիւններով տերմին են կամ տերմինային բառ, մյուս նշանակութեամբ (կամ նշանակութիւններով)՝ ոչ տերմինային բառ: Սա չի՞ հակասում, արդո՞ք, տրված սահմանումին: Ո՛չ, չի հակասում: Խոռոչ բառն, օրինակ, իր շորս նշանակութիւններից մեկով տերմին չէ, իսկ երկրորդ՝ մտնում է այս կամ այն տերմինահամակարգի մեջ որպես տերմին: Սա էլ, իր հերթին, նշանակում է,

թե միևնույն բառը կարող է և՛ տերմին լինել, և՛ ոչ տերմին: Մակայն եթե ավելի խորանանք իրողության մեջ և փորձենք ճշգրտորեն բնութագրել փաստը, ապա կհանգենք հետևյալին: Խոռոչ բառը, բերված նշանակություններով, արտահայտում է շորս տարբեր հասկացություններ և, հետևաբար, կարող ենք ասել, որ այս դեպքում ունենք չորս բառ՝ մեկ բանային ձևով, այսինքն՝ կարող ենք գրանք նշանակել՝ խոռոչ¹, խոռոչ², խոռոչ³, խոռոչ⁴. այս դեպքում կասեինք՝ խոռոչ¹-ը տերմին չէ, խոռոչ²-ը և խոռոչ³-ը կազմատեսական տերմիններ են, խոռոչ⁴-ը՝ բժշկական, երկրաբանական, բյուրեղագիտական, բյուրեղագործական ու ակնագործական տերմին: Դրանով իսկ մենք այդ չորս խոռոչ-ները կդիտենք իբրև համանուն բառեր, որոնցից մեկը տերմին չէ, մյուսները տերմին են: Այսպիսով մենք հանգում ենք տերմինային համանունության գաղափարին, որի մասին կխոսենք ստորև:

Բառերի և տերմինների մասին ամբողջական գաղափար կազմելու համար անհրաժեշտ է կանգ առնել ևս մի հարցի վրա: Բառերը, տերմիններ թե ոչ տերմիններ, բաշխվում են զանազան խոսքի մասերի միջև. հարց է ծագում. իսկ ի՞նչ հարաբերության մեջ են տերմինները խոսքի մասերի հետ. բոլոր խոսքի մասերին պատկանող բառերը կարո՞ղ են տերմին լինել: Պատասխանը միանգամայն պարզ է. քանի որ տերմինը ճշգրտորեն սահմանելի հասկացություն է արտահայտում, ապա, բնականաբար, տերմին չեն կարող լինել այն բոլոր խոսքի մասերին պատկանող բառերը, որոնք հասկացություն չեն արտահայտում: Այդպիսի խոսքի մասեր են կապերը, շողկապները, նմանաձայնությունները: Թվականները, որոնք քանակային հատկանիշի հասկացություն են արտահայտում, նույնպես ինքնին տերմին լինել չեն կարող. նրանք կարող են հանդես գալ իբրև բաղադրյալ տերմինների բաղադրիչ: Դերանունները արտահայտում են միայն խոսքամասային իմաստ, ուստի և դարձյալ չեն կարող տերմին լինել: Վերջապես, տերմին չեն կարող լինել նաև եղանակավորող բառերն ու մակբայները: Մնում են, ուրեմն, գոյականները, ածականները, բայերը: Մրանցից էլ առաջնակարգ տեղը պատկանում է գոյականներին, և զա միանգամայն հասկանալի է: Օբյեկտիվ իրականության բոլոր առարկաները, երևույթները,

գործընթացները, հասարակական կյանքի իրադարձությունները, հարաբերությունները, մարդկանց գործունեությունը, գաղափարները, — մի խոսքով ամեն բան կարող է դառնալ որևէ բնագավառի հետազոտության առարկա: Մրանից ինքնին բխում է այն, որ այդ բոլոր առարկաների, երևույթների և այլնի անվանումները կարող են դառնալ որևէ տերմինահամակարգի միավոր ու վերածվել տերմինի: Այնպես որ, մի փոքր շափազանցություն թույլ տալով կարելի է ասել, թե ամեն մի գոյական անուն տերմին է կամ տերմինային բան: Նույնիսկ այնպիսի սովորական բառեր, ինչպիսիք են բուլդ, գրիչ, բանալ, ալյակի, փայտ, քար և այլն, տերմինային բառեր են արտադրության զանազան ճյուղերում, արհեստների, հրատարակչական գործի և այլ բնագավառներում:

Ածականները, որպես կանոն, դառնում են բաղադրյալ տերմինների որոշիչ անդամ (օր. գոյական անուն, հեռակառուցում, օպիտակ թզուկներ, միջնակարգ դպրոց, արտադրական հարաբերություններ և այլն), որոնք կարող են փոխանունությամբ գործածվել գոյականաբար և վերածվել գոյականի (հմմտ. հեռակառուցում — հեռակա, միջնակարգ դպրոց — միջնակարգ և այլն). բնդհանուր առմամբ ինքնուրույն տերմիններ են դառնում այն ածականները, որոնք ցույց են տալիս գործող անձ, ղրադմունք, մի բան կատարելու՝ անելու կամ լինելու՝ դառնալու հատկություն, արտահայտում են որևէ բանի ենթարկված, որևէ բան դարձած, — մի խոսքով՝ ենթակայական ու հարակատար դերբայների, կամ որևէ բանի ենթարկվելու, վերածվելու և նման իմաստներ (հմմտ. շարժաբեր, հոսանափոխիչ, էլեկտրահաղորդ, կոելի, հաղորդիչ, գազամուղ, կիսահաղորդիչ և այլն): Այդ բոլոր կարգի ածականներն էլ կամ գործածվում են որպես գոյական, ուստի և դադարում են ածական լինելուց, կամ էլ հանդես են գալիս բաղադրյալ տերմինի կազմում իբրև որոշիչ (հմմտ. կոելի մետաղ, ջերմահաղորդ մարմին, հոսանատար դիօ և այլն), և կամ էլ բաղադրյալ տերմինի գոյական անգամի իմաստը ներառելով փոխանունությամբ՝ դարձյալ վերածվում գոյականի (հմմտ. ածական անուն — ածական, խուլ բաղաձայններ — խուլներ, գործիական հոլով — գործիական և այլն): Այնպես որ,

կարող ենք հետևյալ ընդհանուր դրույթն ընդունել ածականների վերաբերյալ. ածականները կամ հանդես են գալիս որպես բաղադրյալ տերմինի բաղադրիչ կամ վերածվում են գոյականի և իբրև այդպիսին գտնուում ինքնուրույն տերմին:

Բայերը ազատորեն կարող են տերմիններ լինել, ինչպես՝ բազմապատկելի, երեսակելի, վիրահատել, արտածել, սառել և այլն: Նկատելի է, սակայն, որ բայական տերմինները ազատորեն կարող են փոխարինվել համապատասխան գոյականի և դառննել, կատարել, անել, սարքել, զառնալ ու նման բայերի կապակցությամբ, ինչպես՝ երեսակել—երեսակում կատարել, երեսակներ սարքել, փոխարկել—փոխարկում կատարել, վիրահատել—վիրահատում կատարել և այլն: Այս կարգի բառերի մեջ նախնական կամ հիմքային հասկացությունը գոյականական (առարկայնության) հասկացություն է, և հետևաբար պետք է ընդունել, որ այս կարգի բայերը երկրորդային են, իսկ առաջնայիններն են, ասենք, երեսակ, փոխարկում, վիրահատություն—վիրահատում և այլն: Այն հանգամանքը, որ դրանցից մի քանիսում գոյականները բայանուններ են, որևէ շափով չի հակասում ասվածին, քանի որ դրանք բոլորն էլ բարդ բառեր են, որոնց բայական բաղադրիչի բայանունները առանձին գոյություն ունեն (հմմտ. հատում, ածում և այլն), և տերմինային գոյականական հասկացությունը կազմվում է հենց այդ բայանունների բաղադրությամբ: Քիչ են այն պարզ բայերը, որոնք առաջնային տերմինային իմաստ են արտահայտում, և այդպիսիները, իհարկե, պետք է համարել առաջնային տերմիններ, որով և կարող ենք ընդունելի համարել այն դրույթը, թե բայերը նույնպես կարող են դառնալ ինքնուրույն տերմիններ, ինչպես՝ սառել, լուծել, բարդել, կալսել, քամել, մամլել, հանել, հնչել և այլն:

Այս բոլորը մեզ բերում են այն եզրակացության, որ տերմինաբանության մեջ բացարձակապես գերակշռում են գոյականները, ըստ որում նույնիսկ գործողությունները, հատկանիշներն ու հատկություններն էլ առնվում են իբրև գոյականներ, այսինքն՝ դիտվում են որպես առարկայական հասկացություններ:

դ. Տերմինաբանություն և անվանակարգություն

Ամեն մի գիտություն, արվեստ, արտադրության ճյուղ և այլն ունի բազմաթիվ անվանումներ, որոնցով կոչվում են տվյալ գիտության հետազոտության առարկաները, արտադրանքները և այլն և այլն: Օրինակ՝ լեզվաբանության մեջ լեզուների անվանումները (հայերեն, ռուսերեն, լատիներեն, վրացերեն, սվահիլի, մալա, սանսկրիտ և այլն), բուսաբանության մեջ՝ բույսերի անունները, երաժշտության մեջ՝ երաժշտական ձայնանիշերի անունները (դո, ռե, մի և այլն), աշխարհագրության մեջ՝ աշխարհամասերի, երկրների, շրջանների, քաղաքների ու գյուղերի, գետերի, լճերի, ծովերի, լեռների անունները և այլն, արտադրության մեջ՝ տարբեր ճյուղերի արտադրանքների անվանումները, առևտրի բնագավառում՝ տարբեր ապրանքների ու դրանց զանազան տեսակների անվանումները և այլն: Այս բոլոր կարգի անվանումները անխզելիորեն կապված են տվյալ բնագավառի և՛ գիտական հետազոտությունների հետ, ըստ որում այդ հետազոտությունների ուղղակի առարկաներն են ներկայացնում, և՛ արտադրության, առևտրաֆինանսական գործառնությունների հետ և այլն: Հասկանալի է, որ այդ անվանումները տերմինաբանության մեջ իրենց որոշակի տեղն ունեն, նրա մի մասն են կազմում, և առանց դրանց չի կարելի պատկերացնել որևէ բնագավառի տերմինահամակարգ: Գիտության, տեխնիկայի, արվեստների, արտադրության և այլնի ամեն մի բնագավառում գործածվող առարկաների, գործնթացների, արտադրանքի անվանումների ամբողջությունը տվյալ բնագավառի անվանակարգությունն (նոմենկլատուրան) է, որ կազմում է այդ բնագավառի տերմինաբանության անհրաժեշտ մասը: Առանց անվանակարգության անկարելի է պատկերացնել տվյալ բնագավառի ոչ միայն գործունեությունը, այլև, նույնիսկ, գիտության, տեխնիկայի, արվեստի և այլնի տվյալ ճյուղի գոյությունը: Աշխարհագրություն չի կարող լինել առանց աշխարհագրական անվանակարգության, կազմախոսություն չի կարող լինել առանց կազմախոսական անվանակարգության և այլն: Այնուհետև. յուրաքանչյուր բնագավառի անվանակարգություն և՛ գործառական, և՛ բառակազմական-կառուցված-

քային բնութագրերով մեծ մասամբ նույնանում է տվյալ բնագավառի տերմինային համակարգի բնգհանուր բնութագրերին: Մյուս կողմից էլ, սակայն, տվյալ անվանակարգության մեջ մտնող անունները որոշակիորեն տարբերվում են այդ բնագավառի տերմիններից: Այդ տարբերությունը հիմնականում այն է, որ տերմինները, ինչպես ասել ենք, արտահայտում են ճշգրտորեն սահմանելի հասկացություններ, մինչդեռ անունները միայն անվանում են առարկաները, նրանց տեսակները, ենթատեսակները, գործընթացները, հատկանիշները և այլն, և սահմանելի հասկացություններ չեն արտահայտում, իսկ հատուկ անունները նույնիսկ առհասարակ իմաստ չեն արտահայտում: Այսպես, օրինակ, զեռ, լին, ծով, օվկիանոս, աշխարհամաս, լեռ, հարթավայր, բարձրավանդակ, հրվանդան աշխարհագրական տերմիններ են, և յուրաքանչյուրն արտահայտում է աշխարհագրության ճշգրտորեն սահմանելի հասկացություն, մինչդեռ Արաբ, Եվրոպա, Արագած, Սև ծով, Ասիա, Աֆրիկա և այլն աշխարհագրական անուններ են, բայց ոչ մի հասկացություն էլ չեն արտահայտում. նույնպես և՛ լեզու, բարբառ, խոսքի մաս, հոլով, հեշտյոյք և այլն լեզվաբանական տերմիններ են և արտահայտում են լեզվաբանության ճշգրտորեն սահմանելի հասկացություններ, մինչդեռ հայերեն, ռուսերեն, սլոնիլի, մայա և նման բազմաթիվ անուններ միայն լեզուների անվանումներ են: Տերմիններից ունեցած այս շատ էական տարբերությունը ինքնին առաջադրում է մի կարևոր հարց. տվյալ բնագավառի անվանակարգության անունները տերմիններ են, թե ոչ: Լեզվաբանության մեջ այս հարցում միասնություն չկա: Ոմանք անունները տերմին են համարում, ոմանք՝ ոչ: Մեզ թվում է, սակայն, թե երկու հակադիր կարծիքներն էլ միակողմանի են: Մենք զրույնում ենք, որ, իրոք, Ասիա, Ամերիկա, Արաբ, Արագած, Երվանդ և նման հատուկ անունները տերմիններ չի կարելի համարել: Բայց դրանով խնդիրը չի սպառվում. կան շատ անվանումներ, որոնք դարձյալ ըստ էության պարզապես հատուկ անուններ են, և եթե այդպիսիք չեն համարվում, ապա միայն ավանդության ուժով ու որոշակի պայմանականությամբ: Այսպես, օրինակ, լեզուների անվանումները ըստ էության հատուկ անուններ են, որովհետև յուրաքանչյուրը մեկ

առանձին լեզվի անվանում է, բայց ավանդաբար ընդունված է հատուկ անուն չհամարել, և համապատասխանորեն, մեծատառով չգրել. այդպես են նաև ժողովուրդների անունները ժողովրդագրության և ազգագրության մեջ: Այս կարգի անվանումները նույնպես մենք տերմին չենք համարում: Վերջապես, կան նաև անվանումներ, որոնք զանազան կարգի դասակարգությունների մեջ դասի, ցեղի, ընտանիքի, ենթադասի, տեսակի և այլնի անվանումներ լինելով՝ միաժամանակ արտահայտում են ճշգրտորեն սահմանելի հասկացություններ. օրինակ՝ խոսքի մասերի անվանումները (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ և այլն) ներկայացնում են խոսքի մասերի տեսակները. որպես անվանումներ դրանք կազմում են խոսքի մասերի անվանակարգությունը, բայց դրանցից յուրաքանչյուրն ունի իր՝ լեզվաբանորեն սահմանելի գիտական հասկացությունը. այդպես են նաև ոսկրաբանության մեջ մարմնի ոսկորների անվանումները (թիակ, ծղիկ կամ ծղիկոսկր, բազկոսկր, ուսոսկր և այլն), բուսաբանության մեջ՝ բույսերի ընտանիքների ու ցեղերի անվանումները, կենդանաբանության մեջ՝ կենդանիների ցեղերի, ընտանիքների անվանումները և այլն: Այս կարգի անվանումները կարելի է տերմին համարել: Սա նշանակում է, թե անվանակարգությունների ու տերմինաբանության մասին խոսելիս պետք է նկատի ունենալ անվանակարգության բնույթը. մենք կարծում ենք, որ բոլոր կարգի անվանակարգությունների մեջ մտնող անունները կարելի է բաժանել երեք կարգի. ա) հատուկ անուններ, բ) հատկանվանատիպ անուններ (օր. լեզուների անվանումները, ժողովուրդների անվանումները և այլն) և գ) տերմինային անվանումներ: Այս երեք կարգերից առաջինը հայտնապես չի պատկանում տերմինաբանության. հատուկ անունները, թեև անհրաժեշտ տերմինահամակարգերի համար, բայց իրենք տերմիններ չեն: Երրորդ կարգի անվանումները հայտնապես տերմիններ են, ինչպես՝ գոյական, ածական, թվական, բայ և այլն, ուսոսկր, ծղիկ (ծղիկոսկր) և այլն: Մնում են հատկանվանատիպ անվանումները, ինչպես ժողովուրդների, լեզուների և դրանց նման անվանումներն են. մեզ թվում է, թե այս կարգի անվանումները նույնպես չի կա-

րելի տերմիններ համարել, որովհետև դրանք սովյալ տերմինահամակարգին հատուկ հասկացություններ չեն, թեև իմաստավորված բառեր են:

Ե. Տերմինաբանական ստորակարգություն


Տերմինաբանության էական հատկանիշներից մեկը նրա ստորակարգային բնույթն է, որ բխում է տերմինահամակարգերի ներքին էությունից: Ամեն մի գիտություն, գիտաճյուղ, արվեստ, տեխնիկայի ճյուղ, զբաղմունք և այլն ունի իր առավել ընդհանուր հասկացություններն ու դրանց ստորադասվող համեմատաբար նեղ հասկացությունները: Այսպես, օրինակ, լեզվաբանությունը գիտություն է մարդկային լեզվի կամ ընդհանրապես լեզվի մասին. ընդհանրապես լեզու կամ մարդկային լեզու, իբրև մեկ առանձին, իրական լեզու, գոյություն չունի. մարդկային լեզուն դրսևորվում է առանձին, իրական լեզուների միջոցով: Աշխարհի իրական լեզուները բազմաթիվ են. նրանք խմբավորվում, դասակարգվում են զանազան մոտեցումներով, որոնցից մեկն է ժազումնաբանական դասակարգությունը: Դրա համաձայն աշխարհի լեզուները բաժանվում են լեզվաընտանիքների, սրանք էլ՝ լեզվաճյուղերի, լեզվաճյուղերը՝ ենթաճյուղերի, կամ լեզվախմբերի, սրանք էլ՝ առանձին լեզուների, առանձին լեզուները՝ բարբառների և այլն: Այս դասակարգության մեջ ամենից ավելի ընդհանուր և, միևնույն ժամանակ, վերացական հասկացությունն է արտահայտում լեզու բառը՝ «մարդկային լեզու» կամ «լեզու ընդհանրապես» նշանակությամբ, որին հաջորդաբար ստորակարգվում են մյուսները. այդ ստորակարգությունը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ. լեզու-լեզվաբնաբանիկ-լեզվաճյուղ-ենթաճյուղ-առանձին լեզուներ-առանձին լեզվի բարբառաճյուղեր-բարբառներ և այլն: Ըստ որում, այդ ամբողջ ստորակարգությունը սեռի-դասի-ենթադասի-տեսակի և այլնի ստորադասություն է, որ կազմում է տերմինների ու դրանց արտահայտած հասկացությունների մի ամբողջական համակարգ: Այս էլ, իր հերթին, նշանակում է, թե սովյալ տերմինների ստորակարգությունը վերաբերում է հենց սովյալ համակարգին: Այս բնութագրությունն ավելի պարզե-

լու համար անհրաժեշտ է կրկին անդրադառնալ տերմինահամակարգ հասկացությանը: Վերը մենք ասացինք, որ տերմինահամակարգը յուրաքանչյուր գիտություն, մասնագիտության, արվեստի և այլնի տերմինների ամբողջությունն է: Սակայն, հայտնի է, որ ամեն մի գիտություն ունի իր ճյուղերը, ուղղությունները, բաժինները, մասերը և այլն: Թրինակ, լեզվաբանությունն ունի մի կողմից ընդհանուր լեզվաբանություն և մասնավոր լեզվաբանություններ (կոնկրետ լեզվաբանություններ), համաժամանակյա լեզվաբանություն և տարածամանակյա լեզվաբանություն, մյուս կողմից՝ կառուցվածքային լեզվաբանություն, հանրալեզվաբանություն (սոցիոլեզվաբանություն), հոգելեզվաբանություն և այլն: Սրանցից յուրաքանչյուրն էլ ունի իր ավելի փոքր ստորաբաժանումները: Այսպես, օրինակ, ամեն մի լեզվի ուսումնասիրություն մասնավոր լեզվաբանություն է. ասենք, հայերենի ուսումնասիրությունը, որ սովորաբար կոչում են հայերենագիտություն անվանումով, հայերենի լեզվաբանություն է, որը, սակայն, հայագիտության ճյուղերից մեկն է: Ստացվում է այնպես, որ նույն հայերենագիտությունը պատկանում է երկու տարբեր գիտահամակարգերի, մի գեպքում՝ լեզվաբանության ամբողջական համակարգին, մյուս դեպքում՝ հայագիտության համակարգին: Այս վերջինի մեջ նա ինքնուրույն ճյուղ է իբրև հայերենի ուսումնասիրություն ընդհանրապես, որ ներառում է ինչպես գրաբարի, միջին հայերենի, ժամանակակից հայերենի, այնպես էլ բարբառների ուսումնասիրությունը, ինչպես դրանցից յուրաքանչյուրի և, առհասարակ, հայերենի պատմական ուսումնասիրությունը, այնպես էլ համաժամանակյա ուսումնասիրությունը և այլն: Այս տարբեր տեսանկյուններով ունենք, մի կողմից, գրաբարի, միջին հայերենի, ժամանակակից հայերենի բնագավառները, իբրև հայերենագիտության բաղկացուցիչ մասեր. մյուս կողմից՝ հայերենի պատմական քերականություն և հայերենի համեմատական քերականություն, սրանցից յուրաքանչյուրն էլ ունի հնչյունաբանություն, բառագիտություն, ֆոնալոգիա բաժինները, որոնցից յուրաքանչյուրն էլ, իր հերթին, ունի իր ենթաբաժինները (օր. բառագիտությունը՝ բառապաշար, բառակազմություն, Իմաստաբանություն, բառապաշարի զարգացում, տերմինագի-

տություն և այլն, քերականությունը՝ ձևարանություն և շարահյուսություն և այլն): Այսպիսով մենք լեզվաբանության ընդհանուր համակարգից զալիս ենք դեպի մասնավոր լեզվաբանությունը, տվյալ դեպքում՝ հայերենագիտությունը, որ ունի իր ինքնուրույն համակարգը: Այս համակարգն էլ իր հերթին ստորաբաժանվում է ավելի փոքր համակարգերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր տերմինաբանությունը: Եթե լեզվաբանական տերմինաբանությունը, ամբողջությամբ վերցրած, լեզվաբանության տերմինահամակարգն է, ապա՝ հայերենագիտության տերմինների ամբողջությունը դրա մի մասն է, որ կարող ենք կոչել մանրահամակարգ: Իր հերթին, եթե հայերենագիտության մանրահամակարգը դիտենք իբրև ինքնուրույն համակարգ, ընդհանուր լեզվաբանությունից անկախ, ապա այդ դեպքում կարող ենք համարել տերմինահամակարգ (հայերենագիտության տերմինահամակարգ), որին կստորադասվեն, ասենք, հնչյունաբանությունը, բառագիտությունը, քերականությունը իրենց մանրահամակարգերով և այլն: Տերմինահամակարգի և մանրահամակարգերի տարբերակումը անհրաժեշտ է երկու պատճառով. 1) մանրատերմինահամակարգերը բոլորը միասին ստորակարգվում են տվյալ ընդգծված տերմինահամակարգին, իսկ մանրատերմինահամակարգերի մեջ էլ առավել նեղ ընդգրկում ունեցող մանրահամակարգերը՝ ավելի մեծ ընդգրկումով մանրահամակարգերին, ուստի և այստեղ էլ ստորակարգություն կա տերմինաբանական համակարգերի միջև: 2) Տերմինաբանական տվյալ ստորակարգությունը հատուկ է միայն տվյալ տերմինահամակարգին կամ մանրահամակարգին: Այսպես, օրինակ, բարբառ տերմինը համեմատական քերականության մեջ մի ժամանակ գործածվում էր (այժմ էլ հաճախ գործածվում է) տվյալ լեզվաբնույթի նյութերից կամ ենթանյութերից յուրաքանչյուրի մեջ մտնող լեզուների համար (օր. հայերենը համարվում էր հնդեվրոպական լեզվաբնույթի հնդիրանական նյութի իրանական բարբառներից մեկը, այսինքն՝ իրանական խմբի լեզուներից մեկը). իբրև այդպիսին բարբառ տերմինը մտնում է համեմատական քերականության մանրահամակարգի մեջ որպես լեզվաբնույթ-լեզվանյութ-լեզվախումբ-բարբառ ստորակարգության անդամ, իսկ, օրինակ, հայ բարբառագիտական

տերմինաբանության մեջ՝ հայերեն (հայոց լեզու)-հայերեն բարբառների նյութեր-բարբառներ-ենբարբառներ կամ խոսվածքներ ստորակարգության անդամ:

Ամփոփելով շարադրվածը, հանգում ենք հետևյալ եզրակացության. տերմինաբանությանը հատուկ է տերմինահամակարգերի, մանրատերմինահամակարգերի ու տերմինների ստորակարգությունը: Ամեն մի տերմին տվյալ մանրահամա-



կարգի ստորակարգային սանդղակի մի աստիճանի միավոր է: Դրա հետ միասին, ստորակարգության յուրաքանչյուր աստիճանում, բացի տվյալ տերմինահամակարգի ամենաընդհանուր, գերազաս աստիճանից, տերմինը կարող է ճշուրավորվել համադաս տերմինների, որոնք, բոլորը միասին, ստորադասվում են մի այլ տերմինի, բայց առանձին-առանձին միմյանց նկատմամբ հավասարազոր են, համադաս. այսպես, օրինակ, հոլովում-հոլովական համակարգ-հոլովաձև տերմինների ստորակարգության մեջ գերազաս անդամն է հոլովում, որին հաջորդաբար ստորակարգվում են մյուսները, հոլովական համակարգ-ը ներառում է հոլովման համակարգ և հոլովների համակարգ տերմինները, որոնք երկուսն էլ ստորադասվում են նրան, իսկ միմյանց նկատմամբ համադաս են. իր հերթին հոլովում-ը՝ համադաս լինելով խոնարհում-ին, նրա հետ միասին ստորադասվում է քե՛հում ընդհանուր տերմինին, այս էլ՝ ձևաբանություն տերմինին, որը շարանյութություն տերմինի հետ ստորադասվում է փերականություն տերմինին և այլն: Այս մանրահամակարգերը կարելի է ներկայացնել ստորակարգության ու համադասության հետևյալ սխեմայով (էջ 333):

Ինչպես տեսնում ենք, տերմինահամակարգի սխեմայում, որի մեջ միայն ձևաբանության համակարգն ենք բերել և այն էլ՝ ոչ լրիվ, ունենք երկու շարքեր՝ ուղղահայաց և հորիզոնական. ուղղահայաց շարքը ներկայացնում է ստորակարգության սանդղակը, հորիզոնականը՝ համադասության շարքը:

Տերմինաբանության, տերմինահամակարգերի և մանրատերմինահամակարգերի ստորակարգության սանդղակի ու համադասության շարքի ըմբռնումը կարևոր նշանակություն ունի ինչպես տվյալ տերմինահամակարգում կամ մանրատերմինահամակարգում տերմինների և դրանց արտահայտած հասկացությունների միմյանց հետ ունեցած փոխհարաբերությունների բացահայտման, այնպես էլ տերմինաբանության կարգավորման, տերմինների կազմության և այլ խնդիրների տեսության ու գործնական լուծման համար:

գ. Տերմինային համակարգայնություն

Տերմինահամակարգերի ու մանրահամակարգերի մասին սովածներն ինքնին ցույց են տալիս, որ ոչ միայն իբրև տերմին գործածվող բառերը, այլև, որ ավելի կարևոր է, դրանց արտահայտած հասկացությունները համակարգային բնույթ ունեն: Այդ նույնը ավելի ցայտուն կերպով երևաց տերմինաբանական ստորակարգության մասին խոսելիս. բալական է նայել վերը բերված սխեմային՝ տեսնելու համար, թե ինչպիսի համակարգային բնույթ ունեն ստորակարգության սանդղակն ու համադասության շարքերը: Տերմինաբանության համակարգային բնույթն իր հերթին պայմանավորում է տերմինների ձևական ու իմաստային համակարգայնությունը, որ կոչում ենք տերմինային համակարգայնություն: Այդ համակարգայնությունն արտահայտվում է այն բանով, որ տերմինների արտահայտած բարդ (բաղադրյալ) հասկացությունները կազմված են լինում բոլորի հիմքում ընկած ընդհանուր հասկացության և դա մասնավորող կամ տարբերակող հասկացության միավորումից, դրանց ամբողջությունից: Այսպես, օրինակ, վերը բերված ծագումնաբանական դասակարգության մեջ ունենք լեզվաբնութանիք կամ լեզուների ընտանիք տերմինը, որ նշանակում է տվյալ ընտանիքի մեջ մտնող ցեղակից լեզուների ամբողջությունը: Ստորակարգության սանդղակի մեջ ունենք դրան ստորադասվող լեզվաճյուղ, լեզվախումբ, առանձին լեզու (հայերեն, ռուսերեն և այլն) տերմինները, դրանց բոլորի մեկական բաղադրիչը (ընտանիք, ճյուղ, խումբ) դասակարգության տերմիններ են բազմաթիվ գիտությունների մեջ (բուսաբանություն, կենդանաբանություն, տեխնիկա և այլն), և լեզու բաղադրիչն է, որ բոլորը դարձնում է լեզվաբանական տերմին, այսպես ասած՝ մուծում է լեզվաբանական տերմինահամակարգի մեջ: Նույնպես և՛ ձևայաբանություն, ձևույթ, ձևակ, ձևադ տերմինների մեջ ընդհանուր տերմինային հասկացությունն արտահայտվում է ձև բաղադրիչով, որով և բոլորը մտնում են ձևույթաբանական մանրատերմինահամակարգի մեջ. մարզածև, մարզադպրոց, մարզադանլիք, մարզադաշտ, մարզահրուպարակ և այլ բազմաթիվ տերմինների մեջ մարզ- հիմնական բաղադրիչին է պատկանում բո-

յորին ընդհանուր հասկացութիւնը, որը մասնավորում է ձև, դպրոց, դանլիճ, դաշտ, նրապարակ ոչ մարզական տերմինահամակարգի բառերով և մուծվում մարզական տերմինահամակարգի մեջ: Այս կարգի բաղադրյալ տերմինների մեջ, որոնք ազատորեն կարող են փոխարինվել բառակապակցութիւններով (օր. լեզուների (կամ լեզվական) ճյուղ, լեզուների (կամ լեզվական) խումբ, մարզական ձև, մարզական դպրոց և այլն), տերմինային ընդհանուր համակարգը կամ մանրահամակարգն ստեղծվում է ոչ սովյալ բնագավառի բառերի (ոչ տերմին, տերմինային բառ կամ ընդհանուր տերմին) և մասնավորող, սովյալ համակարգին հատկացնող որոշիչի կամ հատկացուցչի կապակցութեամբ կամ բարդութեամբ (հմմտ. լեզվական և լեզվ-, մարզական և մարզ-): Տերմինային համակարգայնութիւնը հենց այդ միասնականացնող, սովյալ տերմինահամակարգի կամ մանրահամակարգի ստորակարգային սանդղակի և համադասական շարքի մեջ մուծող բաղադրիչների (լեզվ-, մարզ-) կամ որոշիչների ու հատկացուցիչների (լեզվական, լեզուների, մարզական) միասնականութիւնն ու միատիպութիւնն է: Նույնպիսի միասնականութիւնն ու միատիպութիւնն են ունենում նաև լրացյալի դերում հանդես եկող բաղադրիչները կամ բառակապակցութիւնները, ինչպես՝ բախարբ, բկաբորբ, մաշկաբորբ, քաղաքաբորբ, լյարդաբորբ (լերդաբորբ) և այլն, որոնց մեջ ընդհանուր բաղադրիչը՝ բորբ «բորբոքում» բույրի համար ընդհանուր, բայց յուրաքանչյուրի մեջ մասնավորվող բաղադրիչն է՝ լրացյալի դերով: Վերջապես, տերմինների մի զգալի մասը կազմվում է ածանցումների միջոցով, և այս դեպքում էլ յուրաքանչյուր տերմինահամակարգ ու դրա մանրահամակարգերն ունենում են ածանցական իմաստներն արտահայտող բաղադրիչների (ածանցների, բառակազմական-քերականական ածանցների և այլնի) համակարգը, ըստ որում, այդ համակարգում էլ սկզբունքը դարձյալ նույնն է. միևնույն ածանցական իմաստն արտահայտել մեկ (առանձին դեպքերում՝ մի քանի համանիշ) ածանցով: Այսպես, օրինակ, լեզվի կառուցվածքային մակարդակների միավորների համար հայ լեզվաբանական տերմինահամակարգում կենսունակ ածանց է -ույթ (հնչույթ, ձևույթ, բառույթ, շարույթ, շարահայտույթ, իմաստ-

տույթ, ներույթ, գերհնչույթ, ենթահնչույթ և այլն), տեխնիկական տերմինահամակարգում շատ գործածական են և տերմինների ամբողջ մանրահամակարգեր են կազմում ներ- նախաածանցը (ներտաշել, ներսղոցել, ներփորել, ներհատել, ներշարել և այլն), -ակ վերջածանցը (դրակ, սեղմակ, սոնակ, սեվեռակ, սողնակ, դարձակ, բարձակ և այլն), -իշ վերջածանցը (շարժիշ, փոխանցիշ, տվիշ, ջերմափոխանակիշ, ամբարձիշ, օդափոխիշ, հովհարիշ, ջեռուցիշ, հաշվիշ և այլն): Հիմնական հասկացութիւններն արտահայտող բաղադրիչների (արձատ կամ բառ) և ածանցական իմաստների արտահայտման այս միասնութիւնն ու համակարգայնութիւնն ապահովում են տերմինահամակարգերի ու դրանց մանրահամակարգերի համակարգայնութիւնը, իսկ սա էլ, իր հերթին՝ տերմիններով արտահայտվող հասկացութիւնների համակարգայնութիւնը:

Է. Տերմինակառուցվածք և տերմինագործածութիւն

Տերմինակառուցվածք ասելով հասկանում ենք տերմինների բառակազմական կառուցվածքն իր բոլոր կողմերով: Այստեղ, բնականաբար, առաջին հերթին մենք գործ ունենք տերմինների, որպես բառերի, ըստ կազմութեան դասակարգման հետ, որի համաձայն կունենանք, ինչպես առհասարակ բառերի ըստ կազմութեան դասակարգման մեջ, պարզ (օր. շեշտ, վանկ, տառ, բառ, կապ, սիրտ, թոք, լյարդ, ոսկր, ուս, մեքենա, դուր և այլն) և բաղադրյալ բառեր, իրենց զանազան տեսակներով (հմմտ. բառապաշար, մեքենամաս, ուսուցիչ, թոքաբորբ, պալարապտուղ, կիսաթուփ.— ձևաբանութիւն, ջերմափոխանակութիւն, թվակազմութիւն, երեսապատում, կենդանածնութիւն.— հնչույթ, դրակ, մակալիզու, շարժիշ, սեղմակ, մխոց և այլն): Ինչպես բառապաշարի մեջ, ընդհանուր առմամբ, այնպես էլ տերմինաբանութեան մեջ պարզ բառերը իրենց քանակով համեմատաբար շատ քիչ են, բայց դրանք՝ տերմինահամակարգերի հիմնական հասկացութիւններն արտահայտող տերմիններ լինելով, սովյալ լեզվի տերմինակազմութեան ընձեռած միջոցներով բաղադրյալ բառ-տերմիններ կազմելու և մանրատերմինահամակարգեր ստեղ-

ծելու անսահմանափակ հնարավորություններ են տալիս (համար, օրինակ, բայ.— բայածին, բայիմաստ, բայակազմ, բայակերտ, բայասեռ, բայածամանակ և այլն); ըստ կազմության այս բաժանումը, սակայն, որքան էլ կարևոր բառակազմության տեսակետից ընդհանրապես, տերմինների, որպես բառերի ու բառակապակցությունների, կազմության համար առանձին նորություն չի տալիս և չի բացահայտում տերմինակազմության ուրույն օրինաչափությունները: Տերմինների կազմության ու կառուցվածքի տեսակետից առավել կարևոր բնութագրերը, մեր կարծիքով, միանգամ և բազմանգամ հակադրությունն է: Տերմինների ամբողջ բազմությունը կարելի է բաժանել երկու կարգի՝ բառ-տերմիններ և բառակապակցություն տերմիններ. բառ-տերմիններ են այն բոլոր տերմինները, որոնք, անկախ իրենց կազմությունից, մեկ բառ են ներկայացնում (օր. բայ, հնչույթ, բառապաշար, ձևակազմություն և այլն). բառակապակցություն-տերմիններ են երկու կամ ավելի բառերի կապակցությամբ կազմված բազադրյալ տերմինները (օր. խոսքի մաս, գոյական անուն, գործիական հոլով, բարդ բառ, աշխատանքի հասարակական բաժանում և այլն): Մեր հետազոտվելուծությունները գյուրացնելու նպատակով բառ-տերմինները կանվանենք միանգամ տերմիններ, իսկ բառակապակցություն-տերմինները՝ բազմանգամ տերմիններ: Միանգամ տերմինների բառակազմական ու կառուցվածքային վերլուծությամբ չենք զբաղվի. ամեն մի լեզվի բառակազմության միջոցներն ընդհանուր են և՛ տերմինների, և՛ ոչ տերմինների համար, ուստի և միանգամ տերմինների բառակազմական կազապարներն ընդգրկվում են առհասարակ բառակազմության ընդհանուր համակարգի մեջ: Ասենք միայն, որ իբրև ընդհանուր կանոն, միանգամ տերմինները հիմք են հանդիսանում բազմանգամ տերմինների կազմության համար և մեծ մասամբ դառնում են դրանց հիմնական անդամը:

Բազմանգամ տերմինները կարող են բաղկացած լինել երկու, երեք (չորս, հինգ և այլն) բառերից և համապատասխանաբար, ըստ անհրաժեշտության, կարող են կոչվել երկանգամ տերմին, եռանգամ տերմին և այլն: Որպեսզի մեր վերլուծություններն ավելի պարզ տեսք ստանան, սկսենք երկ-

անգամ տերմիններից: Գոյական անուն, ածական անուն, քրվական անուն, դերանուն համադասական շարքի մեջ ունենք մեկ միանգամ տերմին (դերանուն) և երեք երկանգամ տերմին: Այս երեք տերմիններն էլ երկուական բառերի կապակցություններ են, երեքն էլ որոշիչ-որոշյալ բառակապակցություն: Նույնպիսի երկուական բառերի կապակցություններ են լեզուների ցեղակցություն, նախադասության անդամներ, բույսերի բնատնիք տերմինները, որոնց մեջ ունենք հատկացուցիչ-հատկացյալ բառակապակցությունը: Ինչպիսի երկանգամ տերմին էլ վերցնելու լինենք, կտեսնենք, որ նա կամ որոշիչ-որոշյալ կամ հատկացուցիչ-հատկացյալ բառակապակցություն է, որի միավորումով կամ ընդհանրացումով կարող ենք ասել՝ ամեն մի երկանգամ տերմին լրացյալ-լրացում բառակապակցություն է: Նույն բանը մենք կարող ենք ասել նաև եռանգամ (քառանգամ, հնգանգամ և այլն) տերմինների մասին. իրոք, հասարակ գոյական անուն, հատուկ գոյական անուն, և այլն եռանգամ տերմիններ են, որոնց ավելացած անդամները լրացումներ են գոյական անուն, քվական անուն երկանգամ տերմինների համար: Ելնելով այն բանից, որ երկանգամ, եռանգամ (քառանգամ և այլն) տերմինները միանգամ տերմինների հաջորդական ընդարձակումը կամ ծավալումն են լրացական բառի կապակցությամբ, մենք կարող ենք տերմինային ամեն մի բառակապակցություն կոչել ծավալում ընդհանուր անվանումով, գոյական անուն, ածական անուն, քվական անուն երկանգամ տերմինները անուն միանգամ տերմինի ծավալումներն են, հասարակ գոյական անուն, հատուկ գոյական անուն եռանգամ տերմինները՝ գոյական անուն երկանգամ տերմինի ծավալումը և այլն:

Համեմատելով անուն տերմինի երկանգամ և եռանգամ ծավալումները միմյանց հետ, տեսնում ենք, որ բոլոր դեպքերում էլ ունենք լրացում-լրացյալ հարաբերություն, անկախ այն բանից, թե ծավալվող տերմինը միանգամ է, թե՞ երկանգամ (եռանգամ, քառանգամ և այլն). օրինակ՝ գոյական անուն երկանգամ տերմինը անուն լրացյալի և գոյական լրացման կապակցությունն է, հասարակ գոյական անուն եռանգամ տերմինը՝ գոյական անուն լրացյալի և հասարակ լր-

րացման կապակցութունը, շնչավոր հասարակ գոյական անուն քառանդամ տերմինը՝ հասարակ գոյական անուն լրաց-
յալի և շնչավոր լրացման կապակցութունը, անձնանիշ շքե-
շավոր հասարակ գոյական անուն հնգանդամ տերմինը՝ անձ-
նանիշ լրացման և շնչավոր հասարակ գոյական անուն լրաց-
յալի և այլն: Սա նշանակում է, թե ամեն մի հաջորդական
ծավալման մեջ մեք կարող ենք գտնել տերմին կազմող եր-
կու բաղադրիչ՝ ծավալվող տերմին, որ լրացյալն է, և ծավա-
լող տերմին, որ լրացումն է: Եթե վերջնենք գոյական անուն,
ածական անուն, քվական անուն երկանդամ տերմինները, ա-
պա կտեսնենք, որ նրանց մեջ ունենք ծավալվող անուն տեր-
մինը և գոյական, ածական, քվական ծավալող բաղադրիչ-
ները: Քանի որ այս երեք երկանդամ տերմինների մեջ անու-
նը հիմնական տերմինն է, որից կազմվում են դրան ստորա-
դասվող, բայց միմյանց նկատմամբ համադաս երկանդամ
տերմինները, ապա դա կկոչենք միջուկային տերմին կամ
տերմինի միջուկ, իսկ գոյական, ածական, քվական լրացում-
ները, որոնք մասնավորում են անուն ավելի ընդհանուր հաս-
կացությունը, կկոչենք ծավալիչներ: Բերված երկանդամ, եռ-
անդամ, քառանդամ, հնգանդամ հաջորդական ծավալումների
մեջ առաջինում (գոյական անուն) անուն-ը միջուկային տեր-
մինն է, գոյական-ը՝ ծավալիչ, հաջորդում միջուկայինն է գո-
յական անուն, ծավալիչը՝ հասարակ, և այդպես մինչև վերջ:
Եթե այս մոտեցումով դիտենք բերված հինգ տերմինները՝
անուն, գոյական անուն, հասարակ գոյական անուն, շնչավոր
հասարակ գոյական անուն, անձնանիշ շնչավոր հասարակ գո-
յական անուն, ապա կտեսնենք, որ դրանք կազմում են ստո-
րակարգային սանդղակ, մինչդեռ, օրինակ, գոյական անուն,
ածական անուն, քվական անուն տերմինները՝ համադասա-
կան շարք, որ, սակայն, ստորադասվում է անուն-ին: Համե-
մատելով այս երկու կարգի ծավալումները (ստորակարգային
սանդղակ և համադասական շարք), տեսնում ենք, որ ստորա-
կարգային սանդղակի մեջ ամեն մի աստիճանը մի նոր ծա-
վալում է, մինչդեռ համադասական շարքի մեջ՝ նույն ծավա-
լումը, բայց տարբեր ծավալիչներով (գոյական, ածական,
քվական), ըստ որում դրանք համասեռ ծավալիչներ են, ո-
րովհետև միմյանց նկատմամբ համադաս տերմիններ են կազ-

մում և ցույց են տալիս առարկաների (երևույթների և այլնի)
դասակարգում, տեսակավորում, խմբավորում և այլն միև-
նույն մակարդակի կամ աստիճանի վրա: Այդ բանը նկատի
ունենալով՝ կարող ենք ասել, տերմինի յուրաքանչյուր հա-
ջորդական ծավալում կազմում է ստորակարգային սանդղակի
մի աստիճանը, իսկ միևնույն կարգի ծավալման համասեռ
ծավալիչների փոխարինումով կազմվող բազմանդամները ըս-
տեղծում են համադասական շարք: Ըստ այսմ՝ անուն, գոյա-
կան անուն, հասարակ գոյական անուն, շնչավոր հասարակ
գոյական անուն, անձնանիշ շնչավոր հասարակ գոյական ա-
նուն տերմիններից առաջինի շորս հաջորդական ծավալում-
ներից յուրաքանչյուրը ստորակարգային սանդղակի մեկ հա-
ջորդական ստորակարգ աստիճանն է, մինչդեռ նույն անուն
տերմինից գոյական, ածական, քվական համասեռ ծավալիչ-
ներով կազմված գոյական անուն, ածական անուն, քվական
անուն ծավալումները՝ ստորակարգային սանդղակի միևնույն
աստիճանի համադասական շարքը: Պարտադիր չէ, իհարկե,
որ ստորակարգային սանդղակի առաջին աստիճանը անպայ-
ման միանդամ լինի. նա կարող է նաև բազմանդամ (երկ-
անդամ, եռանդամ և այլն) լինել: Օրինակ՝ աշխատանքի բա-
ժանում տերմինը բազմանդամ է. նա առաջին (գերադաս)
աստիճանն է աշխատանքի բնական բաժանում և աշխատան-
քի հասարակական բաժանում համադասական շարքի հա-
մար, որ կազմում է ստորադասական սանդղակի երկրորդ
աստիճանը: Ծավալիչները կարող են լինել թե՛ տերմին, թե՛
տերմինային բառ և թե՛ ոչ տերմին. օրինակ՝ գոյական անուն,
ածական անուն բազմանդամների գոյական, ածական ծավա-
լիչները տերմիններ են, մինչդեռ հասարակ գոյական անուն,
հարաբերական ածական անուն բազմանդամների ծավալիչ-
ները (հասարակ, հարաբերական) տերմիններ չեն: Ինչպես
միջուկային տերմինները, այնպես էլ ծավալիչները կարող
են լինել թե՛ միանդամ և թե՛ բազմանդամ. օրինակ՝ ներկա
ժամանակ և սանձանակալան եղանակ բազմանդամների մեջ
ծավալիչները (ներկա, սահմանական) միանդամ են, իսկ
սանձանակալան եղանակի ներկա ժամանակ ծավալման մեջ և՛
միջուկային տերմինը, և՛ ծավալիչը (սահմանական եղանակ)
բազմանդամ տերմիններ են:

Ամփոփելով շարագրվածը՝ հանգում ենք հետևյալ եզրակացության. ամեն մի բազմանդամ (երկանդամ, եռանդամ և այլն) տերմին կառուցվածքային տեսակետից բաղկացած է երկու բաղադրիչից՝ միջուկային տերմինից (միջուկից) և ծավալիչից: Ծավալիչները երկու տեսակ են լինում՝ համասեռ և ստորակարգային: Համասեռ ծավալիչները փոխարինում են միմյանց՝ կապակցվելով միևնույն միջուկի հետ և կազմելով ստորակարգային սանդղակի միևնույն աստիճանի համադասական շարք, ինչպես՝ գոյական անուն, ածական անուն, քվական անուն և այլն: Ստորակարգային ծավալիչները չեն փոխարինում իրար, այլ հաջորդական ծավալումներ են կազմում՝ ստեղծելով ստորակարգային սանդղակի նորանոր աստիճաններ, մինչև ամենաստորինը, ինչպես՝ գոյական անուն, հասարակ գոյական անուն, շնչավոր ճասարակ գոյական անուն, անձնանիշ շնչավոր ճասարակ գոյական անուն և այլն: Բազմանդամ տերմինների ինչպես միջուկը, այնպես էլ ծավալիչները կարող են լինել և՛ միանդամ, և՛ բազմանդամ, սակայն միշտ էլ բազմանդամ տերմինը կառուցվածքային տեսակետից բաղկացած է երկու բաղադրիչներից՝ ծավալիչից և միջուկից: Սրանից ելնելով՝ կարող ենք ընդունել, որ ամեն մի ծավալում, անկախ նրա կազմած բազմանդամի պարունակած բառերի քանակից, երկրադարձի է. օրինակ՝ սանձառնական եղանակի ներկա ժամանակ բազմանդամն ունի չորս բառ, բայց, չնայած գրան, դարձյալ երկրադարձի ծավալում է, քանի որ նրա միջուկն է ներկա ժամանակ, իսկ ծավալիչը՝ սանձառնական եղանակի. նույնպես և՛ աշխատանքի ճասարակական բաժանում բազմանդամն ունի երեք բառ, բայց դարձյալ երկրադարձի է, որովհետև ծավալման միջուկն է աշխատանքի բաժանում բազմանդամ տերմինը:

Մինչև այժմ բազմանդամ տերմինները մենք բերում ենք լրիվ կազմով, այսպես ասած՝ տիպային ձևով, ինչպես որ դրանք պետք է լինեն տերմինարաններում և զանազան կարգի բառարաններում: Սակայն իրականում, առօրեական գործածության մեջ թե՛ բանավոր խոսքում և թե՛ գրավորում դրանք գործածվում են զանազան կրճատումներով ու ամփոփումներով. այսպես՝ գոյական անուն-ը դառնում է պարզպես գոյական, ճասարակ գոյական անուն-ը՝ ճասարակ գո-

յական, բայի կրավորական սեռ-ը՝ կրավորական սեռ կամ պարզպես՝ կրավորական և այլն: Բազմանդամների կրճատումները հայերենում ունեն տարբեր տեսակներ, որոնցից ամենատարածվածներն ու կենսունակներն են հետևյալները:

1) Փոխանունական կրճատում, երբ բազմանդամի ածական ծավալիչը փոխանունաբար արտահայտում է նաև միջուկային տերմինի իմաստը, օրինակ՝ բաղդատական աստիճան-ը դառնում է բաղդատական (հմտ. բաղդատականը կազմվում է...), կրավորական սեռ-ը՝ կրավորական և այլն: Չրա հետևանքով փոխանուն ծավալիչը ժամանակի ընթացքում կարող է վերածվել գոյականի և, համապատասխանաբար, բազմանդամ տերմինը դառնալ միանդամ. օրինակ՝ գոյական անուն, ածական անուն, քվական անուն բազմանդամների ծավալիչները՝ գոյական, ածական, քվական, արդեն վերածվել են գոյականների և գործածվում են նախնական բազմանդամների փոխարին. գոյական անուն, ածական անուն, քվական անուն բազմանդամներն այժմ շատ սակավ են գործածվում և այն էլ՝ ավանդույթյան ուժով:

2) Բաղադրական ամփոփում, երբ երկանդամ (հաճախ նաև եռանդամ) բազմանդամի ծավալիչից ու միջուկից կազմվում է բարդ (բարդածանցավոր) բառ, ինչպես՝ լեզուների (կամ լեզվական) ընտանիք—լեզվաբնուսանիք, բայի (կամ բայական) սեռ—բայասեռ, թոկերի բորբոսում—թոկաբորբ, արտադրական հարաբերություններ—արտադրահարաբերություններ, արտադրության միջոցներ—արտադրամիջոցներ և այլն: Բաղադրական ամփոփման կարող է ենթարկվել ինչպես երկանդամ (եռանդամ) տերմինը, այնպես էլ բազմանդամների որևէ բաղադրիչը (ծավալիչը կամ միջուկը). օրինակ՝ ունենք անձ ցույց տվող գոյական—անձնանիշ գոյական, պատճառական (սեռի) ձևով ներգործական սեռի բայ—պատճառականաձև ներգործական սեռի բայ, որը իր հերթին կարող է դառնալ, ասենք, պատճառականաձև ներգործասեռ բայ և այլն: Թեթևած օրինակներից առաջինում միջուկը (գոյական) արդեն փոխանունությամբ ստացված միանդամ տերմին է, իսկ անձ ցույց տվող ծավալիչը՝ բառակապակցություն, որ փոխարինվել է անձնանիշ նույնիմաստ բարդությամբ. այդպես և՛ պատ-

ճառականի ձև ունեցող կամ պատճառականի ձևով-ը՝ պատ-
ճառականաձև և այլն:

Բաղադրական ամփոփման տարածված և խիստ կենսու-
նակ տեսակներից մեկն է հատվածական բաղադրությունը,
ինչպես՝ բանջարաբուծական և պտղաբուծական սովխոզ—
բանջարապտղաբուծական սովխոզ, նյութական և տեխնիկա-
կան բազա— նյութատեխնիկական բազա, գիտական և տեխ-
նիկական հեղափոխություն— գիտատեխնիկական հեղափո-
խություն և այլն:

Բազմանդամ տերմինների բաղադրական ամփոփումը հա-
յերենի տերմինակազմության ու տերմինագործածության ա-
ռավել կենսունակ ու խնայողական միջոցներից մեկն է, ըստ
որում ժամանակակից հայերենի բառակազմական միջոցների
ու հղանակների արտակարգ հարստությունն ու ճկունությունը
հնարավորություն են տալիս գրեթե ամեն մի երկանդամ (նաև
եռանդամ) տերմին վերածել համապատասխան բարդության:

Ի տարբերություն փոխանունական կրճատման, որը խոս-
քային իրողություն լինելով, կառուցվածքի մակարդակում ամ-
բանալու համար զգալի պատմական գործառություն և համե-
մատաբար երկար ժամանակ է պահանջում, բաղադրական
ամփոփումը, եթե բացառիկ (անհատական) իրողություն չէ,
անմիջապես անցնում է կառուցվածքի մակարդակին՝ փոխա-
րինելով բազմանդամի միջուկին կամ ծավալիչին, որով և
բազմանդամ տերմինի կառուցվածքն է փոխվում: Այս տեսա-
կետից ևս բաղադրական ամփոփումը կենսունակ և արդյու-
նավետ միջոցներից մեկն է տերմինաշինության մեջ:

3) Խոսքային սզում, երբ բազմանդամ տերմինի մեկ կամ
մի քանի բառեր սղվում, բաց են թողնվում՝ տվյալ տերմինա-
համակարգին հատուկ խոսքի մեջ պահված անդամի ինքնին
հասկանալիության շնորհիվ: Ամեն մի բնագավառ, ինչպես
ասել ենք, ունի իր տերմինահամակարգը և, հասկանալի է, որ
տվյալ համակարգի տերմինները գործածվում են առաջին
հերթին հենց այդ բնագավառին վերաբերող բանավոր կամ
գրավոր խոսքում: Սա ինքնին ստեղծում է խոսքային այնպի-
սի իրադրություն կամ համակցություն, որի մեջ տվյալ բազ-
մանդամի անդամներից մեկը կամ մի քանիսը կարող են բաց
թողնվել: օրինակ՝ հենց մեր նախորդ շարադրանքի մեջ բազ-

մաթիվ անդամներ գործածել ենք բազմանդամ բառը՝ բազ-
մանդամ տերմիններ-ի փոխարեն, որովհետև շարադրանքից
արդեն հայտնի է, որ այստեղ խոսքային փոխանունությունը
բազմանդամ-ը նշանակում է բազմանդամ տերմին: Այս շա-
րադրանքից դուրս, այլ բովանդակությամբ խոսքերում այդ-
պիսի փոխանունությունը կհանգեցնի շփոթության, այսինքն՝
կարող էր շահակացվել, թե դա սովորական, ոչ տերմինային
գործածությունն է (օր. բազմանդամ ընտանիք՝ կուկլտիվ),
մաթեմատիկական տերմինը, թե լեզվաբանական բազման-
դամ տերմինի սղված ձևը: Այդպես և՛ ընտանիք բառը համ-
ընդհանուր տերմին է. լեզվաբանական տերմինահամակարգի
մեջ նա մտնում է լեզվական ընտանիք կամ լեզուների ընտա-
նիկ ծավալումներով, որոնց բաղադրական ամփոփումն է լեզ-
վաբնաանիք բարդությունը: Դրան համապատասխան, լեզու-
ների ծագումնաբանական դասակարգման անվանակարգու-
թյան մեջ ունենք հնդեվրոպական լեզուների ընտանիք կամ
լեզուների հնդեվրոպական ընտանիք, սեմական լեզուների ըն-
տանիք կամ լեզուների սեմական ընտանիք և այլն: Այդ բազ-
մանդամների մեջ ընտանիք համընդհանուր տերմինը լեզուա-
բանական տերմինահամակարգի անդամ դարձնողը լեզուա-
բան է (լեզուների ընտանիք, լեզվական ընտանիք կամ լեզ-
վաբնաանիք): Բայց լեզվաբանական խոսքի մեջ, առավել ևս
համեմատական քերականության մեջ, խոսքը ինքնին արդեն
վերաբերում է լեզուներին կամ մասնավորապես՝ լեզուների
ծագումնաբանական դասակարգությանը, ուստի և ընտանիք
բառը արդեն ներմուծվում է լեզվաբանական տերմինագոր-
ծածության մեջ խոսքային իրադրությամբ կամ խոսքային
համակցություններով, որի հետևանքով էլ մենք կարող ենք
բաց թողնել, սղել բազմանդամի այն բաղադրիչը (լեզու), որ
նույն դիրքն է կատարում, այսինքն՝ ընդհանուր տերմինը մաս-
նավորում ու մոժում է տվյալ տերմինահամակարգի մեջ. դը-
րանով մենք հնդեվրոպական լեզուների ընտանիք կամ հնդեվ-
րոպական լեզվաբնաանիք բազմանդամները կարող ենք դարձ-
նել հնդեվրոպական ընտանիք, բայց շարադրանքի մեջ, բա-
նի որ գիտենք արդեն, որ հնդեվրոպական ծավալիչը բազման-

դամ է կազմում ընտանիք կամ լեզվաընտանիք միջուկի հետ, կարող ենք սղել նաև այդ միջուկները և փոխանունաբար ասել, օրինակ, հնդեվրոպականը բաժանվում է 12 լեզվաեյուղի, իսկ լեզվաեյուղ-ից էլ բաց թողնելով դարձյալ լեզու-ն՝ հնդեվրոպականը բաժանվում է 12 նյուղի: Բազմանդամ տերմինների խոսքային սղումը լինում է երեք տեսակ. ա) փոխանունական սղում, երբ սղվում է միջուկը և ծավալիչը փոխանունաբար ներառում է նաև միջուկի իմաստը (օր. գոչականները լինում են երկու տեսակ՝ հասարակ և հատուկ, որի մեջ հասարակ-ը նշանակում է հասարակ գոյական (անուն), հատուկ-ը՝ հատուկ գոյական (անուն) և այլն), բ) բացարձակ սղում, երբ սղվում է տերմինի մասնավորող, տվյալ համակարգի մեջ մուծող բաղադրիչը, քանի որ խոսքը ինքնին արդեն այդ դերը կատարում է (օր. հնդեվրոպական ընտանիք, փոխանակ՝ հնդեվրոպական լեզուների ընտանիք կամ հնդեվրոպական լեզվաընտանիք, գ) հարաբերական սղում, երբ մեկ անգամ արդեն գործածված բազմանդամ տերմինի ծավալիչը խոսքի շարունակության մեջ փոխարինվում է հարաբերյալի դեր կատարող որևէ բառով, ինչպես՝ լեզվաընտանիքներից մեկն է հնդեվրոպականը: ... Այդ ընտանիքը բաժանվում է 12 լեզվաեյուղի: ... Այստեղ հնդեվրոպական-ը փոխարինվել է այդ գերանունով. կարելի էր փոխարինել նաև հիշյալ, այս, հիշատակված, նշված և նման բառերով, ինչպես և՛ պարզապես կարելի էր գրել, այն (կամ ես) բաժանվում է 12 նյուղի, որի մեջ ամբողջ տերմինը փոխարինված կլինեք ցուցական դերանունով:

Ինչպես տեսնում ենք, այս բոլոր սղումներն էլ պայմանավորված են խոսքով. խոսքն է, որ ստեղծում է համապատասխան պայմաններ՝ տարբեր կարգի սղումների համար, ինչպես և՛ սղումների անհրաժեշտություն, իսկ այդ սղումներն իրոք չափազանց անհրաժեշտ են ու կարևոր տերմինագործածության համար՝ առանձնապես մասնագիտական խոսքի մեջ: Առանց այդ սղումների մենք ստիպված կլինեինք շարունակ կրկնել բազմանդամ տերմինները, որով մասնագիտական խոսքը կժանրաբեռնվեր ու կիռնողվեր անհարկի կրկնություններով ու ավելորդություններով:

Ը. Տերմինային բազմիմաստություն, համանունություն և համանիշություն

Բազմիմաստությունը բառային իմաստների զարգացման անխուսափելի հետևանքն է և իմաստափոխության առավել ընդհանրական օրինաչափությունը: Հասկանալի է, որ այդ օրինաչափությունը չի կարող չզործել նաև տերմինաբանության մեջ, քանի որ տերմիններն էլ բառեր են: Սակայն, ի տարբերություն սովորական, ոչ տերմինային բազմիմաստության, տերմինների բազմիմաստությունը յուրահատուկ զբոսնորումներ ունի, որ և թելադրում է տերմինագիտական տեսակետից բազմիմաստությունը տարբեր տեսակների բաժանել և այդ տարբեր տեսակներն էլ տարբեր զննահատության արժանացել: Որպեսզի տերմինային բազմիմաստության և սովորական, ընդհանուր բնույթի բառային բազմիմաստության տարբերությունը պարզ դառնա, դիմենք հետևյալ երկու բառերի իմաստների վերլուծության:

Առարկա. — ունի հետևյալ նշանակությունները. 1. զգայաբար ընկալվող ամեն մի նյութական բան, որ գիտվում է որպես ինքնին գոյություն ունեցող իր, 2. այս կամ այն կարիքին ծառայող իր՝ արտադրանք (օր. կենցաղային առարկաներ), 3. քննարկման՝ ուսումնասիրության՝ միտքն զբաղեցնող խնդիր՝ նյութ (օր. հետազոտության առարկա), 4. որևէ դործողության՝ արարքի՝ խոսակցության պատճառը՝ նյութը (օր. վեճի առարկա), 5. (ուս.) ուսուցման մի առանձին նյուղ կազմող գիտելիքների ամբողջությունը, գիտակարգ (օր. դասավանդման առարկաներ), 6. (լեզվբ.) իբրև ինքնագոյություն ընդունվող՝ գիտվող երևույթ, իր, հատկանիշ և այլն, 7. (իրավբ.) ինչ որ կարող է իրավունքի՝ դատի նյութ լինել: — Այս յոթ նշանակություններից վերջին երեքը տերմինային են և պատկանում են ուսումնական, լեզվաբանական ու իրավաբանական տերմինահամակարգերին, նախորդ շորտը՝ սովորական բառային նշանակություններ են:

Լուսավոր. — ունի հետևյալ նշանակությունները. 1. լույս արձակող, լույս տվող, 2. լուսավորված, լույսով ողողված, 3. վրան կամ մեջը լույսի ցուլթ(եր) ընկած (օր. լուսան լուսավոր կող), 4. զարգացած, գիտելիքներով հարուստ ու կիրթ, ուս-

յալ, 5. առաջագեմ, առաջադիմական հայացքների տեր, 6. դրական, լավ, զովելի, 7. ուրախալի, երջանիկ, փափագելի (օր. լուսավոր ապագա), 8. դուրեկան, զեղեցիկ, հմայիչ (օր. լուսավոր ժպիտ), 9. շատ սպիտակ, լույսի նման (օր. լուսավոր զգեստ) և այլն:

Եթե ուշադրություն դարձնենք այս երկու բառերի ոչ տերմինային նշանակություններին, ապա կտեսնենք, որ դրանք մեծ մասամբ զանազան փոխաբերություններով առաջացած նշանակություններ են: Դրանց հակառակ, տերմինային տարբեր նշանակությունները (օր. առաջկա բառի 5, 6, 7-րդ նշանակությունները) ըստ էության նույն հասկացությունն են արտահայտում՝ տվյալ բնագավառի մասնավորումով: Հիշենք դարձյալ խոռոչ բառը, որի առաջին և ընդհանուր նշանակությունն է «ոչ միջանցուկ բացվածք՝ փոսորակ որևէ բանի մեջ». այդ նույն իմաստը մասնավորվելով՝ դառնում է. կազմախոսական՝ 2. մարմնի որևէ մասի փոս ընկած տեղ, որի մեջ դտնվում է մի այլ գործարան (օր. աչքի խոռոչ), 3. դատարկ կամ լցված տարածություն կենդանի օրգանիզմի մեջ, որ սահմանազատվում է մարմնի պատերի ներքին մակերեսով (օր. կրծքի խոռոչ), 4. բժշկական և երկրաբանական՝ որևէ մարմնի մեջ քայքայումից առաջացած դատարկություն (օր. թոքերի խոռոչներ, ատամի խոռոչ, լեռնապարի խոռոչ). այս շորս նշանակություններն էլ ըստ էության նույն ընդհանուր հասկացությունն են արտահայտում (փոսորակ որևէ բանի մեջ), բայց յուրաքանչյուրը մասնավորվել է և ստացել որևէ տերմինային հատկանիշով բնութագրվող («քայքայումից առաջացած», «ներքին պատերի մակերեսով սահմանազատվող» և այլն) տարբերակված հասկացություն: Սակայն այս բառի նշանակությունները մի այլ բան էլ են ցույց տալիս. այն դեպքում, երբ 3-րդ և 4-րդ նշանակությունները գիտության (տեխնիկայի և այլնի) տարբեր տերմինահամակարգերի են պատկանում, 2-րդ և 3-րդ նշանակությունները պատկանում են միևնույն տերմինահամակարգին (երկուսն էլ կազմախոսական նշանակություններ են): Ասվածներից ելնելով՝ մենք կարող ենք ընդհանրապես բառային բազմիմաստությունից առանձնացնել տերմինային բազմիմաստությունը և բնորոշել այն որպես միևնույն բառ-տերմինի տերմինային տար-

բեր նշանակությունների ամբողջություն: Տերմինային բազմիմաստությունն էլ, իր հերթին, կբաժանենք երկու կարգի՝ արտահամակարգային և ներհամակարգային: Արտահամակարգային է միևնույն բառ-տերմինի այնպիսի բազմիմաստությունը, որի դեպքում նրա տարբեր տերմինային նշանակություններից յուրաքանչյուրը մի այլ տերմինահամակարգի է պատկանում. օրինակ՝ քն բառի առաջին և երկրորդ (ինքնաթիռի քաշող մակերեսներից մեկը) նշանակությունները տարբեր տերմինահամակարգերի են պատկանում, առաջին նշանակությունը՝ կենդանաբանության, իսկ երկրորդը՝ տեխնիկային և մեխանիկային, ուստի և դա արտահամակարգային բազմիմաստություն է: Այդպիսիք են նաև՝ սեռ (ընդհանուր գիտական՝ «սեռակ», կենսաբանական՝ «բազմացման հեռ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցող և օրգանիզմների մեծագույն մասի արական և իգական առանձնյակների տարբերման հիմք հանդիսացող հատկանիշների ամբողջությունը», տրամաբանական՝ «առավել ընդհանուր հասկացություն, որ իր մեջ բովանդակում է մի շարք ավելի փոքր՝ դասային հասկացություններ», լեզվաբանական՝ «քերականական սեռ», գրականագիտական՝ «ժանր», և այլն), խոռոչ (կազմախոսական, բժշկական-երկրաբանական, ֆիզիկական՝ «անշարժ դրական իոն, էլեկտրոն կորցրած ատոմ» և այլն), կուրս (ընդհանուր գիտական՝ «ընթացքի՝ շարժման ուղղություն», քաղաքական՝ «քաղաքականության ուղղություն», ուսումնական՝ «1. իրար հաջորդող դասարաններից յուրաքանչյուրը բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում», 2. «դասընթաց», անտիսոցիալական՝ ա) ՍՍՀՄ-ում՝ արժեթղթերի արժեքը, որ սահմանվում է հատուկ պետական նորմատիվ ակտերով, բ) կապիտալիստական երկրներում՝ բաժնետոմսերի, փոխառությունների, մուրհակների և այլ կարգի արժեթղթերի բորսայական առք ու վաճառքի գինը» և այլն), ռուսերեն (նաև հայերենում գործածվող) պերֆորացիա (բժշկական՝ «ծակվածք, ծակում», երկրաբանական՝ «հորատանցք, հորատանցում», իրազեկագիտական՝ «սորատանցք, սորատում» և այլն):

Ներհամակարգային է տերմինի այնպիսի բազմիմաստությունը, որի դեպքում նրա երկու կամ ավելի տարբեր նշանա-

կությունները պատկանում են միևնույն տերմինաճամակարգին. օրինակ՝ սեռ բառի, որպես լեզվաբանական տերմինի, երկու նշանակությունները՝ գոյականների սեռ (ռուս. РОД) և բայի սեռ (ռուս. ЗАЛОГ), իբրև միևնույն տերմինաճամակարգի նշանակություններ, ներկայացնում են ներհամակարգային բազմիմաստություն: Այդպես են նաև՝ կուրս «1. ուսումնական հաստատության հաջորդական դասարաններից յուրաքանչյուրը, 2. դասընթաց» նշանակությունները որպես ուսումնական բնագավառի տերմինաճամակարգի նշանակություններ, ժամանակ «1. բայի երեք ժամանակները (ներկա, անցյալ, ապառի) խոսքի տվյալ պահի հարաբերությամբ, 2. բայի յուրաքանչյուր եղանակային ձև» և այլն:

Արտահամակարգային բազմիմաստությունը գիտության, տեխնիկայի, արտադրության և այլնի զարգացման անխուսափելի հետևանքն է. որքան ավելի զարգանում ու ճյուղավորվում են գիտությունները, այնքան էլ մասնավորվում, տարբերակվում են միևնույն հասկացության ստորարածանունները, որով և ավելի ու ավելի նեղ մասնագիտական նշանակություններ են առաջ գալիս, ընդ որում, այն հանգամանքը, որ զբոսանքից յուրաքանչյուրը հանդես է գալիս մեկ տերմինաճամակարգի մեջ, չի խախտում տերմինների ու նրանց իմաստների համակարգայնությունը և շփոթի պատճառ չի դառնում: Բացի դրանից, ինչպես ասել ենք, տարբեր նշանակություններով տարբեր էլ տերմինաճամակարգերի պատկանող տերմինները կարելի է դիտել որպես յուրահատուկ տիպի համանունություն: Այժմ մենք կարող ենք այդ դրույթն ավելի ճշգրտել. քե, խոռոչ, կուրս և բազմաթիվ այդ կարգի բառեր իրենց տարբեր տերմինային նշանակություններով, բառագիտական տեսակետից, իհարկե, համանուններ չեն, որովհետև այդ տարբեր նշանակությունների հիմքում ընկած է բառերից յուրաքանչյուրի ընդհանուր հասկացությունը: Բայց տերմինագիտական տեսակետից, նկատի ունենալով այն փաստը, որ յուրաքանչյուր նշանակությամբ միևնույն բառը դառնում է մեկ առանձին տերմինաճամակարգի տերմին, մենք կարող ենք զրանք համարել պայմանական տերմինային համանուններ: Իհարկե, այս դեպքում տերմինային արտահամակարգային բազմիմաստություն ու պայմանական տերմինային համանու-

նություն անվանումները նույնանում են, ուստի և հավասարապես կարող ենք անվանել տերմինային արտահամակարգային բազմիմաստություն կամ տերմինային պայմանական համանունություն, համապատասխանորեն՝ այդպիսի բազմիմաստությամբ բնութագրվող տերմինները՝ տերմինային արտահամակարգային բազմիմաստներ կամ տերմինային պայմանական համանուններ:

Շարադրվածից ելնելով, կարող ենք ասել, որ տերմինային արտահամակարգային բազմիմաստությունը օրինաչափ և անխուսափելի երևույթ է և, ընդհանուր առմամբ, տերմինաբանության մեջ շփոթ չի առաջացնում: Համենայն դեպս, պետք է նկատի ունենալ հետևյալը. որքան ավելի իրար մոտ են տերմինաճամակարգերը (ցեղակից կամ հարակից գիտությունների տերմինաճամակարգեր), այնքան ավելի անհանձնարարելի է տերմինային բազմիմաստությունը, և, ընդհակառակը, որքան ավելի հեռավոր են, այնքան անվտանգ է և թույլատրելի: Այս դրույթն արդեն ինքնին թելադրում է նաև որոշակի վերաբերմունք ներհամակարգային բազմիմաստության նկատմամբ: Իբրև ընդհանուր կանոն կամ ելակետ տերմինագիտությունն ընդունում է մեկ տերմինին մեկ իմաստ տվյալ տերմինաճամակարգում սկզբունքը. այլ կերպ ասած, տվյալ տերմինաճամակարգի բոլոր տերմինները պետք է լինեն մեխիմաստ: Այս սկզբունքը հիմնվում է այն փաստի վրա, որ ներհամակարգային տերմինային բազմիմաստությունը հաճախ ստեղծում է միտքը մթազնոց ավելորդ կրկնաբանություններ, մտքի զղավաղում, տերմինային սահմանումների ճշգրտում և զղավաղում, տերմինային սահմանումների ճշգրտում կրկնաբանություն և այլն: Թրինակ նա ավարտել է երկրորդ կուրսի իր կուրսը անհեթեթ կրկնաբանություն է, բայց ունի երեք ժամանակ և սահմանակառ եղանակն ունի յոթ ժամանակ միմյանց բացասող սահմանումներ են, աչքի խոռոչում խոռոչ է առաջացել միտքը մթազնոց և շփոթ առաջացնող կրկնաբանություն և այլն: Այս հանգամանքն էլ, ահա, թելադրում է ներհամակարգային բազմիմաստության վերացման ուղիներ ու միջոցներ, որոնցից հիմնականներն են. ա) տերմինի մեկ (անհրաժեշտության դեպքում երկու, երեք...) իմաստի համար գործածել լեզվում արդեն գոյություն ունեցող մի այլ բառ կամ ստեղծել նոր բառ-տերմին. օրինակ՝ կուրս

բառի բերված ուսումնական նշանակություններից երկրորդի համար ունենք դասընթաց բառը և, հասկանալի պատճառով, չի հանձնարարվում կուրս բառի գործածությունը «դասընթաց» նշանակությամբ (բերված նախադասությունը պետք է լինի՝ նա ավարտել է երկրորդ կուրսի իր դասընթացը, որ միանգամայն հասկանալի է և որևէ շփոթի տեղիք չի տալիս): բ) նշանակությունները տարբերակող բազմանդամ տերմիններով վերացնել բազմիմաստությունը. օրինակ՝ սեռ բառը հայերեն լեզվաբանական տերմինահամակարգում ունի ռուսերենի բՈՃ և ЗАЛОГ տերմինների նշանակությունները. քանի որ սեռ տերմինը ամրացել է, և նպատակահարմար չէ ուրիշ տերմինով փոխարինել, ապա տերմինահամակարգում ունենք անվան (կամ անվանական) սեռ և բայի (կամ բայական) սեռ բազմանդամները:

Ներհամակարգային բազմիմաստության վերացման այս երկու հիմնական և շատ ուրիշ երկրորդական միջոցների աուկայությունն ինքնին արդեն նշանակում է, որ տերմինաբանությունը չի թուլատրում ներհամակարգային բազմիմաստություն և, հետևաբար, որքան քիչ են ներհամակարգային բազմիմաստները, այնքան ավելի կատարյալ և գիտականորեն մշակված է տերմինահամակարգը:

Տերմինային բազմիմաստության հետ սերտորեն կապված է համանունությունը, որը, ի տարբերություն բազմիմաստության, նույնանում է ընդհանուր բառային համանունությանը. օրինակ՝ հոտ «բույր» և հոտ «նախիր», լեռնապար «չխոնային ապար» և լեռնապար «չխոն պար՝ շղթա, լեռնաշղթա» համանուններ են և՛ ընդհանուր բառագիտական, և՛ տերմինագիտական տեսակետից: Իհարկե, այստեղ ևս կարելի էր համանունները բաժանել արտահամակարգային և ներհամակարգային տեսակների և դա միանգամայն ճիշտ կլիներ, սակայն տերմինաբանության մեջ բուն համանունները մեծ թիվ չեն կազմում, իսկ ներհամակարգայինները այնքան քիչ են, որ այդ ստորաբաժանումները գործնականորեն այնքան էլ արդյունավետ չեն կարող լինել:

Տերմինագիտական տեսակետից ավելի կարևոր երևույթ է տերմինային համանիշտությունը: Բառային ընդհանուր բնույթի համանիշտության ընդհանուր տեսությունից գիտենք, որ բա-

ցարձակ նույնիմաստությունը լեզվի մեջ այնքան էլ կենսունակ իրողություն չէ, ըստ որում լեզուն բացարձակ համանիշտները տարբերակում է իմաստային նրբություններով կամ գործառություններով: Համանայն դեպք, շնորմավորված խոսքում, մանավանդ ստեղծագործական խոսքի մեջ բացարձակ համանիշտությունը ոչ միայն անխուսափելի, այլև նույնիսկ կենսականորեն անհրաժեշտ է (հանգավորման, տաղաչափական կառուցվածքի, կրկնաբանություններից խուսափելու և այլ նրպատակներով): Ինչ վերաբերում է տերմինաբանությանը և առանձին տերմինահամակարգերին, ապա այստեղ մոտեցումը բոլորովին այլ է: Քանի որ տերմինի իմաստը ճշգրտորեն սահմանելի հասկացություն է և գիտական (տեխնիկական և այլն) տերմինաբանության մեջ տերմինների զանազան կարգի տարբերակումներն ըստ գործառության (ոճական նպատակներով), իմաստային երանգավորումները, նրբությունները և այլն հակասում են տերմինագործածության պահանջներին, ապա համանիշտությունն էլ պետք է գնահատվի այդ մոտեցումով: Իմաստային նրբություններով տարբերակում լինել չի կարող, որովհետև տերմինը պետք է որոշակիորեն տարբերակված հասկացություն արտահայտի հասկացությունների ամբողջ համակարգի մեջ. եթե տվյալ իմաստային տարբերությունը մի տարբեր հասկացություն է արտահայտում տվյալ տերմինահամակարգում, ապա մենք գործ ունենք ոչ թե իմաստային նրբորանգի հետ, ոչ թե տերմինային նույնիմաստության հետ, այլ պարզապես ունենք տարբեր տերմիններ: Այսպես, օրինակ, ոչ նորմավորված խոսքում հոմանիշներ են մազ, հեր, գես, վարս, ծամ, բուրդ, զեղմ, ստև, մազմըզով, աղվամազ բառերը, որոնք իմաստային և գործառական տարբեր բնութագրեր ունեն. տերմինաբանության մեջ, սակայն, զրանք արդեն հոմանիշներ չեն, որովհետև գես և հեր բառերը գործառապես բանաստեղծական բառապաշարին են պատկանում, իսկ մյուսները որոշակիորեն տարբեր տերմիններ են. մազ իբրև կենդանաբանական ընդհանուր տերմին արտահայտում է ամենաընդհանուր հասկացությունը (սկենգանինների ու մարզու մաշկի վրա բուսնող եղջերային թելանման զոյացություն), իսկ բուրդ, զեղմ, ստև, ձառ, մազմըզով, աղվամազ բառերը՝ մազ-ի զանազան տեսակներն են

(բուրդ «ոչխարի մազ», գեղձ «նրբաբուրդ ոչխարների ենթա-
բրդի իրար կպած մազիկների շերտը», սառ «խոզի մազ», ձար
«ծիու մազ», մազվուկ «նուրբ մազիկներ», աղվամազ «նուրբ
ու փափուկ մազ, մասնավորապես՝ թռչնի բմբուլ»), իբրև
կենդանաբանական տերմիններ այդ բառերը միմյանց հետ
ստորակարգային կամ համադասական հարաբերության մեջ
են գտնվում որպես մանրահամակարգի անդամներ և, հետև-
փարար, տերմինագիտական տեսակետից համանիշներ չեն:
Ինչ վերաբերում է գործառական տարբերակման, ապա տեր-
մինաբանությունը ինքնին բառապաշարի գործառական մաս-
նաշերտ է և իր մեջ գործառական տարբերակումը կամ ստո-
րաբաժանումը տերմինահամակարգերի տարբերակում է: Այս-
պես, օրինակ, մազվուկ իբրև կենդանաբանական տերմին
նշանակում է «մազիկներ» (հավաքական իմաստով), իսկ որ-
պես բուսաբանական տերմին՝ «բույսերի արմատների մա-
զանման թելիկները», բայց, ինչպես հեշտությամբ կարելի է
տեսնել, դա արդեն գործառական տարբերակում չէ միայն,
այլ տերմինային արտահամակարգային բազմիմաստություն:
Տերմինագիտորեն այլ կարգի գործառական տարբերակում
տերմինները չեն կարող ունենալ, որովհետև տերմինները
գործառապես պատկանում են գիտական, տեխնիկական (վար-
չա-դիվանագիտական, արտադրական և այլն) խստիվ նոր-
մավորված ու կարգաբերված տերմինահամակարգերի, և տեր-
մինաբանական ճշգրտությունը այդ կարգի տարբերակում ու-
նեցող խոսքերում հավասար է գիտական (տեխնիկական և
այլն) մտքի ճշգրտության:

Շարադրվածից ինքնին բխում է այն միտքը, որ ընդհա-
նուր բառագիտական համանիշությունից պետք է տարբերել
տերմինաբանական համանիշությունը: Բառերի այն խումբը,
որ բառային համանիշների շարք է ներկայացնում, այլևայլ
տերմինագիտական բնութագրություններ կարող է ստանալ.
այսպես, օրինակ, վերը բերված համանիշային շարքը (մազ,
բուրդ, գեղձ և այլն) տերմինաբանության մեջ մտնում է ոչ
լրիվ (զուրս են գալիս կեր, վարս, գես, ծամ բառերը), իսկ
երանք, որ մտնում են, դառնում են ստորակարգային սանդ-
ղակի կամ համադասական շարքի անդամներ, որով և ստա-
նում են տերմինային ինքնուրույնություն: Այս հանգամանքն

էլ, ահա, թելագրում է տերմինագիտական յուրահատուկ մո-
տեցում տերմինների համանիշությանը: Քանի որ հոմանի-
շային բառախմբի անդամները տերմինահամակարգի մեջ հան-
դես գալով ստորակարգային կամ համադասական հարաբե-
րություններով՝ դառնում են ինքնուրույն տերմիններ և զա-
ղարում են համանիշներ լինելուց, ապա տերմինային հոմա-
նիշության ոլորտում մնում են բացարձակապես նույնիմաստ
տերմինները, այսինքն՝ տերմիններ, որոնք նույն հասկացու-
թյունն են արտահայտում տվյալ տերմինահամակարգում՝ ա-
ռանց որևէ տարբերության և կարող են ազատորեն փոխարի-
նել իրար մասնագիտական խոսքում, ինչպես՝ բնատեղա-
թյուն-լիրիկա, փոշեծծիչ-փոշեծուծ-փոշեհավաք և այլն: Քըն-
նույնության առնելով այդ կարգի համանիշները տերմինագիտա-
կան մոտեցումով՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացու-
թյան. նույնիմաստ տերմինները, իբրև միևնույն հասկացու-
թյան տարբեր բառային ձևեր, բազմանուններ են. բանաս-
տեղծ-պոետ, փոշեծծիչ-փոշեծուծ-փոշեհավաք, լուցիչ-հրա-
հան-վառիչ-ինֆնավառիչ և այլն բազմանուններ են, որովհե-
տև այդ համանիշները միևնույն հասկացության տարբեր ան-
վանումներն են: Եթե շնորմավորված խոսքում նույնիմաստ
բառերի կամ բազմանունների գործածությունը, թույլատրելի,
իսկ երբեմն էլ անհրաժեշտ է, ապա տերմինաբանության մեջ
գիտական ճշգրտության ու տերմինային համակարգայնու-
թյան առաջնակարգ պահանջները բացասում են տերմինա-
համակարգի ծանրաբեռնումն ու խճողումը բազմանուններով,
որոնք ոչ միայն ավելորդ զուգահեռություններ են ստեղծում
տերմինագործածության ու տերմինահամակարգերի մեջ, այլև
հաճախ շփոթությունների ու սխալների տեղիք են տալիս: Այս-
պես, օրինակ, լեզվաբանություն տերմինի փոխարեն երբեմն
գործածում են լեզվագիտություն բառը, որ ոչ միայն անհանձ-
նարարելի է, այլև սխալ. լեզվագիտություն բառի հիմնական
նշանակությունն է «լեզուներ իմանալը, լեզվագիտ լինելը» և
դրա գործածությունը լեզվաբանություն տերմինի փոխարեն ան-
թույլատրելի է. — ուսերեն քրիճօր բառի տարբեր նշանա-
կությունների համար հայերենում ունենք՝ 1. սպասվ «որևէ
նպատակով օգտագործելի առարկաների համալիր» (օր. թելի
սպասք), 2. սառլ «հատուկ պործիք՝ հարմարանք որևէ նպա-

ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բառարանագրությունը բառարաններ կազմելը և բառարանների տարբեր տիպերի կազմության սկզբունքների, եղանակների մշակումն ու դրանց գործնական կիրառությունն է: Ամեն մի բառարանագիր, իր կազմելիք բառարանի բնույթին ու բովանդակության համապատասխան, մշակում է բառերի ընտրության, նրանց բացատրության, դասավորության, զանազան կարգի բնութագրությունների գործնական սկզբունքները: Բառարանագրական ամեն մի հուշարձան, այսպիսով, ներկայացնում է որոշակի կառուցվածք, բառերի ընտրության, դասավորության, բացատրությունների, օրինակների և այլնի իր համակարգը, որ և դառնում է բառարանագիտության ուսումնասիրության առարկան:

Բառարանագիտությունն ուսումնասիրում է բառարանների տարբեր տեսակները, նրանց գիտական ու գործնական նպատակագրումն ու դրան համապատասխան՝ նրանց կազմության ընդհանուր սկզբունքները, ինչպես և՛ բառարանագրության պատմությունը: Հիմնվելով արդեն զոյություն ունեցող բառարանների ուսումնասիրության վրա, բառարանագիտությունը ընդհանրացնում է կուտակված փորձը, մշակում ընդհանուր տեսություն բառարանների տարբեր տեսակների, յուրաքանչյուրի գիտական ու գործնական խնդիրների մասին և դրանով իսկ իբրև տեսական հիմք հանդիսանում ավելի ամբողջական, առավել կատարյալ բառարանների կազմության համար:

տակի համար» (օր. չափիչ սարք), 3. պարագա (օր. դրան պարագաներ), 4. զգեստասարք «համազգեստի տարրերանը-շան»: Մամուլում, ինչպես և գիտական գրականության մեջ, նույնիսկ մասնագիտական միևնույն գրքում, հաճախ գործածում են սաբ և սպասբ բառերը՝ 2-րդ նշանակությամբ, համապատասխանորեն՝ նաև սաբֆալիստություն և սպասբֆալիստություն նույնանիշները ռուս. приборостроение տերմինի դիմաց, որ թյուրիմացությունների տեղիք է տալիս. նիշտն է միայն սաբ և համապատասխանորեն՝ սաբֆալիստություն: Վերջին տարիներում է՝սպեբիմենտալ տերմինի փոճառական հայերեն համապատասխանի փոխարեն սկսեցին գործածել փոճառական բառը, ստեղծելով անհարկի բազմանունություն և տերմինային բացահայտ անճշտություն², ըստ որում փոճառական բառը համապատասխանում է экспериментаторский-ին: Այսպիսի օրինակները շատ են, և դրանց քրնությունը ցույց է տալիս, որ տերմինային բազմանունությունը կամ թյուրիմացությունների տեղիք է տալիս, կամ տերմինարանական անորոշություն ստեղծում, որ նշանակում է, թե զեռես կայունացած տերմին չկա (ինչպես, օրինակ, փոշեծծիչ-փոշեծուծ-փոշեհավաք, լուցիչ-ինքնավառիչ-վառիչ և այլն), կամ էլ ավելորդ զուգահեռություն է առաջ բերում: Իսկ սրանից հետևում է, որ տերմինային բազմանունությունը նորմավորված խոսքի և գիտական ճշգրտություն պահանջող խոսքի ոլորտներում հանձնարարելի չէ: Տվյալ տերմինաբանակարգի մեկ նաակացույթյանը մեկ բառային ձև սկզբունքը տերմինագիտության համար անխախտելի է, և բազմիմաստության, համանունության ու համանիշության հարցերը պետք է լուծել այդ սկզբունքի համաձայն:

² Փորձառական բառից, իբրև է՝սպեբիմենտալ-ի համապատասխանից, հրամարվեցին թյուրբարձման հետևանքով՝ կարծե՛լով, թե բառը կազմվել է փորձառու բառից, միևնույն փորձառու-ից կկազմվեր փոճառուտակահ (հմմտ. կատարածու-կատարածուական, փոխատու-փոխատուական, վաշխառու-վաշխառուական, քեկնածու-քեկնածուական և այլն). փորձառական բառը կազմվել է փորձառու բառից, փորձի՛ էքսպերիմենտի ենթարկել, փորձ՝ էքսպերիմենտ կատարելու բայից միանգամայն նիշտ բառակազմական կազմաբաժնով (հմմտ. զուճառու-զուճառական, փոխառու-փոխառական, նեոսեղ-նեոսեղական, զբաղարյան՝ պարտուլ-պարտուլական և այլն) և երբեք հրամարվելը միայն բառի կազմությունը չհասկանալու հետևանք է:

Բառարանների տեսակները

Բառարանները լինում են երկու տիպի՝ հանրագիտական և բանասիրական կամ լեզվաբանական: Բառարանների այս երկու տիպերի գլխավոր տարբերությունն այն է, որ հանրագիտական բառարաններում նկարագրվում են իրույթները (այսինքն՝ առարկաները, երևույթները), պատմական իրադարձությունները և այլն, մինչդեռ բանասիրական բառարաններում բացատրվում են կամ բնութագրվում բառերը: Բացի դրանից, հանրագիտական բառարանները ընդգրկում են ոչ թե տվյալ լեզվի բոլոր բառերը՝ առհասարակ, այլ, իբրև կանոն, տեղափոխականությունն ու պատմաբանությունը, ինչպես և՛ պատմական դեպքեր, դեմքեր, աշխարհագրական անուններ և այլն, և այլն:

Ըստ իրենց բովանդակության հանրագիտական բառարանները լինում են ընդհանուր և մասնավոր կամ ճյուղային: Ընդհանուր են այն հանրագիտական բառարանները, որոնք բովանդակում են բոլոր գիտությունների, արհեստների, արվեստների, հասարակական կյանքի բոլոր բնագավառների իրողությունները, իրույթները, հիմնական գիտական հասկացությունները և այլն, և այլն: Այդպիսի հանրագիտական բառարան է՝ «Հայկական սովետական հանրագիտարան»-ը, որ պետք է բաղկացած լինի 12 հատորից:

Ճյուղային են այն հանրագիտական բառարանները, որոնք վերաբերում են գիտության, տնտեսության, արվեստի և այլնի որևէ ճյուղի. օրինակ՝ արվեստների հանրագիտարան, բժշկական հանրագիտարան, գրական հանրագիտարան և այլն: Այդպիսի հանրագիտարան է Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ը:

Հայերեն հանրագիտական բառարաններ են.

Մանվել Փաշունի, Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, Վենետիկ, 1891: Սոահատոր բառարան է՝ 1—2 հատորները Ֆրանսերենից-հայերեն (բացատրությունները՝ գրաբար), 3-րդը՝ հայերեն-ֆրանսերեն:

Համբարձում Առաքելյան, Հանրամատչելի հանրագիտա-

կան բառարան, Յիֆլիս, 1912, հ. 1 (2-րդ հատորը լույս չի տեսել՝ հեղինակի մահվան պատճառով):

Սուրբառ էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1900 (Բ հրատ. 1905), հ. 2, 4. Պոլիս, 1905:

Միքտիչ Պատուրյան, Հայ հանրագիտակ, հ. 1 (1—5 պր-րակ), Պուրբեշ, 1938—40:

Հրայր Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1—5, Երևան, 1942—1962:

Բանասիրական կամ լեզվաբանական բառարանները բազմատեսակ են, ըստ որում յուրաքանչյուր տեսակն ինքնին արդեն կանխորոշում է ինչպես բառարանի բովանդակությունը, այնպես էլ բառերի ընտրության, բնութագրությունների ու բացատրությունների առկայության կամ բացակայության սկզբունքները և այլն: Բանասիրական բառարանների առավել մեծ տարածում գտած տեսակներն են՝ բացատրական, թարգմանական կամ զուգադրական, բառագիտական և տեղեկատու-գործնական բառարանները:

Ա) Բացատրական բառարաններ.— Բացատրական բառարաններ են այն բոլոր բառարանները, որոնց մեջ, անկախ իրենց պարունակած բառերի քանակությունից և ընտրության սկզբունքներից, բացատրվում են տվյալ լեզվի բառերը հենց տվյալ լեզվով: Բացատրական բազմաթիվ ու բազմաբնույթ բառարանները կարելի է բաժանել երկու կարգի՝ ընդհանուր և մասնագիտական: Ընդհանուր են այն բացատրական բառարանները, որոնք բովանդակում են տվյալ լեզվի կամ նրա զարգացման որևէ փուլի բառերն ընդհանրապես՝ առանց որևէ կարգի ճյուղային կամ մասնագիտական սահմանափակման: Այդպիսի բառարաններ են, օրինակ, «Նոր հայկազյան», Ստ. Մայրասյանցի, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բազմահատոր բացատրական, է. Աղայանի բառարանները: Ընդհանուր բառարաններն էլ կարող են լինել ընդարձակ կամ համառոտ: Համառոտ բառարանները սովորաբար ծավալը փոքրացնելու և դրանով իսկ գյուրակիր ու հանրամատչելի դարձնելու նպատակով կամ բացատրություններն են համառոտում, հաճախ բացատրության փոխարեն ավելի զործածական ու բոլորին հասկանալի հոմանիշ տալով (օրինակ՝ պա-

րանոց— վիղ), կամ էլ, դրա հետ միաժամանակ՝ նաև որոշակի ընտրութիւնը բառացանկը կրճատելով: Առաջին սկզբունքով է կազմվել «Առձեռն բառարան»-ը, որի բառացանկը ավելի հարուստ է, քան երկհատորյա Հայկազյանինը, երկրորդ սկզբունքով՝ Տեր-Խաչատրյանի, Հ. Գանգրունու և Փ. Տոնիկյանի բառարանը:

Մասնագիտական բացատրական բառարանները բովանդակում են գիտութիւն, տեխնիկայի, արվեստների, արհեստների և, առհասարակ, զբաղմունքի որևէ բնագավառի բառերը (տերմինները և անվանակարգութիւնը)՝ իրենց բացատրութիւններով (այդպիսին է, օրինակ, «Գրականագիտական բառարան»-ը): Մասնագիտական բառարանները իրենց բովանդակութեամբ կարող են մտնել նաև մասնավոր հանրագիտական բառարաններին, երբ նրանք, բացի ավելի ճշուշի տերմինաբանութիւնից ու անվանակարգութիւնից, ներկայացնում են նաև այդ բնագավառի գործիչների, գիտնականների, ինչպես և՛ պատմական երևույթների բնութագրութիւնները, բացատրութիւնները, կենսագրական տեղեկութիւններ և այլն (այդպիսին է, օրինակ, «Փիլիսոփայական բառարան»-ը): Մասնագիտական բառարանները կարող են նաև տերմինաբանական բառարանի բնույթ ստանալ, վերածվել մասնագիտական բացատրական-տերմինաբանական բառարանի, եթե նրանց մեջ տերմինների բացատրութիւններից բացի տրվում են նաև դրանց համապատասխանները որևէ այլ լեզվով կամ մի քանի լեզուներով (այդպիսին է, օրինակ, «Լեզվաբանական բառարան»-ը):

Հայերենի ամենահին բացատրական բառարանն է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ը (Ա. տպ., Ալիկոնա, 1778, Բ. տպ., Պոլիս, 1779): Պարունակում է մոտ 10 հազար բառ, որի մի մասը հայ հին մատենագրութիւնի մեջ չի գործածվել: Տպագրութիւնը սխալաշատ է, աղավաղումներով լի: Նույնը՝ միջնադարյան տարբեր ձեռագիր բառարանների համեմատութեամբ, բանագիրական ու լեզվաբանական քննութեամբ ու ճշգրտումներով հրատարակեց Հ. Մ. Ամալյանը՝ 1975 թ.:

Հայերեն բացատրական ընդհանուր բառարաններից լավագույններն են՝

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1836—37.

երկհատորյա բառարան է, որի հեղինակներն են Գարրիել Ավետիքյանը, Խաչատուր Սյուրմելյանը և Մկրտիչ Ավգերյանը: Պարունակում է հայ հին մատենագրութիւնի մեջ գործածված բառերը. բացատրութիւնները գրաբար են. բառերի մեծագույն մասի մոտ տրվում են նաև հունարեն, լատիներեն, թուրքերեն համապատասխանները, որով նա ստանում է նաև բազմալեզվյան բառարանի բնույթ: Բառերի գործածութիւնի համար վկայութիւններ են բերվում հայ հին մատենագրութիւնից: Գրաբարի ամենաընտիր բառարանն է: Տրվում են նաև որոշ քանակով բառերի ստուգաբանութիւններ, որոնց մի փոքր մասն է միայն ճիշտ:

«Առձեռն բառարան հայկազեան լեզուի». նախորդի համատարութեամբ ու բաց թողնված բառերի հավելումով կազմել է Մկրտիչ Ավգերյանը. պարունակում է 56410 բառ: Ունի երկու հրատարակութիւն՝ առաջինը 1846, երկրորդը՝ 1865 թվականին, Վենետիկում:

Սիւնն Գարամազյան, Նոր բառգիրք հայերեն լեզվի, Կ. Պոլիս, Ա հրատ. 1892, Բ հրատ. 1910, Գ. հրատ., Բեյրութ, 1953: Առաջին հրատարակութիւնը պարունակում է մոտ 30 հազար բառ, երկրորդը և երրորդը (հետմահու)՝ շուրջ 70 հազար: Բովանդակում է գրաբարյան, աշխարհաբարյան գրական և բարբառային բառեր: Բացատրութիւնները տրվում են աշխարհաբար լեզվով:

Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, 4 հատոր, Երևան, 1944—45 թթ.: Բովանդակում է Նոր հայկազյան, Առձեռն, Հր. Աճառյանի «Գավառական բառարանի», Ամատունու «Հայոց բառ ու բանի» և զանազան բացատրական, հանրագիտական ու թարգմանական բառարանների բառերը՝ մոտ 120 հազար բառ: Իր ժամանակի համար բավականաչափ լավ է մշակված իմաստաբանութիւնը, բացատրութիւնները պարզ են ու մատչելի. բերվում են օրինակներ բառերի զանազան նշանակութիւնների համար. օրինակների մեծագույն մասը կազմողի հեղինակութիւնն են, թիչ դեպքերում՝ գրական աղբյուրներից ցաղված նախադասութիւններ: Այս բառարանի առավելութիւնն է այն, որ նա ամփոփում է տարբեր բառարաններում հավաքված բառերը (գրաբարյան, միջինհայերենյան, աշխարհաբար գրական,

բարբառային). շատ հարուստ է դարձվածաբանությունը: Համեմատաբար թերի է աշխարհաբար գրական լեզվի բառագանձը: Իբրև հայերեն բառարանների ամփոփում ու հանրագումար՝ անփոխարինելի է ու մշտապես մնալուն:

Պետրոս վարդապետ Ճիզմեկյան, Հայերեն աշխարհաբար լեզվի լիակատար բառարան, Հալեպ, Ա հատոր, 1954, Բ հատոր, 1957. պարունակում է 60627 բառ: Բացատրությունները համառոտ են, մատչելի, բովանդակում է հիմնականում արևմտահայ գրական լեզվում գործածված բառերը. թերի է արևելահայ և սովետական գրականության բառագանձը:

Աբուաշես Տեր-Խաչատրյան, Հրանդ Գանգրունի, Փարսմազ Կ. Տոնիկյան, Հայոց լեզվի նոր բառարան, Բիշրուք, 1968: Համառոտ բառարան է, որ պարունակում է շուրջ 40 հազար բառ, գլխավորապես արևմտյան գրական լեզվի բառերը, ինչպես և՛ նոր գրականության մեջ գործածված գրաբարյան ու բարբառային որոշ քանակով բառեր:

Էդուարդ Ազայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976 (երկու գրքով): Բովանդակում է արևելահայ և արևմտահայ գրական աշխարհաբարի բառերը՝ սկզբից մինչև մեր օրերը (135 հազար բառ և 11 հազար դարձվածաբանական միավոր): Աշխարհաբար գրական լեզվի առավել հարուստ բառարանն է՝ ընդարձակ բացատրություններով և, ըստ անհրաժեշտության, հակիրճ օրինակներով, որոնք քաղված են գրականությունից:

«Ժամանակակից հայերենի բացատրական բառարան». կազմել է Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հեղինակային կոլեկտիվը. հ.հ. 1—4, 1969—1981: Պարունակում է մոտ 100 հազար բառ: Իր քննված ու բովանդակությամբ գրքի թե նույնանում է նախորդի հետ. հիմնական տարբերությունն այն է, որ նախորդում բերվում են հեղինակային օրինակներ միայն առանձին դեպքերում՝ անհրաժեշտության թելադրանքով, իսկ այստեղ յուրաքանչյուր բառի ու նրա յուրաքանչյուր նշանակության համար բերվում են հեղինակային օրինակներ, և սա բառարանի կազմության հիմնական սկզբունքներից մեկն է (այս սկզբունքը, սակայն, հնարավոր չի եղել լիովին կիրառել):

Այս երկու բառարաններն էլ, նախորդների համեմատու-

թյամբ, բնութագրվում են իրենց բովանդակած բառերի որոշակի ընտրությամբ. սրանք աշխարհաբար գրական լեզվի բառարաններ են և պարունակում են, իբրև սկզբունք, այն բոլոր բառերը, որոնք գործածվել են մեր նոր գեղարվեստական ու գիտական գրականության մեջ, մամուլում, ինչպես և գրական լեզվի բանավոր տարբերակում: Առանձնապես հարուստ են նորակերտ և նորամուտ բառերով: Երկրորդ բառարանը շատ հարուստ է դարձվածաբանությամբ, թեև դրանց մի զգալի մասը չի վկայված հեղինակային օրինակներով:

Հայերենի բացատրական բառարանների շարքը պետք է դասել նաև հետևյալները:

Մանակ Ամատունի, Հայոց բառ ու բան, Վազարշապատ, 1912: Բովանդակում է հայերեն բարբառների բառերն ու արարատյան բարբառի դարձվածաբանությունը՝ դրանց բացատրություններով, օրինակներով ու գրական աղբյուրների նշումով:

Հրաչյա Աճառյան, Հայերեն զավառական բառարան, Մոսկվա, 1913: Պարունակում է մոտ 30 բարբառների բառերը՝ իմաստների առավել լիակատար բացատրությամբ ու բառերի լեզվաբանական-բառագիտական բնութագրությամբ:

Աշոտ Սուրխաչյան, Սերգեյ Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975: Բովանդակում է ժամանակակից հայոց գրական լեզվի դարձվածները, խոսակցական լեզվում գործածվող դարձվածներ ու բարբառային դարձվածներ, որոնք գործածվել են գրականության մեջ: Գործվածները բացատրվում են և յուրաքանչյուր նշանակության համար բերվում են գրականությունից քաղված օրինակներ:

Հայերեն բացատրական մասնագիտական բառարաններից են՝

Էդվարդ Զրբաշյան, Հենրիկ Մախաճյան, Գրականագիտական բառարան, Երևան, 1975:

Հրանտ Պետրոսյան, Սերգեյ Գալստյան, Թեեեզա Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:

«Փիլիսոփայական բառարան», Թարգմ. ռուսերեն 3-րդ հրատարակությունից, Վոլոգդյա Բաղդասարյանի թարգմանությամբ, Երևան, 1975:

Բ) Թարգմանական կամ զուգադրական բառարաններ.—

ն բուրբ բառարանները, որոնց մեջ մի լեզվի բառերը թարգմանվում են մի այլ լեզվի բառերով. այսպիսի բառարաններում սովորաբար բառերը չեն բացատրվում, այլ ամեն մի բառի դիմաց արվում է մի որևէ ուրիշ լեզվի նույնանիշ բառը, թեև առանձին դեպքերում չի բացատրվում նաև որոշ բառերի բացատրությունը հատկապես այն դեպքերում, երբ տրվյալ բառը իր համապատասխանը չունի թարգմանելի լեզվում: Թարգմանական (զուգահրայական) բառարանները լինում են երկլեզվյան և բազմալեզվյան (երեքլեզվյան, չորեքլեզվյան, հինգլեզվյան և այլն): Հայերենի թարգմանական բառարաններից նշանավորներն են հետևյալները:

Հաբուրյուն Դաղբաշյան, Լիակատար բառարան ուսերեկից հայերեն, Թիֆլիս, 1903:

Նույնի՝ Լիակատար բառարան հայերենից ուսերեն, Թիֆլիս, 1911:

Քաղնու Ավզարեգյան, Պողոս Ստեփիլյան, Երվանդ Տեր-Միևսյան, Վարդան Փոթեյան, Ռուս-հայերեն նոր բառարան, Ա հատոր, 1933, Բ հատոր, 1935:

ՀՄՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի հեղինակների կողմից Ռուս-հայերեն բառարան, 4 հատոր, Երևան, 1954—58:

Արաուա Ղափթյան, Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1968:

Նուբար Բյուզանդացի, Բառագիրք ի զազղիերենէ ի հայերէն, Կ. Պոլիս, 1884. Ֆրանսերենից հայերեն բառարան է-թարգմանական մասը՝ գրաբար:

Ավետիֆ Վ. Կայսովյան, Բառագիրք գերմաներէն-հայերէն, Վենետիկ, 1884:

Հ. Հ. Զազմազեյան, Ընդարձակ բառարան անգլիերեն-հայերեն, Բոստոն, 1922:

Գրիգոր Անդրեասյան, Գերմաներեն-հայերեն բառարան, Երևան, 1976:

Մեսրոպ Գույումեյան, Ընդարձակ բառարան հայերեն-անգլիերեն, Գահիրե, 1950:

Նույնի՝ Ընդարձակ բառարան անգլիերեն-հայերեն, Գահիրե, 1961:

Բազմալեզվյան թարգմանական բառարաններ են՝ Արխատկես և Ստեփանու Ազարյաններ, նոր բառգիրք

հունարեն-իտալերեն-հայերեն-տաճկերեն, Վիեննա, 1848:

Ռուբեն Աբրահամյան, Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ուսերեն-անգլերեն բառարան, Երևան, 1965:

Թարգմանական (զուգահրայական) են նաև այն մասնագիտական բառարանները, որոնք բովանդակում են գիտություն, տեխնիկայի և այլնի որևէ ճյուղի տերմինների ցանկը՝ մեկ լեզվից մի այլ լեզվի (լեզուների) թարգմանությամբ: Դրանք կոչվում են նաև տերմինաբանական բառարաններ կամ տերմինաբաններ: Այդ կարգի բազմաթիվ բառարաններից են՝

Հովհաննես Հովհաննիսյան, Ռուս-հայերեն իրավաբանական բառարան, Եր., 1924:

Մանուկ Աբեղյան, Ռուս-հայերեն ռազմական բառարան, Եր., 1925:

Հրաչյա Անտոյան, Հայրապետ Զաբաբյան, Դավիթ Հակոբջանյան, Արշակ Տոնյան, Հովհաննես Քաջազնունի, Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների, Եր., 1928:

Ստեփան Մալխասյանց, Երկրաչոս Մամիկոնյան, Ներսես Տեր-Միխայելյան, Ռուս-հայերեն բառարան երկաթուղային տերմինների, Եր., 1925:

Նույն հեղինակների՝ Հայ-ուսերեն բառարան երկաթուղային տերմինների, Եր., 1927:

Քաղնու Ավզարեգյան, Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան, Եր., 1964:

Հեղինակների կողմից, Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Եր., 1957:

Բազմալեզվյան տերմինաբանական բառարաններ են՝ Անուկ Ալիշան, Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն, Վենետիկ, 1895: Բուսանունների բառարան է՝ հայերեն-լատիներեն-ֆրանսերեն-տաճկերեն և արաբերեն:

Մանուկ Աբեղյան, Լևոն Հովհաննիսյան, Աշուս Տեր-Պազուսյան, Արշակ Ազարյան, Լատին-ուս-հայերեն բժշկական բառարան, Եր., 1951:

Վահան Արծրունի, Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարան, 1956 (որոշ տերմիններ ունեն նաև համառոտ բացատրություններ):

Արշակ Տոնյան, Վահան Տոնյան, Մաթեմատիկական տեր-

մինների տերմինաբանական բառարան (անգլերեն-ուսերեն-հայերեն-գերմաներեն-ֆրանսերեն), Եր., 1965:

9) Բառագիտական բառարաններ.— Բառագիտական բառարանները տվյալ լեզվի բառերի պատմական, ստուգաբանական, բառակազմական բացատրությունները ներկայացնող բառարաններն են: Հայերենի համար այդ կարգի մեծարժեք բառարան է Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ը, որ հեղինակը հրատարակել է ապակետիպ տպագրությամբ՝ 7 հատորով, 1927—35 թթ. քնթացքում: Բառարանը վերահրատարակվեց Երևանի պետական համալսարանի հրատարակչության կողմից՝ չորս հատորով (I հ. 1971—IV հ. 1980), Հր. Աճառյանի այս բառարանը իրավամբ համարվում է հայկական բառագիտության հանրագիտարանը. բառարանի յուրաքանչյուր բառահոգված բաղկացած է հինգ բաժնից. ա) բառագիտություն, բ) ստուգաբանություն, գ) ստուգաբանությունների պատմություն, դ) գլխաբառի բարբառային ձևեր, ե) հայերենից կատարված փոխառություններ:

Դ) Տեղեկատու-գործնական բառարաններ.— Այդպիսիք են այն բոլոր բառարանները, որոնց մեջ ներկայացվում են տրվյալ լեզվի բառերը որևէ կարգի տեղեկություններով՝ ուսուցողական, զանազան կարգի գործնական-հետազոտական և այլ նպատակներով: Թրինակ՝ ուղղագրական բառարանները նպատակ ունեն անհրաժեշտ տեղեկություններ տալ բառերի ու բառաձևերի ուղղագրության մասին և դրանով իսկ օգնել օգտագործողներին՝ բառերի ճիշտ գրությունը սովորելու:

Հայերենի տեղեկատու-գործնական բառարանները կարելի է բաժանել հետևյալ տեսակների.

1. Ուղղագրական-ուղղախոսական բառարաններ, որոնք անհրաժեշտ տեղեկություններ են տալիս բառերի ու բառաձևերի գրության և արտասանության մասին: Այդպիսի բառարաններ են.

Նշան Ալլանվերդյան, Նոր ուղղագրական բառարան, Եր. 1930 (գծվազրմբռնելի համարված բառերն ունեն հակիրճ բացատրություններ):

Աբարամ Ղարիբյան, Գուրգեն Շեկյան, Գարրոցական ուղղագրական բառարան, Եր., 1965, Բ հրատ. 1968:

Հովհաննես Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղա-

խոսական-տերմինաբանական բառարան, Եր., 1973 (ներկայացնում է հայերենի ամենահարուստ բառացանկը՝ ավելի քան 152 հազար բառ՝ ուղղագրական, ուղղախոսական, ձևաբանական և գործածելիության մասին անհրաժեշտ տեղեկություններով):

2. Համանշային բառարաններ, որոնց մեջ յուրաքանչյուր բառահոգվածը ներկայացնում է մեկ համանշային շարք: Այդպիսի բառարաններ են.

Եզուարդ Հյուրմուլյան, Բառգիրք յաշխարհաբար է զրաբար, Վենետիկ, 1869. թեև, ըստ վերնագրի, թարգմանական բառարան է, բայց ըստ էության համանշային է, քանի որ աշխարհաբարյան գլխաբառի դիմաց տրվում է զրա գրաբարյան ամբողջ համանշային շարքը:

Հովհաննես Գայայան, Բառարան-գանձարան հայ լեզվի հոմանիշներու, Գահիրե, 1938:

Աշոտ Սուխասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967:

3. Համարաբարաններ կամ ճեղհնակային բառարաններ, որոնք պարունակում են որևէ գրքի կամ որևէ հեղինակի ստեղծագործությունների բոլոր բառերը՝ այն բոլոր նախադասություններով կամ կապակցություններով, որոնց մեջ գործածվել է տվյալ բառը՝ գրքի մեջ զրա գործածության էջերի նշումով: Այս կարգի բառարանները, ներկայացնելով բառերը նախադասություններով կամ կապակցություններով, հնարավորություն են տալիս պարզելու բառերի զանազան իմաստները խոսքի մեջ, նրանց քերականական ձևերը, կապակցական-շարահյուսական առանձնահատկությունները և այլն, և այլն: Այդպիսի բառարաններ են՝

Թադևոս Սատվաժատույան, Համարաբարաո հին և նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1895:

Լիդա Պետրոսյան, Հովհ. Քոմանյանի գեղարվեստական երկերի բառարան, Եր., 1976:

Հայ հին մատենագրության լավագույն երկերի համարաբարանների մի ամբողջ շարք է հրատարակել ՀՍՄՀ ԳԱ նախագահության կից համարաբարանների խորհուրդը (այժմ՝ ՀՍՄՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի համարաբարանների և քարտարանի բաժին): Այդ համարաբարանները

հրատարակվել են դարձատիպային (ռուսապրինտային) տպագրությանը, սահմանափակ տպաքանակով, «Հայկական համարարան» ընդհանուր վերնագրով: Առայժմ լույս են տեսել Եզնիկի, Փավստոսի, Ազաթանգեղոսի, Եղիշեի, Խորենացու, Ղազար Փարսեցու, Նարեկացու երկերի համարարանները:

4. Հանգարատաններ կամ հանգարաններ, որոնց մեջ բերվում է տվյալ լեզվի բառացանկը՝ ըստ բառերի վերջահանգների. բառերը այբբենական կարգով դասավորվում են քառավերջի հնչյունների հաջորդականությամբ: Հանգարատաններն ունեն լեզվաբանական գործնական նպատակներ, որոնցից կարևորագույնն է բառերի վերջավորությունների, վերջածանցների, բարդ բառերի վերջին բաղադրիչների ու սովորաբար վերջին տասնամյակներում հանգարատարանների կազմումը մեծ թափ ստացավ մեքենական թարգմանության ուղղությամբ ծավալված աշխատանքների թելադրանքով: Գործնական նպատակներից մեկն է նաև միևնույն հանգն ունեցող բառերի ցանկերով օգնել բանաստեղծներին ու թարգմանիչներին՝ շարժված ստեղծագործությունների հանգավորման գործում:

Այդպիսի բառարաններ են՝

Խուրեն Գալֆայան, Ցանգարան կամ բառգիրք յանգաց հայկազեան լեզուի, Քեղդոսիա, 1862:

Պ. Խ. Քերզյան, Հանգարան նույնաձայն և նույնահանգ բառերու, Պոլիս, 1905:

Խաչատուր Աբահասյան, Հանգարան և թանգարան հայ լեզվի, Բնյուս, 1961:

ՀՍՍՀ ԳԱ և պետական համալսարանի հաշվողական կենտրոն, Հայոց լեզվի հանգարատարան, Եր., 1976:

* * *

Թվարկված տեսակներով չեն սպառվում հայերենի (ինչպես և այլ լեզուների) բառարանները. կան բազմաթիվ մասնակի բնույթի բառարաններ: Հայերենի բոլոր կարգի բառարանների, ինչպես և նրանց կազմողների ու հրատարակության մասին կարելի է անհրաժեշտ տեղեկություններ քաղել Գ. Կ. Գասպարյանի «Հայ բառարանագրության պատմություն» (Եր., 1968) գրքից:

ԳՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Ընդհանուր գիտելիք

ա. Բառագիտության առարկան	5
բ. Բառի սահմանումը	5
գ. Բառի ձև և բառակներ	16

ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՒԴ

Իմաստարանություն

ա. Բառիմաստի բնորոշումը	21
բ. Բառի անվանողական դեր և առարկայական վերաբերություն	25
գ. Բնիմաստ և բառի ներքին ձև	28
դ. Բառի սուբյեկտիվ իմաստ	35
ե. Բառի բերականական իմաստ	44
զ. Բառի բաղմիմաստություն	46
է. Բառերի ուղղակի և փոխարկրական իմաստներ	49
ը. Փոխաբերություն և փոխաբերական իմաստ	50
թ. Փոխանունություն	58
ժ. Համըմբանում	63
ժա. Համանուններ	65
ժբ. Հոմանիշներ	67
ժգ. Հակահիշներ	71

ԳՆՈՒՆ ԵՐԲՈՐԴ

Իմաստափոխություն

ա. Փամանակակից հայերենի իմաստափոխությունները	73
բ. Գրական աշխարհագրարի իմաստափոխությունների տեսակներն ըստ իմաստափոխական հիմունքների	78
գ. Իմաստափոխության տեսակներն ըստ իմաստային զարգացման արդյունքի	101

ՊՈՒՆ ԶՈՐՐՈՐԻ

ժամանակակից հայերենի բառապաշարը

ա. Համառոտ պատմական ակնարկ	108
բ. Բառապաշարի ժառանգարանական դասակարգությունը	119
գ. Բառապաշարի համաժամանակյա ներքին դասակարգություն	132

ՊՈՒՆ ԶՈՆԿԵՐՈՐԻ

ժամանակակից հայերենի բառապաշարի զարգացումը

ա. Անդհանուր գիտելիք	167
բ. ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացումը	168
1. Նոր բառեր և նորարանություններ	168
2. ժամանակակից հայերենի նորակազմ բառերը	171
3. ժամանակակից հայերենի ներքին փոխառությունները	172
4. ժամանակակից հայերենի արտաքին փոխառությունները	174
գ. ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործումը	177
դ. ժամանակակից հայերենի բառապաշարի իմաստարանական զարգացումը	197
ե. ժամանակակից հայերենի հնացած բառերը և հնարանությունները	201
1. Բառերի հնացումը և դրա պատճառը	201
2. ժամանակակից հայերենի պատմաբառերը	203
3. ժամանակակից հայերենի հնարանությունները	204
4. ժամանակակից հայերենի գրաբարարանությունները	206

ՊՈՒՆ ՎԵՅԵՐՈՐԻ

Բառակազմություն

ա. Բառակազմություն առարկան	207
բ. Ձևայիններ	208
գ. Բառերի ձևայնացման, ձևաբանական և բառակազմական գերլուծություն	215
դ. Բառերի տեսակներն ըստ կազմության	219
ե. Վերլուծական բաղադրություններ ✓	221
զ. Համադրական բաղադրություններ ✓	245
1. Բաղադրական հիմքեր	245
2. Հոդակապ ✓	262
3. Բարդություններ ✓	266
4. Ածանցում, ածանցազոր բառեր և ածանցներ ✓	279
է. Հապաղական բաղադրություններ ✓	291

ՊՈՒՆ ՅՈՔՆԻՐՈՐԻ

Տերմինադիտություն

ա. Տերմինաբանություն և տերմինադիտություն	310
բ. Տերմինաբանություն և տերմինահամակարգեր	313
գ. Բառ և տերմին	318
դ. Տերմինաբանություն և անվանակարգություն	327
ե. Տերմինաբանական ստորակարգություն	330
զ. Տերմինային համակարգայնություն	335
է. Տերմինակառուցվածք և տերմինագործածություն	337
բ. Տերմինային բաղմիմաստություն, համանունություն և համանունություն	347

ՊՈՒՆ ՈՒԹԵՐՈՐԻ

Բառաբանագրություն և բառաբանագիտություն	367
Բառաբանների տեսակները	358

ԱՂԱՅԱՆ ԷԳՈՒԱՐԴ ԲԱԳՐԱՑԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հաստատության և Երկայացրել
համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Զ. Հ. Թամրազյան
նկարիչ՝ Հ. Կ. Մեաղակաճյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմայան
Տեխնիկական խմբագիր՝ Հ. Ս. Ալվերջյան
Վերստուղող սրբագրիչ՝ Գ. Պ. Խաչատրյան

ՆԱԽՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	Տող	Տպագրված է	Պետք է լինի
66	17 ն.	անխնայել	անխնայել
89	17 ն.	մոխրատիտիկ	մոխրատիտիկ
372	10 ն.		ԽՐ 587

ՎՅ 09310. Պատվեր 1321: Տպարանակ 2000: Հանձնված է շարվածքի 31.
10. 1983 թ.: Ստորագրված է տպագրության 29. 02. 1984 թ.: Թուղթ N 1,
լափեր 84x108¹/₃₂: Տառատեսակը՝ «Սովորական»: Տպագրության Լզանակը՝
«Մարմը»: Հրատարակչական 16,6 մամուլ: Տպագրական 11,6 մամուլ = 19,5
պաշտ. մամուլի Գինը՝ 3 ու.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մուսկյան փ. N 1.
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արզրյան փ. N 52.
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.